ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN EDUCATIONAL REGIONAL ACADEMY

ISSN 1829-4359

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

## ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

7

ԵՐԵՎԱՆ
2016

ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

EUROPEAN
EDUCATIONAL
REGIONAL
ACADEMY

# ԵՎՐՈՊԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

*ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ*

## 7

ԵՐԵՎԱՆ
2016

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

*Գլխավոր խմբագիր՝*

**Հովհաննիսյան Դեզի,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

*Խմբագրական խորհուրդ*

**Խաչատրյան Ա. Հ.,** իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Աբրահամյան Հ. Մ.,** պատմագիտության դոկտոր
**Վահանյան Գ. Ա.,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Մարզպանյան Հ. Ա.,** տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
**Ղարսլյան Է. Վ.,** տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Մովսիսյան Յու. Մ.,** ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Գրիգորյան Յու. Գ.,** ֆիզմաթ գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Աստվածատրյան Ա. Վ.,** բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**Քրիստոֆ Կրեյտց,** ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Ե 744 **Եվրոպական ակադեմիա:** Գիտ. հոդվածների ժղվ./
ԵԿՏԱ. Գլխ. խմբ.՝ Դ. Հովհաննիսյան, - Եր.: «ԵՏԱ» հրատ., 2016:
Գիրք 7 - 472 էջ:

*Ժողովածուն ընդգրկում է իրավագիտության, փիլիսոփայության, պատմության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, տնտեսագիտության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:*

ЕВРОПЕЙСКАЯ АКАДЕМИЯ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN ACADEMY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հրատարակչություն, 2016
© Publishing of European Educational Regional Academy 2016

# THE POSSIBILITY OF INTRODUCING AN UNIVERSAL CURRENCY IN THE GLOBALIZING WORLD ECONOMY

***Harutyun Alexan Marzpanyan***
*Doctor of Economic Sciences, Professor*
***Hamidreza Mahjoub Khaligh***
*Master in International Economics*
*Economics and Management Department of EREA*

INTRODUCTION

Current world monetary system is definitely vulnerable. Not only its intrinsically Triffin dilemma which comes arise when one country currency has been chosen as world trading and reserve currency, but the dependency of world economy to one country's monetary system is not rational. State controlled monetary system give sovereigns power which sometimes works against their nations and other economic counterparties. At the same time, the same thing will be happening when owner of world reserve currency act as a super power to the world economy. It can force other countries to conduct its political and maybe non fair wills. Flooding the world with easy money booms world economy which will be drastically bust with the beginning of contractionary policies. Any substitution of reserve currency with another sovereign's currency, just change the actor of a bad scenario, and the problem is not the actor, but the scenario. Choosing a basket of currencies like what has been introduced by IMF as Special Drawing Rights can alleviate the problem but the implementation of it as a world reserve currency is very difficult. The main part of its difficulty comes from the central authority which rules it, as a world central bank. The point is which country or countries or even universal organizations rules this world central bank. Is it possible to consider all countries desires and benefits to make consensus decisions? The main problem of all current monetary systems, even in the theories,is that all of them are controlled by central authorities and governments. SDR will still suffers from this weakness in its structure. It comes from inheritance of over thousands years of economic trading history, within and between nations. The point is, is it possible to change this structure and change it from dictating strategy to a more democratic

one. It seems now that dictating policy doesn't work since sovereign are more powerful, economies are more big and interrelations are more tight which make it gigantically vulnerable. It is unacceptable now that for example one or a group of countries enact some policies which can be against the others. In the case of nationwide policies, political mans can misuse the power of flooding society with money and create huge debts in the favor of political targets and then erode society wealth with creation of inflation. All of these happen because money is on the hand of governments and then can easily use it in the way they want and it can easily be biased to non fair and even dangerous directions like wars.

On the other hand, a global unification in economy needs a universal currency. Even the implementation of a universal reserve currency has some inefficiency, because national currencies should be exchanged with this reserve. Flooding and tightening policies of universal reserve currency again cause exchange rate issues in world trading. A global economy needs a universal currency which is one of its most important tools if not the most important one. Smooth trading across the world with one currency resembles all the world as a unified country and helps labor and capital mobility. Suppose how easy it will be to trade without exchange rate problem and just focus on the efficiency competition between producers and businesses. Merchants don't have considerations of capital flight, speculative attacks and busting of their national economy because of bad policies of their own government and world major economic powers.

Another thing that is very important to consider is monetary systems that now works are the same as what they started several hundred years ago. These systems are obsolete, slow and expensive. They can hinder or delay the free flow of businesses. Along with improving the technology, specially in the recent decades, there was nearly nothing improvement in the monetary systems. Even in the case of improvement in internet banking, they are very slow and expensive. In comparison of connected network expenses and services, it is totally unacceptable. Moreover, new technologies of artificial intelligence, smart assets, driverless vehicles, smart contracts and many others, requires fast, smart, concrete, consistent and trustable monetary system. Is it possible to have an universal currency?

MAIN ISSUES

Comparing two centuries of high growth and no inflation under the classical gold standard and current degenerated age of monetary chaos and economic stagnation, bring us to some point to think what can be really the problem. It is really hard to believe majority of financial intelligentsia event don't believe that we might be on the verge of a failure of the dollar-based world monetary system, and think such a thing is unimaginable. If we sit as a neutral observer and think about the problem, the main cause of problems and chaos, world financial system wrestling with comes from one important factor which is trust. In the first and most important place, fiat monetary system needs people trust to the politician's promises that they will not print too much. This trust can be violated in two steps when that fiat currency acts as a universal reserve currency: nationwide and worldwide.

Government can print much and dilute currency to generate national inflation to decrease debt burden. Whit this tools they can create huge debt without any serious anxiousness and run their political wills. The side effect of this policy is that it destroys national wealth. Just imagine the real wealth of society which are their time, blood, tears, labor ideas and talent, traded by some papers that printed or numbers which types in the computers. This is why contractism theory of money can best hedge the society from this problem, because they can switch immediately from these paper to real value hard assets, whenever they feel their contact with central banks and government works weak. Future market can help investor to assess whether current national debt is still sustainable or no. Whenever government bond yield soared unusually, this is time to dumb debt market and go toward safe heavens like gold, or other real value assets.

In the worldwide area, again trust is a major factor to make one country's currency acceptable as reserve currency. There is no application to be filled out to make one country's currency as worldwide reserve currency, and there is no international organization that confers this status. World countries should trust to the issuer's currency strength of economy, liquidity and depth of financial market, social and political stability and value of the currency. They shall also trust to a prolong

supply of the reserve currency which needs to having triple deficit of the issuer of currency. These situations with together are contradictory and cannot be existed at the same time, as Belgian American economist, Robert Triffin stipulate in 1960s. His critique became known later as Triffin's paradox. The essence of this paradox is prolonged deficit and strong currency cannot be existed with together.

In the case of worldwide trust, it is even more complicated and more difficult to have sustainable trust. How countries can be assured that issuer policies are in the favor of all countries instead of just the issuer. More importantly, how they can be assured that issuer policy is not against them and even in hostility of their country and worldwide. Who regulates issuer and governs it. In the case of nationwide contract, the contract should be some kind of written contract, but here there is not such a contract at all. Some part of this trust comes from network effect of acceptance of issuer's currency and some, from this reality that they had to trust. The acceptance of U.S. dollar as reserve currency was compulsory, since after WWII, world's major gold was in U.S, because of supporting of war's involved countries and the vast damage of economy of the world after war. They had labor but they needed to provide machinery and other capitals to restart their economy.

Without any contract, trust is very vulnerable and needs continuous supervision of the issuer's situations. More precisely, issuer country acts like a central bank for the world economy, without any regulation from the world. The result of such a system is occasionally economical problems and in some cases regional or even worldwide economical crises. Problems such as capital flights, foreign debt market exchange rate pitfalls, contagious financial crises and so on.

World economic unification which will make a unified integrated environment for trade, requires many factors. Technological improvement eliminates frontiers and close nations together. Social networks, remote negotiations, online marketing and many other tools and achievements cause universal trade more and more possible. One of the major factors to have unified economy is having universal currency. It is one of the final stages in economic integration which cause easier comparison of price, reduce transaction costs, eliminates instability and

uncertainty, and reduces costs and risks of doing international trades. By providing a strong foundation for economic growth and justice, it removes free lunch of few countries for their ostensibly strong and secure currencies. This prevents poor countries being hurt by the impact of currency fluctuations. Economic competition between businesses will be just based on performance, innovation, talent and perfection, not inherited strength or weakness of some other currencies. A unified world economy needs a unified and universal language. A single currency would, in some respect, be like a world language, improving communications around the globe.

One way to achieve universal currency is thinking traditionally and making some kind of agreement between countries governments and then having nations to accept this currency through some kind of trust generation like the one that contractism theory of money proposes. The first step of creating of this type of universal currency is "very hard to achieve" if it is not impossible. The prerequisites of this universal currency is the one that Robert Mundell, the Nobel Prize winner in this field, identified as the theory of Optimal Currency Area. This theory is used often to argue whether or not a certain region is ready to become a currency union. Paul Krugman showed in the case of Euro, for example, the problems of this currency can be explained by this theory[1]. Europe exemplifies a situation unfavorable to a common currency. It is composed of separate nations, speaking different languages, with different customs, and having citizens feeling far greater loyalty and attachment to their own country than to a common market or to the idea of Europe.[2]

The other solution can be making a universal money with different strong properties that different types of society classes with different incentives join it and then use of network externality to make it more acceptable among bigger groups of populations. This currency have the potential to be an universal currency as more and more social classes accept it as their major medium of exchange. This approach is what Blockchain has used to introduce its first application, which is called Bitcoin. Bitcoin has many incentives for different part of society to accept it. Even though is has

---

1 http://krugman.blogs.nytimes.com/2012/06/24/revenge-of-the-optimum-currency-area/

2 Milton Friedman, The Times, November 19, 1997"

been evolved just few years ago, gold buggers, merchants, small businesses, new applications and more recently, new technologies applications and internet of things are the first adopters of bitcoin.

Bitcoin uses peer-to-peer technology to operate with no central authority or banks; managing transactions and the issuing of bitcoins is carried out collectively by the network. Bitcoin is open-source; its design is public, nobody owns or controls Bitcoin and everyone can take part. Anyone has access to the entire source code at any time. No organization or individual can control Bitcoin, and the network remains secure even if not all of its users can be trusted.[3]

Bitcoin brings a technological advancement so powerful that transforms the very basic pillars of our society. A technology which fundamentally influence on the way that our economy, governance systems and businesses function, and change our conceptual understanding of trade, ownership and trust. Traditionally trades are recorded in closed and isolated bookkeeping, which kept secured by third parties and middlemen we trust. These middlemen facilitate and approve our transactions. One trade can be breakdown to many transactions, each recorded on different trusted third party. Bitcoin software allows a public ledger maintained by a network of computers, which is a collective bookkeeping via the internet. This bookkeeping is neither closed nor in control of one party, rather it is public. It is available in one digital ledger, blockchain, which is fully distributed across the network.

All information concerning the Bitcoin money supply and transfers are readily available on the blockchain for anybody to verify and use in real-time. This information includes time, date, participants and amount of every single transaction. No individual or organization can control or manipulate the Bitcoin protocol because it is cryptographically secure. This allows the core of Bitcoin to be trusted for being completely neutral, transparent and predictable. Much of the trust in Bitcoin comes from the fact that it requires no trust at all. Any developer in the world can verify exactly how Bitcoin works. All transactions and bitcoins issued into existence can be transparently consulted in real-time by anyone. The

[3] https://bitcoin.org

payments can be made without reliance on a third party and the whole system is protected by heavily peer-reviewed cryptographic algorithms.

In some respects, bitcoin as a universal currency resemble having a universal classic gold standard. Many of the benefits of that standards included in bitcoin at the same time many more advantages are in bitcoin which didn't exist in gold standard. Also there were some drawbacks in classic gold standard which have been solved thanks using new technologies. There is a major difference between these two is that in bitcoin there is no need to have money as a claim check for the gold. Bitcoin is at the same time both money and gold. Most of the problems that existed in the classical gold standard was how to fix the ration value of money and gold in different situations like trade deficit/surplus and severe/easing economic situations. Bitcoin is an audacious attempt to create money beyond the control of any state. It is a digital currency, in the form of a limited number of tokens. It is championed by people who would, if they could, return to a gold standard – where states are obliged to limit the amount of money in the economy. What these money fundamentalists worry about of states creating so much money that booms and busts become inevitable and inflation erodes wealth. In this sense, Bitcoin's aim is to function as "digital gold".

Let's see what disadvantages the gold standard already had and check if bitcoin can solve them. What that actually classic gold standard worked on was based on evaluating prices of goods and services based on gold. Each country economic value was the amount of gold it had and the national currency of that country was a claim check for a specific amount of gold. Let's say that because of difficulty of exchanging real gold and hard divisibility of gold, paper money does that work to facilitate trade but the idea was that money was just a claim check. Each country had its own volume of gold and based on that issue its unit value of money that represents how much gold it valued. So the exchange rates between countries were fixed. Now the main problem was when they wanted to trade. If one country had to import more from the other country, because of importer country currency supply and exporter currency increase, the value discrepancy should had been compensated by physical gold transfer which was hard, delaying, and dangerous. Bitcoin solves this problem

because now there is no need to issue a money that pay the role of claim check for exchange. Bitcoin don't have the problem of difficulty in physical transfer and it is the most excellent medium of exchange. It is top most secure and easy to exchange bitcoin all around the world and it needs just internet connection and no bank or complicated secure place and environment or vault or anything else. It also doesn't have the divisibility problem because it is divisible up to one hundred millionth each.

Another problem was that in gold standard, states could exit that anytime they wanted. The easiest way for them to solve insolvency in the case of economic pressures was to exit the standard which results chaos around the world. That was happened for example in WWI, interwar, and the end of Bretton Woods which was the worst one since all the world had been connected to United State and it was connected to gold. Now with bitcoin it is impossible to do that because The bitcoin like gold standard makes monetary policy independent from policymaker decisions. The exit from it is impossible for states.

Next issue of opponents of gold standard is it creates periodic deflations and economic contractions which destabilize the economy. Under a gold standard, economic growth can outpace growth in the money supply. Since more money cannot be created and circulated until more gold is first obtained to back it. When this happens deflation and economic contraction occurs. Here in the bitcoin we have a predefined supply of bitcoin until year 2140. So until then there is not any problem of supply of money. Even if there will be problem after that time, changing of the policy of continuing he supply of bitcoin is just a matter of changing or inserting a little script in the platform. We should notice that bitcoin is an open-source platform which is very flexible to change and the strategy of changes is like other open source platforms, which is there should be a consensus between majority of users of bitcoin ecosystem, which seems a totally democratic decision making instead of non democratic fiat currencies printing.

One other the big critics that opponents of universal currency have is the elimination of power of governments in applying monetary policy. It is true that in the case of economic crisis, fiat currencies can be eased or contracted to control the problem, but we should consider that monetary policy is a double edge sword. A gold standard would reduce the risk of

economic crises and recessions such as the housing bubble and financial crisis of 2008-2009. The ability of the Federal Reserve to print fiat money and maintain easy credit by keeping interest rates too low from 2001 to 2006[4] was a significant cause of the real estate bubble which led to the Great Recession. The response to the recession has been more of what caused it in the first place – printing money. Over $2 trillion in bailouts for failed financial institutions was paid for with Federal Reserve money[5], setting the stage for another possible bubble and collapse. The Fed's history of providing economic stability with fiat money has not been a good one. Since the United States abandoned the gold standard there have been 12 financial crises, including the financial crisis of 2008-2009[6].

One other critic again from opponent of gold standard is it limit government's ability to address unemployment. According to Federal Reserve former chairman Ben Bernanke, a gold standard "means swearing that no matter how bad unemployment gets you are not going to do anything about it using monetary policy."[7] Under U.S. current fiat money system, the Fed can expand the US money supply by purchasing treasury bonds and the government can use this money to help put the unemployed to work through public spending[8] as the Obama administration did with the $787 billion fiscal stimulus[9]. It is estimated that the 2009 Obama stimulus prevented the loss of about three million jobs[10]. Under a gold standard the stimulus could not have occurred. What that is not mention here is that under gold standard, income levels in the U.S. were rising much faster and unemployment levels were lower. In the decades prior to the United States abandoning the gold standard (1950-1968), the real median income for males rose 2.7% per year. Since

---

4 Lawrence H. White, "A Gold Standard with Free Banking Would Have Restrained the Boom and Bust" Fall 2011

5 Frank Shostak, "Contra Bernanke on the Gold Standard," mises.org, Apr. 11, 2012

6 Charles Kadlec, "The Top Ten Reasons That You Should Support the 'Gold Commission,'" www.forbes.com, Aug. 27, 2012

7 Ben Bernanke, "The Federal Reserve and the Financial Crisis: Origins and Mission of the Federal Reserve" federalreserve.gov, Mar. 20, 2012

8 Paul Heise, "The Gold Standard Isn't Good as Gold," ldnews.com, Nov. 21, 2012

9 New York Times, "Economic Stimulus - Jobs Bills," nytimes.com, Mar. 15, 2012

10 Christina D. Romer, "The Fiscal Stimulus, Flawed But Valuable," nytimes.com, Oct. 20, 2012

leaving the gold standard in 1971, the average median income has only increased 0.2% per year[11]. If the gold standard had not been abandoned in 1971, and income levels had continued to grow at the prior rates, the average median family income today would be about 50% higher[12]. In addition, unemployment levels were lower in the decades leading up to the United States abandoning the gold standard. Between 1944 and 1971, while on a partial gold standard, unemployment averaged 5%. From 1971 to present, unemployment levels have averaged 6% under the fiat money standard[13]. Besides it should be considered that in both cases of economy stimulation and unemployment spur, government still can use fiscal policy and increase its revenue from tax's and borrowing.

***figure 1. Bitcoin/USD exchange rate***




Source: Designed by authors, data from blockchain.info

There is another issue which is very important. Peoples right now especially early adopters of Bitcoin have different reasons for their adoption. A lot of them have logical reasons like for example they are gold bugs and afraid of inflation. Then more adopters come for the reason of cheaper and faster exchange of it in comparison of other payments. Because of deflationary problem that inherited on it, it can encourage

---

11 Sean Fieler, "Easy Money Is Punishing the Middle Class," online.wsj.com, Sep. 26, 2012

12 Charles Kadlec, "The Price of Abandoning the Gold Standard," forbes.com, Sep. 12, 2011

13 Charles Kadlec, "The Top Ten Reasons That You Should Support the 'Gold Commission,'" www.forbes.com, Aug. 27, 2012

hording the bitcoin instead of expending and as its adoption grows and when it wants to displace other fiat currencies, creates deflationary problem which can make problem for growing in economy. But it is not killing problem. Firstly, until year 2140, it continues to mining and until then there is not any problem of deflationary issue. Even after that time, as we mentioned before, Bitcoin is an open source program and it is totally possible to change its functioning and properties. So after year 2140, continuing of mining is just a mater of changing or writing some scripts in this code. This also solves the incentive of mining issue for miners which keep transaction fees low after that time.

One of the big concerns about using bitcoin as a universal currency is its current volatile exchange rate. Figure 1 shows bitcoin to USD exchange rate from the beginning of its birth[14]. This volatility make problem for two functions of a money, store of value and unit of account. Volatility of bitcoin is not inherent of bitcoin, the reason is it instantly traded and its market is very illiquid. Market capitalization of bitcoin, today is almost 10 billion dollars, it is small and most of it used on speculation purposes. So any big trade sense bitcoin prices really roiling. With any news, negative or positive which cause people coming in or out of the market cause these fluctuations. As more people, merchants, or institutes began to use bitcoin, and demand for bitcoin goes up and it has more heavily traded and also it eventually might get the ability to short bitcoins and get other derivatives, we should see hopefully the price of bitcoin stable.

## CONCLUSION

Cryptocurrency can be the solution of all of current monetary problems. It is a democratic monetary system which can smooth the way of implementing a unified global economy. It is fast and trustable even in the environments that cannot guarantee trust. It works without the need of intermediaries. It is cheap and fraud resistant and anti censorship. No government can intervene it and deviate it toward its unfair desires. It can be introduced as a new digital gold standard with the ability to fulfil new technologies requirements. Its infrastructure, blockchain, can integrate all

[14] https://blockchain.info/charts/market-price

financial systems like stock exchange, money markets, derivative markets, and even non financial systems like notary public, real state property titles, healthcare confidential information, all kind of proof of existence applications and many more systems. All of these will be achieved without any supervising institute and necessity of existing trustable third parties. Any possibility of fraud, corruption and error will be eliminated and the cost of transactions and maintaining of the system will be near zero.

The way, cryptocurrency will pace toward its maturity is fast and can be revolutionary. It is very similar the same way that beginning of Internet changed monopoly of medias, replacing many old technologies and creating many newer applications that were impossible before it. It needs acceptance from most part of global society. The more problems of current legacy financial system erupted, the more incentive will be generated to move toward this safe money. Besides evolution of technology and new applications of money help it to be acceptable as the only solution of future, technologically convoluted, economical and social environments.

*Keywords:* International financial system, Globalization of world economy, Sustainable debt, Triffin dilemma, Universal currency, Fiat currency, Gold standard, Cryptocurrency.

**Literature**

PUBLICATIONS:

1. James Rickards, *The Death of Money, the coming collapse of the international monetary system*, first published by Portfolio / Penguin, 2014
2. James Rickards, *Currency Wars, the making of the next global crisis*, first published by Portfolio / Penguin, 2011
3. Lawrence H. White, *A Gold Standard with Free Banking Would Have Restrained the Boom and Bust.* Fall 2011
4. Muritz Schularick, *140 Years of Financial Crises: Old Dog, New Tricks*,2010
5. Glyn Davies, *A History of Money: From Ancient Time to Present Day*, 2002

6. Kenneth N. Matziorinis, *A Brief History of the International Monetary System*, March 2006
7. Donald S. Bernstein, William W. Bratton, *Is U.S. Government Debt Different*? 2012

ELECTRONIC SOURSES:
1. https://www.youtube.com/watch?v=SNssKmeXrGs VICE Podcast 027, Everything You Need to Know about Bitcoin
2. https://www.youtube.com/watch?v=xsN1SoM8ASY Lets Get Real: a Bitcoin Panel
3. https://www.youtube.com/watch?v=YIVAIuSL9SU, The Real Value of Bitcoin

## ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՐԺՈՒՅԹԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԼՈԲԱԼԱՑՎՈՂ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Մարզպանյան Հարություն Ալեքսանի**
տնտ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր
**Խալիդ Մահջուբ Համիդռեզա**
միջազգային տնտեսագիտության մագիստրոս
ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոն

### Ամփոփում

Հոդվածում բացահայտվում են ԱՄՆ դոլարի՝ որպես համընդհանուր պահուստային արժույթի, թույլ կողմերը: Ժամանակակից համաշխարհային ֆինանսական համակարգի հիմնախնդիրներն անկասկած կապված են այդ համակարգը կարգավորող հաստատությունների գործունեության մեջ առկա լուրջ թերությունների հետ, սակայն, մյուս կողմից, դրանք ածանցվում են հենց փողի տիրապետող տեսության հիմնարար կանխադրույթներից: Ծագած հիմնախնդիրների ձևական լուծումներից մեկը ԱՄՆ դոլարի փոխարինումն է ցանկացած այլ պահուստային արժույթով կամ արժույթների զամբյուղով: Միաժամանակ, տեղեկատվական դարաշրջանում հնարավորություն է առաջացել ներ-

մուծել սկզբունքորեն նոր արժույթ, որը ֆինանսական համակարգում կերաշխավորի միջազգային փոխվստահության և անվտանգության ապահովումը նորագույն թվային տեխնոլոգիաների հիման վրա: Նմանօրինակ երաշխիքով օժտված արժույթը համաշխարհային տնտեսության մեջ կարող է օգտագործվել որպես ընդհանրական արժույթ: Ճիշտ այնպես, ինչպես տարբեր երկրներում որպես հաղորդակցության միջոց օգտագործվում է մեկ ընդհանուր լեզու, այդպես էլ՝ այս ընդհանրական արժույթը կարող է կիրառվել որպես «ընդհանուր լեզու» միջազգային առևտրում և երկրների միջև առևտրային խոչընդոտները վերացնելու գործում: Այս նոր համակարգի ենթակառուցվածքը բոլորովին այլ է և ենթադրում է, նախ և առաջ, արմատական փոփոխություններ կատարել միջազգային ֆինանսական համակարգի կառուցվածքի ու գործառնությունների վերաբերյալ առկա պատկերացումներում:

*Առանցքային բառեր.* Միջազգային ֆինանսական համակարգ, համաշխարհային տնտեսության գլոբալացում, կայուն պարտք, Թրիֆինի երկընտրանք, ընդհանրական արժույթ, ոսկու ստանդարտ, կրիպտոարժույթ:

## ВОЗМОЖНОСТЬ ВВЕДЕНИЯ УНИВЕРСАЛЬНОЙ ВАЛЮТЫ В ГЛОБАЛИЗИРУЮЩЕЙСЯ МИРОВОЙ ЭКОНОМИКЕ

**Марзпанян Арутюн Алексанович**
докт. экон. наук, профессор
**Гамидреза Магджуб Халиг**
магистр международной экономики
ЕРОА, кафеда экономики и управления

### Резюме

В статье выявлены слабые стороны доллара США, в качестве универсальной резервной валюты. Проблемы современной мировой финансовой системы связаны, несомненно, с серьезными недостатками в деятельности регулирующих институтов этой системы, но, с другой стороны, они производны от самых основополагающих посту-

лат господствующей теории денег. Одним из формальных решений возникших проблем является замещение доллара США любой другой резервной валютой или корзиной валют. Одновременно, в информационной эпохе появилось возможность внедрения принципиально новой валюты, которая в финансовой системе может гарантировать обеспечение международного взаимодоверия и безопасности на основе новейших цифровых технологий. А валюта, которая продоставляет подобную гарантию, в мировой экономике может использоваться в качестве универсальной валюты. Подобно тому, как в разных странах мира используется общий язык общения, так и универсальная валюта может применяться в качестве «общего языка» для международной торговли и устранения торговых барьеров между странами. Инфраструктура этой новой системы совершенно другая и предполагает, в первую очередь, внесение кардинальных изменений в существующих представлениях о структуре и функционировании международной финансовой системы.

*Ключевые слова:* Международная финансовая система, Глобализация мировой экономики, Устойчивый долг, Дилемма Триффина, Универсальная валюта, Золотой стандарт, Криптовалюта.

# СОКРАЩЕНИЕ ВНЕШНЕГО ДОЛГА РА НА ОСНОВЕ ЭКОЛОГИЗАЦИИ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ

***Карян Ара Владимирович***
*к.э.н., доцент кафедры Экономики и управления ЕРОА*

Армения на 1-ое сентября 2016 г. как страна-должник имеет довольно крупную внешнюю задолженность в сумме 5 484,9 млн. долл. США[1], которая уже превышает порог в 50 процентов от ВВП. Сама величина долга и указанное соотношение сами по себе не экстраординарны, у многих развитых стран внешний долг в разы превышает ВВП страны. Однако, ситуация для РА становится тревожной при сочетании ее со сложившейся структурой экономики и темпами экономического роста, которую после финансового экономического кризиса никак не удается поднять до двухзначного порога. А темпы роста в пределах 2-3 процентов, на которые претендует правительство РА в пост кризисный период, не могут решить ни одну из задач устойчивого социально-экономического развития РА, и в первую очередь, существенного сокращения уровня бедности, а также укрепления обороноспособности страны.

В сложившейся ситуации РА, наряду с мерами нацеленными на экономический рост и развитие и структурные преобразования, необходимо запустить процесс “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” (Debt-For-Environment Swaps (DFES)) или конвертацию внешнего, начав переговорный процесс с международными финансовыми институтами и странами-донорами. Предусловием для этого шага будет убедить кредиторов, что РА способна выделить устойчивую часть ресурсов, которые будут предусмотрены в бюджете для погашения долга, направляемые на финансирование внутренних экологических проектов в стране, которые способны принести значительные экологические преимущества на национальном, региональном или глобальном уровне.

[1] Ինչ կտա Կարեն Կարապետյանի նշանակումը Հայաստանի տնտեսությանը. պետական պարտքը ռեկորդային տեմպերով աճում է, http://armlur.am/578964/

“Своп долги – взамен сохранения экологии” (DFES) или конвертация внешнего долга определяется как аннулирование (части) внешнего долга страны в обмен на обязательства должника правительства мобилизовать внутренние ресурсы (в местной валюте) для реализации согласованной цели и на согласованных условиях. Аннулирование внешнего долга, как правило, приходит со скидкой от номинальной стоимости. Термины долговой своп, конвертация взамен (или в обмен) часто используются как взаимозаменяемые.

Основная идея, лежащая в основе “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” является то, что вместо продолжения внешних платежей по непогашенным кредитам в свободно конвертируемой валюте страна-должник осуществляет платежи в экологических проектов в национальной валюте страны на условиях, согласованных с кредиторами[2].

В международной практике кроме модели “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” существует еще две основные виды сделки своп взамен долга, это:

- ✓ “*Своп – взамен долгов на помощь или развитие*” (Debt-for-aid (development) swap)), что означает аннулирование части внешнего долга в обмен на проекты в области развития (например, здравоохранение, образование) в стране должника, оплачиваемый в национальной валюте;
- ✓ “*Своп – взамен долгов на капитал или акции*” (Debt-for-equity swap), что означает аннулирование части внешнего долга в обмен на инвестиции в капитал или (акции) местных предприятий или приватизированных государственных предприятий, а также в активы природных ресурсов, оплачиваемый в национальной валюте.

Следует заметить, что алгоритм “Своп – взамен долгов на капитал или акции” (Debt-for-equity swap) для РА практически не применим, поскольку в процессе приватизации в государственной собственности в РА не осталось каких-либо значимых активов для этих целей.

---

[2] Lessons Learnt from Experience with Debt-for-Environment Swaps in Economies in Transition, OECD, 2007, p. 16, https://www.oecd.org/environment/outreach/39352290.pdf

В то же время, алгоритм “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” в походах стран доноров практически доминирует над алгоритмом “Своп – взамен долгов на помощь или развитие” (Debt-for-aid (development) swap)) по ряду причин указанных ниже.

“Своп – взамен долгов на помощь или развитие”, как правило, реализуется как одноразовая транзакция и не предусматривает потоков погашения долга в течение более длительного периода времени. Период действия обязательств по ним не более чем одного года или двух лет (в исключительных случаях до трех лет). Исходя из короткого срока сама сумма транзакций не может быть очень большим. Такое ограничение можно в принципе обойти путем выпуском облигаций, собрав необходимые ресурсы авансом и плавными платежами осуществлять в течение более длительного периода времени. Однако, такой подход приводит к потенциальным искажениям денежно-кредитной политики, вызванный откачкой большого количества национальной валюты в экономику за короткий промежуток времени. Кроме того, это предполагает дополнительные затраты на выпуск и обслуживание облигаций. Все эти факторы сводятся к тому, что ставиться под угрозу суверенная кредитоспособность страны-должника в краткосрочной и среднесрочной перспективе.

“Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” может быть сконструирован таким образом, чтобы нивелировать эти проблемы и конвертировать гораздо больше ресурсы в экономику страны-должника, вместе с тем не создавать макроэкономические искажения и вызывать отрицательное воздействие на кредитоспособность страны. Кроме того, расходы программ “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” полностью совместимы с целями программ “Своп – взамен долгов на помощь или развитие”, то есть экологические цели и цели в области развития часто имеют синергический эффект.

Следует указать, что подход “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” имеет реальную связь с целями преодолением бедности. Следует учесть, что средства направляемые на обслуживание внешнего долга прямо сокращают государственные расходы от внутренних расходов, и в этой ситуации экологические задачи, в связи

с его характером общественных благ, в частности, отсутствия сильных групповых интересов в их защиту, часто становиться самым простым способом сокращения расходов бюджета, действует так называемый остаточный принцип. Другой важный фактор, особенно свойственный для РА, состоит в том, что необходимость получения иностранной валюты за счет увеличения экспорта оказывает дополнительное давление на добычу природных ресурсов (например, концентрат меди, молибдена, золота и др. полезные ископаемые и т.д.), что является одним основных источников валютных поступлений страны-должника. Помимо этого, обслуживание долга сокращает импорт, что в свою очередь увеличивает спрос на отечественные заменители ресурсов. Высокий уровень бедности в РА с уровнем задолженности в конечном итоге приводит к деградации природных ресурсов. Такая связь проявляется в том, что бедные слои населения в целях удовлетворения своих повседневных потребностей и выживания вынуждены нерационально использовать природные ресурсы – массовая вырубка лесов, запрещенная ловля рыбы и диких животных и т.д.. Получается так, что в среднесрочной и долгосрочной перспективе, нерациональное использование природных ресурсов, деградирует наиболее легко доступные и необходимые природные ресурсы, от которых зависят бедные общины.

“Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” может быть использован для финансирования экологических общественных благ, такие как:

- устойчивые органические методы ведения сельского хозяйства, экотуризм или сохранение природных заповедников,
- борьба с выбросами промышленных объектов от внешних загрязнений окружающей среды, так называемые “коричневые” (brown) проекты,
- повышение энерго-эффективности, снижение уровня загрязнения от электростанций и др. генераторов энергии.

“Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” может быть использован также для финансирования поддержки общественной (или коллективной) экологической инфраструктуры, таких как системы сбора и очистки сточных вод, обработки накопленных токсич-

ных отходов. В частности, целями развития могут быть финансирование проектов по облегчению доступа бедных слоев населения к основным услугам инфраструктуры, такие как водоснабжение, канализация и энергетика. Услуги, получаемые от этих инфраструктур, могут иметь трансграничные или глобальные выгоды, однако отсутствие финансовых возможностей в стране с низким уровнем дохода, как правило, ставит под угрозу финансирование расходов на такие проекты. Вместе с тем, в стране с низким уровнем дохода непосредственные местные потребности, как правило, вытесняют проекты, которые позволили бы генерировать чисто глобальные выгоды, такие как предотвращение изменения климата, охрана международных вод или биологического разнообразия, которое в свою очередь могут также способствовать безопасности в данном регионе.

Следовательно, алгоритм “Своп долги – взамен (или в обмен) сохранения экологии” можно рассмотреть как механизм, сочетающий в себе финансирование на национальном уровне и внешнее финансирование для реализации проектов, которые поддерживают сокращение бедности, в целом местное экономическое развитие и их выгоды распределяются между двумя и более странами.

Обобщив, можно указать, что международный опыт показывает, что алгоритм “своп долги – взамен экологии” (DFES) становится все более привлекательной. Такой алгоритм полезен как странам должникам, так и кредиторам. Он для стран должников привлекателен по ряду причин. В частности, алгоритм “своп долги – взамен экологии”, может быть сконструирован так, чтобы смягчить макроэкономические искажения и не влиять на кредитоспособность страны. Цели экономического развития и экологической стабильности синергически сочетаются. Важно отметить, что инструмент “своп долги – взамен экологии”:

- практически эффективен и обеспечивает учет повестки социально-экономического роста и поддержания экологии правительства должника.
- дает возможность избежать неблагоприятные бюджетные и инфляционные риски, которые выражаются при других формах долговых свопов (в частности “debt for-equity swaps”.

- не ограничивает будущие возможности облегчения бремени задолженности или реструктуризации внешнего долга страны.

Этот подход также обеспечивает возможность двигаться в направлении выполнения международных природоохранных соглашений, например “Конвенции об изменении климата”, “Конвенции о биологическом разнообразии”. Немаловажный фактор состоит в том, что проекты, финансируемые за счет “своп долги – взамен экологии” по своей природе способствуют ослаблению региональных и трансграничных конфликтов и могут способствовать поддержанию мира и безопасности в регионе. Это может способствовать смягчению региональных и трансграничных конфликтов, связанных с управлением трансграничных природных ресурсов (например, наземные воды, леса).

С другой стороны алгоритм “своп долги – взамен экологии” открывает новые возможности для интеграции процессов улучшения качества экологии с сокращением масштабов бедности, социального благосостояния и восстановления экономики за счет создания новых рабочих мест и на основе местных ресурсов и навыков для создания устойчивых доходов местных общин. Используя военную терминологию можно сказать, что “своп долги – взамен экологии” (или DFES) это многоцелевой управляемый ракетный комплекс, обладающий сверхточностью и широким радиусом действия, наподобие американского “Томагавка” или российского “Калибра”.

Сделав выбор – “Долги взамен сохранение экологии” (DFES) Армении следует проводить структурные реформы в целях решения краткосрочных, среднесрочных и долгосрочных проблем. В этом контексте облегчение бремени задолженности будет зависеть от обязательств РА добиваться эффективной налоговой политики, устойчивой программы бюджетной консолидации на основе соглашений со сторонами кредиторов.

Международный опыт стран с переходной экономикой показывает, что наилучшие результаты “Долги взамен сохранение экологии” (DFES) достигаются, когда обсуждение этого процесса полностью сфокусировано на стратегических переговорах по долгосрочному подходу смягчению внешнего долга.

В качестве основы для определения цели, почему Армения должна представить предлагаемый подход (DFES) (своп долги – взамен экологии) можно привести разные доводы, среди них укажем следующие основные:

- Армения после мирового финансового кризиса испытывают низкие темпы роста, несмотря на значительные реформы, направленные на повышение экономической активности;
- Армения имеет успешный опыт послужной список реформ проведения стратегических реформ при поддержке МВФ и Всемирного банка.

В то же время, несмотря на большие усилия по бюджетной консолидации и налоговой реформы РА в данной ситуации сталкивается с непосильным бременем задолженности, поскольку:

- значительные выплаты по обслуживанию внешнего долга ведут сокращению фискальных возможностей и замедлению инвестиций в инфраструктуру;
- в связи со значительными трудностями обслуживания внешнего долга под большим вопросом стает достижение устойчивого развития.

Следует подчеркнуть, что реализация задачи свопа долги – взамен экологии не может отрицательно сказаться на суверенном кредитном рейтинге РА.

Цели (своп долги – взамен экологии (DFES)), в первую очередь, сводятся к удовлетворению потребностей экологии и “зеленой экономики” в условиях нехватки финансовых средств. К этому добавляется тот фактор, что РА находится в пределах зоны вероятностных землетрясений и других стихийных бедствий (сухой континентального пояс циклонов и т.д.) что увеличивает отрицательное давление природных внешних влияний.

Армения может взять прямые обязательства по алгоритму “своп долги – взамен экологии” выставив для этого:

- необходимую конфигурацию и действенный механизм сбора финансовых средств, который органически сочетается с задачами “зеленой экономики”;

- механизм сбалансированного финансирование экологических проектов на основе государственно-частного партнерства;
- подходы и механизм развития цепи добавочной стоимости на базе “индустрии экологической добавочной стоимости”, что потребует реструктуризацию финансирования, производства, маркетинга, научно-технических исследований и опытно конструкторских работ и других процессов и самое главное принятие новой концепции государственного регулирования.

В основе вышеуказанного – “своп долги – взамен экологии” (или DFES) должна стать концепция “экологизации” налоговой системы РА. Экологизация налоговой системы имеет не только относительно долгий период внедрения и расширения (70-ые годы прошлого столетия), но и научно обоснованную теорию, которую можно окрестить многими эпитетами, но можно однозначно подчеркнуть то, что она после долгих “блужданий”, сегодня является убедительной, с которым уверенно сверяют практические решения и шаги. Система прикладных механизмов экологического налогообложения, основана на концепции “двойного дивиденда” и теории внешних эффектов. Цель эконалоговых реформ перенос налогового бремени с факторов производства - труда и капитала на потребление энергетичеких и природных ресурсов, и на деятельность приводящую к ухудшению качества природной среды. Эконалоговые реформы преследует двойную цель (двойной дивиденд) - улучшение экологии и повышение налоговой конкурентоспособности экономики. О действенности и эффективности эконалоговых реформ указывает и то обстоятельство, что в последние годы она нацелена также на проблемы преодоления кризисных последствий. Так, социальный комитет Европейского союза, в ноябре 2009г. согласился с позицией Швеции относительно того, что экономический кризис означает, одновременно, угрозу и возможность отказаться от обычной модели налогов и развивать налоговую стратегию эффективную в экологическом аспекте, которая полезна для всех, в помощи восстановлении экономики, повышении конкурентоспособности и создании новых рабочих мест, и в то же

время послужит инструментом для преобразования энергетической базы и существенного сокращения выбросов[3].

Методологической основой экологизации налоговой системы стала концепция “двойного дивиденда” или выигрыша (double dividend, win-win solutions), согласно которой стимулирование сохранения окружающей среды базируется на экономической регуляции и ресурсосбережении через введение эконалогов (или платежей). Побудительным мотивом экологической реформ налогообложения явилось стремление к изменению системы экономического стимулирования так, чтобы бремя налогов подавляло не факторы производства, а только негативные экологические последствия производства[4]. На этом и строилась гипотеза получения “двойного дивиденда”, т.е. достижение экономического эффекта и улучшение экологической ситуации. Важный постулат экологизации налоговой системы это сохранение ее нейтральности, что означает, что поступления от экологических налогов служат источником снижения налогов на труд и капитал, которые оцениваются как факторы, искажающие свободный рынок. Как следствие это должно положительно отразиться на тренде занятости и инвестиций. Гипотезу “двойного дивиденда” впервые высказал Таллок (Tullock) в далеком 1967г. в статье под названием “Превышающая выгода”[5]. Первый дивиденд (или преимущество) заключается в повышение благосостояния в результате улучшения окружающей среды (загрязнение уменьшается, а второй дивиденд (или выгода) из-за сокращения искажений получения доходов налоговой системы, которая также приводит к улучшению благосостояния.

Озвученный “принцип Таллока”, позднее подхватили многие другие исследователи, и между тем было время (середина 1990-х гг.) когда абсолютность теории “двойного дивиденда” подвергалась сомне-

---

[3] Astrida Slavickiene, Vida Ciuleviciene, “Comparative assessment of environmental taxes in the European Union states”, European Scientific Journal May 2014 edition vol.10, No.14, www.file:///C:/Users/User/Downloads/3387-9922-1-PB.pdf

[4] Бенуа Боске, Экологизация налоговой системы в России. – М.: Российский университет, 2001. – 116 с., http://wwf.ru/resources/publ/book/23, стр. 25.

[5] William K. Jaeger «The double dividend debate», http://appliedecon.oregonstate.edu/sites/default/files/faculty/jaeger/chapter_12_jaeger_double_dividend_environmental_taxation_handbook.pdf

нию, она не отрицалась, но ставилась под сомнение предположения и предпочтения нейтральности структуры налоговой системы (модели Гулдера (Lowrence H. Goulder[6], 1995, 1995г, 1998г.), а также Парри[7] (Parry, 1999)). Но тем не менее последующие исследования многих исследователей подтвердили правоту теории “двойного дивиденда”.

По поводу эконалогов Дж. Стиглиц[8] (J. Stiglitz, 2014), отмечает лучше облагать налогом плохие вещи (загрязнение), чем хорошие вещи (труд). Рынок производит слишком много некоторых вещей (например, токсичные отходы) и слишком мало других (например, фундаментальные исследования). Эконалоги или “корректирующие налоги” одновременно увеличивают экономическую эффективность и повышают доходы - они обеспечивают двойную выгоду.

В европейских странах и в развитых странах ОЭСР эконалоги давно уже вышли из рамок узких целей стимулирования реализации экологических программ, и стали существенной частью налоговой системы и заменили собой определенную долю доходных налогов, тем самым эконалоги оказали существенное влияние на общую структуру налогов. В странах в 2013г. ЕС из общей суммы налоговых поступлений 6,3% приходятся на экологические налоги и платежи, которые в основном уплачиваются потребителями моторного топлива, а доля эконалогов к ВВП составила 2,5 %. Для сравнения укажем, что в РА по показателям госбюджета 2016 г. удельный вес эконалогов к ВВП составляет 0.64%, а в налоговых поступлениях 3.6%. Но дело даже, не в отсутствии сопоставимости приведенных величин, а в самой концепции или вернее отсутствии концепции экологических налогов или платежей, кроме как исключительно фискального инструмента. С учетом вышеизложенного система природоохранных и природопользова-

---

6 Lowrence H. Goulder, Environmetal Policy Making in Second Best Settings, http://www.owlnet.rice.edu/~econ480/readings/goulder.pdf

7 Ian Parry, Antonio Bento, «Tax Deduction, Environmental Policy, and Double Dividend Hypothesizes» https://books.google.am/books?id=4asR3x11sEsC&pg=PA1&lpg=PA1&dq=Parry,+Environmental+tax+double+divid

8 Joseph E. Stiglitz, Reforming Taxation to Promote Growth and Equity, May 28, 2014, http://rooseveltinstitute.org/sites/all/files/Stiglitz_Reforming_Taxation_White_Paper_Roosevelt_Institute.pdf

тельных платежей РА требует радикальной реформы, с тем чтобы переформатировать экологические налоги на получение двойного дивиденда - экологического и социально-экономического эффекта.

Как было указано выше с помощью экологизации налоговой системы РА следует поставить цель решения сверхсложной задачи - сокращение государственного внешнего долга. Более точно цель – сокращение части внешнего долга РА в обмен на расходование согласованной (со странами донаорми) суммы внешнего долга на определенных условиях для улучшения качества окружающей среды в РА, но эти расходы будут произведены уже в национальной валюте РА. Такая рекомендация "долги-природа" странам Восточной Европы, Кавказа и Центральной Азии или ВЕКЦА[9] дана специальной рабочей группой по реализации "Программы действий по охране окружающей среды для Центральной и Восточной Европы" (СРГ ПДООС) действующая в рамках ООН, где указано, что это одна из возможностей привлечений дополнительного официального финансирования из зарубежных источников[10].

В предлагаемую систему экологических налогов, соответствующую Европейской классификации, должны войти: 1) энергетические налоги (Energy taxes), 2) в т. ч. энергетический налог на моторное топливо, 3) транспортные налоги (transport taxes), 4) налоги за пользование природными ресурсами (royalty), 4) налоги на выбросы вредных веществ (tax on emissions), 6) налоги за размещение отходов (tax on waste), 7) целевые платежи (earmarked charges). Все экологические налоги должны войти в единый раздел "Налоги на изменение климата", проектируемого Налогового кодекса РА, что важно для сохранения единства и целостности налогового законодательства РА.

---

[9] В страны ВЕКЦА входят Азербайджан, Армения, Беларусь, Грузия, Казахстан, Киргизия, Молдова, РФ, Таджикистан, Туркменистан, Узбекистан и Украина)Отчет о ходе реализации партнерств в странах Восточной Европы, Кавказа и Центральной Азии, ОЭСР, стр.3, http://www.oecd.org/env/outreach/39289656.pdf

[10] ФИНАНСИРОВАНИЕ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В ВОСТОЧНОЙ ЕВРОПЕ, НА КАВКАЗЕ И В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ (ВЕКЦА): АНАЛИТИЧЕСКИЙ ОТЧЕТ. ПЯТАЯ КОНФЕРЕНЦИЯ НА УРОВНЕ МИНИСТРОВ ОКРУЖАЮЩАЯ СРЕДА ДЛЯ ЕВРОПЫ КИЕВ, УКРАИНА 21-23 мая 2003 г., стр. 55, http://www.oecd.org/env/outreach/4614213.pdf

Задача не в механической проекции указанных налогов и платежей в налоговою систему РА, тем более, что многие из указанных налогов в РА применяются, а в целеполагании и формате применении эконалогов. В специальном исследовании ОЭСР указывается, что в отличие от стран ОЭСР, в странах ВЕКЦА экологические платежи традиционно взимают на большое число загрязняющих веществ, но почти не взимают платежей на экологически вредную продукцию[11]. В том же исследовании указывается, что эффективность платежей за загрязнение в этих странах низка вследствие того, что:

- они не сфокусированы на основных загрязняющих веществах,
- низки ставки платежей,
- неэффективен мониторинг на выбросы загрязняющих веществ, и
- на слабом уровне находится право применение.

Одно из примечательных пояснений доклада то, что Армения первая страна в регионе ВЕКЦА, которая ввела платежи за экологически вредную продукцию. В соответствии с армянской терминологией, понятие “платежи” используется для обозначения платы за загрязняющие вещества и вредную продукцию, но тем не менее эти “платежи” представляют собой односторонние выплаты, и, следовательно, их не следует истолковывать в смысле платежей (и сборов), вносимых в обмен на услуги, в итоге это фискальный инструмент[12].

Армения в 1998 г. упростила систему платежей за загрязнение, но несмотря на это реформа осталась половинчатой, а в некоторых вопросах имеется даже отступления назад. С целью экологизации налоговой системы Армении следует определить конкретные виды вводимых экологических налогов. Дорожная карта эконалоговой реформы предполагает инвентаризацию имеющихся эконалоговых платежей, действующих по законодательству РА и поэтапное реформирование

[11] ПРИРОДООХРАННЫЕ ПЛАТЕЖИ ЗА ЗАГРЯЗНЕНИЕ И ПРОДУКЦИЮ В АРМЕНИИ: оценка хода реформ и направления дальнейшего усовершенствования, ОЭСР, стр. 7, http://www.oecd.org/env/outreach/34953278.pdf

[12] ПРИРОДООХРАННЫЕ ПЛАТЕЖИ ЗА ЗАГРЯЗНЕНИЕ И ПРОДУКЦИЮ В АРМЕНИИ: оценка хода реформ и направления дальнейшего усовершенствования, ОЭСР, стр. 7, http://www.oecd.org/env/outreach/34953278.pdf

системы экологических платежей. Предлагается на первом провести институциональные качественные реформы, а на втором и третьем этапах расширить масштабы и усилить воздействие экологических налогов снизив за их счет налоги на труд и капитал и как альтернативную возможность рассмотреть значительное снижение ставки НДС.

Для безболезненного внедрения эконалогов, в частности, для предотвращения переложения налогового бремени с налогоплательщиков на потребителей предлагается для режимов э*нергетические налогов (Energy taxes),* включая расходы энергетического топлива для предприятий энергетики и промышленности, в т. ч. на выработку электроэнергии на предприятиях энергетики (кроме налога на моторное топливо), налогов на выбросы вредных веществ (Tax on emissions), налогов за размещение отходов (Tax on waste), целевых платежей (earmarked charges), использовать превентивную основу с использованием системы “эконалогового договора об изменении климата”, что обеспечит его упреждающую функцию. К примеру, если предприятие согласно “Договору об изменении климата” сохраняет параметры и режим расхода энергетического топлива или потребления электроэнергии, или выбросов вредных веществ, количество и механизмы размещения отходов расписанного в договоре, то оно освобождается от уплаты налога. При не выполнении предприятием параметров и режимов эконалога расписанного в договоре на установленную дату первого года отчетного периода, предприятие должно выплатить сумму налоговой льготы, полученное в течение срока действия договора. Для последующих налоговых отчетных периодов, при несоблюдении режимов договора можно ужесточить меры для обеспечения последующих выплат. Указанная схема добровольных соглашений по “Договору об изменении климата” должна предусматривать освобождение от налогообложения дифференцированно, для предприятий энергетики и энергоемких секторов с определенными преференциями, на основе “Договора об изменении климата”.

Важный вопрос при введении эконлагов это повышение или возможное снижение конкурентоспособности отечественных производителей. Следует указать, что не существует результатов исследований, подтверждающих прямую связь между установлением эконалогов и

снижением международной конкурентоспособности национальной промышленности. Естественно существуют эмпирические аргументы и доводы о том, что из-за повышенных затрат на энергосбережение и охрану окружающей среды конкурентоспособность может падать, как следствие это может снизить привлекательность для ПИИ, и даже отечественная промышленность из-за этих причин может устремиться в зарубежные страны, где эконалоги отсутствуют, либо экологическое регулирование более мягкое. Однако, при такой аргументации следует рассмотреть и контраргументы и доводы с другой стороны, о том, что: а) энергосберегающие технологии способствуют внедрению инновационных технологий и на этой основе способствуют снижению себестоимости продукции; б) природоохранные меры способствуют введению в оборот рециклических технологий, когда вода или другие компоненты в технологических циклах используются многократно без выбросов в окружающую среду, что также приводит к снижению себестоимости; г) наряду с этим осваиваются экологически безвредные виды энергии – солнечная, ветряная, геотермальная и другие; д) осваиваются новые безвредные для окружающей среды и здоровья человека технологии и материалы (в т. ч. безвредные технологии производства пищевых продуктов). Все это в среднесрочной и долгосрочной перспективе ведет к снижению себестоимости продукции и услуг и повышению конкурентоспособности отечественных производителей.

*Ключевые слова:* “своп долги – взамен (или в обмен) сохранения экологии”, “своп – взамен долгов на помощь или развитие”, “своп – взамен долгов на капитал или акции” эконалоговая реформа, теория “двойного дивиденда” или выигрыша.

## Литература

1. Ինչ կտա Կարեն Կարապետյանի նշանակումը Հայաստանի տնտեսությանը. պետական պարտքը ռեկորդային տեմպերով աճում է, http://armlur.am/578964/
2. Lessons Learnt from Experience with Debt-for-Environment Swaps in Economies in Transition, OECD, 2007, p. 16,

https://www.oecd.org/environment/outreach/39352290.pdf

3. Astrida Slavickiene, Vida Ciuleviciene, “Comparative assessment of environmental taxes in the European Union states”, European Scientific Journal May 2014 edition vol.10, No.14, www.file:///C:/Users/User/Downloads/3387-9922-1-PB.pdf
4. Бенуа Боске, Экологизация налоговой системы в России. – М.: Российский университет, 23, стр. 25, 2001. – 116 с., http://wwf.ru/resources/publ/book/
5. William K. Jaeger “The double dividend debate”, http://appliedecon.oregonstate.edu/sites/default/files/faculty/jaeger/chapter_12_jaeger_double_dividend_environmental_taxation_handbook.pdf
6. Lowrence H. Goulder, Environmetal Policy Making in Second Best Settings, http://www.owlnet.rice.edu/~econ480/readings/goulder.pdf
7. Ian Parry, Antonio Bento, “Tax Deduction, Environmental Policy, and Double Dividend Hypothesizes” https://books.google.am/books?id=4asR3x11sEsC&pg=PA1&lpg=PA1&dq=Parry,+Environmental+tax+double+divid
8. Joseph E. Stiglitz, Reforming Taxation to Promote Growth and Equity, May 28, 2014, http://rooseveltinstitute.org/sites/all/files/Stiglitz_Reforming_Taxation_White_Paper_Roosevelt_Institute.pdf
9. ФИНАНСИРОВАНИЕ ОХРАНЫ ОКРУЖАЮЩЕЙ СРЕДЫ В ВОСТОЧНОЙ ЕВРОПЕ, НА КАВКАЗЕ И В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ (ВЕКЦА): АНАЛИТИЧЕСКИЙ ОТЧЕТ. ПЯТАЯ КОНФЕРЕНЦИЯ НА УРОВНЕ МИНИСТРОВ ОКРУЖАЮЩАЯ СРЕДА ДЛЯ ЕВРОПЫ КИЕВ, УКРАИНА 21-23 мая 2003 г., стр. 55, http://www.oecd.org/env/outreach/4614213.pdf
10. ПРИРОДООХРАННЫЕ ПЛАТЕЖИ ЗА ЗАГРЯЗНЕНИЕ И ПРОДУКЦИЮ В АРМЕНИИ: оценка хода реформ и направления дальнейшего усовершенствования, ОЭСР, стр. 7, http://www.oecd.org/env/outreach/34953278.pdf

# ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԷԿԼՈԳԻԶԱՑՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

**Արա Վլադիմիրի Քառյան**
ԵԿՏԱ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

**Ամփոփում**

Հոդվածում փաստվել է ՀՀ արտաքին մեծ պարտքը, նշվել է զարգացող և անցումային երկրների համար միջազգային պրակտիկայում ընդունված արտաքին պարտքի կրճատման մոտեցումների և մեխանիզմների մասին: Դրանց թվում են՝ «գործարք՝ պարտքը էկոլոգիայի պահպանման դիմաց», «գործարք՝ պարտքը օգնության կամ զարգացման դիմաց», «գործարք՝ պարտքը կապիտալի կամ բաժնետոմսերի դիմաց»: Հիմնավորվել է գործարք՝ պարտքը էկոլոգիայի պահպանման դիմաց գործիքի կիրառությունը՝ պայմանավորված մակրոտնտեսական աղավաղումների սահմանափակելու կարողությամբ, զարգացման կամ օգնության գործաքի սիներգիզմի համադրելիությամբ: Պարտքը էկոլոգիայի պահպանման դիմաց գործարքը չի կարող բացասական ազդեցություն ունենալ ՀՀ սուվերեն վարկունակության վարկանշի վրա: Առաջարկվել է դրա կիրառումն ապահովող գործիքակազմը կամ «շարժիչը»՝ հարկային համակարգի էկոլոգիզացման ձևաչափով և դրա հիմնական մոտեցումները:

*Առանցքային բառեր*՝ «գործարք՝ պարտքը էկոլոգիայի պահպանման դիմաց», «գործարք՝ պարտքը օգնության կամ զարգացման դիմաց», «գործարք՝ պարտքը կապիտալի կամ բաժնետոմսերի դիմաց», հարկային հմակարգի էլոլոգիզացման բարեփոխումներ, «կրկնակի շահաբաժինների» տեսությունը:

# EXTERNAL DEBT REDUCTION OF RA ON THE BASE OF TAX SYSTEM ECOLOGIZATION

**Ara Vladimir Karyan**
Ph.D. in Economics, Associate Professor,
Department of Economics and Management EREA

## Summary

The paper pointed to the fact of a large external debt of the Republic of Armenia, indicated on the approaches and mechanisms reducing of external debt accepted in international practice, as applied for development and transition countries. Among them are represent “Debt-For-Environment Swaps (DFES)”, “Debt-for-aid (development) swap”, “Debt-for-equity swap”. Paper gives a justification on “Debt-For-Environment Swaps” in line of its advantages, such as limiting the macroeconomic distortions, the synergy of that with tasks on swap debt-for-aid or development. Iimplementation of Debt-For-Environment Swaps can not has negative impact on the sovereign credit rating of the RA. Author proposed special driver for performance of this instrument in frame of ecologization of the tax system of RA as well submited the main approaches for its implementation.

*Keywords:* “Debt-For-Environment Swaps (DFES)”, “Debt-for-aid (development) swap”, “Debt-for-equity swap”, “Tax system ecologization reform”, “Double dividend” theory.

# ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԴԱՇՏԸ ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Զուլիետա Արամայիսի Թադևոսյան***
*Տ.Գ.Թ.,ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դոցենտ*
***Հովհաննես Ռուբենի Երիցյան***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս*

Ցանկացած երկրում գործարար ակտիվությունը մեծապես կախված է գործող օրենքներից և «ներդրումային միջավայրից», որոնք կարող են դրականորեն անդրադառնալ և խթանել գործարարությունն ու տնտեսության հետագա աճը կամ էլ ունենալ հակառակ ազդեցություն: Համաշխարհային Բանկի կողմից հրապարակվող «Գործարարությամբ զբաղվելը 2016» վերլուծության արդյունքներով Հայաստանի Հանրապետությունը /այսուհետ՝ ՀՀ/ զբաղեցրել է 35-րդ տեղը՝ նախորդ տարվա համեմատ բարելավելով իր դիրքերը 3 հորիզոնականով [1], ընդ որում ուսումնասիրությունը կատարվել է 189 երկրների շրջանակում: Այդ նույն վերլուծության արդյունքների համաձայն ՀՀ-ն զբաղեցնում է 5-րդ հորիզոնականը ձեռնարկատիրական գործունեության գրանցման ցուցանիշով (2015թ.-ին՝ 3-րդ հորիզոնականը), մինչդեռ ներդրողների պաշտպանության տեսանկյունից՝ 49-րդ տեղը (2015թ.-ին՝ 46-րդ հորիզոնականը), իսկ համաշխարհային առևտրի և պայմանագրերի իրագործման ապահովման ցուցանիշներով՝ համապատասխանաբար 29 և 28 հորիզոնականները: Այս ամենը վկայում է այն մասին, որ ՀՀ-ն քայլեր է ձեռնարկում ձեռնարկատիրական գործունեությունը երկրում խթանելու նպատակով, սակայն դեռևս կան որոշակի մարտահրավերներ, որոնք պետք է հաղթահարել համաշխարհային տնտեսությանն ակտիվորեն ինտեգրվելու և երկրում տնտեսական ակտիվությունը բարելավելու ճանապարհին:

Հարկ է նշել, որ ՀՀ ներդրումային ոլորտը կարգավորող իրավական հիմնական ակտերից է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքը, [2] որն ընդունվել է 1994թ.-ի հուլիսի 31-ին: Այն վերջին անգամ փոփոխության է ենթարկվել 2005թ.-ին: Օրենքը և դրանում տեղ գտած դրույթները կյանքի են կոչված ապահովելու խթանիչ և բարենպաստ

պայմաններ օտարերկրյա ներդրողների համար: Անշուշտ, միանշանակ դժվար է գնահատել օրենքի գործունեության արդյունքները: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ մեր երկրում օտարերկրյա ուղղակի ներդրումներ /այսուհետ՝ /ՕՈՒՆ/ իրականացնողներն հիմնականում վերազգային կորպորացիաներն են, /այսուհետ՝ ՎԱԿ/ ապա պետք է արձանագրել այն իրողությունը, որ վերջիններս ներդրումներ իրականացնելիս հակված են դիտարկելու և հաշվի առնելու բազմաթիվ ցուցանիշներ: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, զարգացող երկրներում, որտեղ դեռևս անկատար են օրենսդրական դաշտն ու թերզարգացած են ենթակառուցվածքները, ՎԱԿ-երը հիմնականում ծավալում են ռեսուրսափնտրող և սպառման շուկաներով հետաքրքրված գործունեություն: Նմանատիպ պատկերն է նաև ՀՀ-ում: Այդ են վկայում ՀՀ տնտեսության մեջ ներգրավված օտարերկրյա ուղղակի ներդրումները /այսուհետ՝ ՕՈՒՆ/:

*Աղյուսակ 1*

**ՀՀ-ում ՕՈՒՆ-ների ներհոսքն ըստ ոլորտների / 2014թ./**

| Ոլորտ | ՕՈՒՆ (մլն. ԱՄՆ դոլար) | Տեսակարար կշիռ % |
|---|---|---|
| Հեռահաղորդակցություն | 43.9 | 5.22 |
| Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր | 41.0 | 4.87 |
| Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում | 15.5 | 1.84 |
| Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ | 11.5 | 1.37 |
| Գիտական հետազոտություններ և մշակումներ | 0.2 | 0.03 |
| Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն | 1.8 | 0.21 |
| Մեծածախ առևտուր | 2.2 | 0.27 |
| Շինարարություն | 15.6 | 1.86 |
| Այլ | 48.2 | 5.73 |
| Ընդամենը | **841.5** | **100** |

Այսպես, ՀՀ էլեկտրականության, գազի, լավորակ օդի և գոլորշու մատակարարման, հեռահաղորդակցության ոլորտներում (ըստ UNCTAD-ի դասակարգման՝ թվարկված ոլորտները ներառված են Ծառայությունների ոլորտում) կատարաված ՕՈՒՆ-ները, որոնք 2014թ.-ի դրությամբ կազմել են ընդհանուր ՕՈՒՆ-ների ավելի քան 76%-ը, սպառման շուկա փնտրող ներդրումներ են, իսկ նույն տարվա տվյալներով ՕՈՒՆ-ները հանքարդյունաբերության ոլորտում կազմել են մոտ 5% (ռեսուսափնտրող գործունեություն) [3; 83-84]: Այս դինամիկան հիմնականում նկատելի է գրեթե բոլոր տարիների համար: Փաստացի ՀՀ-ում իրականությունն այնպիսին է, որ չնայած այն փաստին, որ ոլորտին առնչվող օրենսդրությունը գերազանցապես համապատասխանում է միջազգային չափորոշիչներին, այդուհանդերձ գործնականում դրանք իրացման մեխանիզմների տեսանկյունից անկատար են: Եվ պատահական չէ, որ այսօր մեր երկրում գերխնդիրը կապված է «օրենքների կիրառման նոու-հաու»-ի հետ:

Ուստի և ավելորդ չենք համարում նշել, որ նման զարգացումներն ու օրինաչափությունները չեն կարող նպաստել տնտեսության համաչափ զարգացմանը և երկրի առջև ծառացած խնդիրների լուծմանը: Մինչդեռ խորհրդային տարիներին գիտատար և բարձր տեխնոլոգիաների արտադրության ոլորտում առաջատար հորիզոնականներ զբաղեցնող Հայաստանն այդ համակարգի փլուզումից հետո կորցրեց իր ազգային մրցակցային առավելության կռվանները և զրկվեց այդ ոլորտի ներուժից, ավելին՝ ծանր և անդառնալի կորուստներ գրանցվեցին «ուղեղների արտահոսքի» պատճառով: Խնդիրն առավել սրվեց տնտեսական շրջափակման, դեպի ծով ելքի բացակայության և մի շարք այլ օբյեկտիվ պատճառներով:

Այսուհանդերձ, հարկ էր առաջ ընթանալ և ապահովել ներդրումանյին հոսքեր: Միջազգային փորձը վկայում է, որ ՀՀ-ն նույնպես կարող է հետզհետե ցածր տեխնոլոգիական արդյունաբերական տնտեսություն ունեցող երկրից անցում կատարել բարձր տեխնոլոգիական տնտեսություն ունեցող երկրի: Իսրայելի, Թայվանի, Հարավային Կորեայի փորձը լավագույն օրինակներից է: Համաշխարհային շուկայում նոր տեխնոլոգիաների փոխանցումը ՎԱԿ-երն իրականացնում են մտավոր սեփականության ոլորտում:

Ընդհանուր առմամբ մտավոր սեփականության իրավունքները

բազմաթիվ են, սակայն առավել գործածականներն ու հայտնիները[1] ապրանքային նշանների և գյուտերի նկատմամբ իրավունքներն են[4], ինչպես նաև հարակից իրավունքները:

ՀՀ մտավոր սեփականության օրենսդրական դաշտը բավականաչափ նպաստավոր պայմաններ է ստեղծում ՎԱԿ-երի գործունեության համար:

«Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների» մասին ՀՀ օրենքն ընդունվել է 2008թ.-ի հունիսի 10-ին, որում տեղ գտած դրույթները համապատասխանում են միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերին և Եվրամիության համապատասխան պահանջներին: Մասնավորապես, դրույթները ներդաշնակեցված են այնպիսի փաստաթղթերի հետ, ինչպիսիք են՝ Փարիզյան կոնվենցիան, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ), Եվրասիական արտոնագրային համաձայնագիրը, Արդյունաբերական նմուշների միջազգային գրանցման մասին Հաագայի համաձայնագրի Ժնևյան ակտը [5] և այլն: Իհարկե. արձանագրենք այն փաստը, որ այս ոլորտում նկատվում են որոշակի բացթողումներ և թերություններ: Այսպես, անհրաժեշտություն կա ստեղծել համակարգ, որը թույլ կտա մտավոր սեփականության օբյեկտների հայտերն ընդունել և դրանք հրապարակել էլեկտրոնային եղանակով, աջակցել օտարերկրյա պետություններում մտավոր սեփականության նկատմամբ իրավունքների ամրագրմանը, հարկ եղած դեպքում ապահովել համագործակցության և գյուտերի փորձաքննության պատվիրման հնարավորությունը Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից հավատարմագրված միջազգային կենտրոնների հետ և այլն:

Ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների և աշխարհագրական նշումների և դրանց իրավական պահպանության վերաբերյալ օրենքները սկսել են մշակվել 1995 թ.-ից, որն իր վերջնական տեսքն է ստացել 2010թ.-ին, երբ այդ նույն թվականի ապրիլի 29-

---

[1] Արդյունաբերական սեփականության իրավունքի մեջ ներառված, սակայն համեմատաբար քիչ հայտնի իրավունքներից են Արդյունաբերական նմուշների, աշխարհագրական նշումների, ֆիրմային անվանումների և սելեկցիոն նվաճումների նկատմամբ իրավունքները, որոնք կարգավորվում են «Ապրանքային նշանների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքներով:

ին ընդունվեց «Ապրանքանիշների մասին» ՀՀ օրենքը: Օրենքն անդրադարձ է կատարում ոչ միայն ապրանքանիշների իրավական պաշտպանվածությանը, դրանց նկատմամբ իրավունքներին ու փոխանցմանը, այլև առանձին հոդվածներ առնչվում են հանրահայտ ապրանքանիշներին, ապրանքանիշների միջազգային գրանցմանը: Այս ոլորտում կայացած օրենսդրությունը կարևորվում է նաև այնքանով, որ ապրանքային նշանները մրցակցային առավելություն հանդիսացող գործոն են և ծառայում են որպես միջոց՝ մրցակից ապրանքները կամ ծառայությունները միմյանցից տարբերելու և ՕՈՒՆ-եր ներգրավելու համար:

Ապրանքային նշանների իրավական պահպանության մասին օրենսդրությունն այսօր ընդհանուր առմամբ համապատասխանում է այն նորմերին, որոնք սահմանված են այս ոլորտի մի շարք միջազգային պայմանագրերով, այդ թվում՝ ԱՀԿ Մտավոր սեփականության առևտրին առնչվող հայեցակետերի մասին պայմանագրով: Սակայն, այս ոլորտում նույնպես դեռևս զգացվում է բարեփոխումների կարիք՝ հատկապես դրանք Եվրամիության պահանջներին համապատասխանեցնելու համատեքստում: Ապրանքային նշանի նկատմամբ իրավունքների որակը կարևոր է հատկապես բարեխիղճ մրցակցության համակարգի ձևավորման և անբարեխիղճ մրցակցության դրսևորումների կանխման համար [6; 10]: Տրամադրվող իրավունքների համապատասխան որակի ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

- ապրանքային նշանների փորձաքննությունն իրականացնել միջազգային ստանդարտներին խիստ համապատասխանող և պրակտիկայում ընդունված փորձաքննության իրականացման մոտեցումներով.
- ապրանքային նշանների օրենսդրության մեջ նախատեսել դրույթներ, որոնք հնարավորություն կտան փորձաքննության ժամանակ հաշվի առնել նաեւ ՀՀ-ում չգրանցված օտարերկրյա հայտնի ապրանքային նշանները, վարկանունները (բրենդները).
- չօգտագործվող գրանցված ապրանքային նշանների նկատմամբ իրավունքի սահմանափակման նպատակով օրենսդրորեն հստակեցնել այդ ապրանքային նշանների գրանցումները վաղաժամկետ դադարեցնելու պայմանները և մեխանիզմները՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերով և Եվրամիության պահանջներով սահմանված դրույթները.

- ապահովել փորձագետների մասնագիտական կարողությունների հետևողական բարձրացումը:

Ինչպես վերը նշվեց, մտավոր սեփականության մյուս ոլորտը հեղինակային իրավունքն է: Վերջինս և դրան հարակից իրավունքները կարգավորվում են «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2006թ.-ի հունիսի 15-ին: Ըստ էության՝ այս օրենքը ևս համապատասխանում է միջազգային պայմանագրերի և Եվրամիության պահանջներին, սակայն այս ոլորտում պատկերը մի փոքր այլ է: Մասնավորապես՝ ՀՀ-ում քիչ չեն կեղծման կամ հենության դեպքերը: Մինչդեռ ակնհայտ է այն, որ հայկական շուկայում ազատ վաճառվում են «հեղինակային իրավունքն անտեսած» և «գողացված» արտադրանքներ: Այսպես, բացահայտ բնույթ են կրում ձայներիզների, համակարգչային ծրագրերի, որոշակի ստեղծագործությունների անօրինական վաճառքը, որը երբեմն դուրս է գտնվում նաև հարկային դաշտից: Այս երևույթն իրենից մեծ վտանգ է ներկայացնում, քանի որ այս կերպ վնաս է հասցվում ոչ միայն տնտեսությանը, մշակույթին, դրանց զարգացմանը, այլև ծանր հարված է հասցնում երկրի միջազգային հեղինակությանը, խիստ կրճատում է օտարերկրյա ներդրումների ծավալը, քանզի դրանք իրականացնողների կողմից սա հավելյալ ռիսկային գործոն է:

Այսպիսով՝ մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը, այն ապահովող օրենսդրական հիմքի առկայությունն ու կայունությունը այն հիմնական պայմաններն են, որոնք ապահովում են համաշխարհային շուկայում տեխնոլոգիաների, գյուտերի և գիտելիքների, մշակույթի զարգացմանը, այդ ոլորտների օբյեկտների ազատ տեղաշարժին ու փոխանցմանը: Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության գործուն մեխանիզմները կարող են նպաստել բազմաթիվ հիմնախնդիրների լուծմանը: Միայն կեղծված և հենական արտադրանքի վաճառքն աշխարհում կազմում է գրեթե 200 մլրդ ԱՄՆ դոլար[7], իսկ ՀՀ-ում դրանց ծավալներն ու շրջանակները անսահման են: Կոնտրաֆակտ և հենական ապրանքների մեծ ծավալների առկայությունը հիմնականում պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

- իրավատերերի անբավարար հետևողականությամբ մտավոր սեփականության իրենց իրավունքների պաշտպանության հարցերում,

- մտավոր սեփականության բնագավառում իրավախախտումների դեմ պայքար իրականացնող պետական մարմինների թույլ համագործակցությամբ ու միացյալ գործողությունների ծրագրի բացակայությամբ,
- բնագավառում իրավախախտումների համար օրենսդրությամբ նախատեսված թույլ պատժամիջոցներով եւ դրանց կիրառման մեխանիզմների անկատարությամբ [8; 12-13]:

Հարկ է նաև նշել, որ ներդրումային դաշտի ակտիվացման գործընթացներում էական դերակատարում ունեն այնպիսի «տարածքային կառույցների» ստեղծումը, որոնք ստացել են Ազատ տնտեսական գոտիներ (այսուհետ՝ ԱՏԳ) անվանումը: ԱՏԳ-ի ստեղծումը պայմանավորված է մի շարք նպատակներով, որոնց շարքում կարելի է նշել օտարերկրյա ներդրումների ակտիվացումը, արտահանման ծավալների մեծացումն ու խթանումը, նոր տեխնոլոգիաների հասանելիությունը, գիտատար արտադրության զարգացումը, աշխատատեղերի ստեղծումը, նոր կադրերի վերապատրաստումը, տարբեր ոլորտներում միջազգային փորձի տեղայնացումը և այլն, որոնք վերջին հաշվով բարձրացնում են ինչպես երկրի, այնպես էլ տվյալ երկրի արտադրանքի մրցունակությունն ու համբավը համաշխարհային շուկայում [9]:

Այս տեսանկյունից ՀՀ-ն ևս քայլեր է ձեռնարկում ՕՈՒՆ-ներ ներգրավելու համար: 2011թ.-ի մայիսի 25-ին ՀՀ Ազգային Ժողովն ընդունեց «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքը [10], որով նախատեսված է այդ գոտիներում հարկային և մաքսային արտոնությունների տրամադրում՝ օտարերկրյա ներդրողներին: ՀՀ-ում այժմ առկա են ազատ տնտեսական գոտիներ Զվարթնոց օդանավակայանի հարակից տարածքում: 2013 թվականի հուլիսի 18-ին ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել նաև «ՌԱՕ ՄԱՐՍ» ՓԲԸ և «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ տարածքներում ԱՏԳ ստեղծելու նախագիծը: 2006թ.-ից ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից «Գյումրու տեխնոպարկի» ծրագիրը, որը կնպաստի Գյումրի քաղաքի բարգավաճմանը՝ վերածելով այն տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացած ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական գոտու, կզբաղվի ցանցային և հեռահաղորդակցության ոլորտներում մասնագիտական կարողությունների զարգացմամբ և հետազոտությունների իրականացմամբ, ինչպես նաև կնպատի բարձր տեխնոլոգիաների ներգարվ-

մանը: Սակայն այս ծրագիրը, որի արժեքը գնահատվել է մոտ 50 մլն ԱՄՆ դոլար, 2008թ.-ի ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով մինչ օրս ավարտի չի հասցվել [11]:

Այսպիսով՝ համաշխարհային տնտեսության մերօրյա զարգացումներին բնորոշ է երկրների միջև սուր մրցակցությունը օտարերկրյա ներդրումների ներգրավման համար, և ՀՀ-ն ևս ակտիվորեն ներգրավված է այդ մրցավազքին: Անշուշտ, օտարերկրյա ներդրումների հոսքը լուծում է երկրի առջև ծառացած մի շարք սոցիալ-տնտեսական խնդիրներ: ՎԱԿ-երը ոչ միայն նպաստում են տնտեսության առողջացմանը, ստեղծվում են նոր աշխատատեղեր, փոխանցում միջազգային փորձը կառավարման ու դրան հարակից ոլորտներում, այլև դրանք լավագույն լծակներն են երկրում բարձր տեխնոլոգիաների արտադրությունը խթանելու, մտավոր սեփականության օբյեկտների փոխանցման և երկրի մրցունակությունը բարձրացնելու տեսանկյունից: Սակայն դրանց իրականացման հիմնական լծակ հանդիսացող ՎԱԿ-երը մեծապես ուշադրություն են դարձնում երկրում օրենսդրական դաշտի ընձեռած հնարավորություններին, մտավոր սեփականության պաշտպանվածությանը և դրանց իրականացման մեխանիզմներին, ինչպես նաև ներդրումների գրավչության տեսանկյունից տրամադրվող արտոնություններին: Այս համատեքստում ՀՀ տնտեսության մեջ կատարվել են լուրջ բարեփոխումներ՝ ՎԱԿ-երին առաջարկելով շահավետ պայմաններ ներդրումների իրականացման համար, բարելավելով օրենսդրական դաշտն ինչպես ՕՈՒՆ-ների ոլորտում, այնպես էլ մտավոր սեփականության պաշտպանության ասպարեզում՝ համապատասխանեցնելով դրանք միջազգային պայմանագրերի և կառույցների պահանջներին: Սակայն վիճակագրությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում ՎԱԿ-երի գործունեությունն ուղղված է սպառողական կամ ռեսուրսափնտրող շուկաներին, և դրանք չեն նպաստում մտավոր սեփականության օբյեկտների փոխանցմանը, բարձր տեխնոլոգիաների զարգացմանը, բացի այդ՝ նկատվում է ՕՈՒՆ-ների դինամիկայի կրճատում, թեև ֆինանսատնտեսական ճգնաժամը մնացել է ետևում: Անկասկած, սա խոսում է այն մասին, որ միայն օրենսդրական դաշտը և դրանում կատարված բարեփոխումները բավարար նախապայմաններ չեն, այլև անհրաժեշտ են էական ու գործնական քայլեր իրավիճակը

փոխելու համար, հատկապես՝ պետական մարմիններին կից ստեղծել օրենքների կիրառումն ապահովող ու վերահսկող մարմին:

*Հիմնաբառեր*. վերազգային կորպորացիա, օտարերկրյա ուղղակի ներդումներ, ներդրումային միջավայր, օրենսդրական կարգավորում, հեղինակային իրավունք, ապրանքային նշաններ, գյուտեր, արդյունաբերական նմուշներ, տեխնոլոգիաների միջազգային փոխանցում, օրենքների կիրառման նոու-հաու:

## Գրականություն


1. http://www.doingbusiness.org/data/exploreeconomies/armenia
2. http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1552
3. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվար-փետրվարին, Արտաքին հատված, Օտարերկրյա ներդրումները 2014 թվականի հունվար-դեկտեմբերին, ՀՀ Ազգային Վիճակագրական Ծառայություն, Երևան, 2014թ.
4. «Ապրանքային նշանների մասին» և «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքներ: http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3814&lang=arm; http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=3324&lang=arm
5. «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքներ, Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները, էջ՝ «Գյուտերի, օգտակար մոդելների և արդյունաբերական նմուշների մասին» ՀՀ օրենքներ, Հոդված 2. Օրենքում օգտագործվող հասկացությունները
6. Մտավոր Սեփականության Հուսալի Եւ Արդյունավետ Պահպանության Իրականացման Հայեցակարգ, Երևան, 2009 թ.
7. http://economie.trends.levif.be/produits-contrefacon.html
8. http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=23146
9. http://www.mineconomy.am/arm/34/text.html, http://www.aravot.am/2013/06/26/258947/
10. http://www.iccwbo.org/Advocacy-Codes-and-Rules/BASCAP/International-engagement-and-Advocacy/Free-Trade-Zones/

## RA INVESTMENT ENVIRONMENT IN PROCESSES OF TNCS' INVOLVEMENT

**Tadevosyan Julieta Aramayis**
EREA, Phd in Economics
**Yeritsyan Hovhannes Ruben**
EREA, lecturer of department Economics and Management

### Summary

The world economy today's developments are characterized by sharp competition among countries to attract foreign investments, and Armenia is also actively involved in this competition. While investing, the TNCs extensively pay attention to the countries' favorable conditions of the legislation, protection of intellectual property and mechanisms of their execution, as well as to the benefits offered in terms of investment attractiveness. In this context, in RA economy serious reforms were done offering to TNCs favorable conditions for investments, i.e. the legal framework of FDI and the field of protection of intellectual property have been improved, bringing them in line with international agreements and criterias of international organizations. However, the statistics show that in RA TNCs activities are concentrated on consumption markets or on searching natural resources and they do not contribute to intellectual property transfer, high-tech development, and in addition there is a reduction of the dynamics of FDI, although the financial crisis is behind. Undoubtedly, this speaks to the fact that only legislation and amendments are not sufficient conditions, but also practical steps are necessary and essential to change the situation, especially the creation of supervisory institutions under the government authority to ensure the application of the laws.

*Keywords:* transnational corporation, foreign direct investment, investment environment, legal regulation, copyright, trademarks, patents, industrial designs, transfer of technology, know-how of application of laws.

# ИНВЕСТИЦИОННАЯ СРЕДА РА В ПРОЦЕССАХ ПРИВЛЕЧЕНИЯ ТНК

**Тадевосян Джульета Арамаисовна**
ЕРОА, кандидат экономических наук, доцент,
**Ерицян Ованнес Рубенович**
ЕРОА, лектор кафедры Экономики и управления

## Резюме

Мировая экономика сегодня характеризуется острой конкуренцией между странами по привлечению иностранных инвестиций, и Армения также принимает активное участие в этой конкуренции. При инвестировании, транснациональные корпорации активно обращают внимание на благоприятные условия законодательствастраны, защиты интеллектуальной собственности и механизмов их исполнения, а также льгот, предоставляемых с точки зрения инвестиционной привлекательности. В этом контексте, в экономике РА серьезные реформы были проведены предлагая ТНК благоприятные условия для инвестиций, были улучшенынормативно-правовой базы ПИИ и области защиты интеллектуальной собственности, приведя их в соответствие с международными соглашениями и критериями международных организаций. Тем не менее, статистика показывает, что в РА ТНК деятельность сосредоточена на рынках потребления или на поиске природных ресурсов, и они не способствуют передаче интеллектуальной собственности, развитию высоких технологий, а кроме того, имеется снижение динамики ПИИ, хотя финансовый кризис остался позади. Несомненно, это говорит о том, что только законодательство и поправки не являются достаточными условиями, но и практические шаги необходимы для изменения ситуации, особенно создание наблюдательных государственных учрежденийдля обеспечения применения законов.

*Ключевые слова:* транснациональная корпорация, прямые иностранные инвестиции, инвестиционная среда, законадательное регулирование, авторское право, товарные знаки, патенты, промышленные образцы, передача технологии, ноу-хау применения законов.

# CONSTITUTIONAL ECONOMICS AND CORRUPTION

***Tadevosyan Julieta Aramayis***
*European Regional Educational Academy, Phd in Economics*
***Khachatryan Nonna Nikolay***
*Yerevan state University, Phd in Economics*

Constitutional economics takes into account the significant impacts of political and economic decisions as opposed to limiting analysis to economic relationships as functions of the dynamics of distribution of marketable goods and services. "The political economist who seeks to offer normative advice, must, of necessity, concentrate on the process or structure within which political decisions are observed to be made. Existing constitutions, or structures or rules, are the subject of critical scrutiny."[1]

Constitutional economics has been characterized as a practical approach to apply the tools of economics to constitutional matters. For example, a major concern of every nation is the proper allocation of available national economic and corruption. The legal solution to this problem also falls within the scope of constitutional economics. [2]

The fight against corruption has been high on the political agenda in Armenia for many years, as evidenced by a number of legal reforms regarding corruption, integrity and strengthening of the judiciary. Nevertheless, it is widely agreed by observers that corruption remains an important problem for Armenian society. The judiciary is perceived as being particularly prone to corruption. Moreover, according to various national and international reports, the independence of the judiciary – both from external actors such as the executive and from internal judicial actors – appears unsatisfactory. Concerns have also been raised about the lack, in practice, of a clear separation of powers and the weakness of the National Assembly (the national Parliament) and the judiciary; the “excessive concentration of powers”; and the lack of transparency in public decision-making.[3]

Traditional approaches to fighting against corruption and the abuse of govern positions, as a rule; do not give any result developing countries. Traditional approaches to fighting against corruption and the abuse of

govern positions, as a rule; do not give any result developing countries. Western countries in this area focused on amplification the rule of law and strengthening the fight against crime areas. Meanwhile, the application of such approaches dose not reducing corruption risks in transition economies. Moreover, there is a serious danger that focuses mainly on the fight against corruption imposing punitive legal methods, can contribute to the corruption enforcement on law agencies in these countries.[4] Although the fight against corruption has been one of the priorities of Armenia's authorities, however it still remains an important issue and it is imperative that the reforms carried out in this direction without delay and determination.

Entrenched corruption and strong patronage networks, a lack of clear separation between private enterprise and public institution, as well as political and business elites merging typically leads to the conclusion, that efforts to fight corruption do not have much effect.

Thus, in recent years the dynamics of the disclosure of bribe-takers, shows that crimes against these vicious crime constitute only 10% of state authority, service and order management structure (see Table 1.).

*Table 1*

***The number of registered crimes by types (quantity)* [5]**

| Types of crimes | 2015 | 2014 | 2013 |
|---|---|---|---|
| Crimes against State, service order and governs | 1 076 | 2 212 | 2836 |
| Including | | | |
| Abuse of official position | 168 | 152 | 103 |
| taking bribes, giving bribes, motion | 97 | 66 | 80 |
| violence against a government representative | 49 | 32 | 44 |
| against state authorities and administration | 762 | 1 962 | 2609 |

The reason, in our opinion, entrenched corruption and the existence of strong networks of patronage, which does not allow making full disclosure of corruption cases.

*Table 2*

***The number of corruption cases registered by types of crimes (quantity) [5]***

| Types of crimes | 2015 | 2014 |
|---|---|---|
| Fraud, abuse of official position | 2 | 4 |
| Fraud, under the pretext of bribery | 3 | 14 |
| Mastering the use of official position | 30 | 7 |
| Embezzlement or waste of large amounts | 55 | 102 |
| Commercial bribe | 4 | 15 |
| Tax evasion | 95 | 110 |
| Abuse of authority by the employees of commercial organizations | 39 | 34 |
| Contraband, using Official's position | 10 | 1 |
| Abuse of official authority | 99 | 105 |
| Overcome the official authorities | 69 | 47 |
| Participation in illegal business | 1 | |
| Taking bribes | 50 | 41 |
| Illegal payment by a public servant | 5 | 6 |
| Giving bribes | 18 | 11 |

*Table 3*

***The number of persons by corruption crimes, subjected to criminal liability offenses (persons)*** **[5]**

| Types of crimes | 2015 | 2014 |
|---|---|---|
| Fraud, abuse of official position | 1 | 1 |
| Fraud, under the pretext of bribery | 2 | 2 |
| Mastering the use of official position | 17 | 5 |
| Embezzlement or waste of large amounts | 36 | 62 |
| Commercial bribe | 8 | 16 |
| Tax evasion | 43 | 66 |
| Abuse of authority by the employees of commercial organizations | 20 | 19 |
| Contraband, using Official's position | 10 | 14 |
| Abuse of official authority | 31 | 67 |
| Overcome the official authorities | 9 | 15 |
| Participation in illegal business | 2 | 2 |

| | | |
|---|---|---|
| Giving bribes | 28 | 14 |
| Illegal payment by a public servant | 2 | 5 |
| Giving bribes | 58 | 17 |
| Bribery mediation | 7 | 4 |

This is evidenced by the comparative analysis of the number of corruption cases and the number of those prosecuted (see Tables 2 and 3). It turns out, that a number of people were identified as responsible for corruption crimes does not exceed the number of crime cases, because in most cases, not all members of the chain of corruption are punished, but only one of them, who takes on the entirety of the offense.

The formation of corruption risks typically considered a political or economic domain. However, we think it is important also to consider corruption within complex interaction of political and economic factors. If in the country is a situation of unbalanced political and economic development levels, the expansion is in great danger of corruption, and vice versa.

*Keyworld:* political and economic decisions, corruption risks, corruption case statistics, political and economic factors interrelation.

**Literature**

1. James M. Buchanan, 1986. "The Constitution of Economic Policy," Nobel Prize lecture
2. Christian Kirchnez, *The Principles of Subsidiary in the Treaty on European Union: A Critique from a Perspective of*
3. *Constitutional Economics*, 6 TUL. J.INT'L. & COMP. L. 291, 293 (1998)
4. Transparency International's 2013 "Overview of corruption and anti-corruption in Armenia" (http://www.transparency.org/files/content/corruptionqas/Overview_of_corruption_in_Armenia_1.pdf)
5. Democracy building in Armenia, The Economic Instruments of Anticorruption Fight, // US Research and Education programs Alumni Armenian Association, 2005, page 122
6. "Socio-economic situation in Armenia, 2015, January-December" Armenian NSS, 2016, pages 160-162

# ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Ջուլիետա Արամայիսի Թադևոսյան**
Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
**Նոննա Նիկոլայի Խաչատրյան**
Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

## Ամփոփում

Սահմանադրական տնտեսագիտությունը գիտական նոր ուղղություն է, որը ձևավորվեց 20-րդ դարի վերջերին և իր առջև խնդիր դրեց ուսումնասիրելու քաղաքական գործընթացների և երկրի տնտեսության զարգացումների միջև առկա օրինաչափությունները: Ներկայումս, հատկապես բազմակողմանի վերլուծությունների են ենթարկվում կոռուպցիոն ռիսկերի տնտեսական հետևանքները, որոնք առնչվում են երկրում ձևավորված սահմանադրականության կարգի պահպանման և ներքաղաքական զարգացումներին: Այս առումով, արդիական է համարվում կոռուպցիոն ռիսկերի մակրոկառավարումը՝ քաղաքական և տնտեսական գործընթացների փոխառնչության համատեքստում, որն էլ սահմանադրական տնտեսագիտության ուսումնասիրման առարկա է հանդիսանում:

*Հիմնաբառեր.* քաղաքական և տնտեսական որոշումներ, կոռուպցիոն ռիսկեր, կոռուպցիայի վիճակագրություն, տնտեսական և քաղաքական գործոնների փոխկապվածություն

# КОРРУПЦИОННЫЕ РИСКИ В КОНСТИТУЦИОНАЛЬНОЙ ЭКОНОМИКЕ

**Тадевосян Джульета Арамаисовна**
к.э.н., доцент, Европейская оброзовательная региональная академия
**Хачатрян Нонна Николаевна**
к.э.н., доцент, Ереванский государственный университет

## Резюме

Конституциональная экономика новое направление науки, которая сформировалась в конце 20-ого века, преследуя цель исследования существующих закономерностей между политическими процессами и развития экономики страны. В настоящее время разносторонне анализируются экономические последствия коррупционных рисков, которые относятся внутриполитическим процессам развитиям и сохранения конституционального порядка страны. В этой связи становится актуальным макро управление коррупционными рисками в контексте взаимосвязи политических и экономических процессов, что и является предметом исследования конституциональной экономики.

*Ключевые слова:* политические и экономические решения, коррупционные риски, статистика коррупции, взаимосвязь политических и экономических факторов

# ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ «ԽԵԼԱՑԻ ՔԱՂԱՔ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

***Իրինա Ղևոնդի Վանյան***
*ԵԿՏԱ տնտեսագիտության և կառավարման ամբիոն,*
*տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*

«Խելացի քաղաք» երևույթը որպես հայեցակարգ սկսեց ձևավորվել 90-ական թվականների վերջում: Արդյունաբերական զարգացման ալիքները առաջացրին բնակչության և քաղաքային տարածքների աննախադեպ աճ: Որքան մեծանում էր քաղաքների բնակչությունը, այնքան թուլանում էր բնակիչների միջև կապը: Այս առումով հնարավոր չէ չհամաձայնվել հարցը ուսումնասիրող այն հեղինակների հետ,[1] ովքեր համարում են, որ մարդկանց միջև հաղորդակցության միջոցների բացակայության պատճառով առաջացավ համակարգողի անհրաժեշտությունը: Համակարգողի դերում հանդես եկավ տեղական իշխանությունը, որը սկսեց ծառայել որպես միջնորդ քաղաքացիների միջև: Համացանցի, բջջային հեռախոսների և հաղորդակցման ժամանակակից այլ տեխնիկայի առաջացումը նպաստեց քաղաքային տնտեսություններում նոր ենթակառուցվածքների ստեղծմանը՝ ընդլայնելով բնակիչների հաղորդակցման հնարավորությունները տարբեր մեծության և զարգացման ուղղվածության քաղաքներում: Անկախ նրանից, թե որքան մեծ է քաղաքը, շնորհիվ ինտերնետային համացանցի, բնակիչները հնարավորություն ունեն ստեղծելու հաղորդակցման անկախ հարթակ: Տեղական իշխանությունների միջնորդության մենաշնորհը մարդկանց միջև կապ ապահովելու գործընթացում քայլ առ քայլ կորցնում է իր ուժը: Այս միտումների զարգացումները անշուշտ ազդեցին և շարունակում են ազդել ներկայում քաղաքային տնտեսությունների զարգացման և կառավարման գործընթացների վրա:

---

[1] а) Максим Агеев. Концепция умных городов: энергоэффективные технологии и решения для устойчивого развития; роль взаимодействия заинтересованных сторон в создании умного города, 2014г., 29 с.
б) Федор Новиков. Концепция "Умного города". Идеи и реализация.

«Խելացի քաղաք» հայեցակարգի մասին տարբեր աղբյուրներ և հեղինակներ յուրովի են մեկնաբանում այն: Սակայն անգամ կարծիքների նման բազմազանության մեջ հնարավոր է գտնել ընդհանուր հիմնական եզրեր, որոնք թույլ են տալիս առանձնացնել «Խելացի քաղաքի» սահմանումների տարբերակները, ինչպես նաև խոսել հայեցակարգի դրական և բացասական կողմերի մասին:

Ուշագրավ է, որ խնդրին վերաբերող աշխատություններում ուսումնասիրությունը սկսվում է մի ընդհանուր հարցից, որն է, «Ի՞նչ է խելացի քաղաքը»:[2] Այդ հարցին ի պատասխան, թե ինչ է նշանակում «խելացի քաղաք», ձևավորված են բազմաթիվ սահմանումներ: Ստորև բերված են այդ սահմանումներից առավել տարածվածները, մասնավորապես.

1. «Խելացի քաղաք»-ը դա ժամանակակից կյանքի ապահովումն է նորարարական տեխնոլոգիաների օգտագործման միջոցով, որոնք ապահովում են ծախսերի արդյունավետ օգտագործումը:
2. «Խելացի քաղաք»-ը խելացի կառավարում, խելացի կենսամակարդակ, խելացի մարդիկ, խելացի միջավայր, խելացի տնտեսություն է:
3. «Խելացի քաղաք»-ը համարվում է բարձր տեխնոլոգիաների քաղաք, որը բաղկացած է հետևյալ տարրերից՝ արդյունավետ կառավարում, տնտեսական զարգացում, բարձր հեղինակություն:

«Խելացի քաղաք» հայեցակարգը ավելի պատկերավոր ներկայացվում է գրաֆիկական մոդելների միջոցով, որոնք նույնպես բազմազան են: «Խելացի քաղաք»-ի գրաֆիկական մոդելների բազմաթիվ տարբերակներից մեկը ներկայացված է գծապատկեր 1-ում:

---

[2] Smart City Concept. https://en.wikipedia.org/wiki/Smart_city
What is Smart City.
http://smartcities.gov.in/writereaddata/What%20is%20Smart%20City.pdf
What is Smart City?: definition and meaning.
http://www.businessdictionary.com/definition/smart-city.html
What is a 'smart city' and how it will work. http://timesofindia.indiatimes.com/What-is-a-smart-city-and-how-it-will-work/listshow/47128930.cms?utm_source=twitter.com&utm_medium=referral
Что такое "умный" устойчивый город? https://itunews.itu.int/Ru/Note.aspx?Note=5404

**Գծապատկեր 1. «Խելացի քաղաք» գրաֆիկական մոդելների տարբերակներից մեկը:**




Հիմա արդեն դժվար է պատկերացնել որևէ քաղաքային տնտեսություն առանց բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների հնարավորությունների կիրառման: Այն ակտիվորեն օգտագործվում է կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ քաղաքների իշխանությունների կողմից առաջարկվող տարբեր ծառայությունների մատուցման գործընթացներում: Տեղեկատվական տեխնոլոգիաները բավականաչափ արագ կարևոր տեղ գրավեցին քաղաքային զարգացման պլանավորման գործընթացներում: Անվիճելի է դառնում այն փաստը, որ քաղաքային տնտեսությունների հեռանկարային զարգացման ուղիները ավելի և ավելի են կապվում «խելացի քաղաքների» ձևավորման գործընթացի հետ: Ներկայումս առանձնացվում են «խելացի քաղաքների» ձևավորման մի շարք տեխնոլոգիաներ, որոնք միավորված են փուլային իրագործման մոտեցմամբ.[3]

Քաղաքային տնտեսությունների զարգացման հեռանկարները, որոնց հիմքում ընկած է «խելացի քաղաքի» ձևավորման ռազմավա-

[3] 12 технологий умного города. http://www.therunet.com/articles/353-12-tehnologiy-umnogo-goroda

րությունը, կարող են լինել տարբեր՝ կախված տարբեր տեսլականնե-րից, տեխնոլոգիական բաղադրիչներից, կազմակերպչական և տնտե-սական բարեփոխումներից: Առավել ուշագրավ է «խելացի քաղաքի» հայեցակարգի սկզբունքների վրա հիմնված քաղաքային տնտեսու-թյան զարգացման միասնական մոտեցումը, որը ներառում է հետևյալ աշխատանքները[4].

- «Խելացի քաղաքի» ռազմավարության զարգացման մշակում և ընդունում: Ռազմավարության իրականացման համար շա-հագրգիռ կողմերի և հասարակության հետ տարվում է աշխա-տանք, ապահովելով կողմերի հավասարակշիռ շահերը:
- Աշխատանքային խմբի ստեղծում՝ «խելացի քաղաքի» զարգա-ցումը և ներդրումների ներգրավումը վերահսկելու համար:
- Ճանապարհային քարտեզի մշակում, որտեղ նախանշվում են ենթակառուցվածքների օբյեկտները:
- Տեխնիկատնտեսական ցուցանիշներով ներդրումային նա-խագծերի մշակում և հաստատում:
- Ինտեգրված տարածքի և ենթակառուցվածքների զարգացման ծրագրերի մշակում և ընդունում:
- Համայնքային կազմակերպությունների արտադրական ծրագ-րերի մշակում և հաստատում, որոնք ուղղված են նորարարու-թյան և զարգացման մոդեռնիզացմանը/արդիականացում/:

«Խելացի քաղաքի» հայեցակարգի հիմնական սկզբունքների կի-րառմամբ քաղաքային տնտեսությունների հեռանկարային զարգացու-մը ենթադրում է մի շարք նախադրյալների առկայություն: Դրանցից կարևորագույնը ինստիտուցիոնալ բարեփոխումների գործընթացն է, որը նախատեսում է հասարակության ժողովրդավարության զարգա-ցում, տնտեսական հարաբերությունների ազատականացում, տնտե-սական մենաշնորհների կարգավորում, ինչպես նաև հրապարակայ-նության և թափանցիկության ապահովում:

---

[4] Умный город: Эффективное управление развитием. https://geektimes.ru/company/gsgroup/blog/265366/ Игорь Богачёв: «Реализация концепции умного города – первостепенная задача муниципалитетов». http://glagolurfo.com/newsitems/2015/7/11/realizaciya-koncepcii-umnogo-goroda/ Ганин О.Б., Ганин И.О. "Умный город": перспективы и тенденции развития.

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

*Առանցքային բառեր.* «խելացի քաղաք» հայեցակարգ, քաղաքային տնտեսության զարգացում, հեռանկարային զարգացման պլանավորում:

### Գրականություն


1. Максим Агеев. Концепция умных городов: энергоэффективные технологии и решения для устойчивого развития; роль взаимодействия заинтересованных сторон в создании умного города, 2014г., 29 с. http://www.energosovet.ru/stat850.html
2. Федор Новиков. Концепция "Умного города". Идеи и реализация. http://idoorway.mirtesen.ru/blog/43838845148/Kontseptsiya-Umnogo-goroda.-Idei-i-realizatsiya.
3. Smart City Concept. https://en.wikipedia.org/wiki/Smart_city
4. What is Smart City. http://smartcities.gov.in/writereaddata/What%20is%20Smart%20City.pdf
5. What is Smart City?: definition and meaning. http://www.businessdictionary.com/definition/smart-city.html
6. What is a 'smart city' and how it will work. http://timesofindia.indiatimes.com/What-is-a-smart-city-and-how-it-will-work/listshow/47128930.cms?utm_source=twitter.com&utm_medium=referral
7. Что такое "умный" устойчивый город? https://itunews.itu.int/Ru/Note.aspx?Note=5404
8. 12 технологий умного города. http://www.therunet.com/articles/353-12-tehnologiy-umnogo-goroda
9. Умный город: Эффективное управление развитием. https://geektimes.ru/company/gsgroup/blog/265366/
10. Игорь Богачёв: «Реализация концепции умного города – первостепенная задача муниципалитетов». http://glagolurfo.com/newsitems/2015/7/11/realizaciya-koncepcii-umnogo-goroda/
11. Ганин О.Б., Ганин И.О. "Умный город": перспективы и тенденции развития http://cyberleninka.ru/article/n/umnyy-gorod-perspektivy-i-tendentsii-razvitiya

## PERSPECTIVE OF URBAN DEVELOPMENT FROM THE POINT OF VIEW OF “SMART CITY” CONCEPT

**Irina Vanyan Ghevondi**
PhDin Economics, Associate Professor

### Annotation

The perspective opportunities of urban economies development based on the principles of «Smart city» conception are considered. The main points of the «Smart city» conception and methodological approaches to their using for urban development planning are presented.

*Keywords:* «Smart city» conception, development of urban economy, planning of perspective development.

## ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ГОРОДСКИХ ХОЗЯЙСТВ С ТОЧКИ ЗРЕНИЯ КОНЦЕПЦИИ “УМНОГО ГОРОДА”

**Ваниян Ирина Гевондовна**
кандидат экон.наук, доцент

### Аннотация

Рассматриваются перспективные возможности развития городских хозяйств на основе принципов концепции “умного города”. Представлены основные положения концепции “умного города” и методические подходы их применения в процессе планирования городского развития.

*Ключевые слова:* концепция “умного города”, развитие городского хозяйства, планирование перспективного развития.

# ՄՈՏԻՎԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

***Կիրակոսյան Նարինե Լեռնիկի***
*տնտ.թ., դոցենտ*
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի դասախոս*

Մոտիվացիոն գործընթացը առաջին հայացքից բավականին պարզ և ակնհայտ է թվում: Կարծես ղեկավարին ընդամենը անհրաժեշտ է պարզել աշխատողների առաջնահերթ պահանջմունքները, և նա հեշտությամբ կկարողանա ձևավորել այնպիսի աշխատանքային պայմաններ, որոնք ոչ միայն կհետաքրքրեն աշխատողներին, այլև կբարձրացնեն նրանց աշխատանքի արտադրողականությունը: Սակայն իրականում մոտիվացիան շատ ավելի բարդ գործընթաց է, քանի որ հնարավոր է, որ առաջանան բազմաթիվ խնդիրներ, որոնք առանձնահատուկ և անկանխատեսելի են դարձնում յուրաքանչյուր մարդու մոտիվացիան: Դրանցից են.

1. Մարդու պահանջմունքները շատ դինամիկ են և անընդհատ փոփոխվում են ժամանակի և տարածության մեջ: Բացի դրանից, հին պահանջմունքները ժամանակի ընթացքում կորցնում են իրենց ուժը, և նրանց փոխարինելու են գալիս նորերը:
2. Աշխատողի մոտիվացիան, նրա վերաբերմունքը աշխատանքին ոչ միայն կախված է իր պահանջմունքներից, այլև դրանց բավարարման առկա հնարավորություններից:
3. Մոտիվացիան տարբեր կերպ է արտահայտվում տարբեր աշխատողների վարքագծում: Մեկը կարող է իր անվտանգության պահանջմունքից ելնելով՝ շատ զգույշ գործել, խուսափել նույնիսկ չնչին պատասխանատվությունից, մյուսը, նույն անվտանգության պահանջմունքը ունենալով կարող է ձգտել ավելի շատ պատասխանատվության՝ վախենալով կորցնել իր աշխատանքը:
4. Տարբեր մարդիկ տարբեր կերպ են հաղթահարում պահանջմունքների բավարարման ընթացքում իրենց առջև ծառացած արգելքները. մեկը հուսահատվում է, դադարեցնում աշխատանքը, մյուսը՝ կրկնապատկում ջանքերը:
5. Շատ ղեկավարներ չեն գիտակցում, որ հենց իրենց վրա է դրված աշխատողներին շահադրդելու պարտականությունը:

Մոտիվացիոն գործընթացը կարելի է ներկայացնել իրար հետ սերտորեն փոխկապակցված հետևյալ 6 փուլերի միջոցով (տես, գծանկար 1).

**Գծանկար 1. Մոտիվացիոն գործընթացի փուլերը**[1]




1. **Պահանջմունքի ծագում**: Այս փուլում մարդը գիտակցում է, որ ինչ-որ բանի կարիք ունի, ինչն էլ «ստիպում» է վերջինիս կոնկրետ

[1] О.С. Виханцкий, А.И. Наумов Менеджмент М., Фирма Гардарика. 2006 (стр. 127)

գործողություններ իրականացնել ծագած պահանջմումքը բավարարելու համար: Հոգեբանները պնդում են, որ պահանջմունքը մարդու մեջ ծագում է այն ժամանակ, երբ նա հոգեբանական կամ ֆիզիոլոգիական բնույթի որևէ կարիք է զգում: Պահանջմունքները կարող են շատ տարբեր լինել, պայմանականորեն դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ առաջնային և երկրորդային, որոնք էլ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- կենսաբանական,
- հոգեբանական,
- սոցիալական:

2. **Ծագած պահանջմունքի վերացման ուղիների որոնում**՝ այն բավարարելու, զսպելու կամ անտեսելու միջոցով:

3. **Նպատակների և գործողությունների ուղղությունների որոշում:** Այս փուլում որոշվում է, թե կոնկրետ ինչ գործողություններ պետք է իրականացվեն ծագած պահանջմունքը բավարելու համար:

4. **Գործողությունների իրականացում:** Մարդը ջանքեր է գործադրում իր մեջ ծագած պահանջմունքը արդյունավետորեն բավարարելու համար:

5. **Գործողությունների հաջողությամբ իրականացման համար պարգևատրում:** Համապատասխան աշխատանք իրականացնելով՝ մարդը ստանում է այն, ինչ անհրաժեշտ էր իր պահանջմունքները բավարարելու համար: Այս փուլում կարևորվում է այն, թե որքանով են իրականցված գործողությունները ապահովել ցանկալի արդյունքը: Սրանից կախված տեղի է ունենում կամ մոտիվացիայի ուժեղացում, կամ պահպանում, կամ էլ՝ թուլացում:

6. **Պահանջմունքի իրացում:** Այս փուլում անհատը կամ դադարեցնում է իր գործողությունները մինչև նոր պահանջմունքի ի հայտ գալը, կամ էլ շարունակում է գոյություն ունեցող պահանջմունքի բավարարման նոր ուղիներ փնտրել:

Մոտիվացիոն գործընթացի տրամաբանությունը հասկանալը դեռևս այն արդյունավետ կառավարելու հնարավորություն չի ընձեռում: Այստեղ կարևոր նշանակություն ունեն մի շարք գործոններ, որոնցից հատկապես կարևորվում գոյություն ունեցող դրդապատճառների ոչ ակնհայտ լինելը: Անհրաժեշտ է կանխագուշակել աշխատողների աշխատանքային վարքի վրա ազդող դրդապատճառները:

Հաջորդ կարևոր գործոնը մոտիվացիոն գործընթացի փոփոխականությունն է: Մոտիվացիոն գործընթացի բնույթը պայմանավորում են այն ձևավորող պահանջմունքները: Վերջիններս սերտ փոխազդեցության մեջ են գտնվում միմյանց հետ, արագ փոփոխվում են և շատ հաճախ հակասում են իրար: Սրանով էլ պայմանավորված է մոտիվացիոն գործընթացի փոփոխականությունը:

Յուրաքանչյուր անհատի մոտիվացիոն համակարգը յուրահատուկ է և անկանխատեսելի: Դրա պատճառը տարբեր մարդկանց մոտիվացիոն կառուցվածքի և արժեքային համակարգի, նրանց պահանջմունքների և դրդապատճառների տարբերությունն է:

Ընդհանուր առմամբ՝ մոտիվացիոն գործընթացը շատ բարդ է, փոփոխուն և անկանխատեսելի: Դրա կառավարումը ենթադրում է կազմակերպության յուրաքանչյուր ստորաբաժանման անձնակազմի մանրակրկիտ ուսումնասիրություն, յուրաքանչյուր աշխատակցի պահանջմունքների և դրդապատճառների բացահայտում, դրա հիման վրա մոտիվացիայի արդյունավետ համակարգի ձևավորում (գծանկար 2):

**Գծանկար 2. Մոտիվացիոն գործընթացի կառավարումը[2]**




Ինչպես երևում է գծանկար 2-ից մոտիվացիոն գործընթացի կառավարումը ենթադրում է անձնակազմի կառավարման այլընտրանքային տարբերակների որոնում, աշխատողների շահադրդման հնա-

[2] Уткин Э. А. Мотивационный менеджмент М. Тандем Изд-во ЭКМОС, 2009, (стр129)

րավոր ձևերի վերլուծություն և դրա հիման վրա մոտիվացիայի կառավարման արդյունավետ գործիքակազմի մշակում: Սակայն բոլոր կազմակերպություններում այդ գործընթացը միանման չէ, կարևոր է կազմակերպության տեսակը, դրա հիմնական նպատակը և առաքելությունը, կազմակերպության և աշխատակիցների արժեքային համակարգը, կազմակերպությունում սոցիալ-հոգեբանական մթնոլորտը և այլն:

Այս բոլոր գործոնները հաշվի առնելով՝ կարելի է մոտիվացիոն գործընթացը հաջողությամբ կառավարել և այն ծառայեցնել կազմակերպության նպատակների իրականացմանը: Դա հնարավորություն կընձեռի կազմակերպությանը տնտեսելու իր ժամանակային, աշխատանքային և մնացած ռեսուրսները, բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը, արդյունավետությունը և որակը:

Մոտիվացիայի կառավարումը իրականացվում է մի շարք մեթոդներով, որոնցից կազմակերպության ղեկավարը պետք է ընտրի իր աշխատողներին շահադրդելու համար: Եթե այդ ընտրությունը ճիշտ է արվում, ղեկավարը կարողանում է կոորդինացնել իր ենթակաների գործողությունները արդյունավետ աշխատանք իրականացնելու նպատակով:

Մոտիվացիոն մեթոդների դասական դասակարգումը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ[3].

1. տնտեսական մեթոդներ,
2. սոցիալական մեթոդներ,
3. հոգեբանական մեթոդներ,
4. կազմակերպակարգադրիչ մեթոդներ,
5. իրավական մեթոդներ:

Ներկայիս շուկայական տնտեսության պայմաններում առանձնահատուկ նշանակություն ունեն մոտիվացիայի տնտեսական մեթոդները, որոնք ներառում են զանազան դրամական խրախուսումները, տույժերը և տուգանքները: Այս մեթոդի հիմքը մարդու նյութական ապահովվածության ուղղակի կախվածությունն է նրա կատարած աշխատանքի արդյունքներից: Որպես կանոն ավելի արդյունավետ են նյութական խթանները, քան տուգանքները, քանի որ վերջիններս իջեցնում են շահադրդման աստիճանը:

---

[3] Русинов Ф.М., Никулин Л.Ф., Фаткин Л.В.-Менеджмент и самоменеджмент в системе рыночных отношений :Учеб. Пособие.-М.,ИНФРА-М.,1996 (стр.59-68)

Սոցիալական մեթոդներն են սոցիալական ակտիվության կառավարման, անհատների վարքագծի նորմատիվների սահմանման, սոցիալական կարգավորման, պրոպագանդայի և ագիտացիայի մեթոդները:

Շուկայական տնտեսությանը անցմանը զուգընթաց, սոցիալական մեթոդները իրենց տեղը զիջեցին տնտեսական մեթոդներին:

Իրենց բարդությամբ առավել աչքի են ընկնում մոտիվացիայի կառավարման հոգեբանական մեթոդները: Դրանցից կարևորագույններն են համարվում աշխատողի հոգեբանական շահադրդումը, կադրերի մասնագիտական ընտրությունը, կողմնորոշումը, ուսուցումը և այլ սոցիալ-հոգեբանական մեթոդներ:

Կազմակերպակարգադրիչ մեթոդներից են կառավարչական կարգադրությունները, նորմերը, կարգ ու կանոնը, պատասխանատվությունը և այլն:

Իրավական մեթոդները առավել կարևորություն ստացան իրավական պետության ձևավորմանը զուգընթաց: Կազմակերպությունում գործող մնացած բոլոր մեթոդները պետք է համապատասխանեն իրավական նորմերին և չհակասեն դրանց:

Ժամանակակից կառավարման մեջ կիրառվում են նաև մոտիվացիայի կառավարման մեթոդների այլ դասակարգումներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ[4].

1. **Տնտեսական խթանների կիրառման մեթոդ** (աշխատավարձ, պարգևատրումներ, պարգևավճարներ, ապահովագրություն, առանց տոկոսների վարկերի տրամադրում և այլն): Դրանց ներգործության արդյունավետությունը որոշվում է նրանով, թե որքանով է անձնակազմը ընդունում գործող մոտիվացիոն համակարգը, այն համարում արդարացի, ինչ ազդեցություն ունեն խթանումը և պատիժը աշխատանքի արդյունավետության վրա և այլն:

2. **Ըստ նպատակների կառավարման մեթոդ**: Այս համակարգը լայնորեն կիրառվում է նպատակների ծառը կառուցելու համար, նպաստում է կազմակերպության հիմնական նպատակի իրականացմանը:

3. **Աշխատանքային գործունեության հարստացման մեթոդ**: Այս համակարգը ավելի շատ վերաբերում է ոչ նյութական խթանման ձևերին, որոնք աչքի են ընկնում աշխատողներին առավել հետաքրքիր և հե-

---

4 Richard M. Hodgetts, Donald F. Kuratko “Effective Small Business Management” USA 2001 (p236)

ռանկարային աշխատանք տրամադրելով, աշխատողների ինքնուրույնության բարձր աստիճանով, աշխատանքի որոշակի ռեժիմով և այլն:

4. **Մասնակցության վրա հիմնված (Փարթիսիփաթիվ) մեթոդ**: Այս մեթոդը ենթադրում է ինչպես կարևորագույն կառավարչական որոշումների կայացմանը անձնակազմի մասնակցություն, այնպես էլ կազմակերպության բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը: Մասնակցության վրա հիմնված (փարթիսիփաթիվ) կառավարման հիմնադրույթը ենթադրում է, որ եթե աշխատողը հետաքրքրվում է կազմակերպության ճակատագրով, ապա նա կմասնակցի ներկազմակերպական տարբեր գործընթացների, դրանից բավարարվածություն կստանա, հաճույքով կկատարի իր պարտականությունները: Այս հիմնադրույթը աշխատողներին հնարավորություն է տալիս մասնակցելու կառավարչական որոշումների ընդունման գործընթացին, ինչն էլ շահադրդում է նրանց ավելի լավ աշխատելու՝ իրենց ներդրումն ունենալով տվյալ կազմակերպության գործունեության մեջ[5]:

Այս և բազմաթիվ այլ մեթոդներ կիրառումը թույլ է տալիս ղեկավարին մոտիվացնելով կառավարելի դարձնել աշխատողների վարքը՝ այն ուղղորդելով կազմակերպության համար ցանկալի հունով:

Այսպիսով՝ մոտիվացիայի կառավարումը առանձին անհատին կամ խմբին գործողությունների մղող գործընթաց է՝ կազմակերպության նպատակները իրականացնելու համար, որի ելակետը մարդու չբավարարված պահանջմունքներն են:

*Առանցքային բառեր.* մոտիվացիա, մոտիվացիոն գործընթաց, մոտիվացիայի կառավարում, մոտիվացիայի կառավարման մեթոդներ, մոտիվացիոն գործընթացի փուլերը:

## Գրականություն


1. О.С. Виханцкий, А.И. Наумов Менеджмент М., Фирма Гардарика. 2006
2. Уткин Э. А. Мотивационный менеджмент М. Тандем Изд-во ЭКМОС, 2009


[5] О.С. Виханцкий, А.И. Наумов Менеджмент М., Фирма Гардарика. 1996 (стр. 133-134)

3. Русинов Ф.М., Никулин Л.Ф., Фаткин Л.В. – Менеджмент и само-менеджмент в системе рыночных отношений:Учеб. Пособие.-М., ИНФРА-М., 1996
4. Richard M. Hodgetts, Donald F. Kuratko "Effective Small Business Management" USA 2001

## УПРАВЛЕНИЕ ПРОЦЕССОМ МОТИВАЦИИ

**Киракосян Нарине Лерниковна**
канд. экон. наук, доцент
ЕРОА, лектор кафедры Экономики и управления

**Резюме**

В статье обсуждена сущность управления процессом, факторы влияющие на него. Рассмотрены этапы процесса мотивации. Выявлена связь между мотивацией и неудовлетворенными потребностоми. Подчеркнута роль и значимость управлвния мотивацией в организации. Представлены современные методы управления мотивацией.

*Ключевые слова.* Мотивация, процесс мотивации, управления мотивацией, методы управления мотивацией, этапы процесса мотивации.

## THE MANAGEMENT OF MOTIVATION PROCESS

**Kirakosyan Narine Lernik**
Ph.D. in Economics, Associate Professor
EREA, lecturer of department Economics and Management

**Summary**

In this article, the entity of process of motivation management was discussed, as well as the factors affecting on it. In addition, the motivation process stages were studied. The connection between the management of the motivation and unmet needs were discovered. The modern methods of the motivation management were introduced.

*Keyword:* motivation, motivation process, motivation management, methods of the motivation management, stages of the motivation process.

# ԻՆՈՎԱՑԻՈՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ

***Անահիտ Զարզանդի Ոսկանյան***
*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա,*
*Զբոսաշրջության և սպասակման նոր տեխնոլոգիաների ամբիոն,*
*դասախոս*

Ինովացիան և ինովացիոն գործունեությունը ավանդաբար ներկայացվում է որպես գիտատեխնիկական առաջընթաց և գործընթաց, որը կապված է գիտական հետազոտությունների արդյունքների ներդրման ու գործնականում մշակման հետ: Սակայն «ինովացիա» հասկացության իմաստն ու բովանդակությունն ավելի լայն է: Այն նաև ներառում է գործընթացում, արտադրանքի մեջ, մարքեթինգում, կազմակերպության գործունեության մեջ կատարվող փոփոխությունները:Իսկ ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենքում այն սահմանվում է հետևյալ կերպ. «Ինովացիան տնտեսական շրջանառության մեջ օգտագործվող, նոր կամ կատարելագործված տեխնոլոգիական գործընթացի, նոր կամ կատարելագործված արտադրանքի կամ ծառայության տեսքով իրացում գտած վերջնական արդյունքն է»:[1] Այսպիսով՝ ինովացիան նորույթի վրա տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, գիտատեխնիկական կամ այլ տեսակի ազդեցության վերջնական արդյունքն է, որը պահանջարկ ունի հասարակության կողմից:

Ներկայումս ինովացիոն գործունեության հանդեպ նկատվում է մեծ հետաքրքրություն: Առանց ինովացիաների կիրառման գրեթե անհնար է ստեղծել մրցունակ արտադրանք: Շուկայական տնտեսության մեջ ինովացիաները հանդես են գալիս որպես մրցակցային պայքարի միջոց, բարձրացնում են տվյալ տարածաշրջանի, կազմակերպության, արտադրանքի վարկանիշը:

Ինովացիոն գործունեության գործառույթների կառավարումն իրականացվում է նպատակաուղղված համակարգերի և բազմաբնույթ

[1] Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենք: Ընդունված է 2006թ. մայիսի 23-ին, Գլուխ 1 - Ընդհանուր դրույթներ, Հոդված 2. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

գիտելիքների միաժամանակյա համակցմամբ: Տնտեսության մեջ, կառավարման համակարգում և սոցիալական ոլորտներում բոլոր ինովացիաները փոխկապակցված են: Ինչն էլ ինովացիոն գործունեության գլխավոր՝ փոփոխության գործառույթի կառավարման համար տարատեսակ սուբյեկտների առաջացման պատճառ է հանդիսանում:

Ինովացիոն գործունեության գլխավոր գործառույթը հանդիսանում է փոփոխության գործառույթը: Առանձնացվում են հետևյալ փոփոխությունները.

- նոր տեխնիկայի, նոր տեխնոլոգիական գործընթացների կիրառում,
- նոր հատկություններով արտադրանքի ներդրում,
- նոր հումքի կիրառում,
- արտադրության կազմակերպման ու նրա նյութատեխնիկական ապահովման փոփոխություն,
- իրացման նոր շուկաների բացահայտում:

Ինովացիոն գործունեության հիմնական գործառույթը որպեսզի ցուցաբերի ամբողջական, ավարտուն արդյունք հարկավոր է՝

1. կազմակերպության մեջ ներգրավել արտադրական նոր ուժեր, աջակցել աշխատանքի արտադրողականության բարձրացմանը և արդյունավետությանը,
2. արտադրվող ապրանքների և ծառայությունների բազմազանության հաշվին բարձրացնել բնակչության պահանջմունքների մակարդակը,
3. պահանջմունքներին համապատասխանեցնել արտադրության կառուցվածքային փոփոխությունները, հավասարակշռություն մտցնել պահանջարկի և առաջարկի, արտադրության և սպառման միջև,
4. կոնկրետ անձանց ինտելեկտի ճանաչման և մշակութային արժեքների օգտագործման հնարավորություններ առաջարկել և խրախուսել ստեղծագործական գործունեության առաջընթացը:

Ինովացիոն հիմնական գործառույթի մեկնարկը սկսվում է այն ժամանակ, երբ առաջանում է նոր ապրանք (ծառայություն) ստեղծելու կամ արդեն գոյություն ունեցողի մեջ էական փոփոխություններ կատարելու, նոր տեխնոլոգիաների կամ հաղորդակցության միջոցների

ներդրման միտքը: Մշակվում և որոշվում է նպատակային ուղղվածությունը՝ կողմնորոշված կոնկրետ սպառողին: Ապագա ապրանքի մտքի ձևավորումից հետո ուսումնասիրվում են գործնականում մտքի իրականացման հնարավորությունները, իրականացվում է մատակարարների և գործընկերների փնտրում և ընտրություն, հիմնական և լրացուցիչ ծառայությունների ծրագրում: Նման գործողություններից հետո տրվում է ապրանքի փորձնական ստուգում, շնորհանդես, փորձնական վաճառք, ենթադրյալ պահանջարկի և մրցունակության գնահատում: Այնուհետև մեկնարկում է նախապես պլանավորված միջոցառումների համալիրը, որը ուղղված է ապրանքի առաջխաղացմանը և շուկայում դրա ներգրավմանը, իրացմանն ու առևտրայնացմանը: Ստեղծվում է վաճառքի կառավարման համակարգ, որն իր մեջ ներառում է աշխատակազմի խթանում: Հիմնական գործառույթը եզրափակվում է այն ժամանակ, երբ շուկայի այլ սուբյեկտներ իրենց գործունեության մեջ սկսում են ակտիվորեն կիրառել այդ ինովացիան:[2]

Կարելի է եզրակացնել, որ ինովացիայի հիմնական գործառույթի էությունը շուկայում (ձեռնարկությունում) նոր ապրանքի, նոր երևույթի կամ գործողության ներդրումն ու ադապտացումն է, որը սպառողին գրավելու, նրա պահանջմունքները բավարարելու և միաժամանակ ձեռնարկությանը շահույթ բերելու նպատակ է հետապնդում:

Վերոնշյալը հիմք ընդունելով՝ վենչուրային հիմնադրամները, տեխնոպարկերը և բիզնեսինկուբատորները մեր կողմից դիտարկվում են որպես փոփոխության գործառույթի արդյունավետ կառավարման սուբյեկտներ:

Վենչուրային հիմնադրամն իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից հիմնադրված կազմակերպություն է, որի նպատակն է արտադրության մեջ նոր արտադրատեսակների, բարձր տեխնոլոգիաների ստեղծման, յուրացման, փոխանցման ֆինանսավորումը:

Տեխնոպարկն իրավաբանական անձ է կամ համատեղ գործունեության վերաբերյալ պայմանագրային հիմունքներով կազմակերպված իրավաբանական անձանց (մասնակիցների) միություն, որի գլխավոր խնդիրն է ինովացիոն միջավայրի ձևավորման, համապատասխան նյութատեխնիկական, ֆինանսական բազայի ստեղծման

---

2 Васильева Л.Н., Муравьева Е.А., Методыуправления инновационной деятельностью, Москва, Кнорус, 2005, стр. 23-38

միջոցով ներդրումային և ինովացիոն ծրագրերի իրականացումը, գիտատար մշակումների, բարձր տեխնոլոգիաների ներգրավմանն ու համաշխարհային շուկաներում մրցունակ ապրանքի արտադրությանն ուղղված գործունեությունը:

Բիզնեսինկուբատորը նորաստեղծ փոքր և միջին ձեռնարկություններին և սկսնակ ձեռնարկատերերին օժանդակելու նպատակով ստեղծված կազմակերպություն է, որը կարող է լինել ինչպես ինքնուրույն, այնպես էլ գործել տեխնոպարկի կազմում:

Նմանատիպ ձեռնարկությունների մակարդակում ինովացիոն ակտիվությունը կախված է կառավարման որակից և ընտրած քաղաքականությունից, արտադրական համակարգերի ճկունությունից և ռեսուրսների օգտագործումից Քանի որ ըստ կիրառման ոլորտի՝ ինովացիաները լինում են գիտատեխնիկական, կազմակերպատնտեսական, սոցիալ-մշակութային և պետաիրավական, վերոնշյալ ձեռնարկությունների գործունեությունը հնարավորությունների լայն շրջանակ է ստեղծում փոփոխության գործառույթի համար՝ ապահովելով արդյունավետ կառավարման ցանկալի մակարդակ: Իսկ ինովացիոն ակտիվությունն արտահայտվում է ինովացիոն գործընթացներում. շուկայում ապրանքային, տեխնոլոգիական և կազմակերպակառավարչական նորույթների ստեղծմամբ, որոնք արտադրության մեջ հարկավոր է յուրացնել և առաջխաղացմանը նպատակաուղղված գործունեություն իրականացնել:

Վերոնշյալ սուբյեկտները կառավարման համակարգային մոտեցում են ցուցաբերում, ինչը ենթադրում է գիտական աշխատանքի արդյունքների տեղափոխության դիտարկում: Այսինքն՝ գիտություն-արտադրություն ամբողջական ցիկլի շրջանակներում գիտական գաղափարների առաջ քաշում՝ մինչ նրանց կիրառումը պրակտիկայում: Ինովացիոն արտադրանքի նկատմամբ բարձր հետաքրքրության պայմաններում նորարար-ձեռնարկությունները ստանում են ավելցուկային շահույթ: Սակայն գերշահույթը կրում է ժամանակավոր բնույթ, ինչը բավականին խիստ սահմանափակումներ է դնում ինովացիոն գործընթացների անցկացման ժամկետների ու շուկայում ժամանակին իրացման պայմանի վրա: Դրա հետ կապված արտադրանքի նորացումը շուկայական ռազմավարության շրջանակներում ենթադրում է նորապրանքի ստեղծման գործընթացի կազմակերպման, նրա պահան-

ջարկի կանխատեսման, արտադրության ծավալի, ծախքերի, գնի և այլ հարցերի համալիր դիտարկում:

Հանգում ենք այն եզրակացության, որ ինովացիոն գործունեության հիմնական գործառույթի կառավարման սուբյեկտների առանցքային խնդիրներն են փոփոխություններն ու նորացումները: Շատ հաճախ այս սուբյեկտները անմիջական մասնակցություն չեն ունենում նյութական բարիքներ ստեղծելիս, բայց տալիս են սպառողական յուրահատուկ արժեք, որն անհրաժեշտ է ժամանակակից հասարակության պահանջմունքները բավարարելու համար: Այս հաստատությունների գործունեությունը հենվում է կուտակված գիտելիքի և փորձի վրա: Տվյալ ոլորտի գործունեության խորը իմացությունը թույլ է տալիս կանխատեսել իրադարձությունների զարգացումը և մրցակցության համար բարենպաստ նորարարական միջավայր ստեղծել: Նման սուբյեկտների կառավարման ժամանակ հարկ է դիտարկել նաև իրավիճակների պրոբլեմային բնույթը, մրցակցությունն ու ռիսկերը: Ինովացիոն գործունեությունը անմիջականորեն կապված է ռիսկերի հետ. Ընդհանուր ցուցանիշը հանդիսանում է ֆինանսական ձեռնարկատերերի ռիսկերը, որոնք անհաջողության դեպքում կրում են մեծ կորուստներ: Սակայն անկախ ռիսկայնության չափից և ձախողման հնարավորություններից՝ անընդհատ կազմվում և իրականացվում են ինովացիոն նախագծեր: Իսկ կառավարման տեսանկյունից որոշ գործառույթներ /պլանավորում, որոշումների ընդունում, տեղեկատվության մշակում և այլն/, դրական արդյունքներ են արձանագրում պրակտիկ փորձի հիման վրա: Դրա հետ կապված ավելի մեծ նշանակություն են ստանում գործնական փորձը հիմքում ընդունող մոդելները: Գաղափարից մինչ թողարկվող արտադրանքի հաջողության հասնելու կառավարման գործընթացը երկար է, այդ իսկ պատճառով,որպեսզի ձեռնարկությունը ճիշտ ձևակերպի իր ռազմավարական գործողությունները, անհրաժեշտ է մշտապես սահմանել կյանքի պարբերաշրջանի անցումները, որպեսզի բաց չթողնի հասունության փուլը և ժամանակին անցում կատարի նոր արտադրանքի:

Այսպիսով՝ ինովացիոն գործունեության հիմնական գործառույթի կառավարման սուբյեկտները՝վենչուրային հիմնադրամները, տեխնոպարկերը և բիզնեսինկուբատորները, ինովացիոն գործընթացի զարգացման գործոն են: Որպես տնտեսական հարաբերությունների հա-

մակարդի բաղադրիչ՝ նրանց գործունեությունը խթանվում է գլոբալ արտադրանքների ստանդարտացման աճի պատճառով: Ինչից էլ նշմարվում են մրցակցության սրացումներ և փոփոխություններ, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում:

*Առանցքային բառեր.* Ինովացիոն գործունեություն,վենչուրային հիմնադրամ, տեխնոպարկ, բիզնեսինկուբատոր, կառավարում, հիմնական գործառույթ, մրցունակություն:

## Գրականություն


1. Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին ՀՀ օրենք: Ընդունված է 2006թ. մայիսի 23-ին
2. Бовин А.А., Чередникова Л.Е., Якимович В.А., Управление инновациями в организациях, Москва, 2009 г.
3. БазилевичА.И., Инновазионный мемеджмент предприятий, Москва, ЮНИТИ – ДАНА, 2008 г.
4. Васильева Л.Н., Муравьева Е.А., Методы управления инновационной деятельностью, Москва, Кнору, с. 2005


## СУБЪЕКТЫ УПРАВЛЕНИЯ ОСНОВНОЙ ФУНКЦИЕЙ ИННОВАЦИОННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ


**Восканян Анаит Зарзандовна**
Ккандидата экономических наук
Лектор - Департамент туризма и новых технологий в обслуживании,
Европейская оброзовательная региональная академия


## Резюме


Управление функциями инновационной деятельности осуществляется посредством единовременного совмещения целенаправленных систем и различных знаний. В экономике, в системе управления и социальных сферах инновации взаимосвязаны. Последнее, собственно, и является причиной возникновения различных субъектов управления для основной функции инновационной деятельности – функции

перемен. В частности, благодаря деятельности венчурных фондов, технопарков и бизнес-инкубаторов, обеспечиваетсявысокий уровень инновационной активности.

*Ключевые понятия:* инновационная деятельность, венчурный фонд, технопарк, бизнес-инкубатор, управление, основная функция, конкурентоспособность.

## MANAGEMENT SUBJECTS OF THE MAIN FUNCTION IN INNOVATION ACTIVITIES

**Anahit Voskanyan Zarzand**
Doctor of Economics
Lecturer - Department of Tourism and New Technologies in Servicing, European Regional Educational Academy

### Summary

Function management in innovation activities is operated by a simultaneous combination of targeted systems and different knowledge. In the economy, system of management and social spheres the innovations are interconnected. The latter, in fact, is the emergence cause of a variety of management subjects for the main function of innovation – the function of changes. In particular, thanks to the venture funds, techno-parks and business incubators the innovation activity maintains its high level.

*Key concepts:* innovative activities,venture fund, techno-park, business incubator, management, main function, competitiveness.

# THE ROLE OF INNOVATIONS AND EVOLVING IT INFRASTRUCTURE IN THE INCREASING NATIONAL COMPETITIVENESS OF ARMENIA

***Argine Mardoyan Stepan***
*qualified manager specialized in State and Municipal Administration*
*European Regional Educational Academy, Gyumri branch, Department of Economics and Management, lecturer*

With the increased globalization of the economy the term competitiveness has become ubiquitous. But what does it actually mean?

The World Economic Forums Global Competitiveness Report defines competitiveness as "the set of institutions, policies and factors that determine the level of productivity of a country".[1]

According to Michael Porter's theory "the only meaningful concept of competitiveness at the national level is productivity".[2]

To understand the source of productivity it is important to understand that the economies have 3 ways to grow ever medium and long-term: growth in workers, growth in trade and foreign investment and growth in the share of activity in high productivity industries. So which is more important? To have a trade surplus or balanced trade, high living standards and low level of poverty, or technologically well-equipped and advanced industry and service?

When one looks closely at any national economy, there are striking differences among nation's industries in competitive success. International advantage is often concentrated in particular industry segments. There are a few countries we can mention with entirely evolved competitiveness, which are fairly progressive in every segment of their economies. Classical theory explains the success of nations in particular industries based on so-called factors of production such as land, labor and natural resources. Nations gain factor-based comparative advantage

---

[1] Professor Klaus Schwab, The Global Competitiveness Report 2015–2016 World Economic Forum Geneva, 2015, 403 pages

[2] The competitive advantage of nations by Michael Porter, March –April 1990 issue of Harvard Business Review, 4 pages// hbr.org (date of the application: 21.02.2016)

in industries that make intensive use of the factors they have got in abundance.

Recent studies of national competitiveness have two massages for strategy-makers:

- competitive advantage can be created or at the very least raised significantly;
- the importance of competitiveness within an economy should be a key element of national export strategy.

Classical theory has been overshadowed in advanced industries and economies by the power of technology and innovations. Now there is widespread agreement, along with emerging advance, that access to technology can help improve quality of life and accelerate development efforts at all levels. Nearly every aspect of development, including the meeting of basic needs, can be improved by applying technologies. In other words, technologies hold tremendous potential to solve development challenges. The difficulty is how to design technologies and innovations in order to meet these needs, and how to ensure, that their deployment and implementation do not have other, unintended effects. In some countries the speed and trends of institutional changes and reconstructions fall behind the trends and contribution of technologies and innovations, because those are not just a matter of new products or new processes and way to product and serve them, but also better organization and management techniques, better business models, which facilitate constant activity of general institutions.

What has become clear, nonetheless, is that information technology provides “window of opportunity” for developing countries to break out of an imperfect an inefficient circle of economic and technological dependency and catch up with industrial leaders. The efficient deployment of IT is indispensable for achieving international competitiveness in an increasingly integrated, information-intensive global economy.

Thus, national prosperity and competitiveness should be more created than inherited. It is clearly seen on the example of Armenian economy. According to the “Annual National Competitiveness Report 2013-2014” our country has upgraded exactly due to increasing IT sector

and innovations.[3] Armenia moves up from the 85th to 82nd position in 2015, as it is mentioned in 2015 Global Competitiveness Overall Ranking.[4]

The Global Competitiveness Index has been used as important tool by policymakers of many countries over the years. The Index has become widely recognized as one of the key assessments of global competitiveness. Since 2005 the World Economic Forum has published the Global Competitiveness Index (GCI). The GCI combines 113 indicators that capture concepts that matter for productivity. These indicators are grouped into 12 pillars: institutions, infrastructure, macroeconomic environment, health and primary education, higher education and training, goods market efficiency, labor market efficiency, financial market development, technological readiness, market size, business sophistication and innovation. These are in turn organized into three subindexes, in line with 3 main stages of development: basic requirements, efficiency enhancers and innovation and sophistication factors. The tree subindexes are given in different weights in the calculation of the overall Index, depending on each economy's stage of development.

---

3 The National Competitiveness Report of Armenia 2013-2014 / Manuk Hergnyan, Sevak Hovhannisyan, Sona Grigoryan, Gohar Malumyan, Tamara Karapetyan. EV Consulting, Economy and Values Research Center, 2014 // www.ev.am (date of the application 23.03.2016)

4 Professor Klaus Schwab, The Global Competitiveness Report 2015–2016 World Economic Forum Geneva, 2015, 403 pages

**Figure 1: The Global Competitiveness Index framework**[5]




While all of the indicators described above are required for all economies, they will effect different economies in different ways. Table 1 provides rankings of Armenia and its neighbors along with some advanced developed ranked countries and countries of Eurasian Economic Union. The GCI 2015-2016 ranking covers 144 economies, while 2014-2015 ranking covers 144 economies.

---

[5] Professor Klaus Schwab, The Global Competitiveness Report 2015–2016 World Economic Forum Geneva, 2015, p.6

**Table 1: The GCI 2015rankings and 2014 comparison [6]**

| | Country | Rank | |
|---|---|---|---|
| | | 2015 | 2014 |
| 1. | Switzerland | 1 | 1 |
| 2. | Singapore | 2 | 2 |
| 3. | USA | 3 | 3 |
| 4. | Germany | 4 | 5 |
| 5. | Netherlands | 5 | 8 |
| 6. | Azerbaijan | 40 | 38 |
| 7. | Turkey | 51 | 45 |
| 8. | Russian Federation | 45 | 53 |
| 9. | Georgia | 66 | 69 |
| 10. | Iran | 74 | 83 |
| 11. | Armenia | 82 | 85 |
| 12. | Kazakhstan | 42 | 42 |
| 13. | Kyrgyzstan | 102 | 101 |

Belarus is not on the list of the GCI of the World Economic Forum so far. However, the analytic paper was prepared about the potential place of Belarus in the GCI rankings in 2013. According to the above mentioned report Belarus improved the position from the 61 in 2012-2013 to the 55 in 2013-2014.[7]

Armenia is considered stage 2 development country. In the efficiency–driven stage country begin to develop more efficient production processes and increase product quality. Competitiveness is increasingly driven by higher education and training, efficient goods market and financial market, it is becoming possible to gain profitability in service sector. Armenian government argues it as a result of successful and continuing implementation of ICT and innovation-based development strategy. ICTs are vectors of economic and social transformation. By improving service access, enhancing connectivity, creating business and

[6] Professor Klaus Schwab, The Global Competitiveness Report 2015/2016 World Economic Forum Geneva, 2015, pp. 7-10

[7] case.belarus.eu/index.php/2015/08/gci_belarus

employment opportunities, and changing the ways people communicate ICTs can transfer our general social institutions. Armenia's IT sector was formed based on the pool of highly qualified professionals. A number of foreign IT companies opened branches in Armenia during the 1990s, but dissemination of branches of multinational corporations started in mid 2000s. The increasing foreign capital presence in the IT industry, as the cost of IT engineering talent, was comparatively low. The IT sector undertook fundamental qualitative transformations. A number of recent ongoing projects aim to enhance science and infrastructure, foster an entrepreneurial culture in the IT sector and IT management, produce highly qualified internationally competitive workforce. Below you can see Armenia's the GCI rankings in technological readiness.

**Table 2: Armenia's the GCI rankings in technological readiness.**[8]

| Indicators | Ranking in 2014-2015 | Ranking in 2008-2009 | Change |
|---|---|---|---|
| Firm level technology absorption | 113 | 109 | -4 |
| Availability of latest technologies | 95 | 116 | +21 |
| Individuals using internet | 71 | 102 | -31 |
| International internet bandwidth | 48 | N/A | N/A |
| Mobile broadband subscriptions | 67 | N/A | N/A |

However to a certain extent the IT industry has remained restricted from the rest of the economy or has less facilitated industrial business and public sector.

The dominating part of FDI (foreign direct investments) has been directed to development sectors in Armenia. Today the energy and communications sectors account for about 50 % of FDI net stock in Armenia. FDI flows from the transnational corporations the main

[8] Report NACS 14153, Republic of Armenia. Export-led Industrial Development Strategy: Implementation review and recommendations on new toolset. World Bank Group, June 2015

competitive factor that allows Armenia with its small and open economy to stand on the path of developed countries. The TNCs technology and direct investments are a very efficient means of transferring a package of capital skills, information and brand names to our developing country. We must mention that our CT products are export-oriented and extending internalized transfers offer the additional advantage of international marketing skills and networks. The lack of a favorable business environment doesn’t let technology to promote new technologies and innovations into our economy. Armenian Government have therefore been supporting innovations by offering various kinds of direct and indirect support strategic programs, loans, grants, tax incentives and tax reductions. The innovation policies have occupied a central role in developing plans of both in state and municipal administration levels.

In order to succeed nations need all organizations in all industries to be able to innovate in all areas, not just new products from high-tech industries. There are multiple types of innovations, including networking innovations, business structure innovations, management innovations, educational innovations. The last one becomes basic for building and implementing business strategies and know-how in our country. CEOs increasingly recognized the human capital as a vital source of competitive advantage, and thus have made education and training a core component of their long-term innovation strategies. It means a serious focus on science, technology, engineering, math and foreign language education.

Although digital infrastructure is a crucial enabler of innovations, today physical infrastructures remain important. A country must be capable to contribute innovations and new technology products into real sector of economy in order to meet a high satisfaction of consumer and get to high living standards.

The results of comprehensive innovation policy fulfillment in Armenia can be shown by the gained position in the Global Innovation Index (GII) rankings. The GII provides tools of metrics for 141 economies representing 95% of the world’s population and 98,6% of the world’s GDP in current US dollars.

**Table 3: 2015 GII Rankings[9]**

| *Country* | *Rank* | *Income** |
|---|---|---|
| Switzerland | 1 | HI |
| UK | 2 | HI |
| Sweden | 3 | HI |
| Netherlands | 4 | HI |
| USA | 5 | Hi |
| Russian Federation | 48 | HI |
| Belarus | 53 | UM |
| Turkey | 58 | UM |
| Armenia | 61 | UM |
| Georgia | 73 | UM |
| Azerbaijan | 93 | UM |
| Kyrgyzstan | 109 | LM |

Armenia has good ranking among 141 countries. Thus, we can emphasize a great impact of IT sector and implementation of innovations on the annual permanent economic growth of about 3,5% in Armenia.[10] These two factors are determined upgrading. Raising the productivity of producers through innovation and adaptation of better technologies will have an aggregate impact on a countries economic growth, employment, poverty rate, sustainable development.

For a small and emerging Armenia catching up foreign experience and foreign investments, shows that technology adoption alone is no longer sufficient to maintain a high-growth scenario in long term. Similar to investment in research and education activities, investments in innovations by enterprises is at a level below what would be optimal for market system failures. That's why governmental support is crucial for promoting them.

---

9 Soumitra Dutta, Thierry Geiger, Bruno Lanvin, *The Global Information Technology Report 2015*. World Economic Forum, Geneva, 2015, 381 pages

10 http://www.armstat.am/am/?nid=126&id=01510

* Note: World Bank Group classification (July 2013);LI-low-income, LM-lower-middle income, UM- upper-middle income, HI-high-income

Contemporary macroeconomic theories advice to follow the principles guiding to national competitiveness growth in the global economy:

1. Insure fiscally responsible, transparent ethical governance
2. Fulfill human potential
3. Invest in research, technology and innovation
4. Ignite entrepreneurship
5. Improve infrastructure
6. Establish public-private partnership
7. Foster regional and metropolitan centers of innovation
8. Encourage sustainable growth
9. Protect intellectual property
10. Expand access to global market opportunities.[11]

Armenia's weak and inefficient institutional framework remains its Achilles heel and requires major rejuvenation to exterminate corruption and re-establish trust in building up its national prosperity, reinforcing the transparency of its public institutions, using its competitive strengths, which are adaptable and efficient human resources, quite high level of ICT use and solid potential for innovations.

*Keywords*: globalization, innovations, information and communication technologies, social institution, intellectual property, infrastructure, national competitiveness, innovation policy, IT management, The Global Competitiveness Index, The Global Innovation Index.

## Literature and references

1. Charles O. Holiday, 2014 Global Competitiveness Principles. The Global Federation of Competitiveness Councils. Released at the 2014 Global Innovation Summit, in Banff, AB, Canada http://www.thegfcc.org/sites/default/files/2014%20Principles.pdf (date of the application: 29.02.2016)

[11] Charles O. Holiday, 2014 Global Competitiveness Principles. The Global Federation of Competitiveness Councils. Released at the 2014 Global Innovation Summit, in Banff, AB, Canada//http://www.thegfcc.org/sites/default/files/2014%20Principles.pdf (date of the application: 29.02.2016)

2. Investment and technology policies for competitiveness: review of successful country experiences. United Nations conference on trade and development. United Nations New York and Geneva, 2003, 456 pages
3. Klaus Schwab, The Global Competitiveness Report 2015–2016 World Economic Forum Geneva, 2015, 403 pages
4. Nagy Hanna, The diffusion of information technology: experience of industrial countries and llessons for developing countries. p.cm. – (World Bank discussion paper; 281 pages)
5. Report N ACS 14153, Republic of Armenia. Export-led Industrial Development Strategy: Implementation review and recommendations on new toolset. World Bank Group, June 2015
6. Soumitra Dutta, Bruno Lanvin, and Sacha Wunsch-Vincent, The Global Innovation Index 2015. Effective Innovation Policies for Development. The World Intellectual Property Organization. Geneva, Switzerland, 2015
7. Soumitra Dutta, Thierry Geiger, Bruno Lanvin, *The Global Information Technology Report 2015*. World Economic Forum, Geneva, 2015, 381 pages
8. The competitive advantage of nations by Michael Porter, March – April 1990 issue of Harvard Business Review, 4 pages// hbr.org (date of the application: 21.02.2016)
9. The National Competitiveness Report of Armenia 2013-2014 / Manuk Hergnyan, Sevak Hovhannisyan, Sona Grigoryan, Gohar Malumyan, Tamara Karapetyan. EV Consulting, Economy and Values Research Center, 2014 // www.ev.am (date of the application 23.03.2016)
10. Vasyl H. Gerasymchuk, Taras V. Sakalosh, Competitiveness and knowledge-based economy: information and communication technology impact evaluation. BUSINESS: THEORY AND PRACTICE – 2007.06.08, No 4, pp.195–203
11. case.belarus.eu/index.php/2015/08/gci_belarus
12. http://www.armstat.am/am/?nid=126&id=01510

# ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՂ ՏՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱՑՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ

**Արգինե Ստեփանի Մարդոյան**
դիպլոմավորված մասնագետ, մենեջեր՝ մասնագիտացած «Պետական և մունիցիպալ կառավարման» ոլորտներում
ԵԿՏԱ Գյումրու մասնաճյուղ, տնտեսագիտության և կառավարման դեպարտամենտ, դասախոս

**Ամփոփում**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Հայաստանի մրցունակության բարձրացման հիմնախնդրին և ներկայացվում է Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից մշակվող Գլոբալ մրցունակության վարկանիշային զեկույցում Հայաստանի գրաված դիրքը 2015թ. ԵՏՄ անդամ պետությունների և Հարավային Կովկասի անդամ պետությունների համադրությամբ: Գլոբալ մրցունակության ինդեքսը միավորում է միկրոտնտեսական և մակրոտնտեսական տասներկու խումբ չափանիշների գնահատականը: Հայաստանի մրցունակության բարձրացումը կապվում է համակողմանի նորամուծական քաղաքականության իրականացման և տնտեսության տարբեր ճյուղեր տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ինտեգրման հետ: ՏՏ ոլորտի առաջընթացի մասին է վկայում նաև Գլոբալ ՏՏ 2015թ. զեկույցի մեջ Հայաստանի վարկանիշային գնահատականը:

ՏՏ-ները և նորամուծությունները թույլ են տալիս վերափոխել ՀՀ-ում տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքը, ինչը թույլ կտա երկարաժամկետում հասնել ցանկալի տնտեսական արդյունքի:

*Բանալի բառեր՝* գլոբալիզացում, նորամուծություններ, տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ, սոցիալական ինստիտուտ, մտավոր սեփականություն, ենթակառուցվածք, ազգային մրցունակություն, նորամուծական քաղաքականություն, ՏՏ կառավարում, գլոբալ մրցունակության ինդեքս, գլոբալ նորամուծության ինդեքս:

# РОЛЬ ИННОВАЦИЙ И РАЗВИВАЮЩЕЙСЯ ИНФРАСТРУКТУРЫ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В ПОВЫШАЮЩЕЙСЯ НАЦИОНАЛЬНОЙ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ АРМЕНИИ

**Аргине Степановна Мардоян**
дипломированный специалист, менеджер по специальности "Государственное и муниципальное управление"
Европейская региональная академия образования, филиал в г. Гюмри, департамент экономики и управления, преподаватель

## Резюме

В статье представлена проблема повышения конкурентоспособности Армении и занимающее республикой положение в рейтинговом докладе "Глобальной конкурентоспособности" в 2015 году в сравнении с государствами членами Евразийского экономического союза и с государствами Южного Кавказа разработанной Всемирным экономическим форумом.

Индекс глобальной конкурентоспособности сочетает в себе оценка двенадцати групп макро- и микроэкономических критерий. Повышающейся конкурентоспособность Армении связывается с осуществлением комплексной инновационной политики, а также с внедрением информационных и коммуникационных технологий в различные отрасли экономики. О прогрессе сектора информационных технологий свидетельствует и положение, и рейтинговая оценка Армении в докладе "Глобальные информационные технологии 2015".

Информационные технологии и инновации меняют институциональную структуру экономики, что позволяет достичь желаемого экономического эффекта в долгосрочной перспективе.

*Ключевые слова*: глобализация, инновации, информационные и коммуникационные технологии, социальный институт, интеллектуальная собственность, инфраструктура,, национальная конкурентоспособность, инновационная политика, управление ИТ, индекс глобальной конкурентоспособности, глобальный индекс инноваций.

# ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

***Մարինա Արշակի Պետրոսյան***
*Դիպլոմավորված մասնագետ, փնփեսագեփի որակավորում*
*Տնփեսագիփության և կառավարման ամբիոն*
*ԵԿՏԱ Գյումրու մասնաճյուղ, դասախոս*

Որպես աշխատուժ՝ մարդիկ պետք է կամ զբաղված լինեն, կամ գործազուրկ: Զբաղվածություն ասելով՝ պետք է հասկանալ մարդկանց գոյությունն ապահովելու համար անհրաժեշտ եկամուտ խոստացող այնպիսի գործունեություն, որը չի արգելվում օրենքով: Զբաղվածներ են վարձու աշխատողները, անհատ ձեռներեցները, գործարարները, պետական պաշտոնյաները, քաղաքացիական, համայնքային ծառայողները, պետական և համայնքային կազմակերպությունների աշխատողները: Զբաղված են համարվում նաև արձակուրդում գտնվող, ուսման և այլ պատճառներով ժամանակավորապես աշխատանքից բացակայող անձինք:

Տարբերվում են զբաղվածության հետևյալ տեսակները.

1. Ռացիոնալ զբաղվածություն - որը նպաստում է աշխատանքային ռեսուրսների լրիվ օգտագործմանը,

2. Ոչ լրիվ զբաղվածություն - կրճատ աշխատանքային օրվա պայմաններում կատարվող աշխատանքը,

3. Արդյունավետ զբաղվածություն, որն ապահովում է աշխատանքի ամենաբարձր արտադրողականությունը և ամենաբարձր արդյունավետությունը,

4. Առաջնային (հիմնական) զբաղվածություն,

5. Երկրորդային (համատեղ) զբաղվածություն,

6. Թաքնված, երբ գործազուրկն իր գոյությունը պահպանելու համար զբաղվում է ստվերային ոլորտին պատկանող աշխատանքով:

Գործազրկությունը սոցիալ-տնտեսական երևույթ է, որի առաջացման պատճառը աշխատուժի պահանջարկի նկատմամբ դրա առաջարկի գերազանցումն է: Այն հավելուրդային շուկայի հետևանք է: Գործազուրկ է համարվում այն մարդը, ով կարող է և ցանկանում է աշխատել, բայց փաստացի զրկված է աշխատանքից: ՀՀ-ում գործազուրկ են համարվում աշխատանքային տարիքի, այսինքն՝ 16 տարին

լրացած (իսկ մինչև 2005թ՝ 14 տարին լրացած), աշխատանք փնտրող անձինք, ովքեր չեն ստանում կենսաթոշակներ և աշխատանքի տեղավորման նպատակով դիմել են զբաղվածության պետական ծառայություն ու նրանց կողմից ստացել գործազուրկի կարգավիճակ: Գործազրկությունը, որպես աշխատուժի առաջարկի ավելցուկ, շուկայական հարաբերություններում չի կարող երկարատև բնույթ կրել: Եթե, այնուամենայնիվ, այդ անհավասարակշռությունը երկարատև է, ապա դա խոսում է այն մասին, որ շուկայում կան ազատ մրցակցությունը խոչընդոտող գործոններ: Այս դեպքում անխուսափելի է պետության միջամտությունը. աշխատատեղերի ստեղծում, գործազրկության նպաստներ և այլն: Նվազագույն աշխատավարձը չպետք է այնքան ցածր լինի, որ մարդիկ գերադասեն գործազուրկ մնալ, ոչ էլ այնքան բարձր, որ գործատուները շահագրգռված չլինեն նոր աշխատատեղեր բացելու կամ էլ կրճատելու իրենց աշխատողներին:[1]

Գործազրկության տեսակներն են՝

1. Կամավոր, որի պատճառը կարող է լինել աշխատանքային ոչ ձեռնտու պայմանները, ոչ բովանդակալից աշխատանքը կամ խիստ ցածր աշխատավարձը:

2. Կառուցվածքային, որն առաջանում է այն դեպքում, երբ մարդիկ կորցնում են իրենց աշխատանքը մասնագիտական անհամապատասխանության հետևանքով: Օրինակ՝ համակարգչային հեղափոխությունը ազդեց բազմաթիվ աշխատողների աշխատանքային կարողությունների վրա: Շատերը, որպեսզի չզրկվեն իրենց աշխատանքից, սկսեցին յուրացնել համակարգչային համապատասխան գիտելիքներ: Օրինակ՝ ներկայումս աշխատանքային բազմաթիվ ոլորտներում պարտադիր պայման է դարձել համակարգչի և օտար լեզվի, հատկապես անգլերենի իմացությունը: Կառուցվածքային գործազրկության պատճառը համեմատաբար հնացած կամ ժամանակի պահանջներին ոչ համահունչ մասնագիտությունների նկատմամբ պահանջարկի նվազումն է: Օրինակ՝ կառուցվածքային գործազուրկ է համարվում փոստատարը, ռադիոմեխանիկը, ինժեները և այլն: Նման մասնագիտության տեր անձինք աշխատաշուկայից դուրս են մղվում պարզ պատճառով՝ ԳՏԱ-ի: Քիչ աշխատատար տեխնիկայի ներդրումը հանգեց-

---

[1] Ս.Ս. Ավետիսյան, Ռ.Ա. Թովմասյան «Տնտեսագիտության տեսություն» Եր. «Նահապետ» 2010թ. էջ 145

նում է բանվորական աշխատուժի շրջանակներում կառուցվածքային գործազրկության: Կառուցվածքային գործազուրկները կանգնած են ե-րեք խնդիրների առջև՝ երկարաժամկետ գործազուրկ են մնում, փո-խում են մասնագիտությունը և աշխատանքի բնույթը կամ վերապատ-րաստվում են:

3. Ֆրիկցիոն(հպանցիկ, անցողիկ): Ի տարբերություն կառուց-վածքային գործազրկության, երբ մասնագիտական անհամապատաս-խանությունն է գործազրկության հիմնական պատճառը, այս դեպքում ֆրիկցիոն գործազուրկներ են այն անձինք, որոնց մասնագիտական կարողությունները լիովին բավարար են աշխատաշուկայի պահանջ-ներին, սակայն գործազուրկ են դառնում մասնագիտությունը կամ աշ-խատանքային վայրը փոխելու, ինչպես նաև ոչ լիարժեք տեղեկացվա-ծության պատճառով (գործատուներն աշխատանք փնտրողների մա-սին, աշխատանք փնտրողները՝ գործատուների մասին): Այսինքն՝ շու-կայում կա պահանջվող աշխատանքին համապատասխանող մասնա-գետ, սակայն քանի դեռ գործատուն նրա մասին չգիտի, նա շարունա-կում է մնալ գործազուրկ: Այդ իսկ պատճառով գործազրկության այս ձևը կոչվում է անցողիկ, քանի որ ժամանակի ընթացքում, շուկայի միջնորդական և տեղեկատվական գործառույթների շնորհիվ (զբաղ-վածության կենտրոններ, աշխատանքի տոնավաճառներ, հայտարա-րություններ գործատուի և աշխատանք փնտրողի կողմից և այլն) աշ-խատանքի առաջարկը և պահանջարկը կգտնվեն միմյանց նկատ-մամբ համապատասխանության մեջ: Այս գործազուրկները աշխա-տանքի կարող են անցնել ոչ թե աշխատանքի բնույթի փոփոխման և վերապատրաստման, այլ աշխատանքի շուկայի մանրակրկիտ ուսում-նասիրման արդյունքում (ինչպես գործատուի, այնպես էլ աշխատանք փնտրողի կողմից):

4. Հարկադրական, առաջանում է աշխատանքային երկարաժամ-կետ պայմանագրերի և ոչ ճկուն աշխատավարձերի պայմաններում: Եթե աշխատանքի վարձատրությունը շուկայական հավասարակշռու-թյան տեսակետից բարձր է, ապա աշխատողների միայն մի մասն է աշխատանք ստանում, մյուսները դառնում են հակադրված գործա-զուրկներ:

5. Ցիկլային (պարբերաշրջանային), պայմանավորված է տնտեսական տատանումներով, երբ բոլոր ճյուղերում կրճատվում են արտադրության ծավալները և միաժամանակ՝ աշխատատեղերը:

6. Սեզոնային, որը պայմանավորված է սեզոնային բնույթի աշխատանքով, որի արդյունքում աշխատանքի առաջարկը գերազանցում է պահանջարկին: Սա նույնպես ժամանակավոր բնույթ է կրում:

7. Թաքնված, երբ չգործող (սնանկացած) ձեռնարկություններում կան գրանցված աշխատողներ, բայց փաստացի նրանք գործազուրկ են և որպես գործազուրկներ գրանցված չեն զբաղվածության պետական ծառայություններում:

Տնտեսապես ակտիվ է կոչվում բնակչության այն մասը (աշխատուժը), որն ի վիճակի է աշխատել: Աշխատուժը կամ տնտեսապես ակտիվ բնակչությունը ներառում է զբաղվածներին և պաշտոնապես գրանցված չէ որպես գործազուրկ, ընդգրկվում է աշխատուժի մեջ, օրինակ՝ տնային տնտեսուհիները: Աշխատուժի կազմում չեն ներառվում հաշմանդամները, անչափահասները և ծերերը:[2]

Գործազրկության բնական մակարդակ հասկացությունն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել ամերիկացի տնտեսագետ Մ.Ֆրիդմենը: Գործազրկության բնական մակարդակը կազմում է ֆրիկցիոն և կառուցվածքային ձևերի հանրագումարը: Լրիվ զբաղվածություն է այն դեպքում, երբ գործազրկության բնական մակարդակի դեպքում գործազրկության մնացած ձևերը հավասար են 0-ի: ԱՄՆ-ում այն ընդունված է 5-6%-ի սահմաններում, Ճապոնիայում և Շվեցարիայում՝ 1,5-2%-ի սահմաններում, Ֆրանսիայում՝ 5%, Կանադայում՝ 8%: Գործազրկության մակարդակը դրանից բարձրանալու դեպքում պետությունը միջամտում է տնտեսական կյանքին:

Գործազրկության բնական մակարդակն ամենացածրն է եղել II Համաշխարհային պատերազմի տարիներին (2%), ինչը պայմանավորված էր ե ռազմական արտադրության ոլորտում աշխատուժի նկատմամբ մեծ պահանջարկով, իսկ ամենաբարձրը՝ 1929-1933թթ Մեծ Ճգնաժամի տարիներին՝ 25%:

Գործազրկության առկայությամբ երկիրն ավելի է խորանում տնտեսական, ժողովրդագրական և սոցիալական խնդիրների մեջ, ին-

---

2 Ա. Մելքումյան «Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը» /դասախոսություններ/ Երևան Տնտեսագետ 2006, 34 էջ

չը հղի է ցնցումային բազում դրսևորումներով: Հայաստանի Հանրապետության տնտեսության համար կարևորագույն խնդիր է զարգացման բարձր տեմպերի ապահովումը, իսկ տնտեսական զարգացման վրա անմիջականորեն ազդող հիմնական գործոններից է աշխատանքային ներուժի արդյունավետ օգտագործումը: ՀՀ աշխատանքի շուկայում առկա են մի շարք խնդիրներ, այդ թվում՝բարձր գործազրկություն, ցածր աշխատավարձ, թաքնված զբաղվածություն, մարզերի աշխատաշուկայի և տնտեսության անհավասարաչափ զարգացում, աշխատաշուկայի ենթակառուցվածքների թույլ զարգացում, աշխատաշուկայի քաղաքականության մեջ ֆինանսական լծակների թույլ կիրառում և աշխատավարձի անհավասարություն և գործազրկություն՝ ըստ մարզերի, տնտեսական գործունեության տեսակների և ոլորտների, տարիքային խմբերի և սեռի:

Հայաստանում վերջին տարիներին ավելացել է գործազրկության թիվը՝ պայմանավորված երկրում և աշխարհում տեղի ունեցող տնտեսական փոխհարաբերություններով: Պետական իշխանությունները դատում են գործազրկության մասին ըստ Երևանի, սակայն էլ ավելի ծայրահեղ վիճակում են մարզերը: Եթե Երևանում 1մլն-ից ավելի բնակչության դեպքում առկա է 30% գործազրկություն, ապա մարզերում, որտեղ,ինչպես գիտենք, տեղի է ունենում մարդկային ռեսուրսների արագ և շեշտակի արտահոսք, գործազրկությունն էլ ավելի մեծ չափերի է հասնում: Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվով Հայաստանի մարզերից առաջին տեղում Շիրակն է՝ 13702, երկրորդում Լոռին՝11413, երրորդում՝ Կոտայքի մարզը՝8147գործազուրկ:

Առ այսօր գործազրկության բարձր ցուցանիշով աչքի ընկնող Շիրակի մարզն ու Գյումրի քաղաքը շարունակում են մնալ առաջատար: Մասնավորապես, Արթիկի զբաղվածության տարածքային կենտրոնում գրանցված աշխատանք փնտրողների թիվը 1399 է, որոնցից 987–ը ունեն գործազուրկի կարգավիճակ, Մարալիկում՝ 310, Աշոցքում՝ 560, Ամասիայում՝ 157 գործազուրկ:[3]

2016թ. մարտ ամսվա դրությամբ Հայաստանում աշխատանք փնտրողների թիվը 93510 է, նրանցից 81323 -ը՝ գործազուրկ են: Գործազուրկների թվի մասին պաշտոնական վիճակագրությունը չի ար-

[3] ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն «Աշխատուժի առաջարկն ըստ ՀՀ մարզերի» 2016թ. մարտ armstat.am

տացոլում իրական պատկերը և գործազուրկների իրական թիվը Հայաստանում մի քանի անգամ ավելի բարձր է: Ոչ բոլոր գործազուրկներն են գրանցվում համապատասխան մարմիններում և ստանում նման կարգավիճակ: Կան մարդիկ, ովքեր օրենսդրության համաձայն, չեն կարող ստանալ գործազուրկի կարգավիճակ, քանի որ հողի սեփականատեր են, չնայած այդ հողը չեն մշակում և իրականում գործազուրկ են:Ստորև ներկայացնենք 2016թ հունվար, փետրվար և մարտ ամիսների կտրվածքով աշխատուժի առաջարկը.[4]

*Աղյուսակ 1.*

**Աշխատուժի առաջարկը, 2016թ /ամսվա վերջի դրությամբ/**

| | Աշխատանք փնտրողներ | | նրանցից՝ գործազուրկներ | |
|---|---|---|---|---|
| | ընդամենը, մարդ | 2015թ. նույն ամսվա նկատմամբ, % | ընդամենը, մարդ | 2015թ. նույն ամսվա նկատմամբ, % |
| Հունվար | 89 405 | 121.7 | 77 528 | 116.1 |
| Փետրվար | 91 460 | 119.8 | 79 372 | 113.9 |
| Մարտ | 93 510 | 117.4 | 81 323 | 111.5 |

Ինչպես վկայում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) տվյալները ՀՀ-ում գործազրկության ցուցանիշը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների շարքում ամենաբարձրն է: Ընդհանուր առմամբ, ԵՏՄ-ում գործազրկության մակարդակը, որը հաշվարկվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության մեթոդաբանությամբ, 2015 թ. կազմել է բնակչության տնտեսական ակտիվության ցուցանիշի 6%-ը: Վերջին տվյալներով՝ Ռուսաստանում գործազրկության մակարդակը կազմել է 5.9%, Ղազախստանում՝ 5%, Բելառուսում՝ 0.9%, Հայաստանում՝ 13%: 2015 թվականին գործազրկության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Գերմանիայում՝ 4.7%,ամենաբարձրը՝ Հունաստանում՝ 25.7% և Իսպանիայում՝ 23%:[5]

---

[4] Գործազրկության ցուցանիշները ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տվյալների, 2016թ. մարտ ամսվա վերջի դրությամբ:

[5] Երևան, 2016 մայիսի 20 - Sputnik http://sputnik.co.am/economy/20150720/201280.html#ixzz46afvtVyL

2016թ. մարտ ամսվա դրությամբ ըստ տարիքի և սեռի պաշտոնապես գրանցված գործազուրկները ներկայացված են աղյուսակ 2-ում.

*Աղյուսակ 2.*

**Պաշտոնապես գրանցված գործազուրկներն ըստ տարիքի և սեռի, 2016թ.մարտ**

| | Ընդամենը | | Տղամարդ | | Կին | | Քաղաք | | Գյուղ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % | մարդ | % |
| Ընդա-մենը | 81323 | 100 | 26187 | 100 | 55136 | 100 | 55155 | 100 | 26168 | 100 |
| 16 - 19 | 1 631 | 2.0 | 537 | 2.1 | 1 094 | 2.0 | 1113 | 2.0 | 518 | 2.0 |
| 20 - 24 | 7653 | 9.4 | 2726 | 10.4 | 4 927 | 8.9 | 5 251 | 9.5 | 2 402 | 9.2 |
| 25 - 29 | 10706 | 13.2 | 2993 | 11.4 | 7 713 | 14.0 | 7 174 | 13.0 | 3 532 | 13.5 |
| 30 - 34 | 11 986 | 14.7 | 3 798 | 14.5 | 8 188 | 14.9 | 8 305 | 15.1 | 3 681 | 14.1 |
| 35 - 44 | 20773 | 25.5 | 7 160 | 27.3 | 13613 | 24.7 | 13926 | 25.2 | 6 847 | 26.2 |
| 45 - 54 | 16605 | 20.4 | 5 334 | 20.4 | 11271 | 20.4 | 11115 | 20.2 | 5 490 | 21.0 |
| 55 > | 11969 | 14.7 | 3 639 | 13.9 | 8 330 | 15.1 | 8 271 | 15.0 | 3 698 | 14.1 |

Այսպիսով՝ երիտասարդների շրջանում գործազրկությունն ավելի մեծ թիվ է կազմում կանանց մոտ: Ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ մինչև 29 տարեկան աղջիկներն ավելի քիչ են աշխատանք փնտրում: Երիտասարդների մեջ նկատելի է այն մտավախությունը, որ աշխատաշուկայում պահանջարկը և գործատուների նախընտրությունը ուղղված է դեպի աշխատանքային փորձ ունեցող երիտասարդների ընտրությանը: «Զբաղվածության պետական գործակալությունը» տարբեր ծրագրեր է իրականացնում, որոնք ուղղված են աշխատաշուկայում նման լարվածությունների մեղմանը: Հատուկ երիտասարդ մասնագետների համար գործում է ծրագիր, որով աշխատանքային փորձ չունեցող երիտասարդները կարող են իրենց մասնագիտությանը համապատասխան 3 ամիս տևողությամբ պրակտիկա անցնել որևէ կազմակերպությունում: Մոնիտորինգի արդյունքում պարզվում է, որ պրակտիկա անցած երիտասարդների մեծ մասը սովորաբար աշխատանքի է անցնում նույն գործատուի մոտ, իսկ որոշ-

ները՝ այլ գործատուների մոտ, քանի որ ձեռք բերելով աշխատանքային փորձ՝ աշխատաշուկայում դառնում են մրցունակ:[6]

ՀՀ-ում զբաղվածության առումով ամենաակտիվ ոլորտը գյուղատնտեսության ոլորտն է, որին բաժին է ընկնում զբաղվածության մոտ 35%-ը՝ 395 հազար մարդով: Երկրորդը՝ մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտն է՝ 123.700 մարդ, երրորդը՝ արտադրության ոլորտն է՝ 131 հազար մարդ, և ապա կրթության ոլորտը՝ 105 հազար մարդ:[7]

Հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը 2016թ, մարտ ամսվա դրությամբ կազմել է 186 հազար 44 դրամ: Պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 161 հազար 62 դրամ, ոչ պետական հատվածում՝ 211 հազար 371 դրամ:[8]

Գործազրկությանը վերաբերող հետազոտության հիմքում դրված հասկացությունները և հաշվարկման մեթոդաբանությունը հիմնականում համապատասխանում են Աշխատանքի միջազգային կազմակերպության /ԱՀԿ/ և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումների և դրույթներին՝ հնարավորինս հաշվի առնելով Հայաստանում դրանց կիրառման առանձնահատկությունները: ԱՄԿ-ի և Եվրոստատի կողմից առաջարկվող սահմանումներում առանձին դեպքերում առկա են որոշ տարբերություններ: Մասնավորապես, պարտադիր ժամկետային զինծառայողներն ըստ ԱՄԿ մեթոդաբանության դասվում են զբաղվածների, իսկ ըստ Եվրոստատի՝ տնտեսապես ոչ ակտիվ բնակչության խմբին: ՀՀ ԱՎԾ-ն հիմք է ընդունում վերջինս, որը կիրառվում է Եվրամիության անդամ երկրներում:

*Առանցքային բառեր.* գործազրկություն, զբաղվածություն, աշխատանքային շուկա, աշխատավարձ, աշխատուժ, աշխատուժի առաջարկ, աշխատուժի պահանջարկ:

---

[6] Ռ.Ս. Ղանթարչյան «ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը» Տնտեսագետ Երեւան 2003, 52 էջ

[7] Երևան /Մեդիամաքս/ 2016 մարտի 12 Երևան / http://www.mediamax.am/am/news/society/527/#sthash.oSltFiWj.dpuf

[8] armtimes.com/hy/economy https://www.google.am/webhp?sourceid=chrome-instant&ion=1&espv=2&ie=UTF-8#q=armtimes.com

## Գրականություն


1. Ս.Ս.Ավետիսյան,Ռ.Ա.Թովմասյան «Տնտեսագիտության տեսություն».Եր.: «Նահապետ», 2010 թ.,324 էջ
2. Ա.Մելքումյան «Աշխատանքի շուկան և բնակչության զբաղվածությունը» /դասախոսություններ/ Երևան Տնտեսագետ 2006, 34 էջ
3. Ռ. Ս. Ղանթարչյան «ՀՀ աշխատանքի շուկան և զբաղվածության պետական կարգավորումը» Տնտեսագետ Երևան 2003, 52 էջ
4. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նյութեր 2016թ,
5. Երեւան/Մեդիամաքս/ 2016 մարտի 12 http://www.mediamax.am/am/news/society/527/#sthash.oSItFiWj.dpuf
6. http://sputnik.co.am/economy/20150720/201280.html#ixzz46afvtVyL
7. armtimes.com/hy/economy https://www.google.am/webhp?sourceid=chrome-instant&ion=1&espv=2&ie=UTF-8#q=armtimes.com


## ОСНОВНЫЕ ЗАДАЧИ ЗАНЯТОСТИ И БЕЗРАБОТИЦЫ В РА


**Марина Аршаковна Петросян**
дипломированный специалист, экономист по специальности
Департамент экономики и управления
Европейская Региональная Академия филиал в г Гюмри,
преподаватель


### Резюме


Безработица – это социально-экономическое явление, которое происходит из-за превышения предложения по отношению к спросу рабочей силы. Это следствие избыточного рынка. Последние годы в Армении увеличилось число безработных, связанное с экономическими взаимоотношениями, происходящими в стране и в мире. На рынке труда в Армении есть целый ряд задач, в том числе высокая безработица, низкая зарплата, скрытая занятость, неравномерное развитие рынка труда и экономики в областях, слабая развитость подразделений рынка труда, слабое применение финансовых рычагов

в политике рынка труда и безработица, и неравная зарплата по областям, по видам и сферам экономической деятельности, возрастных групп и пола.

*Ключевые слова:* безработица, деятельность, рынок труда, зарплата, рабочая сила, предложение рабочей силы, спрос на рабочую силу.

## PROBLEMS OF UNEMPLOYMENT AND EMPLOYMENT IN THE REPUBLIC OF ARMENIA

**Marina Arshak Petrosyan**
Department of Economics and Management,
European Regional Academy, Gyumri branch, lecturer

### Summary

Unemployment is a social-economic phenomenon, the cause of which is the surpass of workforce offer over its demand. It is the result of market surplus. The rate of unemployment has increased recently which is conditioned by the mutual economic relations in the country and in the world. There exist a number of problems in the job market of the Republic of Armenia, among which are the high level of unemployment, low wages, hidden employment, unequal development of job market and economy in the regions, weak development of job market infrastructures. It may also be conditioned by the poor application of financial means in the job market policy, inequality of wages and also by unemployment according to regions, types and spheres of economic activity, different age groups and gender.

*Keywords:* unemployment, employmeny, job market, wages, work force, workforce need, workforce demand.

# ՀՀ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

***Կարապետյան Շովինար Ջիվանի***
*տ.գ.թ., դոցենտ*
*Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի*
*մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ*

Ինովացիոն զարգացման առանցքը գիտելիքի միջոցով արժեքի ստեղծման գործընթացն է, գաղափարների փոխակերպումը նոր, ավելի կատարելագործված լուծումների: Համընդհանուր տեխնոլոգիական առաջընթացի հետ ինովացիայի ընկալման սահմաններն ընդլայնվել են: Այսօր այն ավելի շուտ ներկայանում է գիտելիքի համատարած կիրառման տեսքով, ինչը հնարավոր է դառնում նոր գիտելիքի ու գաղափարի առևտրայնացման միջոցով: Ընդհանուր առմամբ ինովացիոն զարգացումը կախված է նրանից, թե ինչ նպատակով և ինչպիսի գործիքակազմով են մարդկային կարողություններն ու տեխնոլոգիան փոխգործակցում և կառավարվում: Պետությունը կենսական դերակատարում ունի ինովացիոն զարգացման գործում ոչ միայն որպես կարգավորող, այլև որպես ներդրող: Ինովացիոն գործունեության յուրահատկությունը, պայմանավորված է դրա բարձր ռիսկայնությամբ ու անորոշությամբ: Հետևաբար, այն պահանջում է պետության ակտիվ ներգրավվածություն ինովացիոն զարգացման գործընթացում, հատկապես գիտական հետազոտությունների ասպարեզում: Միաժամանակ անհրաժեշտ է նպատակային մոտեցում՝ մասնավոր հետազոտությունների համար նպաստավոր պայմաններ ապահովելու իմաստով: Ինովացիոն զարգացման համար սկզբունքային նշանակություն ունի պետության կողմից պատշաճ շրջանակային պայմանների ապահովումն ու ինովացիոն համակարգի տարրերի միջև փոխադարձ արդյունավետ կապերի ձևավորումն ու զարգացումը:

ՀՀ-ում 2000-2015 թթ. հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերի ֆինանսավորման ծավալներն ավելացել են 2.5 անգամ, իսկ դրանցում բյուջետային միջոցների հաշվին գիտության ֆինանսավորման ծավալները՝ 1.7 անգամ, ինչը մեզ թույլ է տալիս վստահորեն ասել, որ ինովացիոն ակտիվության մակարդակը մեր հանրապետությունում 2000-ականներից հետո աճի որոշակի մի-

տումներ է արձանագրել: Բացի դրանից, հարկ է ընդգծել այն հանգամանքը, որ հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերը տնտեսավարման ներկա պայմաններում պետք է բաշխվեն համամասնորեն: Ճիշտ է, կան ճյուղեր, որտեղ դեռևս պետք է պահպանվի և ավելացվի ֆինանսավորման բյուջետային միջոցների մասնաբաժինը, մինչդեռ տնտեսական արդյունավետության տեսանկյունից, ինչպես նաև հաշվի առնելով ներկայիս շուկայական տնտեսակարգի մրցակցային առավելությունները՝ կարող ենք փաստել, որ հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի ֆինանսավորման մեջ մասնավոր ներդրողի միջոցներն առավել արդյունավետ կարող են դառնալ:

*Աղյուսակ 1*

**Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը ՀՀ-ում, 2000-2015 թթ.**[1]

| Ցուցանիշ | 2000 | 2005 | 2010 | 2015 |
|---|---|---|---|---|
| **Ներքին ծախսեր, ընդամենը մլն ՀՀ դրամ** | 1904.2 | 4814.4 | 7987.9 | 11000.2 |
| **այդ թվում՝ Բյուջետային միջոցների հաշվին** | 1519.1 | 2593.2 | 5398.0 | 9750.6 |
| **%-ով, ՀՆԱ-ի նկատմամբ** | 0.18 | 0.2 | 0.2 | 0.2 |

Երկրի ինովացիոն զարգացմանն ուղղված ռեսուրսների արդյունավետ կիրառման ապահովման ինովացիոն քաղաքականությունը պետք է ընդգրկի տնտեսական կյանքի բոլոր կողմերը և արտացոլի զարգացման բոլոր գործոններն ու գործիքակազմը: ՀՀ ինովացիոն քաղաքականությունը, մեր կարծիքով, պետք է հենվի հետևյալ հիմնական դրույթների վրա.

- Ընդհանուր տեսքով՝ ինովացիոն գործընթացը ներառում է հիմնարար հետազոտությունները, կիրառական մշակումները, արտադրանքի թողարկման կազմակերպումն ու իրացումը և

[1] Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2000–2015թթ. տարեգրքեր, Գիտություն բաժին, պաշտոնական կայք-էջ՝ www.armstat.am

կարող է ներկայացվել ոչ գծային մոդելով: Ինովացիոն գործընթացը սկսվում է նախագծի մշակումից, որում սահմանվում են նպատակները, խնդիրները և անհրաժեշտ ռեսուրսները:

- Ներկայում ՀՀ տնտեսությունում անհրաժեշտ է ապահովել անցում այն հասարակությանը, որի հիմքը գիտելիքների տնտեսությունն է, իսկ հիմնարար ինստիտուտը՝ Ազգային ինովացիոն համակարգը՝ ԱԻՀ:
- ԱԻՀ-ն իրենից ներկայացնում է այն բաղադրիչների ամբողջությունը, որոնք ապահովում են գիտելիքների ձեռք բերումը, տարածումը և օգտագործումը:
- ԱԻՀ-ն ներառում է հետևյալ ենթահամակարգերը՝ գիտելիքների գեներացիան և տարածումը՝ հենված հիմնարար գիտությունների վրա, կրթությունը, գիտատար արտադրությունը, ենթակառուցվածքները, շուկայական ինստիտուտները: Ընդ որում, ԱԻՀ-ի ձևավորման մեջ առաջատար դերը պատկանում է ՀՀ կառավարությանը, որը մշակում է ինովացիոն զարգացման քաղաքականություն և ընդունում է ինովացիոն դաշտի խաղի կանոնները սահմանող օրենսդրություն, իրացման գործիքակազմ:

Մեր երկրում պետական իշխանությունն, ըստ էության, առայժմ լիարժեք ինովացիոն չէ և նշանակալի հաջողությունների չի հասել, այսպես կոչված, «ինովացիոն մթնոլորտի» ձևավորման հարցում:

Վիճակագրական վերլուծությունից ակնհայտ է, որ ինովացիոն գործունեության ֆինանսավորման մեջ գերիշխում են բյուջետային հատկացումները: Այսպես, եթե 2014-ին դրանք կազմել են 69.4 տոկոս, ապա 2015-ին ավելացել են՝ կազմելով 71.7 տոկոս: Հակառակ է պատկերը պատվիրատուների միջոցների հաշվին նորամուծական նախագծերի ֆինանսավորման ծավալների առումով: Այս ցուցանիշն ունեցել է նվազման միտում: 2015-ին նվազել է 3.9 տոկոսային կետով, որը վկայում է միջոցների ոչ արդյունավետ ծախսման մասին:

**Գծապատկեր 1. ՀՀ-ում գիտական հետազոտությունների և մշակումների վրա կատարված ծախսերն՝ ըստ ֆինանսավորման աղբյուրների, %, 2014-2015 թթ.**[2]




Ներկայում խնդիր է ծառացած ինովացիոն և տեխնոլոգիական բիզնեսով զբաղվելու պայմանները Հայաստանում դարձնել այնքան գրավիչ, որքան դրանք գրավիչ են զարգացած երկրներում:[3]

Մեր կողմից առանձնացվել են ՀՀ-ում ինովացիոն քաղաքականության մշակման երկու տեսակի հիմնախնդիրներ՝ մեթոդաբանական և կազմակերպական: Այդ հիմնախնդիրները ներկայացվում են ստորև:

*Մեթոդաբանական* հիմնախնդիրներից են.

- Ինովացիոն քաղաքականության մշակումն անցումային շրջանում բխել է ազատական շուկայի և դրանում պետության դերը նվազագույնին հասցնելուն ելման կետից, որն արտահայտվել է նախևառաջ ակտիվ արդյունաբերական քաղաքականությունից հրաժարվելու միտումներում: Նման մոտեցումը գործնա-

[2] Աղբյուրը՝ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության 2014 և 2015 թթ. տարեգրքեր, պաշտոնական կայք-էջ՝ www.armstat.am

[3] Աղբյուրը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պաշտոնական կայք-էջ՝ www.asue.am

կանում չի արդարացվել տեխնոլոգիապես զարգացած ոչ մի երկրում, ներառյալ ԱՄՆ-ում: Տարբեր երկրների փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հենց պետությունն է առաջատար դեր կատարում երկրի ինովացիոն զարգացման գործում, քանի որ պետության «հիմնական գործը» գործարար միջավայրի խաղի կանոնների սահմանումն է ու դրա պահպանման խիստ վերահսկողությունը: Դեռ ավելին, ինչպես փորձն է վկայում, տնտեսական անկումների ընթացքում պետությունը գործարար աշխարհի փրկության միակ հույսն է:

- ՀՀ-ում ցայսօր պետականորեն չի ընդունվել զարգացման ինովացիոն ուղուն անցնելու վերաբերյալ գիտականորեն հիմնավորված մեթոդաբանական որևէ մոտեցում: Դա, իր հերթին, մի շարք պատճառների հետևանք է: Նախ՝ ինովացիոն գործունեության հասկացությունների ճշգրտման աշխատանքներն ավարտված չեն, մինչդեռ այլ երկրներում այդ խնդիրները հաջողությամբ վաղուց լուծված են:
- Երկրորդ՝ տարբեր հիմնախնդիրների լուծման համար ներմուծվում են առանձին, տարբեր, ոչ միշտ հիմնավորված ցուցանիշներ: Հաճախ ցուցանիշները պատճենվում են արտասահմանյան համանման համակարգերից, սակայն դրանց կիրառման հնարավորությունը մեր իրականությունում չի գնահատվում:
- Երրորդ՝ օգտագործվում է զարգացած երկրների ինովացիոն քաղաքականության ձևավորման մեթոդաբանությունը, այսինքն՝ այն երկրների, որոնք արդեն զարգանում են գիտելիքահեն տնտեսության օրենքներով:
- Վերջին տարիներին ստեղծվել են ինովացիոն ենթակառուցվածքների տարբեր տարրեր՝ տեխնոպարկեր, սթարթափներ, վենչուրային հիմնադրամներ և այլն: Սակայն, մինչև այժմ չկա դրանց գործունեության արդյունավետության իրական գնահատում: Դեռ ավելին, զարգացման ինստիտուտների համակարգում ներառված չէ ՀՀ ԳԱԱ-ն, որը նոր հիմնարար գիտելիքների արտադրողն է:

Առավել կարևոր *կազմակերպական* հիմնախնդիրներից առանձնացրել ենք հետևյալները.

- Վերջին տարիներին փոփոխություններ են տեղի ունենում գիտության պետական կառավարման համակարգում, սակայն դեռևս չեն ձևավորվել հետազոտությունների և մշակումների ոլորտի ամբողջականությունը, միասնական պետական գիտատեխնիկական քաղաքականության իրականացումն ապահովող մի շարք բաղկացուցիչներ, օրինակ՝ ՀՀ վարչապետին կից գիտատեխնիկական քաղաքականության հատուկ հանձնաժողով, յուրաքանչյուր նախարարության կազմում հատուկ ստորաբաժանում, որը պատասխանատու կլինի հետազոտությունների և մշակումների համար: Դրանք կարող են համագործակցել ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ: Այդպիսի մոտեցումներ կարող են լինել նաև մարզերի համար: Մեր հանրապետությունում կարևորվում է գիտության և ինովացիաների գծով խորհրդականների ինստիտուտի ակտիվացումը, ինչով կապահովվի իրական, գիտական, երբեմն ռազմավարական նշանակության տեղեկատվական դաշտի օգտագործման արդյունավետության բարձրացումը:
- Մեր երկրում ինովացիոն քաղաքականության մշակումն ունի մի հատուկ գիծ՝ գիտական հանրության հետ համագործակցությունից հրաժարում:
- Բացակայում է գիտության և ինովացիաների վերաբերյալ ծավալուն վիճակագրական, գիտական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, վերոնշյալ դիտարկումները, կարող են հենքային լինել երկրի ինովացիոն քաղաքականության մշակման և իրացման գործընթացում՝ կարևորելով կառուցվածքային բարեփոխումների կենսագործումը, գիտական կազմակերպությունների համար նպաստավոր միջավայրի ձևավորումը, ակադեմիական գիտական կազմակերպությունների ու բուհերի ինտեգրման ծրագրերի իրագործումը: Այսպիսի ինովացիոն քաղաքականությունը կարող է դառնալ տնտեսության վրա պետության ազդեցության ձևերի և ուղղությունների գիտականորեն հիմնավորված ամբողջություն:

*Բանալի բառեր*՝ ինովացիա, ինովացիոն քաղաքականություն, գիտահետազոտական մշակումներ, մեթոդաբանություն

### Գրականություն

1. «Ինովացիոն գործունեությանը պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 23.05.2006թ.
2. «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 05.12.2000թ.
3. Կարապետյան Ծ.Ջ., Նորամուծական գործունեություն, Երևան, «Ստամպա», 2008թ., 228 էջ
4. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տարեգրքեր 2000-2015թթ., պաշտոնական կայք-էջ՝ www.arlis.am
5. Research and innovation performance in the EU. Innovation Union progress at country level. Luxembourg, 2014, 359 pp.
6. Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի պաշտոնական կայք-էջ՝ www.asue.am

## INNOVATION POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA: OPTIONS AND PERSPECTIVES

**Karapetyan Tsovinar Jivan**
PhD, Associate Professor, Associate Professor at the Chair of Macroeconomics, Armenian State University of Economics,
Associate Professor at the Chair of ............,
European Regional Educational Academy

### Summary

Several problems of innovation policy development and implementation have been presented within the article. Certain issues of financing the research works have also been analyzed. The article summarizes the modern inquiries of RA innovation policy development and implementation, as well as the purposeful impact directions of state institutes in the process of innovational development. The reforms of the state innovation policy have been considered as one of the strategic problems of perspective development of the country.

*Keywords:* innovation, innovation policy, research works, methodology.

# ИННОВАЦИОННАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ВАРИАНТЫ И ПЕРСПЕКТИВЫ

**Карапетян Цовинар Дживановна**
к.э.н., доцент, Доцент кафедры Макроэкономики Армянского государственного экономического университета,
Доцент кафедры ...... Европейской образовательной региональной академии

## Резюме

В статье были представлены некоторые проблемы развития инновационной политики и ее внедрения. Также были проанализированы некоторые вопросы финансирования научно-исследовательских работ. В статье обобщены современные проблемы развития инновационной политики РА и ее реализации, а также целенаправленные направления воздействия государственных институтов в процессе инновационного развития. Реформы государственной инновационной политики рассматривались в качестве одной из стратегических задач перспективного развития страны.

*Ключевые слова:* инновация, инновационная политика, научно-исследовательские работы, методология.

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

***Մուրադյան Արփենիկ Հայկի***
*փ.գ.թ., ՀՊՏՀ Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ*

Կենսամակարդակը բնակչության կյանքի համար անհրաժեշտ նյութական ու մշակութային բարիքներով ապահովվածությունն է, նրանց սպառման ձեռք բերած մակարդակը և այդ բարիքներով մարդկանց պահանջմունքների բավարարման աստիճանը: Ընդհանուր առմամբ՝ մարդկանց պահանջմուքների բավարարման աստիճանը կախված է հասարակական արտադրության զարգացման մակարդակից, բնակչության եկամուտների մեծությունից: Վերջիններիս բարձր մակարդակի դեպքում հնարավոր կլինի ավելի լրիվ բավարարել պահանջմունքերը, կատարելագործել անձնական սպառման կառուցվածքը, ապահովել բարձր կենսամակարդակ: Զարգացման տարբեր աստիճան ունեցող երկրներում տարբեր է պահանջմունքների զարգացման մակարդակը, դրանց բավարարման չափը:

Ժամանակի ընթացքում կենսամակարդակը պայմանավորող պահանջմունքները անընդհատ ավելանում են, հետևաբար ավելանում են նաև կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները: ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերում ներառված են կենսամակարդակը բնութագրող բազմաթիվ ցուցանիշներ, որոնք պատկերացում են տալիս տնային տնտեսությունների եկամուտների ու ծախսերի, առողջության, բնակարանային, սննդի և կենսագործունեության այլ ոլորտների մասին:

Զարգացած շատ երկրներում կենսամակարդակը բնութագրող ցուցանիշների մեջ ներառվում են նաև ընտանիքի դրությունը, մարդկանց միջև հարաբերությունները, մասնակցությունը քաղաքական կյանքին, իսկ Ճապոնիայում՝ նույնիսկ քաղաքակենտրոնացման ու շրջակա միջավայրի պաշտպանության ցուցանիշները: Տարբեր ժամանակահատվածներում միջպետական մասշտաբներով կենսամակարդակները համեմատելու և առանձին երկրների սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային ուղիները նախանշելու համար 1990-ական թթ.-ից օգտագործում են ինտեգրալ ցուցանիշներ կամ համաթվեր:

Կենսամակարդակը բնութագրող ամփոփ ցուցանիշ է ՄԱԿ-ի մասնագետների կողմից մշակված մարդկային զարգացման համաթիվը (ՄԶՀ), որը հաշվարկվում է երեք ցուցանիշների հիման վրա. կյանքի սպասվող տևողությունը, կրթական մակարդակը, բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն: Այս համաթիվը որոշակի պատկերացնում է տալիս երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, արտացոլում է կենսամակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշները՝ առողջությունը, կրթությունը, մեկ մարդուն ընկնող ՀՆԱ-ն, ցույց է տալիս, թե որ ուղղությամբ է իրականացվում զարգացումը և մարդկային ներուժի կուտակման ու զարգացման որ մակարդակում են գտնվում երկրները: Կենսամակարդակը ճշգրիտ գնահատելը բարդ է նաև այն պատճառով, որ ստվերային տնտեսության առկայության, թաքնված զբաղվածության և արտագաղթի ոչ լիարժեք հաշվառման պատճառով բնակչության իրական եկամուտներն ամբողջությամբ չեն հաշվառվում:

Ամեն տարի ՄԱԿ-ի Զարգացման գործակալությունը հրապարակում է «Մարդկային զարգացման համաթիվը», ըստ որի ՀՀ-ն 2015թ. զբաղեցնում է 85-րդ տեղը, ինչը հարևան երկրների շարքում ամենացածրն է: ՌԴ-ից Հայաստանը ետ է մնում 35 (50-րդ տեղ), Վրաստանից՝ 10 (75-րդ տեղ), Ադրբեջանից՝ 7 (78-րդ տեղ), Թուրքիայից՝ 13 (72-րդ տեղ) կետով: Այդուհանդերձ, 2013թ. համեմատ ապահովվել է առաջընթաց՝ 2 կետով:

Բնակչության բարեկեցության վրա որոշակի ազդեցություն կարող են ունենալ այն բոլոր եկամուտները, որոնք վերջիններս ձեռք են բերում տարբեր աղբյուրներից: Ընդ որում՝ նույնիսկ ամենազարգացած երկրներում բնակչության եկամուտների մեծությունը և դրանց աղբյուրները խիստ տարբեր են: Եկամուտների անհավասարության վրա ազդող գործոնները բազմազան են: Դրանք կարելի է բաժանել երկու մեծ խմբի. 1.Գործոններ, որոնք կախված չեն անհատի անձնական հատկանիշներից, ունակություններից ու ջանքերից (օբյեկտիվ), 2.Անհատի անձնական հատկանիշներից, ունակություններից, կրթության, որակավորման տարբերություններից, ճակատագրից, մտածելակերպից, սեռից, ֆիզիկական վիճակից, հետաքրքրություններից բխող գործոններ (սուբյեկտիվ):

Անցումային փուլում, գրեթե բոլոր երկրներում, բնակչության եկամուտների խիստ տարբերակումն անխուսափելի է: Խնդիրն այսօր այդ տարբերակման չափերը ընդունելի սահմաններում պահելն է, այն նվազագույնի հասցնելը: Բնակչության տարբեր խավերի եկամուտների բևեռացման նվազեցումը հրատապ լուծում պահանջող խնդիրներից է: ՀՀ-ում ներկայումս բավականին ցածր է բնակչության մեկ շնչին ընկնող եկամտի չափը, վերջինս կարող է հանգեցնել հասարակության անկայունությանը, սոցիալական լարվածության: Դրա հիմնական պատճառը ոչ այնքան եկամուտների տարբերակումն է, որքան այդ եկամուտների խիստ ցածր մակարդակը: 2008-2009թթ. համաշխարհային ճգնաժամը լրջորեն հարվածեց նաև Հայաստանի տնտեսությանը, և բնակչության բարեկեցության բարձրացման գործում վերջին տարիների ձեռքբերումները զգալի հետընթաց ապրեցին:

Բնակչության կենսամակարդակի գնահատման կարևոր ցուցանիշ է աղքատության մակարդակը: Համաշխարհային բանկի սահմանման համաձայն, աղքատությունը որոշակի կենսամակարդակի ընդունելի նվազագույնի ապահովման անկարողությունն է: Հայաստանում բարեկեցության մակարդակը գնահատելու համար օգտագործվում է սպառման ագրեգացված ցուցանիշը: Միջազգային փորձից ելնելով՝ ընդունված է, որ սպառումն ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացնում և այդքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: 2014թ.-ին ՀՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 30%, այսինքն՝ երկրի յուրաքանչյուր տասը բնակչից երեքը ամսական 40264 ՀՀ դրամ վերին աղքատության գծից ցածր են գտնվել: 2013թ. համեմատ արձանագրվել է աղքատության մակարդակի զիջում 2 տոկոսային կետով, սակայն այն դեռևս բարձր է 2008թ. արձանագրված 27.6% մակարդակից: Համեմատության համար նշենք, որ 1998/1999թթ.-ին ՀՀ-ում աղքատության մակարդակը կազմել է 56,1 տոկոս[1]: 2014թ.-ին աղքատների ընդհանուր թվաքանակը կազմել է շուրջ 900 հազար մարդ: ՀՀ-ում աղքատությունը 2014թ.-ին չի տարբերվում ըստ քաղաքային (30.0%) և գյուղական բնակավայրե-

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2006թ., էջ 96

րի (29.9%): Սակայն աղքատության մակարդակի տարբերությունը Երևանում (25.%) և երկրի այլ քաղաքներում (35.1%) զգալի է:

ՀՀ-ում աղքատության ընդհանուր՝ վերին և ստորին, ինչպես նաև ծայրահեղ աղքատության գծերը, արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով 2014թ.-ին մեկ ամսվա համար գնահատվել են համապատասխանաբար 40264 դրամ (կամ 96.8 ԱՄՆ դոլար), 33101 դրամ (կամ 79.6 ԱՄՆ դոլար) և 23384 դրամ (կամ 56.2 ԱՄՆ դոլար): Մեր կարծիքով՝ աղքատության վերոնշված գծերն այդքան էլ չեն համապատասխանում աղքատության իրական պատկերին, քանի որ այսօր գործող գների պայմաններում, նույնիսկ դրա կրկնապատիկ գումարը բավարար չէ ոչ աղքատ համարվելու համար: Համեմատության համար նշենք, որ ԱՄՆ-ում աղքատության գիծը չորս հոգանոց ընտանիքի համար, ամսեկան կտրվածքով 2000 դոլար է, ինչը ենթադրում է, որ մեկ անձի հաշվով այն կկազմի 500 դոլար:[2] Սակայն եթե այս հարցին մոտենանք Համաշխարհային բանկի կողմից աղքատության գծի գնահատման նորմատիվներից, ապա մեր հանրապետությունում այդ ցուցանիշները նույնիսկ համեմատաբար բարձր են: Նշենք նաև, որ 2015թ.-ին Համաշխարհային բանկը, հաշվի առնելով 2008թ.-ից ի վեր բնակչության գնողունակության կտրուկ անկումը, վերանայել է աղքատության գծի ցուցանիշը և 1.25 դոլարի փոխարեն այն հասցրել է 1.9 դոլարի՝ մեկ օրվա կտրվածքով: [3] Եթե աղքատության գիծը հաշվարկենք տրված նորմատիվներով, ապա 2008թ.-ի համար այն կկազմի 11475 դրամ (1.25x30x306դրամ), իսկ 2014թ.-ի համար՝ 27018 դրամ (1,9x30x474դրամ): Իհարկե, նման գումարները մեր օրերի համար առավել քան անընդունելի են:[4]

Վերջին տարիներին Հայաստանում աղքատության մակարդակի աճը պայմանավորող առավել կարևոր գործոնը 2009թ.-ի տնտեսության անկումն էր՝ 14.1%: Մեր կարծիքով՝ դրան նպաստում է նաև ՀՀ տնտեսության մենաշնորհացման բարձր մակարդակը, ինչի արդյունքում համեմատաբար բարձր են նույնիսկ առաջին անհրաժեշտության ապրանքների գները:

---

2 http://krugman.blogs. Nytimes.com/2014/07/02

3 Экономика сегодня/ ФВА 2015 – “Всемирный банк повысил порог бедности” https://ru.wikipedia.org/wiki/

4 Հաշվարկները կատարվել են մեր կողմից

ՀՀ բնակչության ծայրահեղ աղքատությունը ըստ քաղաք-գյուղ բաշխվածության ուսումնասիրելիս նկատում ենք, որ ծայրահեղ աղքատների մեծ մասը (63,6%) քաղաքաբնակներ են: Նման ցուցանիշը ցույց է տալիս, որ բնամթերային գյուղատնտեսությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում:

ՀՀ-ում 2008-2014թթ.-ի աղքատության՝ ըստ սպառման և եկամտի ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ եկամտի ցուցանիշի հիման վրա գնահատված աղքատության մակարդակի գնահատականները զիջում են սպառմանը՝ որպես բարեկեցության աստիճանի գնահատման հիման վրա ստացված արդյունքներ: Ընդ որում՝ ծայրահեղ աղքատության մակարդակն ըստ եկամտի ցուցանիշի մոտ չորս անգամ գերազանցում է սպառման ցուցանիշով ծայրահեղ աղքատության մակարդակին: Նման տարբերությունը հիմնականում բացատրվում է սպառման՝ բաշխման համեմատ եկամուտների բաշխման առավել բարձր անհավասարությամբ: Ուսումնասիրելով 2014թ.-ին ՀՀ-ում բնակչության աղքատության՝ սպառման և եկամտի ցուցանիշների համընկնումը, պարզ է դառնում, որ անհատների մոտ կեսը, որոնք եկամտի ցուցանիշով գտնվում են աղքատության գծից ցածր, սպառման ցուցանիշով բարձր են աղքատության գծից (50.4%): Եկամտի ցուցանիշով ծայրահեղ աղքատների միայն 10.6%-ը և աղքատների 49.6%-ն է սպառման ցուցանիշով գնահատվել նույնպես ծայրահեղ աղքատ և աղքատ:

2014թ.-ին ՀՀ-ում աղքատության խորությունը կազմել է 4.5 %: Այն ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար ամեն մի անհատի հաշվով (աղքատ և ոչ աղքատ) հավաքագրելու 4.5 %-ին համարժեք ռեսուրսներ և այն ամբողջությամբ հատկացներ աղքատներին, ապա տեսականորեն աղքատությունը կվերանար:

ԱՎԾ-ի հաշվարկները վկայում են, որ աղքատության հաղթահարման համար ՀՀ-ին անհրաժեշտ է 66.2 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 1.4 % կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, պայմանով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ կտրամադրվի միայն աղքատներին: Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի 2.5 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 0.05 %-ը: Միջազգային փորձը ցույց է տալիս է, որ սոցիալական աջակցության տրամադրման անթերի հասցեականություն

ապահովելն անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցներն իրականում ավելի շատ են: Բարձր հասցեականություն ապահովելու նպատակով պահանջվող ռեսուրսների համեմատ, ազատական տնտեսակարգով երկրներում, աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները հարկ է առնվազն կրկնապատկել[5]: Այսպիսով՝ կարելի է եզրահանգել, որ եթե ՀՀ-ում ՀՆԱ-ի աճի (միջին տարեկան 4,5 տոկոս աճի պայմաններում) շուրջ 30 տոկոսը տրամադրվի աղքատության հաղթահարմանը, ապա այդ խնդիրը, ըստ էության, կարելի է լուծել:

Վիճակագրական տվյալները վկայում են, որ 2008-2014թթ. ՀՀ-ում անհավասարությունն աճել է: Ջինի գործակցի միջոցով գնահատված անհավասարության ցուցանիշները հավաստում են, որ բնակչության բևեռացումն ըստ եկամուտների ցուցանիշի ավելի խորն է՝ սպառման ագրեգատի ցուցանիշի համեմատ: 2014թ.-ին սպառման անհավասարությունը, ըստ Ջինի գործակցի, ավելացել է՝ կազմելով 0.277՝ 2008թ.-ի 0.242-ի համեմատ: Ըստ ամբողջական եկամուտների՝ անհավասարությունն ավելացել է՝ կազմելով 0.373՝ 2008թ.-ի 0.339-ի համեմատ:

Բնակչության բարեկեցության բարձրացման առումով կարևոր է ոչ այնքան անվանական, որքան իրական աշխատավարձի մեծությունը: ՀՀ-ում 2008-2014թթ. ընթացքում անվանական աշխատավարձն աճել է 181,4տոկոսով: Ընդ որում, այն դիտարկվող ժամանակահատվածի բոլոր տարիներին էլ ապահովել է ինչ-որ չափով աճ, տոկոսային արտահայտությամբ առավելապես աճելով հատկապես 2008թ.-ին (117,8%), մինչդեռ իրական աշխատավարձի աճի տեմպերը մշտապես ետ են մնացել անվանական աշխատավարձի աճից: Նման երևույթն առավելապես պայմանավորված է սպառողական գների առաջանցիկ աճով, հատկապես 2010, 2011 և 2013թթ.-ին, երբ դրանց աճի տեմպերը գերազանցել են նաև անվանական աշխատավարձի աճին, ինչի արդյունքում էլ իրական աշխատավարձը կրճատվել է:

Յուրաքանչյուր երկիր հարուստ է այնքանով, որքանով հարուստ են այդ երկրի տարեցները: Այս տեսակետից կարևոր ցուցանիշ է կենսաթոշակների չափը: 2008-2014թթ. ընթացքում թեև միջին ամսական

---

5 «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» (վիճակագրական վերլուծական զեկույց) ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015 թ.,էջ 48

կենսաթոշակը ՀՀ-ում շուրջ 168 տոկոսով աճել է, սակայն այն բավականին հեռու է կենսաթոշակառուների համար բարեկեցիկ կյանք ապահովելու նպատակից: Ընդ որում, եթե կենսաթոշակները հաշվարկենք դոլարի կուրսին համարժեք, ապա կստանանք, որ 2008թ.-ին այն կազմել է 70 դոլար, իսկ 2014թ.-ին այն աճել է ընդամենը 5,5 դոլարով, կազմելով 75,5 դոլար[6]: Կենսաթոշակի միջին մեծությունը գրեթե կրկնակի չափով պակաս է ՀՀ-ում հաշվարկված նվազագույն սպառողական զամբյուղից, ինչն ինքնին խոսուն է:

Ցածր եկամուտներ ունեցող ընտանիքների համար կենսական նշանակություն ունեն ընտանեկան և սոցիալական տարբեր նպաստները: ՀՀ-ում նպաստառու ընտանիքների քանակը 2008-2011թթ.-ին կրճատվել է շուրջ 33000-ով, ինչը զգալի մեծություն է, եթե հաշվի առնենք հատկապես այն հանգամանքը, որ այդ տարիները համընկնում են ճգնաժամային տարիների հետ: Իհարկե, հետագա տարիներին այդ ընտանիքների քանակն աստիճանաբար աճել է, սակայն 2008թ.-ի համեմատությամբ այն կրճատվել է:[7] Տեսականորեն նպաստառու ընտանիքների քանակի կրճատումը դրական երևույթ է, քանի որ ենթադրվում է, որ կրճատվել է վատ ապրող ընտանիքների քանակը: Սակայն ՀՀ-ի պայմաններում, այդ ընտանիքների թվի կրճատումը, մեր կարծիքով, պայմանավորված է միգրացիոն հոսքերի ավելացմամբ և հաշվարկման մեթոդաբանական խնդիրներով: Ամսական նպաստի չափերը ևս խոսում են այն մասին, որ դրանք չեն կարող որոշակի դեր խաղալ այդ ընտանիքների բարեկեցության բարձրացման հարցում:

Մտահոգիչ է վիճակը նաև պետության կողմից բնակչությանը հատկացված սոցիալական երաշխիքների հարցում: Վիճակագրական տվյալները վկայում են, որ այդ երաշխիքները շատ հեռու են նույնիսկ նվազագույն կենսապայմաններից: Առավել մտահոգիչ է այն փաստը, որ մարդկային կապիտալի, գիտական ներուժի վերարտադրությանն ուղղվող կարևորագույն երաշխիքները (ուսանողների և ասպիրանտների կրթաթոշակները) վերջին տարիներին բացարձակապես չեն փոխվել և մնացել են խիստ ցածր մակարդակում:

---

6 Հաշվարկները կատարված են մեր կողմից՝ հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում դոլարի պաշտոնական փոխարժեքը

7 Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2011, 2013 և 2015թթ.

Նման իրավիճակը վկայում է ՀՀ-ում սոցիալական ոլորտի լուրջ ֆինանսական կարիքների մասին, որոնց գերակշիռ մասը, սովորաբար, պետք է ապահովվի բյուջետային հատկացումների հաշվին: Մինչդեռ ՀՀ պետական բյուջեի հնարավորությունները մեր օրերում խիստ սահմանափակ են: Այս խնդրի լուծումը մենք տեսնում ենք ստվերային տնտեսության հնարավորինս բացահայտման, պրոգրեսիվ հարկային համակարգի ներդրման և ինքնազբաղվածության համար նպաստավոր պայմանների ապահովման միջոցով:

*Բանալի բառեր.* բարեկեցություն, աղքատություն, մակարդակ, եկամուտ, բնակչություն

### Գրականություն


1. Майер В.Ф. Планирование социального развития и повышения уровня жизни народа, Москва, издательство МГУ 1998, 241с.
2. Экономика сегодня/ ФВА 2015–“Всемирный банк повысил порог бедности” https://ru.wikipedia.org/wiki/Бедность, 30.05.2016
3. http://krugman.blogs. Nytimes.com/2014/07/02
4. «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը, ՀՀ ԱՎԾ, Երևան, 2015
5. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության տարեգրքեր, 2000-2015թթ., armstat.am


## СОЦИАЛЬНЫЙ ПОРТРЕТ И БЕДНОСТЬ В АРМЕНИИ

**Мурадян Арпеник Гайковна**
к.э.н., доцент
Доцент кафедры Макроэкономики АГЭ университета,

### Резюме

Социальный портрет в РА за последние годы проявил нежелательные отрицательные тенденции, которые имели свое влияние, особенно на рост бедности населения. За 2008-2014гг. возрос не только уровень бедности, но и неравность распределения по коэф-

фициенту концентрации доходов (индекс Джини). На очень низком уровне находятся и социальные гарантии, предоставляемые государством.

Необходимые финансовые ресурсы для решения социальных задач, по нашему мнению, государство может достать выявлением теневой экономики, прогрессивным налогообложением, а также создавая благоприятные условия для самозанятости.

*Ключевые слова:* благосостояние, бедность, уровень, доход, население

## SOCIAL PORTRAIT AND POVERTY IN ARMENIA

**Muradyan Arpenik Hayk**
PhD, Associate Professor
Associate Professor at the Chair of Macroeconomics,
Armenian State University of Economics,

### Summary

Social portrait in Armenia showed unwanted negative trends last years, which have their impact, especially on the growth of poverty. During 2008-2014 years has increased not only the poverty, but the inequality of distribution by the coefficient of income concentration (Gini coefficient). The social guarantees provided by the government are also on the low level.

In our opinion, necessary financial resources for solving social problems the government can find by the identification of shadow economy, by progressive taxation, by creating favorable conditions for self-employment.

*Keywords:* welfare, poverty, level, income, population

# ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

***Աշոտ Վարդանի Մարդոյան***
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*
*Հայաստանի պետական տնտեսագիտական*
*համալսարանի դասախոս*

Հայաստանի Հանրապետության ընդերքը պետության բացառիկ սեփականությունն է և կարող է տրվել օգտագործման իրավունքով: Սակայն պետությունն առայժմ չունի այդ սեփականության ռացիոնալ շահագործման համար հաստատված տեխնոլոգիական նախագծման նորմեր, հանքավայրերի շահագործման տեխնիկական կանոններ և նորմատիվներ: Դրանց բացակայությունը գործնականում անհնար է դարձնում տվյալ բնագավառում պետությանն ամրագրված խնդիրների իրականացումը, մասնավորապես՝ հանքային հումքի նկատմամբ տնտեսության պահանջների բավարարման նպատակով ընդերքի արդյունավետ, համալիր օգտագործման ու պահպանության, ընդերքն օգտագործելիս շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, ինչպես նաև աշխատանքների կատարման անվտանգության ապահովումը: Հետևապես, բնական պաշարների ոլորտում իրականացվող քաղաքականության հիմնահարցերից մեկն էլ ընդերքի պահպանության և օգտագործման բնագավառի օրենսդրական հիմքերի ապահովումն է [1]:

Ընդերքօգտագործմանն առնչվող իրավական բարեփոխումների անհրաժեշտությունը ՀՀ կառավարության կողմից հիմնականում բացահայտվել է 2008 թվականին՝ հիմք ընդունելով շրջակա միջավայրի հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների և փորձագետների քննադատությունը այս ոլորտին առնչվող օրենսդրության անկատարության վերաբերյալ: Մատնանշված հիմնական հիմնախնդիրներն են եղել ընդերքի ռեսուրսների անարդյունավետ շահագործումը, պետության ընդերքօգտագործման քաղաքականության բացակայությունը, ընդերքօգտագործողներին ներկայացվող անբավարար պայմանները, շրջակա միջավայրի վրա ազդեցության ոչ պատշաճ գնահատումն ու աղտոտման դիմաց կատարվող վճարումների անհամապատասխանությունը, պետության այլ շահերի և սոցիալական

խնդիրների անտեսումը, բնության առավել խոցելի տարածքների (օրինակ՝ անտառների) ոչնչացումը և այլն: Արդյունքում 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտան «Ընդերքի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենսգիրքը և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2011 թվականի նոյեմբերի 28-ի օրենքը, ուժը կորցրած ճանաչվեցին «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 2002 թվականի նոյեմբերի 5-ի օրենքը (որով սահմանված էին մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները): Ռոյալթին սահմանվել է որպես արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար բնօգտագործման վճարի տեսակ [2], որը Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործող և կամ մետաղի խտանյութ արտադրողների համար փոխարինելու է եկել պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար բնօգտագործման վճարին և մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիներին:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.6-րդ և 13.7-րդ հոդվածներին համապատասխան՝ ռոյալթիի հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր տարին (2012 թվականից սկսած): Ռոյալթի վճարողները յուրաքանչյուր հաշվետու տարվա (առաջին անգամ՝ 2012 թվականի) համար, մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա՝ 2013 թվականի ապրիլի 15-ը ներառյալ, ռոյալթիների հաշվարկ-հաշվետվությունները պետք է ներկայացնեն հարկային մարմին:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.2-րդ հոդվածին համապատասխան, 2012 թվականի հունվարի 1-ից ռոյալթի վճարողներ են համարվում ոչ միայն Հայաստանի Հանրապետության մետաղական օգտակար հանածոների հանքավայրեր շահագործողները, այլև՝ մետաղի խտանյութ արտադրողները, որոնք մինչև այդ չեն հանդիսացել ո՛չ բնօգտագործման վճար և ո՛չ էլ ռոյալթի վճարողներ:

Գոյություն ունի կարծիք, որ այդ օրենսդրական փոփոխությունների արդյունքում ներդրված ռոյալթին չափազանց ցածր է և հիմնականում շահեկան է խոշոր ձեռնարկատերերի համար, իսկ կառավարությունը նշում է, որ համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13.4-րդ հոդվածով սահմանված ռոյալթիի հաշվարկման բանաձևի (R = 4 + [Շ/(Հx8)]x100, որտեղ՝

R – ռոյալթիի դրույքաչափն է տոկոսով,

Շ – շահույթն է նախքան հարկումը՝ դրամով: Այն որոշվում է որպես ռոյալթիի հաշվարկման բազայի և «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված նվազեցումների (բացառությամբ ֆինանսական գործունեության գծով ծախսերի և նախորդ տարիների հարկային վնասների) դրական տարբերություն,

Հ – արտադրանքի իրացումից հասույթն է՝ առանց ԱԱՀ-ի՝ դրամով:

Տարեկան արդյունքներով ռոյալթիի հաշվարկման բազայի (իրացումից հասույթի) նկատմամբ կիրառվող ռոյալթիի դրույքաչափը հաշվարկելու համար ռոյալթիի նվազագույն 4 տոկոս դրույքաչափին գումարվում է շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը: Շահույթի և իրացումից հասույթի ութապատիկի հարաբերության տոկոսային մեծությունը սահմանվել է որպես ռոյալթիի նվազագույն դրույքաչափին ավելացվող՝ շահութաբերությունը հաշվի առնող բաղադրիչ, որը միաժամանակ հավասարակշռելու է բարձր և ցածր շահութաբերություն ունեցող հանքավայրերի համար ռոյալթիի բեռը: Այսպես, 10 տոկոս շահութաբերության դեպքում ռոյալթիի դրույքաչափը կկազմի 5,25 տոկոս, 20 տոկոս շահութաբերության դեպքում՝ 6,5 տոկոս, 25 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,1 տոկոս, 30 տոկոս շահութաբերության դեպքում՝ 7,75 տոկոս, իսկ 40 տոկոս շահութաբերության դեպքում՝ 9 տոկոս:

Հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին» 2002 թվականի նոյեմբերի 5-ի ՀՕ-440-Ն օրենքով սահմանված կարգով մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից ռոյալթիներ վճարվում էին միայն 25 տոկոսը գերազանցող շահութաբերություն ու-

նեցող արդյունահանողները, այն էլ՝ օգտակար հանածոյի համախառն հաշվարկային արժեքի 0.1 տոկոսի չափով՝ շահութաբերության նորմայի 25 տոկոսը գերազանցող յուրաքանչյուր 0.8 տոկոսի համար:

Միաժամանակ, ռոյալթիի հաշվարկման բազան արտադրանքի իրացումից հասույթն է, որը որոշվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 29-ի «Ռոյալթիների հաշվարկման համար իրացումից հասույթի հաշվարկման կարգը հաստատելու մասին» որոշմամբ հաստատված կարգով:

Ինչ վերաբերում է միջազգային պրակտիկայում կիրառվող ռոյալթիի դրույքաչափերին, հարկ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ կիրառության մեջ են ռոյալթիի հաշվարկման տարբեր եղանակներ (ադվալորային՝ վաճառված արտադրանքի արժեքից, հաստատագրված՝ արտադրանքի միավոր ծավալից կամ քաշից, շահույթից հաշվարկվող և այլն): Տարբեր երկրներում պինդ օգտակար հանածոների համար ռոյալթիի դրույքաչափերը տարբեր հանածոների համար սովորաբար տատանվում են մեկ տոկոսից (ածուխ) մինչև 24 տոկոսի (ադամանդ) սահմաններում: Ընդորում, օրինակ Ինդոնեզիայում 2012 թվականի դրությամբ ռոյալթիի դրույքաչափը սահմանված է՝ պղնձի համար՝ 4 տոկոս, ոսկու համար՝ 3,75 տոկոս, արծաթի համար՝ 3,25 տոկոս, Ռուսաստանում՝ պղնձի համար՝ 8 տոկոս, ոսկու համար՝ 6 տոկոս, Պերուում ռոյալթիի դրույքաչափերը սահմանված են 1-12 տոկոս, Ավստրալիայում՝ 2,7-7,5 տոկոս, Գանայում՝ 5 տոկոս և այլն [3]:

Այսպիսով՝ փոփոխությունների հիմնական դրույթները վերաբերում են ընդերքի օգտագործման մասով գանձվող պարտադիր վճարների հաշվարկման մեխանիզմի փոփոխություններին:

Նախկինում գանձվող բնօգտագործման վճարը հաշվարկվում էր մետաղական օգտակար հանածոների փաստացի մարված պաշարներից, այսինքն՝ գործող օրենսդրությունը հաշվի չէր առնում արդյունահանման և վերամշակման ընթացքում անխուսափելի կորուստները: Օրենսդրական փոփոխություններով արդյունահանված պաշարներից բնօգտագործման վճարի հաշվարկումից անցում է կատարվել իրացման հասույթից կախված ռոյալթիի հաշվարկմանը: Ստացվում է, որ փոփոխությունների արդյունքում բնօգտագործման վճարը և ռոյալթին միավորվել են միասնական հարկատեսակի մեջ:

Ըստ որոշ կարծիքների՝ կատարված փոփոխությունները որոշակիորեն հղկել են հարկային մեխանիզմները, սակայն չեն վերացրել դրանցում առկա անարդարացի մոտեցումները: Գործող օրենսդրության խնդրահարույց կողմերից մեկը, որը պահպանվել է նաև ներկայումս, վերաբերում է ծախսերի նվազեցումների մեխանիզմներին, որոնք սահմանված են ռոյալթիների հաշվարկման կարգով. շահութաբերությունը որոշելիս հաշվի չեն առնվում հանքարդյունահանող ընկերության համար կենսական նշանակություն ունեցող ծախսերը, ինչպիսիք են, մասնավորապես, ամորտիզացիոն մասհանումները, ֆինանսական ծախսերը, նախորդ տարիների հարկային վնասները և այլն: Մյուս խնդրահարույց կողմն այն է, որ հասույթի որոշման ժամանակ պետությունը հիմք է ընդունում ոչ միայն հանքարդյունահանմամբ ուղղակիորեն պայմանավորված գործունեությունը. եթե որևէ հանքարդյունահանող ձեռնարկություն իրականացնում է նաև հետագա վերամշակման բազմաթիվ փուլեր, ապա, որքան էլ դա տարօրինակ չհնչի, պետությունը ռոյալթիների հաշվարկման համար հիմք է ընդունում վերջնական արտադրանքի արժեքը: Ստացվում է՝ պետությունը պատժում է տնտեսվարողին՝ ավելի մեծ ավելացված արժեք ապահովելու համար, և դա, ըստ էության, խիստ անարդարացի է, քանի որ հետագա վերամշակման գործունեությունը բուն հանքարդյունահանման հետ ուղիղ առնչություն չունի, և չի կարելի, օրինակ, մետաղ ձուլելը, զտելը կամ վերամշակման խորացում ենթադրող այլ գործողությունները դիտել որպես ավելի մեծ չափերով բնօգտագործման վճար գանձելու հիմք: Պետության դիրքորոշումն այս հարցում, պետք է լինի հանքային հումքի հետագա վերամշակման խորացմանը հնարավորինս նպաստելը, ոչ թե հակառակը: Ըստ ֆինանսների նախարարության ներկայացուցչի՝ օրենսդրական փոփոխություններում պետությունն առաջնորդվել է 2 հիմնական փաստարկներով: Նախ և առաջ իրացման հասույթից ռոյալթիի հաշվարկումը կնպաստի ոլորտում նոր ներդրումների ներհոսքին, քանի որ, եթե ներկայումս կազմակերպությունից վճար է գանձվում անկախ իրացումից, ապա փոփոխությունների արդյունքում հանքարդյունահանողն այլևս չի կանգնի շրջանառու միջոցների անբավարարության ռիսկի առջև: Երկրորդ կարևոր փաստարկն այն է, որ մետաղների գները արագ են փոփոխվում միջազգային շուկայում, իսկ վերջին տարիներին գները հիմնականում աճի միտում են

ունեցել [4]: Սակայն այս փաստարկը միանշանակ չէ և ունի իր հակառակ կողմը. դիտարկենք երկու հիպոթետիկ լրիվ նույնատիպ հանքավայրեր, որոնցից մեկում կա արդյունավետ աշխատող հանքարդյունահանող, որը կարողանում է բավականին մեծ արժեք կորզել և բարձր արժեքով իրացնել, իսկ մյուսում՝ ապաշնորհ հանքարդյունահանող, որը չի կարողանում արտադրություն կազմակերպել, ունի մեծ կորուստներ և ցածրարժեք արտադրանք: Գանձելով բնօգտագործման վճարը ընդերքում եղած մետաղի արժեքից՝ պետությունն անուղղակիորեն խրախուսում է արդյունավետ տնտեսվարումը, իսկ եթե կապենք վճարը իրացման արժեքի հետ, ստացվում է՝ որքան վատ կաշխատես, այնքան քիչ բնօգտագործման վճար կվճարես: Դա չի բխում արդյունավետ ընդերքօգտագործման շահերից: Մյուս կողմից, կան հանքավայրեր, որոնք շահագործելիս տնտեսվարողն ինչ առաջադեմ մեթոդներով էլ գործի, անհնար է կորզել այնքան, որքան կարելի էր տեսականորեն ակնկալել՝ նկատի ունենալով առկա պաշարների բացարձակ քանակությունը, և այս պայմաններում պահանջել, որ տնտեսվարողը վճարի ընդերքում եղած մետաղի միջազգային գնի նկատմամբ որոշակի տոկոս, նույնպես անարդյունավետ է: Սակայն կառավարության համոզմամբ՝ փոփոխությունները համահունչ են միջազգային պրակտիկայի հետ, քանի որ միջազգային փորձում հարկման համար հիմք է ընդունվում հենց վաճառքի արժեքը. գների բարձրացման դեպքում հարկի դրույքաչափը պրոգրեսիվ կերպով աճում է: Մինչդեռ միջազգային լավագույն փորձից շեղումներ այդուհանդերձ ունենք: Ոլորտի առաջատար երկրներում, օրինակ, Ավստրալիայում՝ ռոյալթիները գանձվում են ընկերությունների շահույթից, այլ ոչ թե ընդերքում եղած մետաղի միջազգային գնից, որը հարկման հնարավոր ամենամեծ բազան է, այսինքն՝ Ավստրալիայում կիրառվում է շահույթի նկատմամբ, այլ ոչ թե ընդերքում եղած մետաղի, որը դեռ պետք է արդյունահանել, վերամշակել, ունենալ որոշակի կորուստներ, վաճառել, ի դեպ, բորսայականից ավելի ցածր գնով, որովհետև այն դեռևս վերջնական արտադրանք չէ, հանել բոլոր ծախսերը և վճարել պետությանը շահույթի 5-7%-ը: Այսուհանդերձ փոփոխության արդյունքում ավելացել է հարկերի հավաքագրումը ոլորտից, քանի որ նախկինում ոլորտից հավաքագրվող հարկերի ծավալը չէր համապատասխանում իրական ներուժին:

Բացի դրանից՝ ընդերքի նոր օրենսգիրքն առավել միտված է ընդերքօգտագործման ոլորտում ընթացակարգերի պարզեցմանն ու բարենպաստ գործարար միջավայրի ապահովմանը, ընդերքի շահագործման կարգն ու կանոնների, դրանք շահագործող իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների ու պարտականությունների կարգավորմանն, նաև հանքի փակման ընթացակարգերի հստակեցմանը, ինչի մասին շահագործողը պետք է հայտնի երկու տարի առաջ և համապատասխան ֆինանսական հաշվետվություններ կայացնի: Բացի այդ, հանքի փակումից հետո պետք է համապատասխան դիտարկում արվի: Այսպիսով՝ թեև ընդերքի մասին օրենսգիրքը որոշ չափով անդրադարձել է հասարակական կազմակերպությունների և փորձագետների կողմից հնչեցված մտահոգություններին, ուշադրությունից դուրս է թողել մի շարք կարևորագույն խնդիրներ: Օրինակ՝ օրենսգիրքը չի արտացոլել ընդերքի պաշարների հասարակության բոլոր անդամների համընդհանուր բարիք հանդիսանալու և դրանցից ստացվող եկամուտների նկատմամբ բոլոր քաղաքացիների շահերը պաշտպանելու անհրաժեշտությունը: Այն շեղվել է ՀՀ կողմից որդեգրած կայուն զարգացման հայեցակարգից և անտեսել է բնական ռեսուրսների արդյունավետ շահագործման, շրջակա միջավայրի համար առավել բարենպաստ առաջադեմ տեխնոլոգիաների ընդերքօգտագործման արգելման, շրջակա միջավայրի աղտոտման և այլ հիմնահարցերը [5]:

Օրենսգրքով չեն ամրագրվում ընդերքի պաշարների բանական և համալիր օգտագործման նախադրյալներ՝ հաշվի առնելով ինչպես ներկա, այնպես էլ ապագա սերունդների շահերը, սոցիալական արդարությունն ու մարդու իրավունքները: Ընդերքօգտագործման համար, ըստ էության, գրեթե նախատեսված չեն սահմանափակումներ և դրա հիմքում առկա չէ ազգային հարստության շահագործման և դրա արդյունքում ստացվող օգուտների բաշխման պետական ռազմավարություն: Չկան օգտակար հանածոների առավելագույն կորզումը և մշակումը, հանքավայրերի պաշարների համալիր օգտագործումը խրախուսող և առավել առաջադեմ (այդ թվում՝ նաև նվազագույն էկոլոգիական վնաս հասցնող) տեխնոլոգիաների ու մեթոդների կիրառումը խթանող դրույթներ: Այսպիսով՝ հնարավորություն է ընձեռվում յուրաքանչյուր՝ զուտ մի քանի չափանիշների բավարարող անձի ցանկացած

ժամանակահատվածում, ցանկացած մեթոդով շահագործել կամ հետագա շահագործման ակնկալիքով ուսումնասիրել ցանկացած օգտակար հանածոյի հանքավայր:

Այստեղ անհանգստացնում է այն հանգամանքը, որ նոր օրենսգիրքը թույլ է տալիս հանքարդյունաբերության ոլորտի գործարարներին թափոնները և ոչ արդյունագործական նշանակության ապարները հարկային դաշտ չհանել: Նոր օրենսգրքում նաև քողարկված է թափոնների սահմանումը: Ճշգրիտ սահմանումների փոխարեն, ինչպես օրինակ՝ պոչամբարներ, մակաշերտի ապարներ, ոչ արդյունագործական նշանակության հանքանյութեր և այլն, օրենսգրքում կիրառվում է «հանքանյութի արդյունահանման և վերամշակման ընթացքում առաջացած ապարների կուտակումներ» ձևակերպումը: Եթե օգտագործվեր առաջին սահմանումը, ապա ընկերությունները թափոնների դեպքում կվճարեին՝ համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի: Իսկ ապարների կուտակման համար ընկերությունները չեն վճարում, քանի որ ոչ մի օրենքում նման պարտավորություն չկա: Միևնույն ժամանակ, անլուծելի է մնում «ապարների կուտակման» հետևանքով բնակչության առողջության և էկոլոգիական վիճակի վատթարացման փոխհատուցման խնդիրը:

Հանրապետության տարածքում առկա են օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 21 պոչամբարներ, որոնց ծավալները անցնում են մի քանի մլն. խոր. մ-ից զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես [6]: Ներկայումս պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները դեռևս չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ: Բացի այդ՝ օրենսգրքում թվարկվում է, թե որտեղ չի կարելի ընդերքօգտագործմամբ զբաղվել, և այդ ցուցակում անտառը չի նշվում, թեև, ինչպես հայտնի է, հանքարդյունաբերության մեծ մասը կապված է հենց անտառային տարածքների հետ: Այլ կերպ ասած՝ հնարավորություն է ստեղծվում «քողարկելու» անտառներն այլ կատեգորիայի տակ, ինչը նույնպես լի է էկոլոգիական հետևանքներով:

ՀՀ Կառավարությունը սահմանել է հանքարդյունաբերության ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և

դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկման իրականացման և այդ նպատակով վճարի չափերի հաշվարկման և վճարման կարգերը: Նպատակն է Հայաստանի ընդերքօգտագործումը «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի նոր պահանջներին համապատասխանեցնել: Ինչպես նշված է կառավարության որոշման փաստաթղթերում, մշտադիտարկումների իրականացումը հնարավորություն կընձեռի ստեղծել տեղեկատվական հենք՝ հանքերի փակումից հետո շրջակա միջավայրի և բնակչության առողջության ու անվտանգության վրա օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի ազդեցությունը նվազեցնելու համար:

*Բանալի բառեր*՝ հանքարդյունաբերություն, ընդերքօգտագործում, օրենսգիրք, կառավարում, արդունավետություն:

**Գրականություն**


1. ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2014-2016 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիր,
2. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, 28.12.1998թ.,
3. Анализ основных положений системы недропользования в зарубежных странах, подготовленный для Федерального собрания Государственной думы РФ ФГУ Центр «СРП-недра. – М.: Центр «СРП-недра. – Декабрь 2004 г., 220 ст.
4. http://ekvator.ucoz.ru/00002/ROM/Page-1.html
5. http://www.russobras.ru/constitution.php
   http://transparency.am/hy/assets/mines

## ЗАКОНОДАТЕЛЬНАЯ БАЗА ГОРНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В РА

**Мардоян Ашот Вартанович**
кандидат экономических наук, доцент,
Армянский государственный экономический университет

### Резюме

В пределах статьи представлены несовершенства в законодательстве горнопромышленной сферы РА, выявлены имеющиеся недостатки и представлен пакет предложений для урегулирования этой сферы. В статье изучены умеющиеся вопросы экологии и использования ресурсов, предложены решения, которые позволят повысить эффективность сферы. В исследовании основной акцент ставится на описании причиненного экологического ущерба в процессе эксплуатации рудников и даны некоторые предложения по направлению урегулирования этой сферы.

*Ключевые слова:* горное промышленность, недропользование, законодательство, менеджмент, эффективность.

## THE LAWS FOR MINING INDUSTRY IN REPUBLIC Of ARMENIA

**Mardoyan Ashot Wardan**
PhD in economics, associate professor,
Armenian State University of Economics

### Resume

The article covers the legislative deficiencies in mining industry in Armenia, as well as the reasons for the deficiencies. The article offers a number of ways as to how to improve the situation in this respect. The article offers some solutions which may help to make this area more effective. The research is mainly concentrated on the description of damages caused to the environment during the utilization of underground resources and makes certain suggestions for the regulation of that sector.

*Keywords:* mining, soil, legislation, management, effectiveness.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

***Աշոտ Վարդանի Մարդոյան***
*Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,*
*Հայաստանի պետական տնտեսագիտական*
*համալսարանի դասախոս*

Արդյունաբերական ներուժը յուրաքանչյուր երկրի ներքին ռեսուրսներով ապահովվածության կարևորագույն ցուցանիշներից մեկն է, այդ իսկ պատճառով այժմ մեծ նշանակություն է տրվում արդյունաբերության ոլորտի հատկապես որակական զարգացման հեռանկարին՝ շեշտը դնելով հանքարդյունաբերական արտադրանքի մշակման որակի բարձրացման և սկզբնական սպառման շղթայի ապահովման վրա, ինչը թույլ կտա ապահովել առկա ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձր աստիճան, հետևաբար՝ լրացուցիչ եկամուտներ:

Հանքարդյունաբերության ոլորտի զարգացումը կարևորվում է պետական մակարդակով, ինչն առավել ակնհայտ դարձավ ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակահատվածում հանքարդյունաբերության ոլորտին ցուցաբերած պետական մեծ աջակցությամբ. ՀՀ Կառավարությունը 2009 թվականին մոտ 40 մլն դոլարի վարկ տրամադրեց այս ոլորտի 4 խոշոր ընկերությունների, ինչը հնարավորություն տվեց վերջիններիս հաղթահարելու ժամանակաշրջանի խնդիրները և շարունակելու արտադրությունը՝ ապահովելով կայուն աճ [1]:

Հանքարդյունաբերության ոլորտի նշանակությունը մեծ է նաև պետական բյուջեի եկամտային մասի լրացման առումով: Խոշոր հարկատուների ցանկում առանձնանում են հատկապես այս ոլորտի ընկերությունները. Որպես օրինակ կարելի է նշել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը», որը 2014 թվականին 1000 խոշոր հարկատուների ցանկում զբաղեցրել է 4-րդ տեղը՝ 19.94 մլրդ ՀՀ դրամի չափով վճարված հարկերով, իսկ մինչ ճգնաժամային տարիներին երկրի ամենախոշոր հարկատու ընկերությունն էր [3]:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի դերը հատկապես զգալի է արտաքին առևտրում, ինչն արտահայտվում է նաև այս բնագավառի արտահանման և ներմուծման ցուցանիշների տարեցտարի մեծաց-

մամբ: Արտահանման մեջ մեծ տեղ է գրավում թանկարժեք մետաղների և քարերի արտահանումը, ընդ որում՝ անհրաժեշտ է նշել, որ հանքարդյունաբերական արտադրանքը, որպես կանոն, արտահանվում է մշակման ցածր մակարդակով, հետևաբար՝ ցածրորակ է ու միջազգային շուկայում սպառվում է ցածր գնով: Այլ կերպ ասած՝ արտահանման մեծ գումարային ծավալներն ապահովվում են քանակական և ոչ թե որակական ցուցանիշների բարելավման հիման վրա:

Հանքարդյունաբերության ոլորտին վերաբերող արտաքին առևտրի սալդոն թույլ է տալիս եզրակացնել նաև, որ արտահանվող որոշ ապրանքային խմբեր ոչ թե արտահանման, այլ ներքին շուկայում սպառման և որպես սպառողական արտադրանք ձևավորվելու խնդիր ունեն: Հետևաբար՝ անհրաժեշտ է երկրի ներսում զարգացնել սեփական հումքի օգտագործման հնարավորությունները:

Հանքարդյունաբերության հնարավորությունները, բացի տեխնոլոգիական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունից, հագեցվածությունից և որակից, նախ և առաջ կախված են երկրի հանքահումքային ռեսուրսների առկայությունից, այլ կերպ ասած՝ երկրի ընդերքում առկա հումքից և դրա քանակից: Ուստի, ոլորտի զարգացման հեռանկարները դիտարկելիս, նախ և առաջ անհրաժեշտ է ուսումնասիրել առկա հանքերի օգտագործման աստիճանը, ընդերքօգտագործման ներկա վիճակը, զարգացման հնարավոր ուղիները:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացրած տվյալների՝ ՀՀ ընդերքի հետազոտության արդյունքում հայտնաբերվել է օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր: Երկրի տարածքում հայտնաբերվել է մետաղների ավելի քան 38 տեսակ, սակայն պաշարների պետական հաշվեկշռում հաշվառվել, հետազոտվել և նախնական գնահատման են ենթարկվել միայն 18 տեսակ մետաղների պաշարներ [4]: Նույն աղբյուրի համաձայն՝ երկաթի հանքաքարի արդյունաբերական պաշարները հաշվվում են մոտ մի քանի հարյուր միլիոն տոննա, պղնձի, կապարի և ցինկի պաշարները մի քանի միլիոն տոննա, մոլիբդենինը՝ մի քանի հարյուր հազար տոննա, ոսկունն ու արծաթինը միասին՝ մի քանի հազար տոննա: Երկաթի հանքավայրերում հանքաքարում երկաթի միջին պարունակությունը կազմում է 30%, պղնձինը պղինձ-պիրիտային հանքավայրերում՝ 3,5%, իսկ պղինձ-մոլիբդենային և ոսկի-բազմամետաղային համալիր հանքա-

վայրերում՝ 0,3%: Կապարի և ցինկի միջին պարունակությունը բազմամետաղային հանքավայրերում, համապատասխանաբար, կազմում է 1,1% և 2,8%: Ոսկու միջին պարունակությունը ոսկու հանքավայրերում կազմում է 7գ/տ, իսկ արծաթինը՝ 13,5գ/տ:

Մետաղական հանքավայրերում կան նաև կադմիումի, բիսմուտի, գալիումի, թալիումի, թելլուրիումի և ծծմբի զգալի պաշարներ: Այդ իսկ պատճառով այժմ հանքավայրերի վերադիտարկման և վերագնահատման անհրաժեշտություն կա: Նշված հանքավայրերից շատերը հնարավոր չէ օգտագործել նույն արդյունավետությամբ, որոշներում անհրաժեշտ է ներդրումներ իրականացնել վերազինման և հետազոտություններ սկսելու ու վերսկսելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանքի շահագործման ծախսերը մի քանի անգամ փոքր են, քան շահագործումից ստացված մասնավոր եկամուտները և տնտեսական արդյունքը՝ վերոնշյալ ներդրումները և պետական լրահատկացումն ավելի քան արդարացված կարելի է համարել:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերվել են գունավոր, ազնիվ, ռադիոակտիվ և սև մետաղների մոտ 300 երևակումներ: Դրանցից շատերը համարվում են հեռանկարային: Ներկայումս առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում հանքաքարի բարձր որակով և տնտեսաաշխարհագրական, ինչպես նաև լեռնաերկրաբանական բարենպաստ պայմաններով աչքի ընկնող փոքր հանքավայրերը: Շուրջ 150 այդպիսի հանքավայրերի առկայություն է ենթադրվում սև և գունավոր մետաղների բազմաթիվ երևակումներում: Սակայն մյուս կողմից ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի մասնագետները, ներկայացնելով «ՀՀ գյուղմթերքների ծանր մետաղներով աղտոտման ռիսկի գնահատում» ծրագրի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները, նշել են, որ հանրապետության տարբեր շրջաններում հողագրունտի ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ հանքարդյունահանման հետևանքներն այսօր արդեն անթույլատրելի են և անվերահսկելի [5]:

Այս խնդրի շրջանակներում նպատակային է նաև դիտարկել երկրի ներդրումային քաղաքականությունը: Հայաստանի Հանրապետությունը հանդես է գալիս ներդրումների ներգրավման ակտիվ քաղաքականությամբ, ինչը հաստատված է ինչպես երկրի ներդրումային մի-

ջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներով, այնպես էլ արտահայտված է օրենսդրական աջակցությամբ:

Ոլորտում ներդրումների պասիվությունը, բացի ընդհանուր ՀՀ ներդրումային ոլորտին հատուկ ռիսկայնության, կառավարման, ենթակառուցվածքային և այլ թերություններից, պայմանավորված է հետևյալ բացասական գործոններով.

- Ոլորտի հագեցվածություն,
- Նոր գործունեություն սկսելու հետ կապված մեծ ծախսեր,
- Արդյունաբերության ոլորտում՝ միկրոմակարդակում հետազոտությունների և վերլուծությունների պակաս, տեղեկատվական բազայի բացակայություն,
- Ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգերի կայացման ոչ պատշաճ մակարդակ,
- Հայաստանում հումքային արտադրատեսակների՝ վերջնական արտադրանքի վերածման շղթայի բացակայություն,
- արտադրություն-գիտություն-կրթություն կապի սերտ համագործակցության բացակայություն և հետադարձ թույլ կապ,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակություն:

Հարկ է նշել, որ նման պարագայում առավել նպատակահարմար է ոչ թե նոր ընկերություն ստեղծելու միջոցով ներդրումների իրականացումը, այլ գործող ընկերություններում ներդրումների կատարումը: Նման ներդրումները կարող են ուղղվել հատկապես արտադրական և տեխնոլոգիական վերազինմանը, որը կհանգեցնի արտահանվող հանքարդյունաբերական արտադրանքի որակական բարելավմանը, իրական դրամական ծավալի մեծացմանը, երկրում ներքին դրամաշրջանառության աճին՝ իր բոլոր տնտեսական դրական հետևանքներով: Այսպիսով՝ մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման արդյունավետության բարձրացման նպատակով կարելի է.

1) հանքաքարի վերամշակման և պոչամբարներում կուտակված օգտակար հանածոների կորզման ժամանակ կիրառել նորագույն տեխնոլոգիաներ, ինչպես նաև ապահովել ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրության կազմակերպում՝ դրանց իրացումից ավելի մեծ ՀՆԱ-ի աճ ապահովելու համար,

2) նշված խնդիրը իրականացնելու, ոլորտում մասնավոր ներդրումներ ներգրավելու նպատակով անհրաժեշտ է մշակել և կիրառել ներդրողների համար առավել գրավիչ իրավական և տնտեսական մեխանիզմներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ իրականացնել վարկային և ֆիսկալ ճկուն քաղաքականություն՝ ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման և ապրանքային տեսք ստացած մետաղյա ձուլածոների արտադրություն կազմակերպելու համար:

Իսկ ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման զարգացումն ապահովելու նպատակով կարելի է.

1) ընտրել առավել շահութաբեր և տնտեսության համար կարևոր արտադրատեսակները, պահպանված գործարաններից մի քանիսը դասակարգել ըստ այդ արտադրատեսակների արտադրության համար կարևորություն ունեցող առաջնայնության և կազմակերպել ընտրված արտադրատեսակների արտադրությունը: Դրանով կապահովվի ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման միջազգային նոր տեխնոլոգիաների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն և առաջնահերթ մի շարք արտադրատեսակների արտադրությունը՝ ներքին շուկայի պահանջարկներից ելնելով: Այդպիսով՝ այդ գործարաններն ու արտադրատեսակները կստանձնեն ոլորտի զարգացման «լոկոմոտիվի» դերը՝ միևնույն ժամանակ ուղի հարթելով դեպի միջազգային շուկա,

2) պետական աջակցություն ցուցաբերել ձեռնարկությունների և արտադրատեսակների համար բանկերի համար ընդունելի բիզնես-ծրագրերի մշակման խնդրում,

3) պետականորեն աջակցել հայրենական շահագրգիռ խմբերին իրենց բիզնես-ծրագրերի՝ միջազգային ֆինանսական կազմակերպություններին և առանձին ներդրողներին ներկայացման հարցում,

4) շահագրգիռ խմբերի և համապատասխան գործարանների սեփականատերերի հետ քննարկել ոչ մետաղական հանքանյութերի վերամշակման «Հոլդինգի» ստեղծման հնարավորությունը՝ որպես տարբերակ դիտարկելով նաև պետության մասնակցության հնարավորությունը,

5) հավանության արժանացած նախագծերի իրականացումն ու արտադրությունների հետագա շահագործումը կառավարելու նպա-

տակով յուրաքանչյուր նախագծում պետական մասնակցության աստիճանի վերաբերյալ սահմանել.

ա. սեփականության կառուցվածքը, պետական մասնաբաժնի մեծությունը,
բ. պետական բաժնետոմսերի՝ հետագայում վերավաճառելու քաղաքականությունը և ժամկետները,
գ. կառավարության աջակցությամբ վարկային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը,
դ. ֆինանսական այլ աղբյուրներից վարկային միջոցների ներգրավման նպատակահարմարությունը,
ե. արտոնությունների տրամադրման նպատակահարմարություն (ներմուծված սարքավորումների համար ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգում և այլն):

Հանքահումքային հենքի վերարտադրության ապահովման նպատակով կարելի է.

1) ընդերքօգտագործման ոլորտի նոր օրենսդրության համաձայն՝ վճարվող գումարների հաշվին ստեղծել կուտակային ֆոնդ և կուտակված միջոցներն ուղղել հանքահումքային հենքի վերարտադրությանը, ֆոնդում կուտակվող հավելյալ միջոցները, որոնք կարող են առաջանալ միջազգային շուկայում իրացվող ընդերքօգտագործման պատրաստի արտադրանքի գների աճի արդյունքում, կարող են ուղղվել տնտեսության տարբեր ճյուղերի զարգացմանը, հանրապետության սոցիալական ապահովության և կրթական համակարգի հիմնախնդիրների լուծմանը, ինչպես նաև հանրապետության պաշտպանունակության ամրապնդմանը (նման մոտեցում կիրառվում է օրգանական վառելիքների պաշարներով հարուստ և դրանք միջազգային շուկաներում իրացնող պետությունների կողմից),

2) նախկինում կատարված որոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերված, Պետական հաշվեկշռում գրանցված և նախնական գնահատված (երկաթի՝ 278855 հազ. տ, պղնձի՝ 162 հազ. տ, ցինկի՝ 238,68 հազ.տ, մանգանի՝ 8770,36 հազ. տ և կապարի՝ 74,44 հազ. տ) երևակումների տարածքներում երկրաբանահետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով մասնավոր ընկերություններ ներգրավելու համար անհրաժեշտ է իրականացնել լայնածավալ գովազդային արշավ՝ նախապատվություն չտալով որևէ օգտա-

կար հանածոյին, քանի որ դրանցից յուրաքանչյուրի մանրակրկիտ ուսումնասիրությունը, պաշարների հաստատումը և հետագա շահագործումը համասարաչափ կնպաստի պետության տնտեսության զարգացմանը:

3) Մետաղների միջազգային գների տատանումներից անկախ՝ ազնիվ, գունավոր և հազվագույտ մետաղների պահանջարկը շուկայում գնալով մեծանում է, որն իր հերթին կնպաստի մետաղական օգտակար հանածոների առկա պաշարների ավելի արագ սպառմանը, քան կանխատեսվում է պետական հաշվեկշռում գրանցված թվերով: Պաշարների վերջնական սպառումը կանխելու նպատակով անհրաժեշտ է դրանց առաջանցիկ աճի և վերարտադրության ապահովում՝ երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով: Այդ ուսումնասիրությունները պարունակում են բարձր ռիսկային գործոն ներդրողների համար, քանի որ, ըստ միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքների, 10 երևակումներից երկրաբանական երկարատև աշխատանքների արդյունքում միայն մեկն է դառնում հանքավայր,

4) մետաղական օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրություններ իրականացնելու համար տրամադրված 51 տեղամասերից, առավելագույն դեպքում հանքավայր կդառնան 5-10-ը: Առաջիկա 20 տարիների ընթացքում նոր մետաղական օգտակար հանածոների (հատկապես ոսկի բազմամետաղային) հանքավայրեր չհայտնաբերելու դեպքում հանրապետությունում կնկատվի պաշարների վերջնական սպառում: Հետևաբար հանքահումքային հենքի վերարտադրությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է մեկ օր շուտ սկսել որոնողահետախուզական աշխատանքների իրականացումը:

5) ներկայումս հանրապետությունում ավանդաբար արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների՝ ոսկի, արծաթ, մոլիբդեն և այլն, Պետական հաշվեկշռում գրանցված և նախնական ուսումնասիրված պաշարներ չկան: Ոլորտի զարգացման ռազմավարական քաղաքականության հիմնաքար պետք է ընդունել ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների նորանոր պաշարների հայտնաբերումը, որի նպատակով անհրաժեշտ է պետական միջոցների հաշվին իրականացնել ընդերքի առավել խորը հորիզոնների նախնական երկրաբանական ուսումնասիրություններ՝ նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների կիրառմամբ, որի արդյունքում հնարավոր կլինի բացահայ-

տել օգտակար հանածոների նոր երևակումներ և գնահատել դրանց կանխատեսումային ռեսուրսները,

6) հին մեթոդներով նավթի ու գազի որոնողական աշխատանքները պահանջում են մեծածավալ ներդրումներ, ինչի համար հանրապետության տարածքում նավթի ու գազի որոնողական աշխատանքներում ներգրավված են մասնավոր կազմակերպություններ: Ժամանակակից եղանակների (արբանյակային, սպեկտրալ, հեռակառավարման և այլն) կիրառումը կնվազեցնի նախնական ուսումնասիրությունների համար պահանջվող ծախսերը,

7) տեղական և օտարերկրյա ներդրումների համար ավելի գրավիչ պայմաններ ստեղծելու նպատակով առաջարկվում է նավթի ու գազի որոնողական աշխատանքների նախնական փուլը կատարվել պետության կողմից՝ նորագույն ավելի պակաս ծախսատար եղանակների կիրառմամբ, հետագայում հայտնաբերված հեռանկարային տարածքների մասին գովազդային արշավի կազմակերպման և մասնագիտացված ընկերություններին հետախուզական աշխատանքների իրականացմանը, պետության համար ավելի բարենպաստ պայմաններով ներգրավման նպատակով,

8) վառելիքաէներգետիկ հումքի լրացուցիչ աղբյուր ստեղծելու նպատակով այրվող թերթաքարերի վերամշակումից բնական գազի ստացման համար ներկայումս համաշխարհային պրակտիկայում կիրառվում են նորագույն տեխնոլոգիաներ: Հանրապետությունում այրվող թերթաքարերի նախնական գնահատված պաշարները կազմում են նվազագույնը 212145,5 հազ. տ, որոնց վերոնշյալ տեխնոլոգիաներում օգտագործելու նպատակով առաջարկվում է մշակել համապատասխան պետական ծրագրեր՝ ԱՄՆ-ի մասնագիտացված կազմակերպությունների աջակցությամբ մանրակրկիտ ուսումնասիրություններ իրականացնելու և պարզելու առկա վառելիքաէներգետիկ հումքի պաշարների քանակական ու որակական հատկանիշները, բնական լեռնատեխնիկական պայմանները, ինչպես նաև դրանց կիրառելիությունը միջազգային պրակտիկայում կիրառվող ժամանակակից տեխնոլոգիաների հնարավորություններին:

Իսկ ինչ վերաբերում է երկրաջերմային էներգիայի աղբյուրների հեռանկարային տեղամասերի հայտնաբերմանը, դրա համար հետազոտություններն արդեն իսկ իրականացվել և շարունակում են իրակա-

նացվել պետության աջակցությամբ ներգրավված միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջոցների հաշվին: Առաջարկվում է. շարունակել այդ տարածքների ուսումնասիրությունները իրականացնել առավելագույնս նման կազմակերպությունների կողմից տրամադրվող տեխնիկական աջակցությունների հաշվին և դրական արդյունքների դեպքում պետության համար ավելի շահութաբեր պայմաններով վերջիններս վաճառել մասնավոր ընկերություններին:

*Բանալի բառեր*՝ ընդերքօգտագործում, ռեսուրսներ, արդյունավետություն, հիմնախնդիրներ, զարգացում:

**Գրականություն**


1. ՀՀ 2014-2015թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր,
2. http://armstat.am/file/doc/99489293.pdf,
3. http://www.taxinfo.am/upload/KB%20488_1415021758777.pdf,
4. http://www.minenergy.am/page/472,
5. http://ecocentre.am/general-information/


## ПЕРСПЕКТИВИ НЕДРОПОЛЬЗОВАНИЯ В РА


**Мардоян Ашот Вартанович**
кандидат экономических наук, доцент,
Армянский государственный экономический университет


**Резюме**


В статье представлены настоящее состояние недропользования в РА, имеющиеся недостатки в сфере государственного управления, и на основе этих выводов сделаны соответствующие предложения для урегулирования этой сферы. Горная промышленность одна из важнейших сфер экономики Республики Армения, и она играет важную роль в пополнении государственного бюджета. В исследовании основной акцент ставится на описании причиненного экологиче-

ского ущерба в процессе эксплуатации рудников и даны некоторые предложения по направлению урегулирования этой сферы.

*Ключевые слова:* недропользование, ресурсы, эффективность, проблемы, развитие.

## THE PERSPECTIVES IN MINERAL RESOURCES USE IN REPUBLIC OF ARMENIA

**Mardoyan Ashot Wardan**
PhD in economics, associate professor, Armenian State University of Economics

### Resume

The article presents the current situation in the use of mineral resources in Republic of Armenia, as well as the current deficiencies and negligences in the area of state management. Based on this, the author of the article draws relevant conclusions and offers some ways as to how to regulate the situation in this area. The mining industry is considered to be one of the most important sectors in the economy of the Republic of Armenia and it plays an important role in expanding the state budget. The research is mainly concentrated on the description of damages caused to the environment during the utilization of underground resources and makes certain suggestions for the regulation of that sector.

*Keywords:* soil, resources, effectiveness, problems, development.

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Խաչատրյան Ռոբերտ Խաչատուրի***
*Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ*
*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան, Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, Որակի ապահովման կենտրոնի ղեկավար*

Ներկայիս ՀՀ բարձրագույն կրթության համատեքստում և մրցակցության հարափոփոխ պայմաններում կրթական ծառայություններ իրականացնող կազմակերպությունների գործունեության արդյունավետության ապահովումն ու պահպանումը կառավարման հիմնախնդիրներից մեկն է դարձել: Կառավարման համակարգի արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ նախապայման է այդ համակարգում ժամանակակից պահանջներին համապատասխան փոփոխությունների իրականացումը, որոնք պետք է հիմնված լինեն կառավարման համակարգի վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների ուսումնասիրության արդյունքների վրա: Ցանկացած կազմակերպություն իր գործունեությունը բարելավելու և կատարելագործելու նպատակով անհրաժեշտաբար գնահատում է գործունեության արդյունավետությունը՝պարզելու, թե որքանով է կարողացել արդյունավետ իրականացնել թիրախավորված նպատակները:

Այս հոդվածի նպատակն է ցույց տալ, թե գործունեության արդյունավետության ցուցանիշներն ինչպես կարող են նպաստել ՀՀ բուհերի գործունեության գնահատման բարելավմանը: Հոդվածում ներկայացվում է նաև ՀՀ բուհերի համար մշակված ԳԱՑ-երի ցանկ, որը կարող է ուղղորդել ՀՀ բուհերին՝առավել արդյունավետ դարձնելու իրենց ռազմավարական կառավարման բարեփոխմանն ուղղված գործընթացները:

Հայաստանի Հանրապետության մեծաթիվ բուհերի բազմազանության համատեքստում հաշվետվողականության չափումը համապարփակ և բարդ գործընթաց է՝պայմանավորված մի շարք առանձնահատկություններով, որոնց հիմքում ընկած են բուհի գործունեության տեսակը, կրթական ծառայությունների տեսակներն ու որակա-

կան չափումները և այլ գործոններ: «Բուհերի բազմազանությունը կարելի է դիտարկել որպես տվյալ ազգի համար մեծ արժեք և հաշվետվողականության արդյունավետությունն ապահովող գործոն» [Carey 2007, 3]: Բուհերի բազմազանությունն արժեք դիտարկելու առումով պետք է նշել, որ բուհերն իրենց առանձնահատկություններից բխող բացառիկ կրթական ծառայություններ տրամադրելու միջոցով փորձում են մի կողմից գրավիչ դառնալ դիմորդների և ուսանողների համար, մյուս կողմից՝շարունակական կապ հաստատել շրջանավարտների հետ, որոնք ի վերջո կրում են տվյալ բուհի վարկանիշն ու համբավը բարձր պահելու պատասխանատվությունը: Ըստ Բուրքի ու Մինասյանի [Burke and Minassians 2002]՝ բարձրագույն կրթության առաքելությունն ու բուհերի նպատակները հիմնականում հստակ չեն ձևակերպված, ինչն էլ խոչընդոտում է բուհերի գործունեության մասին համապարփակ պատկերացում կազմելուն: Պետք է հավելել, որ բուհերի հստակ նկարագիրն ունենալու համար էական նշանակություն ունեն նաև բուհերի որդեգրած քաղաքականությունն ու դիրքորոշումը հաշվետվողականության և գործունեության արդյունավետության ապահովման վերաբերյալ:

Կազմակերպությունները, ներառյալ բուհերը սովորաբար մշակում և կիրառում են ԳԱՑ-եր՝ ըստ գործունեության ոլորտների կամ ուղղությունների, և սահմանվում է, թե որ ցուցանիշներով պիտի գնահատվի գործունեության տվյալ ոլորտը կամ ուղղությունը:

Ելնելով ռազմավարությամբ սահմանված նպատակներից՝ կազմակերպության յուրաքանչյուր ստորաբաժանման համար մշակվում են անհատական ցուցանիշներ: Սահմանված և փաստացի ցուցանիշների տարբերության միջոցով կարելի է գնահատել ռազմավարության կամ ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը [Խաչատրյան 2013, 160]: ԳԱՑ-երն ընդհանուր առմամբ գնահատում են կազմակերպության ռազմավարական նպատակների տարբեր բաղադրիչները և կազմակերպությանն ուղղորդում են դեպի այն հատույթները, որոնց վերահսկումն անհրաժեշտ է կազմակերպության գործունեության շարունակական բարելավումն ապահովելու համար: ԳԱՑ-երը կարող են նաև արդյունավետ հենք ստեղծել գործողությունների պլանի մշակման համար: ԳԱՑ-երի համապատասխանությունը կազմակերպության ռազմավարական գերակա ուղղություններին ու

նպատակներին հիմնականում որոշվում է տվյալ աշխատանքային խմբի կամ հանձնախմբի կողմից: ԳԱՑ-երի՝ որպես չափման գործիքի արդյունավետությունը կախված է նաև նրանից, թե ինչպիսի տվյալներ են առկա կազմակերպությունում, և որքանով են դրանք հասանելի թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցներին: ԳԱՑ-երի առանցքային նշանակությունը պայմանավորված է նրանով, թե բուհերը որքանով են կարողանում բավարարել իրենց ներքին ու արտաքին շահակիցների կարիքները, որն էլ դրսևորվում է հաշվետողականության տարբեր ձևաչափերով և մեխանիզմներով [Burke and Minassians 2002]:

ԳԱՑ-երի սահմանման համար բուհը պետք է ընտրի տեղեկատվության արժանահավատ և առավել նպատակահարմար աղբյուրներ, ինչպիսիք են՝

- բուհի ռազմավարական պլանը,
- առկա ԳԱՑ-երը կամ չափման այլ միավորներ,
- աշխատանքային ծրագրերն ու նախագծերը, ինչպես նաև ռեկտորի և այլ հաշվետու մարմինների տարեկան հաշվետվությունններն ու վերլուծությունները,
- ռիսկերի գնահատման տվյալները և/կամ դրանց առնչվող այլ փաստաթղթերը,
- կազմակերպության գործունեության արդյունքների նախկին հաշվեքարտը,
- կազմակերպության մարդկային ռեսուրսների ռազմավարական նպատակներին կամ ռեսուրսներին առաջադրվող առաջնային պահանջները,
- հարցազրույցների և/կամ կարծիքների վերլուծության տվյալները և/կամ դրանց առնչվող այլ փաստաթղթերը,
- բենչմարքինգի կամ համեմատական վերլուծության արդյունքները,
- պետական կամ մասնագիտական չափորոշիչները և այլն:

Այսպիսով, ԳԱՑ-երն առնչվում են կազմակերպության գործունեության այն առանցքային ուղղություններին, որոնք ենթակա են չափման և գնահատման, կամ որոնց արդյունավետության մակարդակը պետք է պահպանել՝գործունեության բարելավման շարունակականությունն ապահովելու համար [AuIndustry 1995, 30]: Ժամանակակից ռազմավարական մոտեցումները թելադրում են, որ կազմակերպու-

թյուններն ընտրեն ու կիրառեն այնպիսի չափումներ, որոնք միայն կաջակցեն կազմակերպությունների կայուն զարգացմանը և կբխեն նրանց արժեհամակարգերից:

Հաջորդիվ ներկայացվում է բուհի գործունեության առանցքային ուղղությունների և ցուցանիշների համակարգ (Աղյուսակ 1): Այս ցանկը կազմվել է՝ հիմնվելով ԳԱՑ-երի վերաբերյալ մասնագիտական գրականության ուսումնասիրության և ԳԱՑ-երի հայերեն ու անգլերեն մի շարք մոդելների մանրամասն ուսումնասիրության վրա[1]:

*Աղյուսակ 1.*

**ԲՈՒՀԻ գործունեության առանցքային ուղղությունները և ցուցանիշները**

| Ուղղու-թյուն | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ | |
|---|---|---|
| **I.** | **Ուսանողների համակազմի համալրում** | |
| 1. | **Բուհի ընդունելության ցուցանիշներ** | 1.1 դիմորդների թիվն ըստ բուհի ուղղությունների, կրթական ծրագրերի և մասնագիտությունների |
| | | 1.2 դիմորդների հաշվեկշիռն այլ բուհերի նույն մասնագիտությունների դիմորդների հոսքում (կենտրոնացված ընդունելություն) |
| | | 1.3 դիմորդների բաշխվածությունն ըստ մարզերի և տարածաշրջանների (կենտրոնացված ընդունելություն) |
| | | 1.4 մրցութային ցուցանիշներն ըստ որակավորումների մակարդակի և մասնագիտությունների (դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը) |

[1] Ի թիվս այլոց օգտագործվել է նաև ԳԱՑ-երի՝ Յու. Սարգսյանի և Ա. Բուդաղյանի առաջարկած հայալեզու առաջին ցանկը (Համալսարանի գործունեության և վիճակի գնահատման առանցքային ցուցանիշների ցանկ), որի որոշ ցուցանիշներ մասնակի փոփոխություններով, ճշգրտումներով և հավելումներով ներկայացված են այս նմուշօրինակում:

| | | |
|---|---|---|
| 2. | **Դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը** | 2.1 առկա ուսուցմամբ դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը |
| | | 2.2 հեռակա ուսուցմամբ դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը |
| | | 2.3 արտասահմանցի դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերակցությունը |
| 3. | **Ուսանողների պահպանում և ավարտելիություն** | 3.1 առկա ուսուցմամբ ուսանողների համակազմը և հաշվեկշիռը տարեկան կտրվածքով |
| | | 3.2 հեռակա ուսուցմամբ ուսանողների համակազմը և հաշվեկշիռը տարեկան կտրվածքով |
| | | 3.3 արտասահմանցի ուսանողների (առկա և հեռակա) համակազմը և հաշվեկշիռը տարեկան կտրվածքով |
| | | 3.4 բուհից դուրս մնացած ուսանողների թվի և ուսումնառող ուսանողների թվի հարաբերակցությունը |
| | | 3.5 կուրսից կուրս փոխադրման թվային և տոկոսային ցուցանիշները |
| | | 3.6 շրջանավարտների ավարտելիության ցուցանիշները՝ ըստ մասնագիտությունների |
| 4. | **Ուսանողների համակազմի սեռատարիքային բաշխավածությունը** | 4.1 դիմորդների և ընդունվածների սեռային բաշխվածությունը թվային և տոկոսային արտահայտությամբ (կենտրոնացված ընդունելություն) |
| | | 4.2 դիմորդների և ընդունվածների տարիքային բաշխվածությունը թվային և տոկոսային արտահայտությամբ (կենտրոնացված ընդունելություն) |

| | | |
|---|---|---|
| 5. | **Ընդունելության պլանի կատարողականը՝ ընդունվածների թվի և ընդունելության համար հատկացված տեղերի թվի հարաբերակցությունը (անվճար և վճարովի՝ ըստ մասնագիտությունների)** | 5.1 առկա ուսուցմամբ ընդունվածների թվի և ընդունելության համար հատկացված տեղերի թվի հարաբերակցությունը |
| | | 5.2 հեռակա ուսուցմամբ ընդունվածների թվի և ընդունելության համար հատկացված տեղերի թվի հարաբերակցությունը |
| | | 5.3 ընդունված արտասահմանցիների թվի և ընդունելության համար հատկացված տեղերի թվի հարաբերակցությունը |
| 6. | լրացուցիչ և շարունակական կրթական ծրագրերով ուսումնառողների թիվը | |
| 7. | հետբուհական կրթությամբ ուսումնառողների թիվը | |
| **II.** | **Ուսումնական գործընթացի կազմակերպում** | |
| 8. | **Ուսումնական գործընթացի արդյունավետություն** | 8.1 ուսանող-դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) քանակական հարաբերակցությունը |
| | | 8.2 ուսանող-ուսումնաօժանդակ կազմ (լրիվ հաստիքային համարժեքով) քանակական հարաբերակցությունը |
| | | 8.3 ուսանողների միջին որակական գնահատականը (ՄՈԳ) ըստ տարիների, կրթական ծրագրերի և կրթական աստիճանի |
| 9. | **Աշխատակազմ** | 9.1 աշխատողների ընդհանուր համակազմն ըստ գործունեության տեսակների (վարչական, ուսումնաօժանդակ, տեխնիկական) և տարակարգերի |
| | | 9.2 աշխատակազմի հոսունության տոկոսը (ընդունված/ազատված) |
| | | 9.3 աշխատող-ուսանող քանակական հարաբերակցությունը |

| | | |
|---|---|---|
| 10. | **Աշխատակազմի սեռատարիքային բաշխվածությունը** | 10.1 աշխատակազմի միջին տարիքը (ըստ համակազմի տեսակի) |
| | | 10.2 աշխատակազմի սեռային բաշխվածությունը (կին-տղամարդ տոկոսային հարաբերակցությունը) |
| 11. | **Պրոֆեսորադասախոսական կազմ** | 11.1 ՊԴ կազմի բաշխվածությունն ըստ աշխատանքային պայմանագրի տեսակի (հաստիքային և ոչ հաստիքային, ներքին կամ արտաքին համատեղություն, ժամավճարային) |
| | | 11.2 ՊԴ կազմի տարիքային բաշխվածությունը տոկոսային արտահայտությամբ (ՊԴ կազմի միջին տարիք) |
| | | 11.3 ՊԴ կազմի սեռային բաշխվածությունը (կին-տղամարդ) թվային և տոկոսային արտահայտությամբ |
| | | 11.4 ՊԴ կազմի բաշխվածությունն ըստ տարակարգերի, գիտական աստիճանների և կոչումների |
| | | 11.5 ՊԴ կազմի տարեկան համալրումը հետբուհական կրթության համակարգից և այլ աղբյուրներից |
| | | 11.6 ՊԴ կազմից մասնագիտական վերապատրաստում անցածների թվաքանակն ըստ տարեկան ցուցանիշների |
| | | 11.7 ՊԴ կազմի տարեկան միջին ուսումնական բեռնվածությունը (ընդհանուր և ըստ կիսամյակների) |
| | | 11.8 ՊԴ կազմի՝բուհում օտար լեզվով դասավանդող անդամների թիվը |
| | | 11.9 ՊԴ կազմի՝ օտար լեզուներին տիրապետողների թիվը և դրանց հաշվեկշիռն ընդհանուր ՊԴ կազմում |

| **III.** | **Ռեսուրսների կառավարում** | |
|---|---|---|
| 12. | **Ֆինանսական ցուցանիշներ** | 12.1 ծախսերի և եկամուտների հաշվեկշիռը՝ ըստ մասնագիտությունների և ստորաբաժանումների |
| | | 12.2 արտաբյուջետային մուտքերի հաշվեկշիռն ընդհանուր մուտքերում (ըստ աղբյուրների) |
| | | 12.3 ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում |
| | | 12.4 ուսման վարձաչափը (նախատեսված ՀՀ քաղաքացիների և արտասահմանցիների համար) |
| | | 12.5 ֆինանսական ռեսուրսների բաշխման մեխանիզմների արդյունավետության ցուցանիշներ |
| | | 12.6 նվազագույն աշխատավարձը բուհում և դրա հարաբերակցությունը ՀՀ պաշտոնական նվազագույն աշխատավարձին |
| | | 12.7 միջին աշխատավարձի համեմատական տվյալներ (այլ բուհերի և/կամ համանման հաստիքների համեմատությամբ) |
| | | 12.8 արտաբյուջետային մուտքերի և բյուջետային մուտքերի հարաբերակցությունը (պետական 1 մլն դրամի դիմաց բուհի ֆինանսական ներդրումը) |
| 13. | **Ֆինանսական աջակցության ցուցանիշներ** | 13.1 ֆինանսական աջակցություն ստացող կարիքավոր ուսանողների տոկոսը |
| | | 13.2 ֆինանսական աջակցություն ստացող ուսանողների տոկոսը |
| | | 13.3 պետֆինանսավորմամբ ուսումնառող ուսանողների տոկոսը |
| | | 13.4 ֆինանսական տարբեր աղբյուրներից (հիմնադրամներ, բարե- |

| | | |
|---|---|---|
| | | գործական ընկերություններ, ուսանողական վարկեր տրամադրող բանկեր և այլն) ֆինանսական աջակցություն ստացող ուսանողների տոկոսը |
| 14. | **Կրթական միջավայրի բաղադրիչներ և տարածքային ռեսուրսներ** | 14.1 մեկ ուսանողին բաժին ընկնող ընդհանուր տարածքը |
| | | 14.2 մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը |
| | | 14.3 տարածքների (ներառյալ արտալսարանային աշխատանքների համար նախատեսված և ուսումնական նշանակություն ունեցող տարածքները՝ դահլիճները, սպորտդահլիճները և այլն) օգտագործման արդյունավետության գնահատման ցուցանիշներ (լսարանների բեռնվածությունը) |
| | | 14.4 մեկ ուսանողին բաժին ընկնող լաբորատորիաների թիվը, հաշվեկշիռը |
| | | 14.5 մեկ ուսանողին բաժին ընկնող սննդի կետ(եր)ի տարածքը (տեղեր) |
| | | 14.6 էլեկտրոնային ուսուցման համար նախատեսված (տեխնոլոգիական կարողությամբ) լսարանների թիվը |
| 15. | **Կրթական ռեսուրսներ** | 15.1 մեկ ուսանողին բաժին ընկնող մասնագիտական և ոչ մասնագիտական գրականության՝ գրքերի և դասագրքերի թիվը գրադարանում |
| | | 15.2 գրադարանի տարեկան համալրումը նոր գրքերով և ամսագրերով (թիվը) |
| | | 15.3 գրադարանում առկա գրքերի տարեկան շրջանառությունը (տացքը) |

| | | |
|---|---|---|
| | | 15.4 գրադարանի հաճախորդների (աբոնենտների) տարեկան հաճախումների քանակը |
| | | 15.5 գրադարանի տարեկան հաճախորդների (աբոնենտների) թվի հարաբերակցությունն ուսանողների և դասախոսների թվին |
| | | 15.6 էլեկտրոնային գրականության միավորների թիվը, բաժանորդագրված էլեկտրոնային ամսագրերի թիվը |
| **IV.** | **Գիտություն և հետազոտություն** | |
| 16. | **Հետազոտության ֆինանսավորում** | 16.1 ընդհանուր բյուջեում գիտահետազոտական ֆինանսական մուտքերի հաշվեկշիռն ըստ աղբյուրների (պետական մուտքեր, արտաբյուջետային մուտքեր, միջազգային դրամաշնորհային ֆոնդեր) |
| | | 16.2 այլ հաստատությունների հետ համատեղ ֆինանսավորված հետազոտական նախագծերի/կրթական ծրագրերի թիվը |
| | | 16.3 գիտահետազոտական աշխատանքների համար ծախսված ֆինանսական ռեսուրսների ծավալի և հետազոտողների ընդհանուր թվի հարաբերակցությունը (ըստ գիտական ոլորտի) |
| 17. | **Հետազոտության արդյունքներ** | 17.1 գիտահետազոտական աշխատանքներում (նախագծերում) ներգրավված դասախոսների թիվը, հաշվեկշիռը և պետական ֆինանսավորման ծավալը |
| | | 17.2 միջազգային դրամաշնորհային նախագծերի մասնակիցների թիվը, հաշվեկշիռը |
| | | 17.3 գիտական աստիճան ունեցող դասախոսների թվի և տարեկան |

| | | |
|---|---|---|
| | | գիտական պաշտպանությունների թվի հարաբերակցությունը |
| | | 17.4 մագիստրոսական և հետբուհական կրթությամբ ուսումնառողների ներգրավվածությունը գիտական նախագծերում (հաշվեկշիռը) |
| | | 17.5 ՊԴ կազմի թվաքանակի և գիտական հրապարակումների թվի հարաբերակցությունը |
| | | 17.6 միջազգային գիտաժողովներին զեկուցումով հանդես եկած մասնակիցների թիվը |
| | | 17.7 արտաքին գործընկերների հետ համատեղ հրապարակումների թիվը, հաշվեկշիռը |
| | | 17.8 (գիտա)հետազոտական աշխատանքներում օգտագործվող ՏՀՏ-ների թիվը և հաշվեկշիռը. ՏՀՏ-ների թվի և մասնակիցների թվի հարաբերակցությունը |
| | | 17.9 հրատարակված մենագրությունների թիվը |
| | | 17.10 հրատարակված գիտական կամ ուսումնամեթոդական հոդվածների թիվը՝ ազդեցության գործակցով հանդեսներում առաջատար ազգային հանդեսներում |
| | | 17.11 հրատարակված ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ աշխատանքների թիվը, տպագրական մամուլը, մեկ դասախոսին ընկնող միավոր քանակը |
| | | 17.12 միջազգային գիտաժողովների կամ սեմինարների նյութերի ժողովածուներում տպագրված զեկույցների թիվը |
| | | 17.13 մասնագիտական ժողովների, սեմինարների կամ հետազոտական |

| | | |
|---|---|---|
| | | աշխատաժողովների ժամանակ ներկայացված զեկույցներ |
| | | 17.14 գիտահետազոտական արտադրանքի առևտրայնացման ցուցանիշներ (պատենտներ) |
| | | 17.15 գիտահետազոտական արդյունքների (հոդվածներ, մենագրություններ և այլն) մեջբերման/հղման գործակիցներ |
| | | 17.16 գիտահետազոտական արտադրանքի (հոդվածներ, մենագրություններ և այլն) ազդեցության գործակիցներ |
| | | 17.17 բուհական պարբերականների թիվը, պարբերականությունը (համարների թիվը) |
| | | 17.18 տարվա կտրվածքով ատենախոսություն պաշտպանածների և գիտական աստիճան ստացածների թվի հարաբերակցությունը |
| | | 17.9 տարվա կտրվածքով գիտությունների դոկտորի աստիճան ստացածների և բուհում առկա դոկտորների ընդհանուր թվի հարաբերակցությունը |
| **V.** | **Տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ)** | |
| 18. | **ՏՀՏ-ների կիրառման ցուցանիշներ** | 18.1 ՏՀՏ-ների (ներառյալ՝ համակարգիչների, էլեկտրոնային գրատախտակների, պրոյեկտորների) քանակական պատկերը և աճի ցուցանիշները |
| | | 18.2 մեկ ուսանողին բաժին ընկնող ՏՀՏ սարքավորումների տարեկան ձեռքբերման ցուցանիշներ |
| | | 18.3 ուսումնական գործընթացում ընդգրկված ՏՀՏ-ների հաշվեկշիռը |
| | | 18.4 բուհի կառավարման համակարգում ներգրավված ՏՀՏ-ների քանակը և աճի տոկոսը |

| | | |
|---|---|---|
| | | 18.5 ուսանողների և ՏՀՏ-ների թվային հարաբերակցությունը |
| | | 18.6 բուհում առկա էլեկտրոնային դասընթացների թիվը, հաշվեկշիռը |
| 19. | **Համացանցի մատչելիության ցուցանիշներ** | 19.1 էլեկտրոնային փոստից օգտվողների (ուսանողների) թիվը, էլեկտրոնային հասցեների թիվը և տարեկան աճը |
| | | 19.2 բուհի պաշտոնական կայքի հաճախելիության ցուցանիշներ |
| | | 19.3 համացանցի մատչելիության ցուցանիշներ (ուսանողներին մատչելի ինտերնետային կապի կոլեկտիվ օգտագործման հանգույցների թվի և ուսանողների թվի հարաբերակցությունը) |
| | | 19.4 համացանցի մատչելիության ցուցանիշներ (ՊԴ կազմին մատչելի ինտերնետային կապի կոլեկտիվ օգտագործման հանգույցների թվի և ՊԴ կազմի թվի հարաբերակցությունը) |
| | | 19.5 ցանցի տեխնիկական ցուցանիշներ (արագագործություն և այլն) |
| **VI.** | **Արտաքին կապեր և միջազգային համագործակցություն** | |
| 20. | Արտասահմանյան (ակտիվ) գործընկեր կազմակերպությունների/ հաստատությունների թիվը, համապատասխան պայմանագրերի թիվը | |
| 21. | ՊԴ կազմի ներգրավվածության տոկոսը միջազգային նախագծերում | |
| 22. | **Շարժունության ցուցանիշներ** | 22.1 արտասահման գործուղումների թիվը |
| | | 22.2 արտասահմանից բուհ այցելությունների/ գործուղումների թիվը |
| | | 22.3 արտասահմանում սովորող ուսանողների թիվը, հաշվեկշիռը |
| | | 22.4 արտասահմանից եկած ուսանողների և դասախոսների թիվը |

| | | |
|---|---|---|
| 23. | միջազգային դրամաշնորհների տարեկան ծավալը | |
| 24. | միջազգային (հանրապետական) գիտաժողովների թիվը | |
| 25. | բուհի անդամակցությունը (մասնակցությունը) միջազգային կազմակերպություններին և կոնսորցիումներին | |
| 26. | բուհերի ազգային/միջազգային վարկանշավորման համակարգում բուհի վարկանշային արդյունքները վերջին 3 տարիների ընթացքում | |
| 27. | **Նվիրատրությունների ցուցանիշներ** | 27.1 նվիրատուների թիվը |
| | | 27.2 նվիրատու շրջանավարտների թիվը, աճի տոկոսը |
| | | 27.3 նվիրատվությունների ծավալը և հաշվեկշիռը եկամուտների ծավալում |
| **VII.** | **Հասարակական պատասխանատվություն** | |
| 28. | բուհ-հասարակություն կապի զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունավետության գնահատման արդյունքները (հարցումների արդյունքներ) | |
| 29. | հասարակությանը մատուցվող լրացուցիչ և շարունակական կրթական ու խորհրդատվական ծառայությունների ներքին գնահատման մեխանիզմների և գործիքների արդյունավետության ցուցանիշները (հարցումների արդյունքներ) | |
| 30. | հասարակությանը մատուցվող լրացուցիչ և շարունակական կրթական ու խորհրդատվական ծառայությունների արտաքին գնահատման մեխանիզմների և գործիքների արդյունավետության ցուցանիշները (հարցումների արդյունքներ) | |
| 31. | բուհի գիտահետազոտական և համապատասխան այլ ենթակառուցվածքների կողմից իրականացվող կրթական, թարգմանչական, լեզվական և այլ ծառայությունների թիվը | |
| 32. | ԶԼՄ-ների հետ համագործակցության արդյունավետության գնահատման ցուցանիշները (հրապարակած նյութերի թիվը, բուհի վերաբերյալ տեղեկատվության տարածման աղբյուրները) | |
| 33. | տեղեկատվության տարածման և հետադարձ կապի մեխանիզմների ու ձևերի բազմազանեցման արդյունավետության գնահատման ցուցանիշները (սոցիալական ցանցեր, առցանց ֆորումներ, քննարկումներ, կլոր սեղաններ և այլն) | |
| 34. | բուհ-շրջանավարտ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների թիվը և արդյունավետության գնահատման ցուցանիշները (հանդիպում-քննարկումներ, կլոր սեղաններ, հարցումների արդյունքներ) | |

| | | |
|---|---|---|
| 35. | բուհի շրջանավարտների զբաղունակությունը (տոկոսային արտահայտությամբ) | |
| 36. | բուհն ավարտելուց հետո աշխատանքի անցած շրջանավարտների թիվը | |
| **VIII.** | **Որակի ապահովում** | |
| 37. | **Շահակիցների բավարարվածության ցուցանիշներ** | 37.1 ուսանողների կարիքների վերհանման և կրթությունից բավարարվածության աստիճանի գնահատման ուսումնասիրությունների արդյունքները (հարցումների արդյունքներ) |
| | | 37.2 ՊԴ կազմի կարիքների վերհանման և բավարարվածության աստիճանի գնահատման ուսումնասիրությունների արդյունքները (հարցումների արդյունքներ) |
| | | 37.3 ՊԴ կազմի բավարարվածությունը բուհի կրթական ծառայություններից (բավարարվածության գնահատման հարցումների արդյունքներ) |
| | | 37.4 շրջանավարտների բավարարվածությունը բուհի կրթական ծառայություններից և կրթության որակից (բավարարվածության գնահատման հարցումների արդյունքներ՝ ըստ առաջարկվող մասնագիտությունների և կրթական ծրագրերի) |
| | | 37.5 գործատուների բավարարվածությունը բուհի շրջանավարտներից (հարցումներ հիմնական գործատուների շրջանում, բավարարվածության գնահատում՝ ըստ գործունեության ոլորտների և մասնագիտությունների, ուսանողներին աշխատանքի ընդունելու նախապատվության աստիճանի, բուհ-գործատու համագործակցության հաճախականության և այլն) |

| | |
|---|---|
| 38. | ներբուհական տարեկան ինքնավերլուծությունների թիվն ըստ հավա-տարմագրման տեսակների (ինստիտուցիոնալ, ծրագրային և այլն) |
| 39. | շահակիցների (ներքին և արտաքին) տեղեկացվածության աստիճա-նի գնահատման/վերլուծության արդյունքները (հարցումների արդ-յունքներ) |
| 40. | բուհի գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահավող մեխանիզմների արդյունավետության ցուցանիշները (բուհի պաշտոնական կայքում և տեղեկատվական այլ աղբյուրներում տեղադրված նյութեր/փաստաթղթեր) |

ԳԱՑ-երի՝ որպես ռազմավարության արդյունավետության չափման օժանդակ գործիքի կիրառման արդյունավետությունը կարող է դրական ազդեցություն ունենալ բուհի գործունեության վրա և ապահովել վերջինիս բարելավման շարունակականությունը, եթե բուհի ղեկավարությունն ու վարչական կազմը պարբերաբար վերանայեն ԳԱՑ-երը՝ ճշտելու՝ արդյոք այդ ցուցանիշները դեռևս առանցքային նշանակություն ունեն բուհի և առհասարակ բարձրագույն կրթության համակարգի համար: Բացի այդ, առանցքային ԳԱՑ-երի վերհանումն ու հրապարակումը նպաստում են բուհի և պետական օրենսդրության միջև կապի ամրապնդմանը [Burke and Minassians 2002]:

Այսպիսով, բուհերի կողմից ԳԱՑ-երի ընտրության, մշակման ու կիրառման գործընթացները պետք է ուղղորդված լինեն դեպի բուհերի ներկա և ապագա գործունեության բարեփոխմանը՝շեշտադրելով ռազմավարական գերակա խնդիրների լուծման և ռազմավարական նպատակների առավելագույնս արդյունավետ իրականացման անհրաժեշտությունը: ԳԱՑ-երի միջոցով բուհերի գործունեության գնահատման գործընթացում ներգրավված ղեկավարությունը, վարչական կազմը և այլ շահակիցները, ելնելով ռազմավարական արդյունավետ կառավարման ժամանակակից մոտեցումներից, պետք է ոչ միայն ապահովեն բուհի գործունեության վերաբերյալ հաշվետվողականությունը, այլ նաև շարունակաբար աշխատեն բուհի ԳԱՑ-երի բարելավման ուղղությամբ՝այդ կերպ նպաստելով բուհի կողմից ազգային ու միջազգային աշխատաշուկաների մշտափոփոխ պահանջների բավարարմանը:

*Առանցքային բառեր*՝ գործունեության արդյունավետության ցուցանիշներ (ԳԱՑ), բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության գնահատում, ռազմավարական կառավարման համակարգի բարեփոխում:

### Գրականություն

1. Խաչատրյան Ռ., Ռազմավարական պլանավորումը բարձրագույն ուսումնական հաստատություններում: Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, Լինգվա, 2013:
2. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բարձրագույն ուսումնական հաստատությունների ստրատեգիական պլանավորում, Երևան, 2007:
3. AuIndustry 1995. Key Performance Indicators Manual: A Practical Guide for the Best Practice Development, Implementation and Use of KPIs. South Melbourne, Pittman Publishing.
4. Burke, J. C., & Minassians, H. P. 2002. The New Accountability: From Regulation to Results. New Directions for Institutional Research, Issue 116, 115-127.
5. Carey, K. 2007. Truth without Action: The Myth of Higher-education Accountability. Change: The Magazine of Higher Learning. Volume 39, Issue 5.

## THE ROLE OF KEY PERFORMANCE INDICATORS IN THE CONTEXT OF STRATEGIC MANAGEMENT REFORMS AT RA HIGHER EDUCATION INSTITUTIONS

**Khachatryan Robert Khachatur**
PhD, Associate Professor, Yerevan Brusov State University of Languages and Social Sciences, Head of Chair on Education Management and Planning, Head of Center for Quality Assurance

### Summary

The article touches upon the crucial role of Key Performance Indicators (KPIs) within reforming processes of strategic management at Higher Education Institutions of the Republic of Armenia (RA HEIs). In particular, RA HEIs could greatly benefit from the comprehensive elaboration and targeted usage of KPIs to efficiently assess their performance on a regular basis.

The article also recommends a set of Key Performance Indicators which are of practical use for HEIs to improve their performance assessment and strategic management systems. The elaborated list of KPIs can also be beneficial for HEIs as it presents a number of KPIs in accordance with main spheres of activity and generic strategic priorities of RA higher education institutions.

*Keywords:* Key Performance Indicators (KPIs), performance assessment of higher education institutions, improvement of strategic management system.

## РОЛЬ КЛЮЧЕВЫХ ПОКАЗАТЕЛЕЙ ЭФФЕКТИВНОСТИ В КОНТЕКСТЕ РЕФОРМ СТРАТЕГИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ ВЫСШИМИ УЧЕБНЫМИ ЗАВЕДЕНИЯМИ

**Хачатрян Роберт Хачатурович**
Кандидат филологических наук, доцент, Ереванский государственный университет языков и социальных наук имени В.Я. Брюсова, заведующий кафедрой по управлению и планированию образования, руководитель центра обеспечения качества

### Резюме

В статье рассматривается значимость ключевых показателей эффективности (КПЭ) в процессах реформирования стратегического управления высшими учебными заведениями Республики Армения. В частности, отмечается необходимость тщательной разработки и использования КПЭ на регулярной основе в целях повышения эффективности оценки деятельности вузов.

В статье также рекомендуется применение ряда конкретных КПЭ, которые могут способствовать улучшению оценки производительности деятельности и стратегических систем управления вузов.

*Ключевые слова:* ключевые показатели эффективности (КПЭ), оценка деятельности высших учебных заведений, реформирование системы стратегического управления.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

***Խաչատրյան Լևոն Ռուբենի***
*տնտեսագիտության թեկնածու,*
*ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ Բանկային*
*ծառայությունների զարգացման բաժնի*
*առաջատար մասնագետ*

Ներկայիս գլոբալացման և տնտեսական ինտեգրման պայմաններում յուրաքանչյուր պետություն կանգնած է տնտեսական բարդ իրավիճակում, քանի որ համաշխարհային տնտեսությունում առկա է սոցիալ-տնտեսական և քաղաքական լարվածություն, որը պայմանավորված է ֆինանսական համակարգում առկա հիմնախնդիրներով, ինչպես նաև միջազգային շուկայում նավթի, ոսկու և այլ մետաղների գների անկումով: Նշենք, որ 2007 թվականից ԱՄՆ-ում սկիզբ առած ճգնաժամը, որը 2008թ. հասավ իր գագաթնակետին, և անկումը եղավ շատ կտրուկ, հանգեցրեց տնտեսությունների՝ հատկապես արդյունաբերության, մեքենաշինության, ինչպես նաև հանքագործական արդյունաբերության արտադրանքի կրճատմանը, միջազգային շուկայում հանքահումքային ապրանքների կտրուկ գնանկմանը, շինարարության և գյուղատնտեսության արտադրանքի ծավալների կրճատմանը, գործազրկության աճին:

Հարկ է նշել, որ ներկայիս ճգնաժամի պատճառները բավականին խորքային են. մասնավորապես ԱՄՆ-ի և Սիրիայի պատերազմը, ռուս-ուկրաինական կարճատև պատերազմը, որի հետևանքով ԵՄ-ն և ԱՄՆ-ը տնտեսական պատժամիջոցներ կիրառեցին ՌԴ նկատմամբ, վճարահաշվարկային համակարգերի գործունեության դադարեցումը, արտաքին առևտրում ՌԴ-ից ներմուծման սահմանափակումները, օտարերկրյա ուղղակի ներդրումների կրճատումը և այլն: Այս ամենի հետ մեկտեղ նաև միջազգային հումքային բորսայում կտրուկ անկում է ապրում բրենթ տեսակի նավթի գները՝ կազմելով 28 ԱՄՆ դոլար 1 բարելի դիմաց:

Ներկայացված հանգամանքներով պայմանավորված՝ ՌԴ-ում, հատկապես ԵԱՏՄ անդամ երկրներում և համաշխարհային տնտեսությունում առաջ եկան տնտեսական հիմնախնդիրներ, որոնք ներկա-

յում նույնպես առկա են և այս ամենը շղթայական բացասական փոխազդեցություն է ունեցել տնտեսությունների այլ ճյուղերի վրա՝ նպաստելով ՀՆԱ-ի կրճատմանը, գործազրկության մակարդակի բարձրացմանը, միգրացիայի աննախադեպ աճին:

ՀՀ տնտեսությունը՝ որպես համաշխարհային տնտեսության մի մաս, նույնպես տուժեց համաշխարհային տնտեսական ճգնաժամից, հատկապես շինարարությունը և արդյունաբերությունը՝ իր հանքարդյունաբերության և բաց հանքերի շահագործման ճյուղով:

Ճգնաժամի արդյունքում ավելի մեղմ հարված հասցվեց սննդարդյունաբերությանը և ծառայությունների մատուցմանը, որտեղ գործազրկության մակարդակը համեմատաբար ցածր էր, սակայն երկրում առկա էր բարձր գնաճ: 2008-2009թթ. ճգնաժամային իրավիճակը պատահական չէ, որ ներկայացվում է, քանի որ ՀՀ տնտեսությունում խորը հետընթաց գրանցվեց, /հետագա տարիներին իրավիճակը միայն մեղմացել էր, սակայն չէր վերականգնվել նախաճգնաժամային տնտեսական իրավիճակը/: Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ն 2009թ. կրճատվեց շուրջ 14.1%-ով, կազմելով 3141.6 մլրդ ՀՀ դրամ, աճեց գործազրկության մակարդակը՝ կազմելով 18.7%: Սակայն 2010թ. հետևել է տնտեսության զարգացում, մասնավորապես ՀՆԱ-ի աճի տեմպը կազմել է 102.2%, 3462.2 մլրդ ՀՀ դրամ, իսկ 2015թ. այդ ցուցանիշը համապատասխանաբար կազմել է 103% և 5047.5 մլրդ ՀՀ դրամ[1]: Չնայած այն հանգամանքին, որ տնտեսությունում գրանցվում էին աճի միտումներ, սակայն իրական հատվածում այդ զարգացումը գրեթե չէր նկատվում, քանի որ սոցիալական լարվածությունը չէր մեղմանում:

Նշենք, որ շինարարության կառուցվածքը ՀՆԱ-ում՝ 2008թ. կազմել է 24%, 2009թ.՝ 18.5%: Ճգնաժամի հետևանքով 2009թ. գրանցվեց շինարարության ճյուղի 37.4% անկում, որի համախառն արտադրանքը կազմել է 579.7 մլրդ ՀՀ դրամ, 2010-2013թթ. ճյուղում գրանցվել են անկման միտումներ, 2011թ.՝ 8.9% 2013թ.՝ 7.7% և միայն 2014-2015թթ. է գրանցվել է ցածր անկման միտում 0.2% և 0.3%, իսկ համախառն արտադրանքը 2015թ. կազմել է 457.2 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 9.1%-ը): Նշենք, որ շինարարության ոլորտում զբաղվածների թիվը 2007թ. կազմել է 31100 մարդ, 2008թ. այդ ցուցանիշը աճել է 94%-ով, իսկ 2009թ. ճգնաժամի հետևանքով աշխատուժը կրճատվել է 18%-ով, իսկ

2010թ. ցուցանիշը աճել է 73.3%-ով և կազմել է 85800 մարդ, սակայն 2014թ. ցուցանիշը 2010թ, նկատմամբ կրճատվել է 31.7%-ով կազմելով 58600 մարդ[1]: Շինարարության անկումը պայմանավորված է ՀՀ-ում բնակարանների նկատմամբ համախառն պահանջարկի և բնակչության եկամուտների կրճատման, ուղղակի օտարերկրյա ներդրումների, ինչպես նաև պետության կողմից ֆինանսավորման կրճատմամբ: Հարկ է նշել, որ նախկինում կառուցված բնակելի շենքերի բնակարանները շինարարական կազմակերպությունների կողմից դեռևս ամբողջովին չեն իրացվել, ուստի դրանք տարիների ընթացքում պետք է իրացվեն, որը սակայն գրեթե չի իրականանում:

Ներկայացված ցուցանիշները վկայում են ճյուղում առկա խնդիրների մասին, քանի որ արտադրական ծավալների կրճատման հետ կրճատվել է նաև աշխատուժը, որը հանգեցրել է արտագաղթի ծավալների աճին:

Տնտեսական ճգնաժամի արդյունքում արդյունաբերության ճյուղը 2009թ. կրճատվել է 7.5%-ով, որի համախառն արտադրանքի ծավալը կազմել է 664.5 մլրդ ՀՀ դրամ (ՀՆԱ-ի 21.2%-ը), ինչը պայմանավորված էր մշակող արտադրության ծավալների 8.8% կրճատմամբ, որտեղ սննդամթերքի, /ներառյալ խմիչքների/ արտադրության ծավալները 2009թ. կրճատվել են 6.2%-ով: ՀՀ տնտեսության անկումը պայմանավորված էր նաև 2009թ. հանքարդյունաբերության բաց հանքերի շահագործման արտադրանքի 14.3% կրճատմամբ՝ կապված համաշխարհային շուկայում մետաղների գների նվազման և պահանջարկի կրճատման հետ: Նշենք, որ հանքահումքային բորսայում գրանցվել են գունավոր մետաղների անկում մասնավորապես՝ 2007թ. պղնձի միջազգային գինը մեկ տոննայի դիմաց կազմել է 7132 ԱՄՆ դոլար, սակայն 2008-2009թթ. գները նվազել են համապատասխանաբար կազմելով՝ 6963 ԱՄՆ դոլար և 5165 ԱՄՆ դոլար, աճի միտումը շարունակվել է մինչև 2011թ.՝ 8823.46 ԱՄՆ դոլար: Սկսած 2012թ.-ից պղնձի միջազգային գները նվազել են 2012թ. նախորդ տարվա նկատմամբ՝ 9.8%-ով, 2014թ. 6.4%, իսկ 2015թ.՝ 19.7%-ով՝ կազմելով 5510 ԱՄՆ դոլար[2]: Միևնույն ժամանակ ճգնաժամի արդյունքում միջազգային շուկայում գների անկում է գրանցվել նաև մոլիբդենի գներում, մասնավորապես նշենք, որ 2007թ. մոլիբդենի միջազգային գինը մեկ տոննայի դիմաց կազմել է 64816 ԱՄՆ դոլար, սակայն 2008թ.-ից գները կտրուկ

նվազել են՝ 2008թ.՝ 25.5%-ով, 2009թ.՝ 39.9%-ով, 2012թ.՝ 19.8%-ով, 2015թ.՝ 41.8%-ով՝ կազմելով 15322 ԱՄՆ դոլար, բացառություն են կազմում 2010թ. և 2014թ., երբ գները նախորդ տարվա նկատմամբ աճել են համապատասխանաբար՝ 20.7%-ով և 12.2%-ով[3]:

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության մեջ 2008թ. ներգրավված են եղել արդյունաբերության 79855 աշխատուժից շուրջ 8053 մարդ և 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կրճատվեց հանքաարդյունաբերության ոլորտում աշխատողների թվաքանակը 914-ով՝ կազմելով 7139 մարդ: Հարկ ենք համարում նշել, որ հանքահումքային արտադրանքի՝ պղնձի և մոլիբդենի հանքաքարի և վերամշակված արտադրանքի արտահանման ծավալները 2009թ. նախորդ տարվա նկատմամբ կրճատվել են 11.7%-ով՝ կազմելով 179,816.08 հազար ԱՄՆ դոլար, որը ՀՀ ընդհանուր արտահանման կառուցվածքում կազմել է 23.4%[4]: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտահանման ծավալների կրճատումը, պայմանավորված է եղել նաև հանքահումքային արտադրանքի արտահանման ծավալների կրճատմամբ, որը հանգեցրել է ՀՆԱ-ի կրճատմանը: Ներկայում արդյունաբերության ճյուղում առաջ են եկել խնդիրներ՝ կապված հանքերի շահագործման վճարների բարձրացման հետ, քանի որ հանքարդյունաբերող ձեռնարկությունների ծախսերը ավելանալու են, ինչը կհանգեցնի շահութաբերության կրճատմանը:

Արդյունաբերության արտադրանքի կարևոր մասն է կազմում նաև սննդամթերքի արտադրությունը, որի արտադրանքը 2015թ. կազմել է 287.8 մլրդ դրամ, և ծավալը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 9%-ով, իսկ խմիչքների արտադրությունը կազմել է 102.6 մլրդ դրամ, որի ծավալը նախորդ տարվա նկատմամբ կրճատվել է 19.7%-ով: Նշենք, որ 2010թ.-ից արդյունաբերական արտադրանքը աճել է 9.7%, 2012թ.՝ 8.8%-ով, իսկ 2015թ.՝ 5.2% (1327 մլրդ դրամ), որը կազմել է ՀՆԱ-ի 26.3%-ը: Նշենք, որ արդյունաբերության մեջ զբաղվածների թիվը 2014թ. կազմել է 131000 մարդ[1]:

ՀՀ գյուղատնտեսության ճյուղում զարգացման դրական միտումներ է գրանցել և համախառն արտադրանքը 2008-2015թթ. աճել է, որտեղ 2008թ. աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 1.3% (628.1 մլրդ դրամ), կառուցվածքը ՀՆԱ-ում 2008թ. կազմել է 17.6%: Նշենք, որ 2013թ. այդ ցուցանիշը կազմել է 7.1%, իսկ 2015թ.՝ 11.7%

(1002.2 մլրդ դրամ, ՀՆԱ-ի 19.9 %-ը): Բացառություն են կազմում 2009թ. և 2010թ., երբ անկումը կազմել է համապատասխանաբար 0.5% և 13.6%: Գյուղատնտեսության ճյուղում զբաղվածների թիվը 2014թ. կազմել է 328900 մարդ[1]:

Նշենք, որ բուսաբուծության և անասնաբուծության վիճակագրական ցուցանիշների համաձայն՝ 2008-2015թթ. բուսաբուծության համախառն արտադրանքը աճի միտումներ է դրսևորել, բացառությամբ 2009-2010թթ., երբ գրանցվել է 0.7% և 20.3% անկում: Այսպես՝ 2008թ. բուսաբուծության համախառն արտադրանքի աճի տեմպը կազմել է 100.2% (424.3 մլրդ դամ), 2012թ.՝ 114% և 2015թ.՝ 115.2% (606.2 մլրդ դրամ): Անասնաբուծությունում նույնպես 2008-2015թթ. գրանցվել են աճի միտումներ աճի տեմպը 2009թ. կազմել է 101.0%, 2012թ.՝ 103.2%, 2015թ.՝ 106.1% (395.9 մլրդ դրամ)[1]: Բուսաբուծության համախառն արտադրանքի ծավալների աճը նպաստել է նաև գյուղմթերքներ վերամշակող ձեռնարկություններում թողարկվող արտադրանքի, ինչպես նաև արտահանման ծավալների աճին: Սննդամթերքի արտադրության ծավալը 2015թ. կազմել է 287.8 մլրդ ՀՀ դրամ (արդյունաբերության արտադրանքի 21.6%-ը), որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 9%-ով[1]: Անասնաբուծության զարգացումը պայմանավորված է անասնագլխաքանակի և կենդանիների մթերատվության բարձրացման հետ, քանի որ վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում նոր բարձր մթերատվությամբ երինջների և ցուլերի ներկրման և տեղական ցեղերի հետ տրամախաչման գործընթացին: Միևնույն ժամանակ բուսաբուծության ոլորտում նույնպես տարվում են աշխատանքներ՝ հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացման և բերքատվության բարձրացման համար: Գյուղատնտեսությունը համարվում է բարձր ռիսկային, քանի որ բնակլիմայական անբարենպաստ պայմանները՝ երաշտը, ցրտահարությունը, կարկտահարությունը լուրջ խոչընդոտ են թողարկվող գյուղատնտեսական արտադրանքի համար:

Բուսաբուծության զարգացման մեջ կարևոր է ջերմոցային տնտեսությունների զարգացումը արտադրանքի թողարկման և տնտեսություւնների քանակի ավելացման միջոցով, սակայն ջերմոցային տնտեսությունները պահանջում են ֆինասական ներդրումներ և ուղղակիորեն կապված են էներգակիրների գներից, որը ներկայում շատ բարձր է:

Գյուղատնտեսության զարգացումը պահանջում է մեծ ֆինանսա-

կան ռեսուրսների ներդրում, որը ՀՀ-ում դեռևս ցածր մակարդակի վրա է, սակայն պետության կողմից ցուցաբերվում է աջակցություն մասնավորապես գյուղացիական տնտեսություններին մատչելի գներով տրամադրվում են սերմացուներ, վառելիք, պարարտանյութ և այլն, սակայն տնտեսությունները ի զորու չեն ֆինանսավորվել սեփական միջոցներով, ուստի հիմնականում ֆինանսավորում ստանում են առևտրային բանկերի և այլ կառույցների միոցով, ինչը վկայում է գյուղացիական տնտեսությունների ցածր եկամտաբերության մասին: Նշենք, որ ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները ֆինանսական միջոցները տրամադրում են բարձր տոկոսադրույքներով ինչպես նաև արտարժույթով, ինչը արտարժույթի տատանման և փոխարժեքի բարձրացման պարագայում խոչընդոտում է գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացմանը, որի արդյունքում վերջիններս կրում են ֆինանսական վնասներ:

Համաձայն ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 2008-2014թթ. վիճակագրական տվյալների՝ ցուցանիշները տարեցտարի աճել են բացառություն է միայն 2009թ. 26.5% անկումը՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամով, որից հետո, սակայն 2010թ. ցուցանիշը բարելավվել է՝ աճի տեմպը 2009թ. նկատմամբ կազմելով 118.8%: Արտահանման ցուցանիշի աճը 2010թ. արժեքով կազմել է 46.6%, ներմուծմանը՝ 12.9%: ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը 2013թ. կազմել է 5864.6 մլն ԱՄՆ դոլար՝ աճի տեմպը 2012թ. նկատմամբ կազմելով 104%, սակայն 2015թ. ցուցանիշները կրճատվել են 20.6%-ով (4740.9 մլն. ԱՄՆ դոլար)՝ պայմանավորված ՌԴ նկատամբ կիրառվող տնտեսական պատժամիջոցներով, ռուբլու արժեզրկման և նավթի գների անկմամբ: Արտահանման և ներմուծման ցուցանիշներում 2013թ. գրանցվել են աճի միտումներ. աճի տեմպը 2012թ. նկատմամբ կազմել է համապատասխանաբար՝ 107.1% և 102.9%, իսկ 2015թ. գրանցվել է ցուցանիշների անկում՝ 3.9%-ով և 26.5%-ով: Միևնույն ժամանակ ՀՀ ներմուծման գների ինդեքսը 2014թ. կազմել է 96.7%, իսկ 2015թ.՝ 104.2%, արտահանմանը կազմել է համապատասխանաբար՝ 96.9% և 97.1%[1]: Նշենք, որ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է, քանի որ ներմուծման ծավալը գերազանցում է արտահանման ծավալը (2014թ.՝ 2.9 անգամ, 2015թ.՝ 2.2 անգամ)[1], ինչը բացասաբար է ազդում երկրի ՀՆԱ-ի և

տնտեսական անվտանգության վրա: Արտաքին առևտրում կարևոր նախապայման և նաև արտարժույթի, մասնավորապես ԱՄՆ դոլար/ՀՀ դրամ փոխարժեքի կայունությունը, որը վերջին երկու տարիներին ժամանակ առ ժամանակ ցուցաբերեց անկայունություն և կտրուկ տատանումների արդյունքում ինչպես արտահանողները այնպես էլ ներմուծողները կրեցին ֆինանսական վնասներ՝ արդյունքում բացասաբար ազդելով արտաքին անտրի վրա:

ՀՀ տնտեսության կարևորագույն ճյուղերից մեկն է նաև ծառայությունների մատուցումը, հատկապես կապի և բարձր տեխնոլոգիաների ոլորտը: Համաձայն 2008-2015թթ. վիճակագրական ցուցանիշների ոլորտը զարգացել է. մասնավորապես 2008թ. ծավալը կազմել է 698.5 մլրդ ՀՀ դրամ, աճի տեմպը՝ 113.8% (ՀՆԱ-ի 19.6%-ը), իսկ 2015թ. ծավալը կազմել է 1188.9 մլրդ ՀՀ դրամ, աճի տեմպը՝ 102.7% (ՀՆԱ-ի 23.5%-ը): Նշենք, որ այս ոլորտը իր մեջ ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը, որը համարվում է գերակա ճյուղ տնտեսության զարգացման համար և ապահովում է շուրջ 169.4 մլրդ ՀՀ դրամի հասույթ՝ առանց ԱԱՀ-ի, իսկ ընդհանուր կապի ոլորտից ստացված հասույթը կազմել է 15 698.4 մլն ՀՀ դրամ: Զբաղվածների թիվը տեղեկատվության և կապի ոլորտում 2014թ. կազմել է շուրջ 20000[1]: Ծառայությունների ոլորտում բավականին հաջողված է նաև հյուրանոցային բիզնեսը և հանրային սնունդի մատուցումը, որն աշխատանքով ապահովում է հանրության լայն զանգվածին, և զբաղվածների թիվը /ներառյալ առևտուրը/ 2014թ. կազմել է 143700[1]: Սակայն զբոսաշրջության ոլորտը հիմնականում զարգանում է արտերկրից ժամանած զբոսաշրջիկների շնորհիվ, ներգնա տուրիզմը չի զարգանում, որը պայմանավորված է մատուցվող ծառայությունների բարձր գներով: Արդյունքում ՀՀ քաղաքացիները նախընտրում են հանգստանալ արտասահմանում և տեղի է ունենում բավականին խոշոր ֆինասական միջոցների արտահոսք: Այստեղ փոքր-ինչ աճ է նկատավել. միայն պետության կողմից սոցիալական փաթեթի շրջանակներում հանգստի ծառայություններից օգվելու արդյունքում, որը, սակայն, թանկ լինելու պատճառով անարդյունավետ է: Նշված ոլորտները կարևորվում են նրանով, որ ստեղծում են լրացուցիչ ավելացված արժեք և նպաստում տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը:

Այսօր Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման

համար առկա են խոչընդոտներ, /մասնավորապես ցածր կենսամակարդակ, գործազրկություն, արտագաղթ, բացասական առևտրի հաշվեկշիռ և այլն/, որոնց հաղթահարումը պահանջում է համալիր մոտեցում և հիմնախնդիրների լուծման հնարավար տարբերակների բացահայտում:

Այսպես՝ 2014թ. դրությամբ երկրի գործազրկության մակարդակը կազմել է 17.6% (242 հազար), իսկ 2008թ. 6.3%, 2000թ. այդ ցուցանիշը եղել է 11.7%[1]: Նշենք, որ դեռևս հնարավոր չէ լիարժեք գնահատել ՀՀ-ում գործազրկության մակարդակը, քանի որ քաղաքացիների լայն զանգված գործազուրկ է, սակայն գրանցված չէ լիազոր մարմնում (զբաղվածության կենտրոններում և այլն) և արդյունքում ՀՀ օրենսդրությամբ վերջիններս չեն հանդիսանում գործազուրկ: Վերջին տարիներին ավելացել են արտագաղթի տեմպերը, մասնավորապես 2015թ. ՀՀ սահմանահատման հաշվեկշիռը կազմել է -43438 մարդ, 2008թ.՝ -23100 մարդ, իսկ 2007թ.՝ -3200 մարդ[1]: Սահմանահատման բացասական հաշվեկշռի ցուցանիշների նման տեմպերը վկայում են աշխատանքի առաջարկի նվազման և սոցիալական լուրջ խնդիրների մասին: Նշված խնդիրների հետ մեկտեղ ֆինանսական ռեսուրսների սուղ լինելու պատճառով տարիների ընթացքում ավելացել է Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը՝ մասնավորապես 2008թ. այն կազմել է 1577.2 մլն ԱՄՆ դոլար, 2014թ.՝ 3785.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ ցուցանիշը կազմել է 4309.6 մլն ԱՄՆ դոլար[1]: Արտաքին պարտքի ավելացման հետ մեկտեղ ավելանում են պետական ծախսերը ինչպես սոցիալական ուղղության, այնպես էլ ենթակառուցվածքների բարելավման, շինարարության գծով ծախսերը և պետական հիմնարկների տնտեսական, ադմինիստրատիվ (աշխատավարձ) ծախսերը: Վերջին տարիներին հատկապես ավելացել են տնտեսական ծախսերը, մասնավորապես պետական բյուջեի հաշվին, ինչպես նաև դրամաշնորհներով վերանորոգվել, կառուցվել են ադմինիստրատիվ շենքեր, և սոցիալական բարդ իրավիճակում, մեր կարծիքով, այդ ռեսուրսները անհրաժեշտ էր ուղղել սոցիալական ոլորտներին:

Ֆինասկան ռեսուրսների սղության հետ մեկտեղ հարկ է փաստել, որ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկավորումն իրականանում է բարձր տոկոսադրույքով և վարկերի հետ կապված մի շարք այլ ծախսերի առկայությամբ: Այսպես. օ-

րինակ՝ սպառողական վարկերը հիմնականում տրամադրվում են ՀՀ դրամով՝ 18-24 տոկոս տարեկան տոկոսադրույքով, որին հետագայում գումարվում են վարկի սպասարկման միջնորդավճարներ և արդյունքում տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է 22-28 տոկոս: Ցածր վճարունակության և ռեսուրսների թանկ լինելու հետևանքով վարկառուները դժվարանում են վարկային պարտավորությունները ժամանակին մարել, որի արդյունքում վարկերը դասակարգվում են, իսկ հետագայում նաև շատ դեպքերում գրավադրված անշարժ և շարժական գույքը, ոսկյա իրերը բռնագրավվում են հօգուտ բանկերի և վարկային կազմակերպությունների՝ հետագայում իրացվելու և պարտավորությունները մարելու նպատակով:

Նշենք, որ վերջին տարիներին էներգակիրների (գազ, էլեկտրաէներգիա) գների թանկացումը նպաստել է սպառողական գների բարձրացմանը և արդյունքում համընդհանուր գնաճը բացասաբար է անդրադարձել բնակչության ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների եկամուտների վրա:

Ներկայացված փաստերը վկայում են ցածր կենսամակարդակի և սոցիալական լարված իրավիճակի մասին, որը բացասաբար է ազդում երկրի ազգային անվտանգության և հատկապես տնտեսական անվտանգության բավարար մակարդակի ապահովման վրա: Այս առումով կարևոր ենք համարում երկրի կարևորագույն ճյուղերի մասնավորապես գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացումը, քանի որ վերջիններս հանդիսանում են տնտեսության զարգացման լոկոմոտիվը: Նշված խնդիրների հետ մեկտեղ երկրում առկա են նաև տնտեսական մրցակցության, ինչպես նաև հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրներ: Մրցակցային տեսանկյունից բնակչության կողմից հիմնականում հայցվող պարենային ապրանքները ինչպես նաև վառելիքը և այլ սպառողական զամբյուղի ապրանքներ ներմուծվում են բացառապես մեկ կամ երկու ներմուծող կազմակերպությունների կողմից, որոնք հանդիսանում են գին թելադրող և արդյունքում գների սահմանումը չի իրականանում արդար սկզբունքով, որը չի նպաստում ազատ շուկայական հարաբերությունների ձևավորմանը: Հարկային քաղաքականության գործընթացը ՀՀ-ում իրականանում է ոչ արդյունավետ, քանի որ մի շարք խոշոր կազմակերպություններ, որոնք բարձր հովանավորչության միջոցով չեն վճարում հարկեր և արդ-

յունքում ծանր բեռը ընկնում է փոքր և միջին տնտեսվարող սուբյեկտների վրա, և այս ամենի հետևանքով ցածր կամ բացասական շահութաբերություն ապահովող տնտեսվարող սուբյեկտներից շատերը մեկը մյուսի հետևից փակվում կամ լուծարվում են: Այսօր շատ բարդ է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական գործունեություն ծավալելը և միաժամանակ համապատասխան շահութաբերություն ապահովելը, քանի որ առկա են խոչընդոտներ, մասնավորապես փոքր շուկա, ցածր վճարունակ հասարակություն, բարձր հարկման դրույքաչափեր և այլն: Մեր կողմից ներկայացված հիմնախնդիրները պահանջում են համալիր և արդյունավետ լուծումներ, որի նպատակով առաջարկվում է.

- գյուղատնտեսության զարգացման նպատակով միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավվել մատչելի ֆինանսական ռեսուրսներ և ուղղել նպատակային գյուղատնտեսական ծրագրերի զարգացմանը՝ բացառելով ՀՀ առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների ֆինասկան միջնորդությունը,
- գյուղատնտեսությունում ռիսկայնության զսպման մեխանիզմների զարգացում՝ մասնավորապես այգիների ցանցապատում և հակակարկտային կայանքների ավելացում,
- էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսկան արտադրանքի ծավալների ավելացման նպատակով կենսահումուսի կիրառելիության հնարավորությունների զարգացում,
- գյուղատնտեսական կոոպերատիվների և ջերմոցային տնտեսությունների զարգացում՝ միջազգային դրամաշնորհների և այլ կազմակերպությունների միջոցով,
- արդյունաբերության զարգացման նպատակով անհրաժեշտ է զարգացնել վերամշակող արդյունաբերությունը, մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտում անհրաժեշտ է հիմնել հանքաքարի վերամշակման գործարան, որը հնարավորություն կտա ստեղծել ավելացված արժեք և արտահանել ոչ թե հանքաքար, այլ արդեն վերամշակված համաձուլվածք՝ բավականին բարձր գներով,
- արդյունաբերության սննդարդյունաբերության ճյուղը բավականին զարգացած է, սակայն անհրաժեշտ է հիմնել նոր փոքր, սակայն բարձր արտադրողականություն ունեցող սննդի վերամշակման գործարաններ, որի ֆինասավորումը հնարավոր

է օտարերկրյա ուղղակի ներդրումների միջոցով, ինչպես նաև միջազգային ֆինանսական կազմակերպությունների միջոցով ուղղակի ներդրումներով,

- ծառայությունների ոլորտում անհրաժեշտ է պետության կողմից մշտապես աջակցություն գործող ձեռնարկությունների զարգացմանը, միաժամանակ օտարերկրյա նոր ձեռնարկատիրական նախագծերի ներգրավում առկա կազմակերպությունների բիզնես կապերի միջոցով, այս առումով անհրաժեշտ է նաև մշակել հայեցակարգ համապատասխան շուկայավարման մեխանիզմներով ընդհանուր գովազդային և տեղեկատվական բիզնես հրավերների ներկայացում համացանցի համապատասխան միջավայրում,
- պետական բյուջեի եկամուտների արդյունավետ կառավարում, ընդ որում՝ անհրաժեշտ է ֆինանսական միջոցները ուղղել հիմնականում սոցիալական ծախսերին և տնտեսությունում ավելացված արժեք ստեղծող ճյուղերի զարգացմանը, հատկապես արդյունաբերությանը և գյուղատնտեսությանը:
- տնտեսության զարգացման համար անհրաժեշտ է ներդնել ազգային տնտեսական ֆինանսավորման հիմնադրամ, որը մատչելի ֆինանսական ռեսուրսներ կներգրավի հիմնականում հայկական սփյուռքից, պայմանով, որ ներդրումները լինելու են շահութաբեր, ֆինանսավորումը լինելու է նպատակային և վերահսկելի, պետության կողմից երաշխավորված, և ներդրողները ստանալու են համապատասխան տոկոսներ ներդրված գումարներից:

*Բանալի բառեր* - տնտեսություն, զարգացում, ճգնաժամ, պատժամիջոց, առևտուր

**Գրականություն**

1. ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքէջ www.armstat.am
2. www.indexmundi.com վերջին մուտք 15.01. 2016թ.
3. www.bloomberg.com վերջին մուտք 27.01.2016թ.
4. ՀՀ մաքսային պետական ծառայության կայքէջ www.customs.am

## СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПРОБЛЕМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ И ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИИ ЭКОНОМИКИ

**Хачатрян Левон Рубенович**
к.э.н., ЗАО АРМБИЗНЕСБАНК –
Отдел развитие банковских услуг-ведущий специалист

### Резюме

Сегодня глобальная экономика на стадии кризиса в связи с чем во многих странах в том числе и в Армении кризис привел спаду разных секторов экономики особенно индустрию, торговлю и финансовый сектор. Статья посвящена изучению. Статья посвящена анализу статистических показателей разных секторов экономики Республики Армении а так же изучению существующих проблем представлению возможных путей их решения.

*Ключевые слова:* экономика, развитие, кризис, санкции, торговлья

## SOCIAL-ECONOMIC PROBLEMS IN REPUBLIC OF ARMENIA AND OPPORTUNITIES OF ECONOMY GROWTH

**Khachatryan Lewon Ruben**
Ph.D in economics, ARMBUSINESSBANK CJSC – Banking services development unit-leading specialist

### Summary

Today global economy at a crisis stage in this connection including in Armenia crisis has given in many countries to recession of different sectors of economy especially the industry, trade and financial sector. Article is devoted to the analysis of statistics of different sectors of economy of the Republic of Armenia and also studying of the existing problems to representation of possible ways of solving that problems.

*Keywords:* economy, growth, crisis, sanctions, trade.

# ՀՀ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԱՐՇԱՎՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ

***Արթուր Սուրենի Մկրտչյան***
*ՀՀ ԿԳՆ ՀՊՏՀ «Մարքեթինգ» ամբիոնի հայցորդ*

Հայաստանի Հանրապետությունում արդեն կուտակվել է նախընտրական արշավների ժամանակ քաղաքական մարքեթինգային տեխնոլոգիաների օգտագործման երկու տասնամյակի փորձ, որն ունի տեսական ուսումնասիրության, ընդհանրացման ու օգտագործման ձևերի հստակեցման կարիք:

Նախընտրական արշավների անցկացման և ուսումնասիրության բնագավառում Արևմուտքի և Ռուսաստանի կուտակած փորձն արդեն բավական մեծ է: Հենց դրանով է պայմանավորված հայրենական հետազոտողների կողմից այն գիտելիքների կիրառման անհրաժեշտությունը, որոնց շնորհիվ արևմտյան, մասամբ նաև ռուսական հասարակություններն այսօր գործում են ավելի արդյունավետ: Սակայն դա չի նշանակում, որ նրանց մեթոդաբանությունները պետք է կուրորեն պատճենվեն հայաստանյան քաղաքագետների և մարքեթոլոգների կողմից: Նրանց կուտակած ընտրական փորձը պետք է ուսումնասիրվի հայաստանյան սոցիալ-քաղաքական իրողությունների դիտանկյունից: Այս հանգամանքով են պայմանավորված քաղաքական կառավարման մեջ քաղաքական մարքեթինգի տնտեսագիտական, ինչպես նաև գործառնական հետազոտության արդիականությունը, գիտաճանաչողական ու կիրառական նշանակությունը:

ՔՄ-ն գիտելիքների մյուս ոլորտների կողմից ընկալվում է տեխնոլոգիայի նման՝ որպես մասնագիտություն, արհեստ և արվեստ, մինչդեռ ակադեմիական գիտելիքների ոլորտները միաժամանակ և՛ «մասնագիտություն» են, և՛ «դիսցիպլին/գիտակարգ»[1]: Բրիտանացի հայտնի մարքեթոլոգ Օ. Շոնեսին[2] նշում է, որ տեխնոլոգիան տարանջա-

---

[1] Гудин Р.И.,Клиненгманн Д. Политическая наука: новые направления/ пер. англ. М.М. Гурвица, А. Л. Демчука, Т. В. Яквушевой. Москва,"Вече", 1999. с. 31.

[2] О' Шонесси Дж. Конкурентный маркетинг. Стратегический подход/ пер. с англ., под ред. Д.О. Ямпольской. СПб.,"Питер", 2002, с. 11-19.

տում է «ինչ-որ բանի իմացությունը» «ինչպես իմացությունից»: Տեխնոլոգիան «ինչպես» իմացությունն է: Տեխնոլոգիաները «ճիշտ» կամ «սխալ» չեն լինում: Դրանք լինում են արդյունավետ կամ ոչ արդյունավետ՝ հաջողության հասնելու առումով: Ուստի նրանք, ովքեր ցանկանում են հասնել միջինից բարձր արդյունքի, չպետք է մարքեթինգը դիտեն որպես քաղաքական կանոնների և տեխնոլոգիաների մեխանիկական կիրառություն: Գործնականում քաղաքական մարքեթինգը դարձել է ոչ միայն տեխնոլոգիա, այլև գիտություն և արվեստ: «Քաղաքական մարքեթինգը գիտություն է, արվեստ և տեխնոլոգիա՝ արդյունավետ ոչ կոմերցիոն գործունեության արտադրական ոլորտում»[3]. նշում է Ս. Անդրեևը:

Մարքեթինգի կառավարման գործընթացում տարանջատվում է երկու բաղադրիչ՝ ռազմավարական մարքեթինգ և գործառնական մարքեթինգ: Ընդ որում, ռազմավարական մարքեթինգի և գործառնական կամ մարտավարական մարքեթինգի խնդիրները լրացնում են միմյանց, իսկ արդյունավետ մարքեթինգը սկսվում է շուկայի ուսումնասիրությունից[4]: Քաղաքական մարքեթինգը ավելի ընկալելի սահմանելու համար այն կարելի է կապել երկու ուղղությունների հետ՝ ռազմավարության, որն օգնում է մարդկանց ապահովելու այն ամենով, ինչ նրանք ուզում են ունենալ, և խթանման, որը հնարավորություն է տալիս վաճառելու ապրանքներ, որոնք որոշել են ներդնել[5]: Որի հիման վրա մեր կողմից մշակվել է նախընտրական արշավներում մարքեթինգային տեխնոլոգիաների՝ ՀՀ ընտրական օրենսդրությանը համապատասխան արդյունավետ կիրառության ձևերը (տե՛ս գծապատկեր 1.):

---

3 Андреев С.Н. Роль маркетинга в повышении результативной деятельности некоммерческих субъектов // Маркетинг в России и за рубежом. 2000. № 2, 2000, с. 9.

4 Котлер Ф. Маркетинг по Котлеру: Как создать, завоевать и удержать рынок, 5-е изд.. Москва, "Альпина Бизнес Букс", 2008, с. 46-47.

5 Harrop M.Politicalmarketing, ParliamAff, 1990, P. 43 (291p).

**Գծապատկեր 2.2.1: ՀՀ նախընտրական արշավներում մարքեթինգային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառության ձևերը**




**Ռազմավարական մարքեթինգը** պետք է հետևի քաղաքական շուկայի զարգացմանն ու բացահայտի գոյություն ունեցող կամ հավանական շուկաները և դրանց հատվածները՝ բավարարման կարիք ունեցող պահանջմունքների վերլուծության հիման վրա: Ըստ այդմ՝ մեկնաբանվել է ՀՀ ընտրական գործընթացներում ռազմավարական մարքեթինգի մի շարք ուղղություններ.

*Ընդհանրացված հասարակական պահանջմունքների վերլուծություն:* Ռազմավարական մարքեթինգը նախ և առաջ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների պահանջմունքների վերլուծությունն է: Քաղաքական շուկայում մարքեթինգային որոշումներ կայացնելու գործում գերակա նշանակություն ունի և առաջնահերթ է տվյալ ժամանակահատվածի ընտրական գործընթացին մասնակցող սպառողների պահանջմունքների, կարիքների, ցանկությունների և պահանջարկի ուսումնասիրությունը: Մարքեթինգի տեսանկյունից ընտրողն ունի ոչ այնքան տվյալ կուսակցության, թեկնածուի կամ քաղաքական ապ-

րանքի կարիքը, որքան ցանկանում է տեսնել իր համար առաջնային խնդիրների լուծումը: Ապրանքի ստեղծման որոշումը կարող է կայացվել տարբեր տեխնոլոգիաների օգնությամբ, որոնք անդադար փոփոխվում են: Նման պարագայում նպատակահարմար է անընդհատ ուսումնասիրել և վերլուծել քաղաքական շուկայում տեղի ունեցող փոփոխությունները, զարգացման միտումները, ինչպես նաև սպառողների /ընտրողների/ պահանջմունքներն ու ցանկությունները:

*Քաղաքական շուկայի հափվածավորում:* Շուկայի հատվածավորման գործընթացը և նպատակային շուկաների ընտրությունը կապակցում է տարբեր ընտրողների կարիքները և քաղաքական կազմակերպության մարքեթինգային ծրագրերը: Հատվածավորումը իրականացվում է այն բանի համար, որ պարզ լինի, թե դրա զարգացման քաղաքական արտադրանքի և կամ եղանակի որ բնութագրերն են առավել նշանակալի կամ գրավիչ ընտրողների այս կամ այն խմբի համար: Մարքեթոլոգները պետք է անընդհատ ավելացնեն փոփոխականների քանակը շուկայի հատվածավորման համար: Աղուսյակ 1-ում առանձնացվել են այն հիմնական փոփոխականները, որոնք կարելի է կիրառել ՀՀ ընտրական գործընթացներում հատվածավորման ժամանակ:

Ընտրական շուկայի հատվածավորումը իրականացվում է մարքեթինգի կարևոր մարտավարության մշակման համար՝ շուկայի հասցեավորվածություն, դիրքային ընդգրկում: Այն անհրաժեշտ է որոշելու համար, թե թեկնածուի/ կուսակցության/ համար ընտրողների որ խմբերն են (քանակը և որակը) առավել մեծ հետաքրքրություն ներկայացնում և անհրաժեշտ:

*Գրավչության վերլուծություն (շուկայի ներուժ-կենսապարբերաշրջան):* Քաղաքական շուկայում նախընտրական արշավի ժամանակահատվածում գրավչության վերլուծության նպատակն է գնահատել և կանխատեսել ընտրական շուկայի տարողունակությունը և կենսապարբերաշրջանը: Ապրանքի կամ ծառայության պահանջարկը, ըստ էության, իրացված (իրացվող) արտադրանքի քանակությունն է, ուստի ընտրական գործընթացներում տարբերակվում է պահանջարկի երեք մակարդակ՝

1) ընդհանուր շուկայական պահանջարկ (եթե առևտրային մարքեթինգում այն գնահատելու համար պետք է նախապես որոշել հատվածը կամ ապրանքային շուկան, որը նաև միջավայրի և մարքեթին-

գային ջանքերի գործոնների աճանցյալն է, ապա ընտրական մարքե-թինգում այն նախօրոք հայտնի է և արտացոլված ընտրացուցակնե-րում՝ ՀՀ ընտրական օրենսդրությանը համապատասխան),

2) փաստացի պահանջարկ (ընտրություններին մասնակցողների թիվ),

3) կուսակցության կամ թեկնածուի առաջարկած գաղափարախո-սության կամ ապրանքի նկատմամբ պահանջարկ:

*Աղյուսակ 1.*

ՀՀ քաղաքական շուկայի հատվածավորման օրինակելի ձև

| ՎԱՐՔԱԳԾԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ | |
|---|---|
| Գնման առիթը | Նախագահական, ԱԺ և ՏԻՄ ընտրություններ |
| Փնտրվող օգուտներ | Կյանքի որակ, զարգացում, բարեկե-ցություն, անվտանգություն, և այլն |
| Սպառման ինտենսիվությունը | Նախընտրական արշավին ներգրավվածության աստիճան |
| Գնման պատրաստվածության աստիճանը | Տեղյակ, անտեղյակ, իրազեկ, հետաքրքրվողներ և այլն |
| Վերաբերմունքը քաղաքական կազմակերպությանը, | Հիացական, բարյացակամ, անտարբեր, թշնամական և այլն |
| Կուսակցական պատկանելությունը | ԲՀԿ, ՀՀԿ, ՀՅԴ և այլն |
| **ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ** | |
| Կենսակերպ | Պահպանողական, կենսուրախ և այլն |
| Անհատականություն | Ավտորիտար, ազատական և այլն |
| **ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ** | |
| Տարիք | Մինչև 18 տ. (հնարավոր ընտրող), 18-34, 35-49, 50-62, 63 և ավելի |
| Ընտանիքի մեծություն | 1-2 մարդ, 3-4, 5 և ավելի |
| Ընտանիքի կենսապարբերաշրջան | Երիտասարդ, տարեց ամուսիններ, միայնակներ և այլն |
| Սեռը | Արական և իգական |
| Եկամուտների մակարդակը | Մինչև 50 հազ. դրամ,50-100 հազ., 100-500 հազ., 500 հազ. և ավելի |
| Զբաղմունք | Մասնագետներ և տեխնիկներ, թոշակառուներ, ուսանողներ և այլն |
| Կրթական մակարդակ | Նախնական, միջնակարգ, միջին մասնագիտական, բարձրագույն |

| | |
|---|---|
| Կրոնական դավանանք | Առաքելական, ուղափառ,կաթոլիկ և այլն |
| Ազգություն | Հայեր, եզդիներ, ռուսներ, հրեաներ, ասորիներ և այլն |
| **ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ** | |
| Մարզ | Արարատ, Արմավիր, Շիրակ և այլն: |
| Քաղաք | Մինչև 5 հազ. ընտրող, 5-20, 20-50 հազ. և ավելի: |
| Գյուղ | Մինչև հազար ընտրող ունեցող, 1-3, 3-5, 5-10, և ավելի: |
| Ընտրատարածք | 1-41 մեծամաս.և 1988 տեղ. ընտրատարածքներ |

Նախընտրական արշավի շուկայական ներուժի վերլուծությունը գրավչության քանակական վերլուծություն է, որն անհրաժեշտ է համալրել ապրանքի կենսապարբերաշրջանի կամ ապրանքի (ծառայության) հնարավոր պահանջարկի էվոլյուցիայի ուսումնասիրությամբ, որտեղ շատ բարդ խնդիր է քաղաքական ապրանքի կենսապարբերաշրջանի ընթացիկ վերլուծությունը, քանի որ ընտրական գործընթացներում կենսապարբերաշրջանի կորերը ունեն *ասփիճանական* տեսք, ընտրությունների պարբերականությունը որոշակի է, և ընտրական արտադրանքի «սպառումը» տեղի է ունենում մեկ կոնկրետ օրում՝ քվեարկության ժամանակ:

Քաղաքական շուկայում ապրանքի կենսապարբերաշրջանի հայեցակարգը կիրառելի է քաղաքական ընդհանուր կատեգորիայի (օրինակ՝ ընտրություններում գրանցած արդյունքներ, տե՛ս գծապատկեր 2.), տվյալ կատեգորիայի ներսում ապրանքների առանձին տեսակների (օրինակ՝ ԱԺ մանդատներ, տե՛ս գծապատկեր 3), որոշակի քաղաքական մոդելի (օրինակ՝ Հայ դատը[6]) մակարդակներում: Առավել արդյունավետ է ընտրական շուկայի մակարդակում իրականացված վերլուծությունը:

Քաղաքական կատեգորիայի կենսապարբերաշրջանն առավել ճշգրիտ է նկարագրում գնողունակ վարքագիծը: Այլ կերպ ասած՝ քաղաքական շուկան համարժեքորեն է արտահայտում կենսապարբերաշրջանի հայեցակարգը՝ կախված ընտրություններում արձանագր-

6 Տե՛ս Ղուկասյան Ն. Քաղաքական մարքեթինգ.- Երևան, 2012, էջ 259:

ված արդյունքներից: Կուսակցությունների կամ թեկնածուների կողմից առաջարկվող քաղաքական ապրանքը դիտվում է որպես կոնկրետ ընտրազանգվածին առաջարկվող օգուտների համախումբ: Ընդ որում՝ միևնույն ապրանքը կարող է ունենալ կենսապարբերաշրջանի տարբեր կորեր, տարբեր աշխարհագրական շուկաներում կամ միևնույն շուկայի տարբեր հատվածներում, ինչպես նաև տարբեր ընտրական գործընթացներում:

**Գծապատկեր 2. ՀՅԴ քաղաքական ապրանքի կենսապարբերաշրջանը ՀՀ ԱԺ ընտրություններում**




*Մրցունակության վերլուծություն:* Կախված ՀՀ-ում անցկացվող ընտրության տեսակից՝ քաղաքական շուկայի հատվածների ներքին գրավչության գնահատումը պետք է համալրվի դրանց կառուցվածքային վերլուծությամբ և քաղաքական ուժերի մրցունակության աստիճանի բացահայտմամբ: Բանն այն է, որ տվյալ ընտրությունները որպես այդպիսին կարող են գրավիչ լինել, բայց ոչ դիտարկվող քաղաքական սուբյեկտի համար՝ ելնելով վերջինիս ուժեղ և թույլ կողմերից, վտանգավոր մրցակիցների առկայությունից: Մրցակցությունը, ընդհանուր առմամբ, շուկայի մասնակիցների գործունեության փոխադարձ հա-

մակարգման մեթոդ է[7]: Ընտրական պայքարում քաղաքական սուբյեկտի մրցունակությունը բնութագրվում է որպես համեմատական առավելություն ընտրություններին մասնակից այլ մրցակից սուբյեկտների նկատմամբ:

Ռազմավարական ներուժի կառուցվածքն էապես ազդում է մրցակցային առավելության մակարդակի վրա, տարրերի ազդեցության անհամաչափությունը պայմանավորված է ռեսուրսներով դրանց ապահովվածության տարբերություններով: Բացի այդ՝ կուսակցության մրցունակ գաղափարների իրագործման ունակությունը կարող է ցածր լինել համապատասխան կազմակերպական կառուցվածքի բացակայության պատճառով:

**Գծապատկեր 2.2.3. ՀՀԿ ընտրական արդյունքի կենսապարբերաշրջանը՝ ըստ մանդատների թվի[8]**




*Զարգացման ռազմավարական պլանի ընտրություն:* Որոշ հեղինակներ (որպես կանոն՝ ոչ թե կուսակցությունների կառավարման, այլ պետական ապարատում որոշումների կայացման գործընթացի մաս-

---

[7] Котлер Филип, Армстронг Гари, Вонг Вероника, Сондерс Джон Основы маркетинга/ Переводчики: А. Назаренко, Алла Свирид.2012. с. 59.

[8] http://parliament.am/deputies.php?lang=arm&sel=factions&SubscribeEmail=&show_session=5

նագետները) պնդում են, որ կազմակերպման բարդությունը, տեղեկատվության անճշտությունը և մարդկային ընկալունակության սահմանափակ հնարավորությունները թույլ չեն տալիս կիրառել համակարգված մոտեցում ռազմավարության մշակման հարցում: Եթե մենք ընդունում ենք, որ ռազմավարության կանոնավոր մշակումը իրականություն է, ապա ծագում է հարց. բարձրացնո՞ւմ է արդյոք նախընտրական արշավներում հարմարվողական աճին փոխարինման եկած տեխնոլոգիան ՀՀ քաղաքական կազմակերպությունների աշխատանքների արդյունավետությունը: Վերլուծելով ՀՀ քաղաքական շուկայի ընտրական գործընթացների վերջին տարիների շարժընթացը և դրա կախվածությունը ռազմավարական մոտեցումներից՝ կարելի է փաստել, որ զարգացման ռազմավարության գիտակցված, կանոնավոր նախնական մշակումն ապահովում է զգալիորեն ավելի բարձր ընտրական ցուցանիշներ, քան պլանի և գործողության բացակայությունը՝ ելնելով քաղաքական իրավիճակից: Բացի այդ՝ բացահայտ ձևակերպված տեխնոլոգիան կարող է բարելավել քաղաքական գործունեության արդյունքները:

Հայտնվելով նմանատիպ բարդությունների առջև՝ կուսակցությունը պետք է լուծի երկու չափազանց դժվար խնդիր.

1. ընտրել աճի ռազմավարական անհրաժեշտ ուղղություն այն բազմաթիվ այլընտրանքներից, որոնք դժվարությամբ են ենթարկվում գնահատման,
2. ճիշտ ուղղորդել բազմամարդ քաղաքական կոլեկտիվի ջանքերը:

Այս խնդիրների լուծումները գտնելն էլ հենց ռազմավարության մշակման և իրագործման էությունն է: Այդ պարագայում տեխնոլոգիան դառնում կառավարչական գործիք, որը կենսականորեն կարևոր ու չափազանց անհրաժեշտ է:

**Գործառնական մարքեթինգը**: Քաղաքական շուկայում գործառնական մարքեթինգի հիմնական նպատակը ընտրություններից ստացվող արդյունքների գեներացումն է, այսինքն՝ նպատակային իրացվելիությունը, շրջանառությունը: Ընտրություններից որոշակի արդյունք ստանալու նպատակը գործառնությունների բաժնի համար փոխակերպվում է քաղաքական ծրագրի, իսկ մարքեթինգի բաժնի համար՝ պահպանման և ֆիզիկական սպառման ծրագրի: Գործառնական մարքեթինգը որոշիչ տարր է, որն անմիջականորեն ազդում է կուսակ-

ցության կարճաժամկետ ցանկալի ընտրական արդյունքի վրա: Գործառնական մարքեթինգի ակտիվությունը կուսակցության և թեկնածուի գործունեության որոշիչ գործոն է հատկապես այն շուկաներում, որտեղ մրցակցությունը սրված է: Ըստ այդմ՝ հաջորդիվ մեկնաբանվել է ՀՀ ընտրական գործընթացներում գործառնական մարքեթինգի՝ կիրառվող և կիրառման ենթակա մի շարք ուղղություններ.

*Ընտրական վարքագծի ուսումնասիրություն:* Ընտրական վարքագծի քաղաքական մարքեթինգային մոդելի հիմքում ընկած են ընդհանուր մարքեթինգի տեսական մշակումները, որոնք վերաբերում են սպառողի վարքագծին: Ընտրողը՝ որպես տեղեկատվության ռացիոնալ սպառող, հետաքրքրված է իր ծախսերի նվազեցմամբ, որոնք կապված են դրա որոնման, ստացման և վերլուծության հետ: Հակվածությունը բրենդին հնարավորություն է տալիս նրան ստանդարտացնելու իր վարքագիծը, պարզեցնելու տեղեկատվությունը վերամշակելու և որոշում ընդունելու գործընթացը:

Մարքեթինգն անընդհատ ընդլայնում է իր առարկայական դաշտը, որի սահմանները ցույց են տալիս բաց լինելու միտումներն ու ճգնդականության ավելացումները ընտրական գործընթացներում՝ ուսումնասիրության որոշակի ուղղություններով: Ընտրությունը՝ որպես սովորական վարքագիծ, պահանջում է ժամանակային շարժընթացի վերլուծություն: Ելակետային է սպառողի վարքի «դրդում-ռեակցիա» մոդելը, որը ցույց է տալիս մարքեթինգային և այլ ազդակների ներթափանցումը սպառողի «սև արկղ» և դրանց ներգործությամբ որոշակի ռեակցիայի առաջացումը: Մարքեթոլոգները պետք է պարզեն, թե ինչ է գտնվում «սև արկղում», որը, այլ կերպ ասած՝ սպառողի ենթագիտակցությունն է: Ընտրողը մեկնաբանվում է որպես «սև արկղ», «մուտքում» ստանում է տեղեկատվություն, վերամշակում է այն՝ «ելքում» վերածելով ռեակցիաների համախմբի, որով պայմանավորվում է նրա ընտրական վարքագիծը[9]:

*Համալիր մարքեթինգային ճնշում (ապրանք, գին և հաղորդակցություն):*

Քաղաքական ապրանքը ուսումնասիրվում է հենց քաղաքական գործունեության հաստատման տեսանկյունից և ուղղակիորեն կարող

[9] Недяк И.Л. Политический маркетинг. Основы теории. Москва, 2008. с. 171 -174.

է սահմանվել որպես կուսակցություն, թեկնածու, ընտրական հարթակ, գաղափարախոսություն, քաղաքական հեղինակություն, հաղորդակցություն, քաղաքական ծառայություն, բրենդ և այլն[10], կամ՝ վերը նշված հասկացությունները տարբեր հարաբերությունների մեջ վերցրած: Քաղաքական ապրանքի սահմանումը ներառում է նաև այլ հասկացություններ՝ առաջնորդներ, կազմակերպություններ, գաղափարներ, ծրագրեր, նախագծեր, քաղաքական հոսանքներ, սոցիալական արժեքներ և պահանջներ, կանոններ, ավանդույթներ, սոցիալական ծառայություններ և դրանց տարածման միջոցներ[11]:

Քաղաքական ապրանքը կարող է դասակարգվել ըստ տեսակի, նյութականության և օգտագործման ժամանակի: Մարքեթինգի տեսությունը առանձնացնում է քաղաքական ապրանքի մի քանի մակարդակներ[12]: Տարբեր մակարդակներում գտնվելը պայմանավորված է այն բանով, թե ինչքան է տվյալ ապրանքը պահանջված քաղաքացիների՝ ընտրողների կողմից:

Քաղաքական շուկայում «գինը» որպես կարևորագույն գործիք դիտարկվում է գործառական ծախսերի հարթության հայեցակարգի շրջանակում: Գնագոյացման վրա մեծ ազդեցություն են թողնում տարբեր տեսակի «ծախսերը», շեղումները, ընդհատումները, ծրագրի վերանայումը, մարտավարության փոփոխությունը և, առաջին հերթին ապրանքի վերաբերյալ ձևավորվող տեղեկատվությունը՝ որպես ինքնին կարգավորվող գործառնություն: Հաճախ գինը մեկնաբանվում է որպես հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական դժվարություններն արտացոլող բնութագրերի փաթեթ, որը ընտրողի կամ հասարակության կողմից պետք է հաղթահարվի՝ ընտրելով այս կամ այն քաղաքական ծրագիրը, կուսակցությունը, քաղաքական առաջնորդին, գաղափարախոսությունը և այլն: Այսինքն՝ քաղաքական գին հասկացության ներքո պետք է հասկանալ նաև անհատի կիրառած, ներդրած ջանքերը, որի շնորհիվ առաջարկվող ծրագիրը դառնում է հասկանալի, և, հետևաբար, տեղի է ունենում առաջարկվող գաղա-

---

10 Savigny H.Politikal Marketing: A Rational Choice? / Journal of Politikal Marketing. 2004, Vol 3(1), p.117.

11 Панкрухин А., Маркетинг, Москва, Изд. "РАГС", 1997, с. 274.

12 О' Шонесси Дж. Конкурентный маркетинг. Стратегический подход / пер. с англ., под ред. Д.О. Ямпольской. СПб., "Питер", 2002, 864с.

փարախոսության և ընտրողի՝ իր ներսում ձևավորված պատկերացումների նույնականացում[13]: Տնտեսական շուկայում գործող սկզբունքներից ելնելով՝ իրական չէ նաև քաղաքական պայմանագրի հստակ ձևակերպման հարցը ընտրողի և կուսակցության կամ թեկնածուի միջև, քանի որ նախապես հնարավոր չէ միանշանակ որոշել «պայմանագրային գին» հասկացությունը:

Հաղորդակցությունը ինչպես մարդկային շփման, այնպես էլ ցանկացած կուսակցության և առանձին թեկնածուի գործունեության համակողմանի և հիմնական բնութագրերից մեկն է: Մարքեթինգային հաղորդակցման կապուղիների համալիրն իրականացնում է առաջխաղացման կազմը, այսինքն՝ առաջխաղացման գործիքների այնպիսի համակցությունը, որը ստեղծում է ընտրողների վրա ազդելու առավել ռացիոնալ ձևաչափ՝ նրանց ապրանքի կամ ծառայության մասին իրազեկելիս: Եվ եթե ուսումնասիրում ենք ՀՀ-ում նախընտրական ժամանակահատվածում կիրառվող հաղորդակցման տեխնոլոգիաների կառուցվածքը, ապա անհրաժեշտ է առանձնացնել գովազդը, PR-ը, անհատական վաճառքը:

Ներկայումս գովազդի ժամանակակից տեսակները լայնորեն օգտագործվում են նախընտրական արշավում, մասնավորապես քարոզարշավում արտադրանքի առաջխաղացման համար[14]: ՀՀ քաղաքական շուկայի զարգացմանը զուգընթաց բարելավվում է նաև գովազդի որակն ու ինքնատիպությունը: Գիտատեխնիկական նվաճումները մեծապես նպաստում են գովազդի ստեղծմանն ու տարածմանը: Եթե ՀՀ քաղաքական շուկայի ձևավորման սկզբնական շրջանում զանգվածներին հասնելու ամենատարածված միջոցը պատերին փակցված ցուցանակներն էին և հենց իրենք՝ մարդիկ (փողոցային քարոզչություն), ապա այժմ գովազդ ստեղծողները ունեն իրենց թիրախ խմբերին հասնելու միջոցների լայն ընտրանի, ինչպես նաև գովազդ ստեղծելու ամենատարբեր սարքավորումներ (աուդիո, վիդեո տեխնիկա, համակարգիչներ և այլն):

---

13 Яковлев Е. Возможности регулирования процессов на политическом рынке. Политический менеджмент: электоральный процесс и технологии. СПб., 1999, с. 46.

14 Егорова-Гантман Е. В., Плешаков К.В., Байбакова В.Б. Политическая реклама, М.: "Никколо-Медиа", 2002. 2-е. изд., - с. 28.

Բոլոր մակարդակների ընտրարշավների ընթացքում ընտրողների վրա ազդելու կարևորագույն աղբյուր են ԶԼՄ-ները: Մամուլի կամ հեռուստատեսության միջոցով նախագծված լավ գովազդը կարող է բավականին կարճ ժամանակամիջոցում գրավել ընտրողների ուշադրությունը թեկնածուի կողմը, որի շնորհիվ նրանք պատրաստ կլինեն տալու նրան իրենց վստահության քվեն: Պետք է հիշել, որ յուրաքանչյուր գովազդ կարող է մնալ աննկատ կամ անգամ վերածվել հակագովազդի, եթե այն չմատուցվի համապատասխան շրջապատում և համապատասխան ձևավորմամբ: Պետք է պարզել ԶԼՄ-ի հեղինակությունը քաղաքացիների շրջանում և լսարանի ընդգրկումը, գտնել առավելագույնս գրագետ և արդյունավետ մոտեցումներ ԶԼՄ-ների աշխատակիցների համար:

ՀՀ քաղաքական շուկայում գովազդի բավականին տարածված տեսակներ են, հեռուստատեսային, ռադիո և ինտերնետ գովազդները: Վերջին ժամանակներում նախընտրական շրջանում համեմատաբար մեծ տարածում է ստացել գովազդը համացանցում: Չնայած գովազդի ձևերի բազմազանությանը՝ մասնագետները պնդում են, որ ապագան ինտերնետային գովազդինն է, քանի որ աստիճանաբար այն դառնում է հասանելի ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց, ուստի ինտերնետային գովազդը դառնում է ավելի տարածված և, շատ հնարավոր է, որ դառնա գովազդի բոլոր տեսակների մեջ առաջատարն իր արդյունավետությամբ[15]: Գովազդը համացանցում ընդհանուր առմամբ գովազդի բոլոր այլ տեսակներից ամենաէժանն է, ինչն անվիճելի առավելություն է: Գնորդների իրազեկումը լավագույն ձևով իրականացնում է համացանցային գովազդը, որը հասանելի է օրվա ցանկացած պահի՝ 24 ժամ: Ավելին, այն թույլ է տալիս տեսնել, թե կոնկրետ ով է հետաքրքրվում տվյալ արտադրանքով, թեկնածուով և, համաձայն այդ տվյալների՝ շտկել, փոփոխել կամ համալրել գովազդը՝ կողմնորոշվելով դեպի նպատակային լսարանը: Հայաստանում համացանցը հասանելի է մեծ թվով մարդկանց, ուստի դրա շուկան լայն է:

ՀՀ նախընտրական ժամանակահատվածում գովազդի ակտիվ միջոցներից է նաև արտաքին և փողոցային գովազդը: Արտաքին գովազդը թեկնածուի կոչերը մեծ լսարանին հասցնելու ամենատարած-

15 Стелзнер МайклКонтент-маркетинг. Новые методы привлечения клиентов в эпоху Интернета, Издательский дом: "Манн, Иванов и Фербер", 2012, с. 19.

ված միջոցներից է: Վերջինս ակտիվորեն կիրառվում է ՀՀ-ում վերջին տարիների հանրապետական նշանակության ընտրություններում: Լուսանկար 1-ում պատկերված են 2012թ. ԱԺ ընտրությունների ժամանակ՝ Երևան-Երասխ մայրուղու 13-րդ կմ-ի հատվածում տեղադրված գովազդային վահանակները: Նշենք, որ սա ՀՀ ամենածանրաբեռնված մայրուղիներից է: Նախընտրական արշավի ժամանակահատվածում մեկշաբաթյա դիտարկումների արդյունքում պարզվեց, որ տվյալ մայրուղով օրեկան անցնում է միջինը 9500 ավտոմեքենա[16]: Եթե ընդունենք, որ մեքենաներում եղել է ընտրելու իրավունք ունեցող միջինը երեք ուղևոր, ապա կարող ենք արձանագրել, որ տվյալ գովազդային վահանակների նպատակային լսարանը օրական շուրջ 28500 մարդ է, իսկ ամբողջ քարոզարշավի ժամանակ հնարավոր դիտումների քանակը՝ 28500x27 (քարոզարշավի տևողություն/օր)=769500 մարդ:

**Լուսանկար 2.2.1. 2012թ. ԱԺ ընտրություններում Երևան-Երասխ մայրուղու վրա տեղադրված գովազդային վահանակներ**




Վերջին ժամանակներում հասարակական կապերի մասին գիտությունը զբաղեցրել է բավականին ամուր դիրքեր: Բազմաթիվ մարքեթինգային նախագծերի հաջողությունը կախված է PR միջոցների և

16 Դիտարկումները կազմակերպվել և իրականացվել է հեղինակի կողմից:

հնարքների ճիշտ օգտագործումից[17]: PR տեխնոլոգիաները տեղեկատվական-վերլուծական գործողությունների համակարգ են, որոնց սկզբունքը քաղաքական նպատակների իրականացումն է այդ տեղեկատվության լսարանի նկատմամբ՝ ազնիվ և հարգալից վերաբերմունքի հիման վրա:

PR-ի համատեքստում կարևորվում է հանրության հետ փոխադարձ բազմաչափ կապերի հաստատումը, քանի որ որևէ քաղաքական նախագիծ չի իրականացվի, եթե այն հասարակության ստվար զանգվածների կողմից չի սպառվում: Դժվար է պատկերացնել որևէ քաղաքական գործչի, ով որպես թեկնածու մասնակցում է ընտրություններին առանց ընտրողների ու իր թիմի աջակցության կամ՝ որևէ ժողովրդավարական երկրի ղեկավարի, ով չի ապավինում ժողովրդի աջակցությանը: Ընտրությունների ժամանակ PR-ի գլխավոր սլաքն ուղղված է այն բանին, որ կուսակցության և/կամ թեկնածուի ծրագրերն ու գաղափարները մատչելի լինեն հանրությանը և համապատասխանեն նրանց ակնկալիքներին ու համոզմունքներին:

PR տեխնոլոգիաների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում քաղաքական սուբյեկտների դրական կերպարի ստեղծման գործընթացը՝ իմիջի ստեղծումը: Այս իմաստով իմիջը քաղաքական հաղորդակցության կարևոր հիմքերից է, որի օգնությամբ իշխող սուբյեկտները պահպանում են կապերը հասարակության հետ՝ փորձելով նպատակաուղղված կերպով ազդել հասարակական կարծիքի վրա:

ՀՀ-ում ընտրական գործընթացների ժամանակ, իրականացվող «հասարակության հետ կապերի» ապահովման հիմնական միջոցներն և եղանակներն են. հրապարակային ելույթներ, հասցեատեր քարոզչության տեխնոլոգիա, «Մարդուց մարդ» արշավի կազմակերպում (նման արշավի ընդհանուր սկզբունքն է անծանոթին ծանոթի վերածելը, ծանոթին կողմնակից և քարոզիչ դարձնելը: 2013թ. նախագահական ընտրություններում այս տեխնոլոգիան ակտիվորեն և արդյունավետ օգտագործեց «Ժառանգություն» կուսակցության թեկնածու Րաֆֆի Հովհաննիսյանը), «Հանրահայտ մարդկանց» մասնակցությամբ քարոզչություն, նախընտրական քարոզչություն փողոցներում, զանգ-

[17] Терещенко В.М. Маркетинг: новые технологии в России. СПб.,"Питер", 2001, с.307-308.

վածային հրապարակային միջոցառումների կազմակերպում՝ ցույցեր, հանրահավաքներ և այլն:

Անհատական վաճառքը ՀՀ բոլոր մակարդակների ընտրարշավների անքակտելի մասն է: Այցելությունները անհատ ընտրողներին կամ ընտրողների խմբերին ապահովում են ընտրողների հետ թեկնածուների քարոզիչների, օգնականների անհատական շփումները: Սակայն մեր կողմից իրականացված պրակտիկ գործունեությունը և համապատասխան վերլուծությունները ցույց են տալիս, որ այս արշավը արդյունավետ կլինի միայն գրագետ կազմակերպման, գործակալների ճիշտ ընտրության և ուսուցման, ընտրացուցակների հետ մանրակրկիտ աշխատանքի պարագայում և այլն[18]:

Նման արշավների արդյունավետ իրականացման անհրաժեշտ պայմանը ընտրարշավի մարքեթինգային ռազմավարության և մարտավարության, քարոզչության այլ մեթոդների համապատասխանեցումն է նախ և առաջ քաղաքական շուկայի որոշակի՝ առավել նեղ շուկայական հատվածում իրականացվող քարոզչությանը, ինչի արդյունքում տեղի է ունենում անհատի կիրառած, ներդրած այնպիսի ջանքերի նվազում, որոնց շնորհիվ առաջարկվող ծրագիրը դառնում է մատչելի և հասկանալի (այս ամենը հնարավորություն կտա նվազեցնել ընտրական արտադրանքի «գինը»): Այսպիսով՝ անհատական վաճառքի կիրառմամբ ընդհանուր քաղաքական արտադրանքից առանձնացվում և մեկնաբանվում են որոշակի ընտրողների կամ ընտրողների խմբերի համար առավել արժեքավոր դրույթներ, ինչը փոքրացնում է անհատի կիրառած, ներդրած ջանքերը առաջարկվող ծրագիրն հասկանալու համար՝ նվազեցնելով ընտրական արտադրանքի (ապրանքի) գինը:

Չափազանց կարևոր հիմնախնդիր է նաև համապատասխան *մարքեթինգային բյուջեի* սահմանումը և միջոցների հավաքագրումը: Սա այն խնդիրներից է, որին նախընտրական արշավի ժամանակ առնչվում է քաղաքական կազմակերպության ղեկավարությունը (ֆինանսական միջոցների հավաքագրման գործում կարող է մեծ նշանա-

[18] Տե՛ս Մկրտչյան Ա. Անհատական վաճառքի տեխնոլոգիական առանձնահատկությունները քաղաքական շուկայում / Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, Երևան, 2011, N 2, էջ 94-106:

կություն ունենալ ներդրումային մարքեթինգը[19]): Ֆինանսական միջոցները, ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան, վերցնում են թեկնածուների նախընտրական հիմնադրամներից: Ֆինանսավորումը կարող է կատարվել հիմնականում հետևյալ սկզբունքներով՝ «Որքա՞ն կարող են տրամադրել նախընտրական հիմնադրամից», մրցակցին համապատասխանելու մեթոդ, նպատակների և խնդիրների մեթոդ, մարքեթինգի ծրագրի հաշվառման մեթոդ, առավելագույն ծախսերի մեթոդ:

ՀՀ նախընտրական արշավներում թեկնածուների և կուսակցությունների զգալի մասը մարքեթինգի բյուջեն ձևավորում է առավելագույն ծախսերի մեթոդի հիման վրա: Դա են վկայում 2013թ. նախագահական ընտրությունների[20] և 2012թ. ԱԺ ընտրությունների[21] ժամանակ թեկնածուների և կուսակցությունների նախընտրական հիմնադրամների ձևավորման աղբյուրները և օգտագործման ուղիները, որտեղ նշված ծախսերի ուղղություններն ու չափը հիմնավորում են վերոնշյալ մեթոդի արդիականությունը ՀՀ նախընտրական արշավներում:

Նախընտրական արշավն արդյունավետ անցկացնելու համար քաղաքական կազմակերպությունները պետք է մշակեն աշխատանքի հսկողության հաշվառման բազմակողմանի ընթացակարգ՝ *պլանի իրագործման վերահսկողություն:* Ըստ այդմ՝ ՀՀ քաղաքական շուկայում արդյունավետ կիրառման դիտանկյունից կարող է առանձնացվել մարքեթինգի պլանի վերահսկողության երեք մեթոդ՝ մարքեթինգի ծախսերի վերլուծություն, մարքեթինգը իրագործող և վերստուգող գործակալների վերահսկողություն և իրացման/ընտրությունների վերլուծություն:

Այսպիսով՝ գործառնական մարքեթինգը շեշտադրում է այնպիսի փոփոխականներ, ինչպիսիք են ապրանքը, գինը, սպառման համակարգը, գովազդը և ապրանքի առաջխաղացումը, մինչդեռ ռազմավարական մարքեթինգն ուղղված է ապրանքային շուկաների ընտրությա-

[19] Տե՛ս Մկրտչյան Ա. Ընտրական գործընթացների ֆինանսավորումը և նախընտրական հիմնադրամի ձևավորումը ներդրումային քաղաքականության իրականացմամբ / «Այլընտրանք» գիտական հանդես N 3, Երևան, 2014, էջ 98-112:

[20] http://www.elections.am/audit/

[21] http://www.elections.am/audit/

նը, որոնցում կուսակցությունը ունի մրցակցային առավելություններ, և նպատակային շուկաներից յուրաքանչյուրում ընդհանուր պահանջարկի կանխատեսմանը: Այս երկու գործառույթները փոխադարձաբար լրացնում են միմյանց այն առումով, որ ռազմավարական պլանի կառուցվածքը պետք է սերտորեն կապված լինի գործառնական մարքեթինգի հետ:

*Բանալի բառեր* - քաղաքական շուկա, նախընտրական արշավ, գործառնական և ռազմավարական մարքեթինգ, քաղաքական ապրանք, քաղաքական գովազդ և PR:

## ФОРМЫ ЭФФЕКТИВНОГО ПРИМЕНЕНИЯ ПОЛИТИЧЕСКИМИ СУБЪЕКТАМИ МАРКЕТИНГОВЫХ ТЕХНОЛОГИЙ В ХОДЕ ПРЕДВЫБОРНЫХ КАМПАНИЙ В РА

**Мкртчян Артур Суренович**
Соискатель кафедры “Маркетинг” ЕГЭУ
министерства науки и образования РА

### Резюме

Для более доступного определения политического маркетинга его можно связать с двумя направлениями: 1) стратегический маркетинг: анализ общественных потребностей, сегментирование политического рынка, анализ привлекательности (*потенциал рынка-жизненный цикл*), анализ конкурентоспособности, выбор стратегического плана развития, который помогаетобеспечить людейвсем тем, что они желают; *2)* операционный маркетинг: исследование поведения избирателей, комплексное маркетинговое давление *(цена, товар, коммуникация, маркетинговый бюджет, осуществление и контроль выполнения плана)*- помогающий продавать товары, которые решено внедрять.

Партии в РА, как правило, ограничивают стратегическое мышление управленческим аппаратом, который окружает исполнительный орган и находится в центральном штабе, удаленном от практической работы. Принимая во внимание важную роль, которую играет деятельность по продвижению товаров, можно сказать, что операцион-

ный маркетинг является наиболее важным и наиболее видимым направлением маркетинга, однако очевидно, что без прочной стратегической опоры не может быть абсолютно эффективного операционного маркетинга. Каким бы мощным ни был план операционного маркетинга, он не может создать спрос там, где нет потребности, и не может сохранить направленность деятельности, которая обречена на исчезновение. Следовательно, с целью обеспечения соответствующего результата выборов операционный маркетинг должен быть основан на стратегическом мышлении, которое, в свою очередь, основано на потребностях и предполагаемом развитии рынка.

*Ключевые слова* – политический рынок, предвыборная кампания, операционный и стратегический маркетинг, политический товар, политическая реклама и PR

## THE FORMS OF EFFECTIVE USAGE OF MARKETING TECHNOLOGIES BY THE POLITICAL SUBJECTS IN THE PRE-ELECTION CAMPAIGNS OF THE REPUBLIC OF ARMENIA

**Artur Suren Mkrtchyan**
Researcher at the Marketing chair of
Armenian State University of Economics under the
Ministry of Education and Science of the Republic of Armenia

### Abstract

For more perceptible definition of political marketing it can be connected with two directions – *strategic* (analysis of integrated public needs, fragmentation of political market, attractiveness analysis (market potential – life circle), competitiveness analysis, choose of strategic development plan), that helps to ensure people with what they want to have, and *operational* (investigation of electoral behaviour, complex marketing pressure – price, product, communication, marketing budget, plan implementation and control), that helps to sell products that they have decided to invest in.

In the Republic of Armenia the political parties mainly limit the strategic thinking with the managerial staff that surrounds the executive body and is located in the central campaign headquarters far away from the practical work.

The operational marketing is the more dramatic and visible direction of marketing taking into account the important role that plays the products promotion activity. But it is evident that without a well-founded strategic basis there is no any absolutely effective operational marketing. Even the most powerful operational marketing plan cannot form a demand in a place where the needs are absent and cannot keep the direction of the activity that is condemned to disappear. Therefore the operational marketing should lay on the strategic thinking in order to ensure correspondent electoral result that, in its turn, is based on the market needs and its expected development.

*Keywords:* political market, pre-election campaign, operational and strategic marketing, political product, political ad (advertisement) and PR.

# ՀՀ ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ «ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ԲԱՂԱԴՐԻՉ

***Արթուր Սուրենի Մկրտչյան***
*ՀՀ ԿԳՆ ՀՊՏՀ «Մարքեթինգ» ամբիոնի հայցորդ*

Ներկայումս ՀՀ-ում միջազգային չափանիշներին համապատասխան ժողովրդավարական ընտրական համակարգ հաստատելու, ինչպես նաև ընտրություններում հաղթելու համար անհրաժեշտ է նախընտրական արշավներում կիրառել քաղաքական մարքեթինգի նոր մոդելներ ու մոտեցումներ: ՀՀ ընտրական գործընթացներում չափազանց կարևոր դեր կարող է հատկացվել փոխհարաբերությունների մարքեթինգին: Այն մեծացնում է անձի անձնական շփումների նշանակությունը արդյունավետ հաղորդակցությունների համակարգում: Անհրաժեշտություն է ծագում ընտրողների հետ փոխադարձ փոխանակմամբ և պարտավորությունների կատարմամբ ստեղծել, պահպանել ու զարգացնել երկարատև հարաբերություններ՝ քաղաքական գործիչների և կազմակերպությունների նպատակներին հասնելու համար:

Ընդհանուր քաղաքական մարքեթինգային տեսության շրջանակներում (ՔՄ տեսության և ՔՄՄ տեսության) ձևավորվել են երկու հետազոտական հարացույցներ (պարադիգմաներ) դպրոցներ. գործառական (տրանսակցիոն) մենեջերիալ (կառավարչական) դպրոց (Transactional Marketing/ Management School of Thought) և փոխհարաբերությունների (Relationship Marketing/ Relational School of Thought) դպրոցը, որոնք հաճախ բնութագրվում են որպես անտագոնիստական կամ հակադիր: Գործառական (տրանսակցիոն)կառավարչական (մենեջերիալ) դպրոցի հիմքում ընկած է արդյունաբերական դարաշրջանի ավանդական «ապրանքային» մարքեթինգի փիլիսոփայությունը (product marketing) և մոդելավորումը, ըստ «խթան–ռեակցիա» տիպի[1]:

Մենեջերիալ դպրոցը հենց գործառություններ /տրանսակցիա/ կատարելու փաստի մեջ է տեսնում հաջող գործողությունների բավարար

---

[1] Недяк И.Л. Политический маркетинг. Основы теории. Москва, 2008C. 89

ցուցանիշ: Վերջինիս տեսություններն ու տեխնոլոգիաները ուղղված են կուսակցության նպատակներին հասնելուն՝ ընտրողների կարիքների ուսումնասիրության և մարքեթինգի կամ կառավարչության համալիրի օգտագործման օգնությամբ, քաղաքական արտադրանքի ստեղծման և առաջընթացի համար, որը կհամապատասխանի ընտրողների ակնկալիքներին իրենց ընկալումների մեջ: Շատ ուսումնասիրողներ նշում են գործառնական մարքեթինգի պարադոքսը. այն դիտարկում է սպառողին/ընտրողին/, որպես կենտրոնական մարմին, ուղղված է նրա կարիքների բացահայտմանը և բավարարմանը, բայց վերջնական արդյունքում նպատակաուղղված է կուսակցության խնդիրների իրացմանը:

Փոխհարաբերությունների դպրոցը բնութագրվում է որպես «համակարգային կողմնորոշված»[2]: Կիրառելով փոխգործակցության մոդելները՝ փոխհարաբերությունների դպրոցը դիտարկում է քաղաքական շուկան որպես ցանցային կառուցվածք: Քաղաքական գործարքների նախապատրաստման և անցկացման մարքեթինգային խնդիրները ներառում են փոխհարաբերությունների կայացումը, պահպանումը և զարգացումը ցանցերում: Այսպիսով՝ փոխհարաբերությունների դպրոցը ընդարձակում է կուսակցության խնդիրները, մինչև կայուն, փոխշահավետ հարաբերությունների համակարգի կառուցումը իր գործակալներով: Այդ հարաբերությունների որակը դառնում է կուսակցության գործունեության արդյունավետության կարևորագույն չափորոշիչ: Կողմերը դիտարկվում են որպես ռազմավարական գործընկերներ: Հետևելով փոխհարաբերությունների դպրոցի տրամաբանությանը՝ գործարքները դառնում են հավասարապես ակտիվ և հավասարապես պատասխանատու սուբյեկտների միջև համագործակցության գործընթացներ:

Դ. Բանոնը կարծում է, որ գործառական /տրանսակցիոն/ մարքեթինգի ժամանակն անցել է, և տեսնում է մարքեթինգի տեսության ապագան փոխհարաբերությունների հարացույցի մեջ, որն առայժմ ավելի հաճախ դիտարկվում է որպես նորմատիվային: Այլ հետազոտողներ (օր.Մ.Բեկերը, Ս.Դ. Հանտը) հավատացած են, որ կառավարչական (մենեջերիալ) դպրոցը չի հնացել: Տարբեր շուկայական իրավիճակներում կարող են սկսել գործել տարբեր հարացույցները /դպրոց-

2 Grönroos C.From the Marketing Mix to Relationship Marketing. Cit. in: Banon D.P. Relationship Marketing and Political Process. – p. 77.

ները/, և երկու ուղղություններն էլ կարող են համագոյակցել[3]: Մեր կարծիքով, ելնելով ՀՀ քաղաքական շուկայի առանձնահատկություններից, այս երկու դպրոցների համագոյակցման ու համադրման արդյունքում է հնարավոր հասնել օպտիմալ ընտրական արդյունքի՝ պայմանավորված նախ և առաջ ՀՀ քաղաքական շուկայի աշխարագրական նեղ սեգմենտներով և ազգային վարքագծով (միջանձնային հարաբերություններով): ՀՀ քաղաքական շուկայի այն հատվածներում, որտեղ ընտրողների թվաքանակը մեծ է, առավելությունը պետք է տրվի մենեջերիալ (կառավարչական ) ուղղությանը, իսկ այն համայնքներում, որտեղ բնակչությունը փոքրաթիվ է, պետք է գերակայի փոխհարաբերությունների հարացույցը: Այս ամենի ապացույցն է ներքևում կատարված մեկնաբանություններն ու «գյուղ-քաղաք» ընտրական աշխարհագրության խզվածքը:

Ներկայումս ՀՀ քաղաքական միջավայրում փոխհարաբերությունների մարքեթինգի գլխավոր նպատակն է դառնում քաղաքական գործընկերների հետ նպատակաուղղված, հաստատուն, վստահելի հարաբերություններ կառուցելը: Նման հարաբերությունները փոխշահավետ են ինչպես կուսակցությունների և քաղաքական գործիչների, այնպես էլ ընտրողների համար: Կառավարման գործառույթը, որը զբաղեցնում է գերակա տեղ ՀՀ քաղաքական շուկայում ապրանքների առաջխաղացման գործում, ենթադրում է ոչ այնքան մարքեթինգային որոշման կառավարում, որքան թեկնածուի, ընտրողի և շուկայի այլ մասնակիցների միջև փոխհարաբերությունների ձևական և ոչ ձևական համակարգերի ստեղծում և կառավարում: Պետք է նշել նաև, որ փոխազդեցության մարքեթինգի հայեցակարգը ներգրավում է ոչ միայն այդ բնագավառի մասնագետներին, այլև կուսակցության ողջ անձնակազմը, հատկապես կառավարման օղակը, գրասենյակները և նախընտրական շտաբների աշխատակիցներին, քանի որ հարաբերությունների կառավարման գործընթացը առանցքային է նման մոտեցման դեպքում, իսկ անձնական հարաբերությունները, որպես կանոն, առավել բեղմնավոր են ստորին կառավար-

---

[3] Baker M. Marketing Strategy and Manangement/M. Baker // 3rd Edition Macmillan Business. -2000; Bannon D.P. Relationship marketing and political process; Hunt S.D On Rethinking Marketing: Our Discipline, Our Practice, Our Metods/ S.D. Hunt// Europen Journal of Marketing-1994-Vol.28; Butle.F Relationship Marketing: Theory and Practice/ F. Buttle. – London: Paul Chapman Publishing, 1996.

ման մակարդակում՝ տեղամասային նախընտրական շտաբներում՝ փոխհարաբերությունների կենսապարբերաշրջանի բոլոր փուլերում:

Փոխհարաբերությունների զարգացման կենսապարբերաշրջանը ուղի է, որը ընդհանուր կտրվածքով բաղկացած է հետևյալ փուլերից՝ ճնավորում, փորձարկում, որոնցից յուրաքանչյուրը ունի իր նպատակը և խնդիրը: Նման հարաբերությունները ստեղծում են որոշակի կախվածություն գործընկերների միջև: Կ. Գրոնրուսը ծառայությունների ոլորտի օրինակով ցույց է տվել փոխազդեցության մարքեթինգի հայեցակարգի առավելություններն ու առաջարկել գնորդի հետ փոխհարաբերությունների կենսապարբերաշրջանի կատեգորիան[4], որի հիման վրա էլ մեր կողմից մշակվել է քաղաքական շուկայում փոխհարաբերությունների մարքեթինգի դրսևորման մոդելը (գծապատկեր 1):

Ինչպես երևում է, սկզբնական փուլում՝ մինչև նախընտրական արշավի սկիզբը, քաղաքական մարքեթինի նպատակն է կուսակցության, քաղաքական գործչի և նրանց ծրագրերի ու գաղափարների նկատմամբ հետաքրքրություն արթնացնելը: Երբ ընտրողը ծանոթանում է կուսակցության կամ քաղաքական գործչի առաջարկին, նա անցում է կատարում փոխհարաբերությունների կենսապարբերաշրջանի երկրորդ փուլ, այսինքն՝ ընտրողը գնահատում է առաջարկվող գաղափարներն ու ծառայությունները ու դրանք համեմատում այն պատկերացումների հետ, թե ինչ է նա փնտրում և որքան է պատրաստ «վճարել»: Այս փուլում կուսակցության և թեկնածուի խնդիրն է հաճախորդի ընդհանուր հետաքրքրվածությունը վերածել իրական ընտրության: Եթե կուսակցության կամ քաղաքական գործչի և նրանց ծրագրերի ու ծառայությունների նկատմամբ հնարավոր (պոտենցիալ) ընտրողի գնահատականը դրական է, ապա դա հանգեցնում է կենսապարբերաշրջանի երրորդ փուլին՝ հետընտրական գործընթացին: Այս փուլում ընտրողը գործնականում տեսնում է թեկնածուի ունակությունները՝ ուղղված իր խնդիրների լուծմանն ու ծառայությունների մատուցմանը: Այն բանից, թե արդյոք ընտրողը գոհ կլինի մատուցված ծառայության որակից, արդյոք կկատարվեն թեկնածուի կողմից տրված բոլոր խոստումները, կախված է հաջորդ ընտրությանը նույն թեկնածուին նորից ընտրելու հարցում բարյացակամ ու բարենպաստ կարծիք ստեղծելու

[4] Gronroos Christian Service Managmentand Marketing. Customer Management in Service Competition. "Copyright", 2007, p. 143.

հնարավորությունը: Այս փուլում մարքեթինգի խնդիրն է տվյալ ընտրողի հետ մինչև հաջորդ ընտրություններ փոխհարաբերությունների տվյալ մակարդակի պահպանելը և զարգացնելը:

**Գծապատկեր 1. Քաղաքական շուկայում փոխհարաբերությունների մարքեթինգի կենսապարբերաշրջանի փուլերը**



Փոխհարաբերությունների մարքեթինգի կիրառման անհրաժեշտությունը ՀՀ քաղաքական շուկայում որպես «արդյունավետ կառավարման» կարևորագույն բաղադրիչ հիմնականում պայմանավորված է մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքում բացահայտված հետևյալ հիմնախնդիրներով.

ա/ *ընտրական գործընթացներում որոշ կուսակցությունների՝ անգամ իրենց կուսակցության անդամների թվից քիչ քվե հավաքելը:* 2007թ. ԱԺ ընտրություններում շուկայի նորեկ ԲՀԿ-ն հավաքեց 37.5%-ով[5] քիչ քվե, քան կուսակցության անդամների իր հայտարարած թիվն էր, իսկ ՕԵԿ-ը 2012թ ԱԺ ընտրություններին ստացել է 5.52% /83850 քվե, մինչդեռ կուսակցության անդամների թվաքանակը՝ 150,000, այսինքն՝ 66150 /44,1 %/ քիչ քվե քան հայտարարած կուսակցության անդամների թիվն էր[6]:

Վերոնշյալ վիճակագրական վերլուծությունը ակնհայտորեն փաստում են, որ կուսակցության անդամների մի ստվար զանգվածի մոտ չափազանց ցածր է հավատարմության աստիճանը, ինչը ակնհայտորեն ոչ ճիշտ հարաբերությունների կառուցման ու կառավարման հետևանք է: Ուստի անհրաժեշտ է շտկել ու նոր ձևաչափ հաղորդել այդ հարաբերություններին, որտեղ էլ չափազանց մեծ ու էական է փոխհարաբերությունների մարքեթինգի դերը: Իրականացնելով հետազոտություններ այս բնագավառում՝ Հարվարդի համալսարանի երեք պրոֆեսորներ Հեսկետը (Heskett), Սասսերը (Sasser) և Շլեսինգերը (Schlesinger) առաջարկել են մոդել, որը նկարագրում է փոխհարաբերությունները շահութաբերության և դրան պատկանող բազմաթիվ գործոնների միջև՝ փոխկախվածությունների շղթայի տեսքով: Անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ «ոչ լիովին բավարարված» հաճախորդները կրկին գնում են նախորդ ապրանքը՝ կախված սպառողների հավատարմության աստիճանից[7]:

---

5 Ղուկասյան Ն. Քաղաքական մարքեթինգ, էջ 134:

6 Տվյալները վերցված են՝ «ՀՀ ԱԺ 2012թ. ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններ» Երևան 2012թ. ընտրողների ուղեցույցից և http://www.elections.am/proportional/election-24104/կայքից:

7 Heskett J.L., Sasser W.E., Schlesinger E.A.The Service Profit Chain.How Leading Companies Link Profit and Growth to Loyalty, Satisfaction, and Value."Copyright", 1997, NewYork, -236 p.

ՀՀ քաղաքական շուկայում փոխհարաբերությունների մարքեթին-գի հայեցակարգի առաջադիմությունը հաստատվում է այն բանով, որ քաղաքական արտադրանքներն ու ծառայություններն ավելի ու ավելի են ստանդարտացվում, ինչը հանգեցնում է կրկնվող մարքեթինգային որոշումների ընդունմանը: Այդ պատճառով սպառողին պահելու և նրա հավատարմության աստիճանի բարձրացման միակ մեթոդը նրա հետ հարաբերություններն անհատականացնելն է, որը հնարավոր է գոր-ծընկերների հետ երկարաժամկետ ու փոխշահավետ փոխազդեցու-թյան զարգացման հիման վրա: Այս համատեքստում հարաբերություն-ները դառնում են կարևորագույն ռեսուրս, որն ունի ընկերությունը նյութական, ֆինանսական, տեղեկատվական, մարդկային և այլ ռե-սուրսների կողքին:

բ/ *ՀՀ քաղաքական շուկայում միջանձնային հարաբերություննե-րի բարձր մակարդակի էական ազդեցությունը ՏԻՄ ընտրությունների արդյունքների վրա, ինչով էլ որոշակիորեն պայմանավորված է նաև համապետական ընտրությունների արդյունքները:*

Հայրենական ընտրական շուկայում նման իրավիճակը պայմա-նավորված է հիմնականում ընդհանուր քաղաքական շուկայի դեռ ոչ լիարժեք կայացմամբ և հայկական վարքագծով, որտեղ միջանձնային հարաբերությունները բարձր մակարդակի վրա են: Վերջինս առավել ակնառու է ՏԻՄ ընտրություններում, մասնավորապես մինչև 3000 բնակիչ ունեցող համայնքներում, որտեղ հիմնականում առավելության են հասնում այն թեկնածուները, ովքեր գտնվում են համայնքի ընտ-րողների հետ սերտ կապերի մեջ՝ ձևավորելով միջանձնային հարաբե-րությունների առանձնահատուկ համակարգ: Թեկնածուները ընտրվե-լուց հետո այդ հարաբերությունները ակտիվորեն օգտագործում են նաև համապետական ընտրությունների ժամանակ՝ ապահովելով օպ-տիմալ ընտրական արդյունքներ այն թեկնածուի կամ կուսակցության օգտին, ում սատարում են: Դա են վկայում նաև վերջին նախագահա-կան ընտրություններում գրանցված արդյունքները գյուղ-քաղաք հա-րաբերակցության մեջ, որտեղ ՀՀԿ թեկնածու Ս. Սարգսյանը զգալի առավելություն է ունեցել Ր. Հովհաննիսյանի նկատմամբ հատկապես այն համայնքներում, որոնք փոքրաթիվ բնակչություն ունեն և որոնց ղեկավարները ՀՀԿ-ական են:

Ներկայացնենք վերջին նախագահական ընտրություններին ու ՏԻՄ ընտրություններին առնչվող մի քանի դիտարկումներ, որոնք հիմնավորում են մեր վերոնշյալ պնդումները: Ընտրությունների արդյունքների վրա և մասնավորապես իշխանական թեկնածուի հաջողության վրա մեծ ազդեցություն են ունենում գյուղական բնակավայրերը: (տե՛ս աղուսյակ1.)[8]:

*Աղյուսակ 1.*

**Ս.Սարգսյանի և Ր. Հովհաննիսյանի օգտին քվեարկության արդյունքների համեմատական վերլուծությունը՝ ըստ գյուղերի և քաղաքների**

| Թեկնածու | Քաղաք | Գյուղ |
|---|---|---|
| Սերժ Սարգսյան | 53% | 74% |
| Րաֆֆի Հովհաննիսյան | 47% | 26% |

Ինչպես երևում է աղուսյակ 1-ից, Սերժ Սարգսյանը բավական բարձր արդյունքներ է գրանցել հանրապետության գյուղական բնակավայրերում: Իսկ ահա քաղաքային բնակավայրերում նրա հաջողությունները ակնառու չեն (մարզկենտրոններում Րաֆֆի Հովհաննիսյանը ստացել է 298602 քվե, իսկ Սերժ Սարգսյանը՝ 296441 քվե) մարզկենտրոնները համեմատաբար մեծ քաղաքներն են, որտեղ միայն միջանձնային հարաբերություններով ազդել ընտրական արդյունքների վրա բավականին բարդ է: Վերջին նախագահական ընտրությունների արդյունքները և քվեարկության աշխարհագրական պատկերը մեկնաբանելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր մարզի ընտրողների ընդհանուր թվում քաղաքային ընտրողների մասնաբաժնին, որը ըստ էության 2013թ. նախագահական ընտրությունների արդյունքների աշխարհագրությունը պայմանավորող կարևոր գործոն էր:

Այն ընտրատարածքներում, որտեղ ընտրությանը մասնակցածների ընդհանուր թվում մեծ է քաղաքաբնակ ընտրողների մասնաբաժինը (Շիրակ, Լոռի, Կոտայք, Տավուշ), զգալի հաջողություններ է ունեցել Ր. Հովհաննիսյանը (աղուսյակ 2.): Բացառություն է Սյունիքի մարզը, որտեղ ընտրությանը մասնակցածների ընդհանուր թվի ավելի քան

[8] Տե՛ս նույն տեղում:

63%-ը եղել են քաղաքաբնակ ընտրողներ, սակայն այստեղ Ր. Հովհաննիսյանը Ս. Սարգսյանի համեմատությամբ լուրջ արդյունքների չի հասել: Իսկ այն ընտրատարածքներում, որտեղ ընտրություններին մասնակցածների ընդհանուր թվում մեծ է գյուղական ընտրողների մասնաբաժինը և, որտեղ գյուղական համայնքների ղեկավարների զգալի մասը ՀՀԿ ներկայացուցիչ է (Արագածոտն/14,15/՝ 77,4%. Արարատ/16-18՝ 71,6%, Գեղարքունիք/22-24/՝ 64,4%), նկատվել է իշխանական թեկնածուի՝ Սերժ Սարգսյանի օգտին քվեարկության չափազանց բարձր մակարդակ: Համայնքների շուրջ 70%-ը ունի մինչև 3000 բնակիչ[9], որտեղ միջանձնային հարաբերությունները համեմատականորեն ավելի բարձր մակարդակի վրա են, ինչի շնորհիվ հնարավոր է կառուցել արդյունավետ փոխհարաբերություններ և այդ փոքր շուկայական հատվածի ընտրազանգվածը ուղղորդել դեպի համապետական ընտրությունների թեկնածուն: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև, որ ՀՀ համայնքների գերակշիռ մասի ղեկավարները (քաղաքային համայնքներում՝ շուրջ 77%-ը և գյուղական համայնքներում՝ 66%-ը) ՀՀԿ-ական են, երկրորդ տեղում է ԲՀԿ-ն (քաղաքային համայնքներում՝ 8,7%-ը, գյուղական համայնքներում՝ 13%-ը), մնացածը այլ կուսակցություններից են կամ անկուսակցականներ, կան նաև համայնքներ, որոնց անկուսակցական ղեկավարները հիմնականում լոյալ են ՀՀԿ-ին:

Ներկայումս քաղաքական շուկայի սուբյեկտները՝ կուսակցությունները և քաղաքական գործիչները, պետք է ձգտեն առավելագույնս ներգրավվելու ՏԻՄ ընտրություններին՝ հետագայում համապետական ընտրություններում որոշակի աջակցություն ակնկալելով[10]: 2012 թ-ին ԱԺ ընտրություններին ՀՀԿ-ն հավաքել է 44.11%, ԲՀԿ-ն 30.19% քվե[11], երբ համեմատում ենք աղյուսակ 2-ում նկարագրված ընդհանուր ընտրական արդյունքներն ԱԺ ընտրությունների արդյունքների հետ, ակնհայտ է, որ շեղումը այդքան էլ մեծ չի: Ուստի հայրենական շատ կուսակցություններ միայն կենտրոնական կառավարչական մարմիններում ընտրական և մարքեթինգային գործառույթներ իրա-

---

9 http://armstat.am/am/?nid=337

10 Տե՛ս Մկրտչյան Ա. Մարքեթինգային կապուղիների դրսևորման առանձնահատկությունները և զարգացման միտումները ՀՀ քաղաքական շուկայում / «Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա», N 6 (156), Երևան, 2013, էջ 77-81:

11 http://www.elections.am/proportional/election-24104/

կանացնելուց զատ (քանզի դա է թելադրում ՀՀ քաղաքական շուկայի առանձնահատկություններն ու հայկական շուկայում ձևավորված ընտրական մշակույթը), պետք է առավել ակտիվ ինտեգրվեն նաև ՏԻՄ ընտրություններում՝ ձևավորելով և պահպանելով փոխհարաբերությունների բարձր մակարդակ, որպեսզի հետագայում կարողանան ցանկալի ընտրական արդյունք ապահովել: ՀՀ քաղաքական շուկայի առանձնահատկություններով պայմանավորված՝ պետք է հստակ ուսումնասիրել և վերլուծել ՀՀ քաղաքական շուկայի առանձին սեգմենտները՝ արդյունքում մշակելով քաղաքական մարքեթինգի հայեցակարգային հիմքերը՝ տվյալ հատվածին (սեգմենտին) համապատասխան կա՛մ կառավարչական/մենեջերա կա՛մ փոխհարաբերությունների հարացույցների/ դպրոցների գերակայությամբ:

*Աղյուսակ 2.*

**ՏԻՄ ղեկավարների բաշխվածությունը՝ ըստ կուսակցական պատկանելության**[12]

| Ընտրութ. | ՀՀԿ | | | | ԲՀԿ | | | | ԱՅԼ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղ | Քաղ. համայնք | Թեկ.օ գտ.քվ.քվթ. թիվը | Ընտրողներ Ընդ. Թիվը | Գյուղ-համայնք | Քաղ. համայնք | Թեկ. օգտ.քվ.քվթ. թիվը | Ընտր. ընդ.թիվը | Գյուղ-համայնք | Քաղ. Համայնք | Թեկ. Օգտ.քվ.քվթ. Թիվը | Ընտ. Ընդ. թիվը |
| **1-13** | - | 1 | - | - | _ | _ | _ | _ | _ | _ | _ | _ |
| **14** | 34 | 1 | 10916 | 25.188 | 1 | 0 | 218 | 456 | 16 | 1 | 11.231 | 34.230 |
| **15** | 35 | 1 | 9332 | 23.204 | 0 | 0 | 0 | 0 | 26 | 0 | 14.837 | 32.772 |
| **16** | 18 | 1 | 19.016 | 46.542 | 10 | 0 | 6704 | 18.239 | 6 | 0 | 2604 | 6335 |
| **17** | 22 | 1 | 22.217 | 56.697 | 2 | 0 | 723 | 2266 | 4 | 0 | 4012 | 7376 |
| **18** | 19 | 2 | 19.089 | 48.462 | 2 | 0 | 1603 | 3830 | 10 | 0 | 8859 | 21.085 |
| **19** | 13 | 0 | 8344 | 21.829 | 0 | 0 | 0 | 0 | 5 | 1 | 16.054 | 49.418 |
| **20** | 34 | 1 | 23.129 | 57.794 | 0 | 0 | 0 | 0 | 8 | 0 | 6215 | 12.185 |
| **21** | 29 | 1 | 25.497 | 70.227 | 1 | 0 | 923 | 1901 | 4 | 0 | 1622 | 3989 |
| **22** | 10 | 0 | 5618 | 15.434 | 1 | 0 | 773 | 4478 | 5 | 1 | 12.061 | 37.366 |
| **23** | 28 | 3 | 17.665 | 49.012 | 7 | 0 | 892 | 1613 | 11 | 0 | 4730 | 11.065 |
| **24** | 16 | 1 | 17.697 | 43.900 | 3 | 0 | 1064 | 2476 | 5 | 0 | 9462 | 17.316 |
| **25** | 9 | 2 | 19.497 | 57.811 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 0 | 167 | 425 |
| **26** | 13 | 2 | 21.857 | 53.045 | 2 | 0 | 666 | 1308 | 2 | 0 | 1769 | 4384 |

[12] Աղյուսակը կազմվել էhttp://www.elections.am/electionsview/type-4/, http://www.hhk.am/hy/rpa-in-local-self-governance/, http://www.bhk.am/index.php?al=TIM կայքերում առկա տվյալների հիման վրա:

| | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **27** | 3 | 0 | 3770 | 8546 | 22 | 2 | 19.255 | 49.045 | 0 | 0 | 0 | 0 |
| **28** | 0 | 0 | 0 | 0 | 8 | 1 | 18.515 | 57.156 | 0 | 0 | 0 | 0 |
| **29** | 15 | 1 | 11.665 | 24.681 | 0 | 0 | 0 | 0 | 11 | 0 | 4732 | 11.931 |
| **30** | 0 | 2 | 2662 | 6394 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 | 0 |
| **31** | 23 | 3 | 17.755 | 31.057 | 0 | 0 | 0 | 0 | 9 | 0 | 6244 | 8925 |
| **32** | 32 | 2 | 16.619 | 40.500 | 1 | 0 | 206 | 635 | 12 | 1 | 6781 | 14.690 |
| **33** | 40 | 0 | 5684 | 13.591 | 3 | 0 | 567 | 2295 | 18 | 0 | 3621 | 9231 |
| **34** | 0 | 0 | 0 | 0 | 0 | 1 | 27.500 | 125.658 | 0 | 0 | 0 | 0 |
| **35** | 10 | 0 | 4392 | 11.289 | 1 | 0 | 371 | 11.05 | 5 | 0 | 3117 | 9367 |
| **36** | 14 | 2 | 10.201 | 30.698 | 2 | 0 | 676 | 1217 | 23 | 0 | 11.263 | 23.554 |
| **37** | 44 | 1 | 16.509 | 38.102 | 3 | 1 | 4521 | 13.327 | 10 | 0 | 1361 | 3039 |
| **38** | 36 | 4 | 19.504 | 52.315 | 2 | 0 | 185 | 314 | 8 | 0 | 643 | 1376 |
| **39** | 30 | 2 | 14.607 | 33.281 | 3 | 0 | 542 | 990 | 8 | 1 | 4689 | 13.449 |
| **40** | 34 | 1 | 17.467 | 43.611 | 1 | 0 | 295 | 1118 | 9 | 0 | 2281 | 6258 |
| **41** | 10 | 2 | 11.333 | 20.203 | 1 | 1 | 5475 | 16.234 | 4 | 0 | 1811 | 4182 |
| **Ընդա-մենը** | **571<br>66%** | **36<br>77%** | **372042<br>/42,2%** | **923413<br>/58.7%** | **76<br>8.7%** | **6<br>13%** | **91674<br>/29,9%** | **305661<br>/19.4%** | **220<br>25.3%** | **5<br>11%** | **140166<br>/40,7%** | **343948<br>/21.8%** |

Ընդհանուր առմամբ՝ կուսակցության և կամ թեկնածուի գործընկերների և ընտրողների հետ լիարժեք հարաբերություններ ստեղծելու և պահպանելու գործընթացում չափազանց կարևոր է փոխհարաբերությունների մարքեթինգի կիրառումը որպես արդյունավետ մարքեթինգային ճնաչափ: Այն պայմանավրոված է՝ երկարատև ժամանակահատվածում (էականորեն ավելի երկարատև, քան նախընտրական ժամանակահատվածն է) ՀՀ քաղաքական շուկայում ձևավորված միջանձնային հարաբերությունների օգտագործմամբ ընտրություններում հաղթանակի հասնելու նպատակով: Փոխհարաբերությունների մարքեթինգի կիրառումը չի կարող և չպետք է եզրափակել միայն նախընտրական արշավով:

*Բանալի բառեր* – Փոխհարաբերությունների մարքեթինգ, քաղաքական շուկա, նախընտրական արշավ, կուսակցություն, թեկնածու, քաղաքական ապրանք, ընտրական արդյունք:

# ПРИМЕНЕНИЕ МАРКЕТИНГА ВЗАИМООТНОШЕНИЙ КАК КОМПОНЕНТА “ЭФФЕКТИВНОГО УПРАВЛЕНИЯ” В ИЗБИРАТЕЛЬНЫХ ПРОЦЕССАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**Мкртчян Артур Суренович**
Соискатель кафедры “Маркетинг” ЕГЭУ
министерства науки и образования РА

**Резюме**

В деле продвижения товаров на политическом рынке РА предполагается не столько управление маркетинговым решением, сколько создание и управление формальными и неформальными системами взаимоотношений между кандидатом, избирателем и другими участниками рынка.

Принимая во внимание особенности политического рынка РА, достичь желаемого результата выборов можно лишь посредством сосуществования и сопоставления менеджериальной (управленческой) школы и школы взаимоотношений, что обусловлено прежде всего узкими географическими сегментами политического рынка РА и национальным поведением (высоким уровнем межличностных отношений).

В настоящее время в политической среде РА главной целью маркетинга взаимоотношений становится построение целенаправленных, прочных, доверительных отношений с политическими партнерами, поскольку процесс управления взаимоотношениями при подобном подходе является ключевым, а личные отношения, как правило, наиболее плодотворны на низшем управленческом уровне в предвыборных штабах избирательных участков на всех этапах жизненного цикла взаимоотношений.

Необходимость применения маркетинга взаимоотношений на политическом рынке РА в качестве важнейшего компонента “эффективного управления” в основном обусловлена выявленными в результате нашего исследования следующими проблемами:

а/ незначительное количество голосов, отданных в процессе выборов некоторым партиям даже членами самих этих партий;

б/ имеющее место на политическом рынке РА существенное влияние на результаты выборов в органы местного самоуправления высокого уровня межличностных отношений и обусловленные этим результаты общегосударственных выборов.

*Ключевые слова* – маркетинг взаимоотношений, политический рынок, предвыборная кампания, партия, кандидат, политический товар, результат выборов.

## THE USE OF MARKETING OF INTERRELATIONS AS A COMPONENT OF "EFFECTIVE MANAGEMENT" IN ELECTORAL PROCESSES OF THE REPUBLIC OF ARMENIA

**Artur Suren Mkrtchyan**
Researcher at the Marketing chair of Armenian StateUniversity of Economics under the Ministry of Education and Science of the Republic of Armenia

### Abstract

In the political market of the Republic of Armenia in the process of products promotion the management of marketing decision is not as much considered, as the formation and management of formal and non-formal systems of interrelations among a candidate, voter and other participants of the market.

Proceeding from the specifications of the political market of RA, it is possible to gain the favourable electoral result with the coexistence and confrontation of managerial and interrelations schools, first of all conditioned by the narrow geographical segments of the political market of RA as well as the national behaviour (high level of interpersonal relations).

At present the main purpose of interrelations marketing in the political environment of RA is becoming the building of targeted, constant and reliable relations with the political partners, because the process of

relations management is pivotal in that approach. The personal relations, as a rule, are more fruitful at the lower level of management – in district pre-election campaign headquarters, during the all stages of relations life circle.

The necessity of using the marketing of interrelations in the political market of RA, as the most important component of «effective management», is mainly considered by the following problems revealed in the result of our research works:

a) in the electoral processes gaining lower votes for certain political parties, even lower than the number of their own political party members,
b) the affection of the high level of interpersonal relations in the political market of RA on the results of the municipal elections, with which the results of state elections results are also conditioned.

*Keywords:* marketing of interrelations, political market, pre-election campaign, political party, candidate, political product, election result.

# MEASURING FINANCIAL LITERACY: THEORY AND INTERNATIONAL PRACTICE

***Pokrikyan Arthur Liparit***
*International Black Sea University,*
*Faculty of Business Administration with concentration in Finance,*
*PhD student*

The importance of financial literacy has been increased during the last decade. The developments in financial system led to improved access to basic financial products and services as well as to the development of new and more sophisticated financial products and services. As a result, people face new challenges and risks in the process of managing their personal finances.

The recent financial crisis in 2008 brought the importance of financial literacy to a new level. Even though lack of financial literacy explains only part of the Global Financial Crisis, it is argued that financially literate people would be much more thoughtful in taking on credit they could not afford. The knowledge, skills, attitude and behavior incorporated in financial literacy are important for people to make responsible and informed decisions, manage potential risks and improve their financial well-being.

During the G20 Presidency meeting in 2012, the importance of financial literacy and education was highlighted on a global scale. Moreover, improving financial literacy has emerged as a strategic policy objective that complements governments' financial inclusion and consumer protection agendas. Especially, more attention was paid to the role of National Strategy for Financial Education (NSFE) as an important policy insight for the improvement of financial literacy among population. According to the OECD at least 36 countries have established or are in the process of designing a national strategy for financial education. Moreover, 80 percent of these countries have used a survey as a diagnostic method to identify the key priorities for their national strategies (OECD, 2013).

Even though globally there is a consensus related to the importance of financialliteracy and many countries have policies dedicated to this issue, there is nota common generally acceptedapproachfor measuring

the level of financial literacy. During recent years,different countries and international organizations have elaborated number of methodologies to assess financial literacy. Among those the Organization for Economic Co-operation and Development (OECD) with its International Network on Financial Education (INFE) and World Bank (WB) in cooperation with Russian Trust Fund (RTF)are the major ones (World Bank, 2013).Each of those institutions aimed at creatinga unified approach, which will help to get globally comparable data related to the level of financial literacy across different countries.

These two approacheswere implemented and helped many countries, including Armenia, to set up a baseline measure concerning the level of financial literacy. However, considering country specific factors, it is needed to understand, if these methodologies provide relevant set of tools forfinancial education policy implementation in terms of effective policy priority setting, monitoring and evaluation.

Thus, the main objective of this paper is to introduce and compare the main methodologies of financial literacy measurement and highlight their positive and negative aspects in terms of helpfulness to policymaking. Particularly, we will focus on the definition of financial literacy, key components and scoring system of the methodologies developed by OECD and WB.

## Financial literacy definition

The concept of financial literacy is relatively new in the academy and its importance in terms of macroeconomic impact on financial stability and financial inclusion was especially emphasized during last decade. One of the early pioneers of financial literacy was Jump$tart Coalition for Personal Financial Literacy, which defined it as “the ability to use knowledge and skills to manage one’s financial resources effectively for a lifetime of financial security” (2015, p. 1). As you can notice from the definition, it is mainly focused on financial literacy as a combination of certain skills and knowledge. On the other hand, the definition stresses on the role of financial literacy as key factor for people wellbeing. Similar to this definition, the early definitions of financial literacy describe it as a

set of knowledge and skills.However, the concept of financial literacy has been changed and advanced throughout these years. Moreover, in mid-2000s UK introduced another broader concept known as "financial capability". The latter focuses on not only knowledge and skills, but also attitude and behavior people should demonstrate in order to be financially capable. Particularly, Financial Sector Authority (FSA) of UK defined financially capable person as follows:

"Financially capable people are able to make informed financial decisions. They are numerate and can budget and manage money effectively. They understand how to manage credit and debt. They are able to assess needs for insurance and protection. They can assess the different risks and returns involved in different saving and investment options. They have an understanding of the wider ethical, social, political and environmental dimensions of finances." (2005, p. 13).

Nowadays the researches, policymakers and international organizations usually use the terms "financial literacy" and "financial capability" interchangeably and they can be defined differently depending on the context, where they are used.

Since 2009, OECDimplemented different initiatives to measure the financial literacyon a global scale. In 2010,a pilot study was initiated across 14 different countries including Armenia. The main objective of the study was measuring the level of financial literacy across these countries and get globally comparable data. In frame of this research, OECD defined financial literacy as "a combination of awareness, knowledge, skills, attitude and behavior necessary to make sound financial decisions and ultimately achieve individual financial wellbeing" (OECD, 2012, p. 14).As one can notice, this definition incorporates all four components of financial literacy such as knowledge, skills, attitude, and behavior. In addition, OECD prefers to use the term "financial literacy", however this concept can be defined differently depending on the initiative. For example within the framework of Program for International Student Assessment (PISA) also conducted by OECD and the subsequent report, OECD (2013, p. 144) provided other definition of financial literacy:

"Financial literacy is knowledge of financial concepts and risks, and the skills, motivation and confidence to apply such knowledge and

understanding in order to make effective decisions across a range of financial contexts, to improve the financial well-being of individuals and society, and to enable participation in economic life".

Even though presented definitions given by OECD are different, they both lay to the same main components.

Russian Trust Fund conducted another major financial literacy measurement initiative in 2012, in collaboration with the World Bank. In frame of these initiativeanother financial literacy assessment methodology has been developed, which was used in seven countries, including Armenia. The main objective of this methodology was to develop an approach that would allow evaluating the level of financial capability in low and middle-income countries without taking into account the education and income factors. In this study, World Bank (2013, p. 1) refers to financial capability as an "internal capacity to act in person's best financial interest, given socio-economic environmental conditions. It therefore encompasses the knowledge, attitudes, skills, and behaviors of consumers with regard to managing their resources and understanding, selecting, and making use of financial services that fit their needs". Here as well we see the similar trend of defining financial literacy, however it is important to mention that in frame of World Bank study the term "financial capability" was used and "financial literacy" was associated only with financial knowledge.

To sum up, both OECD and World Bank use common approach while defining financial literacy.However it is important to consider that depending on the context "financial literacy/capability" can be defined differently to support the general idea of the initiative. In terms of policymaking, it is also important to give a clear definition of financial literacy and make distinctions between other related concepts such as financial education.

## Financial literacy measurement

To discuss the OECD/INFEapproach, it is important to present main principals of financial literacy measurement methodology. For the measurement of financial literacy,OECD/INFE has developed a

standardized questionnaire, which was discussed with OECD member countries as well. Mainly questions related to money management, planning and choosing financial services were used in the questionnaire. In terms of financial literacymeasurement,OECD/INFE considered three main components: Knowledge, Attitude and Behavior. Based on question results related to these components a separate Knowledge, Attitude and Behavior scores are calculated. Interesting to notice that even though OECD mentions “skills” separately in the definition of financial literacy, there is no separate score for this component, and some consistency issues may arise.OECD/INFE also highlighted the importance of calculating single score of financial literacy based on the sum of Knowledge, Attitude and Behavior scores.

For the measurement of financial literacy,OECD/INFE used a universal approach to be able to get internationally comparable data as a primary objective. As a result,OECD/INFE approach may not fully reflect the specific characteristics of a country and priorities of policymaker’s in the field of financial education. As we already mentioned one of the primary objectives of OECD/INFE approach is the comparison of different countries in terms of financial literacy. For this reason, the questionnaire used during the surveys was also developed according to universal standards and may not include some important policy related or country-specific questions.

On the other hand, some questions used by OECD/INFE in different countries may lead to bias due to cultural differences. Thus, in order to elaborate and implement national strategy of financial education efficiently, it is important to consider policy related and country-specific aspects of financial literacy. Though countries, which used this approach, could add some additional questions to the survey questionnaire, this is limited and may not cover the mentioned issue.

In addition, the thematic areas included in the questionnaire are limited as well, and do not include financial literacy related topics such as personal rights protection. The latter is important topics as in practice many people are not aware of their rights and responsibilities while using financial services.

As mentioned before, according to OECD/INFE approach there is not any separation between "Knowledge" and "Skill" components of financial literacy, which makes it difficult to understand needs of target groups more specifically and implement a targeted policy as well as evaluate its efficiency in regard of these components. In order to design and implement financial education related projects more efficiently it is important fully understanding the needs of target groups. For example, usually people may have theoretical knowledge about economy as a whole, but are not able to project its effects on the management of personal finances. It is important to separate these componentsfor policymakers to be able to see the cumulative result of financial education related initiatives. Unlike OECD, Financial Services Authority (FSA)separated "Knowledge" and "Skill" components of financial literacy during the exploratory study in UK (FSA, 2005). World Bank also used the separated approach.

Calculating certain scores for thematic dimensions of financial literacy is important in terms of its assessment, but the OECD/INFE approach does not contain such a set of tools. The financial knowledge, behavior and attitude scores calculated in accordance with OECD/INFE methodology do not allow the financial education policymakers to comprehensively identify the needs of the population, make clear targeting for and measure the effectiveness of the financial education policy.

The OECD/INFE approach underestimates the role of the "attitude" component in the context of financial literacy measurement. The overallfinancial literacyscore as provided for by OECD/INFE is calculated using the amount of the knowledge, attitude and behavior scores and may take any value in the range 1 to 22. The financial knowledge and behavior scores have greater weight in the overall score calculation, and the financial attitude is, therefore, less important according to the OECD/INFE approach. Although forming an appropriate behavior is more important in the financial education strategy point of view, we should not underestimate the remaining components of financial literacy. Specifically, a negative attitude can be a serious obstacle to a successful and effective financial education projects. For example, in Armenia after

the collapse of the Soviet Union, many people lost their deposits held with Soviet banks, which resulted in citizens having built little trust in the banking system. As a result, implementing financial education programs become less effective for people who demonstrate similar attitude. Moreover, there is not any specific study, which shows the importance of financial literacy components in terms of their impact of financial literacy.

In case of World Bank, the approach to measure financial literacy was different. Here at the beginning focus groups were used to identify main manifestations of financially capable people in relation to knowledge, behaviors, skills and attitudes, which were then grouped into four major thematic dimensions such as managing money, planning ahead, making choices and getting help. As a result, the financial literacy assessment questionnaire included questions relating to the main pattern of financial literacy reflecting these thematic areas. The RTF/WB approach was used to identify 12 scores in four major thematic dimensions of financial literacy.

In case of this approach as well, some challenges may arise in terms of policymaking. Thematic dimensions of financial literacy pointed out by RTF/WB are general in nature and may not reflect the priorities set by domestic policymakers in financial education. As told earlier, the RTF/WB Financial literacy Assessment questionnaire was based on the feedback from the focus groups. However, the information may not entirely cover the priorities set by policymakers in financial education, so questions that are essential to the policy may have stayed out of the questionnaire.

The RTF/WB approach to financial literacy assessment does not take into account such factors as education and income level. The financial literacy assessment questionnaire includes questions, which are mostly neutral with regard to education and income levels. Whereas, reviewing different factors, including the effect of education and income levels on financial literacy, and considering peculiarities of the target groups, is important in terms of developing effective education programs. Moreover, the RTF/WB approach considers calculating various financial literacy scores only by thematic dimension, which does not enable financial education policymakers to fully identify the needs of population and evaluate the effectiveness of the financial education strategy. The

aforementioned 12 scores do not reflect the financial literacy components – knowledge, skills, attitude and behavior. It enables to understand the financial literacy only in four major thematic fields. Moreover, the scoring model is not simple enough in terms of public accountability, so the financial education policymakers, therefore, may face difficulty in describing the impact of their programs to the public.

To sum up, the RTF/WB methodology also does not allow policymakers to develop and implement an effective and targeted NSFE. The comparison table of discussed methodologies is presented below.

## Conclusion

The role of financial literacy has been especially highlighted in terms of financial decisions of individuals related to savings, retirement planning and household wealth (Lusardi, 2008b; Rooij, Lusardi, & Alessie, 2011), choice of financial services (Lusardi, 2008a) and borrowing (Lusardi &Tufano, 2009). The relevance to study the impact of financial literacy on different economic aspects such as financial decision-making thereby financial stability has been emphasized after Global Financial Crisis. Thus, in order to be able to develop and implement an effective financial education policy the policymakers need very comprehensive data related to the level of financial literacy in the country and people behavior in terms of decision-making.

As discussed before both approaches of financial literacy measurement developed by OECD and World Bank contain some challenges, which impact policymaking process. This is why, there is a need to develop more comprehensive tool for financial literacy measurement, which will allow:

- Policy makers to ensure proper policy priority setting and multilaterally monitoring the effectiveness of policies dedicated to financial education,
- FE project implementers to easily map the existing financial literacy issues across different target groups, thematic areas and financial capability components (knowledge, skills, attitude, behavior),

- Public to monitor the progress and hold accountability of policymakers in a simple manner.

In order to ensure that above mentioned points happen, the financial literacy measurement methodology should be consistent with the methodologies discussed in this research, as no matter the challenges, the existing approaches have created a strong base for financial literacy measurement. In addition, it should be designed in a way to fully reflect the domestic characteristics and priorities established by the policymakers, allow flexibility and thus international comparison between different countries, use simple set of indicators for both financial literacy components and thematic areas. The latter will allow determining the weak and strong aspects of financial literacy in the country and based on further analysis develop more targeted and effective financial education initiatives.

*Keywords:* Financial capability, financial education, financial inclusion, financial literacy, financial stability

**References**

1. FSA. (2005). Measuring Financial Capability: An Exploratory Study. Financial Services Authority, London.
2. Jump$tart Coalition for Personal Financial Literacy. (2015). National Standards in K-12 Personal Finance Education. Washington.
3. OECD. (2012). Measuring Financial Literacy: Results of the OECD / International Network on Financial Education (INFE) Pilot Study. OECD Working Papers on Finance, Insurance and Private Pensions No. 15.
4. OECD. (2013). Advancing National Strategies for Financial Education. A joint publication by Russia’s G20 Presidency and the OECD.
5. OECD. (2013). PISA 2012 Assessment and Analytical Framework: Mathematics, Reading, Science, Problem Solving and Financial Literacy. OECD Publishing.
6. World Bank. (2013, August). Financial Capability Surveys Around the World: Why Financial Capability is important and how surveys can help. Retrieved from www.worldbank.org/fpd

7. Lusardi, A. (2008a). Financial Literacy: An Essential Tool for Informed Consumer Choice? (Working Paper No. 14084). National Bureau of Economic Research. Retrieved from http://www.nber.org/papers/w14084
8. Lusardi, A. (2008b). Household Saving Behavior: The Role of Financial Literacy, Information, and Financial Education Programs (Working Paper No. 13824). National Bureau of Economic Research. Retrieved from http://www.nber.org/papers/w13824
9. Lusardi, A., & Tufano, P. (2009). Debt literacy, financial experiences, and overindebtedness. National Bureau of Economic Research. Retrieved from http://www.nber.org/papers/w14808
10. Rooij, M. van, Lusardi, A., & Alessie, R. J. (2011). Financial Literacy, Retirement Planning, and Household Wealth (Working Paper No. 17339). National Bureau of Economic Research. Retrieved from http://www.nber.org/papers/w17339

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

**Արթուր Լիպարիտի Փոքրիկյան**
Միջազգային սևծովյան համալսարան, Բիզնեսադմինիստրացիա ֆակուլտետի ֆինանսներ ուղղվածություն, ասպիրանտ

### Ամփոփում

Ֆինանսական ունակությունների կարևորությունը՝ որպես ֆինանսական կայունության և ֆինանսական ներգրավվածության կարևոր հիմնաքարերից մեկը, էականորեն աճել է վերջին տարիների ընթացքում: Շատ երկրներ սկսել են մշակել և իրականացնել համազգային ռազմավարություն՝ ֆինանսական ունակությունների մակարդակը բարձրացնելու համար, սակայն դեռևս բացակայում է միջազգայնորեն ընդունված մոտեցում, թե ինչպես պետք է արդյունավետորեն գնահատել ֆինանսական ունակությունները: Վերջին տարիների ընթացքում ՏՀԶԿ-ն և Համաշխարհային բանկը իրականացրել են ֆինանսական ունակությունների գնահատման հետազոտություններ

տարբեր երկրներում իրենց կողմից մշակված մեթոդաբանությունների հիման վրա: Այս հետազոտությունները օգնել են ձեռք բերել միջազգայնորեն համեմատելի տվյալներ, ինչը, սակայն, հաշվի առնելով որոշ առանձնահատկություններ, բավարար չէ արդյունավետ ազգային քաղաքականություն մշակելու համար՝ քաղաքականության առաջնահերթություններ, համապատասխան մարմինների կողմից վերահսկում, գնահատում և հանրային հաշվետվողականություն ապահովելու տեսանկյունից: Այս հոդվածը նպատակ է հետապնդում ուսումնասիրել և վերլուծել միջազգայնորեն կիրառված այս մեթոդաբանությունները՝ ֆինանսական ունակությունների մակարդակի բարձրացմանն ուղղված ազգային քաղաքականության շրջանակում կիրառելու տեսանկյունից:

*Բանալի բառեր*՝ Ֆինանսական ունակություններ, ֆինանսական կրթում, ֆինանսական ներգրավվածություն, ֆինանսական գրագիտություն, ֆինանսական կայունություն

## ОЦЕНКА ФИНАНСОВОЙ ГРАМОТНОСТИ: ТЕОРИЯ И МЕЖДУНАРОДНАЯ ПРАКТИКА

**Артур Липаритович Покрикян**
Международный черноморский университет, Факультет Бизнес-администрирование с концентрацией в области финансов, асприант

### Резюме

Важность финансовой грамотности как одной из основ финансовой стабильности и финансовой вовлеченностизначительно возросла на протяжении последних лет. Многие страны начали осуществление общенациональной политики с целью повышения уровня финансовой грамотности, однако нет единого мнения относительно метод измерения финансовой грамотности. В последние годы Всемирный банк и ОЭСР провели исследования по оценке финансовой грамотности в разных странах на основе методологий разработанных ими. Эти исследования помогли получить международно сопоставимые данные, однако из-за некоторых факторов обе методологии

недостаточны для выработки эффективной политики с точки зрения приоритетности проводимой политики, мониторинга эффективности и подотчетности соответствующими органами страны перед обществом. Данная статья имеет цель исследовать и анализировать эти международныеметодологии по оценке финансовой грамотности с точки зрения сопоставимости с общенациональной политикой.

*Ключевые слова:* финансовые возможности, финансовая грамотность,финансовое образование, финансовая вовлеченность, финансовая стабильность.

# ՀՀ-ՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԲԱՆԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

***Երանոսյան Վանինե Աշոտի***
*ՀՊՏՀ, ֆինանսներ ամբիոնի դասախոս*

ՀՀ ժամանակակից բանկային համակարգի արդյունավետ զարգացման հիմնական խնդիրներից է առևտրային բանկերի և բնակչության միջև փոխադարձ հետաքրքրվածության խթանումը: Այդ նպատակով բանկերը կիրառում են բազմատեսակ գործիքներ և մեթոդաբանական մոտեցումներ, որոնցից կարևորվում են պասիվային գործառնությունները: Բնակչության ավանդների ձևավորման և տնտեսության առողջացման նպատակով դրանց օգտագործման հիմնախնդիրները դեռևս քննարկման և լուծման կարիք ունեն: Տնտեսապես զարգացած բոլոր երկրներում քաղաքացիների դրամական կուտակումներն օգտագործվում են որպես տնտեսական աճի ապահովման ռեսուրս: ՀՀ-ում նույնպես անհրաժեշտ է վարել բնակչության ունեցած կուտակումները ներգրավելու և տնտեսությունում ներդնելու ժամանակակից քաղաքականություն: Այս տեսակետով՝ հետազոտության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիների դրամական կուտակումները՝ որպես ֆինանսական շուկայի ռեսուրսների ներուժային աղբյուր, օգտագործելու համակարգը ՀՀ-ում ունի որոշակի թերություններ:

Հայաստանի Հանրապետությունում բնակչության ավանդները բանկային համակարգ ներգրավելու, դրանք ներդրումների ձևափոխելու հիմնախնդրի լուծումը պայմանավորված է ազգային տնտեսությունը մրցունակ դարձնելու անհրաժեշտությամբ: Ֆինանսական ինստիտուտների բարելավման, ավանդների ներգրավման ինստիտուցիոնալ հիմնախնդիրների բացահայտման ու հետազոտման տեսանկյունից կարևորվում է այդ ինստիտուտների, դրանց միջև ձևավորված փոխհարաբերությունների ու վերջիններիս կարգավորման դիտարկումը, դրանց բարելավմանն ուղղված գործիքակազմի ներկայացումը:

Կարևորվում են ՀՀ-ում բնակչության դրամական կուտակումների վրա ազդող գործոնների բացահայտման, բանկային համակարգ բնակչության ավանդների ներգրավման առանձնահատկությունների,

այդ գործընթացի ժամանակակից գործիքակազմի կատարելագործման, ավանդների ներգրավման քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները:

Ավանդային միջոցների արդյունավետության պահպանման համար կարևոր նշանակություն ունեն բանկի իրացվելիության ընդունելի մակարդակի, ներգրավված միջոցների բարձր եկամտաբերության ապահովումը[1]:

Բանկերի ավանդային քաղաքականության արդյունավետության գնահատման համար գիտական գրականության մեջ նպատակահարմար է համարվում հաշվարկել և օգտագործել զուտ տոկոսային մարժայի գործակիցը:

**Զուտ տոկոսային մարժա= ([1]-[2])/[3]*100% (1)**

որտեղ՝

[1] – Զուտ տոկոսային եկամուտն է, որ ստանում է բանկը տեղաբաշխված վարկերից[2]

[2] – Զուտ տոկոսային ծախսն է, որ անում է բանկը ավանդների գծով

[3] – եկամտաբեր ակտիվների միջին մեծությունն է:

Տոկոսային մարժան ցույց է տալիս ստացված և վճարված տոկոսային եկամուտների միջև տարբերությունը և թողնում է ուղղակի ազդեցություն բանկի եկամտաբերության վրա[3]:

Այսպիսի հաշվարկ, որը կներառեր ոչ թե բանկերի ընդհանուր տոկոսային եկամուտները, այլ դրանց այն մասը, որը ստացվել է ավանդների ներգրավման արդյունքում տրամադրված վարկերից, ՀՀ բանկային հաշվետվություններում չի ներկայացվում, այնինչ, մեր կարծիքով, այն կարող էր դառնալ ավանդային քաղաքականության բարեփոխումների լավագույն ուղեցույցներից մեկը: Այս ցուցանիշի մեծությունն ու փոփոխությունները կաևոր նշանակություն կունենան արդյունավետ ավանդային քաղաքականության մշակման համար:

---

1 Жилан, О.Д. Методические подходы к оценке депозитной политики коммерческого банка/О.Д. Жилан// Извести ИГЭА. – 2006. -№4, стр. 7-10.

2 Փաստացի տվյալները ՀՀ բանկային համակարգի համար, տարբերակված ըստ տեղաբաշխված վարկերի բացակայում են

3 Алавердов, А.Р. Финансовый менеджмент в банке. Учеб. пособие/А.Р. Алавердов. - М.: МЭСИ, 1999. – 100 с., стр. 78

Կարճաժամկետ վարկավորման և դրանց առավել ռացիոնալ օգտագործման նպատակով ներգրավվող ռեսուրսների գնահատման համար, միջազգային փորձում, ընդունված է հաշվարկել ավանդադրվող դրամի պահպանման միջին տևողությունն ու ավանդների տեսքով ներգրավվող ռեսուրսների նստվածքի մակարդակը:

Ավանդադրվող դրամի պահպանման միջին տևողության որոշման համար կիրառվում է հետևյալ բանաձևը՝

**Միջոցների պահպանման միջին տևողություն =[1]/[2]*[3] (2)**

որտեղ՝

[1] – ավանդների միջին մնացորդն է.

[2] – դուրս գրվող ավանդների շրջանառությունն է.

[3] – տվյալ ժամանահատվածում առկա օրերի թիվն է.

**Ավանդներում դրամական միջոցների նստվածքի մակարդակ = ([1]-[2])/[3]*100% (3)**

որտեղ՝

[1] – Ավանդի մնացորդն է տարվա վերջի դրությամբ.

[2] – Ավանդի մնացորդն է տարվա սկզբի դրությամբ.

[3] – Ավանդային հաշիվներին դրամական միջոցների մուտքերն են:

Որքան բարձր է ավանդների նստվածքի մակարդակը, այնքան բանկի համար բարենպաստ միջավայր է ստեղծվում տվյալ միջոցները վարկավորմանը ուղղելու համար: Այս ցուցանիշի աճը վկայում է այն մասին, որ ավանդային ներհոսքը գերակայում է ավանդային արտահոսքի նկատմամբ, իսկ զրոյական ցուցանիշը վկայում է ավանդներում փոփոխության բացակայության մասին:

Ավանդային քաղաքականության արդյունավետությունը բնութագրող հաջորդ ցուցանիշը չափում է ներգրավված ռեսուրսների միջին արժեքը և հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

**Ներգրավված միջոցների միջին արժեք = [1]/[2] (4)**

որտեղ՝

[1] – ռեսուրսների ներգրավման ընհանուր ծախսերն են.

[2] – տվյալ ժամանակահատվածում ներգրավված ռեսուրսների միջին մեծությունը:

Ցուցանիշը թույլ է տալիս գնահատել որոշակի ժամանակահատվածում միջոցների ներգրավման միջին ծախսը: Սովորաբար առավել թանկ ռեսուրսներ են համարվում Կենտրոնական բանկի վարկային

ռեսուրսները և միջբանկային վարկերը, իսկ ամենաէժան ռեսուրսները, բնականաբար, ցպահանջ ավանդներն են:

Ներգրավված միջոցների վրա կատարված ծախսերի ուսումնասիրության ընթացքում հաշվարկվում է ևս մեկ կարևոր ցուցանիշը, որն արտահայտվում է հետևյալ հարաբերությամբ՝

**Ներգրավված ռեսուրսների օգտագործման**
**արդյունավետություն= [1]/[2] (5)**

որտեղ՝

[1] – ռեսուրսների ներգրավման ընհանուր ծախսերն են

[2] – տոկոսային մարժան է:

Ցուցանիշը ցույց է տալիս միավոր ծախսի արդյունքում ստացված եկամուտը:

Ցուցանիշների նկարագրված համախումբը հնարավորություն է տալիս գնահատել բանկի կամ ընդհանուր բանկային համակարգի ավանդային քաղաքականության արդյունավետությունը՝ ուսումնասիրելով ստացված արդյունքները ժամանակագրական շարքերի համատեքստում կամ համեմատական վերլուծություն իրականացնելով այլ բանկերի համանուն ցուցանիշների հետ:

Բերված ցուցանիշները ընդունելի են բոլոր բանկերի համար, սակայն յուրաքանչյուր բանկ ավանդային քաղաքականություն մշակելիս կարող է համապատասխան կշիռներ տալ յուրաքանչյուր ցուցանիշին՝ ելնելով իր ռազմավարական նպատակներից, ֆինանսական կայունության ցուցանիշներից, ավանդային պորտֆելի կառուցվածքից և այլ բնութագրիչներից:

Ռազմավարական իմաստով բանկի համար կարևոր նշանակություն ունի նաև ներգրավվող միջոցների ստացման աղբյուրների կազմի և կառուցվածքի ուսումնասիրությունը, մասնավորապես ավանդային հաշվիներին մուտքերի տեսակների (կանխիկ և անկանխիկ) և աղբյուրների (աշխատավարձից մասհանումներ, թոշակից մասհանումներ, արտասահմանյան տրանսֆերտներից մասնհանումներ և այլն) ուսումնասիրությունը:

Այսպիսով՝ խնայման գործընթացի զարգացումը պետք է իրականացվի առավելագույնս հաշվի առնելով խնայողությունների ձևավորման վրա ազդող նշված գործոնները:

Ըստ առևտրային բանկերի՝ 2014-2016թթ. կանխատեսումների միջբանկային մրցակցության պայմաններում ներգրավման տոկոսադրույքները հիմնականում կունենան աճի, իսկ տեղաբաշխման տոկոսադրույքները նվազման միտում, ինչ արդյունքում կնվազի բանկերի տոկոսային մարժան: Ըստ ֆինանսական գործիքների արժույթային բացվածքի՝ բանկերը հիմնականում սպասում են ֆինանսական շուկայում արտարժութային գործիքների տոկոսադրույքների որոշակի անկում, իսկ դրամային գործիքների մասով՝ տոկոսադրույքների կայուն վիճակ[4]:

ՀՀ բանկային համակարգի բոլոր մասնակիցների ցուցանիշների հիման վրա, հեղինակի կողմից կատարված ԵՅ տարրի ստորև ներկայացվող հաշվարկը, ներկայացնում է ՀՀ առևտրային բանկերում իրականացվող քաղաքականության նպատակաուղղվածությունն ու արդյունավետությունը:

*Աղյուսակ 1*

**ՀՀ բանկային համակարգում զուտ տոկոսային մարժան 2012-2014 թթ.**

| Ցուցանիշ | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|
| [1] Զուտ տոկոսային եկամուտ *(հազ.դր[5])* | 114,563,047 | 119,455,372 | 128,966,280 |
| [2] ՀՀ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների միջին մեծություն[6] (հազ.դր) | 2,246,334,255 | 2,654,563,822 | 2,999,215,814 |
| [3]=[1]/[2]Զուտ տոկոսային մարժա (%) | 5.1 | 4.5 | 4.3 |

4 ՀՀ Բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016թթ., ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական համակարգի վերլուծությունների բաժին, Երևան, 2014թ., էջ 5

5 Ցուցանիշը հաշվարկվել է www.cba.am կայքի վիճակագրության վարչության տվյալների բանկի հիման վրա

6 Ցուցանիշը հաշվարկվել է որպես զուտ տոկոսային եկամտի և զուտ տոկոսային մարժայի հարաբերություն, ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2014, Երևան, 2015, էջ 33-34, ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2013, Երևան, 2014, էջ 33, ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2012, Երևան, 2013, էջ 34

Համաձայն ՔԱՄԵԼՍԻ հաշվարկման կարգի՝ 0%-6% ցուցանիշին համապատասխանում է 2 գնահատականը (առավելագույն գնահատականը՝ 5), որը բավականին ցածր ցուցանիշ է և վկայում է 2012-2014թթ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում ընդհանուր առմամբ առևտրային բանկերի կողմից ներգրավված և սեփական միջոցների ու հատկապես եկամտաբեր ակտիվների կառավարման ոչ բավարար մակարդակի մասին: Ընդ որում՝ ցուցանիշը տարեցտարի գրանցել է նվազման միտում՝ 2014թ.-ին պահպանելով 2013թ.-ին գրանցված նվազման միտումը:

Այս միտումները վկայում են զուտ տոկոսային մարժայի ցածր մակարդակի ձևավորման պատճառների ուսումնասիրման անհրաժեշտությունը: Կատարենք ցուցանիշը ձևավորող տարրերի առանձնացված վերլուծություն՝ հասկանալու համար Զուտ տոկոսային մարժայի անկման միտումները: Նախ քննարկենք զուտ տոկոսային ծախսերի բարձր մակարդակի ազդեցությունը զուտ տոկոսային մարժայի ցածր ցուցանիշի ձևավորման վրա:

2012-2014թթ. ՀՀ բանկային համակարգում տոկոսային ծախսերն աճել են ավելի բարձր տեմպով (10.9%, 2013թ.-ին 21.5%-ով, իսկ 2012թ.-ին՝ 36.5%-ով նախորդ տարվա համեմատ), քան տոկոսային եկամուտները (9.4%, 2013թ.-ին 12.8%-ով, իսկ 2012թ.-ին՝ 28.8%-ով նախորդ տարվա համեմատ) և ավանդները (5.5%, 2013թ.-ին 34.3%-ով, իսկ 2012թ.-ին՝ 21.2%-ով նախորդ տարվա համեմատ), ընդ որում՝ տոկոսային եկամուտներն աճել են առավելապես տնտեսությանը տրամադրված վարկերից ստացած եկամուտների աճի հաշվին: Վերջիններիս կշիռը ընդհանուր տոկոսային եկամուտներում 2014թ.-ին կազմել է 84.7%, իսկ տոկոսային ծախսերը հիմնականում աճել են ժամկետային ավանդների գծով տոկոսավճարների հաշվին: Ընդհանուր տոկոսային ծախսերում մեծ տեսակարար կշիռ ունեն ժամկետային ավանդների դիմաց և առևտրային բանկերից ու այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց տոկոսավճարների գծով ծախսերը՝ համապատասխանաբար 57.1% և 18.4%, իսկ ժամկետային ավանդների կառուցվածքում, վերջին 20 տարիների կտրվածքով, ակնհայտ գերիշխող տեսակարար կշիռ, ինչպես գիտենք, կազմում են տնային տնտեսությունների ավանդները[7]:

7 ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2014, Երևան, 2015, էջ 35

Հետևելով վերլուծության տրամաբանությանը՝ կարևորվում է ՀՀ-ում եկամտաբեր ակտիվների միջին մեծության ուսումնասիրությունը:

Ըստ միջազգային փորձում առկա նորմատիվների՝ եկամտաբեր ակտիվների մասնաբաժինը բանկի ընդհանուր ակտիվների մեջ պետք է նորմայում տատանվի 76-83% շրջանում: Եկամտաբեր ակտիվների մակարդակը որոշվում է ընդհանուր եկամտաբեր ակտիվների միջին մեծությունը հարաբերելով բանկի ընդհանուր ակտիվներին: Հեղինակի կողմից հաշվարկվել է ՀՀ բանկային համակարգի վերոնշյալ ցուցանիշը:

*Աղյուսակ 2*

**ՀՀ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների մակարդակը 2012-2014 թթ.**

| Ցուցանիշներ | 2012 | 2013 | 2014 |
|---|---|---|---|
| [1] ՀՀ բանկային համակարգի ակտիվներ *(հազ.դր)* | 2,478,000,000 | 2,944,000,000 | 3,410,584,000 |
| [2] ՀՀ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվների միջին մեծություն (հազ.դր) | 2,246,334,255 | 2,654,563,822 | 2,999,215,814 |
| [3]=[2]/[1] Եկամտաբեր ակտիվների մակարդակ (%) | 91.0 | 90.2 | 87.9 |

2012-2014թթ. տվյալների ուսումնասիրութունը ցույց է տալիս, որ ՀՀ բանկային համակարգի եկամտաբեր ակտիվներն ունեն նորմատիվ արժեքից բարձր արժեք և տատանվում են ընդհանուր ակտիվների մոտ 88%-91%-ի սահմաններում: Չնայած որ վերոգրյալ ցուցանիշի շեղումը միջազգային սահմանաչափերից կազմում է 5-8 տոկոսային կետ, սակայն հաշվի առնելով տարաշրջանային զարգացումներն ու ֆինանսական շուկաներում առկա անկայունությունը, մեր կարծիքով, նման ցուցանիշը պետք է բանկային քաղաքականության բարելավման ազդակ հանդիսանա տեղական առևտրային բանկերի համար, որոնք, ըստ ակտիվների որակի ուսումնասիրության, ցանկալի մակարդակից բարձր ռիսկեր են վերցրել իրենց վրա: Արդյունքում, ինչպես և վկայում է կատարված վերլուծությունը, 2012-2014թթ. ՀՀ բանկային

համակարգում տոկոսային մարժայի ոչ բավարար մակարդակ է գրանցվել:

Այսպիսով՝ ակտիվների որակի ուսումնասիրության և հաշվարկված երկու ցուցանիշերի ամփոփման արդյունքում պարզ է դառնում, որ ՀՀ բանկային համակարգում առկա է եկամտաբեր ակտիվների նորմատիվայինից բարձր մակարդակ, որի հետևանքով չի ապահովվում եկամտաբերության համապատասխան մարժա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է ընդգծել ՀՀ բանկային համակարգի պասիվների կառուցվածքի և ռիսկայնության գնահատման էկոնոմետրիկ վերլուծության իրականացման անհրաժեշտությունը՝ որպես հետագա ուսումնասիրության ուղղություն:

Այսպիսով՝ ամփոփելով կատարված վերլուծությունը, անհրաժեշտ է առանձնացնել հետևյալը՝

- ՀՀ բանկային համակարգում առկա է եկամտաբեր ակտիվների նորմատիվայինից բարձր մակարդակ, մասնավորպես 2012-2014թթ. այդ ցուցանիշը բարձր է եղել 5-7 տոկոսային կետով,
- ՀՀ բանկային համակարգում 2012-2014թթ գրանցվել է զուտ տոկոսային մարժայի ցածր՝ ՔԱՄԵԼՍ համակարգի 2 գնահատականին համապատասխանող ցուցանիշ,
- ՀՀ բանկային համակարգում զուտ տոկոսային մարժայի ցածր ցուցանիշը պայմանավորված է ինչպես եկամտաբեր ակտիվների բարձր մակարդակով, այնպես էլ զուտ տոկոսային ծախսերի աճով:
- Զուտ տոկոսային մարժայի բարձր ցուցանիշի ապահովման նպատակով ՀՀ առևտրային բանկերը պետք է իրականացնեն առավել արդյունավետ ավանդային քաղաքականություն՝ ապահովելով տոկոսային ծախսերի աճի տեմպից բարձր աճի տեմպ տոկոսային եկամուտների մասով, ինչպես նաև ավելի աչալուրջ հսկեն եկատմաբեր ակտիվների մակարդակը:

Հետազոտության արդյունքները ուսումնասիրելիս բացահայտվել են ՀՀ-ում դրա հետևյալ առանձնահատկությունները:

Նախ՝ չնայած բազմաթիվ քաղաքացիների խնայողությունների արժեզրկմանը, սպառողական ծախսերի մասնաբաժնի մեծացմանը բնակչության օգտագործած դրամական եկամուտների կառուցված-

քում և ֆինանսական ճգնաժամի հետևանքով բնակչության բարեկեցության անկմանը, բնակչության որոշակի մասն, այնուամենայնիվ, հնարավորություն ունի դրամական միջոցներ կուտակել:

Երկրորդ՝ ավանդադրման գործընթացը տեղի է ունենում սղաճի ազդեցության ներքո, որը բացասաբար է անդրադառնում բնակչության խնայողությունների ձևավորման վրա և ստիպում է գտնել միջոցների խնայման այնպիսի գործիքներ, որոնք առավել նվազ են ենթարկվում սղաճի ազդեցությանը:

Երրորդ՝ բանկային ավանդների մինչ ճգնաժամային մակարդակի աստիճանական վերականգնումը և ավանդների ծավալի ավելացումը չեն ուղեկցվում խնայողություններ ունեցող անձանց շրջանակի ընդլայնմամբ: Հասարակության սոցիալական կառուցվածքի փոփոխությունը հանգեցնում է խնայողությունների ծայրահեղ ձևախեղված կառուցվածքի:

Չորրորդ՝ բնակչության ազատ միջոցների ճնշող մասը մնում է «ձեռքի վրա» կամ ծախսվում է արտարժույթի գնման համար:

Հինգերորդ՝ բնակչության կուտակած միջոցների հիմնական զանգվածը, որ պատկանում է հասարակության առավել ապահով շերտերին, հիմնականում վերածվում է արտարժույթի և դուրս բերվում երկրից:

Վեցերորդ՝ ՀՀ բանկային համակարգում առկա է եկամտաբեր ակտիվների նորմատիվայինից բարձր մակարդակ, որի հետևանքով չի ապահովվում եկամտաբերության համապատասխան մարժա:

Յոթերորդ՝ արդյունավետ ավանդային քաղաքականության վարման նպատակով անհրաժեշտ է խորապես ուսումնասիրել և հաշվի առնել զուտ տոկոսային ծախսերի բարձր մակարդակի ազդեցությունը զուտ տոկոսային մարժայի ցածր ցուցանիշի ձևավորման վրա:

*Բանալի բառեր*՝ բանկ, բանկային քաղաքականություն, ավանդ, տոկոսային մարժա, եկամտաբեր ակտիվներ

**Գրականություն**

1. Жилан, О.Д. Методические подходы к оценке депозитной политики коммерческого банка/О.Д. Жилан// Извести ИГЭА. – 2006.- №4, стр. 7-10.

2. Алавердов, А.Р. Финансовый менеджмент в банке. Учеб. пособие / А.Р. Алавердов. - М.: МЭСИ, 1999.– 100 с.,
3. ՀՀ Բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2014-2016թթ., ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական համակարգի վերլուծությունների բաժին, Երևան, 2014թ., 40 էջ
4. ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2014, Երևան, 2015, 118 էջ,
5. ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2013, Երևան, 2014,120 էջ,
6. ՀՀ ԿԲ, Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը կարգավորումը, վերահսկողությունը 2012, Երևան, 2013, 120 էջ

## SOME FEATURES OF POPULATION'S DEPOSITS ATTRACTION BANKING POLICY IN RA

**Yeranosyan Vanine Ashot**
ASUE, Chair of Finance, Lecturer

### Summary

Some problems of formation of population savings in the RA banking system and their usage for the recovery of economy were presented. The importance of indicators for the estimation of bank's deposit policy was underlined, considering them as one of the main guidelines for the deposit policy improvement. The purposefulness and need for the calculation of average volume of earning assets, estimation of effectiveness of policy taken out in the RA banking system was highlighted. The features of banking policy for the attraction of population deposits in RA were revealed.

*Keywords:* Bank, banking policy, deposit, interest margin, earning assets

# НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ БАНКОВСКОЙ ПОЛИТИКИ ПРИВЛЕЧЕНИЯ ВКЛАДОВ НАСЕЛЕНИЯ В РА

**Ванине Ашотовна Ераносян**
ГЭУА, кафедра Финансов, лектор

## Резюме

Были представлены некоторые проблемы формирования сбережений населения в банковской системе РА и проблемы их использования для восстановления экономики. Значение показателей для оценки депозитной политики банка было подчеркнуто, рассматривая их в качестве одного из основных направлений по совершенствованию депозитной политики. Целесообразность и необходимость для расчета среднего объема доходных активов, оценки эффективности политики, принятых в банковской системе РА. Выявлены особенности банковской политики по привлечению вкладов населения в РА.

*Ключевые слова:* Банк, банковская политика, депозит, процентная маржа, доходные активы

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ

***Մկրտչյան Լիանա Հովհաննեսի***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և*
*կառավարման ամբիոն, ասպիրանտ*

Սոցիալական պաշտպանությունը պետության սոցիալական քաղաքականության հիմնաքարերից մեկն է, որն ուղղված է հաստատելու և պահպանելու բնակչության բոլոր անդամների համար անհրաժեշտ սոցիալական և նյութական կարգավիճակները[1]:

Երբեմն սոցիալական պաշտպանությունը սահմանում են ավելի նեղ. այն ապահովում է բնակչության այն խմբերի նյութական կարիքները, որոնք այս կամ այն պատճառով չեն կարող ապահովել դրանք, այդ խմբերն են՝ գործազուրկներ, տարեցներ, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ, հաշմանդամներ, միայնակ մայրեր և այլն: Սակայն ներկայումս «Սոցիալական պաշտպանության» հասկացությունը ենթադրում է ոչ այնքան նյութական օգնության տրամադրում, որքան ընդհանուր բարեկեցության ապահովում և սոցիալական ռիսկերի նվազեցում:

Սոցիալական պաշտպանության հիմնական սկզբունքներն են՝

- մարդասիրություն
- հասցեականություն
- համակարգվածություն
- մարդու իրավունքների և ազատությունների ապահովում[2]:

Սոցիալական պաշտպանության համակարգը ստեղծվել է, որպեսզի արձագանքի բնակչության օր օրի մեծացող խնդիրներին, դրանց լուծման նյութական ռեսուրսների, մասնագիտական պատրաստվածության և այդ համակարգի կառավարման մեխանիզմների սակավությանը: Սոցիալական պաշտպանության համակարգը տարբեր ժամանակաշրջաններում ունեցել է տարբեր ուղղվածություններ. սկզբում այն կենտրոնացված էր բնակչության միայն նյութական կա-

[1] Лебедев О. Т., Язвенко С. А., Социальная защита населения, СПб., 1999, с. 91-92
[2] Room G., The sociology of welfare, Martin Robertson, Oxford, p. 158

րիքների վրա, իսկ այժմ որոշ երկրներում ներառում է նաև սոցիալ-հոգեբանական կարիքները:

Զարգացած երկրներում սոցիալական պաշտպանության համակարգը՝ որպես ինստիտուտ, ձևավորվել է շատ ավելի վաղ, քան Հայաստանում, ինչը կապված է տվյալ երկրի բնակչության սոցիալ-տնտեսական զարգացման առանձնահատկությունների, օրենսդրական նորմերի և սկզբունքների հետ: Տարբեր երկրների տնտեսական և սոցիալական ոչ բարվոք պայմանները հանգեցրին սոցիալական քաղաքականության ծրագրերի լայն ներկապնակի ստեղծմանը՝ ուղղված սոցիալապես խոցելի խմբերի կարիքների բավարարմանը և ընդհանուր հասարակության սոցիալական զարգացման համար տեխնոլոգիաների և մեթոդների ձևավորմանը:

Անգլիայի Հարթֆորդշիր համալսարանի միջմասնագիտական սոցիալական հետազոտությունների և առողջապահության ամբիոնի պրոֆեսոր Շուլամիտ Ռամոնը իրականացրել է Արևմտյան և Արևելյան Եվրոպայի սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման ընդհանրությունների ու առանձնահատկությունների վերլուծություն[3]: Ռամոնը գտնում էր, որ Արևմտյան Եվրոպայում փոփոխությունները ընթանում էին հետևյալ ուղղությամբ. շուկայական տնտեսության գաղափարի ներթափանցում սոցիալական ծառայությունների ոլորտ, կամավորական (ոչ կառավարական) հատվածի զարգացում, սոցիալական ծառայություն մատուցելիս ինքնաակտիվացման սկզբունքի կիրառում, սոցիալական ոլորտի հաստատությունների վերաամրացում և դրանցից օգտվող մարդկանց կարիքներին հնարավորինս մոտ լինելու միտում, Եվրոպական համայնքի միջոցով մեկ ընդհանուր սոցիալական քաղաքականության ձևավորում և այլն: Ռամոնը կարծում էր, որ արևմտյան Եվրոպայում նման գործընթացները ինչ-որ առումով համընկնում են Արևելյան Եվրոպայի հետ. այստեղ ևս նկատելի է շարժ դեպի շուկայական տնտեսություն և կամավորական հատվածի զարգացում: Միաժամանակ նկատելի է նաև նոր կամ նորացված գործընթացների ներդրում սոցիալական ոլորտ, որտեղ հիմնականում բացակայում էին որակավորված մասնագետները, նոր գործընթացներում ներգրավվում էին քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների արդյուն-

[3] Рамон, Ш. Предисловие // Взаимосвязь социальной работы и социальной политики / Ш. Рамон.– М.: Аспект–Пресс, 1997. С. 3-9

քում գործազուրկ դարձած մասնագետները, ինչը տեղի էր ունենում Արևելյան Եվրոպայում 90-ականներին:

Սոցիալական պաշտպանության համակարգի որակական ցուցանիշները զգալիորեն կախված են երկրի տնտեսության զարգացման մակարդակից, իսկ անձանց միջև փոխհարաբերությունների կարգավորումը և պետական ինստիտուտների մասնակցության աստիճանը մարդկանց կարիքների բավարարման հարցում կախված է երկրի կողմից ընտրված սոցիալ-տնտեսական մոդելից:

Պատմական, մշակութային, քաղաքական և այլ գործոնների ազդեցությամբ միևնույն զարգացվածություն ունեցող երկրներում գոյություն ունեն տարբեր աստիճանների համերաշխություն և պետական ինստիտուտների տարբեր աստիճանի մասնակցություն:

Լիակատար համերաշխությունը ենթադրում է ներդրման և արտոնություն ստանալու կապի բացակայություն, այսինքն՝ եթե առկա է աջակցության ծրագիր, ապա օգնության իրավունք տրվում է դրա կարիք ունեցող մարդուն՝ անկախ նրա կատարած ներդրումներից և վճարներից:

Ֆինանսական ծանրաբեռնվածությունը դրված է բոլոր հարկատուների ուսերին, իսկ սոցիալական պաշտպանության իրավունք ունեն բոլոր քաղաքացիները: Այսպիսի համակարգում ֆինանսավորում է պետբյուջեն, իսկ կարգավորում իրականացնում է պետությունը: Սոցիալական համերաշխության վրա հիմնված երկրներում սոցիալական ապահովագրության նվազագույն մակարդակ հատկացվում է բոլոր քաղաքացիներին: Իսկ համերաշխության սահմանափակման պարագայում աջակցություն ստանալու մարդկանց իրավունքը կախված է նրանց կատարած վճարներից: Սոցիալական աջակցություն տրամադրվում է հիմնականում բնակչության առանձին խմբերին: Բացի այդ գոյություն ունեն համակարգեր, որտեղ բացակայում է համերաշխությունը, ինչը ենթադրում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ինքն է ներդրում կատարում, որն ուղիղ համեմատական է ռիսկային իրավիճակում նրան տրվող աջակցությանը:

Սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման միջազգային փորձը կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղություններով՝ եվրոպական (Շվեյցարիա, Գերմանիա, Անգլիա), սկանդինավյան, ամերիկյան (Կանադա, ԱՄՆ), լատինամերիկյան և ասիա-

կան: Սոցիալական պաշտպանության համակարգում առավելագույն պետական մասնակցություն ունեցող երկրներից են Ֆրանսիան, Իտալիան, Բելգիան, Գերմանիան, Ավստրիան, Ճապոնիան[4]:

Պետության նվազագույն մասնակցության և սոցիալական պաշտպանության մեխանիզմների մեծամասնությունը մասնավոր հատվածին փոխանցած երկրներից են Լատինական Ամերիկայի երկրները: Իսկ ԱՄՆ-ի շատ նահանգներում, Մեծ Բրիտանիայում, Արգենտինայում, Հոլանդիայում, Դանիայում, Շվեդիայում, Լեհաստանում և Լիտվայում կիրառվում է սոցիալական պաշտպանության խառը մոդելը[5]:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Գերմանիայում:** Սոցիալական ապահովագրության մոդելը կորպորատիվ-պահպանողական է, ֆինանսավորումը՝ բաշխողական: Այս երկրի սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկություններն են.

- սոցիալական ապահովագրության համակարգում որոշիչ դերը պատկանում է պարտադիր սոցիալական ապահագրության ինստիտուտին, որին բաժին է գալիս բոլոր ֆինանսական ռեսուրսների 70%-ից ավելին,
- նպաստների և կենսաթոշակի չափը մոտ 60-70%-ով պայմանավորված է ներդրումների չափով,
- բարեգործական ինստիտուտներ, որոնք ունեն ընդհանուր սոցիալական պաշտպանության համակարգին աջակցող բնույթ,
- պարտադիր ապահովագրություն, որը ներառում է ոչ միայն տարեցության կենսաթոշակ, հաշմանդամության նպաստ, խնամողի նպաստ, այլ նաև վերականգնողական ծառայություններ:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Մեծ Բրիտանիայում:** Սոցիալական ապահովագրության մոդելը նեոազատական է, ֆինանսավորումը՝ բաշխողական:

Մեծ Բրիտանիայում սոցիալական ապահովագրությունը ներառում է պարտադիր սոցիալական ապահովագրության ողջ համակարգը, կենսաթոշակի, գործազրկության, հիվանդության նպաստներ: Այս

---

[4] Попов А.А., Частные пенсионные системы в США. Труды Института США и Канады: аналитическая записка. М., 2003

[5] http://www.theguardian.com/politics/2015/apr/15/which-best-countries-live-unemployed-disabled-benefits

համակարգն ունի իր պաշտոնական անվանումը, «Սոցիալական ապահովագրության ազգային համակարգ» և հիմնված է ներդրում-արտոնություն սկզբունքի վրա: Սոցիալական պաշտպանության այս մոտեցումը առաջարկել է անգլիացի գիտնական Բեվերիջը 1944 թ.-ին և ստացել է օրենսդրական իրագործում Ազգային ապահովության ակտում 1946 թ.-ին: Դրա հիմնական էությունը կայանում է նրանում, որ սոցիալական աջակցության հիմնական տեսակները պետք է լինեն հանրամատչելի, որի ֆինանսավորումը գոյանում է ֆիքսված ներդրումների շնորհիվ, իսկ չափը միանման է բոլորի համար:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Ֆրանսիայում:** Սոցիալական ապահովագրության մոդելը պահպանողական-կորպորատիվ է, ֆինանսավորումը՝ բաշխողական:

- **սոցիալական օգնություն**, որը գոյանում է պարտադիր սոցիալական վճարների, հարկերի, մեքենաների ապահովագրությունների, ակցիզավորման և այլնի միջոցով:

Ֆրանսիայի սոցիալական պաշտպանության համակարգը ներառում է երկու հիմնական ինստիտուտ.

- **սոցիալական ապահովագրություն**, որը գոյանում է գործատուների (զբաղվածության վճարման ֆոնդի մինչև 40%-ը) և աշխատողների (ՀՎՖ-ի 15%-ը) պարտադիր ներդրումներից: 3 ազգային (կենսաթոշակ, բուժօգնություն, ընտանեկան նպաստներ) գանձապետարանի տարեկան բյուջեն կազմում է 1850 մլդ ֆրանկ:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Շվեդիայում:** Սոցիալական ապահովագրության մոդելը սոցիալ-ժողովրդավարական է, ֆինանսավորումը՝ մասնակի կուտակային:

Սոցիալական ապահովագորության համակարգը ֆինանսավորվում է ընդհանուր հարկային եկամուտների բյուջեի միջոցով (վերցվում է բարձր եկամուտ ունեցող խմբերի մինչ 65% եկամուտը):

Սոցիալական քաղաքականությունը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

- հավասարություն և համերաշխություն
- բնակչության սոցիալական աջակցության հասանելիության և որակի բարձր աստիճան,

- պարտադիր սոցիալական ապահովության ծառայությունները մատուցվում են հիմնականում պետության կողմից: Համընդհանուր բարեկեցության և սոցիալական երաշխիքների բարձր մակարդակը ապահովվում է շվեդական կառավարության մեծ ջանքերի շնորհիվ: Այս նպատակով երկրում գործում է աճող հարկային համակարգ:

Շվեդիայում սոցիալական ծախսերը կազմում են պետության ծախսերի մոտ 50%-ը, կենսաթոշակը կազմում է աշխատած գումարի չափի 65-75%-ը, իսկ աշխատունակության կորստի դեպքում՝ մինչ 90%-ը:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները ԱՄՆ-ում**: Սոցիալական ապահովագրության մոդելը նեոռազատական է, ֆինանսավորումը՝ մասնակի կուտակային:

ԱՄՆ-ի սոցիալական ապահովագրության ներկայիս համակարգը բավականին ճկուն և բարդ է: Դրա բնութագրիչ առանձնահատկությունն է ապակենտրոնացվածությունը: Այն բաղկացած է տարբեր սոցիալական ծրագրերից, որոնք կարգավորվում են կա՛մ դաշնային օրենսդրությամբ, կա՛մ նահանգային կառավարման մարմինների կողմից: Այս մոտեցումը թույլ է տալիս օպերատիվ և համապարփակ կերպով գնահատել կոնկրետ շրջանի բնակչության կարիքները: Սոցիալական ապահովության օրենքի համաձայն՝ 1935թ.-ից սկսած սահմանվել են աջակցության հետևյալ տեսակները՝ կենսաթոշակային և գործազրկության, աղքատության, հաշմանդամության, ծնողազրկության նպաստներ: Ժամանակի ընթացքում օրենքը շատ է բարեփոխվել՝ ներառելով նաև հետևյալ ծրագրերը՝ նորածնի նպաստ, անաշխատունակության նպաստ, 65 տարեկանից հետո առողջապահական ապահովագրության իրավունք և այլն: Բոլոր այս բարեփոխված սոցիալական ապահովության տեսակները ընդունվել են որպես Ընդհանուր դաշնային ծրագիր: ԸԴԾ-ի կողմից տրամադրվող բոլոր արտոնությունները և նպաստները ֆինանսավորվում են սոցիալական ապահովագրության վճարներից, որը գոյանում է աշխատողների և ձեռնարկատերերի աշխատավարձերից:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Ռուսաստանում:** Սոցիալական ապահովագրության մոդելը պահպանողական-կորպորատիվ է, ֆինանսավորումը՝ բաշխողական:

ՌԴ-ի սոցիալական ապահովագրության հիմքում ընկած սկզբունքներն են.

- սոցիալական ապահովագրությունը պարտադիր է բոլոր քաղաքացիների համար և կարգավորվում է պետության կողմից,
- աշխատողները և գործատուները կատարում են վճարումներ պետության կողմից տրամադրվող աջակցությանը ի լրացում:
- սոցիալական ապահովագրության ֆոնդի չափը որոշվում է հասարակական ստանդարտ մակարդակի և որակի կենսակերպ ապահովելուն համապատասխան,
- սոցիալական նպաստներ ստանալու իրավունքը որոշվում է անհատի կողմից կատարած ներդրումների քանակի և տվյալ պահին ռիսկային իրավիճակում գտնվելու հանգամանքներով:

Պարտադիր սոցիալական ապահովագրությունը ներառում է.

- կենտրոնացված, կազմակերպված և վերահսկվող պետական աջակցություն.
- պարտադիր սոցիալական ապահովության ապակենտրոնացված ձևը, որը կազմակերպվում և իրականացվում է մասնավոր ու հասարակական հատվածի կողմից և կարգավորվում է դաշնային օրենսդրությամբ[6]:

**Սոցիալական ապահովագրության համակարգի առանձնահատկությունները Հայաստանում:** Սոցիալական ապահովագրության մոդելը պահպանողական-կորպորատիվ է, ֆինանսավորումը՝ բաշխողական:

Սոցիալական վճարումների կատարումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին օրենքով (որն ընդունվելէ 26.12.1997 թ.-ին և փոփոխվել գրեթե ամեն տարի մինչև 2012 թ.) և Հայաստանի Հանրապետության օրենսդրական այլ ակտերով:

***Սոցիալական աջակցության կազմակերպման եւ տրամադրման հիմնական սկզբունքներն են՝***

- երեխաներին սոցիալական աջակցություն տրամադրելու առաջնահերթություն
- հասցեականություն
- համագործակցություն

[6] http://cyberleninka.ru/article/n/opyt-funktsionirovaniya-sistem-sotsialnoy-zaschity-zarubezhnyh-stran

- մատչելիություն
- համարժեքություն եւ շարունակականության ապահովում
- համալիրություն՝ տարատեսակ սոցիալական ծառայությունների զուգակցված տրամադրումը.
- թափանցիկություն
- սոցիալական խնամառության բացառում՝ անձի ակտիվության դրսևորման և ինքնօգնության ունակությունների զարգացում սոցիալական աջակցությունից շարունակական կախվածություն բացառելու համար.
- մարդու արժանապատվություն[7]:

***Սոցիալական վճարումներ կատարում են՝***

- գործատուները
- վարձու աշխատողները
- անհատ ձեռներեցները
- գիտական և ստեղծագործական աշխատանքով զբաղվող անձինք,
- գյուղացիական տնտեսությամբ զբաղվող անձինք[8]:

***Սոցիալական ծառայությունների հիմնական տեսակներն են՝***

1) խորհրդատվական օգնության տրամադրում
2) վերականգնողական օգնության տրամադրում
3) դրամական օգնության տրամադրում
4) բնաիրային օգնության տրամադրում
5) ժամանակավոր օթևանի տրամադրում
6) խնամքի կազմակերպում
7) իրավաբանական օգնության տրամադրում
8) սոցիալական ծառայությունների՝օրենքով չարգելված այլ տեսակներ[9]:

ՀՀ-ում բնակչությանը տրամադրվող սոցիալական արտոնությունները կախված են նրանց կատարած ներդրումներից, սակայն կան ա-

---

[7] Հայաստանի Հանրապետության օրենքը սոցիալական աջակցության մասին, ընդունված 24.10.2005

[8] Հայաստանի Հանրապետության օրենքը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին՝ ընդունված 26.12.1997

[9] Հայաստանի Հանրապետության օրեենքը սոցիալական աջակցության մասին՝ ընդունված 24.10.2005

ջակցության որոշ տեսակներ, որոնք տրամադրվում են ՀՀ բոլոր քաղաքացիներին:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, սոցիալական պաշտպանության ամենաարդյունավետ համակարգերը խառը տիպի են, քանի որ դրանցում օգտագործվում են պետական, մասնավոր և հասարակական հատվածների ներուժը, որը հիմնված է համերաշխության և անհատականության արժևորման վրա: Սովորաբար խառը համակարգերը ներառում են հետևյալ հիմնական տարրերը.

- սոցիալական ապահովություն՝ կենսաթոշակ, հաշմանդամության, գործազրկության նպաստներ և այլն,
- ծառայություններ, որոնք մատուցում է պետությունը և/կամ հասարակական կազմակերպությունները՝ սոցիալական աշխատանքի շրջանակներում մատուցվող ծառայություններ,
- հիմնական ապահովություն, սնունդ, բնակարան, կրթություն, դեղորայք, գումար և այլն[10]:

Հաշվի առնելով վերը քննարկածը՝ կարելի է ասել, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանության համակարգի կառավարումը իրականացվում է՝ աշխարհում տեղի ունեցող տնտեսական գործընթացների ազդեցությունը կրելով: Հաշվի առնելով ՀՀ-ի առանձնահատկությունները այս ոլորտում և ուսումնասիրելով միջազգային փորձը՝ նպատակահարմար է զարգացնել սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման խառը տիպի մոդելը, որը թույլ է տալիս ուժեղացնելով մարդու անհատական ներուժը և օգտագործելով պետական, մասնավոր, հասարակական հատվածների կողմից տրամադրվող աջակցությունները՝ հասնել առավելագույն արդյունքի: Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման համար անհրաժեշտ է մեծացնել բյուջետային հատկացումները, բարձրացնել սոցիալական ծառայություններ մատուցող մասնագետների որակավորումը, իրականացնել պարբերական վերահսկողություններ՝ սկսած սոցիալական քաղաքականություն մշակելուց մինչև դրա իրականացում և հետադարձ կարծիքների քննարկում: Անհրաժեշտ է ուժեղացնել պետական, մասնավոր և հասարակական հատվածների միջև համագործակցությունը:

10 https://en.wikipedia.org/wiki/Social_security

Կարևոր է նաև ուշադրություն դարձնել սոցիալական պաշտպանության համակարգում ներառված մասնագետների որակավորմանը:

*Բանալի բառեր.* սոցիալական պաշտպանություն, սոցիալական պաշտպանության համակարգի կառավարում, սոցիալական ապահովագրություն, սոցիալական քաղաքականություն, սոցիալական ծառայություն:

## Գրականություն


1. Հայաստանի Հանրապետության օրենքը սոցիալական աջակցության մասին՝ ընդունված 24.10.2005
2. Հայաստանի Հանրապետության օրենքը պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին՝ ընդունված 26.12.1997
3. Лебедев О. Т., Язвенко С. А., Социальная защита населения, СПб., 1999
4. Рамон, Ш. Предисловие // Взаимосвязь социальной работы и социальной политики / Ш. Рамон. – М.: Аспект–Пресс, 1997
5. Попов А. А., Частные пенсионные системы в США. Труды Института США и Канады: аналитическая записка. М., 2003
6. Room G., The sociology of welfare, Martin Robertson, Oxford
7. http://www.theguardian.com/politics/2015/apr/15/which-best-countries-live-unemployed-disabled-benefits 30.03.2016
8. http://cyberleninka.ru/article/n/opyt-funktsionirovaniya-sistem-sotsialnoy-zaschity-zarubezhnyh-stran 11.04.2016
9. https://en.wikipedia.org/wiki/Social_security 11.04.2016


## ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ СИСТЕМОЙ СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ В РАЗВИТЫХ СТРАНАХ И РА


**Лиана Оганесовна Мкртчян**

ЕРОА, кафедра управления и экономики, аспирант


### Резюме


Институциализация социальной защиты населения за рубежом происходила значительно раньше, чем в Армении, что связано с осо-

бенностями социально-экономического развития и потребностями жителей каждой страны, нормами и принципами законодательства. Различные экономические и социальные обстоятельства привели к широкой палитре специфических мер социальной политики, технологий и методик для поддержания жизнедеятельности социально уязвимых групп населения, обеспечения социального развития общества в различных странах мира.

*Ключевые слова:* социальной защиты, управления системой социальной защиты, социальное страхование, социальная политика, социальное обслуживание.

## THEPECULIARITIES INTHE MANAGEMENT OF THE SOCIAL WELFARE SYSTEM IN DEVELOPED COUNTRIES AND IN THE RA

**Liana Hovhannes Mkrtchyan**
EREA, Chair of Economics and
Management, PhD student

### Summary

The institutionalization of social protection system took place much earlier in developed countries than in Armenia, due to the peculiarities of the socio-economic development and the needs of the inhabitants in each country, rules and principles of legislation. Various economic and social circumstances have led to a broad palette of specific social policies, technologies and methods to sustain life for socially vulnerable groups of the population, ensuring the social development of society in the various countries of the world.

*Keywords:* social welfare, management of social welfare system, social insurance, social policy, social service.

# ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐՈՒՄ

***Հրանտ Աշոտի Դավթյան***
*ԵՊՏՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ասպիրանտ*

Տվյալների վերլուծությունը գործարար որոշումների կայացման գործընթացի կարևոր բաղադրիչն է: Թվային տեխնոլոգիաների զարգացումը հնարավոր և հեշտ է դարձնում տվյալների անընդհատ և ինքնավար հավաքագրումը: Համաձայն հանրաճանաչ IBM կազմակերպության կայքի՝ միայն վերջին երկու տարիներին ամբողջ աշխարհում կուտակված տվյալներն իրենց ծավալով ավելի քան 9 անգամ գերազանցում են մինչ այդ հավաքագրված տվյալներին[1]: Նման մեծածավալ բազայի գոյության արդյունքում այդ տվյալների հետ աշխատող մասնագետների կտրուկ պահանջարկ է ձևավորվել: Համաձայն Համաշխարհային տնտեսագիտական ֆորումի տվյալների՝ 2015թ. ամենաբարձր աշխատանք-ազատ ժամանակ հաշվեկշիռ ունեցող 25 հաստիքներից առաջինը տվյալագետի հաստիքն է (data scientist)[2]: Ցուցակում տեղ է զբաղեցրել նաև տվյալների վերլուծաբանը (data analyst): Հռչակավոր Forbes ամսագրի կողմից հրապարակված «2016թ.-ի լավագույն աշխատանքները» հոդվածում տվյալագետները ներկայացվում են որպես 2015թ. ամենաբարձր միջին աշխատավարձ գրանցող մասնագետներ[3]: Այստեղ նույնպես տվյալների վերլուծաբանները իրենց տեղն են գտել առաջին տասնյակում: Հարկավոր է նշել, որ տվյալաբանի և տվյալների վերլուծաբանի աշխատանքի բնույթը գրեթե նույնն է, իսկ նպատակը՝ տվյալներից օգտակար տեղեկատվության քաղումը՝ բիզնես որոշումների կայացման նպատակով: Այս երկու հաստիքների միջև առկա աշխատվարձային անդունդը, թերևս, մեկ այլ հետազոտության թեմա կարող է հանդիսանալ: Սակայն մեկ բան ակնհայտ է. տվյալագետների վրա դրված պատասխանատվությունը միջինում էապես գերազանցում է տվյալների վերլուծաբանների

---

1 http://www-01.ibm.com/software/data/bigdata/what-is-big-data.html
2 https://www.weforum.org/agenda/2015/10/worlds-best-job-the-answer-might-surprise-you/
3 http://www.forbes.com/sites/karstenstrauss/2016/04/14/the-best-jobs-in-2016/#1301d55c4f67

պատասխանատվության սահմանաչափը: Ելնելով սույն հետազոտության նպատակներից՝ հանուն պարզեցման, այսուհետ տվյալաբանի և տվյալների վերլուծաբանի միջև տարբերություններ չեն դրվի՝ դիտարկելով նրանց որպես վերլուծական նպատակներով վարժված վիճակագրական, տնտեսագիտական և հաշվողական գիտելիքներ ունեցող անձիք:

Վարկանիշային աղյուսակում գրանցված նման հաջողությունները պայմանավորված են աhռելի պահանջարկով, որը ձևավորվել է տվյալագետների գործունեության բազմաբնագավառության և նրանց կողմից օգտագործվող գործիքների բարձր կիրառելիության արդյունքում: ՀՀ առևտրային բանկերում և ֆինանսական ոլորտի այլ հաստատություններում տվյալների վերլուծական մեխանիզմներից ոչ բոլորն են կիրառելի: Ստորև բերված են ՀՀ ֆինանսական ոլորտում տվյալագիտության հնարավոր **կիրառությունները**.

1) Վարկունակության գնահատում – ՀՀ առևտրային բանկերի, վարկային կազմակերպությունների և այլ ֆինանսական հաստատությունների կողմից վարկառուի վարկունակության գնահատումը հիմնականում իրականացվում է վարկային մասնագետի սուբյեկտիվ կարծիքի հիման վրա: Զարգացած ֆինանսական շուկա ունեցող երկրները արդեն վաղուց անցում են կատարել վարկային հայտի ավտոմատացված գնահատման մոտեցմանը, որը թույլ է տալիս տվյալների վերլուծության միջոցով գնահատել դիմորդի վարկունակությունը: Այս մոտեցումը լուծում է մի շարք խնդիրներ, որոնցից հատկանշական է առանձնացնել հետևյալ 3-ը.

i. Որոշումը կայացվում է և՛ վարկային մասնագետի, և՛ վերլուծության արդյունքում ստացված գնահատականների հիման վրա: Արդյունքում հնարավորություն է ստեղծվում նվազեցնել վարկային մասնագետի սուբյեկտիվ գնահատականի հետևանքով առաջացված ռիսկերը:
ii. Բավականաչափ բարձր ռիսկայնություն ունեցող հայտատուները ինքնաբերաբար մերժվում են՝ առանց վարկային մասնագետի միջամտության: Այսպիսով՝ առևտրային բանկը խնայում է միջոցներ, որոնք այլապես ստիպված էր օգտագործել ապագայում բացասական պատասխանի արժանացող հայտադիմումի վերլուծության համար:

iii. Հնարավորություն է ստեղծում բացահայտել հայտատուների տարբեր խմբեր և վերջիններիս ցուցաբերել տարբերակված մոտեցում:

2) Աշխատակիցների խրախուսում – ժամանակի ընթացքում աշխատակիցներն ունեն խրախուսման կարիք: Կազմակերպության համար դրամական բոնուսները և աշխատավարձի բարձրացումը ծախսատար են, սակայն որակյալ աշխատողների կորուստը կարող է ավելի ծախսատար լինել: Այդ իսկ պատճառով կարևոր է տեղյակ լինել աշխատողների բավարարվածությունից և կազմակերպությունում բարձր արտադրողականությամբ շարունակական աշխատանքի պատրաստակամությունից: Մի շարք ՀՀ կազմակերպություններ անց են կացնում հարցումներ, որպեսզի պարզեն աշխատողների վերաբերմունքը իրենց աշխատանքի նկատմամբ և ծանոթանան նրանց ակնկալիքներին: Սակայն միշտ չէ, որ այդ հարցումները տալիս են սպասված արդյունքը, քանզի մի շարք մարդիկ գերադասում են չբարձրաձայնել վերոնշյալ խնդիրների մասին: Ընկերության տվյալները իրենց նախկին աշխատողների մասին կարող են հուշել, թե արդյոք ներկայիս աշխատողները բավարարված են, թե ոչ:

3) Հաճախորդների սեգմենտավորում – սովորաբար նոր հաճախորդների գրավելն անհամեմատելիորեն ավելի ծախսատար է, քան ներկայիս հաճախորդներին շարունակական ծառայությունների մատուցման պարագայում որոշակի զեղչերի տրամադրումը: Ֆինանսական հաստատությունը պետք է կատարի ծախսերի և ձեռքբերումների վերլուծություն, որպեսզի պարզի, թե արդյոք տվյալ հաճախորդից ստացվող սահմանային եկամուտը գերազանցում է նրան խրախուսելու համար կատարվող ծախսերը, թե ոչ: Նման հաշվարկների իրականացման համար նույնպես անհրաժեշտ է հաջորդող ժամանակահատվածում տվյալ հաստատության ծառայություններից հաճախորդի օգտվելու հավանականության գնահատումը, որն իրականացվում է նմանատիպ այլ հաճախորդների մասին ունեցած տվյալների հիման վրա:

Համաշխարհային ֆինանսական շուկայում տվյալագիտությունը նույնպես բազմազան կիրառություններ ունի: Վերոնշյալ ծառայություններից բացի՝ վարքագծային ֆինասների ոլորտում գործող առաջատար կազմակերպություններից երկուսը (Think Big Analytics և MarketPsych Data) մատուցում են հետևյալ ծառայությունները.

1. Կարծիքների վերլուծություն – այս երկու կազմակերպություն-ները ստեղծում են ալգորիթմ, որը շրջում է որոշակի վեբկայքերով և վերադարձնում այնտեղ հրապարակված կարծիքները: Օրինակ, եթե ալգորիթմի հետազոտության արդյունքում պարզ դառնա, որ օգտա-տերերի մեծամասնությունը հակված է մտածել, որ շուտով գնաճ է տե-ղի ունենալու, ապա նրանք ավելի հակված կլինեն իրենց ավանդները ետ ստանալ: Նման հաճախորդներին կազմակերպությունը կարող է ավելի լավ պայմաններ առաջարկել, որպեսզի չհրաժարվեն ավանդի ժամկետի երկարաձգումից:

2. Նորությունների վերլուծություն – շուկայում տեղի ունեցող փո-փոխություններն էականորեն ազդում են կազմակերպության վաճառք-ների վրա: Օրինակ, Apple ընկերության կողմից նոր iPhone հեռախո-սի թողարկումը սպառողական վարկերի մեծ պահանջարկ կարող է առաջացնել: Նման մրցակցային շուկայում այդ պահանջարկը առաջի-նը բավարարելու նպատակով վարկային կազմակերպություններն ու առևտրային բանկերը վճարում են Think Big Analytics-ի[4] և MarketPsych Data-ի[5] նման կազմակերպություններն, որպեսզի նրանց ալգորիթմի միջոցով հետևեն նորություններին և ժամանակին տեղեկանան նման միջոցառումների մասին:

Վերոնշյալ ծառայությունները ընդամենը մի քանիսն են տվյալ ո-լորտի կազմակերպությունների կողմից առաջարկվող ծառայություննե-րից: ՀՀ ֆինանսական շուկան դեռևս այնքան չի զարգացել կարծիքնե-րի և նորությունների վերլուծության անհրաժեշտությունը զգալու հա-մար: Օրինակ՝ նույն Apple ընկերության կողմից թողարկվող iPhone հե-ռախոսը ՀՀ-ում վաճառվում է թողարկումից միջինում 1-2 ամիս անց: Այդ ժամանակահատվածը բավարար է ֆինանսական կազմակերպու-թյունների համար իրենց վարկային քաղաքականությունը վերանայելու համար՝ առանց ալգորիթմների օգտագործման: Իսկ ահա մյուս 4 գոր-ծիքների կիրառությունը արդեն իսկ պահանջված է և կարող է մրցակ-ցային առավելություն ապահովելու կարևոր երաշխիք դառնալ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների համար:

*Առանցքային բառեր.* տվյալների վերլուծություն, տվյալագիտու-թյուն, ֆինանսական շուկա, հաճախորդների սեգմենտավորում:

---

4 www.marketpsych.com

5 www.thinkbiganalytics.com

### Գրականություն

1. http://www-01.ibm.com/software/data/bigdata/what-is-big-data.html
2. https://www.weforum.org/agenda/2015/10/worlds-best-job-the-answer-might-surprise-you/
3. http://www.forbes.com/sites/karstenstrauss/2016/04/14/the-best-jobs-in-2016/#1301d55c4f67
4. www.marketpsych.com
5. www.thinkbiganalytics.com

## THE APPLICATIONS OF DATA ANALYSIS IN FINANCIAL MARKETS

**Davtyan Hrant Ashot**
EREA, PHD student, chair of economics and manengment

### Summary

Data analysis as a mechanism for business decision making is applied in different sectors of the economy. Due to the modern technological advancement continuous data collection is making analytics and data-driven decision making more and more important. This paper presents the applications and potential of data analysis in financial sector underlying its importance. The best international experience has been observed and compared to the local market. This paper presents the main problems that companies and organizations operating in the financial sector can solve using the power of data.

*Keywords*: data analysis, data science, financial sector, customer churn.

## ПРИМЕНЕНИЕ АНАЛИЗА ДАННЫХ В ФИНАНСОВЫХ РЫНКАХ

**Давтян Грант Ашотович**
ЕОРА, кафедра экономики и управления, аспирант

### Резюме

Анализ данных в качестве механизма для принятия бизнес-решений применяется в различных секторах экономики. Благодаря современному технологическому прогрессу непрерывный сбор данных делает аналитику и применение решений на основе данных все более и более важным. В данной статье представлены приложения и потенциал анализа данных в финансовом секторе, подчеркивая его важность. Лучший международный опыт был наблюден и сравнен с местным рынком. В данной статье представлены основные проблемы, которые компании и организации работающие в финансовом секторе могут решить, используя мощь данных.

*Ключевые слова:* анализ данных, наука о данных, финансовый сектор, отток клиентов.

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՐԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

***Լևոն Դավթի Գևորգյան***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, ասպիրանտ*

20-րդ դարի 60-ական թվականներից սկսած՝ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) զարգացումը նախադրյալներ ստեղծեց հետագա տասնամյակներում կազմակերպություններում ՏՏ-ի կիրառման միջոցով բարձրացնել վերջիններիս գործունեության արդյունավետությունը՝ ավտոմատացնելով նրանց բիզնես գործընթացները և խնայելով մարդկային ու նյութական զգալի ռեսուրսներ: Արդեն 21-րդ դարի իրականությունում կազմակերպություններում ՏՏ-ի կիրառումը առավել լայնածավալ բնույթ է կրում՝ դառնալով նրա գործունեության շարունակականության և շուկայական մրցակցության դիմակայման ապահովման անհրաժեշտ պայման:

«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» հասկացությունն ունի տարբեր մեկնաբանություններ: Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի սահմանման՝ տեղեկատվական տեխնոլոգիաները գիտական, տեխնոլոգիական, ինժեներական գիտությունների փոխկապվածություն են, որոնք հետազոտում են մարդկանց աշխատանքի արդյունավետ կազմակերպման, փոխգործակցության մեթոդները, այդ մեթոդների գործնական կիրառումը, ինչպես նաև դրանց հետ կապված սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրները [4, էջ 3]: Ըստ տեսաբաններ Ե. Լ. Ռումյանցևայի և Վ. Վ. Սլյուսարի՝ տեղեկատվական տեխնոլոգիան տեղեկատվության և գիտելիքների հավաքման, կուտակման, պահպանման, որոնման, տվյալների մշակման, վերլուծության պատկերման մեթոդների և ձևերի համակարգ է՝ հիմնված ապարատային և ծրագրային միջոցների կիրառման վրա, որոնք պետք է համապատասխանեն օգտագործողների պահանջներին [1, էջ 13]: Ըստ մեկ այլ տեսակետի՝ տեղեկատվական տեխնոլոգիաները տեղեկատվության ստացման, մշակման և տրամադրման մեթոդների և ձևերի ամբողջություն են, որոնք օգտագործողների հետաքրքրության շրջանակներում ուղղված են տեղեկատվության հատկությունների, ձևի փոփոխությանը [3, էջ 30]:

Տեղեկատվական տեխնոլոգիաները բաղկացած են երեք հիմնական բաղադրիչներից (Գծ. 1)՝

- տեխնիկական միջոցների համալիր (հաշվողական, հեռահաղորդակցական և կազմակերպական տեխնիկա),
- ծրագրային միջոցների համակարգեր (ընդհանուր (համակարգային) և ֆունկցիոնալ (կիրառական) ծրագրային ապահովում),
- կազմակերպամեթոդական ապահովման համակարգեր:

**Գծ. 1: Տեղեկատվական տեխնոլոգիաների կառուցվածքը [1, էջ 14]**




Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ընդգրկում է որոշակի փուլեր [2, էջ 9].

ՏՏ-ի զարգացման առաջին փուլը (1960-1970թթ.) բնութագրվում է մեծ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) հիման վրա տեղեկատվական համակարգերի ստեղծմամբ: Առաջին փուլի գլխավոր ձեռքբերումներից է IBM ընկերության կողմից MVS օպերացիոն համակարգի ստեղծումը:

Երկրորդ փուլը (1975-1980թթ.) առանձնանում է մինիհամակարգիչների օգտագործման հաշվին ՏՏ-ի ապակենտրոնացմանն ուղղված քայլերով: Երկրորդ փուլի գլխավոր նվաճումը կարելի է համարել «մեծ ԷՀՄ - մինիհամակարգիչներ» երկմակարդակ մոդելը, որի տեղեկատվական հիմքն էին կազմում կենտրոնացված տվյալների բազան և կիրառական փաթեթները:

Երրորդ փուլը (1980-1990թթ. սկիզբ) բնութագրվում է ցանցային մշակումներով, որոնց հիմքում ընկած էր օգտագործողների՝ մեծ ԷՀՄ-ներից և մինիհամակարգիչներից զանգվածային անցումը անհատական համակարգիչների:

Չորրորդ փուլը բնորոշվում է ընդհանուր օգտագործման ցանցերի առաջացմամբ, որոնցից հատկապես առանձնանում է համացանցը: Այսպիսի համակարգերի արագ տարածումը բացատրվում է նրանով, որ համացանցը՝ որպես կորպորատիվ ցանց օգտագործումն ապահովում է միջոցների զգալի տնտեսում՝ ի տարբերություն առանձնացված գծերով ավանդական ցանցերի:

Տեղեկատվական տեխնոլոգիաներն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնց իմացությունը ու օգտագործումը նպաստում է հասարակության կյանքի որակի բարելավմանը և տնտեսության զարգացմանը: ՏՏ առանձնահատկություններից են [1, էջ 15].

1. ՏՏ-ը թույլ են տալիս ակտիվացնել և արդյունավետ օգտագործել հասարակության տեղեկատվական ռեսուրսները: Վերջիններիս ակտիվացումը, բաշխումը և արդյունավետ օգտագործումը հնարավորություն են ստեղծում զգալի խնայողություններ կատարել այլ տեսակի ռեսուրսներում (պաշարներ, էներգիա, նյութեր ու սարքավորումներ և այլն):

2. ՏՏ-ը հնարավորություն են տալիս օպտիմալացնել և ավտոմատացնել տեղեկատվական գործընթացները: Ներկայումս զարգացած երկրներում զբաղված բնակչության մեծ մասը այս կամ այն կերպ կապված է տեղեկատվության պատրաստման, պահպանման, մշակման և փոխանցման հետ, որի արդյունքում ստիպված է յուրացնել և գործնականում օգտագործել այդ գործընթացներին համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաները:

3. Տեղեկատվական գործընթացները բարդ արտադրական կամ սոցիալական փոփոխությունների անբաժանելի բաղկացուցիչ տարրեր են, և տեղեկատվական տեխնոլոգիաները հաճախ հանդես գալիս են որպես համապատասխան արտադրական կամ սոցիալական տեխնոլոգիաների բաղադրիչ:

4. ՏՏ-ը զգալի դեր ունեն մարդկանց միջև փոխգործակցության, ինչպես նաև զանգվածային տեղեկատվության նախապատրաստման և տարածման համակարգերում. բացի կապի ավանդական միջոցնե-

րից՝ լայնորեն օգտագործվում են էլեկտրոնային հեռահաղորդակցության համակարգերը:

5. ՏՏ-ը անհրաժեշտ գործոն են կրթական համակարգի և սոցիալական մշակույթի զարգացման մեջ: Գործնականում զարգացած և բազմաթիվ զարգացող երկրներում համակարգչային սարքավորումները, համակարգչային ուսումնական ծրագրերը և մուլտիմեդիա տեխնոլոգիաները ընդգրկված են ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատությունների, այլև նախնական և միջնակարգ ուսուցման համակարգերում:

6. Արդի գլոբալիզացիայի մակարդակում ՏՏ-ի ակտիվ օգտագործումը և զարգացումը կարող է զգալի ազդեցություն ունենալ մարդկության գլոբալ խնդիրների լուծման վրա: Գլոբալ գործընթացների տեղեկատվական մոդելավորման մեթոդները հնարավորություն են ընձեռում կանխատեսելու այնպիսի տարածաշրջանների ճգնաժամային իրավիճակները, որտեղ բարձր է սոցիալական և քաղաքական լարվածության աստիճանը, ինչպես նաև կանխատեսելու էկոլոգիական և բնական աղետները, տեխնոլոգիական խոշոր վթարները և այլն:

Այսպիսով՝ ՏՏ-ը նախատեսված են տեղեկատվության հավաքման, պահպանման և մշակման գործընթացի օպտիմալացման, տեղեկատվական ռեսուրսների աշխատատարության նվազեցման, տեղեկատվության ինտեգրացիայի և ճիշտ ժամանակին թարմացման հաշվին կառավարչական որոշումների հիմնավորվածության աստիճանի բարձրացման, տնտեսական ցանկացած գործունեությանը տեղեկատվական աջակցության նոր ձևերի օգտագործման համար:

Արդի ժամանակաշրջանում անհնար է պատկերացնել ցանկացած կազմակերպության գործունեությունն առանց ՏՏ-ի կիրառման: Տեղեկատվական տեխնոլոգիաները պետք է բավարարեն որոշակի պահանջների, որոնցից կարելի է առանձնացնել հետևյալները.

1. տեղեկատվության մշակման ամբողջ գործընթացի մասնատման բարձր աստիճանի ապահովումը՝ ըստ մշակման փուլերի, գործառնությունների և գործողությունների,

2. տեխնոլոգիական գործընթացների բոլոր փուլերի, գործառնությունների և գործողությունների հնարավորինս ստանդարտացումը և ունիֆիկացումը՝ տեղեկատվական գործընթացների առավել արդյունավետ և նպատակաուղղված իրականացման համար:

Կազմակերպություններում ներքին և արտաքին գործընթացների ավտոմատացումը հնարավորություն է ընձեռում էապես խնայել մարդկային, ժամանակային և ֆինանսական ռեսուրսներ: Կազմակերպությունների տնտեսակառավարչական գործունեությունում ՏՏ-ը կարող են կիրառվել հաշվապահական հաշվառման, ապահովագրական, բանկային, վճարահաշվարկային, աուդիտորական և գործունեության այլ ձևերում: Նման միջոցառումների իրականացումն անհնար է առանց ժամանակակից տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործմամբ: Դիտարկենք դրանցից մի քանիսը:

Հաշվապահական տեղեկատվական համակարգը (ՏՀ) ստեղծվում է այն տեղեկատվության ստացման և համակարգման համար, որն անհրաժեշտ է կազմակերպության արտադրական և տնտեսական գործունեության կառավարման համար [1, էջ 35]: Ցանկացած հաշվապահական ՏՀ պետք է ունենա տնտեսական տեղեկատվության հավաքագրման և հաշվառման, դրա կուտակման և պահպանման ու հաշվապահական փաստաթղթերի ձևավորման գործառույթներ: Հաճախ կազմակերպության հաշվապահական ՏՀ-ն իրենից ներկայացնում է ենթահամակարգ, որը կազմակերպության կառավարման համակարգի մաս է կազմում: Հաշվապահական ենթահամակարգը ուղղորդող դեր ունի տեղեկատվական հոսքերի կառավարման մեջ:

Առավել ուսումնասիրված և հեշտ ավտոմատացվող գործունեության ոլորտներից մեկը կազմակերպության գործավարության և փաստաթղթաշրջանառության ավտոմատացումն է: Ժամանակակից փաստաթղթաշրջանառության և գործավարության ավտոմատացման համակարգերը թույլ են տալիս կազմակերպության գործավարության տեխնոլոգիաները ներդնել մեկ միասնական գործընթացում՝ ապահովելով ցանկացած տիպի (տեքստային, գրաֆիկական, աուդիո, վիդեո) տեղեկատվության հավաքման, մշակման, պահպանման և փոխանցման ավտոմատացման մեթոդների համակարգված համատեղ օգտագործումը:

Ներկայումս կազմակերպություններում գործավարության ավտոմատացմանը միտված համակարգերից են [1, էջ 38]՝

- փաստաթղթերի նկարների մշակման համակարգը, որը նախատեսված է գրաֆիկական փաստաթղթերի մուտքագրման, մշակման, պահպանման և որոնման համար,

- նիշերի օպտիկական ճանաչման համակարգը, որը վերափոխում է թղթային փաստաթղթերը էլեկտրոնայինի,
- փաստաթղթերի հետ համատեղ աշխատանքի ավտոմատացման համակարգերը, ներառյալ՝ փաստաթղթերի ուղարկումը, երթուղավորումը, պատճենումը, համատեղ օգտագործումը և այլն:

ՏՏ-ը ներկայումս լայնորեն կիրառվում են ֆինանսաբանկային ոլորտում՝ կազմելով նրա անքակտելի մասը: Բանկային գործունեությունում ՏՏ-ը ամենից առաջ իրականացնում են աջակցող և զարգացնող գործառույթներ՝ սկսած պարզ բանկային գործառնությունների (գործարքների) ավտոմատացումից մինչև ամբողջ բանկի և նրա բիզնես գործընթացների մոդելավորումը: Կախված կատարվող օպերացիաներից՝ բանկային ՏՏ-ը բաժանվում են երեք մակարդակի [1, էջ 36]՝

- Վերին մակարդակ՝ մոդուլներ և ենթահամակարգեր, որոնք կատարում են տեղեկատվության մուտքագրում և առաջնային մշակում, ինչպես նաև ապահովում են բանկի փոխգործակցությունը հաճախորդների հետ:
- Միջին մակարդակ՝ ներբանկային գործունեության ֆունկցիոնալ մոդուլներ:
- Ցածր մակարդակ՝ այսպես կոչված հաշվապահական միջուկը, որը նախևառաջ իրենից ներկայացնում է մոդուլների և ենթահամակարգերի խումբ, որոնք իրականացնում են հաշվապահական հաշվառման հիմնական գործառույթները:

Վերոնշյալ մակարդակներից յուրաքանչյուրում առանձնացվում են ապահովող և ֆունկցիոնալ ենթահամակարգեր: Ապահովող ենթահամակարգերը կազմակերպում են կապը և կոմունիկացիաները, տվյալների պաշտպանությունը և այլն: Ֆունկցիոնալ ենթահամակարգերը անմիջականորեն պատասխանատու են բանկի բիզնես գործընթացների և այն խնդիրների համար, որոնք անմիջականորեն կապված են բանկային գործունեության հետ: Բանկային համակարգում կիրառվող ՏՏ-ը թույլ են տալիս ավտոմատացնել այնպիսի գործընթացներ, ինչպիսիք են վարկերի տրամադրումը, մարումը, վարկային գրաֆիկների ստեղծումը, ավանդների ընդունումը, փոխանցումների իրականացումը և այլն:

Այսպիսով՝ ցանկացած կազմակերպության արդյունավետ գործու-

նեության համար անհնար է գերագնահատել ՏՏ-ի դերը: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը ժամանակակից կազմակերպությունների առաջխաղացման գրավականն է, որը թույլ կտա ավտոմատացնել կազմակերպության ինչպես հիմնական, այնպես էլ ապահովող բիզնես գործընթացները՝ հնարավորություն տալով նրանց դիմակայելու արտաքին և ներքին մարտահրավերներին:

*Բանալի բառեր.* տեղեկատվական տեխնոլոգիաներ, կազմակերպություն, բիզնես-գործընթաց, ավտոմատացում, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն, բանկային տեղեկատվական տեխնոլոգիաներ, հաշվապահական տեղեկատվական համակարգ

## Գրականություն


1. Румянцева Е.Л, Слюсарь В.В, Информационные технологии, Москва, ИД “Форум” – ИНФРА-М, 2007г., 256 с.
2. Королев Д.М., Королев М.И., Информационные системы в банковском деле: Учебное пособие., Белгород, Издательство БелГУ, 2004г., 293 с.
3. Рагулин П.Г, Информационные технологии, Владивосток, ТИДОТ Дальневост. ун-та, 2004г., 208 с.
4. Амелин Р.В. Информационные технологии, URL: http://nto.immpu.sgu.ru/sites/default/files/3/__93751.pdf (дата обращения: 20.05.2016)


## THE ROLE OF INFORMATION TECHNOLOGIES IN MODERN ORGANIZATIONS


**Levon David Gevorgyan**
EREA, Chair of Economics and Management, Postgraduate


### Summary


In the article the author refers to the definition of information technologies, their development stages, structure and peculiarities. The role and importance of IT in organizations are represented, stressing that

information technologies are the guaranty of promotion of modern organizations, which will allow to automate the core business processes of the organization as well as ensuring business processes, enabling them to withstand external and internal challenges.

*Keywords:* information technology, organization, business process, automation, electronic document flow, banking information technologies, accounting information system.

## РОЛЬ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СОВРЕМЕННЫХ ОРГАНИЗАЦИЯХ

**Левон Давидович Геворгян**
ЕРОА, Кафедра Экономики и Менеджмента, аспирант

### Резюме

В статье автор обратился к определению информационных технологий, их этапам развития, структуре и особенностям. Представлены роль и значение ИТ в организациях, подчеркнув, что инвестиции в ИТ - залог к продвижению современных компаний, что позволит автоматизировать, как основные организаций, так и обеспечивающие бизнес – процессы организаций, что позволит противостоять внешним и внутренним вызовам.

*Ключевые слова:* информационные технологии, организация, бизнес-процесс, автоматизация, электронная документация, банковские информационные технологии, информационная система учета.

# ՀՀ ԲՈՒՀԵՐԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ

***Լիանա Հարությունի Օսիպյան***
*ԵԿՏԱ Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ*

Հոդվածը նվիրված է հեղինակավոր միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից ներկայացվող տարբեր երկրների բուհերի վարկանիշավորման տարեկան ցուցանիշների ուսումնասիրությանը՝ ինչպես նաև հարավկովկասյան երկրների բուհական համակարգերի վարկանիշային ցուցանիշների վերլուծությանը, դրա համեմատմանը ՀՀ բուհերի վարկանիշավորման համատեքստում: Ուսումնասիրությունը կատարել ենք ըստ«Webometrics» միջազգային ընկերության, «Эксперт РА»-ն ՌԴ միջազգային խոշոր վարկանիշավորման գործակալության, «Ինտերֆաքս» միջազգային տեղեկատվական խմբի, «ARCALERQI»[1] էլեկտրոնային կայքի և այդ ցուցանիշները համեմատել ՀՀ վարկանիշավորման 2015թ-ի արդյունքներին:[2] Կատարելով համեմատական վերլուծություն՝ փորձել ենք բացահայտել ՀՀ բուհերի առանձնահատկությունները: ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի թափանցիկության ապահովման նպատակով 2013 թվականից մեկնարկել է բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման գործընթացը, որի նպատակն է՝ նպաստել հաստատությունների մրցակցության խթանմանը, շահառուների և հասարակության իրազեկվածության բարձրացմանը: Հրապարակվել են ՀՀ բուհերի վարկանիշավորման 2015 թվականի արդյունքները: Ըստ այդմ՝ միասնական վարկանիշով 1-ին տեղում Երևանի պետական համալսարանն է, 2-րդ տեղում՝ Հայ-ռուսական սլավոնական համալսարանը, 3-րդ տեղում՝ Երևանի պետական բժշկական համալսարանը, 4-րդն Ամերիկյան համալսարանն է, 5-րդը՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանը, 6-րդը՝ Հայաստանում ֆրանսիական համալսարանը, 7-րդը՝ Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, 8-րդը՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը,

[1] http://www.iatp.am/arcaler_scorecard/xls/compare/march2016/aedu-webometrics2016.htm
[2] http://edu.am/index.php?id=7920&topMenu=-1&menu1=-2&menu2=-1

9-րդը՝ Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը, 10-րդը՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը: Նշենք, որ գործընթացի իրականացման համար մշակվել և սահմանվել են ցուցանիշները, դրանց հաշվարկի մեթոդաբանություններն ու յուրաքանչյուր ցուցանիշի հստակ ազդեցության չափը ընդհանուր վարկանիշի արժեքի վրա: Բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորման համար ուսումնական հաստատությունները խմբավորվել են ըստ բուհերում առկա կրթական ծրագրերի և մասնագիտական ոլորտների, ինչպես նաև առանձնացվել են արվեստի բուհերը: Մշակված հարցաթերթերի հիման վրա հավաքագրվել է ողջ պահանջվող տեղեկատվությունը, իրականացվել են բազմաթիվ սոցիոլոգիական հարցումներ բուհերի դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում:

Հաշվի առնելով, որ մեր երկրում կրթության ոլորտը գտնվում է բարեփոխումների փուլում՝ բուհերի վարկանիշավորման համակարգը նույնպես ենթակա է անընդհատ փոփոխության և կատարելագործման: 2013 և 2014 թվականների փորձնական վարկանիշավորման արդյունքում ճշգրտման են ենթարկվել բուհերի վարկանիշավորման ազգային համակարգի ցուցանիշները, դրանց կշիռներն ու հաշվարկի միավորման համակարգերը:

***Webometrics Ranking of World Universities.***-Աշխարհի լավագույն բուհերի վարկանիշավորման Webometrics Ranking of World Universities հետազոտությունները կատարել է Cybermetrics հետազոտական խումբը, որը գործում է Իսպանիայի Ազգային հետազոտական խորհրդի (Spanish National Research Council) կազմում[3]: Իսպանիայի Research Council հիմնական CSIC հանդիսանում է առաջին հիմնական հետազոտական կազմակերպությունը Եվրոպայում, որը բաղկացած է 126 կենտրոններից եւ ինստիտուտներից՝ բաշխված ամբողջ Իսպանիայում: Խումբը նման վարկանիշային հետազոտություններ սկսել է հրատարակել 2004-ից և թարմացնում է տարեկան երկու անգամ՝ հունվար և հուլիս ամիսներին: Հետազոտություններում կիրառված մեթոդաբանությունը և գնահատման մոտեցումները համապատասխանում են բուհերի վարկանիշավորման բեռլինյան սկզբունքներին

[3] http://www.webometrics.info/en/About_Us

(Berlin Principles on Ranking of Higher Education Institutions): Այդ սկզբունքները մշակվել ու հաստատվել են ՅՈՒՆԵՍԿՕ-ի բարձրագույն կրթության եվրոպական կենտրոնի և Վաշինգտոնի բարձրագույն կրթության քաղաքականության ինստիտուտի՝ 2004թ. հիմնադրված Միջազգային փորձագիտական խմբի կողմից՝ որպես բարձրագույն կրթության ազգային համակարգերի համեմատական հետազոտությունների հիմնարար սկզբունքներ: Այս սկզբունքների համաձայն՝ աշխարհում ներկայում հաշվվում է ավելի քան 20.000 բուհ, որոնք գրեթե ամբողջությամբ ներառվում են Webometrics-ի վարկանիշավորման մեջ: Վարկանիշավորման համար ընտրվել են մի քանի մեթոդաբանական ցուցիչներ.

1. էլեկտրոնային կայքէջին հղումների քանակը,
2. կայքում տեղադրված արժեքավոր նյութերի քանակը,
3. հրատարակված նյութերի քանակը և դրանց արված հղումները:

Webometrics միջազգային ընկերության պատրաստած բուհական համաշխարհային վարկանիշային հրապարակված տվյալների համաձայն՝ ՀՀ-ում ամենաբարձր վարկանիշ ունեցող բուհը ԵՊՀ-ն է: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանի ցուցակում ներառվել է 37 բուհ: Ստորև ներկայացվում է Webometrics-ում ընդգրկված հայաստանյան բուհերի լավագույն տասնյակը՝ ըստ իրենց զբաղեցրած դիրքերի.

1. Երևանի Պետական Համալսարան՝ 2326
2. Հայաստանի Ամերիկյան Համալսարան՝ 3906
3. Հայ-ռուսական (Սլավոնական) Համալսարան՝ 5367
4. Երևանի Պետական Բժշկական Համալսարան՝ 9241
5. Հայաստանի Պետական Մանկավարժական Համալսարան՝ 9872
7. Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարան՝ 10615
8. Հայաստանի Պետական Տնտեսագիտական Համալսարան՝ 11207
9. Երևանի Պետական Գեղարվեստի Ակադեմիա՝ 11616
10. Հայաստանում ֆրանսիական Համալսարան՝ 13398

Эксперт РА[4] ռուսաստանյան վարկանիշավորման հեղինակավոր գործակալության գործունեություն է, որը հիմնադրվել է 1997թ՝որպես

[4] http://raexpert.ru/rankings/vuz/vuz_sng/part3/

այլընտրանք հավասարակշռող գործոն վարկանիշավորման բավական զարգացած ավանդույթներ ունեցող արևմտյան դպրոցի զեկույցների դիտարկման համատեքստում: Այլ ոլորտներից բացի, կազմակերպությունն իրականացնում է նաև ԱՊՀ բուհերի վարկանիշավորման տարեկան հետազոտությունների շարք: Համաձայն «Эксперт РА»-ի վարկանիշավորման մեթոդաբանության՝ այս վարկանիշային նախագծում կարող են ներառվում են այն բուհերը, որոնք համապատասխանել են Webometrics հեղինակավոր կազմակերպության վարկանիշավորման չափորոշիչներին: 2015թ. «Эксперт РА»-ի կողմից սկզբնական շրջանում կազմվել էր 195 բուհերի ցուցակ, որից հետո վարկանիշավորման աղյուսակում հայտնվելու համար հարկավոր էր, որպեսզի բուհը հանդիսանար «Webometrics»-ի կողմից տվյալ երկրի առավել բարձր գնահատական ստացած 3 բուհերից մեկը: Վարկանիշավորման հաջորդ փուլում ներառվել են այնպիսի բուհեր, որոնք ռուսաստանյան գործակալության կողմից ուղարկված հարցման արդյունքում ներկայացրել են իրենց հարցաթերթիկները:Վարկանիշավորման մեթոդաբանությունում կիրառվում են հետևյալ չափորոշիչները.

1. որակյալ կրթություն ստանալու համար անհրաժեշտ պայմաններ,
2. գործատուների շրջանում տվյալ բուհի շրջանավարտների պահանջարկի մակարդակը,
3. բուհի գիտահետազոտական գործունեության մակարդակը:

Այս ցուցիչներն իրենց հերթին բաժանվում են այլ ենթացուցիչների: «Эксперт РА» գործակալությունը 2015թ. հրապարակեց ԱՊՀ երկրների լավագույն բուհերի վարկանիշային աղյուսակը: ԱՊՀ լավագույն բուհ է ճանաչվել Մոսկվայի Մ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, որը ապահովում է անհրաժեշտ պայմաններ որակյալ կրթության համար և տրամադրում է բարձր որակի հետազոտական գործունեություն: Հարկ է նշել, որ ռուսական 20 լավագույն բուհերը 3 տարի մնացել են մնայուն վարկանիշում: Նկատենք, որ 153 բուհերի ցուցակում ճնշող մեծամասնությունը ռուսաստանյան և ուկրաինական բուհերն են: Վարկանիշավորումը կազմվել է՝ ընտրվելով գլխավոր գործոնը՝ կրթական որակը, ոչ թե գիտական գործունեության գնահատականը, վարկանիշավորումը կատարվում է վիճակագրական տվյալների, մի շարք գիտնականների, ուսանողների, ինչպես նաև գործատուների մեջ կատարված հարցումների շրջանում: **Վերջնական ցու-**

**ցակում չի հայտնվել հայաստանյան որևէ բուհ:** Նկատենք, որ նախնական ցուցակում ընդգրկվել էին ԵՊՀ-ը, Հայաստանի ամերիկյան համալսարանը և Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը:

Ցուցակի 2-րդ տեղը զբաղեցրել է Բելառուսի պետական համալսարանը, 3-րդը՝Կիևի Տ.Շևչենկոյի անվան ազգային համալսարանը: Լավագույն տասնյակում ընդգրկված են նաև Ն.Բաումանի անվան տեխնիկայի և տեխնոլոգիաների համալսարանը (Մոսկվա), Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական համալսարանը, Մոսկվայի ֆիզիկատեխնիկական պետական համալսարանը, Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտը, Տոմսկի ազգային հետազոտական պետական համալսարանը և այլք: Նշված ցուցակում համալսարաններ ներառվել են նաև Ղազախստանից, Ղրղզստանից, Ադրբեջանից, Մոլդովայից, Ուզբեկստանից:

«Ինտերֆաքս» միջազգային տեղեկատվական խումբ.[5]- Բուհերի վարկանիշավորման զեկույցների պատրաստման հարցում մասնագիտացած է նաև«Ինտերֆաքս միջազգային տեղեկատվական խումբը: Բուհերի վարկանիշավորման մեթոդաբանությունում կիրառվում են հեղինակավոր QS (Quacquarelli Symonds) գործակալության մեթոդաբանական մոտեցումները: Խմբի կողմից հրապարակված 2015թ. բուհական վարկանիշային զեկույցի տվյալներով՝ նախկին խորհրդային հանրապետությունների 405 բուհերի ցանկում **ԵՊՀ-ն զբաղեցնում էր 11-րդ տեղը**: ԱՊՀ լավագույն բուհերի վարկանիշային աղյուսակը գլխավորում էր Մոսկվայի պետական համալսարանը, 2-րդ և 3-րդ դիրքերը զբաղեցրել էին համապատասխանաբար Բելառուսի և Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանները: Կիևի համալսարանը զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը:

***QI- ՀՀ բարձրագույն կրթական հաստատությունների էլեկտրոնային ներկայացուցիչների վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի վարկանիշը[6]***

***QI-ը** Ընդհանրացված ցուցանիշ է վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի: Ըստ Հայաստանյան* 35 բուհերի էլեկտրոնային ներկայացված ուսումնասիրությունների ՀՀ բարձրագույն հաստատություններից լավագույնը 3 վարկանիշային աղյուսակում ընդգրկված կայքերն են

[5] http://univer-rating.ru/international/top_rat.asp

[6] http://www.iatp.am/arcaler_scorecard/xls/aedu.htm

Երևանի պետական համալսարան (QI = 1.23), ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը (QI = 1.0), Երևանի Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը (QI = 0.61):

Այս տարվա առաջին տասնյակում տեղ են գտել նաև վարկանիշային կայքերը, Երևանի պետական բժշկական համալսարան, Հայաստանի ամերիկյան համալսարան, հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Երևանի Մեհրաբյանի անվան բժշկական ինստիտուտ, Երևանի պետական կոնսերվատորիա, Հայաստանի պետական ագրարային համալսարան, Երևանի պետական Ճարտարապետության և շինարարության համալսարան: Ամենամեծ առաջընթացը ըստ 15.10.2015թ-ի վարկանիշի ցուցաբերել է Երեւանի «Գլաձոր» համալսարան՝ 33-ից բարձրանալով 14-րդ տեղ (19 ↑), Հայաստանի պետական ագրարային համալսարան՝ 21-ից 9-րդ տեղը (12 ↑), Երեւանի պետական ճարտարապետության և շինարարության համալսարանը՝ 22-ից 10-տեղ(12↑): Ամենամեծ հետընթացը՝ 15.10.2015թ-ի համեմատությամբ: Հայաստանի պետականճարտարագիտական համալսարան (Պոլիտեխնիկ) 6-ից 18-րդ տեղը (12 ↓), Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա - 16-ից 28-րդ տեղը (12↓), Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտի Երևանի մասնաճյուղը – 14-ից 23-րդ տեղը (9 ↓): 15.10.2015թ. միջին արժեքը Ընդհանրացված ցուցանիշի վիրտուալ ինտելեկտուալ կապիտալն աճել է՝ 0,13 է 0,17: 35 համալսարանների էլեկտրոնային ներկայացուցչությունների միայն 9-ը ունեն QI միջինից բարձր (0.17).

Հայտնի իրողություն է, որ կրթության արդյունավետությունը ուղղակիորեն փոխկապակցված է յուրաքանչյուր պետության զարգացման, բնակչության բարեկեցության ապահովման հիմնահարցերի հետ: Միջազգային վարկանիշային կազմակերպությունների կողմից ներկայացվող բուհական համակարգի նման ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս համեմատականներ անցկացնելու տարբեր երկրների բուհական համակարգերի վարկանիշային ցուցանիշների միջև, նպաստում այդ ոլորտում օգտագործված հնարավոր բացահայտումները ռեսուրսների ուսումնասիրման ու հիմնախնդիրների վերհանման գործին:

*Բանալի բառեր.* QI -վիրտուալ ինտելեկտուալ կապիտալի ընդհանրացված ցուցանիշ

### Գրականություն

1. ВАГАНЯН Г. А., Виртуальные технологии менежмента, ЕРЕВАН - 2006
2. http://www.iatp.am/arcaler_scorecard/xls/aedu.htm
3. https://ru.wikipedia.org/wiki/Webometrics_Ranking_of_World_Universities
4. http://www.webometrics.info/en/About_Us


## ВУЗЫ РА В МЕЖДУНАРОДНЫХ И НАЦИОНАЛЬНЫХ РЕЙТИНГАХ


**Осипян Лиана Арутюновна**
Соискатель в Европейской региональной академии
кафедра Экономики и менеджмента



### Резюме

Статья посвящена изучению ежегодных показателей рейтингов различных высших учебных заведений, составляемых влиятельными международными рейтинговыми организациями, в том числе и анализ включения в рейтинги соответствующих вузов южного Кавказа.Дан сравнительный анализ рейтинговых показателей в контексте вузов Республики Армения. В ходе исследования были изучены электронные сайты международной компании “Webometrics”, действующей в России крупной международной рейтинговой организации “Эксперт РА”, международного информационного агентства “Интерфакс”, “ARCALER QI”. Полученные данные сравненыс результатами рейтингов вузов Армении по итогам 2015 года, которые представлены на официальном сайте. Используя метод сравнительного анализа раскрыть особенности неиспользованного потенциала вузов Республики Армения,которые могут быть, применены в совершенствовании управления высшей школой РА.



*Ключевые слова:* QI* - обобщенный индекс виртуального интеллектуального капитала

# UNIVERSITIES OF ARMENIA IN INTERNATIONAL AND NATIONAL RATINGS

**Osipyan Liana Arutyun**
Researcher in European Regional Academy
Chair of Economics and management

**Summary**

The article is aimed to study annual university ratings made by international high-powered rating organizations and to analyze the process of making ratings of universities in the Southern Caucasus and also to perform a comparison study of Armenian universities. While studying, we explored the websites of “Webometrics” international company, “Expert RA” Russia-based high-powered international rating organization, “Interfax” International Informational Agency and “Arcaler QI” and compared the results with 2015 rating of Armenian universities. Using the comparison study method we tried to discover peculiarities of universities in Armenia.
*Keywords.* QI * - generalized index of virtual intellectual capital

# ԵԱՏՄ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՀԿ - ՀՀ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

***Մկրտչյան Նարեկ Ժիրկի***
*ԵԿՏԱ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի հայցորդ*

Գնումների համակարգը պետական և ոչ պետական մարմինների կարիքների ձեռքբերման նպատակով իրականացվող գործընթացների ամբողջություն է, որը կանոնակարգվում է երկրի օրենքներով և այլ իրավական ակտերով, և միտված է այդ գործընթացների արդյունավետության բարձրացմանը: Այլ խոսքով՝ գնումների համակարգը արդյունավետ մեխանիզմ է, ինքնատիպ շուկա, որը կանոնակարգում է ապրանքների և ծառայությունների կարիք ունեցող և կարիքը մատակարարող կողմերի փոխհարաբերությունները:

Պետական գնումներում ներգրավված բավականին մեծ գումարները, բնականաբար, առաջ են բերում չարաշահումների և կոռուպցիայի իրական հնարավորություններ: Հետևաբար, պետական գնումները կարգավորող օրենքները պետք է արդյունավետ միջոց լինեն չարաշահումները կանխելու համար: Ակնհայտ է, որ այս մոտեցումն արդարացիորեն ընկած է Եվրամիության (այսուհետ՝ ԵՄ) և Առևտրի Համաշխարհային Կազմակերպությանը (այսուհետ՝ ԱՀԿ) Հայաստանի Հանրապետության անդամակցության հիմքում:

Անցումային տնտեսություն ունեցող բոլոր պետությունների, այդ թվում նաև Հայաստանի համար պետական գնումների համակարգի բարեփոխումները անհրաժեշտություն են միջազգային ինտեգրացիոն գործընթացներում:

Ոլորտը կարգավորող մայր օրենքը «Գնումների մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ ԳՄՕ) է՝ ընդունված 22.12.2010թ-ին: Օրենքը բաղկացած է 8 բաժիններից, 56 հոդվածներից:

2011թ-ին, ԱՀԿ առջև ստանձնած պարտավորությունների շրջանակում, ընդունվել են մի շարք իրավական ակտեր, որոնք բխել են ԳՄՕ-ի ընդունումից: Մասնավորապես.

1. ՀՀ Կառավարության որոշում N 168-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին»՝ ընդունված 10 փետրվարի, 2011թ.:

2. ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման թիվ 222-Ն, «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը» հաստատելու մասին՝ ընդունված 13 ապրիլի, 2011թ.:
3. ՀՀ Կառավարության որոշում N 1057-Ն «ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»՝ ընդունված 28 հուլիսի 2011 թ.:
4. ՀՀ Կառավարության որոշում N 1145-Ն, «ՀՀ պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին»՝ ընդունված 11 օգոստոսի 2011թ.:
5. ՀՀ Կառավարության որոշում N 1481-Ն, «Գնումների հնարավոր մասնակիցների նախաորակավորման կարգը հաստատելու մասին»՝ ընդունված 20 հոկտեմբերի 2011թ.:

Տվյալ ժամանակահատվածը գնումների ոլորտի համար կարելի է որակել որպես «սկզբունքային բարեփոխումների» շրջան: Սակայն հարկ է նշել նաև, որ դեռևս ոչ բոլոր բարեփոխումներն են ուժի մեջ մտել: Ակնհայտ է, որ գնումների ոլորտի կարգավորումը արդեն ձեռք է բերում նոր կարևորություն, քանի որ ՀՀ պետական մարմինները առաջիկայում պետք է ոչ միայն ավարտեն ոլորտի բարեփոխումների առաջին փուլը, այլև նոր ինտեգրացիոն գործընթացների շրջանակներում ստանձնած պարտավորությունները իրականացնեն:

Մասնավորապես, հաշվի առնելով ՀՀ իշխանությունների 2013թ. Եվրասիական Տնտեսական Միության (այսուհետ՝ ԵԱՏՄ կամ Միություն) միանալու մասին որոշումը, գնումների ոլորտին վերաբերող օրենսդրության հիմքում Առևտրի Համաշխարհային Կազմակեպության (ԱՀԿ) սկզբունքների առկայությունը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների և ԱՀԿ միջև առկա գաղափարական տարաձայնությունները, ակնհայտ է դառնում, որ ՀՀ գնումները կարգավորող համակարգում առաջանալու են նոր մարտահրավերներ, ինչն ավելի արդիական է դարձնում հիմնախնդրի ուսումնասիրությունը:

Ելնելով վերը նշվածից՝ սույն հոդվածում, առավելապես հարցադրման կարգով, անդրադարձ է կատարվել ինչպես գնումների համակարգը կարգավորող օրենսդրությանը, այնպես էլ հիմնախնդրի՝ ինտեգրացիոն գործընթացներին վերաբերող հարցերին:

2014թ. մայիսի 29-ին ՀՀ Ազգային Ժողովը հաստատեց Եվրասիական Տնտեսական Միության հետ նախաստորագրված պայմանա-

գիրը: Ակնհայտ է, որ նման փաստաթղթի ստորագրումը Հայաստանի տնտեսական կյանքի վրա չէր կարող նշանակալի ազդեցություն չունենալ, քանի որ ԵԱՏՄ անդամակցությունը ենթադրում է մի շարք պարտավորությունների ստանձնում, որոնց նպատակը միասնական տնտեսական միավորում ունենալն է, որտեղ շուկայական սկզբունքների և ներդաշնակեցված կամ միասնականացված իրավական նորմերի կիրառման հիման վրա գործում են տնտեսության կարգավորման համանման մեխանիզմներ: Հասկանալի է, որ ՀՀ գնումների համակարգը չի կարող անմասն մնալ փոփոխություններից:

Մասնավորապես, ԵԱՏՄ պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետում նշված է, որ Միության անդամ երկիրը պարտավոր է անդամ պետություններին գնումների ոլորտում տրամադրել ազգային ռեժիմի արտոնություններ, որն, իր հերթին, հակասում է ԱՀԿ Ստեղծման Մարաքեշի Համաձայնագրի 4-րդ՝ պետական գնումների մասին հավելված/համաձայնագրին: Վերջինի 3-րդ հոդվածը նշում է.

1. Համաձայնագրի շրջանակներում պետական գնումներին առնչվող բոլոր օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի հետ կապված՝ Կողմերից յուրաքանչյուրը այլ Կողմերի արտադրանքներին, ծառայություններին և արտադրանքներ ու ծառայություններ առաջարկող մատակարարներին պետք է անմիջապես և առանց նախապայմանների ցուցաբերի ոչ պակաս բարենպաստ մոտեցում.

ա) քան ցուցաբերում է տեղական արտադրանքներին, ծառայություններին և մատակարարներին, և
բ) քան ցուցաբերում է ցանկացած այլ Կողմի արտադրանքներին, ծառայություններին և մատակարարներին:

2. Համաձայնագրի շրջանակներում պետական գնումներին առնչվող բոլոր օրենքների, կանոնակարգերի, ընթացակարգերի և գործելակերպերի հետ կապված՝ Կողմերից յուրաքանչյուրը կերաշխավորի հետևյալը.

ա) իր սուբյեկտները չպետք է ավելի անբարենպաստ մոտեցում ցուցաբերեն տեղում հաստատված մի մատակարարի՝ տեղում հաստատված մեկ այլ մատակարարի համեմատ՝ ելնելով օտարերկրյա մասնակցության կամ սեփականության աստիճանից, և

բ) իր սուբյեկտները չպետք է խտրականություն դնեն տեղում հաստատված մատակարարների նկատմամբ՝ ելնելով ապրանքի արտադրության կամ մատուցվող ծառայության երկրից՝ պայմանով, որ արտադրության երկիրը Համաձայնագրի Կողմ լինի՝ համաձայն IV հոդվածի դրույթների:

Իսկ Հոդված IV-ը սահմանում է, որ կողմը, ԱՀԿ Համաձայնագրով նախատեսված պետական գնման նպատակով, այլ կողմերից ներմուծված կամ մատակարարված ապրանքների և ծառայությունների նկատմամբ չպետք է կիրառի ծագման այնպիսի կանոններ, որոնք տարբերվում են բնականոն առևտրի ընթացքում եւ տվյալ գործարքի պահին միևնույն կողմերից միևնույն արտադրանքների կամ ծառայությունների ներկրման կամ մատակարարման նկատմամբ կիրառվող ծագման կանոններից:

Ակնհայտ է, որ Եվրասիական Տնտեսական Միությանն անդամակցելու կապակցությամբ Հայաստանը պարտավորված բանակցություններ պետք է սկսի ԱՀԿ-ի անդամների հետ՝ կազմակերպության շրջանակներում պարտավորությունների փոփոխությունների հետ կապված: Նման նորմ է պարունակվում Հայաստանի ԵԱՏՄ-ին անդամակցելու պայմանագրում: Մասնավորապես, ՀՀ ԵԱՏՄ անդամակցելու պայմանագրի 3-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու հետ կապված հարցերի կարգավորման վերաբերյալ դրույթները ամրագրվում են Պայմանագրի 3-րդ հավելվածով: Այս Հավելվածը 38-րդ կետով մանրամասնում է Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանը անդամակցելու առնչությամբ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամների հետ բանակցությունների անցկացման և Հայաստանի Հանրապետության համապատասխան սակագնային պարտավորությունների փոփոխման առանձնահատկությունները: Նշվում է, որ բանակցությունները պետք է անցկացվեն դրա համար լիազորված պատվիրակության կողմից՝ հրահանգների հիման վրա: Հրահանգները և պատվիրակության կազմը հաստատվում և, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից:

Արդյունքներն ու պայմանավորվածությունները, որոնց կհասնեն կողմերը, մինչև ԱՀԿ-ի կողմից ընդունվելը, պետք է ստանան ԵԱՏՄ-ի հավանությունը: ԱՀԿ ընդունվելուց հետո փոփոխությունները պետք է ներառվեն ԵԱՏՄ-ի միասնական մաքսային դրույքաչափերում:

Պայմանագրում ընգծվում է, որ Հայաստանի պարտավորությունները ԱՀԿ-ի շրջանակներում չեն տարածվում ԵՏՄ-ի այլ անդամ-պետությունների վրա: Կապված Հայաստանի համար նախատեսված անցումային շրջանի՝ ԵՏՄ մաքսերի գործի դրման հետ՝ որոշ ապրանքատեսակների վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունն իր վրա պարտավորություն է վերցրել օգտագործել նման ապրանքները միայն իր սահմաններում և թույլ չտալ դրանց արտահանումը ԵՏՄ-ի այլ երկրներ՝ առանց այլ պետությունների տարածքում գործող մաքսավճարների գումարների տարբերության վճարման: Ընդ որում Բելառուսը, Ղազախստանը և Ռուսաստանը իրավունք ունեն սահմանելու նման ապրանքների՝ իրենց պետության տարածք ներկրվելու կարգը:

Բացի այս, ԱՀԿ հետ համագործակցության Համաձայնագիրը ներառում է նաև մի շարք այլ արժեքներ, որոնք այնքան էլ ընդհանրություններ չունեն ԵԱՏՄ անդամ երկրների, մասնավորապես, Ռուսաստանի Դաշնության, գնումների ոլորտը կարգավորող օրենսդրության հետ:

ԱՀԿ Համաձայնագրում ամրագրված են ձեռքբերման ապրանքների (ծառայությունների) ծագման կանոնները, զարգացող երկրներից ապրանքների (ծառայությունների) ձեռքբերման հատուկ մոտեցումները, ընթացակարգեր ու օրինակելի ձևեր են սահմանված գնումների իրականացման ժամանակ տեղի ունեցող բոլոր գործընթացների (մատակարարների որակավորում, գնման մրցույթի կազմակերպում, ընտրության իրականացում, բանակցությունների վարում և այլն) համար, որը ԵԱՏՄ անդամ երկրներում գտնվում է շատ ցածր մակարդակի վրա:

Հասկանալի է, որ բոլոր նման խնդիրները 2016թ-ին առաջին պլան կգան, որը լուրջ փորձություն կլինի բանակցող բոլոր կողմերի համար:

Նշված խնդիրների լուծումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության համար ընդունելի մոտեցումները հետագա վերլուծու-

թյան խնդիր է, որը կարիք ունի առավել մանրակրկիտ ուսումնասիրության:

*Առանցքային բառեր*. գնումների համակարգ, ԱՀԿ, ԵԱՏՄ, կարգավորող օրենսդրություն

**Գրականություն**


1. Համաձայնագիր պետական գնումների մասին ՀՀ և ԱՀԿ միջև, ընդունված 15 սեպտեմբերի 2011թ.:
2. ՀՀ «Գնումների մասին» օրենք, ընդունված 22 դեկտեմբերի 2010թ.:
3. ԵԱՏՄ պայմանագիր, ընդունված 29 մայիսի 2014թ.:
4. ՀՀ ԵԱՏՄ-ին անդամակցության պայմանագիր, ընդունված 10 հոկտեմբերի 2014թ.:
5. ՀՀ Կառավարության որոշում N 1057-Ն «ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», ընդունված 28 հուլիսի 2011 թ.:
6. ՀՀ Կառավարության որոշում N 1145-Ն, «ՀՀ պետական մարմինների կողմից պահանջվող երաշխիքի օրինակելի ձևը հաստատելու մասին», ընդունված 11 օգոստոսի 2011թ.:
7. ՀՀ Կառավարության որոշում N 1481-Ն, «Գնումների հնարավոր մասնակիցների նախաորակավորման կարգը հաստատելու մասին», ընդունված 20 հոկտեմբերի 2011թ.:
8. ՀՀ Կառավարության որոշում N 168-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին», ընդունված 10 փետրվարի, 2011թ.:
9. ՀՀ Ֆինանսների նախարարի հրաման թիվ 222-Ն, «Շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկը» հաստատելու մասին, ընդունված 13 ապրիլի, 2011թ.:
10. www.gnumner.am – Գնումների աջակցման կենտրոնի էլ. կայք:

## СИСТЕМА ЗАКУПОК ЕАЭС И СОТРУДНИЧЕСТВО АРМЕНИЯ – ВТО

**Мкртчян Нарек Жевикович**
ЕРОА, соискатель кафедры Экономики и управления

### Резюме

Система закупок Армении основана на фундаментальных принципах сотрудничества с ВТО. Членство Республики Армении в ЕАЭС привело к определенным противоречиям в данной сфере, которые и представляются в статье.

*Ключевые слова:* система закупок, ВТО, ЕАЭС, регулирующее законодательство.

## THE PROCUREMENT SYSTEM OF EAEU AND ARMENIA – WTO COOPERATION

**Narek Mkrtchyan Zhevik**
EREA, PhD student at department of Economics and Management

### Summary

Armenian procurement system is based on the fundamental principles of the Agreement with the WTO. The membership of the Republic of Armenia in the EAEU has led to certain contradictions in this sector, which are presented in the article.

*Keywords:* procurement system, the WTO, the EAEU, regulating legislation.

# ԴԵՂՈՐԱՅՔԻ ՄԱՐԿԵՏԻՆԳԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ. ԿՈՌՈՒՊՑԻԱՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ

***Մարփոյան Սիրանուշ Վաչիկի***
*ԵԿՏԱ, փնփեսագիփության և կառավարման ամբիոն, հայցորդ*

Առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների, թե՛ հենց անհատների բարգավաճման համար:

Առողջապահության համակարգում առկա կոռուպցիան անհրաժեշտ բժշկական խնամքից զրկում է այդ խնամքի կարիքն առավել սուր զգացող մարդկանց՝ միաժամանակ նպաստելով դեղերի ներգործությանը չենթարկվող մահացու հիվանդությունների տարածմանը:

«Թրանսփարենսի Ինթրնեշնլ» (ԹԻ) գործադիր տնօրեն Դեվիդ Նուսբաումի խոսքերով, «Կոռուպցիան քայքայում է հասարակության վստահությունը բուժաշխատողների նկատմամբ: Մարդիկ իրավունք ունեն ակնկալելու, որ այն դեղերը, որոնցից իրենք կախված են, իսկական են: Նրանք իրավունք ունեն ենթադրելու, որ բժիշկները հիվանդների շահերն ավելի բարձր են դասում, քան սեփական շահույթը: Եվ, ամենակարևորը, նրանք իրավունք ունեն հավատալու, որ առողջապահական համակարգը կոչված է բուժելու, այլ ոչ թե սպանելու» [5]:

Կոռուպցիայի գլոբալ զեկույցում նշվում է, որ ագրեսիվ մարկետինգային տեխնոլոգիաների կիրառումը հանգեցնում է բժիշկների կողմից որոշ դեղամիջոցներին նախապատվություն տալուն, ինչի հետևանքով կտրուկ աճում է այնպիսի դեղատոմսերի քանակը, որոնք միշտ չէ, որ հիմնվում են հիվանդի կարիքների վրա: Երբ առանձին, մեծ կիրառում ունեցող դեղամիջոցներ տարեկան տասնյակ միլիարդավոր դոլարների շահույթ են ապահովում դեղագործական ընկերություններին, մարկետինգի և լոբբիստական գործունեության վրա դրանց կողմից ծախսվող ուռճացված միջոցները քիչ գումարներ են թողնում գիտական հետազոտությունների և այնպիսի նոր ու կենսական նշանակություն ունեցող դեղամիջոցների մշակման համար, որոնք աղքատ երկրներում կփրկեին բազմաթիվ մարդկային կյանքեր [5]:

Կոռուպցիան բնորոշվում է որպես աղքատության պատճառահետևանք: Աղքատությունը նպաստում է կոռուպցիայի տարածմանը, իսկ զարգացող հիվանդությունները մարդկանց տանում են դեպի աղքատություն: Աղքատությունը մեծապես նպաստում է կոռուպցիայի նկատմամբ խոցելիությանը, իր հերթին համավարակն առավել մեծ ազդեցություն է ունենում բնակչության հատկապես սոցիալապես և տնտեսապես խոցելի խավերի վրա՝ ուղղակի և անուղղակի հետևանքներ ունենալով աղքատության կրճատման համար:

Համաձայն Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ)՝ կոռուպցիայի նկատմամբ հանրության վերաբերմունքը և կոռուպցիոն երևույթների հետ շփման նրանց փորձը արտահայտող ցուցանիշների՝ 2013թ. 1068 անձանց շրջանում անցկացված հարցման մեջ ընդգրկված հաստատություններից /ոլորտներից/ որպես ամենակոռումպացված երեք ոլորտներից մեկը ընկալվել են առողջապահական ծառայությունները: Հարցվածների 66%-ը բժշկական և առողջապահական ծառայությունները համարել է կոռումպացված: Հարցմանը մասնակցածների 24%-ը վերջին 12 ամիսների ընթացքում մատուցված բուժծառայությունների դիմաց կաշառք է տվել բուժաշխատողներին [6]:

Առողջապահության ոլորտում կոռուպցիայի ռիսկեր կարող են ի հայտ գալ՝

- սարքավորումների, բժշկական պարագաների՝ ներառյալ դեղամիջոցների ձեռք բերման գործընթացում, երբ առաջարկվում են կաշառքներ, ետվճարումներ ու առկա են գնի առաջարկման հաղթողներ: Գնումների ընթացքում լինում է գնի առաջարկման գաղտնի պայմանավորվածություն, ինչպես նաև դեղամիջոցի ոչ էթիկ խթանում: Արդյունքում ձեռք են բերվում թանկարժեք, իրական կարիքներին անհամապատասխան ու ստանդարտներին անհամապատասխան դեղամիջոցներ ու սարքավորումներ,
- բժշկական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ դեղամիջոցների ու բժշկական պիտույքների բաշխման և օգտագործման գործընթացում, երբ պահեստավորման ու բաշխման կետերից դեղերի ու սարքավորումների հափշտակում (անձնական օգտագործման նպատակով) կամ արտահոսք (մասնավոր հատվածում վերավաճառքի նպատակով),

ինչպես նաև անվճար տրամադրվող դեղամիջոցների ու բժշկական պիտույքների վաճառք է արձանագրվում: Արդյունքում առկա է դեղամիջոցների ու բժշկական պիտույքների օգտագործման ցածր գործակից, պացիենտների անպատշաճ բուժում, դեղեր ստանալու համար պացիենտների կողմից կատարված ոչ պաշտոնական վճարումներ, բուժման ընդհատում կամ ոչ լիարժեք բուժում:

- Պիտույքների, ծառայությունների, հաստատությունների և մասնագետների որակի կանոնակարգման գործընթացում, երբ առաջարկվում է կաշառք՝ դեղերի գրանցման, դեղերի որակի զննման, արտադրության սերտիֆիկացման գործընթացի արագացման համար: Արդյունքում շուկայում հայտնվում են փոխարինող կամ կեղծ դեղեր, արձանագրվում են սննդային թունավորման դեպքերի աճ, վարակիչ հիվանդությունների տարածում,
- Բժշկական հետազոտությունների գործընթացում, երբ դեղագործական ընկերությունների կողմից ֆինանսավորվում են իրականում մարքետինգի համար նախատեսված կեղծ փորձարկումներ: Արդյունքում, աղճատված և անարդար հետազոտություններով պայմանավորված, խախտվում են անհատների իրավունքները:
- Բուժաշխատողների կողմից ծառայությունների մատուցման գործընթացում, երբ մասնավոր այցելուներին սպասարկում են պետական հաստատություններում՝ պետական սարքավորումներով, մասնավոր բուժման համար տրվում են անտեղի ուղեգրեր, բացակայում են աշխատանքից, մատուցած ծառայությունների դիմաց հիվանդներից պահանջում են կատարել ոչ պաշտոնական վճարումներ: Արդյունքում՝ արձանագրվում են պետական ներդրումների անհատույց կորուստ, մասնավոր այցելուներին սպասարկող բուժաշխատողների բացակայություն աշխատավայրից, բժշկական ծառայություններից խուսափում անվճարունակ պացիենտների կողմից:

Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հետազոտությունները վկայում են այն մասին, որ բուժծառայությունների դիմաց կոռուպցիան ոչ պաշտոնական վճարումների ձևով նվազեցնում է հաս-

կապես աղքատների բուժծառայությունների հասանելիությունը և բուժծառայություններից չօգտվելու պատճառ է հանդիսանում [7]: Սակայն, եթե այդ վճարումները դրամական ներդրումներ են, ապա դրանք կարող են բարձրացնել արդյունավետությունը, քանի որ ավելի շատ մարդ կարող է բուժվել համեմատաբար ցածր լրացուցիչ ծախսերով:

Համաձայն 2014թ.-ի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (ՏՏԿԱՀ) արդյունքների՝ առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները բաշխվել են հետևյալ կերպ. նորմալ, լավ և շատ լավ գնահատականը ստացվել է 88.6% բնակչության կողմից, իսկ վատ և շատ վատ գնահատականը՝ 11.4%-ի կողմից [2]: Երբ առողջական վիճակի սուբյեկտիվ գնահատականները դիտարկվում են ըստ աղքատության մակարդակի, ապա վատառողջ են ոչ աղքատների 11.5%-ը, աղքատների՝ 10.9% և ծայրահեղ աղքատների՝ 12.4%-ը: Համաձայն 2014թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների՝ հետազոտությանը նախորդող մեկ ամսվա ընթացքում հիվանդացել են հարցվածների 15%-ը: Հիվանդության ժամանակ դիմել է առողջության առաջնային պահպանման (ԱԱՊ) ծառայություններին բժշկական խորհրդատվության կամ բուժման համար հիվանդների 37.6%-ը, ընդ որում՝ այլ քաղաքներում բնակվողները ավելի հաճախ՝ (42.7%), քան երևանաբնակները՝ (36.3%), և գյուղաբնակները (34.4%): Նախորդ տարվա համեմատ հիվանդներն ավելի հաճախ են դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման ինչպես երկրի մակարդակով, այնպես էլ ըստ տարածաշրջանների (2013թ.-ին այն կազմել է, համապատասխանաբար, 29.3%, 31.2%, 32.3% և 25.1%): Բուժման դիմածների տեսակարար կշիռը, ըստ աղքատության մակարդակի, տարբերվում է: Եթե հիվանդության դեպքում ոչ աղքատների 40.6%-ն է դիմել բժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների (առանց ծայրահեղ աղքատների)՝ 31.0%-ն և ծայրահեղ աղքատների 13.8%-ն է դիմել բժշկական խորհրդա- տվության կամ բուժման:

Հետազոտվող ամսվա վերջին այցի ժամանակ պոլիկլինիկական բուժհիմնարկների մասնագետների օգնությանը դիմած բնակչությունը միջինում իր ծախսերի 73.3%-ը վճարել է անձնակազմից որևէ մեկին գնացուցակով, միայն 1%-ը՝ նվերների տեսքով, իսկ 25.7%-ը՝ ռենտգենի կամ լաբորատոր հետազոտության համար: Վճարումների չափը

տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատների կողմից պոլիկլինիկական բուժհիմնարկներում անձնակազմից որևէ մեկին գնացուցակով կատարած վճարման միջին չափը 4.0 անգամ ավելին է, քան աղքատներինը: Ոչ աղքատների կողմից խորհրդատվության հետ կապված վճարումները (ռենտգեն/լաբորատոր/ հետազոտություն) 1.7 անգամ գերազանցել են աղքատների կողմից կատարված վճարումներին:

Առողջության առաջնային պահպանման ծառայություններին չդիմելու հիմնական պատճառն ինքնաբուժումն է՝ 55% և ֆինանսական վատ վիճակը՝ 18.% [2]:

Առողջապահության համակարգում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազեցնում են մրցակցությունը, բարձրացնում բժշկական ծառայությունների գինը և խարխլում հիվանդների վստահությունը բուժաշխատողների նկատմամբ: Ուշադրության են արժանի կոռուպցիոն դրսևորումները հատկապես դեղագործական արդյունաբերության մեջ: Որոշակի դեղամիջոցների կիրառմանն անպարկեշտ կերպով աջակցելը կարող է շահերի բախում առաջացնել բժիշկների մոտ և հետագայում վնաս պատճառել հիվանդների առողջությանը: Եթե դեղագործական ընկերությունների կողմից իրականացվող դեղորայքի մարքեթինգը լավ չի կարգավորված, բժիշկները, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, կարող են մարքեթինգային խթանների ազդեցության տակ նշանակել այնպիսի բուժումներ, որոնք օգուտ չեն տա (և անգամ կարող են վնասել) հիվանդներին:

«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունների կողմից իրականացված հետազոտությունից պարզվել է, որ բժշկական կազմակերպությունները երբեմն չեն կարողանում ձեռք բերել անհրաժեշտ տեսակի դեղորայք: Նման դեպքերում բժշկի բանավոր ցուցումով և ուղղորդմամբ հիվանդն ինքն է ձեռք բերում անհրաժեշտ դեղորայքը, ինչի արդյունքում ձևավորվում են լուրջ կոռուպցիոն ռիսկեր՝ անօրինական վճարների գանձում հիվանդից, թանկարժեք կամ դժվարամատչելի դեղերի (այդ թվում չգրանցված) տրամադրում հովանավորչության միջոցով կամ դեղամիջոցներ ներմուծող կազմակերպություններից դեղորայքի գնում

կատարելու շահադիտական ուղղորդում՝ կատարվող վաճառքից կոնկրետ տոկոս ստանալու ակնկալիքով (ատկատ) [1]:

Գործող իրավական դաշտը պատժամիջոցներ կիրառելու քիչ հնարավորություններ է տրամադրում: Մասնավորապես, մասնավոր հատվածում բժշկական ծառայություն մատուցող մասնագետները, ովքեր որոշակի դեղամիջոցներ նշանակելիս որպես խթան գումար կամ նվեր են ստանում դեղագործական ընկերություններից, չեն հայտնվում կաշառք ստանալը կարգավորող օրենսդրական դաշտում:

2015թ. հուլիսի 29-ին Գերմանիայի կառավարությունը ներկայացրել է առողջապահության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի օրինագիծ, համաձայն որի կոռուպցիան ու կաշառակերությունը դիտարկվում են որպես քրեորեն պատժելի արարք, բացառությամբ հանրային բարձր շահ ներկայացնող դեպքերի [4]: Կլինիկաներին, լաբորատորիաներին և դեղամիջոցներ ու առողջապահական պիտույքներ մատակարարող ցանցերին չի թույլատրվում խթանել իրենց մոտ պացիենտներին ուղղորդող բժիշկ մասնագետներին: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության Գերմանիայի մասնաճյուղը նույնպես ողջունել է այդ օրինագիծը:

Այս օրինագիծը ուժի մեջ է մտել 2016թ. հունվարի 1-ից և թույլ է տալիս կանխել կոռուպցիան առողջապահության ոլորտում, որը առողջապահական ծախսերի զգալի աճի պատճառ է հանդիսանում և խափանում է հանրության վստահությունը առողջապահության ոլորտի նկատմամբ: Հետևաբար, այդ օրինագիծը ունի երկակի նպատակ՝ ապահովել առողջապահության ոլորտում արդար մրցակցություն, ինչպես նաև պահպանել հանրության վստահությունը բժշկական հաստատությունների նկատմամբ:

Գերմանական կառավարության կողմից առողջապահության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի նախնական օրինագծում կատարած փոփոխության միջոցով պատժելի հանցագործությունը նույնացվում է նախնական ապօրինի համաձայնության հետ: Այս պահանջով երաշխավորվում է, որ քրեորեն պատժելի հանցագործությունը կախված չէ բժշկի մասնագիտությունից ու պետական կամ մասնավոր հատվածում աշխատելուց և դրանով իսկ կանխվում է անհավասար վերաբերմունքը բժիշկ մասնագետների նկատմամբ:

Համաձայն Հայաստանի Դեղագործության Ոլորտի Մարքեթինգային Գործունեության կանոնագրքի՝ չի թույլատրվում առողջապահության ոլորտի մասնագետներին առաջարկել, խոստանալ, տրամադրել կամ փոխանցել ցանկացած տեսքով պարգևատրում՝ հիվանդներին որոշակի դեղագործական արտադրանքի նշանակման կամ երաշխավորման համար [3]:

Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ Հայաստանում դեղագործական ընկերությունների կողմից իրականացվող դեղորայքի մարքեթինգի կարգավորման և կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով անհրաժեշտ է կատարել փոփոխություն ՀՀ Քրեական օրենսգրքի 311 և 312 հոդվածներում՝ փոխարինելով «պաշտոնատար անձ»-ը «հանրային և մասնավոր հատվածում պաշտոնատար անձ»-ով, ինչպես նաև «պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային ծառայող»-ը «պաշտոնատար անձ չհանդիսացող հանրային և մասնավոր հատվածի ծառայող»-ով:

*Բանալի բառեր*. կոռուպցիա, առողջապահության համակարգ, առողջապահության մատչելիություն, ոչ պաշտոնական վճարումներ, դեղորայքի մարքեթինգի կարգավորում:

**Գրականություն**

1. Կոռուցիոն ռիսկերի գնահատում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության ոլորտում, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ, Երևան 2016
URL: http://transparency.am/files/publications/1465375828-0-879398.pdf (այցի օր՝ 27.07.2016թ.)
2. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015: Մաս 3. Հայաստան. ոչ նյութական աղքատությունը,
URL: http://www.armstat.am/file/article/7.poverty_2015a_4.pdf (այցի օր՝ 27.07.2016թ.)
3. Հայաստանի դեղագործության ոլորտի մարքեթինգային գործունեության կանոնագիրք 2014թ.

URL:http://www.moh.am/Kolegia/28.02.2014/Marketing%20october2014.pdf
4. The Act on Fighting Corruption in the Healthcare Sector 2015 URL:http://www.squirepattonboggs.com/~/media/files/insights/publications/2016/07/the-act-on-fighting-corruption-in-the-healthcare-sector/fighting-corruption-in-the-healthcare-sector-alert.pdf (այցի օր՝ 27.07.2016թ.)
5. Global corruption report 2006: Corruption and health URL:https://issuu.com/transparencyinternational/docs/2006_gcr_healthsector_en?backgroundColor= (այցի օր՝ 27.07.2016թ.)
6. Global corruption barometer 2013, Transparency International. URL: http://www.transparency.org/gcb2013/country/?country=armenia (այցի օր՝ 27.07.2016թ.)
7. Lewis M., (2000) “Who is paying for health care in Eastern Europe and Central Asia?” Human Development Sector Unit, Europe and Central Asia Region. Washington, DC: World Bank URL:http://web.worldbank.org/archive/website00504/WEB/PDF/WHO_IS_P.PDF (այցի օր՝ 27.07.2016թ.)

## ВОПРОСЫ МАРКЕТИНГА ЛЕКАРСТВЕННЫХ СРЕДСТВ: КОРРУПЦИЯ И ЗДРАВООХРАНЕНИЕ

**Мартоян Сирануш Вачиковна**
ЕОРА, кафедра экономики и менеджмента, соискатель

### Резюме

Исследования показывают, что использование агрессивных методов маркетинга приводит к тому, что врачи отдают предпочтение определенных препаратов. Это приводит к значительному увеличению числа рецептов, которые не всегда основаны на потребности пациентов.

На основе международного опыта в целях снижения коррупции и регулирования маркетинга лекарственных средств в фармацевтических компаниях в Армении необходимо внести поправку к статьям 311

и 312 Уголовного кодекса, заменив слова "государственное должностное лицо" на "государственное и частное должностное лицо", а также "государственный служащий, который не является государственным должностным лицом" на "государственный и частный служащий, который не является государственным должностным лицом "соответственно.

*Ключевые слова:* коррупция, здравоохранение, доступность, неофициальные платежи, регулирование маркетинга лекарственных средств.

## MEDICINES MARKETING ISSUES: CORRUPTION AND HEALTH

**Martoyan Siranush Vachik**
EREA, Department of Economics and Management, applicant

### Summary

Research findings show that aggressive marketing techniques buy physicians support for specific drugs, leading to a high rate of prescriptions that are not always based on patient need.

Based on international experience in order to reduce the risks of corruption and regulation of drug marketing by pharmaceutical companies in Armenia there is a need to propose an amendment to the Criminal Code articles 311 and 312, replacing "public official" with a "public and private officials", as well as "a public servant who is not a public official" with a "public and private servant who is not a public official" respectively.

*Keywords:* corruption, health care system, accessibility, unofficial payments, regulation of drug marketing

# ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ. ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

***Մարտիրոսյան Սիրանուշ Վաչիկի***
*ԵԿՏԱ, տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ*

Տնտեսական զարգացման արդի շրջանում կոռուպցիան շարունակում է մնալ մարտահրավեր և առողջապահության համակարգի կառավարման հզորացման համար կարևորվում է պետական կառավարման արդյունավետ համակարգի ձևավորումը:

ՀՀ կառավարության 2012-2017թթ. գործունեության ծրագրում շեշտադրվում է առողջապահության ծառայությունների մատչելիության, հասանելիության և որակի բարձրացումը՝ իրականացվող բարեփոխումները շարունակելու նպատակով [4]: ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրում պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը առողջապահության ոլորտն է [5]:

Առողջապահական համակարգի կառավարման, ֆինանսավորման, այդ թվում՝ պետական պատվերի շրջանակներում մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների շրջանակներում առկա կոռուպցիոն ռիսկերի կրճատման, որակի բարելավման, թափանցիկության, հաշվետվողականության և վերահսկողության ապահովման անհրաժեշտությունը սահմանվել էր ՀՀ կառավարության կողմից ընդունված հակակոռուպցիոն երկու տարբեր ռազմավարական փաստաթղթերով [6]: ՀՀ կառավարության կողմից հաստատված 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված կոռուպցիայի դեմ պայքարի թիրախային ոլորտներից մեկը առողջապահության ոլորտն է [8]:

Որպեսզի կրճատվի առողջապահության ոլորտի ստվերային շրջանառությունը, Հայաստանում ներդրվել է առողջապահության ծառայությունների համավճարման մեխանիզմը: Համավճարները, որպես ֆինանսավորման պաշտոնական աղբյուր, մինչև 2003թ. հոկտեմբեր ամիսը գործնական կիրառում չեն ունեցել: Հիվանդանոցային օղակում 2010 թվականից ներդրվել է համավճարի սկզբունքը, որն ընդգրկում է միայն անհետաձգելի և գինեկոլոգիական բուժօգնության ծրագրերը

[2]: «Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերի շրջանակներում իրականացվող ծառայությունների փոխհատուցումը 2012 թվականի հոկտեմբերի 1-ից նույնպես իրականացվում է համավճարային եղանակով [3]:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս բժշկական ապահովագրությունը գտնվում է դեռևս ձևավորման փուլում: Հանրապետությունում բժշկական ապահովագրության պարտադիր համակարգ դեռևս չի գործում: ՀՀ կառավարության կողմից 2012թ. տարեսկզբից ներդրվեց «Սոցիալական փաթեթ» պիլոտային ծրագիրը, որի շրջանակներում հանրային ծառայողների որոշակի հատվածի գծով պետական բյուջեի համապատասխան սոցիալական հատկացումների հաշվին նախատեսվեց 4 հիմնական բաղադրիչ՝ առողջության ապահովագրություն, հիփոթեքային վարկի ամսական վճարում, ուսման վճարի մարում, ինչպես նաև ՀՀ-ում և ԼՂՀ-ում հանգստի ապահովման կազմակերպում [12]: Հարկ է նշել, որ այս համակարգը իր գործունեության ներդրման պահից ի վեր ենթարկվեց որոշակի փոփոխությունների՝ հաշվի առնելով արդյունավետության ցուցանիշները և մի շարք այլ հանգամանքներ [13; 14]:

Վերջին տարիներին Հայաստանը կարողացել է ապահովել առողջապահության առանցքային ցուցանիշների մասով դրական փոփոխություններ: Մասնավորապես, 2014թ. կյանքի սպասվող տևողությունը ծնվելու պահից՝ տղամարդկանց մոտ կազմել է 71.8 տարի, իսկ կանանց մոտ՝ 78.1 տարի: Բացի այդ՝ արձանագրվել է նաև մինչև մեկ տարեկան մանկական մահացության ցուցանիշի անկում: Սակայն երկրում շարունակում է աճել բնակչության հիվանդացության մակարդակը, որին զուգահեռ աճում է ոչ վարակիչ հիվանդություններից մահացության դեպքերի թիվն ու տեսակարար կշիռը մահացության պատճառների ընդհանուր կառուցվածքում: Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունները կազմում են մահացության շուրջ 90%-ը և մինչև 60 տարեկան անձանց հաշմանդամության պատճառների 65%-ը: Մահացության կառուցվածքում գերակշռող արյան շրջանառության համակարգի հիվանդություններն ու չարորակ նորագոյացություններից արձանագրված դեպքերը, որոնք արդյունք են ծխամոլության, ալ-

կոհոլամոլության, ոչ առողջ ապրելակերպի և այլն, կազմում են մահացության ընդհանուր դեպքերի ավելի քան 68.5%-ը [11]:

Ծխախոտ օգտագործող մարդկանց ավելի քան 80%-ն ապրում են տնտեսապես ոչ զարգացած երկրներում, որտեղ ծխախոտի հետ կապված հիվանդությունների բեռն ամենամեծն է: Ծխախոտի մշտական օգտագործումը ուժեղ կախվածություն է առաջացնում ու կայուն բացասական ազդեցություն ունի ծխողի առողջության վրա: Տուժում է նաև չծխողների առողջությունը, որոնք գտնվում են ծխողի կողքին և հաճախ ենթարկվում ծխախոտի ծխի ազդեցությանը:

Վերջին տարիներին «Առողջապահության համակարգի գործունեության գնահատման» հետազոտություններով գնահատվել են ոչ վարակիչ հիվանդությունների զարգացման ռիսկի մի շարք գործոններ, այդ թվում՝ ծխախոտի օգտագործումը, որոնք ազդեցություն ունեն առողջության վիճակի վրա: Առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) 2014թ. հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվել է բնակչության առողջության ամենատարածված ռիսկի գործոններից մեկը՝ ծխելու սովորությունը [1]: Ծխախոտը կարևորագույն ռիսկի գործոն է ոչ վարակիչ հիվանդությունների համար, որի հետևանքով հանրապետությունում սրտանոթային, շնչառական համակարգի ու քաղցկեղային հիվանդությունների, իսկ թոքի քաղցկեղի 80-85 տոկոսը պայմանավորված է ծխախոտի երկարատև՝ 15 տարի և ավելի, օգտագործմամբ: Հայաստանում թոքի քաղցկեղի 1000 դեպքից ավելի է արձանագրվում տղամարդկանց մոտ, իսկ կանանց մոտ այդ թիվը հասնում է 150-180-ի, ինչը պայմանավորված է ծխախոտ օգտագործելով: ԱՀԳԳ հետազոտության տվյալների համաձայն՝ Հայաստանում ամեն օր ծխում է տղամարդկանց 56,5%-ը, որը շատ մեծ տոկոս է կազմում, իսկ կանանց մոտ՝ 3,5 %-ը (հայտնում են դրա մասին): Ամեն օր ծխող տղամարդկանց քանակը հարաբերականորեն ավելի բարձր է ցածր բարեկեցությամբ խմբում: «Պասիվ ծխողներ» են համարվում չծխող անձինք, ովքեր պարբերաբար գտնվում են ծխողների կողքին՝ ծխախոտի ծխի վնասակար ազդեցության տակ: Տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանի չափահաս բնակչության 26,5%-ը ամեն օր պասիվ ծխողի կարգավիճակում է, իսկ 7,0%-ը տանը պասիվ ծխող է շաբաթական մի քանի անգամ: Տանը պասիվ ծխողների հարաբերական քանակը մի փոքր ավե-

լի բարձր է գյուղերում, որտեղ տանը ամեն օր պասիվ ծխողներ են կանանց 43,9 %-ը, տղամարդկանց՝ 7,1%-ը:

Ավելի լավ է կանխարգելել, քան բուժել հիվանդությունը: Նվազեցներով ռիսկային վարքագիծը՝ կարելի է զգալիորեն նվազեցնել հիվանդացության ռիսկը: Ծխելը ո՛չ միայն թոքերի, կոկորդի, բերանի խոռոչի քաղցկեղ է առաջացնում, այլ նաև բացասաբար է ազդում սրտի վրա, եթե չխոսենք ընդհանուր ինքնազգացողության վատթարացման մասին: Այդ պատճառով ծխողների համար միակ ճիշտ խորհուրդը ծխելն անմիջապես թողնելն է, չծխողների համար՝ փորձել որքան հնարավոր է պաշտպանել իրենց և իրենց երեխաներին ծխախոտի ծխից: Չնայած սպիրտային խմիչքները քաղցկեղ կարող են առաջացնել ընդամենը 3% դեպքերում՝ այնուամենայնիվ, ալկոհոլը և ծխախոտը մահացու համակցություն են: Այդ պատճառով հարկավոր է փորձել նվազագույնի հասցնել ալկոհոլային խմիչքների ընդունումը:

Ներկայումս գրեթե բոլոր երկրները տարբեր մեթոդներով հարկ են գանձում ծխախոտի վաճառքից առաջացած գումարներից՝ նպատակ ունենալով մի կողմից ավելացնելու պետական եկամուտները, մյուս կողմից՝ նվազեցնելու ծխախոտի օգտագործման հետևանքով առողջությանը սպառնացող վտանգը:

Ծխախոտի հարկերը Հայաստանում 1997 թվականի հուլիսի 26-ին Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և Հայաստանի Հանրապետությունում արտադրվող արտադրանքի համար հաստատագրված վճարներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության՝ օրենքի ուժ ունեցող որոշումը, որով ներմուծվող և արտադրվող սիգարետների համար սահմանվեցին հաստատագրված վճարներ: 2014թ. հունվարի 1-ից ծխախոտի արտադրանքը հարկման ընդհանուր համակարգ է տեղափոխվել: Ծխախոտի արտադրանքի համար կիրառվում է ակցիզային հարկի հաստատագրված դրույքաչափ, իսկ ավելացված արժեքի հարկը հաշվարկվում է ծխախոտի արտադրանքի առավելագույն մանրածախ գնից: Միաժամանակ սահմանված է, որ ծխախոտ արտադրող կամ ներմուծող չհանդիսացող անձանց կողմից ծխախոտի արտադրանքի իրացումն ազատված է ավելացված արժեքի հարկից [9]: Համաձայն տվյալների՝ 2013-2015 թթ. ծխախոտի արտադրատեսակներից ակցիզային հարկի

(2014թ. և 2015թ.) մուտքերը բարձրացվել են հաստատագրված վճարի (2013թ.) համեմատ /տես՝ Աղյուսակ 1/:

*Աղյուսակ 1*

**2013-2015թթ. ՀՀ-ում արտադրվող ենթաակցիզային ապրանքներից ակցիզային հարկի մուտքերը (մլրդ դրամ) [10]**

| Ցուցանիշ/Տարի | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|
| Ակցիզային հարկ, այդ թվում՝ | 14.6 | 19.5 | 18.4 |
| Սպիրտային խմիչքներ | 5.8 | 5.8 | 4.7 |
| Գարեջուր | 1.8 | 2.5 | 2.1 |
| ՀՀ-ում արտադրվող ծխախոտ | 6.4 | 10.4 | 11.0 |

ՀՀ-ում արտադրվող ենթաակցիզային ապրանքների գծով ակցիզային հարկի մուտքերում ամենամեծ տեսակարար կշիռներն ունեն ծխախոտի, սպիրտային խմիչքների, գարեջրի հաշվին ապահովված ակցիզային հարկի մուտքերը համապատասխանաբար՝ 59.5, 25.7 և 11.3 տոկոս:

*Աղյուսակ 2*

**2013-2015թթ. ՀՀ ներմուծվող ապրանքներից ակցիզային հարկի մուտքերը (մլրդ դրամ) [10]**

| Ցուցանիշ/Տարի | 2013 | 2014 | 2015 |
|---|---|---|---|
| Ակցիզային հարկ, այդ թվում՝ | 38.4 | 32.2 | 30.6 |
| Ծխախոտի արտադրանքից | 19.1 | 12.4 | 12.5 |
| Սպիրտային խմիչքներ | 5.7 | 6.0 | 5.3 |

Բազմաթիվ երկրներում ծխախոտի հարկերի ավելացումը նպաստել է սպառման նվազմանը: Ծխախոտի հարկերի ավելացումը առավելապես նպաստում է երիտասարդների և անապահով բնակչության շրջանում սպառման նվազեցմանը: Առողջապահության ֆինանսավորման նպատակով կարելի է օգտագործել նաև բջջային հեռախոսներից գանձվող հարկերը: Այսպես, եթե ՀՀ կառավարությունն իր 2016-2018թթ. ՄԺԾԾ-ով նախատեսում է 2016թ. պետական բյուջեից 82.5 միլիարդ ՀՀ դրամ ուղղել առողջապահության ոլորտ (կամ ՀՆԱ 1.68 տոկոսը), ապա լրացուցիչ ֆինանսավորման ծավալների հաշվին այդ գումարը կարող է հասցվել առնվազն 89.7 միլիարդ ՀՀ դրամի, կամ

ՀՆԱ 1.82 տոկոսի (տես՝ Պատկեր 1): Լրավճարը պետք է հաշվել ակցիզային հարկի 10 տոկոսի չափով (Տես Աղյուսակ 3):

*Աղյուսակ 3*

**Ֆինանսավորման լրացուցիչ ծավալների հաշվարկ (միլիարդ դրամ)**

| Հարկ | 2015թ. | 2014թ. | 2013թ. |
|---|---|---|---|
| ՀՀ-ում արտադրվող ծխախոտից, սպիրտային խմիչքներից և գարեջրից ակցիզային հարկի մուտքերը (մլրդ դրամ) | 14.6 | 19.5 | 18.4 |
| ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքից և սպիրտային խմիչքներից ակցիզային հարկի մուտքերը (մլրդ դրամ) | 38.4 | 32.2 | 30.6 |
| Բջջային կապ (Ղ տելեկոմ, Արմենիա տելեֆոն կոմպանի, Օրանժ Արմենիա) | 18.8 | 23.2 | 21.6 |
| Լրավճար (անուղղակի հարկերի (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)10%-ի չափով) | 7.2 | 7.5 | 7.1 |

Աղբյուր. ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2015թ. և սեփական հաշվարկ

**Պատկեր 1. Պետական ծրագրավորված ծախսերն առողջապահության ոլորտում և ֆինանսավորման լրացուցիչ ծավալները (միլիարդ դրամ)**



Հիմնվելով միջազգային փորձի վրա՝ առաջարկում եմ ծխախոտի, ալկոհոլի և բջջային հեռախոսներից գանձվող հարկերի ավելացումից առաջացած եկամուտները ուղղել առողջապահության ոլորտ և դրանցով ֆինանսավորումը պետական բյուջեում հաշվառել առանձին: ՀՀ առողջապահության նախարարությունը կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով կարող է որոշել, թե որ միջոցառման կամ գործողության համաֆինանսավորմանը կամ ամբողջությամբ ֆինանսավորմանը կարող են ուղղվել այդ միջոցները:

*Բանալի բառեր*. կոռուպցիա, այլընտրանքային ֆինանսավորում, առողջապահության մատչելիություն, ոչ պաշտոնական վճարումներ, հակակոռուպցիոն միջոցառումներ:

## Գրականություն


1. Առողջապահության համակարգի գործունեության գնահատում 2014թ. http://www.moh.am/texekatu/HSPA%202014%20Main_ARM%20_Final .pdf Այցի օր՝ 01.07.2016
2. Բժշկական ծառայությունների փոխհատուցման համավճարային մեխանիզմների ներդրման աշխատանքները կազմակերպելու, համակարգելու և շարունակական հսկողություն իրականացնելու մասին ՀՀ ԱՆ N 97-Ա հրաման, 31.01.2011թ., Երևան
3. ՀՀ ԱՆ N 2148-Ա «Ուռուցքաբանական եվ արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» և «Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ» ծրագրերում փոխհատուցման համավճարային եղանակի ներդրման մասին հրաման, 26.91.2012թ., Երևան
4. ՀՀ կառավարության ծրագիր 2012-2017թթ. http://www.gov.am/files/docs/970.pdf Այցի օր՝ 01.06.2016
5. ՀՀ 2016-2018թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր http://www.gov.am/files/docs/1603.pdf Այցի օր՝ 01.06.2016
6. ՀՀ կառավարության 06.11.2003թ. թիվ 1522-Ն որոշում http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28927 Այցի օր՝ 01.07.2016

7. ՀՀ կառավարության 08.10.2009թ. թիվ 1272-Ն որոշում http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=74415 Այցի օր՝ 01.07.2016
8. ՀՀ 2015-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարություն http://www.justice.am/legal/history_view/act_id/808 Այցի օր՝ 01.07.2016թ.
9. ՀՀ օրենք ավելացված արժեքի մասին ՀՕ-118, 01.07.1997թ. Բաժին V, Կետ 31, http://www.arlis.am/documentview.aspx?docid=80579
10. ՀՀ ԿԱ ՊԵԿ տարեկան հաշվետվություն 2015թ. http://www.taxservice.am/Shared/Documents/Publications/th_annual_report_2015.pdf
11. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2015 Մաս 1. Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2014թթ. էջ 22 http://www.armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf Այցի օր՝ 01.07.2016թ.
12. ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և 1923-Ն որոշումներ
13. ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշում
14. ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշում

## ПОВЫШЕНИЕ ДОСТУПНОСТИ МЕДИЦИНСКОЙ ПОМОЩИ: АЛЬТЕРНАТИВНОЕ ФИНАНСИРОВАНИЕ

**Мартоян Сирануш Вачиковна**
ЕОРА, кафедра экономики и менеджмента, соискатель

### Резюме

В целях повышения доступности медицинской помощи в Армении проводятся ряд антикоррупционных мероприятий.

Заболевания, связанные с системой кровообращения и злокачественных опухолей приходится более 68,5% смертей записи, доминируют в структуре смертности.

Основываясь на международной практике, предлагаю прибыль увеличенных налогов на табак, алкоголь и мобильных телефонов направлять в сектор здравоохранения в качестве альтернативного финансирования и в государственном бюджете учитывать отдельно. С целью противодействия коррупции министерство здравоохранения Армении может принять решение о том, какие мероприятия могут быть финансированы.

*Ключевые слова:* коррупция, альтернативное финансирование, доступность медицинской помощи, неофициальные платежи, анти-коррупционные мероприятия.

## IMPROVING ACCESS TO HEALTH CARE: ALTERNATIVE FINANCING

**Martoyan Siranush Vachik**
EREA, Department of Economics and Management, applicant

### Summary

Series of anti-corruption measures are conducted in Armenia to improve the access to health care services.

Registered cases of blood circulatory system and malignant tumor diseases which are related to smoking, alcoholism and unhealthy lifestyle constitute major part of mortality (68.5%).

Based on international practice, the revenues from increased taxes on tobacco, alcohol and mobile phones should be allocated to the health sector as an alternative financing and be registered in the state budget separately. For decreasing corruption risks Ministry of Health may decide which activities should be financed or co-financed.

*Keywords:* corruption, alternative financing, access to health care, unofficial payments, anti-corruption measures.

# ՇԱԲԼՈՆԻԶԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄՇԱԿՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

**_Հուսիկ Զիֆրիտի Գևորգյան_**
_ֆիզմաթ. գ.թ., պրոֆեսոր_
_ԵԿՏԱ, պրոռեկտոր_
**_Մուկուչ Զավենի Պողոսյան_**
_տ.գ.թ., ԵԿՏԱ, ՏՏ և կիրառական_
_մաթեմատիկայի ամբիոնի վարիչ_

Աշխատանքում նկարագրվում է ուսումնական տարվա ավարտին բուհերի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով շրջանավարտներին տրվող դիպլոմի հավելվածի ստեղծման և ձևավորման համար ծրագրային մշակման մի մեթոդ:

**Ներածություն:** Ուսումնական տարվա ավարտին բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով դասընթացներն ավարտող շրջանավարտներին ավարտական դիպլոմների հետ միասին տրվում են նաև այդ դիպլոմներին կից հավելվածներ [1,2], որտեղ 3 լեզուներով (հայերեն, անգլերեն, ռուսերեն) ներկայացվում են՝

- ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումներ, տեղեկություններ ազգային բարձրագույն կրթական համակարգի մասին, բուհի մասին որոշ տեղեկություններ և այլն:
- տվյալ ուսանողի անունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, ստացած մասնագիտությունը, որակավորումը, մասնագիտացումը, դասավանդվող առարկաների լեզուն, ուսուցման ձևը, ստացած որակավորման ծրագրային պահանջները, որակավորման համընդհանուր բնութագիրը,
- գնահատման գործող համակարգը և գնահատականների բաշխման ուղեցույցը,
- որակավորումը ստանալիս բոլոր դասավանդված առարկաների անվանումները, կրեդիտները, ուսանողի ստացած միավորները թվային և տառային համակարգերով,
- ուսումնական ծրագրի կրթամասային բաղադրամասերը, շրջանավարտի ցուցաբերած անհատական արդյունարար ցուցանիշները:

Ձեռքով այս աշխատանքների կատարելը բավական աշխատատար է: Մյուս կողմից այդ փաստաթղթերում տվյալների մուտքագրման ժամանակ հաճախ առաջանում են սխալներ: Ուստի այդ պատճառով փաստաթղթերի արագ ձևավորման և դրանց մեջ տվյալների մուտքագրման համար անհրաժեշտություն է առաջանում այնպիսի ծրագրերի մշակում, որոնք կավտոմատացնեն ձեռքի աշխատանքը:

**Նախագծման փուլ:** Փաստաթղթի ծրագրային ապահովման մշակման համար ընտրվել է նախագծման հետևյալ ընթացակարգը (տես գծ.1)՝

1. A4 ձևաչափի տարածքում ստեղծվում են շաբլոններ 2 էջերի ներկայացմամբ,
2. շաբլոններում այն տեքստային տեղեկությունների, կանոնակարգերի տեղադրումը, որոնք վերաբերում են բոլոր շրջանավարտներին,
3. շրջանավարտների անհատական և ուսումնառության ընթացքում ձեռք բերված արդյունքների տեղեկությունների տեղադրումը շաբլոններում,
4. դասավանդված դասընթացների անվանումները, կրեդիտները, շրջանավարտների ուսումնառության ընթացքում հավաքած միավորների տեղադրումը շաբլոններում:

**Գծ. 1. Փաստաթղթի ծրագրային ապահովման մշակման ընթացակարգը:**




Որպես ծրագրային ապահովման միջոց ընտրված է MS Excel 2010-ը [3,4]: Excel 2010-ը օգտագործելիս շատ պարզ է, ունի նախագծին անհրաժեշտ գործիքներ և որ ամենակարևորն է, ուսանողների Միջին որակական գնահատականները (ՄՈԳ) նույնպես լրացվում են

MS Excel-ով, հետևաբար դասավանդվող առարկաների անվանումները, միավորները հեշտությամբ ՄՈԳ-երից փոխանցվում են այս շաբլոնների մեջ:

**Մշակման փուլ:**

- Excel-ի թերթերի (Sheets) վրա ստեղծվել են շաբլոնները, դրանք 11 հատ են:
- 2 թերթերի վրա ստեղծվել են ցուցակների համար տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են շաբլոններում տեղեկությունների հեշտ մուտքագրման համար:
- Մեկ թերթ (Ararkaner անվանումով) նախատեսված է դասավանդված առարկաների անվանումների (3 լեզուներով), դրանց կրեդիտների, ինչպես նաև շրջանավարտների հավաքած թվային և տառային միավորների տեղեկատվությունների մուտքագրման համար:

Այս փուլերից հետո մուտքագրվում են վերևում թվարկված շրջանավարտների անհատական և ուսումնառության ընթացքում ձեռք բերված ինֆորմացիաները, իսկ վերջում առարկաների կրեդիտները և ուսանողների քննություններից ստացած թվային միավորները մուտքագրվում են ՄՈԳ - երից՝ ուղղակիորեն պատճենահանելով և դրանք Ararkaner թերթում տեղադրելով, որը հեշտացնում է մուտքագրման աշխատանքը և փոքրացնում սխալ տվյալների ներմուծման ռիսկերը: Այս գործողությունները կատարում են նախագծում մշակված մակրոսները (տես Լիստինգ 1), որոնց միջոցով հեշտությամբ մուտքագրվում է անհրաժեշտ տեղեկատվությունը և տեղադրվում շաբլոններում նախատեսված համապատասխան դաշտերում:

Microsoft Office Excel – ում կրկնվող խնդիրների կատարման ավտոմատացման համար կարելի է կիրառել մակրոսներ: Մակրոսներ կարելի է ստեղծել՝ օգտագործելով Visual Basic խմբագիրը Microsoft Visual Basic միջավայրում [5,6]:

**Լիստինգ 1.** Ararkaner անվանումով թերթում ներքևում պատկերված մակրոսը 3 լեզուներով գրված առարկաները, նրանց կրեդիտները և շրջանավարտների ստացած միավորները տեղադրում է հավելվածի նախապես որոշված համապատասխան էջերում, երբ սեղմվում է կոճակը:

```
Sub Button1_Click()

For i = 2 To 16
Worksheets("Sheet4").Cells(i + 35, 1) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 1)
Worksheets("Sheet4").Cells(i + 35, 6) = Cells(i, 4)
Worksheets("Sheet4").Cells(i + 35, 7) = Cells(i, 5)
Worksheets("Sheet4").Cells(i + 35, 8) = Cells(i, 6)
Worksheets("Sheet7").Cells(i + 35, 1) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 3)
Worksheets("Sheet7").Cells(i + 35, 6) = Cells(i, 4)
If Cells(i, 4) = 0 Then
Worksheets("Sheet7").Cells(i + 35, 7) = "իՈփՑպվS"
Else
Worksheets("Sheet7").Cells(i + 35, 7) = Cells(i, 5)
End If
Worksheets("Sheet7").Cells(i + 35, 8) = Cells(i, 6)
Worksheets("Sheet10").Cells(i + 35, 1) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 2)
Worksheets("Sheet10").Cells(i + 35, 6) = Cells(i, 4)
If Cells(i, 4) = 0 Then
Worksheets("Sheet10").Cells(i + 35, 7) = "Passed"
Else
Worksheets("Sheet10").Cells(i + 35, 7) = Cells(i, 5)
End If
Worksheets("Sheet10").Cells(i + 35, 8) = Cells(i, 6)
Next i
For i = 17 To 70
Worksheets("Sheet5").Cells(i - 15, 10) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 1)
Worksheets("Sheet5").Cells(i - 15, 15) = Cells(i, 4)
Worksheets("Sheet5").Cells(i - 15, 16) = Cells(i, 5)
Worksheets("Sheet5").Cells(i - 15, 17) = Cells(i, 6)
Worksheets("Sheet6").Cells(i - 15, 10) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 3)
Worksheets("Sheet6").Cells(i - 15, 15) = Cells(i, 4)
If Cells(i, 4) = 0 Then
Worksheets("Sheet6").Cells(i - 15, 16) = "իՈփՑպվS"
Else
Worksheets("Sheet6").Cells(i - 15, 16) = Cells(i, 5)
```

```
End If
Worksheets("Sheet6").Cells(i - 15, 17) = Cells(i, 6)
Worksheets("Sheet11").Cells(i - 15, 10) = Trim(Str(i - 1)) & ". " & Cells(i, 2)
Worksheets("Sheet11").Cells(i - 15, 15) = Cells(i, 4)
If Cells(i, 4) = 0 Then
Worksheets("Sheet11").Cells(i - 15, 16) = "Passed"
Else
Worksheets("Sheet11").Cells(i - 15, 16) = Cells(i, 5)
End If
Worksheets("Sheet11").Cells(i - 15, 17) = Cells(i, 6)
If Cells(i + 1, 1) = "" Then GoTo verg
Next i
verg: MsgBox ("Information recorded!")
End Sub
```

*Բանալի բառեր՝* շաբլոններ, դիպլոմի հավելված, փաստաթղթի ծրագրային ապահովում, մակրոսներ:

## Գրականություն


1. ՀՀ կառավարության 2000 թ. հունիսի 15-ի № 320 որոշումը դիպլոմի հավելվածը լրացնելու վերաբերյալ:
2. ՀՀ կառավարության 2007 թ. նոյեմբերի 23-ի № 1412 որոշումը դիպլոմի հավելվածը լրացնելու վերաբերյալ:
3. Microsoft Office Excel 2010. /Долженков В.А., Стученков А.Б. СПб.:БХВ-Петербург, 2011. -816с.
4. Самоучитель Excel 2010. /Культин Н.Б., Стученков А.Б. СПб.: БХВ-Петербург, 2011. -400с.
5. Excel 2010. Профессиональное программирование на VBA. /Уокенбах Джон. – Диалектика, 2012. -944с.
6. Формулы в Microsoft Excel 2010+CD с примерами. /Уокенбах Джон. – Диалектика, 2011. -684с.

## DEVELOPMENT TEMPLATED SOFTWARE FOR THE FORMATION OF EDUCATIONAL DOCUMENTS

**Husik Zifrit Gevorgyan**
Proffesor, Ph.D in Mathematics
EREA, Vice- Rector
**Mukuch Zaven Poghosyan**
Ph.D, EREA, Head of Chair IT and Applied Mathematics

**Summary**

The paper describes a method for creating a software implementation and design of the Diploma Supplement, which provides the university at the end of training courses to graduates of bachelor's and master's programs.

*Keywords:* templates, diploma supplement, software document, macros.

## РАЗРАБОТКА ШАБЛОНИЗИРОВАННОГО ПРОГРАММНОГО ОБЕСПЕЧЕНИЯ ДЛЯ ФОРМИРОВАНИЯ УЧЕБНЫХ ДОКУМЕНТОВ

**Усик Зифритович Геворгян**
к.ф.-м.н., профессор, Проректор ЕРОА
**Мукуч Завенович Погосян**
к.т.н., ЕРОА, Зав. кафедрой ИТ и прикладной математики

**Резюме**

В работе описывается один метод программной реализации создания и оформления приложения к дипломам, которые ВУЗ предоставляет в конце учебных курсов выпускникам бакалавра и магистерских программ.

*Ключевые слова:* шаблоны, вкладка диплома, программное обеспечение документа, макросы.

# ОБЛАЧНАЯ РЕАЛИЗАЦИЯ IT-ИНФРАСТРУКТУР ОРГАНИЗАЦИЙ

***Карен Альбертович Хачатрян***
*ЕРОА, кафедра прикладной математики и ИТ, лектор*

Модели Cloud позволяют организациям планировать ИТ-инфраструктуру на основе, публичных, частных, гибридных облачных ресурсов. Предложенные модели позволяют организациям выбрать подходящую модель, или варианты; разделения сервисов, приложений облачных платформ для совместного использования.

Облачные вычисления - это модель предоставления вычислительных ресурсов по требованию, начиная от приложений до центров обработки данных. Быстрое масштабирование в соответствии с изменениями спроса, а главное оплата по факту использования.

Во-первых надо определить, какие задачи решаются при помощи облачной модели?

Компании для облачных реализаций инфраструктур организаций предоставляют, программное обеспечение как услугу (SaaS), платформу как услугу (PaaS), которая включает, как аппаратное, так и програмное обеспечение. Данные компании обеспечивают размещения и хостинг, инфраструктуру как услугу (IaaS), которые включают вычислительные ресурсы (серверы, сети, системы хранения данных и пространство в центрах обработки данных).

Также компании предоставляют общедоступные облака, в которых осуществляется быстрый доступ к вычислительным ресурсам, и где не требуется приобретения аппаратного и программного обеспечения и инфраструктуры. В частных облаках, контролируется настройку виртуальных ресурсов и автоматических служб и их использование различными подразделениями бизнеса и рабочими группами. В гибридном облаке частная облачная среда используется совместно с прочими ИТ-ресурсами компаний и общедоступными облаками.

Облачные модели по своей логической структуре можно разделить на четыре типа, которые различаются методами обобществления приложений, данных и инфраструктуры:

- приложения, расположенные в локальном (частном) облаке; данные и инфраструктура не обобществляются;
- приложения, расположенные в публичном облаке; данные и инфраструктура могут обобщаться;
- комбинация частного и публичного облака (гибридное облако); данные и инфраструктура обобществляются избирательно;
- коллективное облако, которое ориентировано на специфические потребности сообщества и позволяет пользователям сообщества взаимодействовать друг с другом.

Для организации и планировании облачных реализаций IT – инфраструктур, компании должны основываться на моделях применения облака.

Основные модели применения облака носят следующие названия:

- первичное гибридное облако (PHC);
- расширенное гибридное облако (EHC);
- полное облако (FC);
- расширенное полное облако (EFC).

Какую бы модель не выбрала организация, следует отметить, что в облаке; виртуализация ресурсов, автоматизированное управление сервисами, стандартизированные сервисы, незвисимость расположения, быстрая масштабируемость и самообслуживание, незаменимые компоненты для организаций IT- инфраструктур компаний. Возможности выбора облачных моделей представлена в таблице модели охвата и применения облаков.

**Первичное гибридное облако (PHC)**

Когда рассматриваем возможности определенной модели, надо учитывать спектр задач, необходимые ресурсы, а главное взаимосвязанность локальных ресурсов с облачными средами, учитывая, что компании предоставляющие облачные реализации могут ориентироваться на конкретный ресурс, который необходим вашей организации для определенного подразделения.

Первичная гибридная модель представляет собой однонаправленную схему, где локальные ресурсы слабо связаны с облачными ресур-

сами, использования определенной службы или программы сводится к одному источнику в определенный момент времени. Использование различных облачных серверов, как центров обработки большого обьема данных, серверов оперативной поддержки, мониторинга, безопасности, а главное услуг по поддержки бизнеса расширяет возможности существующих локальных ресурсов. Учитывая, что в данной модели отсутствует двунаправленная синхронизация и интеграция с различными облачными решениями, ограничивается возможности структур организаций, в развертывании полного облака, но минимизируется риски связанные с неудачными процессами, незначительно отражающимися на основной деятельности.

При использовании первичной гибридной модели надо учитывать, потребности, возможности и недостатки. В планировании потребностей и возможностей IT-инфраструктур надо определить следующие аспекты:

- вам нужны дополнительные вычислительные мощности;
- вам нужно использовать программные компоненты, неспособные работать на вашей территории;
- срок вывода ваших продуктов на рынок очень мал;
- вы хотите разместить систему управления контентом в облаке, содержащем подгруппу ваших локальных систем управления контентом;
- вам нужно протестировать новое приложение, работающее в операционной системе, которая имеется в облаке, но отсутствует у вас;
- вы хотите ограничить свое участие в полном облачном развертывании;
- минимизация инвестиций: вы хотите быстро получить начальный опыт работы в облаке перед запуском полного облака.

При принятии этой модели облака необходимо учитывать следующие негативные аспекты:

- необходимость применения единой структуры поддержки для облака и для локальных систем, что может порождать избыточность или конфликты;

- может понадобиться локальный мониторинг облачной среды, что потребует создания собственной службы мониторинга;
- вам придется выполнить ограниченную интеграцию своих локальных систем со службами первичного гибридного облака;
- требуется миграция приложений и поддержка управления исправлениями;
- возможны ограничения в реализации оперативной интеграции с услугами первичного гибридного облака.

**Расширенное гибридное облако (EHC)**

Расширенное гибридное облако предоставляет взаимодействия локальных или размещенных на хостинговых ресурсах сред организаций с облачными сруктурами поставщика услуг. В отличие от первичной модели здесь присутствует двунаправленная синхронизация локальных и облачных ресурсов, однако само облачное решение является автономным и отсутствует интеграция с другими облачными решениями.

В отличие от первичного облака, в расширенном гибридном облаке локальные средства необходимы для облачных служб, а облачные компоненты зависят от локальных данных, а главное обмен информацией и обработка происходит в реальном времени.

При использовании расширенного гибридного облака необходимо основываться на следующих потребностях IT-инфраструктур:

- обработка транзакций, связанная с созданием, обновлением или сохранением данных, должна выполняться синхронно в облаке и на вашей территории;
- транзакции бизнес-процессов требуют слияния облачной обработки с локальной обработкой;
- есть транзакции, в которых некоторые основные компоненты находятся на вашей территории, в то время как другие компоненты располагаются в облаке;
- разделение данных в зависимости от их конфиденциальности;
- расширение коммерческих возможностей за счет применения облачных компонентов.

Использования данной модели приводит к ограничениям, которые надо учитывать в планировании последствий принятия решения:

- необходимо, проверить конфиденциальность и согласованность данных;
- проверить и интегрировать поток рабочей нагрузки;
- учитывать соответствия безопасности облачного решения, локальным решениям;
- неоходимость распространения функций операционной поддержки на облачные решения;
- персонал, работающий с локальной системой, должен понимать работу облачных компонентов.

**Полное облако (FC)**

Модель примения полного облака по своей структуре отличается от моделей первичного и расширенного гибридного облака. Данная модель предоставляет готовые решения использования облачных служб, одним или несколькими поставщиками облачных инфракструктур. Необходимо учитывать, что службы полного облака находятся полностью в единой облачной среде.

Использования данной модели, характеризует полное отсутствия интеграции локальных компонентов IT – инфраструктур организаций с облачными структурами поставщиков, а интеграция выполняется в рамках облачной платформы и использует общую систему облака и IaaS.

При внедрении модели полного облака необходимо основываться на следующих потребностях IT-инфраструктур:

- необходимость применения проверенного облачного решения;
- проверка технологии, концепции или реализация пилотного проекта;
- развитие нового направления бизнеса или предоставление новых услуг;
- использование внешней облачной среды для минимизации начальных инвестиций;
- необходимость быстрого вывода продуктов организации на рынок.

При принятии модели полного облака необходимо учитывать следующие возможности облачной инфраструктуры:

- использование облачной инфраструктуры оказывается выгоднее, чем создание собственной среды;
- развертывание решений в в частном или публичном облаке, повышает уровень безопасности, конфиденциальности, гибкости, поддержки и доступности компонентов инфраструктуры;
- возможность в краткосрочных решениях, например, для маркетинговых, биллинговых, функций;
- необходимость в организации работ служб поддержки бизнеса, таких как подписка, обработка запросов клиентов и управление финансами, где используется портал самообслуживания для проведения настройки, составления отчетов;
- возможность в отсутствии квалифицированного персонала для настройки облачной среды, разработки решения со стороны поставщика облачной инфраструктуры;
- поддержка в послеаварийном восстановлении и резервном копировании данных для защиты целостности данных и приложений;
- наличие системы управления исправлениями для обеспечения работоспособности среды.

**Расширенное полное облако (EFC)**

Расширенное полное облако представляет модель полного облака, где применяется интеграция компонентов облачных услуг и решений, в разных облачных средах, с использованием нескольких инфраструктур.

При принятии модели расширенного полного облака необходимо учитывать следующие возможности облачных инфраструктур:

- внедрение модели расширенного полного облака увеличивает возможности и потребности в интеграции с другими облаками;
- оказывания различных облачных услуг (SaaS, PaaS, IaaS,), которые предоставляют пользователям IT – инфраструктур организаций, доступ, к услугам от разных поставщиков;

- возможности извлечение данных из одной облачной службы с последующим преобразованием и загрузкой в другую облачную службу;
- возможности в маршрутизация пользователей к разным облачным услугам на основании их запросов;
- внедрении платформ интеграции, позволяющих осуществлять интеграцию и управление услугами;
- возможности поддержки системы аутентификации и авторизации с единимым входом в систему;
- унифицированные и общие платформы предоставления услуг;
- стандарты, процессы и процедуры управления, и автоматизация услуг;
- функции мониторинга и аудита.

Классификация структур и моделей облачных вычилений представлена в таблице модели охвата и применения облаков.

**Таблица модели охвата и применения облаков.**
**Возможности использования облачных вычислений.**

| | Частное облако | Гибридное облако | Публичное облако |
|---|---|---|---|
| Модели охвата облаков | Услуги потребляются внутри компании. Оборудование размещается в дата-центре, выбранном заказчиком. Управление осуществляется заказчиком. Доступ к облаку определяется заказчиком. | Комбинация «традиционной» IT-инфраструктуры + облаков (публичных и/или частных). | Доступная широкому кругу пользователей инфраструктура. Услуги предоставляются внешним провайдером. Инфраструктура принадлежит провайдеру. Доступ осуществляется по подписке. |

| Модели обслуживания | Программное обеспечение как услуг (SaaS) | Платформа как услуга (PaaS) | | Инфраструктура как услуга (IaaS) |
|---|---|---|---|---|
| Модели применения облаков | Первичное гибридное облако (PHC) | Расширенное гибридное облако (EHC) | Полное облако (FC) | Расширенное полное облако (EFC) |
| | Интеграция между локальными компонентами и облачными компонентами ограничена. | Тесная интеграция между локальными компонентами и облачными компонентами, чем в модели первичного гибридного облака. | В этой модели отсутствует интеграция между локальными и облачными компонентами. Вся интеграция выполняется внутри облака. | В этой модели присутствует интеграция между компонентами, находящимися в разных облачных средах. |
| Основные возможности и свойства использования облачных вычислений | Самостоятельная работа по запросу через сеть, интеграция вычислительных мощностей, виртуализация ресурсов, автоматизированное управление сервисами, стандартизированные сервисы, нзвисимость расположения, быстрая масштабируемость и самообслуживание, гибкая тарификация, наличие системы управления исправлениями для обеспечения работоспособности среды. | | | |

В заключении следует отметить, что организации имеют возможность выбора моделей различных облаков, для удовлетворения своих требований по аппаратным и программным ресурсам, по доступности и безопасности данных, а также готовые услуги в виде платформ и инфраструктур от поставщиков облачных реализаций. Стремительное развитие публичных, частных и гибридных облаков, открывают организации широкие возможности, начиная от выбора инфраструктуры в публичном облаке по подписке, где услуги предоставляются внешним провайдером; частными облаками, в которых оборудование размещается в дата-центре, управление и доступ определяется заказчиком, а услуги потребляются внутри конпании; заканчивая гибридными обла-

ками, где присутствует комбинация локальных IT-инфраструктур организаций в взаимодействии с частными и публичными облаками.

*Ключевые слова:* программное обеспечение как услугу (SaaS), платформу как услугу [PaaS], инфраструктуру как услугу [IaaS], частное облако, публичное облако, гибридное облако, первичное гибридное облако (PHC), расширенное гибридное облако (EHC), полное облако (FC), расширенное полное облако (EFC).

**Литература**

1. Выбор правильной модели применения облака. Тина Абдолла, старший сертифицированный ИТ-архитектор, IBM, Берни Михалик, ИТ-архитектор, IBM- 03.12.2013. IBMdeveloperWorks. Технические материалы. Облачные вичисления. Статьи.
2. Cloud Computing: Принципы построения и решаемые задачи. Евгений Нелюбов. Специалист по продвижению решений облачных вычислений. Опыт инноваций для преобразования бизнеса. Форум IBM 2012.
3. Окупаемость внедрения облачных вычислений. Анна Ершова. IBM ITSM. Опыт инноваций для преобразования бизнеса. Форум IBM 2012.

## ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՏ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՄՊԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

**Կարեն Ալբերտի Խաչատրյան**
ԵԿՏԱ, ՏՏ և կիրառական մաթեմատիկայի ամբիոն,
դասախոս

**Ամփոփում**

Ամպային մոդելները հնարավորություն են ընձեռում կազմակերպությունների IT ինֆրակառուցվածքները կազմակերպել՝ հիմնվելով հանրային, մասնավոր, հիբրիդ ամպային ռեսուրսների վրա: Առաջարկվող մոդելները հնարավորություն են տալիս կազմակերպություն-

ների համապատասխան մոդելը կամ տարբերակները ընտրելիս ա-ռանձնացնել ծառայությունները, ծրագրերը, պլատֆորմները՝ ամպա-յին համատեղ օգտագործման համար:

*Բանալի բառեր*՝ ծրագրեր որպես ծառայություն, հարթակ որպես ծառայություն, ենթակառուցվածքներ որպես ծառայություն, մասնավոր ամպեր, հանրային ամպեր, հիբրիդային ամպեր, առաջնային հիբրի-դային ամպ, ընդլայնված հիբրիդային ամպ, ամբողջական ամպ, ընդ-լայնված ամբողջական ամպ:

## CLOUDY REALISATION OF IT INFRASTRUCTURES OF THE ORGANISATIONS

**Karen Albert Khachatryan**
ERA, department of applied mathematics and IT,
lecturer

**Summary**

Cloud models enable organizations to organize IT infrastructure based on public, private, Hybrid cloud resources. The proposed models enable organizations to choose the appropriate model, or options, separate the services, applications, cloud platforms for shared use.

*Keywords:* software as a service, platform as a service,infrastructure as a service, private cloud, public cloud, hybrid cloud, primary hybrid cloud, extended hybrid cloud, full cloud, extended full cloud.

# ON TWO-STAGE TESTING OF MULTIPLE HYPOTHESES TESTING CONSERNING CONTINOUS RANDOM VARIABLE

***Aram Onik Yesayan***
*Ph.D in Mathematics*
*EREA, IT and Applied Mathematics, Lecturer*
***Husik Zifrit Gevorgyan***
*Proffesor, Ph.D in Mathematics*
*EREA, Vice- Rector*

In this paper we study the generalization of Tusnady's result by means of two-stage asymptotically optimal testing of multiple hypotheses concerning continuous random variable (CRV). It is supposed that three probability measures (PM) are known and CRV follows one of them.

## 1. Introduction

The classical problem of statistical hypotheses testing refers to two hypotheses [2]. The procedure of statistical hypotheses detection is called test. The probability of incorrect acceptance of one hypothesis instead of other is error probability. We consider the case of a tests sequence, where the probabilities of error decrease exponentially as $2^{-NE}$, when the number of observations $N$ (size of sample) tends to the infinity. The exponent of error probability $E$ we call *reliability*. The goal of research was to find the optimal functional relation between the error probabilities exponents of the first and the second types of error. Such optimal tests were considered first by Hoeffding [3], examined later by Csiszár and Longo [4], Tusnady [5], [6], Longo and Sgarro [7], Birgé [8] (he proposed the term LAO) and by many others. Some authors [6, 9, 10] for this concept of testing applied term *exponentially rate optimal* (ERO).

Let $S=(\Omega;F;Q)$ be a statistical space and $S^N=(\Omega^N;F^N;Q^N)$ its $N$-th power. Suppose $\Pi$ consists of all PM, $X$ is CRV, $P_1$, $P_2$ and $P_3$ PMs are known. In the base of $x=(x_1;x_2;...x_N)$ sample we have to test the following hypotheses:

$$H_1 : X \sim P_1, H_2 : X \sim P_2, H_3 : X \sim P_3$$

**2. First Stage Test**

We take $(H_1; H_2)$ as one hypotheses $H_1^* : X \sim P \in \mathrm{P}_1 = \{P_1; P_2\}$ and $H_3 : X \sim P_3$ as another hypotheses.

Let $\varphi^N(x)$ denote the test function:

$$\varphi^N(x) = \begin{cases} 1; \ x \in \overline{A} \\ 0; \ x \in A \ region \ of \ H_1^* \end{cases}$$

$$A \cup \overline{A} = \Omega^N$$

The probability of the erroneous acceptance of hypothesis $H_3$ provided that $H_1^*$ is true will be following

$$\alpha_{1|1}^{*(N)} = \alpha_{3|1}^{*(N)} = \sup_{P \in \mathrm{P}_1} \int_{\Omega^N} \varphi^N dP^N$$

by analogy

$$\alpha_{3|3}^{*(N)} = \alpha_{1|3}^{*(N)} = \int_{\Omega^N} (1 - \varphi^N) dP_3^N .$$

**Definition**: A sequence of test is of rate $E_{1|1}^*$ (called also reliability), $0 \le E_{1|1}^* \le \infty$, if

$$\lim_{N \to \infty} \alpha_{1|1}^{*(N)} < 1; \ in \ case \ E_{1|1}^* = 0$$

$$\overline{\lim_{N \to \infty}} \frac{1}{N} \log \alpha_{1|1}^* \le -E_{1|1}^*; \ in \ case \ E_{1|1}^* \ne 0.$$

Let $\Phi$ be the set of sequences of tests of rate $E_{1|1}^*$ and let

$$E_{3|3}^*(E_{1|1}^*; P_3; \mathrm{P}_1) = -\inf_{\varphi^N \in \Phi} \overline{\lim}_{N \to \infty} \frac{1}{N} \log \alpha_{3|3}^{*(N)} .$$

A sequence of tests $\varphi^N \in \Phi$ is called exponential rate optimal (ERO)

at $P_3$ if

$$\lim_{N\to\infty}\frac{1}{N}\log\alpha_{3|3}^{*(N)} = -E_{3|3}^{*}(E_{1|1}^{*};P_3;\mathrm{P}_1)$$

For any $0 < E_{1|1}^{*} \leq \infty$ let

$$R \overset{\Delta}{=} \{Q : D(Q \,\|\, \mathrm{P}_1) < E_{1|1}^{*}\}$$

where $D(Q\,\|\,\mathrm{P}_1) = \inf_{P\in\mathrm{P}_1} D(Q\,\|\,P)$ and $D(Q\,\|\,P) = \int \log\frac{dQ}{dP}dQ$ is Kullback - Leibler divergence.

**Theorem [1]**: For any $\mathrm{P}_1 \subset \Pi$, $P_3 \in \Pi$

$$E_{3|3}^{*}(E_{1|1}^{*};\, P_3;\mathrm{P}_1) \leq D(R\,\|\,P_3),\; 0 \leq E_{1|1}^{*} \leq \infty,$$

where $D(R\,\|\,P_3) = \inf_{Q\in R} D(Q\,\|\,P_3).$

**3. Second Stage Test**

Suppose $H_1^{*}$ is accepted, so we have to test $H_1$ against $H_2$. We construct new $\psi^N$ test

$$\psi^N = \psi^N(x) = \begin{cases} 1;\; x\in \overline{B} \\ 0;\; x \in B \; region\; of\; H_1 \end{cases}$$

$$B \cup \overline{B} = A.$$

For this test the probability of the erroneous acceptance of hypothesis $H_2$ provided that $H_1$ is true will be following

$$\alpha_{1|1}^{(N)} = \alpha_{2|1}^{(N)} = \int_A \psi^N dP_1^N$$

by analogy

$$\alpha_{2|2}^{(N)} = \alpha_{1|2}^{(N)} = \int_A (1-\psi^N)dP_2^N.$$

So we can deduce upper bound for reliability $E_{2|2}$

$$E_{2|2}(E_{1|1};P_2;P_1) \leq D(R_{E_{1|1}} \| P_2),\ 0 \leq E_{1|1} \leq \infty,$$

where

$$R_{E_{1|1}} \overset{\Delta}{=} \{Q : D(Q \| P_1) < E_{1|1}\}.$$

$E_{1|1}$ is called rate of test $\psi^N$.

This method can be generalized for more than three hypotheses.

*Keywords:* Hypothesis testing; Reliabilities; ERO.

## References

1. G. Tusnády, "On asymptotically optimal tests", *Annals of Statatistics*, vol. 5, no. 2, pp. 385-393, 1977.
2. W. Hoeffding, "Asymptotically optimal tests for multinomial distributions", *The Annals of Mathematical Statistics*. vol. 36, pp. 369--401, 1965.
3. L. Birgé, "Vitesses maximals de d c′ roissence des erreurs et tests optimaux associe s′ ". Z. Wahrsch. Verw. Gebiete, vol. 55, pp. 261--273, 1981.
4. E. A. Haroutunian, "Logarithmically asymptotically optimal testing of multiple statistical hypotheses," *Problems of Control and Information Theory*, vol. 19, no. 5--6, pp. 413-421, 1990.
5. R. F. Ahlswede and E. A. Haroutunian, "On logarithmically asymptotically optimal testing of hypotheses and identification", *Lecture Notes in Computer Science, vol. 4123, "General Theory of Information Transfer and Combinatorics", Springer Verlag*, pp. 462-- 478, 2006.
6. E. Haroutunian and P. Hakobyan, "On multiple hypotheses testing for many independent objects", *VII International School-seminar "Multidementional statistical analysis and econometrics"*, pp. 78,79, Tsakhadzor, 2008.
7. E. A. Haroutunian and A. O. Yessayan, "On reliability approach to multiple hypotheses testing and to identification of probability distributions of two stochastically related objects", *Proc. of IEEE*

*Internation Sympos. Information Theory*, Seint-Peterburg, Russia, pp. 2671-2675, 2011.

8. E. Haroutunian, P. Hakobyan and F. Hormozi nejad, “On Two-stage LAO testing of multiple hypotheses for the families of distributions”, *International Journal of Ststistics and Econometrics Methods*, vol. 2, no. 2, pp. 127--156, 2013.

## ԱՆԸՆԴՀԱՏ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱԶՄԱԿԻ ՎԱՐԿԱԾՆԵՐԻ ԵՐԿՓՈՒԼ ՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Արամ Օնիկի Եսայան**
ֆիզմաթ. գ.թ., ԵԿՏԱ, ՏՏ և կիրառ.մաթ. ամբիոն, դասախոս
**Հուսիկ Զիֆրիտի Գևորգյան**
ֆիզմաթ. գ.թ., պրոֆեսոր
ԵԿՏԱ, պրոռեկտոր

### Ամփոփում

Աշխատանքում ներկայացված է Տուշնադիի արդյունքի ընդհանրացումը: Դիտարկված է անընդհատ պատահական մեծության (ԱԸՄ) նկատմամբ բազմակի վարկածների ասիմպտոտորեն օպտիմալ երկփուլանի տեստավորման խնդիրը:

Ենթադրվում է, որ հայտնի են երեք հավանականային չափերը, և ԱԸՄ կարող է բաշխված լինել նրանցից որևէ մեկով:

*Առանցքային բառեր:* Վարկածների ստուգում, հուսալիություն:

# О ДВУХЭТАПНОМ ТЕСТИРОВАНИИ МНОГИХ ГИПОТЕЗ ОТНОСИТЕЛЬНО НЕПЕРЕРЫВНОЙ СЛУЧАЙНОЙ ВЕЛИЧИНЫ

**Арам Оникович Есаян**
к.ф.-м.н., ЕРОА, Каф. ИТ и пр.мат., лектор
**Усик Зифритович Геворгян**
к.ф.-м.н., профессор
ЕРОА, проректор

## Резюме

В данной работе мы изучаем обобщение результата Тушнади с помощью двухэтапного асимптотически оптимального тестирования многих гипотез относительно непрерывной случайной величины (НСВ). Предполагается, что три вероятностные меры известны и НСВ следует одному из них.

*Ключевые слова:* Тестирование гипотез, надежность.

# ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՑԵԱՏԵՐԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳԸ

***Մանուկ Հովհաննեսի Մուրադյան***
*իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,*
*ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի*
*իրավագիտության ֆակուլտետի պետ*

Այն, որ մարդու հիմնական իրավունքների ոլորտում հատկապես հանրային իշխանությունն է պարտավոր կողմը, երևում է ՀՀ բարեփոխված Սահմանադրության 3-րդ հոդվածի բովանդակությունից: Մասնավորապես, նշված հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Նախ անհրաժեշտ է բացահայտել հանրային իշխանություն հասկացության բովանդակությունը՝ որոշակիացնելու համար հիմնական իրավունքներով պարտավորվածների շրջանակը:

Իրավունքի տեսանկյունից հանրային իշխանությունն առաջին հերթին հանրույթի, ժողովրդի իշխանությունն է: Այսօր, թերևս, դժվար է գտնել ժամանակից ժողովրդավարական պետություն, որտեղ սահմանադրական հարթությունում չխոսվի այս գաղափարի մասին: ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը ևս ժողովրդին է ճանաչում որպես իշխանության միակ աղբյուր՝ նշելով, որ այն պատկանում է ժողովրդին: Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Ամենևին նպատակ չունենալով սույն աշխատանքի շրջանակներում բացահայտել ուղղակի և միջնորդավորված ժողովրդաիշխանության ձևերը՝ ժողովուրդը դրանց միջոցով փորձ է կատարում կազմակերպել իր կենսագործունեությունը՝ դրա համար իշխանության իրականացումը սահմանադրական ճանապարհներով (ընտրություններ) լիազորելով պետական և տեղական ինքնակառավար-

ման մարմիններին ու պաշտոնատար անձանց, այլ կերպ ասած՝ հանրային իշխանությանը [1]:

Այս իմաստով անհրաժեշտ ենք համարում անդրադարձ կատարել հանրային իշխանության ծավալի որոշակիացման խնդրին: Այն նպատակահարմար է լուսաբանել հանրային իշխանության իրականացման կառուցակարգային և գործառութային մոդելների լույսի ներքո:

Հանրային իշխանության կառուցակարգային մոդելի մեջ ներառվում են պետական իշխանության մարմինները և պաշտոնատար անձինք, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Ինչ վերաբերում է հանրային իշխանության իրականացման գործառութային մոդելին, ապա ձևակերպումից երևում է, որ այստեղ կողմնորոշիչ է ոչ թե հանրային իշխանության մարմին լինելը, այլ հանրային իշխանական գործառույթներ իրականացնելու հանգամանքը: Այս մոդելի տակ, հանրային իշխանություն ասելով, բացի անմիջականորեն հանրային գործառույթներ իրականացնող պետական իշխանության մարմիններից, սրանց պաշտոնատար անձանցից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասկանում ենք նաև մասնավոր անձանց, ովքեր կիրականացնեն պետության կողմից պատվիրված, հանձնարարված հանրային որևէ գործառույթ, ինչի մասին կխոսվի մի փոքր ուշ: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ամբողջ տրամաբանությունը հենված է հանրային իշխանության իրականացման գործառութային մոդելի վրա:

Հանրային իշխանության կաշկանդվածությունը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով պայմանավորված է նախ՝ վերջիններիս պաշտպանական ներուժով, որը կոչված է պաշտպանելու անձի անհատականությամբ պայմանավորված ինքնորոշման ոլորտը՝ հիմնական իրավունքների պաշտպանության առարկան և, ինչպես արդեն նշվել է, դրսևորվում է նաև հանրային իշխանության միջամտության պարտականությամբ:

Հիմնական իրավունքների պաշտպանական ներուժը բացառում է հանրային իշխանության կողմից անհարկի միջամտությունը, իսկ հանրային իշխանության միջամտության պարտականության պարագայում՝ հիմնական իրավունքների առարկան իրացվում է միայն այդ միջամտության առկայությամբ, որը կարող է դրսևորվել հիմնական իրավունքների իրացման համար կազմակերպական կառուցակարգեր

և ընթացակարգեր սահմանելով: Այսինքն՝ մի դեպքում ակնկալվում է, որ հանրային իշխանությունը պետք է խուսափի ապօրինություններից, մյուս դեպքում ակնկալվում է օրինականության ռեժիմի պահպանում՝ ի շահ սուբյեկտիվ հիմնական իրավունքի կրողի:

Այն, որ սուբյեկտիվ հիմնական իրավունքի կրողը ՀՀ Սահմադրության 3-րդ հոդվածի իմաստով միայն հանրային իշխանությունից է պահանջում ինչ-որ բան անելու կամ դրանից խուսափելու պարտականություն, ակնհայտ է: Սակայն սա ամենևին չի նշանակում, որ մարդ-պետություն հարաբերություններից դուրս (այսինքն՝ քննարկվող իմաստով սահմանադրական մակարդակից դուրս) գոյություն չունի իրավունքի խախտում, դրան պետության իրավական արձագանք: Չ-պետք է ստեղծվի այնպիսի տպավորություն, որ լայն իմաստով մարդու իրավունքներին միջամտությունը հնարավոր է միայն հանրային իշխանության կողմից:

Երբ ասում ենք, որ հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու իրավունքներով, նշանակում է նաև, որ պետական իշխանության առանձին մարմինների վրա, օրինակ՝ Ազգային Ժողովի, դրված է օրենքներ ընդունելու պարտականություն, որի միջոցով կարգավորվելու են մարդ-մարդ հարաբերությունները: Սահմանադրությունից ակնկալել այդ հարաբերությունների կոնկրետացում՝ հնարավոր և նպատակահարմար չէ: Մարդկանց միջև հարաբերությունները բազմաշերտ են, հետևաբար կա անհրաժեշտություն ստեղծել առանձին օրենքներ, որոնց խնդիրը կլինի վերջիններիս միջև ծագող հարցերի կարգավորումը՝ սկսած այս կամ այն ոչ իրավաչափ արարքների սահմանումից, ավարտված հանրային և մասնավոր իրավական այլ կառուցակարգերի ստեղծումով:

Հատկանշական է, որ մարդու հիմնական իրավունքներին վերաբերող հարցերն իրենցից ներկայացնում են ուղղահայաց հարաբերություններ, այսինքն՝ հանրային իշխանության և մարդու միջև, իսկ մարդկանց միջև հարաբերությունները՝ հորիզոնական են: Օրինակ՝ եթե կենցաղային հողի վրա ինչ-որ մեկը սպանել է մյուսին, ապա այս պարագայում չի խախտվում Սահմանադրությամբ երաշխավորված կյանքի իրավունքը, քանզի միջամտողը չի հանդիսանում իշխանության անունից հանդես եկող: Սակայն, եթե ոստիկանը, իր պարտականություններն իրականացնելիս (անցնելով հնարավոր իրավաչափության սահմանն-

րը՝ ակնհայտորեն կարող էր հանցանք կատարած և փախուստի դիմող անձին կանգնեցնել այլ եղանակով, սակայն որոշում է սպանել) միջամտում է պաշտպանության առարկային, ապա այստեղ առկա է ուղղահայաց հարաբերություն, հետևաբար, նաև սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքի խախտում[2]:

Սկզբունքային այս մոտեցման պատճառը քողարկված է նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում, որոնցով Բարձր պայմանավորվող կողմերին (պետություններին) պարտավորեցվում է հարգել և պաշտպանել մարդու իրավունքները: Դրա նպատակն այն է, որ հատկապես միջազգային և սահմանադրական մակարդակներում երաշխավորվի անձերի պաշտպանություն հանրային իշխանությունից: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները ոչ բոլոր իրավունքներն են, այլ դրանց որոշակի խումբը, որոնք երաշխավորված են միջազգային փաստաթղթերում, նաև պետությունների հիմնական օրենքների համապատասխան գլուխներում: Սովորական օրենքերով սահմանված իրավունքների պաշտպանությունը պետք է գնահատվի հիմնական իրավունքներով:

Խոսել մարդու հիմնական իրավունքներով հանրային իշխանության սահմանափակվածության մասին, կարծում ենք, առարկայազուրկ կլինի, եթե չփորձենք հստակեցնել, թե հանրային իշխանության մարմիններից որոնք ինչ ծավալով են սահմանափակված այդ իրավունքներով կամ ինչպես է դրսևորվում այդ սահմանափակվածությունը:

Օրինակ՝ եթե խոսում ենք գործադիր իշխանության համակարգի իրավապահ որևէ մարմնի կողմից մարդու հիմնական իրավունքներին ապօրինի միջամտության մասին, ապա դրա տակ հասկանում ենք, վերջիններիս կողմից ինչ-որ խախտում անելը (օրինակ՝ ապօրինի ձերբակալելը, որտեղ առկա է ապօրինի միջամտություն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության հիմնական իրավունքին) կամ քաղաքացին համապատասխան ձևի դիմում է ներկայացրել կենսաթոշակային ապահովության տարածքային մարմնին, սակայն վերջինս վարույթի իրականացման օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չի ընդունել համապատասխան վարչական ակտ, ապա խախտել է օրենքի պահանջները և մարդու համապատասխան հիմնական իրավունքը (առկա է ապօրինի միջամտություն ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով երաշխա-

վորված պատշաճ վարչարարության հիմնական իրավունքին): Սակայն այլ է իրավիճակն Ազգային ժողովի՝ որպես ներկայացուցչական մարմնի պարագայում, երբ վերջինս չի կարող նման ձևերով միջամտել մարդու հիմնական իրավունքներին: Հիմնական իրավունքներով օրենսդիր մարմնի սահմանափակվածությունը դրսևորվում է վերջինիս օրինաստեղծման սահմանադրական պարտականության կատարումով: ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Ազգային ժողովն իրականացնում է օրենսդիր իշխանությունը: Սա նշանակում է, որ պառլամենտի պարտականությունն օրենքներով վարքի կանոններ, ընթացակարգեր, կարգավիճակներ սահմանելու մեջ է: Այս իմաստով Ազգային ժողովի՝ մարդու հիմնական իրավունքներով սահմանափակվածության առաջին մակարդակը դրսևորվում է օրենքներ ընդունելով: ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում առկա են բազմաթիվ նորմեր, որոնք ուղղակի Ազգային ժողովին են ճանաչում որպես հիմնական իրավունքի հասցեատեր: Մասնավորաբար, նշված գլխի տարբեր հոդվածներում կարող ենք հանդիպել «այս կամ այն հիմնական իրավունքի իրացման մանրամասները սահմանվում են օրենքով», «հիմքերը սահմանվում են օրենքով», «այս կամ այն հիմնական իրավունքի տրամադրման և իրականացման կարգը և պայմանները սահմանվում են օրենքով» ձևակերպումների: Կամ, օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 75-րդ հոդվածն օրենսդիր իշխանությանն ուղղակի պարտավորեցնում է օրենքներով սահմանել հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Այստեղ ակնհայտ է, որ այս դեպքում, բացի Ազգային ժողովից, հանրային իշխանության և ոչ մի այլ մարմին չի կարող լինել այդ պահանջի հասցեատեր, այսինքն՝ այս իմաստով հիմնական իրավունքներով սահմանափակված է Ազգային ժողովը: Ազգային ժողովի հիմնական իրավունքներով սահմափակվածության պայմանական երկրորդ մակարդակը կայանում է նրանում, որ օրենսդիրը պարտավոր է ոչ միայն ընդունել օրենքներ, այլև մարդու իրավունքներին առնչվող իրավակարգավորումներ սահմանելիս ապահովել օրենքներում սահմանադրական սկզբունքների խիստ պահպանում՝ չխախտելով հիմնական իրավունքների և ազատությունների էությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնական իրավունքների և ազատությունների

հնարավոր սահմանափակումները կարող են նախատեսվել օրենքով և կարևորելով ՀՀ Սահմանադրության 79-րդ [3] հոդվածում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման վերաբերյալ կարգավորումներ նախատեսելիս որոշակիության սկզբունքի էությունը՝ պարզ է դառնում, որ օրենքում նման սահմանափակումներ սահմանելիս նշված սկզբունքը պահելու պարտականությունը դրված է օրենսդրի վրա:

Վերադառնալով գործադիր իշխանության մարմինների՝ մարդու հիմնական իրավունքներով սահմանափակվածության խնդրին, ապա, ինչպես արդեն նշվել է վերը բերված օրինակներում, այն դրսևորվում է գործադիր հանրային գործառույթներ իրականացնելիս օրենսդրության պահանջները պահպանելու մեջ: Սակայն չպետք է ստեղծվի տպավորություն, որ գործ ունենք գործադիր մարմինների՝ ընդամենը օբյեկտիվ իրավունքի կարգադրագերը պահպանելու պարտականության հետ: Օբյեկտիվ իրավունքի սահմաններում գործելու նաև գործադրի պարտականությունը սահմանված է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածում, որտեղ նշվում է, որ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

Խնդիր չունենալով չեզոքացնել քննարկվող իմաստով ՀՀ Սահմանադրության 3-րդ և 6-րդ հոդվածների միջև գոյություն ունեցող կապը՝ անհարժեշտ է նշել, որ մարդու հիմնական իրավունքներով՝ այն է՝ սուբյեկտիվ իրավունքներով կաշկանդվածության մասին վկայում է ոչ թե հիմնական օրենքի 6-րդ, այլ՝ 3-րդ հոդվածը: Միայն օբյեկտիվ իրավունքի նորմը չի կարող սուբյեկտիվ իրավունքի կրողին տալ այդ իրավունքին չմիջամտելու կամ ակտիվ միջամտելու պահանջի իրավունք: Սուբյեկտիվ իրավուքն ունի միայն այն ներուժը, որն իրավունքի կրողին կտա հանրային իշխանությունից իր իրավունքին չմիջամտելու կամ ակտիվ միջամտելու պահանջի իրավունք:

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ հիմնական իրավունքներով գործադրի սահմանափակվածությունը կրում է միջնորդավորված բնույթ, քանզի գործադիրն անում է այն, ինչը, մեծ հաշվով, օրենքներն են թելադրում: Այդ պատճառով իրավաչափ վարչարարության պարագայում սկզբունքորեն բացառվում է հիմ-

նական իրավունքների խախտումը. եթե կիրառված օրենքն արդեն իսկ խախտում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ապա օրենքի կողմից հիմնական իրավունքի խախտումը առկա է նաև դրա հիման վրա իրականացվող վարչարարությունում: Խնդիրը գրեթե նույնական է նաև դատական իշխանության պարագայում, այսինքն՝ երբ դատարանը կիրառում է այնպիսի օրենք, որն արդեն խախտում է հիմնական իրավունքները, խախտումը շարունակություն է ստանում նաև դատական ակտում[4]:

Հիմնական իրավունքներով դատարանի սահմանափակվածությունը դրսևորվում է նաև արդարադատության իրականացմամբ: Հիմնական իրավունքներով դատավորի սահմանափակվածության մասին է վկայում նաև ՍԴ դիմելու դատավորի լիազորությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, եթե հիմնավոր կասկածներ ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»: Այսինքն՝ եթե դատարանը գտնում է, որ օրենքի ինչ-որ դրույթ հակասում է մարդու այս կամ այն հիմնական իրավունքին, խախտում է մարդու իրավունքը և, որպես վերը նշված հոդվածի փաստակազմի մյուս հատկանիշ՝ «օրենքի այդ դրույթի կիրառման միջոցով է հնարավոր տվյալ գործի լուծումը», ապա վրա է հասնում իրավական հետևանքը՝ դիմում է Սահմանադրական դատարան:

Խնդրի հետ կապված՝ երկար ժամանակ դոկտրինալ մակարդակում և իրավակիրառ պրակտիկայում առկա անորոշությունների վերացման տեսանկյունից էապես կարևորվեց ՀՀ ՍԴ-ի 29 սեպտեմբերի 2015 թ. ՍԴՈ-1227 որոշման շրջանակներում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով դատարաններին վերապահված՝ սահմանադրական դատարան դիմելու իրավասության վերաբերյալ իրավական դիրքորոշումը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված դրույթով դատարաններին վերապահված Սահմանադրական

դատարան դիմելու իրավասությունը, անշուշտ, ենթադրում է դատարանի պարտականության առկայություն: Դեռևս 18.09.2013 թվականին ընդունված ՍԴՈ-1114 որոշման մեջ, անդրադառնալով ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետով ՀՀ դատարաններին վերապահված հնարավորության խելամիտ իրացման խնդրին սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «դա կարող է երաշխավորվել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակության ճիշտ մեկնաբանման ու կիրառման պարագայում: Վերջինում «գտնում են» արտահայտությունը պետք է ընկալել որպես հայեցողական դիրքորոշում, հիմնավոր կասկածով պայմանավորված՝ դատավորի իրավական վերլուծության արդյունք»:

Սահմանադրական դատարանը նաև հստակ իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «իրավունքի գերակայության սկզբունքով առաջնորդվելիս սահմանադրական դատարան դիմելու հնարավորությունը դատարանների համար պետք է ընկալել ոչ միայն իրավունք, այլև պարտականություն»: Օրենսդրական հետագա զարգացումները պետք է ընթանան այս ուղղությամբ:

Նման պարտականությունը, սակայն, դատարանների համար ծագում է այն պահից, երբ դատարանները հիմնավոր (ողջամիտ) կասկած կունենան, որ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետով սահմանադրական դատարանի ենթակայությանը վերապահված որևէ իրավական ակտի, որն ունի նորմատիվ բնույթ, դրույթը կամ դրույթները, որոնք ենթակա են կիրառման իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով, հակասում են ՀՀ Սահմանադրությանը:

Քննարկվող ենթատեքստում կառուցողական է նաև Գերմանիայի Ֆեդերալ սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որ երբ դատավորն օրենքի դրույթի սահմանադրականության հարցով (եթե կան սահմանադրական դատարան դիմելու համար հիմնավոր կասկածներ) չի դիմում սահմանադրական արդարադատության մարմնին, այլ պոտենցիալ հակասահմանադրական նորմը մեկնաբանում է Հիմնական օրենքին համահունչ, խախտում է արդար դատաքննության իրավունքը [5]:

Բացի պետական իշխանության վերը նշված մարմիններից՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով

սահմանափակված են նաև պետական այլ մարմիններն և պաշտոնատար անձիք (ՀՀ Նախագահը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը, Հաշվեքննիչ պալատը և հանրային գործառույթներ իրականացնող մյուս պետական մարմինները և պաշտոնատար անձինք), ինչպես նաև հանրային իշխանության ինքնուրույն մաս հանդիսացող տեղական ինքնակառավարման մարմինները:

Եթե ասելու լինենք, որ խորհրդային իրավունքին «հանրային իշխանություն» հասկացությունը անծանոթ էր կամ, առնվազն ոչ պիտանի, ապա սխալված չենք լինի: Դրա գլխավոր պատճառը պետական և հանրային իշխանությունների նույնացումն էր կամ «հանրային իշխանություն» բառակապակցության առհասարակ չօտագործելը, քանզի, որպես այդպիսին, խորհրդային իրավագիտությունում բացակայում էր հարաբերականորեն նոր, հանրային իշխանության ինքնուրույն ձև համարվող տեղական իշխանության ինստիտուտը, ինչն էլ հանրային իշխանությունը պետական իշխանությունից չտարբերակելու հետևանք էր:

Ժամանակակից պետություններում հանրային իշխանության գործունեության գլխավոր սկզբունքներն են սոցիալական միասնության (չբացառելով հանրային իշխանության առանձին օղակների սոցիալտնտեսական ինքնուրույնությունը, օրինակ՝ պետական և տեղական բյուջեների առկայությունը), տարածքային կառավարման տարբեր օղակների միջև գործառութային բաժանման և սուբսիդիարության սկզբունքները [6]:

Առաջինը նշանակում է, որ հանրային իշխանությունը լիարժեք և արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ են տնտեսական և ֆինանսական ինքնուրույն ռեսուրսներ: Այս իմաստով և պետական, և տեղական իշխանություններն օժտված են նման ինքնուրույնությամբ և ունեն իրենց ֆինանսական ռեսուրսների ձևավորման ինքնուրույն աղբյուրները: Երկրորդ և երրորդ սկզբունքները նպատակահարմար է համատեղ վերլուծել. նախ՝ հանրային իշխանության մարմիններից յուրաքանչյուրի վրա դրված են կոնկրետ լիազորություններ, որոնք վերջիններիս կողմից իրականացվում են ինքնուրույն, սակայն սուբսիդիարության սկզբունքի էությունը կայանում է նրանում, որ այս կամ այն լիազորությունների իրացումը չպետք է ընկնի հանրային իշխանության առա-

վել բարձր օղակի տիրույթում, եթե դրանք կարող են անհրաժեշտ արդյունավետությամբ իրացվել ցածր օղակներում (օրինակ՝ պետության կողմից տեղական իշխանության մարմիններին պատվիրակված լիազորությունների ինստիտուտը): Այսինքն՝ յուրաքանչյուր օղակ (պետական և տեղական) իր վրա կվերցնի պատասխանատվություն այն խնդիրները լուծելու համար, որն առավել արդյունավետ կարող է իրացվել այդ մակարդակում: Սկզբունքի մասին ուղղակի արձանագրված է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» 4-րդ հոդվածի 3-րդ մասում (Խարտիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի մայիսի 1-ից): Մասնավորապես, հոդվածում նշված է, որ «Պետական լիազորությունների իրականացումը, որպես կանոն, պետք է առավելապես դրվի քաղաքացիներին ամենից մոտ կանգնած իշխանության մարմինների վրա:...»[7]:

Ինչպես պետական իշխանության, այնպես էլ հանրային իշխանության ինքնուրույն օղակ հանդիսացող տեղական իշխանության մարմիններն օժտված են հետևյալ հատկանիշներով՝

1. իշխանության աղբյուրի առկայությունը (պետական մակարդակով՝ սուվերեն իշխանությամբ օժտված ժողովուրդը, տեղական մակարդակով՝ գյուղական կամ քաղաքային համայքների բնակչությունը),
2. հանրային գործառույթներ իրականացնող ինքնուրույն վարչակազմի առկայությունը,
3. օրեսդրությամբ սահմանված լիազորությունների առկայությունը,
4. իրավաստեղծման հնարավորությունը:

Այն, որ տեղական իշխանության մարմինները իրականացնում են հանրային գործառույթներ, գործում են բնակչության շահերից ելնելով, հետևաբար և սահմանափակված են այդ շահերով, ամրագրված է նաև «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» 3-րդ հոդվածի 1-ին մասում՝ «Տեղական ինքնակառավարում հասկացությունը նշանակում է՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքը և կարողությունը՝ կանոնակարգելու և կառավարելու պետական գործերի զգալի մասը (օրենքի շրջանակներում)՝ սեփական պատասխանատվությամբ և տեղական բնակչության շահերից ելնելով:»:

Տեղական ինքնակառավարման մարմինների՝ բնակչության շահերից ելնելով համայնքային նշանակության *հանրային հարցերը* լու-

ծելու պարտականությունն ամրագրված է նաև բարեփոխված Սահմանադրության «Տեղական ինքնակառավարման իրավունքը» վերտառությամբ 179-րդ հոդվածում:

Սակայն չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ տեղական ինքնակառավարման մարմինների՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով սահմանափակվածության համար կարևոր նշանակություն ունի այն տարածքը, որտեղ իրականացվում է տեղական ինքնակառավարումը:

Ինչպես արդեն նշվել է, մասնավոր անձինք ևս առանձին դեպքերում սահմանափակված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Սա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վերջիններս կիրականացնեն պետության կողմից պատվիրակված, հանձնարարված հանրային որևէ գործառույթ: Նման մոտեցման հիմքում, դրված է այն հանգամանքը, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի ամբողջ տրամաբանությունը հենված է հանրային իշխանության իրականացման գործառութային մոդելի վրա: Ի սկզբանե մասնավոր սեկտորը կառուցակարգային իմաստով չի կարող լինել հանրային իշխանության մարմին, սակայն հանրային իշխանական տարբեր գործառույթների արդյունավետության բարձրացման տրամաբանությունից ելնելով՝ հանրային առանձին խնդիրների իրականացումը կարող է դրվել, օրինակ, մասնավոր իրավաբանական անձանց վրա: Ստացվում է, եթե մասնավոր օղակները գործում են հանրային իրավունքի բնագավառում, ապա սահմանափակված են հիմնական իրավունքներով: Օրինակ՝ այդպես է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների և նրանց պատկանող փայերի վերաբերյալ տվյալների միասնական համակարգի՝ մասնակիցների ռեեստրի վարման դեպքում, որում առկա ամբողջ տեղեկատվությունը պետության սեփականությունն է: «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին) 2-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի համաձայն՝ «մասնակիցների ռեեստրը վարողը իրավաբանական անձ է, որը Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրի հիման վրա վարում է մասնակիցների ռեեստրը, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ գործառույթներ»: Մասնավորա-

պես, բոլոր պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ռեեստրի վարումը իրականացնում է Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա ԲԲԸ-ն [8], որը Նասդաք Արմենիա խմբի մաս է: Մեզանից յուրաքանչյուրի անհատական կենսաթոշակային հաշիվները բացում և վարում է մասնակիցների ռեեստրը վարող կազմակերպությունը՝ ՀՀ կառավարության հետ կնքած պայմանագրի հիման վրա:

Քննարկվող հիմնախնդրի իմաստով չափազանց կարևոր է նաև այն հարցը՝ արդյո՞ք հիմնական իրավունքները կարող են հանդես գալ որպես սահմանադրական երաշխիքներ ընդդեմ ոչ միայն հանրային իշխանության, այլև մարդկանց կամայականությունների: Այլ կերպ ասած՝ կարող է արդյոք հիմնական իրավունքի կրողը հանդես գալ նաև որպես հիմնական իրավունքի հասցեատեր: Առաջ անցնելով՝ անհրաժեշտ է նշել, որ սահմանադրական մակարդակում կամ այն բովանդակությամբ, որը սահմանում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասը, կապված մարդու հիմնական իրավունքներով բացառապես հանրային իշխանության սահմանափակվածության հետ՝ ոչ: Սույն աշխատանքի սահմաններում արդեն նշել ենք, որ մարդկանց միջև հորիզոնական հարաբերությունների կարգավորումը դուրս է սահմանադրական դաշտից: Մարդկանց միջև հարաբերությունները գտնվում են պառլամենտի կողմից ընդունված օրենքների կարգավորման դաշտում: Քննարկվող իմաստով Հիմնական օրենքին հետաքրքրում են ուղղահայաց՝ մարդ-պետություն հարաբերությունները:

Մինչ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրության 47-րդ հոդվածի իրավակարգավորումը, որով «…Յուրաքանչյուրին պարտավորեցվում էր… հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը» թույլ էր տալիս հիմնական իրավունքների գործողությունն անմիջապես տարածել մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա, ինչը հակասում էր հիմնական իրավունքների մասին ավանդական պատկերացումներին: Հայեցակարգային այլ մոտեցում է դրվել նաև սահմանադրական փոփոխությունների հիմքում: Սակայն այն հանգամանքը, որ հիմնական իրավունքները բացառապես հանրային իշխանությունից պաշտպանության երաշխիքներ են, սա չի նշանակում, որ հիմնական իրավունքները չեն կարող ազդել մարդ-մարդ հարաբերությունների որոշակիացման վրա: Իրավաբանական գրականության

մեջ նման ներգործությունը ընդունված է անվանել երրորդ անձանց վրա միջնորդավորված ներգործություն [9]:

Պետք է նշել, որ մոտեցման արմատները գալիս են արևմտյան իրավագիտությունից: Հիմնախնդրի դիտարկման անհրաժեշտությունն առաջացել է 1950-60- ական թվականներին: Ի սկզբանե խնդիրն առարկայական էր մասնավոր իրավունքի մակարդակում: Մասնավորապես, աշխատանքային իրավունքի մասնագետ Հանս Կառլ Նիպերդեյը [10], այնուհետև նաև Ֆեդերալ Աշխատանքային Դատարանը կողմ արտահայտվեցին հիմնական իրավունքների՝ մասնավոր իրավունքի վրա ուղղակի ազդեցության օգտին: Դատարանը հավակնում էր փոխել հիմնական իրավունքների ուղիղ ներգործության արմատավորված մոտեցումը (բացառապես մարդ-պետություն կապերի տիրույթում):

Սակայն շատ արագ դրան հակադրվեց մեկ այլ կարծիք, որը (խնդիր ուներ չբացառել Դատարանի տեսական մոտեցումը), ընդգծեց, որ նման ազդեցությունը կարող է լինել միայն և միայն միջնորդավորված և ոչ մի պարագայում չպետք է վերաբերի ուղղակի ազդեցությանը: Հարցը դրված էր այնպես, որ չպետք է ստեղծվի այնպիսի տպավորություն, որ հիմնական իրավունքերն ուղիղ ներգործում են նաև մասնավոր իրավունքի վրա, այլ, որպես սկզբունքային օբյեկտիվ չափանիշներ, սովորական օրենքի մակարդակով նպաստում են սոցիալական կենսակերպի ստանդարտների ձևավորմանը [11]: Ժամանակի ընթացքում Դատարանը ընդունեց այս տեսակետը:

Այսինքն՝ մարդ-մարդ հարաբերությունները գտնվում են ոչ թե սահմանադրական կարգավորման հարթությունում, այլ նման մոտեցումը խնդիր ուներ հիմնավորելու, որ օրենսդրի կողմից իր սահմանադրական լիազորությունների իրացման արդյունքում պետք է ստեղծվեն այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնք կպաշտպանեն մարդուն մարդու ոչ իրավաչափ միջամտությունից: Հայեցակարգային մոտեցումը վերաբերում էր մասնավոր իրավունքին, քանզի մարդ-մարդ հարաբերությունները առավել ակտիվ են ու հաճախակի այդ հարթությունում: Կարծում ենք, որ մոտեցումը առարկայական է նաև բոլոր այն ոլորտներում, որտեղ պետք է գնահատվեն մարդկանց միջև հարաբերությունները: Օրինակ՝ մարդը կատարել է հանցանք. նա օժտված է անմեղության կանխավարկածով (որպես հիմնական ի-

րավունք). վնասվել են տուժողի շահերը: Այստեղ առարկայական է հիմնական իրավունքների հավասարակշռման խնդիրը: Այդ գործընթացն արդյունավետ իրականացնելու համար օրենսդիրը ընդունում է քրեական օրենսգիրքը (կամ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը), ոլորտների հետ կապված վարույթային օրենքներ՝ գնահատելով դրանք հիմնական իրավունքների օբյեկտիվ արժեքի ենթատեքստում: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ մարդ-մարդ հարաբերությունների որոշակիացման դեպքում դատարանները, վարչական մարմինները սովորական օրենքների նորմերը մեկնաբանելիս պետք է պահեն արժեքների այն համակարգը, որը դրված է հիմնական իրավունքների հիմքում:

Այսպիսով՝ հիմնական իրավունքների միջնորդավորված ազդեցությունը քողարկված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի տրամաբանության մեջ, և իր էությամբ դուրս է գալիս Սահմանադրությունից՝ ներխուժելով դրանով սահմանափակված իրավաստեղծման և իրավական պաշտպանության դաշտ: Այլ կերպ ասած՝ օրենսդրի՝ մարդու հիմնական իրավունքներով սահմանփակվածությունը դրսևորվում է հիմնական իրավունքներին համահունչ օրինաստեղծմամբ, դատարանի կողմից՝ իր կողմից կիրառվող նյութական օրենքների սահմանադրությանը համահունչ մեկնաբանությամբ: Առավել հեռուն գնալու իմաստով՝ նաև հակասահմանադրական օրենքները ՍԴ-ում վիճարկելով: Հիմնական իրավունքները ստեղծում են կայուն նախահիմք ամբողջ իրավակարգի համար: Իրավաստեղծը միշտ պետք է գնահատի իր աշխատանքը՝ հիմնական իրավունքերի էությունը չխախտելու տրմաբանությամբ:

Այս իմաստով տեղին է նշել Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի այն դիտարկումը, որ «հավանության արժանացած օրենքն արտահայտում է ընդհանուրի կամքն այն չափով, որքանով այդ ակտում արտահայտված են սահմանադրական կարգավորումները» [[12]]:

*Առանցքային բառեր*- հիմնական իրավունքներ և ազատություններ, հիմնական իրավունքի կրող, հիմնական իրավունքի հասցեատեր, պաշտպանության առարկա, մասնավոր անձ, հանրային գործառույթ:

[1] Սակայն չպետք է մոռանալ, որ ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է նաև հանրաքվեների ճանապարհով:

Որպես իշխանության կրող՝ ժողովուրդը ևս ինքնուրույն կարող է իրականացնել /հանրաքվեի ճանապարհով/ այդ իշխանությունը: Այսինքն՝ հանրային իշխանության տակ, բացի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, առաջին հերթին պետք է հասկանալ նաև ժողովրդին՝ որպես սուվերեն իշխանության իրական տիրոջ: Սակայն ժողովուրդն իր ինքնիշխանության մի մասը սահմանադրական ճանապարհով պատվիրակում է հանրային իշխանության այլ մարմինների՝ պետական և տեղական մարմիններին: Այս իմաստով տեղին է այն ձևակերպումը, որ հանրային իշխանությունն իրենից ներկայացնում է կազմակերպված հանրույթի հնարավորություն (ունակություն) անմիջականորեն կամ սահմանադրական մարմինների միջոցով ընդունելու պարտադիր կատարման ենթակա որոշումներ:

[2] Տե՛ս, Курс «Права человека»: учебное пособие для сотрудников аппаратов уполномоченных и камиссий по правам человека в РФ. – М.: МХГ, 2009. – С. 18.

[3] Որոշակիության սկզբունք: Այս պարագայում նորմի հասցեատերը օրենսդիրն է, ինչը երևում է փաստակազմից: Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ: Ինչ վերաբերվում է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին, ապա այս դեպքում հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ***ընտրված միջոցները*** պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը: Նշված սկզբունքները իրավական պետության կառուցողական սկզբունքներից են: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիմնական իրավունքների հատուկ սահմանափակումներն արդեն երևում են հիմնական իրավունքները երաշխավորող դրույթներում, ակնհայտ է, որ սկզբունքի պահանջն ուղղված է սահմանփակումները կիրառողին:

[4] Տե՛ս, Զաքս Միխայել. Սահմանադրական իրավունք, II: Հիմնական իրավունքներ. Մաս I. Հիմնական իրավունքների տեսություն / Մ. Զաքս թարգմանությունը՝ Լ. Սարգսյան, մասնագիտական խմբագրություն և թարգմանություն՝ Վ. Պողոսյան.- Եր.: Տիգրան Մեծ, 2015 թ. էջ 106-107:

[5] Տե՛ս, Beschluss vom (Decision of) 16. Dezember 2014 - 1 BvR 2142/11:
https://www.bundesverfassungsgericht.de/SharedDocs/Entscheidungen/DE/2014/12/rs20141216_1bvr214211.html (12.02.16):

[6] Տե՛ս, Белоусова Е. В. Муниципальная власть как разновидность публичной власти. Пробелы в российском законодательстве. Юридический журнал. № 3 / 2011, С. 53.

[7] Տե՛ս, http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=80563 (21.01.2015):

[8] «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերությունը (ՀԿԴ) ՀՀ արժեթղթերի շուկայի ձևավորման առաջին իսկ փուլում ստեղծված ինստիտուտներից մեկն է: 1996 թվականին իր հիմնադրման պահից ՀԿԴ-ն բաժնետիրական ընկերություններին տրամադրում է ռեեստրի վարման, իսկ իրավաբական այլ անձանց և անհատներին՝ արժեթղթերով հաշիվների բացման և վարման ծառայություններ: Վերջին մի քանի տարիների ընթացքում ՀԿԴ հաճախորդների թիվը շարունակաբար աճել է. ներկայումս դեպոզիտարիան վարում է մոտ 1,500 բաժնետիրական ընկերությունների ռեեստրներն ու սպասարկում արժեթղթերի գրանցված սեփականատերերի ավելի քան 150,000 հաշիվներ: Քանի որ ՀՀ Օրենսդրությամբ բաժնետիրական ընկերություններին թույլ չի տրվում անձամբ վարել իրենց թողարկած բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրը (տե՛ս «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդված, կետ 1) և այն պետք է հանձնվի ընկերության հետ չփոխկապակցված մասնագիտացված կազմակերպությանը, որն իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր, առաջարկում ենք դիմել Դեպոզիտարիա՝ հաշվի առնելով մեր կողմից մատուցվող ծառայությունների առավելությունները: Որպես կենտրոնացված ռեեստրավարման, պահառության և արժեթղթերով կատարված գործարքների

քլիրինգի ու վերջնահաշվարկի գործառույթներ իրականացնող հաստատություն, ՀԿԴ-ն նշանակալի դեր ունի նրանց իրավունքների պաշտպանության և կորպորատիվ կառավարման լավագույն փորձի ներդրման գործում: Բացի այդ՝ ՀԿԴ-ն իրականացնում է նաև արժեթղթերի կենտրոնացված ապանյութականացումն ու օրինական սեփականատերերի անվամբ դրանց գրանցումը: Լինելով արժեթղթերի կենտրոնացված պահառու՝ ՀԿԴ-ն հանդիսանում է Հայաստանում գործող պահառության երկմակարդակ համակարգի առաջին մակարդակը: Մյուս բոլոր լիցենզավորված պահառուները գործում են ՀԿԴ հետ կնքված պայմանագրի համաձայն՝ իբրև ենթապահառուներ: Մանրամասն տե՛ս https://nasdaqomx.am/am/cda_about.htm (22.01.2016):

[9] Տե՛ս, Государственное право германии. Сокращенный перевод / Том 2, М. Институт государства и права РАН, 1994, С. 229.:

[10] Տե՛ս, https://en.wikipedia.org/wiki/Hans_Carl_Nipperdey (01.02.2016):

[11] Տե՛ս, [9]:

[12] Տե՛ս, Мосин О.В. Права человека в конституции Франции. http://www.yurclub.ru/docs/other/article117.html (01.02.2016 թ.):

## АДРЕСАТЫ ОСНОВНЫХ ПРАВ И СВОБОД ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА И ИХ СИСТЕМА

**Мурадян Манук Оганесович**
кандидат юридичеких наук, доцент, начальник
юридического факультета Академии учебного комплекса полиции РА

### Резюме

Научная статья посвящена исследованию проблемы системы адресатов основных прав и свобод человека и гражданина в контексте конституционных изменений и дополнений осуществленных 6-го декабря 2015-го года. В статье предпринята попытка рассмотреть систему адресатов основных прав и свобод и масштаб ограниченности

публичной власти этими правамы, подчеркивая функциональное значение части 3-ей статьи 3 Конституции РА.

Во второй части статьи особое внимание уделяется проблеме ограничения тех частных субъектов основными правами и свободами человека и гражданина, которые осуществляют полномочия делегированные государством.

*Ключевые слова* - основные права и свободы, носители основных прав, адресаты основных прав, объект защиты основных прав, частное лицо, публичная функция.

## ADDRESSEES AND THEIR SYSTEM OF FUNDAMENTAL HUMAN AND CIVIL RIGHTSAND FREEDOMS

**Muradyan Manuk Howhannes**
PHd in law, associate professor,Head of law faculty of
ACADEMY OF POLICE EDUCATIONAL COMPLEX OF RA

### Summary

The scientific article is devoted to research of problems of the addressees' system of fundamental human and civil rights and freedoms in the context of constitutional amendments held on 6 December, 2015. In the article author has discussed the system of addressees of basic rights and freedoms and the framework of limitation of public authorities with fundamental rights and freedoms and has emphasized the functional meaning of the p. 3 of article 3 of Armenian Constitution.

In the second part of article author has focused on the issue of limitation of those private legal entities with human and civil fundamental rights and freedoms which exercise the competency delegated by the state.

*Keywords* - fundamental rights and freedoms, carriers of the fundamental rights, addressees of fundamental rights, the object of protection of fundamental rights, private legal entity, public function.

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Լիլիթ Դերենիկի Չիրոյան***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ*

Ներկա ժամանակաշրջանում մարդկության առջև ծառացած ամենաբարդ և ամենակարևոր համերկրային հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանությունն է:

Հարցն այնպես է դրված, կամ մարդը կկարողանա պահպանել այդ դինամիկ հավասարակշռությունը, կամ նրա մեղքով կվերանան բնական համալիրները/ անտառներ, լճեր, տափաստաններ, մարգագետիններ, և այլն/, և կվերանա նաև մարդը:

Դեռևս ժամանակին Ֆ. Էնգելսը նախազգուշացրել է. «Չպետք է շատ գայթակղվել բնության նկատմամբ տարած հաղթանակներով: Յուրաքանչյուր այդպիսի հաղթանակի համար նա մեզանից վրեժխնդիր է լինում»:

Ստեղծված բարդ իրավիճակից դուրս գալու համար պահանջվում է էկոլոգիացնել մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ քաղաքականությունն ու միջպետական հարաբերությունները, հասարակությունը, կրթությունը և գիտությունը, առողջապահությունն ու իրավագիտությունը և այլն[1]:

Մարդկային գործունեության բոլոր ոլորտների էկոլոգիացումը ենթադրում է բնական գործընթացների ավելի խորն ըմբռնում, մարդու կողմից շրջակա միջավայրում կատարվող փոփոխությունների հետևանքների կանխագուշակում:

Հուսադրողն այն է, որ գնալով կառավարությունները և ամենատարբեր զբաղմունքի տեր մարդիկ ավելի շատ են համոզվում, որ Երկիրը բոլորիս տունն է, իսկ մենք նրա բնակիչներն ենք, և այսօր վտանգված է այդ տան հետագա գոյությունը:

Բնության և հասարակության բարդ փոխհարաբերությունների ներկա էտապում բնության պահպանության, բնական հարստությունների օգտագործման հարցը մղվում է առաջնահերթ պլան և դառնում

---

[1] Տե՛ս «Էկոլոգիայի հիմունքներ» Մելքումյան Լ. Երևան 2008 թ., էջ 5

է ազգային և միջպետական հարաբերությունների գլխավոր խնդիրը, որի հաջող լուծումը պահանջում է ոչ միայն տվյալ բնագավառի բարձր մակարդակի մասնագետների պատրաստում, այլև ազգաբնակչության բոլոր շերտերի էկոլոգիական և բնապահպանական գիտելիքների կտրուկ բարձրացում:

Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագրում ուղղակիորեն պահանջվում է՝

1. Հայաստանի բնության բաղադրիչների ճանաչողության արժեքավորման և նշանակության մասին գիտահանրամատչելի հրապարակումների ապահովում,
2. հանրապետությունում առկա էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց հետևանքների լայն լուսաբանման ապահովում,
3. համաշխարհային, համերկրային էկոլոգիական հիմնախնդիրների և դրանց լուծմանն ուղղված միջազգային հանրության ներդրված ջանքերի լուսաբանման ապահովում,
4. Հայաստանում բնապահպանության գերակայող դերի բարձրացման ապահովում՝ որպես ազգային անվտանգության խնդիր:

Շրջակա միջավայրը ծառայում է մարդկության գոյության համար ստեղծում է պայմաններ և միջոցներ: Այն իրենից բարդ համալիր է ներկայացնում, որը պատմության ընթացքում ներկայացվում՝ է հասարակություն և բնություն փոխհարաբերություններում երկու ձևով[2]: Առաջինը մարդը օգտագործում է բնությունը իր նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարման համար: Այս ձևը կարող է կոչվել տնտեսական փոխազդեցություն: Երկրորդը շրջակա միջավայրի պահպանությունն է, որպեսզի պահպանվի մարդը՝ որպես բիոլոգիական և սոցիալական էակ, և շրջակա միջավայրը՝ որպես նրա բնակարան:Այս ձևը կոչվում է էկոլոգիական:

Բնության վրա մարդու ներգործությունը սկսվել է մարդու ձևավորման ժամանակաշրջանից: Սակայն մարդու զարգացման վաղ շրջանում այդ ներգործությունը եղել է համեմատաբար աննկատ: Այդ ժամանակաշրջանում հիմնականում ոչնչացրել են խոշոր կենդանիներին և բնակավայրերի շրջապատում գտնվող բուսական զանգվածնե-

---

[2] Տես Петров В.В. «Экологическое право России» Москва -1995г. ст. 2

րը: Սակայն մարդու հետագա գործունեությունը եղել է չգիտակցված, որի հետևանքով ոչնչացվել են հսկայական անտառային զանգվածներ, արոտավայրեր Միջերկրական ծովի ավազանում, Աֆրիկայում, Միջին Ասիայում, Մերձավոր Արևելքում և այլն: Մինչև 20-րդ դարի 60-ական թվականները բնության պահպանությունը զբաղվել է բնօգտագործումը արդյունավետ ձևով կազմակերպելու հարցերով: Սակայն արդեն 1968թ. Փարիզում կայացավ 1-ին միջպետական կոնֆերանսը՝ նվիրված բնության արդյունավետ օգտագործմանը, գերակայող տեսակետ է դարձրել այն իրողությունը, որ արագ զարգացող արդյունաբերությունը զգալի չափով փոխում է, գլխավորապես աղտոտում է ողջ կենսոլորտը և առաջին հերթին մարդու ապրելու միջավայրը:

Երկիր մոլորակի բնության պահպանության հիմնական էկոլոգիական սկզբունքներն են՝

1. Մարդու էկոլոգիական իրավունքների առաջնայնությունները,
2. Պետության անկախությունը իր տարածքի բնական հարստությունների նկատմամբ անթույլատրելիությունը մի պետության էկոլոգիական բարեհաջողության կառուցումը մյուս պետության էկոլոգիական վնասի հաշվին,
3. Էկոլոգիական վերահսկողությունը բոլոր մակարդակներում,
4. Միջազգային էկոլոգիական հաղորդագրության ազատ փոխանակումը,
5. Պետությունների փոխօգնությունը արտակարգ իրավիճակներում,
6. Խաղաղ միջոցներով էկոլոգիական վեճերի լուծման թույլատրելիությունը:

Համաձայն վերը նշված սկզբունքների՝ պետություններին հանձնարարվում է բնական միջավայրի նորմատիվներին և ստանդարտների համապատասխան էկոլոգիական օրենսդրություն մշակել և ապահովել դրա իրականացումը, բոլոր տնտեսական գործունեությունները ծավալել առանց բնական միջավայրին վնաս հասցնելու և բնապահպանության օրենսդրության խախտելու:

Ունենալ գործունեության վնասատու հետևանքների նախնական գնահատական այն մասին, որ բնությանը կարող է վնաս պատճառվել, և ապացույցներ, որ նման գործունեությունից օգուտն է ավելի շատ, քան բնությանը հասցրած վնասը:

Պատասխանատվություն ստանձնել՝ հատուցելու էկոլոգիական կորստի վնասը և վերականգնելու հետևանքները, վնասակարար հետևանքներից էկոլոգիական կորստի միջազգային պատասխանատվության համապատասխան միջոցառումների մշակման նպատակով զարգացնելի փոխադարձ համագործակցությունը:

Էկոլոգիական օրինախախտում ասելով՝ հասկանում ենք բնության նկատմամբ հակաօրինական գործողություններ, բնապահպանական օրենսդրության խախտումներ, շրջակա միջավայրին և մարդկանց առողջությանը վնաս պատճառող արարքներ[3]:

Հայաստանում բնական պաշարների, հետևաբար և կենդանական ու բուսական աշխարհի պահպանության օրենսդրական կարգավորման ավանդույթները գալիս են դարերի խորքից: Վաղ միջնադարում հայոց Խոսրով Կոտակ թագավորի, /4-րդ դար/, հրամանով արհեստական անտառ է հիմնվել, որը բնակեցվել է տարբեր տեսակի կենդանիներով:

Նույն թագավորի հրամանով ծառն ապօրինաբար հատողը մեկ տարով ազատազրկվում էր, միաժամանակ, նրա սննդում հացը բացակայում էր: Թագավորը դա հիմնավորում էր նրանով, որ հաց չունելով՝ կալանավորը կտկարանա, կթուլանա, ինչպես բնությունն առանց ծառի:

12-րդ դարում հողի, ջրի, բույսերի, կենդանական և բուսական այլ ռեսուրսների պահպանությունն ու օգտագործումը կարգավորվում էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքով», եկեղեցական կանոններով և այլ նորմերով: Կարգավորված էին հողը փչանալուց պաշտպանելը, արոտներն ու արոտավայրերը, խոտհունձը, անտառները, հատապտուղներ և այլ բարիքներ հավաքելը, որսորդությունը, ձկնորսությունը, ինչպես նաև այգիները, արտերն ու անտառները հրդեհներից պաշտպանելը և այլն: Այդ ժամանակաշրջանում արգելվում էր այգիների ոչնչացումը կամ անտառահատումը, նույնիսկ եթե դա անհրաժեշտ էր մարտավարական նպատակներով դիտակետ կառուցելու համար:

Այժմ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ավելի քան 40 հոդվածներով կարգավորվում են բնապահպանության և բնօգտագործման բնագավառի օրենսդրությամբ սահ-

[3] Տես «Բնության պահպանության հիմունքներ» Մելքումյան Լ. Երևան 2006թ., էջ 198

մանված պահանջների կատարման խախտումների համար սանկցիաների կիրառման մեխանիզմները: ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված պահանջերի կատարման խախտումների համար սանկցիաների կիրառման մեխանիզմները կարգավորվում են քրեական օրենսգրքի 21 հոդվածներով:

«Շրջակա միջավայր» հասկացությունը պետք է մեկնաբանել նրա լայն նշանակությամբ, որն իր մեջ ներառում է ոչ միայն բնական միջավայրը, այլև՝ արհեստական միջավայրի որոշակի տարրեր (բնակելի կառույցներ, արդյունաբերական ձեռնարկություններ, ջրանցքներ, ջրամբարներ և այլն): Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքը ենթադրում է աշխատանքի, ապրելու, կենցաղի, հանգստի, դաստիարակության և կրթության, սննդամթերքների և ժողովրդական տնտեսության արտադրանքների անվտանգության ու բարձր որակի, ինչպես նաև բնական միջավայրի բարենպաստ պայմանների իրավունքները[4]:

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու սահմանադրական իրավունքն, ըստ էության, ունի հավաքական և հիմնարար բնույթ և բաղկացած է մի շարք այլ իրավունքներից: Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի՝ օգտվել բնության առողջարար հատկություններից, նրա բարիքներից, ստանալ շրջակա միջավայրի աղտոտման, էկոլոգիական վթարի կամ աղետի հետևանքով առողջությանը պատճառած վնասի լրիվ հատուցում, ժամանակին ստանալ ամբողջական ու ճշգրիտ տեղեկություն շրջակա միջավայրի իրավիճակի մասին և այլն:

Բնության պահպանությունը շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության ապահովման, բնական պաշարների խնայողաբար օգտագործման և վերարտադրության գործնական միջոցառումների իրականացումն է: Հանրապետության տարածքում աղտոտումից, փչացումից, վնասումից, սպառումից և վերացումից պետական պահպանության ենթակա են հողը, նրա ընդերքը, բուսական և կենդանական աշխարհը, մթնոլորտային օդը, ջրերը, բնության հա-

[4] Տե՛ս «Հայաստանի հանրապետության Սահմանդրական իրավունք» Այվազյան Ն.Ա., Երևան 2008թ., էջ 286

տուկ պահպանվող տարածքները (արգելոցները, արգելավայրերը, հազվագյուտ բնական օբյեկտները), առողջարանային, պատմական կարևորագույն իրադարձությունների հետ կապված վայրերը, լանդշաֆտները:

Այդ կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է՝

ա) Հանրապետության բոլոր քաղաքացիների համար ապահովել անվտանգ, առողջ և բարենպաստ բնական պայմաններ,

բ) բացառել մարդկանց առողջության և էկոլոգիական անվտանգության համար սպառնալիքի առաջացումը,

գ) ապահովել բնության առանձին կամ մի քանի բաղկացուցիչ մասերի ընդհանուր էկոլոգիական հաշվեկշիռը և այլն:

Մարդու բնապահպանական իրավունքների իրականացման հարցում հատկապես կարևորվում է շրջակա միջավայրի մասին հավաստի տեղեկատվություն ունենալու իրավունքը, որը նշանակում է շահագրգռված անձի հնարավորությունը՝ ստանալու օրենքով նախատեսված միջոցներով շրջակա միջավայրի վերաբերյալ օբյեկտիվ և չխեղաթյուրված տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը քաղաքացիներին կարող է հնարավորություն ընձեռել ժամանակին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու մարդու կյանքը, առողջությունը, ունեցվածքը անբարենպաստ բնական երևույթների, բնական և տեխնոգեն աղետների ներգործությունից: Այդ կապակցությամբ քաղաքացիները և հասարակական միավորումները իրավունք ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, եղանակային ծառայություն իրականացնող հաստատություններից, կազմակերպություններից պահանջել շրջակա միջավայրի և դրա պահպանության միջոցների վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Այդ իրավունքը երաշխավորելու նպատակով Սահմանադրությունը պաշտոնատար անձանց նկատմամբ նախատեսում է պատասխանատվություն՝ բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Շրջակա միջավայրի պաշտպանությունը մեծապես կախված է էկոլոգիական որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությունից: Հասարակության արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար անհրաժեշտ է տեղեկատվության

մատչելիություն և այդ տեղեկատվությանը տիրապետող պաշտոնատար անձանց աջակցությունը: Այստեղ փաստացի տեղ է գտնում պարտադիր համագործակցություն, ու, թեև համագործակցողների իրավական կարգավիճակը տարբեր է և նույնիսկ հակընդդեմ, սակայն համագործակցության նպատակը մեկն է՝ ապահովել շրջակա միջավայրի որակը: Ինչպես նշում է Ա. Իսկոյանը, «Հասարակությունը այս գործընթացում խաղում է երկակի դեր, մի կողմից նա համագործակցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի պետական կառույցների հետ, մյուս կողմից՝ հասարակությունը, լուծելով իր խնդիրները, հսկողություն է իրականացնում օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ունեցած իրենց լիազորությունների իրականացման նկատմամբ.[5]..»:

Հասարակության մասնակցությունը էկոլոգիական որոշումների կայացմանը լուրջ հնարավորություններ է տալիս այդ որոշումների կայացումը ավելի բաց դարձնելու, համապատասխան որոշումներ կայացնող անձանց պատասխանատվությունը բարձրացնելու համար, ինչը կարևոր նախապայման է ողջ գործընթացի արդյունավետ կայացման համար: Այսինքն՝ հասարակությանը պետք է հնարավորություն տրվի արտահայտել իր մոտեցումներն ու կարծիքը, իսկ պետական մարմինները պետք է դրա հետ հաշվի նստեն:

Յուրաքանչյուր ոք պետք է իրավունք ունենա ոչ միայն ստանալ էկոլոգիական տեղեկատվություն, այլև պետք է հնարավորություն ունենա մասնակցելու, և անհրաժեշտության դեպքում ազդելու այդ բնագավառում կայացվելիք որոշումների ընդունման վրա. որոնք կարող են նորանոր ռիսկեր ստեղծել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության համար, ինչը ոչ մի դեպքում անհետևանք չի թողնի մարդկային կյանքը և նրա կենսագործունեությունը[6]:

Գաղտնիք չէ, որ նախկին ԽՍՀՄ տարածքում ժողովրդավարությանը տանող դռներն ամուր փակված էին: Սակայն աստիճանաբար քաղաքացիներն ու հասարակական կազմակերպությունները փորձեցին դրանք բացել: Իհարկե, հաջողությունների հասնելը լի էր դժվա-

---

[5] Տե՛ս Իսկոյան Ա. Բ. Повышение уповня экологической осведомленности общественности.// Իրավագիտության հարցեր, 2000թ., էջ 46

[6] Տե՛ս Кириленко А. Орхусская конвенция как инструмент выхода из экологического кризиса и укрепления экологической безопасности. Ташкент. 2004г. N 4 с. 3-12

րություններով, ու պետք էր գիտելիքների, փորձի, հմտությունների համապատասխան միջոցներ գտնել:

Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիությունը, որոշումների կայացմանը հասարակության մասնակցությունը և արդարադատության մատչելիությունը այն երեք սյուներն են, որոնց վրա հիմնվում է ՀՀ կողմից 2001թ. մայիսի 14-ին վավերացված «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների կայացմանը հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան, որը, հանդիսանալով ներպետական օրենսդրության մաս, մանրակրկիտ և հստակ սահմանում է համապատասխան գործընթացները:

Ներկայացնելով Շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակության մասնակցության իրավունքի ձևավորման պատմությունը՝ պետք է նշել, որ հասարակության մասնակցության իրավունքի որոշակի ասպեկտներ քննարկվել են նաև այնպիսի միջազգային փաստաթղթերում, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի կողմից 1982թ-ին ընդունած «Բնության համաշխարհային հռովարտակը» որի կետ 23-ի համաձայն յուրաքանչյուր ոք՝ անհատապես կամ կոլեկտիվ ձևով կարող է մասնակցել անմիջականորեն իրեն շրջապատող միջավայրի վերաբերյալ որոշումների քննարկման գործընթացին: Ինչ վերաբերվում է տարածաշրջանային ակտերին, ապա Եվրոպայի խորհրդի 1986թ-ին ընդունված 171 բանաձևը, որը մշակվել էր Եվրոպայի տեղական և տարածքային մարմինների կոնֆերանսի արդյունքում, նույնպես ամրագրել էր հստակ դրույթներ՝ Շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակության մասնակցության վերաբերյալ: Մինչ Օրհուսի կոնվենցայի ընդունումը Շրջակա միջավայրի առնչությամբ որոշումների կայացմանը հասարակության մասնակցության դրույթներ նախատեսված են եղել ՄԱԿ-ի ԵՏՀ-ի ««Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» 1991թ-ի կոնվենցիայով /հոդված 2 և 4/, «Կլիմայի փոփոխության մասին» 1992թ. կոնվենցիայով /հոդված 6/, ՄԱԿ-ի ԵՏՀ-ի «Արդյունաբերական վթարների անդրսահմանային ներգործության մասին» կոնվեցիայով /հոդված 9/:

Մարդկության գոյության հազարամյակների ընթացքում Երկիր մոլորակի վրա մշակվել են բազմաթիվ նորմեր ու սկզբունքներ, որոնք

վերաբերվում են մարդու և բնության փոխհարաբերություններին, և որոնց ճշմարտացիությունն արդեն վաղուց ի վեր ապացուցված է: Դրանցով ոչ միայն պարտավոր են ղեկավարվել անհատները, այլև ողջ մարդկությունը: Այդպիսի սկզբունքներ են հանդիսանում շրջակա միջավայրի համար մարդու բարձրագույն պատասխանատվությունը և բնության խնամքի ու մաքրության պահպանության գաղափարը:

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու սահմանադրական ամրագրում ստացած իրավունքն ըստ էության ունի հավաքական և հիմնարար բնույթ և բաղկացած է մի շարք այլ իրավունքներից: Դրանք իրենց ամրագրումն են ստացել 1991թ. հուլիսի 7-ին ընդունված «Բնության պահպանման մասին» ՀՀ օրենսդրության հիմունքներում, որի 11 հոդվածը սահմանում է, որ ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի՝

ա) օգտվել բնության առողջարար հատկություններից,
բ) օրենքով սահմանված կարգով օգտվել բնության բարիքներից,
գ) ստանալ շրջակա միջավայրի աղտոտման, էկոլոգիական վթարի կամ աղետի հետևանքով առողջությանը պատճառած վնասի լրիվ հատուցում,
դ) պահանջել և ժամանակին ստանալ ամբողջական ու ճշգրիտ տեղեկություն շրջակա միջավայրի իրավիճակի մասին,
ե) բնակվել մաքուր շրջակա միջավայրում, իսկ վերջինիս խախտումների դեպքում՝ ստանալ էկոլոգիական աղետի կարգավիճակ, որի դեպքում կիրառվում է ՀՀ Կառավարության կողմից սահմանված համարժեք փոխհատուցման համակարգը,
զ) մասնակցություն ունենալ բնության պահպանության վերաբերյալ օրենքների և որոշումների մշակմանն ու դրանց իրականացման նկատմամբ հսկողությանը,
է) ներգրավվել բնապահպանական հասարակական կազմակերպություններում,
ը) օգտվել այլ իրավունքներից, որոնք չեն հակասում բնապահպանական օրենսդրությանը:

1991թ. ՀՀ ԳԽ-ն ընդունեց «Բնության պահպանության մասին ՀՀ օրենսդրության հիմունքները», որն առաջին անգամ սահմանեց բնապահպանության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, որը, ցավոք, այլևս չի գործում և կարծում ենք, որ մեր

երկրում ունենք օրենսդրական բաց այս բնագավառում, քանի որ չկա բնապահպանության ոլորտը կարգավորող միասնական ակտ:

Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է անշեղորեն կատարել բնապահպանական օրենսդրության պահանջները, աջակցել բնության պահպանությանը:

Բնության պահպանությունը շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության ապահովման, բնական պաշարների խնայողաբար օգտագործմամբ արտադրության գործնական և միջոցառումների իրականացումն է: Հանրապետության տարածքում աղտոտումից, վնասումից, սպառումից և վերացումից պետական պահպանության ենթակա են հողը, նրա ընդերքը, բուսական և կենդանական աշխարհը, մթնոլորտային օդը, ջրերը, բնության հատուկ պահպանվող տարածքները, արգելոցները, արգելավայրերը, հազվագյուտ բնական օբյեկտները, առողջարանային, պատմական կարևորագույն իրադարձությունների հետ կապված վայրերը, լանդշաֆտները:

Այդ կապակցությամբ պետությունը կրում է մի շարք պարտականություններ: Մասնավորապես, բնության պահպանությունը զուգակցելով ազգային պետական քաղաքականության մյուս հարցերի հետ՝ Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է՝

ա) Հանրապետության բոլոր քաղաքացիների համար ապահովել նրանց սոցիալական, գեղագիտական և մշակութային պահանջմունքները բավարարող անվտանգ առողջ և բարենպաստ բնական պայմաններ,

բ) հասնել բնական միջավայրի առավել արդյունավետ օգտագործմանը՝ բացառելով նրա վատթարացումը, մարդկանց առողջության և էկոլոգիական անվտանգության համար սպառնալիքի առաջացումը,

գ) հասնել հավասարակշռության՝ ազգաբնակչության աճի և բնական պաշարների օգտագործման միջև,

դ) ապահովել բնության առանձին կամ մի քանի բաղկացուցիչ մասերի ընդհանուր էկոլոգիական հաշվեկշիռը,

ե) այդ բնագավառում զուգակցել ազգային և միջազգային շահերը:

Մարդու բնապահպանական իրավունքների իրականացման հարցում հատկապես կարևորվում է շրջակա միջավայրի մասին հավաստի տեղեկատվություն ունենալու իրավունքը, որը նշանակում է շահագրգռված անձի հնարավորությունը՝ ստանալու օրենքով նախատեսված միջոցներով շրջակա միջավայրի վերաբերյալ օբյեկտիվ և չխեղաթյուրված տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը քաղաքացիներին կարող է հնարավորություն ընձեռնել ժամանակին ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք հնարավորություն կընձեռեն պաշտպանելու մարդու կյանքը, առողջությունը, ունեցվածքը անբարենպաստ բնական երևույթների, բնական և տեխնոգեն աղետների ներգործությունից: Այդ կապակցությամբ քաղաքացիները և հասարակական միավորումները իրավունք ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, հիդրոմետերոլոգիական այլ մարմիններից, հաստատություններից, կազմակերպություններից պահանջել շրջակա միջավայրի և դրա պահպանության վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Այդ իրավունքը երաշխավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը պաշտոնատար անձանց պատասխանատվություն է սահմանում բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում դեռևս հին ժամանակներից ձևավորվել են բնության պահպանության նկատմամբ իրավական ամրագրում ունեցող իրավական ակտեր, պետության կողմից տարվել է քաղաքականություն այդ նորմերը կատարելու նկատմամբ: Այսօր արդիական դարձած միջազգային պայմանագրերի կնքումը և իրականացումը, ազգային և միջազգային ծրագրերի կատարումը մեծ նշանակությունը ունեն մեր երկրում բնապահպանական հիմնախնդիրների լուծման համար, սակայն ունենք որոշ օրենսդրական բացեր, որոնցից ամենակարևորը այս ոլորտում միասնական ակտի բացակայությունն է, որտեղ կսահմանվի պետության քաղաքականությունը, նրա պարտականությունները, ինչպես նաև մարդու իրավունքները բնապահպանության բնագավառում և իրականացման ուղիները և երաշխիքները:

*Բանալի բառեր:* էկոլոգիական կորուստ, էկոլոգիական իրավախախտում, բարենպաստ շրջակա միջավայր, էկոլոգիական աղետ, բնապահպանական անվտանգություն:

**Գրականություն**

1. «Էկոլոգիայի հիմունքներ» Մելքումյան Լ. Երևան 2008 թ.,
2. Петров В.В. «Экологическое право России» Москва -1995г.
3. «Բնության պահպանության հիմունքներ» Մելքումյան Լ. Երևան 2006թ.,
4. «Հայաստանի հանրապետության Սահմանադրական իրավունք» Այվազյան Ն.Ա., Երևան 2008թ.,
5. Տես Իսկոյան Ա.Բ. Повышение уровня экологической осведомленности общественности.// Իրավագիտության հարցեր, 2000թ.,
6. Տես Кириленко А. Орхусская конвенция как инструмент выхода из экологического кризиса и укрепления экологической безопасности. Ташкент. 2004г. N 4

## THE LEGAL CONTENT AND SIGNIFICANCE OF ENVIRONMENTAL SECURITY

**Ziroyan Lilit Derenik**
EREA, Faculty of Law, Researcher

**Summary**

The article is dedicated to the legal content and significance of environmental security, was conducted the oretical and legal analyze. Armenian Republic since old times has formed acts for the saving nature and through the policy they follow that acts be implemented. Today as relevant to sign international contracts and implementation, application of national and international programs are very important in our country for the solving many environmental problems, but also we have some legislative gaps one of which is lack of unified act in this sphere, where should be defined the policy of state, responsibilities, and also human

rights in the environmental sphere, the ways of implementation and guarantees.

*Keywords:* Environmental losses, Environmental viloations, Supportive environment, Environmental disaster, Environmental safety,.

## ЮРИДИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ И ЗНАЧЕНИЕ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ

**Зироян Лилит Дерениковна**
ЕРОА, Юридический факультет, соискатель

### Резюме

Статья посвящена правовому содержанию и значимости экологической безопасности, осуществляется теоретико -правовой анализ. В Республике Армении с древних времен формировались правовые нормы защиты правовой природы и сегодня актуально поднять заключение и выполнение международных и национальных договоров.

Программы имеют большое значение для реализации международных экологических проблем, стоящих перед нашей страной, но у нас есть некоторые пробелы в законодательстве, наиболее важным из которых является отсутствие единого акта в этой области, который будет определен в политике своих обязанностей, а также в области охраны окружающей среды и осуществления гарантий и путей в области прав человека.

*Ключевые слова:* экологическая потеря, экологическое правонарушение, благоприятный окружающие средий, экологическая катастрофа, экологическая безопасность

# ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

***Լիլիթ Դերենիկի Չիրոյան***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոն, հայցորդ*

Բնապահպանական անվտանգության ապահովումն, ավելի լայն ըմբռնմամբ, իրենից ներկայացնում է բարենպաստ շրջակա միջավայր ունենալու յուրաքանչյուրի իրավունքի ապահովումը: Բարենպաստ շրջակա բնական միջավայր ունենալու յուրաքանչյուրի իրավունքի հասկացությունը և բովանդակությունը բխում է մարդու և քաղաքացու իրավունքների ընդհանուր տեսությունից: Չնայած մարդու իրավունքների բուն գաղափարի ծագման վաղեմությանը՝իրական իմաստ դրանք ձեռք են բերում միայն ժողովրդավարության, ազատության, արդարության, հավասարության սկզբունքների հիման վրա: Նման հիմքի վրա հնարավոր դարձավ մարդու հիմնական ֆունդամենտալ իրավունքների ամրագրումը ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում:

Մարդու իրավունքներն երաշխավորող նորմերը, որոնք միջազգային իրավունքի կողմից ճանաչվել են որպես սկզբնաղբյուր, հայկական օրենսդրության մեջ վերաբերում են առաջին հերթին սահմանադրական մակարդակին, որտեղ, ինչպես և ամբողջ աշխարհում, առաջնայնությունը տրվում է անձին և համամարդկային արժեքներին:

Մեծ մասամբ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի իրականացումը խաչվում է մարդու և քաղաքացու այլ իրավունքների հետ: Այսպես՝ քաղաքացիական (անձնական) իրավունքները որոշում են որևէ անօրինական միջամտությունից մարդու, նրա առողջության և ունեցվածքի պաշտպանվածությունը: Քաղաքացիների քաղաքական իրավունքները արտահայտում են պետական իշխանության իրականացմանը մասնակցելու անձի հնարավորությունները, օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանության հարցերով հանրաքվեի անցկացման, բնապահպանական նշանակալից որոշումների նախապատրաստման և ընդունման գործընթացին մասնակցելու կամ իշխանության նկատմամբ վերահսկողություն սահմանելու միջոցով, օրի-

նակ՝ պետական մարմինների և պաշտոնական անձանց որոշումների և գործողությունների, ինչպես նաև նրանց՝ քաղաքացիների էկոլոգիական իրավունքները խախտող անգործության դատական բողոքարկման ճանապարհով:

Սոցիալական և տնտեսական իրավունքները կոչված են ապահովելու մարդու համար արժանի կենսական մակարդակ՝ հաշվի առնելով էկոլոգիական բնորոշիչները, (էկոլոգիապես անվտանգ պայմաններում աշխատելու իրավունք, աղտոտված շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունից առողջության պաշտպանություն, էկոլոգիական կրթության իրավունք): Պետության և իրավունքի ընդհանուր տեսության մասնագետները դեռ ավելի վաղ ընդունում էին քաղաքացիների իրավական կարգավիճակը առողջ շրջակա միջավայր ունենալու նոր իրավունքով համալրելու անհրաժեշտությունը[1]: Դրա հետ մեկտեղ որոշ հեղինակներ, չխորանալով հարցի բնույթի մեջ, հիշատակում էին այդ իրավունքը որպես արդեն կայացած և ձևակերպված[2]: Ս. Ա. Դզեյտովը նշում է, որ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների սահմանադրական իրավունքը ձեռք է բերում հատուկ նշանակություն: «Այն հանդիսանում է մարդու ապրելու հիմնական, բնական և անբաժանելի իրավունքի որոշակիացում»[3]:Պ. Վ. Գորբաչովը, ընդգծելով անձի սուբյեկտիվ իրավունքների համակարգում բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների իրավունքի կարևորությունը, գրում է, որ դա ցանկացած անհատի սահմանադրորեն սանկցիավորված և պետության կողմից երաշխավորված իրական, մշտական և անօտարելի իրավասությունների համախումբ է, որով նա կարող է իրականացնել իր քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, անձնական և այլ իրավունքները, ազատությունները և օրինական շահերը ժամանակակից շրջակա միջավայրի օպտիմալ պայմաններում, պահանջել պետությունից, բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանցից շրջակա միջավայրի պահպանությանն

---

1 Տես՝ Ա.Ե. Լուկաշևվա, Սոցիալիստական իրավունք և անձ, Մ., 1978թ. էջ 149,

2 Տես՝ Ն.Ս. Մալեին, Խորհրդային քաղաքացիների անձնական իրավունքների պաշտպանություն, Սոցիալիստական իրավունք և գիտատեխնիկական հողափոխություն, խմբ. Ռ.Օ. Խալֆին, Մ., 1979թ., էջ 274

3 Տես՝ Ս.Ա. Դզեյտով, Պետություն և էկոլոգիական անվտանգությունը, իրավ.գ.թ. դիսս. ռեֆ., Ս.Պետերբուրգ, 1994թ., էջ 17

ուղղված սահմանադրական պարտավորությունների կատարում, ինչպես նաև վերջիններիս կողմից այդ պարտավորությունների խախտման դեպքում դիմել պետական կամ հասարակական պաշտպանության համար: Օբյեկտիվ իմաստով բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքն իրենից ներկայացնում է իրավական նորմերի բարդ միջոլորտային համալիր, որը նախատեսված է կարգավորելու շրջակա միջավայրի ոլորտում մարդու, հասարակության և պետության միջև հարաբերությունները՝ զանազան անհատական և հասարակական էկոլոգիական շահերի իրականացման համար իրավաբանական երաշխիքների ստեղծման նպատակով:

Օբյեկտիվ իմաստով բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքն իրենից ներկայացնում է իրավական նորմերի բարդ միջոլորտային համալիր, որը նախատեսված է կարգավորելու շրջակա միջավայրի ոլորտում մարդու, հասարակության և պետության միջև հարաբերությունները՝ զանազան անհատական և հասարակական էկոլոգիական շահերի իրականացման համար իրավաբանական երաշխիքների ստեղծման նպատակով[4]:

Ավելի կոնկրետ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների իրավունքը ձևակերպված է էկոլոգիաիրավական գիտության ներկայացուցիչների հետազոտություններում: Այսպես՝ Օ.Ս. Կոլբասովը համարում է, որ բարենպաստ միջավայր ունենալու իրավունքը վերաբերում է սուբյեկտիվ իրավունքների շարքին, և այդ իսկ պատճառով այն պետք է իր մեջ ներառի իրավասու մարմնին պաշտպանության համար դիմելու հնարավորություն[5]: Վ. Վ. Պետրովն առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքը կապում է քաղաքացիների ընդհանուր բնօգտագործման իրավունքի հետ, նշում է դրա ապահովման երաշխիքները[6]: Յու. Ս. Շեմշուչենկոն դիտարկում է այդ իրավունքը մարդու իրավունք-

---

4 Տես՝ Պ.Վ. Գորբաչով, Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը Ռուսաստանի Դաշնության օրենսդրության և միջազգային ստանդարտների հարաբերակցության համատեքստում, իրավ.գ.թ.դիսս.ռեֆ., Մ., 1995թ., էջ12

5 Տես՝ Օ.Ս. Կոլբասով, Էկոլոգիա. Քաղաքականություն և իրավունք, Մ., 1976թ., էջ 84-91,
Շրջակա միջավայրի պահպանության խնդիրները ԽՍՀՄ նոր Սահմանադրության մեջ, // Խորհդային պետություն և իրավունք, 1978թ. № 5

6 Տես՝ Վ.Վ. Պետրով, Բնության իրավական պահպանությունը ԽՍՀՄ-ում, Մ., 1984թ., էջ 92

ների հայեցակարգի լույսի ներքո և որպես սուբյեկտիվ իրավունք, ինչպես նաև առաջին անգամ ընդգծում է իրավունքի օբյեկտի սահմանները[7]: Վ. Պ. Բալեզինը տվել է բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքի սահմանումը որպես հատուկ ինստիտուտի, որն իրենից ներկայացնում է իրավական նորմերի համախումբ, որոնք նախատեսված են կարգավորելու ոչ նյութական ոլորտի բնական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ միասեռ հասարակական հարաբերությունները[8]: Ա. Ա. Ռյաբովը գտնում է, որ մաքուր, առողջ շրջակա միջավայր ունենալու քաղաքացիների իրավունքը հանդիսանում է ընդհանուր բնօգտագործման իրավունքի զգալի կողմը և առողջության պաշտպանության քաղաքացիների իրավունքը բաղկացուցիչ մասը[9]:

Ս. Ն. Կրավչենկոն առողջ շրջակա միջավայր ունենալու իրավունքն անվանում է սուբյեկտիվ և բացարձակ[10]:

Ջ. Գինզբուրգի կարծիքով Ռուսաստանում ստեղծված են ոչ միայն քաղաքացու, այլև մարդու միջազգայնորեն ճանաչված իրավունքների սահմանադրական երաշխիքները[11]: Ինչպես նշում է Բ. Ս. Էբզեյեվը. «պետությունների կողմից միջազգային ստանդարտների ընկալման արդյունքում բուն մարդ հասկացությունը միջպետական իրավունքում ևս ձեռք է բերում իրավական բնույթ և մատնանշում է տվյալ պետության քաղաքացիներին, ինչպես նաև օտարերկրացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց, որոնք գտնվում են տվյալ պետության տարածքում: Իսկ մարդու իրավունքները դրանք այնպիսի իրավունքներ են, որոնցով օժտված է յուրաքանչյուր մարդ՝ անկախ իր քաղաքացիական պատկանելությունից»: Ինչ վերաբերում է բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքին, ապա օբ-

---

7 Տես՝ Յու.Ս. Շեմշուչենկո, Էկոլոգիայի իրավական խնդիրներ, Կիև, 1989թ., էջ 8-30

8 Տես՝ Վ.Պ. Բալեզին, Բնօգտագործման իրավունքը ԽՍՀՄ-ում, Գիտատեխնիկական առաջընթաց և բնության իրավական պաշտպանություն, Վ.Վ. Պետրովի խմբ., Մ., 1978թ., էջ 44

9 Տես՝ Բնառեսուրսային իրավունք և շրջակա միջավայրի իրավական պաշտպանություն, Վ.Վ. Պետրոցի խմբ., Մ., 1988թ., էջ 79

10 Տես՝ Ս.Ն. Կրավչենկո, Բնության պահպանության վերաբերյալ օրենսդրության բարելավում ՌԽՖՍՀ Սահմանադրության լույսի ներքո,// Շրջակա միջավայրի պահպանություն, ղեկավարում, իրավունք, Կիև, 1982թ., էջ 39-40

11 Տես՝ Ջ. Գինզբուրգ, ԽՍՀՄ-ում և Ռուսաստանում միջազգային և ներքին իրավունքի հարաբերակցություն// Պետություն և իրավունք, 1994թ., № 3, էջ 111

յեկտների շրջանակը, որոնց վրա այն տարածվում է, զգալիորեն ավելի լայն է, այդ իրավունքին հետևելն իր մեջ ներառում է նաև այլ ժողովուրդների էկոլոգիական շահերը հարգելը՝ շրջակա միջավայրի ոլորտում միջազգային ստանդարտներին համապատասխան[12]: Ն. Վ. Վիտրուկը, համարելով, որ օրինական շահերը հանդես են գալիս որպես քաղաքացու իրավական կարգավիճակի անհրաժեշտ լրացուցիչ էլեմենտ, կարծում է, որ շրջակա միջավայրի ոլորտում քաղաքացիների հիմնական օրինական շահերը մոտ ժամանակներս կձևափոխվեն ինքնուրույն իրավունքի: Տվյալ հետևությունը Ն. Վ. Վիտրուկը հիմնավորում է այն համոզման վրա, որ «երրորդ սերնդի» մարդու իրավունքները, որոնց թվին նա վերագրում է նաև «առողջ և էկոլոգիապես հավասարակշռված շրջակա միջավայրի իրավունքը», իր բնույթով իրենից ներկայացնում է «ժողովուրդների, ազգերի, պետությունների, համաշխարհային հասարակության ընդհանրապես իրավունքները..... դրանց ձևավորումն արտահայտում է կենսական պահանջներ» և «ողջ մարդկության և առանձին յուրաքանչյուր մարդու շահերը»[13]:

Եթե մենք անդրադառնանք բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքի առաջացման պատմությանը, ապա կհայտնաբերենք, որ այդ հասկացությունը ձևավորվել է մի քանի տասնամյակների ընթացքում:

Բարենպաստ շրջակա բնական միջավայր ունենալու մարդու և քաղաքացու առաջացման նախադրյալները կարելի է ընդգծել արդեն ՄԱԿ-ի կողմից ընդունված առաջին փաստաթղթերում: Այսպես՝ ՄԱԿ-ի Կանոնադրության Պրեամբուլայում և 1948թ. դեկտեմբերի 10-ի Մարդու իրավունքների համընդհանուր դեկլարացիայում նշված է միջազգային հասարակության նպատակը՝ աջակցել ավելի մեծ ազատության պայմաններում կյանքի պայմանների բարելավմանը, ինչպես նաև ճանաչում է մարդու իրավունքն այնպիսի կենսական մակարդակի նկատմամբ, «որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջության և բարօրության պահպանման համար»[14]:

---

12 Տես՝ Բ.Ս. Էբզեյեվ, Սահմանադրություն: Ժողովրդավարություն: Մարդու իրավունքներ: Մ., 1992թ., էջ 120

13 Տես՝ Ն.Վ. Վիտրուկ, Անձի իրավական կարգավիճակը ԽՍՀՄ-ում, Մ., 1985թ., էջ 11, 73

14 Տես՝ Մարդու իրավունքների և իրավունքների միջազգային պաշտպանություն: Փաստաթղթերի հավաքածու, Մոսկվա, 1990թ., էջ 14

Այդ նույն ժամանակաշրջանում ձևավորվում են նաև էկոլոգիական հանցագործությունների համար պատասխանատվության միջոցների որոշման մոտեցումները[15]:

Սակայն այն ժամանակ այդ փաստաթղթերը չունեին այնպիսի նշանակություն, ինչպիսին ձեռք բերեցին ժամանակակից պայմաններում: Առաջին հերթին այն պատճառով, որ միայն վերջերս գիտակցվեց, որ արտադրության զարգացման արդյունքում էկոլոգիական խնդիրները անցան գլոբալների շարքը: Ուստի մինչև 1972թ. նույնիսկ գոյություն չուներ այնպիսի հասկացություն, ինչպիսին «բարենպաստ շրջակա բնական միջավայրն է»[16]:

Շրջակա բնական միջավայրի պահպանության հարցերով Ստոկհոլմյան կոնֆերանսի ժամանակ ընդունվեցին երկու կարևորագույն փաստաթուղթ՝ «Սկզբունքների հռչակագիր» և «Միջոցառումների պլան»:

Հռչակագրի առաջին իսկ սկզբունքում ընդգծվում էր մարդու բոլոր իրավունքների փոխկապվածությունը և փոխկախվածությունը, իսկ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը կցվել էր հիմնական իրավունքների և ազատությունների թվին: Առաջին անգամ պետական սուվերենությունը դիտարկվում է էկոլոգիական շահերի տեսանկյունից:

Բարենպաստ շրջակա բնական միջավայր ունենալու մարդու և քաղաքացու իրավունքի զարգացման հաջորդ կարևոր էտապ հանդիսացավ Սկզբունքների հռչակագիրը, որն ընդունվեց Ռիո դե Ժանեյրո-

---

15 Էկոցիդը որպես գենոցիդի տարատեսակ իրենից ներկայացնում է թշնամական (միտումնավոր, մպատակային, վնասակար) շրջակա բնական միջավայրի վրա ռազմական կամ այլ նպատակներով, որն առաջացնում է բնության մեջ փոխկապակցվածությունների ոչնչացում և որոշակի տարածքում այնպիսի մարդու կյանքի և առողջության համար էկոլոգիապես անբարենպաստ այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կբերեն այդ տարածքի բնակչության մահվանը: (Ավելի մանրամասն տես՝ Գենոցիդ հանցագործության կանխման և դրա պատժի վերաբերյալ կոնվենցիա, 09.12.1948թ., Մարդու իրավունքների և ազատությունների մջազգային պաշտպանություն, Փաստաթղթերի ժողովածու, Մոսկվա, 1990թ., էջ 98-103):

16 «Շրջակա միջավայրը» դա բնության մաս է՝ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ վերցված՝ մարդկություն կամ մարդ: «Բարենպաստ» հասկացությունը կարող է նշանակել այնպիսի վիճակ, որտեղ հնարավոր են մարդու արժանի կյանքը և առողջությունը:

յում՝ Շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ ՄԱԿ-ի կոնֆերանսի ժամանակ՝ 1992 թվականին:

Ռիոյի Հռչակագրի № 1 սկզբունքը հռչակում է, որ «բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը հանդիսանում է բնության հետ ներդաշնակության մեջ առողջ և պտղաբեր կյանք ապրելու իրավունքի բաղկացուցիչ մասը»:

Վերլուծելով այդ Հռչակագրի սկզբունքները՝ կարելի է տալ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքի սահմանումը որպես ցանկացած մարդու գոյատևման հնարավորություն երկրի կենսոլորտի այնպիսի վիճակում, որն ապահովում է ֆիզիկական և հոգեբանական առողջության մաքսիմալ մակարդակ, ինչպես նաև միջոցառումների համակարգի օգտագործման հնարավորություն, որոնք թույլ կտան հեռացնել կենսոլորտին մարդու կենսագործունեությամբ առաջացած գլոբալ սպառնալիքները, ուստի և բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքին պետք է համապատասխանի այդ վիճակի ապահովման վերաբերյալ պարտավորությունը:

«Բարենպաստ»[17] հասկացությունը, կիրառված շրջակա միջավայրի նկատմամբ, կարող է նշանակել դրա այնպիսի վիճակ, որտեղ հնարավոր են մարդու արժանավայել կյանքը և առողջությունը:

Բարենպաստ շրջակա միջավայրը բնորոշվում է նաև մարդու էսթետիկ և այլ պահանջները բավարարելու ունակությամբ: Բնության այդ պահանջների և ունակությունների բավարարման համար շրջակա միջավայրի բարենպաստ վիճակի պահպանումը ապահովվում է հատուկ վերահսկվող բնական տարածքների և օբյեկտների, ռեկրեա-

---

[17] Իր հերթին «անբարենպաստ» կլինի շրջակա միջավայրը, որն ինքն իրեն վնասակար ազդեցություն է ունենում մարդկանց առողջության վրա և թույլ չի տալիս նրանց վարել արժանավայել կյանք: Այսպես՝ Ռուսաստանի տարածքում կան վայրեր, որտեղ շրջակա միջավայրն անբարենպաստ է մարդկանց ֆիզիկական առողջության համար, և այդ դեպքում պետությունը հոգ է տանում բնության բացասական ազդեցությունից մարդու և քաղաքացու պաշտպանության համար: Օրինակ՝ ջրի, ջերմության մատակարարում մարդու բնակության ջրազուրկ, ցուրտ վայրեր: Համաձայն 20.05.93թ. ՌԴ օրենքի հ. 1-ի սահմանադրականության վերաբերյալ գործով 11.03.1996թ. Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի որոշմանը՝ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը կապված էր տեղահանված քաղաքացիներին առավելություններ և փոխհատուցում տրամադրելու պետության պարտավորության հետ:

ցիոն գոտիների և այլ շրջանների ռեժիմի ստեղծմամբ և կարգավորմամբ:

Շրջակա միջավայրը հանդիսանում է բարենպաստ, եթե դրա վիճակը համապատասխանում է բնապահպանական օրենսդրության մեջ ամրագրված բնորոշիչներին, ստանդարտներին և նորմատիվներին, որոնք վերաբերում են դրա մաքրությանը (չաղտոտվածությանը), ռեսուրսատարողությանը (անսպառությանը), էկոլոգիական կայունությանը, տեսակային բազմազանությանը և էսթետիկ հարստությանը:

Աշխարհի երկրների սահմանադրություններում բնության հետ ներդաշնակության մեջ ապրելու հնարավորության մարդու իրավունքը հնչում է տարբեր ձևակերպումներով, ինչպես օրինակ՝ «առողջ միջավայր ունենալու իրավունք» ««բարենպաստ միջավայր ունենալու իրավունք», «կյանքի և առողջության համար անվտանգ միջավայր ունենալու իրավունք» և այլն, փոփոխվում է, լրացվում է նոր բովանդակությամբ:

Այս իրավունք առաջին անգամ հայտնվել է Պորտուգալիայի և Իսպանիայի սահմանադրություններում: Ընդ որում այսուհետև քննարկվելիք գրեթե բոլոր սահմանադրություններում շրջակա միջավայրի իրավունքին համապատասխանում է բոլոր իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև պետական մարմինների շրջակա միջավայրի պահպանության և բնակչության առողջության համար օպտիմալ վիճակի ապահովման համար բոլոր հնարավոր միջոցառումները ձեռք առնելու պարտականությունը:

02.04.1976թ. Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրության մեջ (հետագա փոփոխություններով և լրացումներով) այն հնչում է հետևյալ կերպ. Հոդված 66 «Շրջակա միջավայր և կյանքի որակ: Բոլորը իրավունք ունեն ապրելու մարդկային առողջ միջավայրում, էկոլոգիական հավասարակշռության պայմաններում, և պարտավոր են պաշտպանել այդ միջավայրը: Այդ իրավունքի ապահովման համար «պետությունը պարտավոր է սեփական մարմինների միջոցով, ինչպես նաև հենվելով ժողովրդական նախաձեռնության և օգնության վրա»:

Էկոլոգիական պահանջներ և նորմեր այս կամ այն տեսքով հաճախ կարելի է հանդիպել Արևելյան Եվրոպայի երկրների սահմանադրություններում:

Սակայն սահմանադրական ակտերի մի ամբողջ շարքում բացակայում են հատուկ ընդգծված էկոլոգիական նորմեր: Այսպես օրինակ՝ նմանատիպ նորմեր բացակայում են ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ, Կանադայի սահմանադրական ակտերում, Բելգիայի Սահմանադրության մեջ, Դանիա պետության սահմանադրության մեջ, Ֆրանսիայի սահմանադրական ակտերում և Ֆրանսիայի Սահմանադրության Պրեամբուլայում և շատ այլ երկրների սահմանադրություններում՝ ընդունված մինչև 1972 թվականը, որոնք ակտիվ զարգացնում են ինչպես անվտանգության էկոլոգիական ապահովման իրավական կողմը, այնպես էլ նորմերի իրացման պրակտիկան սահմանադրական նորմերի մեկնաբանման, օրենսդրության զարգացման հիման վրա:

Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքի ապահովման համար էկոլոգիաիրավական նշանակություն ունեցող իրավիճակն ունի երկու տարատեսակ.

- Իրավիճակ, որի իրավական բնութագիրը որոշվում է այս կամ այն տեղանքի, այլ արտակարգ էկոլոգիական վիճակի, էկոլոգիական աղետի գոտու և այլն որոշմամբ: Այդ իրավիճակի պարամետրերը որոշվում են համապատասխան պետական մարմինների կողմից, որոնք իրականացնում են տվյալ տարածքում արտակարգ իրավիճակ մտցնելը, այսինքն՝ պարամետրերի կոնկրետ խումբ օրենքը չի նախատեսում՝ տեղը զիջելով համապատասխան պետական մարմինների և պաշտոնական անձանց վարչական հայեցողությանը:
- Իրավիճակ, որի իրավական բնութագիրը որոշվում է օրենքով: Որպես եզրակացություն հարկավոր է նշել, որ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքի հասկացության և բովանդակության նկատմամբ նոր մոտեցումների որոնման և հաշվառման անհրաժեշտությունը ակտուալ է ճանաչվում է ժամանակակից պայմաններում:

Բարենպաստ շրջակա միջավայրի իրավունքն իրենից ներկայացնում է.

1. Սահմանադրական նորմում ամրագրված բարոյական սկզբունք
2. Էկոլոգիական օրենսդրության կառուցման հիմնական սկզբունք
3. Քաղաքացու սուբյեկտիվ իրավունք՝ հիմնված բարենպաստ վիճակում շրջակա միջավայրը պահելու և մարդու վրա անբարենպաստ

միջավայրի բացասական ազդեցության հեռացմանն ուղղված միջոցառումների անցկացման պետության պարտավորությունների վրա:

Այդ իրավունքի մանրամասն հետազոտությունը թույլ է տալիս նկատել, որ բարենպաստ շրջակա միջավայր ունենալու իրավունքը հանդիսանում է մարդու և քաղաքացու կարևոր իրավունքներից մեկը և անհատի էկոլոգիական անվտանգության ապահովման նշանակալից բաղադրիչը, քանի որ բավականին ամբողջական է մշակված ինչպես տեսական գրականության և օրենսդրական փաստաթղթերում, առաջին հերթին՝ միջազգային մակարդակի, այնպես էլ գործնականում. իրավունքները չի կարելի դիտարկել երկրում տնտեսական վիճակից և քաղաքացիների այլ իրավունքների իրացման վիճակից առանձին:

2005թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության *33.2.* հոդվածն ամրագրում էր. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

Այս իրավունքը համարվում է մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքներից մեկը, քանի որ այն շոշափում է նրա կենսագործունեության հիմքերը, և որի միջոցով ապահովվում են մարդու կյանքի համար բարենպաստ բնապահպանական, տնտեսական և էսթետիկական պայմաններ: Բարենպաստ շրջակա միջավայրի ***իրավունքի էությունը*** կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ոք պետք է հնարավորություն ունենա ապրել առողջ, միջազգային չափանիշներին համապատասխան միջավայրում, այսինքն այնպիսի կենսոլորտի վիճակում, որն ապահովում է առավելագույն ֆիզիկական և հոգեկան առողջություն:

Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու սահմանադրական իրավունքն, ըստ էության, ունի հավաքական և հիմնարար բնույթ և բաղկացած է մի շարք այլ իրավունքներից:

Մարդու բնապահպանական իրավունքների իրականացման հարցում հատկապես կարևորվում է **շրջակա միջավայրի մասին հավաստի տեղեկատվություն ունենալու իրավունքը**, որը նշանակում է շահագրգռված անձի հնարավորությունը՝ ստանալու օրենքով նախատեսված միջոցներով շրջակա միջավայրի վերաբերյալ օբյեկտիվ և

չխեղաթյուրված տեղեկատվություն: Այդպիսի տեղեկատվությունը քաղաքացիներին կարող է հնարավորություն ընձեռել ժամանակին ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պաշտպանելու մարդու կյանքը, առողջությունը, ունեցվածքը անբարենպաստ բնական երևույթների, բնական և տեխնոգեն աղետների ներգործությունից: Այդ կապակցությամբ քաղաքացիները և հասարակական միավորումները իրավունք ունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, եղանակային ծառայություն իրականացնող հաստատություններից, կազմակերպություններից պահանջել շրջակա միջավայրի և դրա պահպանության միջոցների վերաբերյալ ամբողջական և հավաստի տեղեկատվություն: Այդ իրավունքը երաշխավորելու նպատակով Սահմանադրությունը պաշտոնատար անձանց նկատմամբ նախատեսում է պատասխանատվություն՝ բնապահպանական տեղեկատվությունը թաքցնելու կամ դրա տրամադրումը մերժելու համար:

Սահմանադրական բարեփոխումներ արդյունքում 2015թ. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվեց հոդված 11, որը սահմանում է «Հանրային իշխանությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունն ու վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների հանդեպ: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին»:

Շրջակա միջավայրի պահպանության և վերականգնման, բնական պաշարների ողջամիտ օգտագործման ապահովման վերաբերյալ նորմերի սահմանադրության մակարդակում հստակ ձևակերպումը ժամանակակից սահմանադրական զարգացումների կարևոր ձեռքբերումներից է, որը և հստակ արտացոլված է գործող Սահմանադրությամբ: Այն հանդես է գալիս ոչ միայն որպես հիմնարար արժեք, այլ նաև ամրագրված է որպես «նորմ-նպատակ» և «նորմ-սկզբունք», որն անփոխարինելի փիլիսոփայական, մեթոդական և վերջապես իրավական հիմք է մարդու բնապահպանական իրավունքների ամրագրման, համապատասխան պետական մարմինների իրավասությունների սահմանման համար ինչպես Սահմանադրության, այնպես էլ ընթացիկ օրենսդրության մակարդակում:

Գտնում ենք, որ խթանել բառն իրավական ծանրաբեռնվածություն գրեթե չի կրում, պարտավորեցնող չէ, հետևաբար, դրա գործածմամբ էականորեն նվազեցվում է շրջակա պահպանության ոլորտում պետության ակտիվ գործունեության կարևորությունը: Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի 2-րդ մասին, ապա գտնում ենք, որ «Սահմանադրական կարգի հիմունքները» գլխում մեթոդապես հիմնավորված չէ պարտականության ամրագրումը: Ակնհայտ անհամաչափություն կա պետության և անձի վրա՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտում դրված «ծանրության » տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրությամբ ուշադրությունից դուրս է մնացել անձամբ և այլոց հետ համատեղ և շրջակա միջավայրը պահպանելու պարտականությունը, որը հանրային բարիքների արժևորման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի ցանկացած հասարակության համար:

Հետևաբար առաջարկվում է ՀՀ Սահմանադրությունը լրացնել նոր հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում և պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Պաշտոնատար անձինք պատասխանատվությունն են կրում բնապահպանական տեղեկատվությունը անհիմն թաքցնելու կամ տրամադրումը մերժելու համար»:

*Բանալի բառեր:* էկոլոգիական շահեր, բարենպաստ շրջակա միջավայր, էկոլոգիական աղետ, բնապահպանական իրավունքներ:

### Գրականություն


1. Ա.Ե. Լուկաշեվա, Սոցիալիստական իրավունք և անձ, Մ., 1978թ.
2. Ն.Ս. Մալեին, Խորհրդային քաղաքացիների անձնական իրավունքների պաշտպանություն, Սոցիալիստական իրավունք և գիտատեխնիկական հողափոխություն, խմբ. Ռ.Օ. Խալֆին, Մ., 1979թ.
3. Ս.Ա. Դզեյտով, Պետություն և էկոլոգիական անվտանգությունը, իրավ.գ.թ. դիսս. ռեֆ., Ս.Պետերբուրգ, 1994թ.

4. Պ.Վ. Գորբաչով, Բարենպաստ շրջակա միջավայր ունենալու մարդու իրավունքը Ռուսաստանի Դաշնության օրենսդրության և միջազգային ստանդարտների հարաբերակցության համատեքստում, իրավ.գ.թ.դիսս.ռեֆ., Մ., 1995թ.
5. Օ.Ս. Կոլբասով, Էկոլոգիա. Քաղաքականություն և իրավունք, Մ., 1976թ., էջ 84-91,
6. Շրջակա միջավայրի պահպանության խնդիրները ԽՍՀՄ նոր Սահմանադրության մեջ, // Խորհդային պետություն և իրավունք, 1978թ. № 5
7. Վ.Վ. Պետրով, Բնության իրավական պահպանությունը ԽՍՀՄ-ում, Մ., 1984թ.,
8. Յու. Ս. Շեմշուչենկո, Էկոլոգիայի իրավական խնդիրներ, Կիև, 1989թ.,
9. Վ.Պ. Բալեզին, Բնօգտագործման իրավունքը ԽՍՀՄ-ում, Գիտատեխնիկական առաջընթաց և բնության իրավական պաշտպանություն, Վ.Վ. Պետրովի խմբ., Մ., 1978թ.,
10. Բնառեսուրսային իրավունք և շրջակա միջավայրի իրավական պաշտպանություն, Վ.Վ. Պետրովի խմբ., Մ., 1988թ.
11. Ս.Ն. Կրավչենկո, Բնության պահպանության վերաբերյալ օրենսդրության բարելավում ՌԽՍՀ Սահմանադրության լույսի ներքո,// Շրջակա միջավայրի պահպանություն, ղեկավարում, իրավունք, Կիև, 1982թ.,
12. Ջ. Գինզբուրգ, ԽՍՀՄ-ում և Ռուսաստանում միջազգային և ներքին իրավունքի հարաբերակցություն// Պետություն և իրավունք, 1994թ., № 3,
13. Բ.Ս. Էբզեյեվ, Սահմանադրություն: Ժողովրդավարություն: Մարդու իրավունքներ: Մ., 1992թ.
14. Ն.Վ. Վիտրուկ, Անձի իրավական կարգավիճակը ԽՍՀՄ-ում, Մ., 1985թ.,
15. Մարդու իրավունքների և իրավունքների միջազգային պաշտպանություն: Փաստաթղթերի հավաքածու, Մոսկվա, 1990թ.,
16. Գենոցիդ հանցագործության կանխման և դրա պատժի վերաբերյալ կոնվենցիա, 09.12.1948թ., Մարդու իրավունքների և ազատությունների միջազգային պաշտպանություն, Փաստաթղթերի ժողովածու, Մոսկվա, 1990թ.,

## ENVIRONMENTAL RIGHTS IN THE SYSTEM OF HUMAN'S AND CITIZEN'S CONSTITUTIONAL RIGHTS.

**Ziroyan Lilit Derenik**
EREA, Faculty of Law, Researcher

**Summary**

The article is dedicated to environmental rights of human and citizen. This right is considered to be one of the basic rights of human and citizen, because it impacts the basis of livelihoods and through which is being ensured favorable environmental, economic and aesthetic conditions for human's life.

In regard to the other countries' constitutions and also 2005 Armenia's constitution: it's seemed degradation from the point of view of environmental rights in acting constitution, so it is proposed to fill new article in the Armenian constitution with the following content:,,Everyone has a right to live in the environment which contribute to his or her well-being and health, obliged personally and with others save and improve environment. Officials are responsible for unfounded hiding environmental information or for refusing to provide that information".

*Keywords:* environmental interests, supportive environment, environmental disaster, environmental law

## ЭКОЛОГИЧЕСКИЕ ПРАВА ЧЕЛОВЕКА И ГРАЖДАНИНА В СИСТЕМЕ КОНСТИТУЦИОННОГО ПРАВА

**Зироян Лилит Дерениковна**
ЕРОА, Юридический факультет соискатель

**Резюме**

Статья посвящена природазащитным правам человека и гражданина. Это право считается одним из основных прав человека, так-как он относится к жизненно- важным основам человеческой жизни и ко-

торая предусматривает благоприятные экологические, экономические и эстетические условия. Касаясь конституций различных стран в 2005 году в Конституции РА наблюдается определенное отстование с точки зрения экологических прав, предлагается, чтобы добавить новую статью в Конституцию в следующей редакции:

"Каждый человек имеет право жить в условиях, благоприятных для их здоровья и благополучия, обязан лично или совместно с другими лицами охранять и улучшать окружающюю среду. Должностные лица несут ответственность за сокрытие или отказа в предоставлении экологической информации,которое является необоснованным".

*Ключевые слова:* экологические интересы, поддерживающая среда,экологическая катастрофа, экологическое право.

# ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

***Թաղևոսյան Աիդա Արսենի***
*ԵԿՏԱ, Իրավագիտության ամբիոնի դասախոս*

Մարդու իրավունքների երաշխավորումը, ապահովումը և պաշտպանությունը ժողովրդավարական, իրավական պետության, քաղաքացիական հասարակության իրավաքաղաքական ու բարոյական առաջնահերթություններից է՝ սահմանադրական զարգացումների և պետական ու հանրային ինստիտուտների գործունեության առանցքը[1]:

Անձի իրավունքների և ազատությունների ապահովմանն ու երաշխավորմանն ուղղված արդյունավետ իրավական կառուցակարգերի սահմանումը քրեադատավարական օրենսդրության առանցքային նպատակներից է: Հիշյալ նպատակի կենսագործումը մեծապես պայմանավորված է վարույթի համապատասխան մասնակիցների՝ քրեական գործով շահագրգիռ չլինելու, վերջիններիս կողմից իրենց դատավարական լիազորությունները, իրավունքներն ու պարտականությունները պատշաճ կատարելու հանգամանքներով:

Սույն հոդվածի շրջանակներում կհետազոտվեն վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների ինստիտուտի պատմական արմատները, կուսումնասիրվեն իրավաբանական գրականության շրջանակներում հետազոտության առարկա դարձած ինստիտուտի հասկացության վերաբերյալ առկա մոտեցումները, կներկայացվեն քննարկվող ինստիտուտի հիմնական առանձնահատկություններն ու տեսագործնական նշանակությունը:

Քրեական վարույթի իրականացման արդյունավետ կարգի ապահովման երաշխավորմանն ուղղված հիմնարար ինստիտուտներից մեկը վարույթի մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների ինստիտուտն է:

---

1 Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ Նախագահի 29.10.2012թ. ՆԿ-159-Ն կարգադրությունը (ՀՀՊՏ 2012.11.07/54(928)):

Հետազոտության առարկա դարձած ինստիտուտի պատմական արմատները խարսխված են հռոմեական իրավունքի հայտնի սկզբունքի՝ ոչ ոք չի կարող իր գործով դատավոր լինել (nemo judex in causa sua) վրա: Հիշյալ սկզբունքը, փաստորեն, հիմք է հանդիսացել վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների և բացարկի ինստիտուտի ծագման, զարգացման և ձևավորման համար: Սկզբնապես կիրառվելով միայն դատավորի կարգավիճակ ունեցող սուբյեկտների նկատմամբ՝ այն բացառում էր վեճի լուծումն այն դատավորի կողմից, ով որևէ կերպ շահագրգռված էր տվյալ վեճի ելքով, և դատավորից պահանջում էր լինել անաչառ ու առաջնորդվել միայն օրենքով: Համանման իրավակարգավորումներ նախատեսվում էին նաև Համուրապպիի, Մանուի օրենքներով, Հուստինիանոսի օրենսգրքով[2]:

Հայ իրավական մտքին ևս հայտնի է դատավարությանը մասնակցությունը բացառող հանգամանքների ինստիտուտը: Մխիթար Գոշի «Հայոց Դատաստանագրքի» «Ժ» գլուխն անդրադառնում է դատավորի անկաշառ, անաչառ, բարիով առաջնորդվելով դատելու պարտականությանը՝ միաժամանակ նշելով, որ կողմնապահություն դրսևորած դատավորը պետք է զրկվի պաշտոնից[3]:

Ժամանակակից դատավարագիտության շրջանականերում ուսումնասիրության առարկա հանդիսացող ինտիտուտն առավել հայտնի է ***«բացարկի հիմքեր»[4]*** և ***«վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ»[5]*** անվանումներով:

---

2 Արշակյան Ա.Պ. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), բուհական դասագիրք, Երևան, «Նաիրի» 2003, էջ 30, 37, История государства и права зарубежных стран: Учебник для вузов: В 2ч. Ч.1 /Под общ. ред. Жидкова О. А., Крашенинниковой Н. А., -2-е изд., стер. -М.: Норма, 2004, с 93,241. Vermeule A. Contra Nemo Iudex in Sua Causa:The Limits of Impartiality//The Yale Law Journal, 122:384, 2012, p.386:

3 Բաստեմեանց Վ.ծ.վ. Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, էջ 25-28:

4 Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (4-րդ հրատ., լրացումներով և փոփոխություններով)/Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան և այլք., Եր.:Երևանի համալս. հրատ., 2006, էջ 263: Горский М.В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование)/М., Юрлитинформ, 2011, с. 14, Мамедова Х. А. Институт отводов в советском уголовном судопроизводстве. дис. …канд.юрид. наук: М., 1984, с.15-16, Вандышев В.В. Общая и особенная

Ինչպես նշում է Ս.Ս. Ամպենովը, քրեական դատավարությանը անձանց՝ հնարավոր կամ իրական կողմնակալության և կամ շահագրգռվածության ուժով մասնակցությունը բացառող հանգամանքները փաստական հանգամանքներ են, որոնք իրավաբանական բնույթ են ստանում պաշտոնատար անձի կողմից դրանց առկայության փաստը հաստատող որոշման կայացմամբ[6]:

Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները կարելի է հասկանալ հետևյալ իմաստներով.

1. *Որպես իրավաբանական փաստ:* Իրավահարաբերությունները ծագում, փոփոխվում և դադարում են իրավունքի նորմերի իրացման արդյունքում[7]: Իրավունքի նորմերը գործողության մեջ դնող միջոց են իրավաբանական փաստերը, որոնց ներքո ճանաչվում են կյանքի կոնկրետ հանգամանքները, որոնց հետ իրավունքի նորմը կապում է այս կամ այն իրավական հետևանքների առաջացումը[8]: Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները, ըստ էության, իրավաբանական փաստերն են, որոնց առկայության պայմաններում քրեադատավարական հարաբերությունների համապատասխան սուբյեկտները հեռացվում են վարույթից[9]: Պետք է փաստել, որ յուրաքանչյուր հանգամանք չէ, որ կարող է ճանաչվել իբրև վարույթին տվյալ մասնակցի մասնակցությունը բացառող: Որպես այդպիսին հանդես են

---

части. Уголовный процесс. Учебник для юридических вузов и факультетов, Волтерс Клувер, 2010, с. 89:

5 Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук, Тюмень, 2010, с.14: Таран А.С. Обстоятельства, исключающие участие адвоката в уголовном процессе: монография, М.: Юрлитинформ, 2013, с.3, 6:

6 Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук, Тюмень, 2010, с.15:

7 Горюнова Е.Н., Курцев Н.П. Правовая природа юридических фактов //Юрист, 2003, № 10, с. 16; Марданов Д.А. Юридические факты в механизме правового регулирования гражданских исполнительных правоотношений //Журнал российского права. 2006, № 10, с. 73:

8 Алексеев С.С. Теория государства и права: учебник для вуза, М.: Норма,2001, с. 364, Бабаев В.К. Общая теория права: курс лекций. Н. Новгород, 1993, с. 426; Кашанина Т.В., Кашанин А.В. Основы российского права: учебник. М.: Норма, 2000, с. 92:

9 Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук, Тюмень, 2010, с.15:

գալիս այն հանգամանքները, որոնք ողջամիտ կասկածի տակ են դնում դատավարության համապատասխան մասնակիցների անկողմնակալությունը, մասնագիտական պատշաճ պատրաստվածությունն ու իմտությունը, ինչպես նաև անհամատեղելի են համարում վարույթին կրկնակի դատավարական կարգավիճակով հանդես գալու հնարավորությունը: Միաժամանակ, ***տվյալ հանգամանքները վարույթին մասնակցությունը բացառող են որակվում միայն քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված լինելու դեպքում:*** Քրեական վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներն ամրագրված են ՀՀ քր. դատ. օր.-ի 11-րդ «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ գլխում:

2. *Որպես քրեադատավարական ինստիտուտ:* Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներն ունեն իրավունքի ինստիտուտին բնորոշ բոլոր հատկանիշները, մասնավորապես՝ դրանք իրավանորմերի համակցություն են, որոնք սահմանում են դատավարության սուբյեկտին վարույթից հեռացնելու հիմքերը և դատավարական կարգը, հետապնդում են մեկ միասնական նպատակ՝ ապահովել գործի օբեկտիվ քննությունն ու բնականոն ընթացքը[[10]]: Ինչպես յուրաքանչյուր իրավական ինստիտուտի, այնպես էլ քրեական վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների իրավական հիմքը կազմում են իրավունքի նորմերը: Պետության և իրավունքի տեսության մեջ իրավունքի նորմերը դասակարգվում են տարբեր հիմքերով: Դրանց հետազոտությունը հնարավորություն է տալիս առավելագույնս հասկանալ տվյալ իրավական ինստիտուտի էությունը: Իրավունքի տեսության մեջ իրավանորմերի դասակարգման առաջնային հատկանիշը իրավունքի նորմի կատարած ֆունկցիան է[[11]]: Ըստ տվյալ հատկա-

---

[10] Якупов Р.Х. Правоприменение в уголовном процессе России: монография. М.: Московская высшая школа милиции МВД РФ, 1993, с. 83, Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дисс.... канд.юрид. наук,Тюмень, 2010, с.24:

[11] Горский М.В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование)/М., Юрлитинформ, 2011, с. 15:

նիշի՝ իրավանորմերը բաժանվում են երկու խմբի՝ իրավակարգավորող և իրավապաշտպան[12]:

Իրավակարգավորող նորմերն այն իրավանորմերն են, որոնք կոչված են կարգավորելու իրավահարաբերությունները՝ սահմանելով դրանց մասնակիցների իրավունքները և պարտականությունները, իսկ իրավապաշտպան նորմերը նախատեսում են իրավախախտումների համար պետական հարկադրանքի միջոցները[13]:

ՀՀ քր. դատ. օր.-ի «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» վերտառությամբ 11-րդ գլխում ամրագրված իրավանորմերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերջիններս իրենցից ներկայացնում են *իրավակարգավորող նորմեր*, քանի որ ամրագրում են վարույթի մասնակիցների՝ համապատասխան հանգամանքների առկայության դեպքում բացարկ հայտնելու, վարույթին մասնակցելուց հեռացնելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև համապատասխան դեպքերում ինքնաբացարկ, վարույթին մասնակցելուց հեռացնելու մասին միջնորդություն ներկայացնելու պարտականությունը (հոդված 88, 2-րդ մաս): Ինչ վերաբերում է ***իրավապաշտպան նորմերին, ապա «վարույթից հեռացնելը» որպես դատավարական պատասխանատվության միջոց*** **նախատեսելու պարագայում, տվյալ ինստիտուտն ամրագրող նորմերը կկրեն իրավապաշտպան բնույթ[14]:**

Ըստ իրավունքի նորմում պարունակվող վարքագծի կանոնների բնույթի՝ առանձնանցվում են պարտավորեցնող, արգելող և լիազորող նորմեր[15]: ՀՀ քր. դատ. օր.-ի 11-րդ գլուխն ընդգրկում է վերոնշյալ

---

12 Мелехин А. В. Теория государства и права: учеб.,М.:Маркет ДС,2007, с. 266, Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права: учебник, М.:Юристъ, 2004, с. 138, Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հրատ., լրացումներով, ուղղումներով) / թարգմ. Խ. Հարությունյան/, Երևան, «Գոշ» հրատ, 1997, էջ 278:

13 Мелехин А. В. Теория государства и права: учеб., М.: Маркет ДС, 2007, с. 266:

14 Վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական պատասխանատվության միջոց, դիտարկելու հիմնախնդրի մասին տե՛ս Ղամբարյան Ա., Թադևոսյան Ա., Դատախազին և փաստաբանին վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական պատասխանատվության միջոց// «Օրինականություն», Երևան, «Գլխավոր դատախազություն» հրատ., 2014, №81, էջ 17-28:

15 Мелехин А. В. Теория государства и права: учеб.,М.:Маркет ДС,2007, с. 266, Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права: учебник, М.:Юристъ, 2004,

տեսակի դատավարական նորմեր, այն է՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 88-րդ հոդվածի 2-րդ մասը, 90-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերը բովանդակում են *պարտավորեցնող իրավանորմեր*, քանի որ վարույթի համապատասխան մասնակիցների վրա դնում են դատավարական պարտականություններ: Օրինակ՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 90-րդ հոդվածի 1-ին մասը դատավորի վրա դնում է պարտականություն ինքնաբացարկ հայտնել, եթե նա տեղյակ է այնպիսի փաստերի կամ հանգամանքների մասին, որոնք կարող են ողջամիտ կասկած հարուցել տվյալ գործով նրա անկողմնակալության մեջ, իսկ 6-րդ մասը ինքնաբացարկ հայտնած դատավորին պարտավորեցնում է կողմերին բացահայտել ինքնաբացարկի հիմքերը: ՀՀ քր. դատ. օր.-ի 88-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է *լիազորող նորմ*, այն է՝ դատավարության մասնակցի իրավունքը՝ քրեական գործով վարույթի ցանկացած պահի բացարկ հայտնել դատախազին, քննիչին, հետաքննության մարմնի աշխատակցին: ՀՀ քր. դատ. օր.-ի «Անձանց բացարկելը և նրանց ազատելը քրեական դատավարությանը մասնակցելուց» գլխի հետազոտությունից պարզ է դառնում, որ այն առավելապես բովանդակում է *արգելող* իրավանորմեր, մասնավորապես՝ ՀՀ քր. դատ. օր.-ի 91-97-րդ հոդվածներն ամրագրում են հանգամանքների շրջանակ, որոնց առկայության դեպքում ուղղակիորեն սահմանվում է վարույթին դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի, պաշտպանի, ընթերակայի, դատական նիստի քարտուղարի, թարգմանչի, մասնագետի, փորձագետի մասնակցության արգելք:

Պետք է արձանագրել, որ հետազոտվող ինստիտուտը պատշաճ ուսումնասիրության չի արժանացել ո՛չ հայրենական, և ո՛չ էլ արտասահմանյան երկրների իրավաբան-գիտնականների կողմից, որպիսի պայմաններում չի մշակվել «վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ» հասկացության միասնական և ամբողջական սահմանում, չեն բացահայտվել տվյալ ինստիտուտի առանձնահատկությունները: Ա.Ս. Տարանը քրեական վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները սահմանում է որպես քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված գործոններ, որոնց առկայությունն

---

c. 138, Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հրատ., լրացումներով, ուղղումներով)/թարգմ. Խ. Հարությունյան/, «Գոշէ հրատ, 1997, էջ 278-279:

անհնարին է դարձնում քրեական դատավարության որոշակի սուբյեկտների կողմից իրենց իրավունքների իրականացումը, և որոնց կապակցությամբ վերջիններս զրկվում են իրենց դատավարական կարգավիճակից[16]:

Ս.Ս. Ամպենովի բնորոշմամբ քրեական դատավարությանը մասնակցությունը բացառող հանգամանքների ներքո պետք է հասկանալ փաստական և իրավաբանական հանգամանքներ, որոնք հիմք են անձի հնարավոր կամ իրական կողմնակալության և կամ կանխակալության ուժով քրեական դատավարության մասնակցի դատավարական գործունակության կորստի համար[17]:

Ընդգծենք, որ և՛ դատավարագիտության մեջ, և՛ գործնականում տվյալ ինստիտուտի կիրառելիությունը սահմանափակվում է միայն վարույթին արդեն մասնակից դարձած և դատավարական կարգավիճակ ունեցող սուբյեկտների նկատմամբ[18]: ՀՀ քր. դատ. օր-ի 88-րդ հոդվածի 1-ին մասը ևս սահմանափակում է վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների կիրառման հնարավորությունը միայն դատավարության մասնակիցների նկատմամբ՝ նշելով, որ բացարկները, ինքնաբացարկները և գործով վարույթից հեռացնելու մասին միջնորդությունները հայտարարվում են քրեական դատավարությանը համապատասխան անձանց մասնակցությունը բացառող հանգամանքների հիման վրա: Մինչդեռ, գործնականում հնարավոր են իրավիճակներ, երբ մինչև անձին վարույթին ներգրավելը, հայտնի է օրենսդրությամբ նախատեսված որոշակի հանգամանք, որը հետագայում վերջինիս բացարկ հայտնելու իրական հիմք կարող է հանդիսանալ: Տվյալ պարագայում գործի քննության արդյունավետությունն ապահովելու տեսանկյունից նախընտրելի է ի սկզբանե տվյալ անձին չներգրավել վարույթին, այսինքն՝ մասնակցությունը բացառող հանգամանքների ինստիտուտը կիրառել ոչ միայն վարույթին արդեն իսկ ներգրավված մասնակիցների նկատմամբ, այլև տվյալ անձանց վա-

---

16 Таран А.С. Обстоятельства, исключающие участие адвоката в уголовном процессе: монография, М.: Юрлитинформ, 2013, с. 6:

17 Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук,Тюмень, 2010, с. 23:

18 Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс: учебник, 4-е изд., перераб. и доп, М.:КНОРУС, 2008, с. 162, Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук,Тюмень, 2010, с. 27:

րույթին ներգրավելու փուլում: Օրինակ՝ մեղադրյալը, օգտվելով ՀՀ քր. դատ. օր.-ի 247-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված իրավունքից, միջնորդում է, որ իր մատնանշած անձը նշանակվի փորձագետ՝ չիմանալով, որ վերջինս տուժողի հորեղբայրն է: Հիշյալ հանգամանքը հայտնի է վարույթն իրականացնող մարմնին: Տվյալ պարագայում, ըստ էության, առկա է ՀՀ քր. դատ. օր.-ի 97-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված փորձագետի վարույթին մասնակցությունը բացառող հանգամանք, սակայն գործող իրավակարգավորման պայմաններում տվյալ անձը պետք է վարույթին ներգրավվի իբրև փորձագետ, վերջինիս հիշյալ հիմքով բացարկ հայտնվի, կամ փորձագետը ներկայացնի ինքնաբացարկի միջնորդություն: Ներկայացված կարծիքին հակադարձողները կարող են պնդել, որ տվյալ հանգամանքներում փորձագետը, ըստ էության, չի բավարարում ՀՀ քր. դատ. օր.-ի 85-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ քրեական գործով չշահագրգռված անձ լինելու նախապայմանը, սակայն, կարծում ենք, որ ազգակցական կապերի առկայությունը դեռևս չի հիմնավորում քրեական գործով շահագրգռված լինելու հանգամանքը, և պատահական չէ, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 11-րդ գլխում ազգակցական (արյունակցական) կապերը և հարաբերությունները դիտարկվում են իբրև վարույթին մասնակցությունը բացառող առանձին հանգամանք, և ոչ թե գործով շահագրգռվածություն կամ կանխակալություն ունենալու համատեքստում: Այսպիսով՝ նման ավելորդ ընթացակարգերից խուսափելու համար կարծում ենք, որ անհրաժեշտ է վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների կիրառելիությունը չսահմանափակել միայն վարույթին ներգրավված անձանց նկատմամբ, ուստի առաջարկում ենք ***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 6-րդ մասով. «Սույն գլխով նախատեսված վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները հիմք են հանդիսանում համապատասխան անձանց վարույթին չներգրավելու համար»:***

Ինչպես արդեն նշվել է, իրավաբանական գրականության մեջ առկա սահմանումները թերի են արտացոլում վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների առանձնահատկությունները, մասնավորապես՝

1. քրեադատավարական ինքնուրույն ինստիտուտ լինելը,

2. հնարավոր և արդյունավետ կիրառելիությունը ոչ միայն քրեադատավարական կարգավիճակ ունեցող անձանց, այլև վարույթին վերջիններիս ներգրավման փուլի նկատմամբ,

3. քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված փաստական հանգամանքներ լինելը:

Ելնելով վերոշարադրյալից՝ առաջարկում ենք «Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների» հասկացության հետևյալ սահմանումը. ***«Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված փաստական հանգամանքներ են, որոնք սահմանում են վարույթին համապատասխան մասնակիցների ներգրավման անհնարինության, իսկ ներգրավված լինելու պայմաններում վերջիններիս բացարկի, ինքնաբացարկի և վարույթին մասնակցելուց ազատելու հիմքերը:***

Անդրադառնալով **«բացարկի հիմքեր»** և «վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ» անվանումներին՝ կարծում ենք, որ ***«վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ»*** անվանումն առավել դիպուկ է բնորոշում հիշյալ ինստիտուտի առանձնահատկությունները, քանի որ

1. բացարկման սուբյեկտներ են դատավորը, դատախազը, քննիչը, քննչական բաժնի պետը և հետաքննության մարմնի պետը[19], հետաքննության մարմնի աշխատակիցը, փորձագետը, մասնագետը, թարգմանիչը, ընթերական և դատական նիստի քարտուղարը, մինչդեռ պաշտպանը, տուժողի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի ներկայացուցիչը, տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը ոչ թե բացարկվում են, այլ վարույթից հեռացվում, հետևաբար, «բացարկման հիմքեր» եզրույթի կիրառումը թեև գիտական մակարդակում արտացոլում է տվյալ ինստիտուտի բուն բովանդակությունը, բայց և այնպես գործող օրենսդրական կարգավորման տեսանկյունից

[19] Քննչական բաժնի պետի և հետաքննության մարմնի պետի բացարկման հիմնախնդիրների մասին տե՛ս Թադևոսյան Ա., Քրեական վարույթի հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում// «Օրինականություն», Երևան, «Աստղիկ Գրատուն» հրատ., 2016, №91, էջ 41-48:

վարույթից հեռացման ենթակա սուբյեկտներին չի ընդգրկում իր բովանդակության շրջանակներում,

2. բացարկել վարույթի մասնակցին, նշանակում է բացարկման հիմքի առկայությամբ պայմանավորված՝ բացառել վարույթին արդեն իսկ ներգրաված և դատավարական որոշակի կարգավիճակ ունեցող անձի հետագա մասնակցությունը: Այսինքն, բացարկի ինստիտուտի կիրառումը հնարավոր է միայն վարույթի մասնակցի կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ, մինչդեռ արդեն իսկ նշել ենք, որ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներն իրենց իրավական բնույթով կիրառելի են նաև համապատասխան մասնակիցներին վարույթին ներգրավվելու փուլում: Նման իրավակարգավորման պայմաններում «վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքներ» եզրույթի կիրառումն ավելի նախընտրելի է, քան «բացարկի հիմքեր» եզրույթը:

Անդրադառնալով հետազոտվող ինստիտուտի նշանակության հիմնախնդրին՝ նշենք, որ վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները կոչված են երաշխավորելու՝

- վարույթի հանրային մասնակիցների անաչառ մասնակցությամբ պայմանավորված օրինական, հիմնավորված և արդար դատավարական ակտերի կայացումը, քրեական գործի օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության ապահովումը՝ բացառելով ազգակցական (արյունակցական) կապերի և հարաբերությունների, ծառայողական, անձնական և այլ կախվածության հարաբերությունների, սուբյեկտիվ-միջանձնային վերաբերմունքի ազդեցությունը քրեական գործի ընթացքի և ելքի վրա.
- վարույթի մասնավոր մասնակիցների կողմից իրենց վրա դրված դատավարական պարտականությունների պատշաճ կատարումը ներկայացվողի շահերը ներկայացնելիս և համապատասխան իրավաբանական օգնություն տրամադրելիս.
- մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և վարույթի ելքով չշահագրգռված վարույթին օժանդակող համապատասխան անձաց մասնակցության ապահովումը:

**Այսպիսով՝ ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները՝ առաջարկում ենք.**

1. ***ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 6-րդ մասով. «Սույն գլխով նախատեսված վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները հիմք են համապատասխան անձանց վարույթին չներգրավելու համար»:***

2. «Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքների» հասկացության հետևյալ սահմանումը. ***«Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքները քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված փաստական հանգամանքներ են, որոնք սահմանում են վարույթին համապատասխան մասնակիցների ներգրավման անհնարինության, իսկ ներգրավված լինելու պայմաններում վերջիններիս բացարկի, ինքնաբացարկի, վարույթին մասնակցելուց ազատելու հիմքեր»:***

*Առանցքային բառեր:* Վարույթին մասնակցությունը բացառող հանգամանքեր, բացարկի հիմքեր, բացարկ, ինքնաբացարկ, վարույթից հեռացնել, քրեական դատավարություն:

## Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ


1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՕ-248, ՀՀՊՏ 1998.09.21/22(55), 01.07.1998թ.:
2. Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ Նախագահի 29.10.2012թ. ՆԿ-159-Ն կարգադրությունը (ՀՀՊՏ 2012.11.07/54(928))
3. Արշակյան Ա.Պ. Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), բուհական դասագիրք, Երևան, «Նաիրի» 2003- 542 էջ:
4. Բաստեմեանց Վ.ծ.վ. Մխիթար Գոշ, «Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, -214 էջ:
5. Թադևոսյան Ա., Քրեական վարույթի հանրային մասնակիցների մասնակցությունը բացառող հանգամանքների քրեադատավարական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում// «Օրինականություն», Երևան, «Աստղիկ Գրատուն» հրատ., 2016, N91, էջ 41-48:

6. Խրոպանյուկ Վ.Ն. Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հ-րատ., լրացումներով, ուղղումներով)/թարգմ. Խ. Հարությունյան/, Երևան, «Գոշ» հրատ, 1997, - 433 էջ:
7. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս.(4-րդ հրատ., լրացումներով և փոփոխություննե-րով) /Ս. Դիլբանդյան, Ա. Հարությունյան, Գ. Ղազինյան և այլք., Եր.:Երևանի համալս. հրատ., 2006, - 416 էջ:
8. Ղամբարյան Ա., Թադևոսյան Ա., Դատախազին և փաստաբանին վարույթից հեռացնելը՝ որպես դատավարական պատասխանատ-վության միջոց //«Օրինականություն», Երևան, «Գլխավոր դատա-խազություն» հրատ., 2014, N 81, էջ 17-28:
9. Vermeule A. Contra Nemo Iudex in Sua Causa:The Limits of Impartiality//The Yale Law Journal, 122:384, 2012 p. 386-420:
10. Алексеев С.С. Теория государства и права: учебник для вуза, М.: Норма, 2001, -616 с.:
11. Ампенов С.С. Обстоятельства, исключающие участие в уголовном судопроизводстве: дис.... канд. юрид. наук, Тюмень, 2010,- 190 с.:
12. Бабаев В.К. Общая теория права: курс лекций. Н. Новгород, 1993, -544 с.:
13. Вандышев В.В. Общая и особенная части. Уголовный процесс. Учебник для юридических вузов и факультетов, Волтерс Клувер, 2010, - 470 с.
14. Горский М.В. Механизм правового регулирования отводов участников уголовного судопроизводства (процессуальное и криминалистическое исследование)/М., Юрлитинформ, 2011, - 240с.:
15. Горюнова Е.Н., Курцев Н.П. Правовая природа юридических фактов //Юрист, 2003, № 10, с. 16-23:
16. История государства и права зарубежных стран: Учебник для вузов: В 2 ч. Ч. 1 /Под общ. ред.О. А. Жидкова, Н. А. Крашенинниковой, -2-е изд., стер., М.:Норма, 2004, - 624 с.:
17. Кашанина Т.В., Кашанин А.В. Основы российского права: учебник. М.: Норма, 2000, -784с.:
18. Мамедова Х. А. Институт отводов в советском уголовном судопроизводстве. дис. ...канд.юрид. наук: М., 1984, -192 с.:

19. Марданов Д.А. Юридические факты в механизме правового регулирования гражданских исполнительных правоотношений //Журнал российского права. 2006, № 10, с. 73-75:
20. Матузов Н.И., Малько А.В. Теория государства и права: учебник, М.: Юристъ, 2004, - 245с.:
21. Мелехин А. В. Теория государства и права: учеб., М.: Маркет ДС, 2007, - 640 с.:
22. Смирнов А.В., Калиновский К.Б. Уголовный процесс: учебник, 4-е изд., перераб. и доп, М.:КНОРУС, 2008, - 704 с.:
23. Таран А.С. Обстоятельства, исключающие участие адвоката в уголовном процессе: монография, М.: Юрлитинформ, 2013,- 192 с.:
24. Якупов Р.Х. Правоприменение в уголовном процессе России: монография. М.: Московская высшая школа милиции МВД РФ, 1993, -192 с.:

## THE CONCEPT AND THE MEANING OF CIRCUMSTANCES EXCLUDING THE PARTICIPATION IN CRIMINAL PROCEEDINGS

**Tadevosyan Aida Arsen**
The lecturer of the chair of Jurisprudence, EREA

### Summary

The scientific article is devoted to research of circumstances excluding the participation in criminal proceedings. Within the framework of the article the author examines the historical roots of studying circumstances, reviews existing approaches concerning the concept that became the subject of study within the legal literature, presents the main characteristics and practical significance of this institute. In the conclusion the author suggests the definition of circumstances excluding the participation in criminal proceedings, and also offers amend 88th article of the Criminal Procedure Code of the Republic of Armenia.

*Keywords:* circumstances excluding the participation in criminal proceedings, the grounds of challenge, challenge, self challenge, exclusion from proceedings, criminal procedure.

# ПОНЯТИЯ И СМЫСЛ ОБСТОЯТЕЛЬСТВ, ИСКЛЮЧАЮЩИХ УЧАСТИЕ В УГОЛОВНОМ ПРОИЗВОДСТВЕ

**Тадевосян Аида Арсеновна**
Преподаватель кафедры Правоведения, ЕРОА

**Резюме**

Научная статья посвящена исследованию обстоятельств, исключающих участие в уголовном производстве. В рамках данной статьи автор рассматривает исторические корни изучаемых обстоятельств, представляет основные характеристики и практическое значение данного института. В статье также представлены научные подходы известных ученых. В заключение автор предлагает авторское определение обстоятельств, исключающих участие в уголовном процессе, а также предлагает изменить 88-ю статью Уголовно-процессуального кодекса Республики Армения.

*Ключевые слова:* обстоятельства, исключающие участие в уголовном производстве, отвод, самоотводе, исключение от уголовного производства, уголовный процесс.

# ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

***Արամ Ժորիկի Այվազյան***
*Հայ - ռուսական / Սլավոնական / համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ*

Իր բնույթով լինելով լատենտային և դրսևորումների մեջ բազմաբնույթ՝ պետական ծառայության մեջ և տնտեսությունում կոռուպցիան նման է բազմաթիվ մետաստազներով տարածված քաղցկեղի, որի չկանխարգելելը, ի հայտ չբերելը և վճռական միջոցներ չձեռնարկելը կարող է լուրջ վտանգի առջև կանգնեցնել հասարակության ողջ օրգանիզմը:

Սակայն պայքարի ակտիվացման անվան տակ երբեք էլ չի կարելի հասկանալ, ասենք, անհիմն մեղադրական թեքումների դրսևորումները: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել մի հանգամանք, որն ուղղակիորեն արտահայտված է նաև միջազգային փորձագետների եզրակացություններում, ըստ որի՝ «Կոռումպացված մարդիկ երբեք չեն առանձնացել երևակայության պակասով, և նրանք միշտ կարող են ճանապարհ գտնել արգելքները շրջանցելու համար»:

Կոռուպցիոն հանցագործությունների առանձնահատկություններից, մասնավորապես ակնհայտ քողարկվածությունից, մեղքի ապացուցման դժվարություններից ելնելով՝ խիստ անհրաժեշտ է հետամուտ լինել անհետաձգելի քննչական գործողությունների (զննումների, առգրավման, խուզարկության, հարցաքննությունների և այլն) կատարման օպերատիվության, հանկարծակիության, միաժամանակյա իրականացման, ինչպես նաև ընդհանրապես գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության սկզբունքին: Նշված կատեգորիայի գործերով ցանկացած հապաղում կարող է կործանարար լինել օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու առումով, քանզի հանցավոր շրջանների կողմից մեծ ջանքեր չի պահանջվում, համապատասխան փաստաթղթային հիմքեր ստեղծելով, դրանք կեղծելով կամ վերացնելով, քողարկել փաստացի կատարվածը:

Գոյություն ունեն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, որոնք հնարավորություն չեն տալիս նախաքննական մարմնին բացահայտելու նման բնույթի հանցագործությունները, օրինակ.

1. Կոռուպցիոն հանցագործությունների լատենտայնությունը:

2. Այդ բնույթի հանցագործությունների վերաբերյալ ոչ բավարար տեսական գիտելիքները:

Այս ոլորտի մասնագետների համար հատուկ մասնագիտացած ուսուցման բացակայությունը հանգեցնում է կոռուպցիայի ու փողերի լվացման բնագավառում իրազեկվածության ցածր մակարդակին, ինչպես նաև այս հանցագործությունների դեմ պայքարի անարդյունավետությանը:

3. Անհրաժեշտ հարցումներ են արվում արտերկրի համապատասխան մարմիններին՝ դրսից, մասնավորապես՝ օֆշորային գոտիներից փոխանցված գումարների պատկանելությունը, ձեռքբերման, ծագման աղբյուրները պարզելու համար: Սակայն, որպես կանոն, դրանք մնում են անպատասխան կամ էլ տևական ձգձգումներից հետո պատասխաններն ուղարկվում են ոչ պատշաճ՝ թերի, ինչը հնարավորություն չի տալիս եզրահանգել փոխանցումների հանցավոր բնույթի վերաբերյալ և վերջնական իրավական գնահատական տալ անձի գործողություններին:

4. Առավել դժվարություններ են ծագում նյութերի նախապատրաստման ընթացքում, երբ քրեական գործի հարուցման համար հիմքերը դեռևս բավարար չեն, քանզի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ արգելվում է հաշվեհամարի տիրոջ կամ գործարքների մասին տեղեկություն տրամադրել առանց դատարանի որոշման, որը կարող է վերցվել միայն քրեական գործի հարուցման, կասկածյալի կարգավիճակի և առաջադրված մեղադրանքի առկայության պայմաններում: Նույն օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ բանկերը պարտավոր են իրենց հաճախորդներին իրազեկել նրանց հաշիվների մասին իրավական հարցումների վերաբերյալ:

Թերևս ճիշտ կլինի «Բանկային գաղտնիքի մասին» օրենքում կատարել լրացում, փոփոխում, որը հնարավորություն կտա իրավապահ մարմիններին ձեռք բերել հաշվեհամարների տերերի և գործարքների մասին տեղեկատվություն նաև մինչ հաշվեհամարի տիրոջը մեղադրանք առաջադրելը, իսկ երկրորդ պարագայում՝ բանկերին ազատել

իրավական հարցումների մասին իրենց հաճախորդներին իրազեկելու պարտավորությունից, քանզի կոռուպցիայի և փողերի լվացման գործերով հաճախորդների շահերը չպետք է գերադասվեն արդարադատության շահերից:

5. Հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցների հայտնաբերման համար խուզարկություն կատարելիս դարձյալ պահանջվում է դատարանի որոշում: Բացառություններ չեն նախատեսվում նույնիսկ անհապաղ դեպքերում, երբ խուզարկության հապաղման հետևանքով հանցավոր ճանապարհով ձեռք բերված միջոցները կարող են թաքցվել, իսկ հանցագործը կարող է փախուստի դիմել: Երբեմն կարող է արդյունք չտալ նաև դատարանի արագացված որոշումը:

Հնարավոր լուծում կարող է լինել նման անհետաձգելի դեպքերում խուզարկության իրականացումից հետո դատական հաստատումը (ի դեպ, որի մասին ժամանակին առաջարկել է նաև ԳՐԵԿՈ-ի խումբը):

Ի դեպ, կոռուպցիայի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիան սահմանում է, որ անհրաժեշտության դեպքում մասնակից պետությունները կարող են կիրառել այնպիսի միջոցներ, որոնք իրավասու մարմիններին կոռուպցիայի դեմ պայքարում հնարավորություն կտան կիրառել օպերատիվ-հետախուզական հատուկ մեթոդներ:

6. Ապացույցների հավաքման գործընթացում գոյություն ունեցող այդ և այլ խոչընդոտներ հնարավորություն են տալիս հանցագործներին թաքցնել հանցավոր եկամուտները և խուսափել պատասխանատվությունից, ինչը հանգեցնում է կոռուպցիայի դեմ պայքարի ապարդյուն ջանքերի ու նաև անարդյունավետ քննության[1]:

Կոռուպցիայի դեմ պայքարի կազմակերպչական միջոցառումների շրջանակներում քրեադատավարական ընթացակարգերի կոնտեքստում պետք է, մեր կարծիքով, ելնել հետևյալ հաջորդական խնդիրների լուծման ծրագրերից.

Առաջինը հանցագործությունների և իրավախախտումների վերաբերյալ դիմումների և հաղորդումների պատշաճ քննարկումների պահանջն է: Վերլուծություններից երևում է, որ հաճախ դրանց առթիվ

---

[1] ՀՀ Գլխավոր Դատախազություն. «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները. Կոռուպցիայի սահմանման, դրսևորման առանձնահատկությունների և դրա դեմ պայքարի հիմնական միջոցների մասին», Ա.Միրզոյան, Երևան, «Ֆենոմեն հրատարակչություն», 2009թ. էջ 78

ուսումնասիրությունները կրում են մակերեսային ու ձևական բնույթ և, բնականաբար, պատասխաններն էլ լինում են կատարված ուսումնասիրություններին համարժեք: Այլապես անբացատրելի են մնում, երբ նույն փաստերի առթիվ օրինակ դատախազական մարմինների կողմից կրկնակի ու հսկողության վերցված դիմումների քննարկումներով արդեն իսկ հիմքեր են ի հայտ գալիս նյութեր նախապատրաստելու ու քրեական գործեր հարուցելու:

Երկրորդը նյութերի խորացված ու լրիվ նախապատրաստության պահանջն է, երբ պատշաճ ձևով դրանք չեն կատարվում և չեն հանգեցնում օբյեկտիվ եզրահանգման:

Այս խնդրի լուծման ընթացքում, երբեք չի կարելի անտեսել, որ որպես կարգ քրեական գործերի հետագա ճակատագիրը առավել հաճախ պայմանավորված է լինում նյութերի նախապատրաստման որակից:

Երրորդը հարուցված քրեական գործերով նախաքննության լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննության ապահովման քրեադատավարական օրենքի պահանջն է.

Այս բնագավառում շտապողականությունը, հանցավոր արարքներ կատարած անձանց սուբյեկտների ոչ ճիշտ սահմանազատման, արարքների քրեաիրավական որակումների, ապացույցների գնահատման և քրեաիրավական նորմերի կիրառման բնագավառի սխալները առանձին դեպքերում հետագայում դառնում են այլևս անուղղելի, որոնցից խուսափելու համար անհրաժեշտ է առանց շտապելու, սակայն արագ ու հանգամանորեն ուսումնասիրել օրենսդրական բոլոր պարզաբանումները:

Այս առնչությամբ խիստ մտահոգիչ են քննության այն բնույթի սխալները, երբ առանձին դեպքերում, որպես տնտեսվարող սուբյեկտներ և հարկային պարտավորություններից խուսափողներ դատի են տրվում ձևականորեն ձևակերպված, հաճախ զառամյալ հասակի, դրածո անձինք:

Չորրորդ, կոռուպցիայի և հատկապես կաշառակերության վերաբերյալ գործերի բազմակողմանի քննությամբ անհրաժեշտ է լուծել հանցավոր բոլոր դեպքերի, հանցագործության դրվագների և բոլոր մասնակիցների բացահայտման հարցերը:

Հաճախ քաղաքացիների հետ ամենօրյա շփումների մեջ գտնվող վարչական կոռուպցիային բնորոշ միջին և ստորադաս օղակների պաշտոնատար անձանց վերաբերյալ քրեական գործերով, հատկապես կաշառակերության ու դրամաշորթության այլ ձևերով արտահայտված փաստերի առթիվ քննություն կատարելիս որպես քննչական պլանի կարևոր բաղադրիչ առանձնահատուկ քննության առարկա չի դարձվում հիերարխիկ, այսինքն՝ աստիճանակարգային ենթակայության երևույթների կանխավարկածը, համոզված լինելով, որ տվյալ ստորին կամ միջին օղակի պաշտոնատար անձը անպայման հանցավոր ճանապարհով ստացված գումարներից պաշտոնային ենթակայությամբ վճարում է նաև իր վերադասին, հակառակ պարագայում ենթակա նման անձանց այդ կարգի մշտական աշխատանքն աներևակայելի է: Ստացված օպերատիվ տվյալների (նյութերի) վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ տեղեկատվության ստուգումը իրականացվում է զուտ իրավախախտման փաստի բացահայտման ուղղությամբ: Ըստ էության՝ անօրինականություններ թույլ տված անձի գործունեությունը ուսումնասիրվում է, որպես առանձին երևույթ: Փաստորեն տվյալ ոլորտի (որտեղ թույլ են տրվել անօրինականությունները) գործադիր իշխանության մարմինների՝ Պետական եկամուտների կոմիտե, տեսչական մարմիններ, որոնք իրականացնում են վերահսկողական գործառույթներ և վերջիններիս թողտվությամբ (հնարավոր է նաև փոխշահավետ համաձայնությամբ) են իրականացվում անօրինականությունները, որպես օբյեկտների կապեր, հովանավորներ չեն դիտարկվում: Նշված փոխհարաբերություններում էլ առաջանում են կոռուպցիոն երևույթներ: Կոռուպցիոն երևույթների առաջացման ուղիներն առավել հստակ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է համալիր մոտեցում ցուցաբերել և հատուկ ուշադրություն դարձնել կաշառք տալու, կաշառք միջնորդելու, կաշառք ստանալու շղթային, որտեղ ամեն սուբյեկտ իր դերակատարությունն ու իր շահն է հետապնդում: Կոռուպցիոն երևույթները առավել վառ են դրսևորվում պաշտոնեական լիազորությունների չարաշահում, կեղծ ձեռնարկատիրություն, կանխամտածված սնանկություն, ապօրինի հակամրցակցային գործունեություն, հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացում և մաքսանենգություն հատկանիշներով հանցագործությունների բացահայտման ժամանակ:

Հինգերորդ, պետք է մշտապես հաշվի առնել, որ քրեական գործերի քննության ընթացքում անհրաժեշտ է խիստ կարևորել կոռուպցիոն բնույթի յուրաքանչյուր գործով հանցագործությունների կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների բացահայտման ու դրանց կանխման նպատակով միջնորդություններ գրելու պրակտիկան: Ընդ որում, առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել միջնորդությունների բովանդակային որակին, շեշտված ձևով պետք է հետևել բարձրացված ու լուծումներ պահանջող հարցերի տրամաբանությանը և պետք է առավելագույն ձևով մասնակից լինել դրանց քննարկումներին: Մի հանգամանք, որը հաճախ իր նպատակային նշանակությամբ կարող է նույնիսկ տվյալ քրեական գործի լուծումից ավելի նախընտրելի ու արդյունավետ լինել:

Վեցերորդ, կոռուպցիոն բնույթի և հատկապես կաշառակերության վերաբերյալ հանցագործությունների գործերի քննության ընթացքում հանցագործության մասին հաղորդումներ և հայտարարություններ տված անձինք, երբեմն այս կամ այն պատճառաբանություններով և երբեմն արտաքին ազդեցությունների հետևանքով հրաժարվում են իրենց հայտարարություններից ու հանցանքը հաստատող իրենց ցուցմունքներից՝ իրենց հետագա վարքագծով փակուղու առաջ կանգնեցնելով քրեական հետապնդում իրականացնող մարմիններին:

Եթե նման դեպքերում քրեական գործի մյուս ապացույցները դառնում են անբավարար, ապա պետք է քննության առնել սուտ մատնություն կատարելու կամ մյուս դեպքում սուտ ցուցմունք տալու համար նման անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը: Դա նախ օրենքի պահանջն է, և ապա քաղաքացիներին զերծ կպահի անհիմն մեղադրանքներ ներկայացնելու ու անպատիժ մնալու սովորույթից և կամ իրական փաստերը նենգափոխելու վարքագծից[2]:

Կոռուպցիայի, կաշառակերության, ինչպես նաև պետական ծառայության դեմ ուղղված այլ հանցագործությունների բացահայտման և

[2] Տե՛ս ՀՀ Գլխավոր Դատախազություն. «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները. ՀՀ դատախազության մարմինների կատարած աշխատանքները կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության ոլորտումե, Ա.Աշրաֆյան, Երևան, «Ֆենոմեն հրատարակչություն», 2009թ. էջ՝ 166:

կանխարգելման նպատակով օպերատիվ-հետախուզական միջոցառումների շրջանակներում առաջարկում ենք.

1. Պետական կառավարման ոլորտում տեղ գտած կոռուպցիոն երևույթների բացահայտման համար առաջնահերթ ուշադրություն դարձնել այն մեխանիզմների վրա, որտեղ կաշառակերությունը կրում է համակարգային բնույթ (ձևավորված է հիերարխիկ համակարգ): Այդ ռիսկային ոլորտների բացահայտման ուղիներ կարող են լինել համապատասխան բնագավառներում անանուն հարցումների իրականացումը, գործակալական ցանցի հնարավորությունների օգտագործումը, պետական կառավարման տարբեր ոլորտների պաշտոնատար անձանց օրինական եկամուտների և նրանց կողմից կատարվող փաստացի ծախսերի ու ապրելակերպի համադրումը և այլն:

2. Ելնելով օպերատիվ իրավիճակից՝ յուրաքանչյուր ոլորտում կատարել կոռուպցիոն ռիսկերի ճշգրիտ գնահատում:

3. Աշխատանքներ կազմակերպելիս համալիր միջոցառումներ իրականացնել և առանձնահատուկ ուշադրություն դարձնել «կաշառք տալու», «կաշառքի միջնորդություն» և «կաշառք ստանալու» հանցագործության հատկանիշներին, որոնք անմիջապես առնչվում են այլ հանցակազմերի հետ:

4. Համակարգային բնույթ ստացած կոռուպցիոն երևույթների, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի բացահայտման և կանխարգելման գործընթացում առավել ուշադրություն դարձնել օբյեկտների կապերին, դերակատարությանը և պարզաբանել երևույթների առաջացման պատճառները (օրենսդրական, սոցիալ-տնտեսական, հոգեբանա կան):

5. Նշված երևույթների դեմ պայքարը արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ օրենսդրական դաշտի կատարելագործում (համապատասխան «Կոռուպցիայի մասին» օրենքի ընդունում և ռազմավարության մշակում, «Ծախսերի հայտարարագրման մասին» օրենքների ընդունում), ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը ուղղված ներգերատեսչական ծրագրերի մշակում:

6. Տեղեկատվության փոխանակման համար իրավապահ մարմինների միջև գործուն մեխանիզմների ստեղծում:

7. Հասարակության լայն շերտերի ներգրավում կոռուպցիայի դեմ պայքարի գործընթացում[3]:

*Բանալի բառեր* - կոռուպցիոն հանցագործություններ, օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ, ապացույցներ, քննչական գործողություն, օ-պերատիվ-հետախուզական միջոցառումներ:

## SOME ISSUES ON IDENTIFICATION OF CORRUPTION CRIMES AND INCREASING THE EFFICIENCY OF THE INVESTIGATION

**Aram Zhorik Ayvazyan**
An applicant of the Criminal Law and Legal Proceedings Chair
of the Russian-Armenian / Slavonic / University

**Abstract**

The article presents the irreversible consequences of delay urgent investigative actions in the course of the preliminary investigation. Variety of objective and subjective reasons, not giving opportunity, or simply creating difficulties for the body of the preliminary investigation are fixed into the disclosure of such crimes. At the same time, waiting for the possibility of positive results in connection with this subject, the article made a number of proposals in the context of procedures for a criminal procedure and operational-investigative activities.

*Keywords* - corruption offenses, both objective and subjective reasons, evidence, investigative actions, operational investigative measures.

---

3 Տե՛ս ՀՀ Գլխավոր Դատախազություն. «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության առանձնահատկությունները. Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և կանխարգելման նպատակով ԱԱԾ ստորաբաժանումների կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական աշխատանքների վիճակը և դրանց արդյունավետության բարձրացման խնդիրները», Ս.Բաղդասարյան, Երևան, «Ֆենոմեն հրատարակչություն», 2009թ. էջ՝ 117:

# НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВЫЯВЛЕНИЯ КОРРУПЦИОННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ И ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ РАССЛЕДОВАНИЯ

**Арам Жорикович Айвазян**
Соискатель кафедры уголовного права и процесса
Российско-Армянского /Славянского/ университета

## Аннотация

В статье представлены необратимые последствия промедления неотложных следственных действий в процессе предварительного расследования. Закреплены разнообразные объективные и субъективные причины, не дающие возможности или просто создающие трудности для органа предварительного расследования в раскрытии подобного рода преступлений. В то же время, ожидая по возможности положительные результаты в связи с рассматриваемым предметом, в статье сделано ряд предложений в контексте процедур как уголовно-процессуальных, так и оперативно-следственных мероприятий.

*Ключевые слова* – коррупционные преступления, объективные и субъективные причины, доказательства, следственное действие, оперативно-следственные меры.

# ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

***Արամ Ժորիկի Այվազյան***

*Հայ - ռուսական / Սլավոնական / համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ*

Կոռուպցիայի դեմ պայքարը հանդիսանում է պետական կառավարման արդյունավետության ապահովման ու բարձրացման կարևորագույն նախապայման: Այդ գիտակցմամբ կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչվել է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը: Կոռուպցիան բացասական ներգործություն է ունենում հասարակական կյանքի տարբեր ոլորտների վրա՝ առաջ բերելով որոշակի տնտեսական, սոցիալական և քաղաքական հետևանքներ:

Կոռուպցիոն դրսևորումները մեծամասամբ, եթե ոչ ամբողջությամբ, իրենցից ներկայացնում են «օրինական» վարքի դրսևորումներ, քանզի շատ դեպքերում ունենում են նորմատիվ հիմքեր: Նորմատիվ իրավական ակտերում եղած անհստակությունները, երկակիությունները, նաև օրենսդրական բացերը իրավական ճանապարհ են ստեղծում կոռուպցիոն դրսևորումների՝ «օրենքի» շրջանակներում դրանք իրացնելու համար: Այսինքն՝ կոռուպցիայի փաստացի իրավիճակը քողարկվում է «իրավական» շղարշով՝ պաշտոնատար անձի այդ գործողությունը անելու կամ որոշումը ընդունելու կամ դրանից ձեռնպահ մնալու իրավունքով: Շատ հաճախ կոռուպցիոն դրսևորումները ոչ միայն օրինականացվում են, այլև նորմատիվ իրավական ակտերի շնորհիվ դառնում են հնարավոր: Ոչ հաճախ «կոռուպցիոն շուկայի» համար պարարտ նորմատիվ իրավական բազա ստեղծելու գործում մեծ լումա են ներդրում լոբբիստական կազմակերպությունները, որոնք հետաքրքրված են կոնկրետ նորմատիվ իրավական ակտի՝ կոնկրետ ձևաչափով ընդունմամբ:

Օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում եղած կոռուպցիոն ռիսկեր պարունակող դրույթները հեշտացնում, նախապատրաստում,

նպաստավոր պայմաններ են ստեղծում կոռուպցիայի համար: Կոռուպցիոն դրսևորումների համատեքստում իրավական «թողտվության» մեխանիզմների վերացումը և դրա ազդեցության գնահատումը իրավական պետության, քաղաքացիական հասարակության, մրցունակ տնտեսության, հասարակական կյանքի ժողովրդավարական մեխանիզմների վրա վերջին 30 տարիների ընթացքում միջազգային, իսկ վերջին 10-15 տարիների ընթացքում նաև ներպետական ազգային ռազմավարության հիմնական ուղղություններից մեկն է հանդիսանում:

Ըստ էության, հաճախ և մեծամասամբ խոշոր կոռուպցիայի երևույթները հնարավոր չէ գործող օրենսդրության շրջանակներում որակել որպես հանցավոր արարք, քանի որ պետական միջոցների յուրացումը կատարվում է օրենքների ընձեռած նուրբ սողանցքների կիրառմամբ: Հարց է առաջանում. ինչպե՞ս որակել այդ երևույթը՝ բարոյականության խախտու՞մ, թե՞ հանցավորություն: Այդ առումով պետք է նկատել, որ կոռուպցիան քաղաքական, սոցիալական, տնտեսական, բարոյական և իրավական երևույթ է: Կոռուպցիոն գործողությունների պատժելիության խնդիրը հնարավոր է միայն իրավական տեսանկյունից:

Վերլուծելով հիմնախնդիրը՝ անհրաժեշտ է նշել, որ կոռուպցիոգեն գործոններ ասելով՝ պետք է հասկանալ այն երևույթներն ու հանգամանքները, որոնք նպաստում են կամ կարող են նպաստել կոռուպցիայի դրսևորմանը: Այդ գործոնները կամ կարող են լինել այսպես կոչված ի սկզբանե կանխամտածված կոռուպցիոն պրակտիկայի արդյունք, կամ էլ ուղղակի իրավունքի նորմի պահանջներով պայմանավորված՝ նպաստել կոռուպցիոն երևույթների դրսևորմանը:

Այս առումով առաջընթաց պետք է համարել Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 22.10.2009 թվականի N 1205-Ն «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» որոշման ընդունումը: Վերը նշված որոշման ընդունման համար հիմք հանդիսացավ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27.1 հոդվածի 3-րդ մասը:

Ըստ վերը նշված կարգի՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատումը նորմատիվ իրավական ակտի նախագծում կոռուպցիոն գործոնների առկայության բացահայտմանը, դրանց վերաց-

մանը կամ հնարավոր նվազագույնի հասցմանն ուղղված աշխատանքների իրականացման գործընթացն է: Նախագծի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման հիմնական նպատակն ընդունվող նորմատիվ իրավական ակտի որակի ու կարգավորման արդյունավետության աստիճանի բարելավումն է հակակոռուպցիոն տեսանկյունից՝ ապահովելով իրավական կարգավորումների արդյունքների կանխատեսումը:

Շարունակելով քննարկել նորմատիվ իրավական ակտերի կոռուպցիոգենության հիմնախնդիրը՝ պետք է արձանագրել, որ ցանկացած օրենք կարող է նպաստավոր պայմաններ ստեղծել կոռուպցիայի համար, քանզի այն սահմանում է առանձին անձանց կամ նրանց խմբերի համար վարքագծի դրսևորման որոշակի չափորոշիչներ՝ այդ անձանց դնելով որոշակի ոչ ձեռնատու վիճակում, որն այդ խմբին կամ մարդուն դարձնում է պոտենցիալ կոռուպցիայի աղբյուր[1]:

Իրավունքի նորմերի պահանջները կարող են ուռճացվել իրավակիրառման ընթացքում, որի պատճառ կարող են հանդիսանալ պրոցեսուալ նորմերի կամ իրավակիրառ մարմինների իրավական կարգավիճակը սահմանող նորմերի անկատարությունը, որի պարագայում մեծամասամբ տեղի է ունենում իրավակիրառման խաչաձևում, երբ «հատվում են» տարբեր իրավակիրառների հսկողա-վերահսկողական գործառույթները: Լիազորությունների հատումը, որպես կանոն, բերում է ստուգումների քանակային ավելացման, որն իր հերթին հանգեցնում է ավելի շատ «պայմանավորվածության» վրա հիմնված հարաբերությունների՝ կոռումպացված չինովնիկների և հնարավոր իրավախախտների միջև: Այս պարագայում, իհարկե, խոսքը վերաբերում է օրենքով թույլատրելի լիազորությունների բազմությանը, որոնք իրականացվում են միևնույն օղակների նկատմամբ ստուգումների ձևաչափով, այսինքն՝ օրենքում գոյություն ունեցող բյուրոկրատական վերահսկողական բազմաշերտ մեխանիզմներին: Իրավունքի նորմերի ուռճացված պահանջները կարող են բխել նաև իրավական դաշտի կազմակերպչական անճշտություններից: Այսինքն՝ կոռուպցիոգեն են ոչ միայն իրավունքի նորմերը, այլև դրանց համասեռ ամբողջությունը, այսինքն՝ օրենսդրության ոլորտն ընդհանրապես: Հատկապես հիմ-

1 McMullan A theory of corruption // The sociological review Vol. 9 1961, p. 196. Edward Shils, Political Develepment in the New States /The Hague 1962/, p. 385

նախնդիրը աղետալի չափերի է հասնում վարչական օրենսդրության ոլորտում: Վարչական օրենսդրությունը, մանավորապես վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրությունը, բաղկացած է դեռևս 1985 թվականին ՀԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված և այսօր վերանվանված «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքից, ինչպես նաև վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ այլ օրենսդրական ակտերից, ԽՍՀՄ մինիստրների հորիրդի /այսուհետ՝ ՀՀ կառավարության/ որոշումներից: Այլ խոսքերով՝ վարչական իրավունքի նորմերը կարող են լինել ցանկացած օրենքում և ամրագրված նույնիսկ ենթաօրենսդրական ակտերում: Այս ամենի արդյունքում վարչական պատասխանատվության ինստիտուտի շուրջ ծավալվող հարաբերությունները կարգավորվում են հսկայական ծավալի օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջոցով: Այս հանգամանքը նաև գիտական շրջանակներում ստիպում է խորհել վարչական իրավախախտումների վերաբերյալ մեկ միասնական դաշտ ստեղծելու մասին[2]:

Վարչական պատասխանատվություն սահմանող ակտերի քանակը Հայաստանի Հանրապետությունում մոտավորապես անցնում է չորս տասնյակը, իսկ ահա ՌԴ-ում դրանց քանակը անհամեմատ մեծ է՝ մոտավորապես 200:

Գործող օրենսդրության վիճակի գնահատականը վկայում է, որ այժմ մենք ունենք ոչ պակաս տարբեր նորմեր, որոնք նախադրյալներ են ստեղծում և անգամ մարդկանց ներքաշում կոռուպցիոն գործելակերպի մեջ: Օրինակ, եթե միևնույն իրավախախտման համար սահմանված է պատժի նվազագույն և առավելագույն չափի միջև մեծ տարբերություն, իսկ ընտրությունը պետական պաշտոնյայի ձեռքում է, ապա նրա մոտ առաջանում է գումար վերցնելու գայթակղություն՝ «թեթևացված» պատիժ նշանակելու համար:

Պետք է հրաժարվել նաև անմեղության կանխավարկածի չափազանցված մեկնաբանություններից, երբ այդ հաստատության գործունեությունը ընդլայնվում է քրեաիրավական և քրեադատավարական իրավահարաբերություններից դուրս:

ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված «Կոռուպցիոն

2 Сорокин В.Д. О двух тенденциях разрушающих ценностность института административной ответственности // Правобедение 1999 N 1. С. 47

հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության ծրագրում» արձանագրված է, որ կաշառակերության մեջ մեղադրվող քաղաքական գործիչը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունն այդ հանցանքի մեջ, ապացուցելու պարտականությունը դրված է հետաքննչական և նախաքննության մարմինների վրա: Իսկ քաղաքական գործիչը, որը ստանում է ամսական 300.000-ից 600.000 դրամը չգերազանցող գումար (աշխատավարձ) և ունի հարյուր հազարավոր դոլար արժեք ունեցող սեփական ամառանոց, պետք է ապացուցի դրա օրինական լինելու աղբյուրները: Եթե նա դա չի անում, ապա նրան չի կարելի մեղադրել հանցագործության մեջ (քանի որ գործում է անմեղության կանխավարկածի սկզբունքը), բայց նվազագույնը նա պետք է հեռացվի պետական ծառայությունից (այդ տիպի հարաբերության վրա չի կարող ներգործել անմեղության կանխավարկածի սկզբունքը): Դրանից ողջամիտ շեղումը հնարավոր է և խիստ անհրաժեշտ՝ հաշվի առնելով կոռուպցիայի դեմ պայքարի կարևորությունը աշխատանքային, ֆինանսական, հարկային, մաքսային և այլ օրենսդրական նորմերի ընդունման ոլորտում[3]: Ահա այստեղ մենք պետք է արտահայտենք մեր անհամաձայնությունը, քանի որ պաշտոնատար անձի վարքագծում կոռուպցիոն որևէ արարք այդպես էլ չհիմնավորելու պարագայում, գտնում ենք, որ ենթադրությունների հիման վրա, որքան էլ որ դրանք հավաստի և համոզիչ թվան, չի կարելի անտեսել և սահմանափակել այդ պաշտոնատար անձի աշխատանքային և այլ իրավունքները, քանի որ դա ակամա կհանգեցնի հասարակության մեջ այդ անձի բարի համբավի, արժանապատվության ոտնահարմանը, ինչն անթույլատրելի է: Այլ կերպ՝ եթե չկան հիմնավոր փաստական տվյալներ, ապա այդ անձի համար չեն կարող լինել նաև որևէ բացասական հետևանքներ:

Քննարկվող հիմնախնդրի համատեքստում առավել կարևորվում է իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննությունը որպես կոռուպցիոն իրավախախտումների նախականխման միջոց: «Հակակոռուպցիոն քաղաքականության մասին օրենսդրության հիմքերը» ԱՊՀ մոդելային օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքն-

3 ՀՀ գլխավոր դատախազություն, «Կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման, բացահայտման և քննության» Ծրագիր

նությունը կրիմինոլոգիական փորձաքննության ձև է, որի անցկացման կարգը, փորձագետների կարգավիճակը և դրա անցկացման արդյունքում բացասական եզրակացության ստացման հետ կապված հարցերը կարգավորվում են ներպետական օրենսդրությամբ (օրենքով և դրան համապատասխան ընդունվող իրավական ակտերով):

Ուսումնասիրվող օրենքը պարտադիր է համարում քաղաքացիաիրավական, կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող օրենքների և դրանց նախագծերի, ինչպես նաև հակակոռուպցիոն քաղաքականության իրավական կարգավորման գերակա ուղղություններին վերաբերող այլ նորմատիվ իրավական ակտերի և դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննությունը:

Օրենքը կարևորում է նաև հակակոռուպցիոն մոնիտորինգի անցկացումը, որն իր մեջ ներառում է կոռուպցիայի, կոռուպցիածին գործոնների և հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման միջոցների մոնիտորինգը:

Հակակոռուպցիոն փորձաքննության գլխավոր նպատակը նորմատիվ-իրավական ակտերում գոյություն ունեցող կոռուպցիոգեն երևույթները վերացնելը կամ դրանց իրացումը կանխելն է:

Գտնում ենք, որ նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննությունը /վերլուծությունը/ պետք է ընթանա հետևյալ հիմնական կանոնների պահպանմամբ.

- նորմատիվ իրավական ակտերի և դրանց նախագծերի փորձաքննության արդյունավետությունը պայմանավորված է փորձաքննության համակարգվածությամբ, հուսալիությամբ և արդյունքների ամբողջական ստուգմամբ,
- յուրաքանչյուր նորմատիվ-իրավական ակտի հակակոռուպցիոն փորձաքննությունը և նրա արդյունքների շարադրումը պետք է իրականացնել միատեսակ՝ տիպիկ կոռուպցիոն գործոնների միատեսակ գնահատման չափանիշերով,
- յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ պետք է վերլուծվի յուրաքանչյուր նորմի հնարավոր կոռուպցիոգեն ռիսկերի գնահատման համատեքստում,
- յուրաքանչյուր կոռուպցիոգեն գործոն պետք է գնահատվի նորմերից յուրաքանչյուրում «արձագանք» գտնելու համատեքստում,

- կոռուպցիոն գործոնները և դրսևորումները պետք է հայտնաբերվեն, և դրանց վերաբերությամբ անհրաժեշտ է ձեռք առնել համարժեք մոտեցումներ անկախ այն հանգամանքից, դրանք նորմատիվ իրավական ակտերում հայտնվել են դիտավորյալ, թե իրավաստեղծ ոչ պրոֆեսիոնալ գործունեության արդյունք են,
- փորձաքննության ընթացքում բացահայտված կոռուպցիոն նախադրյալներ պարունակող նորմերի մասին համապատասխան նշումներ պետք է կատարվեն փորձաքննության արդյունքների մասին արձանագրությունում:

Նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքներն արձանագրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա:

- ակտում կամ ակտի նախագծում տիպիկ կոռուպցիոն գործոնների և նախադրյալների առկայության կամ բացակայության մասին հիմնավորում,
- այն հոդվածների, գլուխների, բաժինների արձանագրում, որոնցում հայտնաբերվել են կոռուպցիոգեն գործոններ,
- կոռուպցիոն գործոններ պարունակող հոդվածների տեքստի ամբողջական ամրագրում,
- կոռուպցիոն գործոնների ազդեցության գնահատման մասին արդյունքների ամրագրում,
- փաստաթղթում, որտեղ արտացոլվել են հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքները, անհրաժեշտ է ներառել նաև համապատասխան առաջարկություններ՝ նորմի կամ նորմի բարեփոխման կապակցությամբ:

Նորմատիվ իրավական ակտերի կոռուպցիոգենության փորձաքննության ձևերի տակ հասկանում են.

- հակակոռուպցիոն փորձաքննություն, որն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կազմման ժամանակ,
- հակակոռուպցիոն փորձաքննություն, որն իրականացվում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական /իրավաբանական/ փորձաքննության ընթացքում,
- գործող նորմատիվ իրավական ակտերի հակակոռուպցիոն փորձաքննություն:

Որպես ինքնուրույն հակակոռուպցիոն փորձաքննության տեսակ՝ կարելի է համարել նաև հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների նկատմամբ իրականացվող փորձաքննությունը: Խոսքն այս պարագայում այն մեխանիզմի մասին է, որը հնարավորություն կտա պարզել հակակոռուպցիոն փորձաքննության արդյունքների վերացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունքները, ինչպես նաև առաջնային փորձաքննության օբյեկտիվության աստիճանը:

Հակակոռուպցիոն փորձաքննությունն իրականացվում է հատուկ կամ ներքին գերատեսչական մասնագետների կողմից: Հակակոռուպցիոն փորձաքննություն իրականացնելու համար հնարավոր է նաև հատուկ մասնագետներից բաղկացած հանձնաժողովի ստեղծում[4]:

Մեր կարծիքով՝ նորմատիվ իրավական ակտերի կամ դրանց նախագծերի հակակոռուպցիոն փորձաքննության՝ սույն հոդվածում ներկայացված կանոնների իրավական ամրագրումն ու պահպանումը էապես կնպաստեն իրավական դաշտի կատարելագործմանը և հնարավոր կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը:

*Բանալի բառեր* - կոռուպցիոգեն երևույթներ, օրինաստեղծ գործունեություն, իրավական սողանքներ, հակակոռուպցիոն փորձաքննություն:

## О ПРАВОВЫХ И ОРГАНИЗАЦИОННЫХ ОСНОВАХ НОРМАТИВНЫХ ПРАВОВЫХ АКТОВ И АНТИКОРРУПЦИОННЫХ ЭКСПЕРТИЗАХ ИХ ПРОЕКТОВ

**Арам Жорикович Айвазян**
Соискатель кафедры уголовного права и процесса Российско-Армянского /Славянского/ университета

### Аннотация

В статье поднимается вопрос неточностей, двойственностей, часто встречаемых в правовом поле, а также законодательных пробелов,

---

4 Մ.Հ. Մուրադյան, Պետությունը և կոռուպցիան, սոցիալական հիմնախնդրի միջազգային և ներպետական իրավական լուծումները, ուսումնական ձեռնարկ, Երևան 2012թ. էջ՝ 113:

с представлением вытекающих из них отрицательных последствий. Во избежание возможных “гибких” лазеек, содействующих процессу законотворческой деятельности, представлены предпринятые Правительством РА правовые меры и, кроме того, для устранения коррупциогенных явлений, существующих в нормативно-правовых актах, однозначно предлагается осуществить антикоррупционную экспертизу нормативных правовых актов, предоставив определенные основные правила.

*Ключевые слова* – коррупционные явления, законотворческая деятельность, правовые лазейки, антикоррупционная экспертиза.

## ON THE LEGAL AND INSTITUTIONAL FRAMEWORK OF REGULATIONS AND ANTI-CORRUPTION EXPERTISE OF THEIR PROJECTS

**Aram Zhorik Ayvazyan**
An applicant of the Criminal Law and
Legal Proceedings Chair of the Russian-Armenian / Slavonic / University

### Abstract

The article raises the question of inaccuracies, dualities, frequently encountered in the legal field, as well as legislative gaps, introducing them arising from the negative consequences. To avoid any possible "flexible" loopholes that facilitate the process of legislative activity, legal measures undertaken by the Government of the Republic of Armenia are presented, and, in addition, it is explicitly proposed to eliminate the corruption-generating phenomena existing in the normative-legal acts to implement anti-corruption expertise of normative legal acts, giving some basic rules.
*Keywords* - corruption phenomenna, legislative activity, legal loopholes, anti-corruption expertise.

# ՆԱԽԱԳԱՀԱԿԵՆՏՐՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄՈԴԵԼԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ. ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ 1995-2005 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

***Ալեքսանդր Արմենի Հարությունյան***
*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ*

Հոդվածում անդրադարձ է կատարվել Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքի տեսության կարևորագույն հարցադրումներից մեկի՝ կիսանախագահական կառավարման ձևի հիմնախնդիրների վերլուծությանը: Կարևորելով կիսանախագահական կառավարման ձևի մոդելավորման նշանակությունը, ինչպես նաև բացահայտելով այդ մոդելի հատկանիշներն ու առանձնահատկությունները՝ իշխանության պետական մարմինների միջև փոխհարաբերությունների և նրանց միջև զսպումներիև հակակշիռների մեխանիզմերի տեսանկյունից, հեղինակը կատարել է եզրահանգում, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական զարգացումների առաջին փուլում (1995-2005 թթ.) կիսանախագահական կառավարման մոդելը բնութագրվում է որպես նախագահակենտրոն:

1995 թվականիհուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց պետական կառավարման մի մոդել, որն ավելի մեծ ընդհանրություններ ուներ դասական՝ ֆրանսիական կիսանախագահական կառավարման մոդելի հետ:

Նախագահական կառավարման ձևը առավել արդյունավետ է այն դեպքերում, երբ ա) տնտեսությունը հիմնականում ապապետականացված է և բ) պետական կառուցվածքի ձևը դաշնային է: Այդ պայմաններում գործադիր իշխանության լիազորությունների շրջանակը էականորեն սահմանափակվում է՝ խնդիրների մի մասը լուծում են հենց սեփականատերերը, իսկ մյուս մասը փոխանցվում է դաշնության սուբյեկտների գործադիր իշխանության մակարդակ:

Բացի դրանից, պետական կառուցվածքի դաշնային ձևն էականորեն չեզոքացնում է բռնապետության հաստատման վտանգը՝ ինչը յու-

րահատուկ է կառավարման նախագահական ձևի համար: Պարզ էր նաև, որ գոյություն ունեցող քաղաքական պայմաններում կառավարման խորհրդարանական ձևը նույնպես չէր կարող ապահովել պետական իշխանության արդյունավետ իրականացումը: Խորհրդարանական կառավարման համակարգը արդյունավետ է գործում միայն այն ժամանակ, երբ գոյություն ունի կուսակցությունների կայուն համակարգ: Հակառակ դեպքում հարատև կառավարական և խորհրդարանական ճգնաժամերը անխուսափելի են: Ուստի, հեղինակի կարծիքով, կիսանախագահական կառավարման ձևը՝ գոյություն ունեցող որոշակի-պատմական պայմաններում, գործնականում այլընտրանք չուներ[1]:

Հայ իրավագետներ Վ.Պողոսյանի և Հ.Թովմասյանի կարծիքով կիսանախագահական կառավարման մոդելի ընտրությունը պայմանավորված էր զուտ սուբյեկտիվ գործոններով: Նրանք գտնում են, որ «Հայաստանում կառավարման համակարգի կիսանախագահական մոդելի ընդունումը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: 1991 թվականին արդեն գոյություն ուներ ուղղակիորեն ընտրված Հանրապետության Նախագահի պաշտոն, և իշխող վարչակազմը՝ Հանրապետության Նախագահի գլխավորությամբ շահագրգռված էր այդ պաշտոնի պահպանմամբ և ուժեղացմամբ: Կառավարող մեծամասնության մտահոգությունը միայն այն էր, թե Հանրապետության-Նախագահի ուժեղ դիրքի ամրագրման որ մոդելն է ավելի նախընտրելի: Կառավարող մեծամասնության ընտրությունը կանգ առավ հենց այս մոդելի վրա, քանի որ այն հնարավորություն էր տալիս ճգնաժամային իրավիճակներում հակամարտությունը միշտ լուծել Հանրապետության Նախագահի օգտին՝ պառլամենտի լուծարմամբ»[2]:

Գնահատելով այս երկու տրամագծորեն հակառակ տեսակետները՝ պետք է նախ ևս մեկ անգամ արձանագրել, որ կառավարման ձևի կամ կոնկրետ մոդելի ընտրությունը միշտ պայմանավորված է լինում բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով և ճիշտ չէ այդպիսի ընտրությունը բացատրել որևէ մեկ գործոնի ազդեցությամբ՝ մանավանդ սուբյեկտիվ գործոնի: Ուստի պետք է համաձայնվել պրոֆեսոր

---

1 Տե՛ս մանրամասն Վ.Ստեփանյան. Կառավարման խորհրդային ձևից՝ դեպի կիսանախագահական հանրապետություն. // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-2:

2 Վ.Պողոսյան, Հ.Թովմասյան. Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների նախագիծը. Համառոտ պարզաբանումներ. Երևան,2005, էջ 15:

Ա.Հարությունյանի դիրքորոշման հետ, ով գտնում է, որ երկրում հզոր նախագահական իշխանության ամրագրումը պայմանավորված էր բազմաթիվ հանգամանքներով, ընդ որում՝ և օբյեկտիվ և սուբյեկտիվ:[3] Հիմնավոր է նաև նույն հեղինակի տեսակետը, որ նախագահական իշխանության հզորացումը ունի նաև դրական կողմեր, քանի որ հասարակական կարգի բարեփոխումների պայմաններում պետությունը դարձնում է մոբիլ: Սակայն այդպիսի հզորացումը չպետք է հասցրվի իշխանությունների տարանջատման սկզբունքին սպառնացող աստիճանի[4]:

Պետական կառավարման ձևի հիմնախնդիրների հետազոտման տեսանկյունից հատկանշական է ՀՀ Սահմանադրության կառուցվածքը[5]: Պետական կառավարման համակարգի ինստիտուտներից նախ սահմանադրորեն ամրագրված են Նախագահի ինստիտուտի նորմերը (գլուխ 3), հետո հաջորդաբար՝ Ազգային ժողովի (գլուխ 4), կառավարության (գլուխ 5) և դատական իշխանության (գլուխ 6) ինստիտուտները կազմող նորմերը:

Կիսանախագահական կառավարման բազմաթիվ այլ սահմանադրությունների օրինակով ՀՀ Սահմանադրության մեջ չէր տրվում Նախագահի ինստիտուտի բնորոշումը: Դրա փոխարեն սահմանված էին Նախագահի գործառույթներն ու կոնկրետ լիազորությունները, իսկ առանձին դեպքերում՝ դրանց իրականացման կարգը:

Սահմանադրության 49-րդ հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահը հետևում է Սահմանադրության պահպանմանը, ապահովում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեությունը: Հանրապետության Նախագահը Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է»: Ի հավելումն այս գործառույթների՝ Սահմանադրության 94-րդ հոդվածով ամրագրված է ՀՀ Նախագահի ևս մեկ գործառույթ՝ Նախագահը դատական մարմինների անկախություն երաշխավորն է:

3 Տե՛ս А. Арутюнян. Институт президента Республики Армения. Ереван, 1996, с. 103.
4 Տե՛ս նույն տեղում, էջ 101-102.
5 Սույն աշխատանքում հետազոտությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության 1995 թվականի Սահմանադրության (մինչև 2005 թվականին կատարված փոփոխությունները) դրույթների շրջանակում:

Կարծում ենք, որ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործառնության ապահովման գործառույթը ինքնին ենթադրում է, որ Նախագահի ինստիտուտը չի կարող հանդիսանալ իշխանությունների թևերից որևէ մեկի բաղադրատարր: Դա ուղղակի կհակասեր Սահմանադրության 5-րդ հոդվածով հստակ ամրագրված և պետական իշխանության ամբողջ համակարգի համար հիմնարար նշանակություն ունեցող՝ իշխանությունների տարանջատման սկզբունքին: Եթե նախագահական իշխանությունը որևէ համակարգի տարր է, ապա ստացվում է, որ իշխանության մեկ թևի ինստիտուտը ապահովում է իշխանության մյուս երկու թևերի բնականոն գործունեությունը և ավելին՝ ապահովում է դատական իշխանության անկախությունը: Ելնելով այս հանգամանքից, մենք չէնք կարող համաձայնվել Գ.Ա. Շմավոնյանի այն քննադատական գնահատականի հետ, որ ՀՀ Սահմանադրությանն յուրահատուկ է իշխանությունների տարանջատման համակարգում նախագահական ինստիտուտի բնույթի անհստակ և անհետևողական սահմանումը[6]:

Բանն այն է, որ նախագահի կարգավիճակի այդպիսի անհստակությունն ու որոշակի հակասականությունը կիսանախագահական կառավարաման համակարգի բոլոր մոդելների ընդհանուր յուրահատկությունն է: Ինչպես նշում է Վ.Ե. Չիրկինը, ընդհանուր առմամբ խառը կառավարման մոդելների սահմանադրություններում նախագահական իշխանության նորմատիվ կառուցակարգման եղանակները, նախագահի կարգավիճակի բնորոշումը և որակավորումը տարբեր են՝ մի դեպքում նախագահը բնորոշվում է որպես պետության գլուխ, մեկ այլ դեպքում՝ օգտագործվում են ընդահանուր գործառույթային ձևակերպումներ, երրորդ դեպքում՝ առանց որևէ կարգավիճակային բնորոշման թվարկվում են նրա լիազորությունները: Սակայն այս կամ այն կերպ նախագահական իշխանության իրավաբանական բնույթի մասին հարցը սահմանադրությունների մեծամասնությունում բաց է մնում, քանի որ այդ ինստիտուտը ուղղակիորեն չի կապվում իշխանությունների որևէ մեկ թևի հետ[7]:

---

6 Տե՛ս Շմավոնյան Գ.Ա. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право., 2000, N 1, с. 87-88.

7 Տե՛ս Чиркин В.Е. Президентская власть // Государство и право, 1997, N 5,с.15

Դա է պատճառը, որ իրավաբանական գրականության մեջ լայն տարածում են գտել կիսանախագահական կառավարման համակարգում նախագահական իշխանությունը՝ որպես իշխանության չորրորդ ճյուղի մասին պնդումները:[8] Մասնավորապես, պրոֆեսոր Ա. Հարությունյանը նշել է. «...այն երկրներում, որտեղ նախագահը չի մտնում գործադիր իշխանության համակարգի մեջ, պետք է տարբերակել և նախագահական իշխանությունը, կամ, ինչպես այն անվանում է Վ.Ե. Չիրկինը՝ արբիտրաժային իշխանությունը, որը ապահովում է, ինչպես դա նշվում է, օրինակ, Ֆրանսիայի, Ռումինիայի, Հայաստանի սահմանադրական տեքստերում, հանրային իշխանությունների բնականոն գործառնությունը: Այդպիսի երկրներում նախագահական իշխանությունը իրավաբանորեն չի կարելի նույնացնել գործադիր իշխանության հետ: Սակայն, միևնույն ժամանակ, այդ իշխանության կարևորությունը... պահանջում է իշխանության նոր թևի՝ «նախագահական» իշխանության ճանաչում»[9]:

Այդպիսի դիրքորոշումը որոշ հեղինակների կողմից ենթարկվում է քննադատության: Մասնավորապես, պրոֆեսոր Մ.Վ. Բագլայը համարում է, որ նախագահական իշխանությունը չի կարելի գնահատել որպես իշխանության առանձին թև, քանի որ ժողովրդավարական իրավական պետությունում միշտ գործում է իշխանությունների բաժանման սկզբունքը, ինչը ենթադրում է, որ ցանկացած պաշտոնատար անձի իշխանական իրավասությունը վերաբերում է երեք իշխանություններից մեկին՝ օրենսդիր, գործադիր կամ դատական... Նույնիսկ այն երկրներում, որտեղ նա չի մտնում երեք իշխանություններից որևէ մեկի մեջ (Ֆրանսիա և այլն) կամ նրա կարգավիճակի մասին սահմանադրության մեջ ընդհանրապես չի հիշատակվում (ԳԴՀ), իրավաբանական գիտությունն ու պրակտիկան նրան ճանաչում են գործադիր իշխանության ղեկավար՝ քանի որ ոչ մի պաշտոնատար անձ չի կարող ունենալ հիմնական գործառույթներ և իշխանական լիազորու-

[8] Տե՛ս Ноздрачев А.Ф. Конституционные основы исполнительной власти в РФ // Исполнительная власть в РФ. М.,1996, с. 4-5; Окуньков Л.А. Президент РФ. Конституция и политическая практика. М.,1996, с.1-21; Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность., М., 1997, с. 156-157, և այլն:

[9] Арутюнян А., նշված աշխ., էջ 23:

թյուններ որևէ իշխանությունից դուրս»:[10] Պետք է նկատել, որ Բ.Մ. Բագլայի կողմից բերվող փաստարկները կրում են զուտ տեսական բնույթ և չեն արտացոլում գոյություն ունեցող քաղաքական-իրավական իրողությունները: Ուստի, կարծում ենք, որ նախագահական իշխանության տարանջատումը իշխանության երեք թևերից ավելի հիմնավորված է:

Հայաստանի Հանրապետության այդ ժամանակաշրջանի կառավարման մոդելում նախագահական իշխանության այդպիսի յուրահատուկ իրավաբանական բնույթի պատճառով, այդ ինստիտուտը հայտնվում է պետական իշխանության համակարգի կենտրոնում: Պետական իշխանության ամբողջ համակարգը, դրա կառուցվածքային տարրերը, պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական թևերի առանձին կառույցների իրավական կարգավիճակի հիմունքները, դրանց կոնկրետ լիազորությունները պետք է որոշակիորեն համապատասխանեցվեին Նախագահի ինստիտուտին: Այդպիսի համապատասխանեցման անհրաժեշտությունը բխում էր նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովման Նախագահի գործառույթից: Ակնհայտ է, որ իշխանության երեք թևերի բնականոն գործունեության ապահովման համար Նախագահը պետք է ունենար իշխանության այդ երեք թևերի նկատմամբ ներգործության արդյունավետ իրավական լծակներ:

Միևնույն ժամանակ այս ոլորտում կարևորագույն խնդիրներ են՝ իշխանությունների երեք դասական ճյուղերի և նախագահական իշխանության միջև որոշակի հավասարակշռության պահպանումը, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանության և նախագահական իշխանության միջև օպտիմալ զսպումների մեխանիզմների կիրառումը: Այդ երկու խնդիրների իրագործման որակից էր հիմնականում կախված Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելի գործառնության արդյունավետությունը և ժողովրդավարության սկզբունքներին համապատասխանության աստիճանը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ՀՀ Նախագահի լիազորությունները հստակ տարանջատվում են երեք խմբի. ա)որպես պետու-

[10] Баглай М.В. Конституционное право РФ. М., 1997, с. 388-389.

թյան գլխի, բ) օրենսդիր իշխանության ոլորտի, գ) գործադիր իշխանության ոլորտի, դ) դատական իշխանության ոլորտի:

Ինչ վերաբերում է ՀՀ Նախագահի՝ որպես պետության գլխի լիազորությունների համակարգին, ապա այստեղ նրան վերապահված էին, ըստ էության, կառավարման բոլոր ձևերում նախագահի համար բնութագրական լիազորություններ: Տարբեր կառավարման ձևերում նախագահի կարգավիճակի առանձնահատկությունները, որպես կանոն, ոչ թե լիազորությունների «ցանկերի» տարբերությունների միջ են, այլ դրանց իրականացման կարգերի մեջ: Ուստի ՀՀ կիսանախագահական կառավարման քննարկվող մոդելի՝ իշխանությունների տարանջատման որակի և պետական իշխանության ամբողջական համակարգի արդյունավետության և ժողովրդավարություն սկզբունքներին համապատասխանության աստիճանի մասին օբյեկտիվ գնահատական ձևակերպեկու համար նպատակահարմար է հիմնական ուշադրությունը շեշտադրել Նախագահ-Ազգային ժողով, Նախագահ-կառավարություն և Նախագահ-դատական իշխանություն հարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունների վերլուծության վրա:

Կարծում ենք, Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների բնույթը էականորեն կախված է Նախագահի կողմից խորհդարանը արձակելու լիազորության կոնկրետ իրավական ձևակերպումներից: Որքան լայն՝ առանց սահմանափակումների է ձևակերպված այդ լիազորությունը, այնքան ուժեղանում է Նախագահի փաստացի դերը պետական իշխանության ամբողջ համակարգում և ընդլայնվում են իշխանության բոլոր երեք թևերի նկատմամբ նրա գործնական ազդեցության շրջանակները: Այդ միտումը հստակ արտահայտվում է, մասնավորապես, երիտասարդ ժողովրդավարության պետություններում, որտեղ սուբյեկտիվ գործոնների ազդեցությունը դեռևս շատ մեծ է:

ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Հանրապետության Նախագահը «Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ խորհրդակցելուց հետո կարող է արձակել Ազգային ժողովը... Իր պաշտոնավարության վերջին վեց ամսվա ընթացքում չի կարող արձակել Ազգային ժողովը»: Սահմանադրության 63-րդ հոդվածով ամրագրված են Նախագահի այդ լիազորության որոշ այլ սահմանափակումներ: Ազգային ժողովը չի կարող արձակվել ընտրությու-

նից հետո մեկ տարվա ընթացքում, ռազմական դրության ժամանակ կամ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված դեպքերում, ինչպես նաև՝ երբ Հանրապետության Նախագահին պաշտոնանկ անելու հարց է հարուցված:

Շարադրված սահմանադրաիրավական նորմերի համակարգային վերլուծությունը միանշանակ հանգեցնում է այն եզրակացության, որ սովորական՝ ոչ ճգնաժամային պայմաններում, Ազգային ժողովը արձակելու Նախագահի լիազորությունը գործնականում սահմանափակված էր միայն ժամկետային առումով (Նախագահի պաշտոնավարության վերջին վեց ամիս և Ազգային ժողովի ընտրություններից հետո մեկ տարի): Մնացած դեպքերում այն գործնականում կրում էր բացարձակ բնույթ:

Մինչև Ազգային ժողովի արձակումը Նախագահը պետք է խորհրդակցեր Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ, սակայն սա ընդամենը պրոցեսուալ (ընթացակարգային) նորմ է, որն Նախագահին պարտավորեցնում է միայն խորհրդակցել և Նախագահը, ըստ էության, սահմանափակված չէ այդ պաշտոնյաների դիրքորոշումներով: Նա միայն պետք է խորհրդակցի, սակայն նրանց կարծիքը հաշվի առնելու իրավաբանական պարտավորություն չունի: Ինչ վերաբերում է որոշակի արտակարգ իրավիճակներում ամրագրված սահմանափակումներին, ապա պետք է հաշվի առնել, որ Նախագահը գործնականում ուներ այդ սահմանափակումները «շրջանցելու» լայն հնարավորություններ: Բավական է միայն արձանագրել, որ հենց Նախագահն է հայտարարում ռազմական դրություն (հոդվ. 55, մաս 13-րդ), սահմանադրական կարգին սպառնացող ամիջական վտանգի դեպքում իրականացնում իրավիճակից թելադրվող միջոցառումներ (հոդվ. 55, մաս 14-րդ): Ավելացնենք նաև, որ Սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված էր Նախագահի պաշտոնանկության բավականին բարդ, բազմափուլ ընթացակարգ: Հետևաբար, քննարկվող բոլոր իրավիճակներում Նախագահը հնարավորություններ ուներ մինչև այդպիսի իրավիճակների արձանագրումը արձակել Ազգային ժողովը՝ դրանով իսկ շրջանցելով իր լիազորությունների սահմանադրորեն ամրագրված սահմանափակումները:

Կարևոր է նաև արձանագրել, որ Նախագահ-Ազգային ժողովի հարաբերությունների սահմանադրական կարգավորման այս ոլոր-

տում առկա էր նաև էական բաց: Սահմանադրորեն կարգավորված չէին այն իրավիճակները, որոնք ստեղծվում են նոր կամ արդեն գործող կառավարությանը անվստահություն հայտնելու և դրանից հետո Նախագահի կողմից Ազգային ժողովը արձակելուց հետո: Այդ բացը լրացվեց միայն 1998 թ. ընդունված «Կառավարության կազմավորման և հրաժարականի մասին» ՀՀ օրենքով, որի 2-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվեց, որ «հրաժարական տված կառավարության անդամները շարունակում են իրենց գործունեությունը մինչև իրենց պաշտոններում նոր նշանակումներ կատարելը կամ նոր կառավարության կազմավորելը»:[11]

Պայմանականորեն, որպես Ազգային ժողովը արձակելու Նախագահի լիազորության սահմանափակ հակակշիռ կարելի է դիտարկել Ազգային ժողովի կողմից Նախագահին պաշտոնանկ անելու մասին (հոդվ.57), Նախագահի՝ իր լիազորությունների կատարման անհնարինության մասին(հոդվ. 59), որոշումներ ընդունելու լիազորությունները: Այդ որոշումների ընդունման համար նույնպես նախատեսված էր բավականին բարդ ընթացակարգ, որին էական մասնակցություն ունեին նաև սահմանադրական դատարանը (պաշտոնանկության դեպքում) և կառավարությունը (լիազորությունների կատարման անհնարինության դեպքում): Սակայն դա արդարացված մոտեցում էր, քանի որ առնչվում էր առաջնային մանդատ ունեցող սուբյեկտի հետ: Ուստի քննարկվող հարցերում Նախագահի և Ազգային ժողովի միջև լիազորությունների հավասարակշռվածությունը հետագա սահմանադրական բարեփոխումների ընթացքում պետք է ապահովվեր (և ապահովվեց) ոչ թէ Ազգային ժողովի համապատասխան լիազորությունների ընդարձակման կամ դրանց իրականացման կարգի պարզեցման, այլ Ազգային ժողովը արձակելու Նախագահի լիազորության սահմանափակման միջոցով:

Բոլոր մյուս ոլորտներում նույնպես Նախագահ-Ազգային ժողով փոխհարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման հիմնական խնդիրը նրանց միջև լիազորությունների հավասարակշռվածության ապահովումն էր: Այդ խնդրի լուծման հիմնական եղանակը զսպումների և հակակշիռների առավել արդյունավետ համակարգի

11 ՀՀՊՏ 1998, 11.30/30 (63):

ամրագրումն է: Սակայն պայմանականորեն կարելի է առանձնացնել իրավական կարգավորման նաև մեկ այլ եղանակ, որը Նախագահի և խորհրդարանի լիազորությունների հավասարակշռվածության ապահովման նպատակով պետք է կիրառվի, մասնավորապես. որոշ պետական մարմինների ձևավորման և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նշանակման և ազատման ժամանակ՝ Նախագահի և Ազգային ժողովի լիազորությունների ոչ խտրական բաշխում:

Զսպումների և հակակշիռների համակարգը առավել կարևորվում է այն դեպքերում, երբ միևնույն պետական իշխանական գործառույթի իրականացում հնարավոր է միայն և՛ Ազգային ժողովի, և՛ Նախագահի կողմից որոշակի գործողությունների կատարման միջոցով: Առավել ցայտուն իրավական կարգավորման այդ եղանակը իր արտահայտությունն է գտնում օրենսդրական գործընթացում: Այսպես, Սահմանադրության 62-րդ հոդվածի համապատասխան Ազգային ժողովը իրականացնում է օրենսդիր իշխանությունը և կարող է ընդունել որոշումներ (որոնք ստորագրում է Ազգային ժողովի նախագահը) միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում, ինչպես նաև իր գործունեության կազմակերպման հարցերով: Սահմանադրության 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն Նախագահը «Ազգային ժողովի ընդունած օրենքն ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Այդ ժամկետում կարող է օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով՝ պահանջելով նոր քննարկում: Հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է Ազգային ժողովի կողմից վերստին ընդունված օրենքը»: Պետք է նկատել, որ տվյալ դեպքում սահմանադրորեն ամրագրված է Ազգային ժողովի և Հանրապետության Նախագահի միջև զսպումների և հակակշիռների բավականին հավասարակշռված համակարգ. ա) Ազգային ժողովը չունի հնարավորություն արհեստականորեն խուսափել Նախագահի հնարավոր վետոյից, քանի որ սպառիչ կերպով սահմանված են Ազգային ժողովի նախագահի կողմից ստորագրվող՝ որոշումների ընդունման դեպքերը; բ) Նախագահն ունի միայն հաղթահարելի վետոյի իրավունք և դրա հաղթահարման դեպքում պարտավոր է ստորագրել և հրապարակել օրենքը: Սակայն, ինչպես դա կհիմնավորվի հետագա շարադրանքի ընթացքում, Հանրապետության Նախագահը ուներ նաև գործնականում լայն հնարավո-

րություններ միջնորդավորված կերպով ներազդելու Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա՝ կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի միջոցով:

Նույն դրական գնահատականը՝ անգամ նվազագույն չափով, չի վերաբերում այն զսպումների և հակակշիռների մեխանիզմին, որոնք կիրառվում են կառավարության ձևավորման և նրա հրաժարականի գործընթացներում:

Այս տեսանկյունից վերլուծենք նախ կառավարության ձևավորման գործընթացը: Համաձայն Սահմանադրության 55-հոդվածի 4-րդ կետի Նախագահը նշանակում և ազտում է վարչապետին, վարչապետի առաջարկությամբ՝ նշանակում և ազատում է կառավարության մյուս անդամներին: Հետևաբար, կառավարությունը կազմավորվում է արտախորհրդարանական կարգով: Ճիշտ է 74-րդ հոդվածի ուժով կառավարությունը իր կազմավորումից հետո քսանօրյա ժամկետում Ազգային ժողովի հավանությանը պետք է ներկայացնի իր գործունեության ծրագիրը՝ Ազգային ժողովի նիստում դնելով իր վստահության հարցը, իսկ անվստահության մասին որոշում ընդունելու դեպքում վարչապետը Հանրապետության Նախագահին դիմում է ներկայացնում կառավարության հրաժարականի մասին: Սակայն Ազգային ժողովի այդ հակակշիռը գործնականում անարդյունավետ է, կամ, համենայնդեպս, ունի արդյունավետության ցածր մակարդակ:

Չափազանց բարդեցված է նույն հոդվածով ամրագրված արդեն գործող կառավարությանը անվստահություն հայտնելու գործընթացը և, ինչն ավելի վճռորոշ է՝ Ազգային ժողովի այս «զսպող» լիազորությունը չեզոքացվում է դրան փաստացի հակադրվող Նախագահի «հակակշիռ»՝ Ազգային ժողովը արձակելու՝ միայն ժամկետային առումով և Ազգային ժողովի նախագահի ու վարչապետի հետ խորհրդակցելու պարտականությամբ սահմանափակված, Նախագահի լիազորությամբ:

Ազգային ժողովի և Նախագահի միջև լիազորությունների տարանջատման հիմնական ոլորտը կադրային քաղաքականության, մասնավորապես, բարձրագույն քաղաքացիական, զինվորական և այլ հատուկ, ինչպես նաև դատական իշխանության, պաշտոններում նշանակումներն են: Այս ոլորտում Ազգային ժողովի լիազորությունները չափազանց սահմանափակ էին՝ Ազգային ժողովը սեփական հայեցողու-

թյամբ, որպես կանոն, ձևավորում էր միայն իր մարմինները (Ազգային ժողովի նախագահ և տեղակալներ, հանձնաժողովներ և այլն): Սահմանադրությամբ նախատեսված էին միայն երկու բացառություն: Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի առաջարկությամբ նշանակում է կենտրոնական բանկի նախագահ և նրա տեղակալ (հոդվ. 83, կետ 1) և Ազգային ժողովի նախագահի առաջարկությամբ՝ սահմանադրական դատարանի անդամներ (ինը անդամներից՝ հինգին) և սահմանադրական դատարանի կազմից՝ սահմանադրական դատարանի նախագահ:

Մինչդեռ Հանրապետության Նախագահին այս ոլորտում վերապահված էին բազմաթիվ և էական լիազորություններ: Սահմանադրության 55-րդ հոդվածի համաձայն Նախագահը (օրենքով նախատեսված դեպքերում նշանակումներ է կատարում քաղաքացիական պաշտոններում (կետ 5-րդ), նշանակում է և ետ է կանչում օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններին առընթեր դիվանագիտական ներկայացուցիչներին (կետ 8-րդ), վարչապետի առաջարկությամբ նշանակում և ազատում է գլխավոր դատախազին (կետ 9-րդ)), օժտված է լիազորություններով դատական իշխանության պաշտոնյաների նշանակման բնագավառում (կետ 10-11), նշանակում է գլխավոր դատախազի տեղակալներին և դատախազության կառուցվածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին (կետ 11-րդ), հանդիսանալով զինված ուժերի գլխավոր հրամանատար, նշանակում է զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը:

Նախագահը, որպես կանոն, սեփական հայեցողությամբ կամ արտախորհրդարանական այլ կարգով (վարչապետի ներկայացմամ) ոչ միայն նշանակումներ կատարում կարևորագույն պաշտոններում, այլ նաև նույն կերպ ազատում էր համապատասխան պաշտոններից:

Վերը նշվածը, կարծում ենք, հիմք է տալիս արձանագրելու, որ ՀՀ կիսանախագահական կառավարման մոդելում Նախագահի և Ազգային ժողովի փոխհարաբերությունների բոլոր հիմնական ոլորտներում հավասարակշռությունը խախտված էր: Հանրապետության Նախագահին վերապահված լիազորությունները նրան Ազգային ժողովի վրա ներգործելու լայն հնարավորություններ էին տալիս, վերջինիս մոտ համապատասխան զսպումների բացակայության կամ անարդյունավետության պայմաններում:

Վերլուծենք Նախագահ-կառավարություն փոխհարաբերությունների սահմանադրաիրավական կարգավորման առանձնահատկությունները: Ինչպես արդեն նշել ենք, կառավարության ձևավորման և հրաժարականի գործընթացներում Հանրապետության Նախագահի վճռորոշ դերը որևէ կասկած չի հարուցում: Գործնականում Նախագահին վերապահված էին այնպիսի լիազորություններ, որոնք նրան հնարավորություն էին ընձեռնում, ցանկության դեպքում, ընդհանրապես անտեսել այդ հարցերում Ազգային ժողովի դիրքորոշումները:

Նույնն է իրավիճակը նաև կառավարության կողմից իր գործառույթները իրականացման բնագավառում:

Գործադիր իշխանության իրականացման ոլորտում Նախագահի և կառավարության դերը բացահայտելու համար անհրաժեշտ է համակարգային վերլուծության ենթարկել այդ ոլորտը կարգավորող հետևյալ փոխկապակցված սահմանադրական դրույթները. ա) «...կառավարության լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը վարչապետի ներկայացմամբ սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով» (հոդվ. 85); բ) «Կառավարության նիստերը հրավիրում և վարում է Հանրապետության Նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ վարչապետը: Կառավարության որոշումներն ստորագրում է վարչապետը, վավերացնում՝ Հանրապետության Նախագահը»(հոդվ.86); գ) «Վարչապետը ղեկավարում է կառավարության ընթացիկ գործունեությունը և համակարգում է նախարարների աշխատանքը» (հոդվ. 87):

Արդեն այն հանգամանքը, որ Հանրապետության Նախագահն էր սահմանում կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը նրան տալիս էր կառավարության ամբողջ քաղաքականության որոշման և իրագործման վրա ներազդելու շատ արդյունավետ լծակներ: Այսպես՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու մասին» Հանրապետության Նախագահի 1995 թվականի հուլիսի 25-ի հրամանագրով սահմանված կարգի 15-րդ կետի համաձայն «Կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են Կառավարության անդամները»[12]:

[12] ՀՀ ԱժՏ 1995 / 1-2.

Գործնականում որևէ իրավական խոչընդոտ գոյություն չուներ սահմանելու համար, որ կառավարության քննարկմանը հարցեր ներկայացնում են ոչ թե կառավարության անդամները, այլ Նախագահի աշխատակազմի ղեկավարը և այդ դեպքում կառավարության քաղաքականության ու գործունեության բովանդակության մշակման կենտրոնը կտեղափոխվեր Հանրապետության Նախագահի աշխատակազմ: Այստեղ նույնպես՝ մյուս շատ դեպքերի նման կիսանախագահական կառավարման մոդելի գործառնության առանձնահատկությունները մեծ չափով պայմանավորված էին սուբյեկտիվ գործոնով՝ Հանրապետության Նախագահի անձնական հատկանիշներով: Այդպիսով, Հանրապետության Նախագահը կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանելու միջոցով հնարավորություն ուներ ներազդելու կառավարության քաղաքականության մշակման և իրականացման գործընթացների վրա:

Սակայն գործնականում, Նախագահի հրամանագրով ոչ միայն հաստատվում ու փոփոխության էր ենթարկվում կառավարության կառուցվածքը և սահմանվում էին կառավարության գործունեության բովանդակությունը կանխորոշող ընթացակարգային նորմեր, այլև ամրագրվում էին վարչապետի, կառավարության անդամների, ինչպես նաև կառավարության կառուցվածքի մեջ չմտնող գործադիր իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց գործառույթներ և լիազորություններ՝ սահմանվում էին դրանց իրավական կարգավիճակները:

Այսպես՝ Կարգը 2-րդ կետով սահմանված էին նախարարների գործառույթները՝ ղեկավարում են համապատասխան նախարարությունները կամ համակարգում են պետական կառավարման առանձին բնագավառների գործունեությունը: 3-րդ կետի համաձայն կարգը «սահմանում է Կառավարության գործունեության կազմակերպման... բնագավառում Կառավարության և Վարչապետի իրավունքների սահմանազատման և դրանց առնչությամբ ծագած մյուս հարաբերությունների կարգավորման հիմունքները»:

Կարգի 73-րդ կետով վարչապետին վերապահված էին մի շարք կոնկրետ՝ ոչ ընթացակարգային բնույթի, լիազորություններ՝ ա) նախարարությունների, պետական կառավարման մյուս հանրապետական մարմինների կանոնադրությունների, կառուցվածքի, նախարա-

րությունների կոլեգիաների կազմի և կենտրոնական ապարատի թվաքանակի հաստատում, բ) կառավարության պահուստային ֆոնդի օգտագործում, գ) նախարարների տեղակալների, կառավարության կառուցվածքի մեջ չընդգրկված պետական կառավարման հանրապետական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների նշանակում, և այլն:

Ավելին՝ Կարգի 46-րդ կետով՝ «Վարչապետը հրավիրում և վարում է Կառավարության հերթական և արտահերթ նիստերը...», Հանրապետության Նախագահը իր սահմանադրական լիազորությունը (հոդվ. 86), ըստ էության, վերալիազորել էր վարչապետին:Վարչապետը Հանրապետության Նախագահի հրամանագրով ստացավ լիազորություն, որն Սահմանադրությամբ վերապահված էր հենց Հանրապետության Նախագահին: Միայն այս հանգամանքը ակնառու կերպով ցույց է տալիս Նախագահի կողմից կառավարության գործունեության կարգը սահմանելու լիազորության իրականացման հսկայական ռեսուրսները՝ կառավարության ամբողջ գործունեության վրա ներգործելու առումով:

Այդպիսով՝ կարելի է եզրահանգել, որ գործադիր իշխանության իրականացման բնագավարի հարաբերությունների կարգավորմանն ուղղված սահմանադրական նորմերի հակիրճ և ոչ ամբողջական ձևակերպումների հետևանքով, այդ հարաբերությունների կարգավորումը հիմնականում իրականացվում էր Հանրապետության Նախագահի հրամանագրով և Հանրապետության Նախագահը ուներ սեփական հայեցողությամբ գործադիր իշխանության ոլորտի կարևորագույն հարաբերությունները կարգավորելու լայն հնարավորություններ:

Կիսանախագահական կառավարման կոնկրետ մոդելների առանձնահատկությունները էականորեն պայմանավորված են նաև կառավարության կողմից որոշումների ընդունման կարգից: Այդ մոդելների մեծամասնությունում՝ ներառյալ ՀՀ կիսանախագահական կառավարման մոդելը, կառավարությունը գործադիր իշխանության կոլեգիալ մարմին է, որի գործառույթների իրականացվում են, առաջին հերթին, կոլեկտիվ որոշումների ընդունման ձևով: Կարևոր է հաշվի առնել, որ Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանված չէին կառավարության նիստերում քննարկվող հարցերի շրջանակը և այդ

հարցերի քննարկման արդյունքում ընդունվող որոշումների իրավաբանական բնույթը:

Քննարկվող հարցերի շրջանակը հստակեցված էր Հանրապետության Նախագահի 1995թվականի հուլիսի 27-ի հրամանագրի 16-րդ կետով, որով նախ տարբերակվում են երկու բնույթի քննարկվող հարցեր՝ օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում պահանջող և չպահանջող հարցեր: Նույն կետով տրվում էին նաև կառավարության քննարկմանը ենթակա օրենսդրական և ենթաօրենսդրական լուծումներ պահանջող հարցերի ներկայացման ձևերը. Նախագահի իրավասության հարցերով՝ հրամանագրերի կամ կարգադրությունների ձևով, Կառավարության և վարչապետի իրավասության հարցերով՝ համապատասխանաբար Կառավարության որոշման և վարչապետի որոշման նախագծերի ձևով, Ազգային ժողովում Կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքի իրականացման հարցերով՝ համապատասխան օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի ձևով:

Օրենսդրական և ենթաօրենսդրական լուծում չպահանջող հարցերը կառավարության քննարկմանն կարող էին ներկայացվել հաշվետվությունների, զեկուցագրերի, առաջարկությունների և գործնականում ընդունված և օրենսդրության պահանջներին չհակասող այլ ձևերով:

Կարգի 53-րդ կետի համաձայն օրակարգի յուրաքանչյուր հարցի վերաբերյալ կառավարությունը ընդունում է որոշումներ: Այստեղից բխում է այն եզրահանգումը, որ կառավարության նիստերում կարող են ընդունվել նորմատիվ-իրավական ակտեր (կառավարության որոշումներ), հավանություն տրվել այլ մարմինների կողմից ընդունվելիք նորմատիվ-իրավական ակտերի նախագծերին (Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, ինչպես նաև օրենքների և Ազգային ժողովի որոշումների) ինչպես նաև անհատական իրավական ակտեր և նույնիսկ՝ քաղաքական կամ այլ բնույթի ոչ իրավական ակտեր: Դրանք բոլորը վավերացվում են Հանրապետության Նախագահի կողմից, որի արդյունքում ձևավորվում է այնպիսի մի իրավիճակ, երբ կառավարության ցանկացած որոշում (այդ թվում նախարարների և գործադիր իշխանության այլ հանրապետական մարմինների ղեկավարների հաշվետվությունները, կառավարության կողմից ցանկա-

ցած զեկուցագրի կամ առաջարկների կապակցությամբ ընդունված կառավարության որոշումները) առանց Հանրապետության Նախագահի վավերացման իրավաբանական ուժ չէին կարող ստանալ:

Այդ որոշումների շարքում հատկապես կարևորվում են Նախագահի կողմից վավերացվող կառավարության այն որոշումները, որոնք ընդունվում են օրենքների և Ազգային ժողովի որոշումների նախագծերի ձևով ներկայացված հարցերի քննարկման արդյունքում: Այս տիպի որոշումների վավերացման լիազորությունը Հանրապետության Նախագահի համար Ազգային ժողովի օրենսդրական քաղաքականության վրա ներգործելու լրացուցիչ միջնորդավորված լծակ էր հանդիսանում:

Բանն այն է, որ Սահմանադրության 75-րդ հոդվածով կառավարության օրենսդրական լիազորության ձևակերպման մեջ տեղ էին գտել մի շարք լրացուցիչ իրավազորություններ, որոնք «օրենսդրական նախաձեռնություն» հասկացության պարտադիր տարրեր չեն:

Իրավաբանական գրականության մեջ հաճախ տրվում է օրենսդրական նախաձեռնության իրավունքի այնպիսի բնորոշում, որն լրիվությամբ չի արտահայտում այդ իրավունքի բովանդակությունը: Մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք» դասագրքում ձևակերպված է այդ հասկացության հետևյալ սահմանումը՝ «օրենսդրական նախաձեռնության իրավունքը նշանակում է Ազգային ժողովի քննարկմանը օրինագիծ ներկայացնելու իրավունք»[13]: Ակնհայտ է, որ այս բնորոշումը չի համապատասխանում «չկա իրավունք՝ առանց պարտականության և պարտականություն՝ առանց իրավունքի» դասական իրավաբանական աքսիոմային:

Բովանդակային առումով ավելի ճիշտ է այն մոտեցումը, որի համաձայն «օրենսդրական նախաձեռնությունն օրենքի նախագծի առաջադրումն է ՀՀ բարձրագույն օրենսդրական մարմնի քննարկմանը: Օրենսդրական նախաձեռնության իրավունքը ենթադրում է, որ նրա սուբյեկտների կողմից ներկայացվող օրենքի նախագծերը ՀՀ Ազգային ժողովի կողմից ենթակա են պարտադիր քննարկման, սակայն ոչ պարտադիր ընդունման համար»[14]:

[13] Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2012, էջ 614:

[14] Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 741-742:

Սահմանադրության 75-րդ հոդվածով կառավարության օրենսդրական նախաձեռնության իրավունքին ավելացված են մի շարք կարևոր իրավազորություններ: Մասնավորապես, կառավարությունը՝ սահմանում է իր ներկայացրած օրենքների քննարկման հաջորդականությունը և կարող է պահանջել, որ դրանք քվեարկության դրվեն իր համար ընդունելի ուղղումներով, իր ներկայացրած օրենքի նախագծի վերաբերյալ կարող է դնել իր վստահության հարցը և եթե Ազգային ժողովը չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշում, վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված: Բացի դրանից՝ կառավարության որոշմամբ անհետաձգելի համարվող օրենքի նախագիծը Ազգային ժողովը քննարկում և քվեարկում մեկամսյա ժամկետում; պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերը ավելացնող օրենքի նախագիծը Ազգային ժողովը քննարկում է միայն կառավարության եզրակացությամբ:

Ազգային ժողովի օրենսդրական գործունեության վրա ներգործելու կառավարության այս լծակները, Հանրապետության Նախագահի կողմից կառավարության համապատասխան որոշումները վավերացնելու լիազորության ուժով, միջնորդավորված ձևով փաստացի վերածվում էին Նախագահի լծակների:

Այդպիսով՝ կառավարության ձևավորման և հրաժարականի կարգը, ինչպես նաև կառավարության կառուցվածքը և գործունեության կարգը սահմանող իրավադրույթների համակարգային վերլուծության արդյունքներով կարելի է հանգել այն ընդհանուր եզրակացության, որ Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելը՝ գործադիր իշխանության գործառույթների բնագավառում, ավելի շատ ընդհանրություններ ուներ ամերիկյան տիպի նախագահական կառավարման մոդելի, քան դասական կիսանախագահական կառավարման մոդելների հետ: Այդ ընդհանրություններն են՝ Նախագահի կողմից սեփական հայեցողությամբ կառավարության ձևավորումը և հրաժարականի հարցի լուծումը, կառավարության գործունեության կարգի սահմանումը, կառավարության կողմից ընդունվող որոշումների նկատմամբ այնպիսի մանրակրկիտ վերահսկողությունը, որի արդյունքում կառավարության ցանկացած որոշում ավելի շատ Հանրապետության Նախագահի, քան կառավարության և վարչապետի, կամաարտահայտություն է հանդիսանում:

Ամեն դեպքում, կառավարության կողմից ընդունվող ցանկացած որոշում չէր կարող իրավաբանական ուժ ստանալ առանց Հանրապետության Նախագահի վավերացման: Ուստի հիմնավոր է պրոֆեսոր Ա.Հարությունյանի այն դիտարկումը, որ հետտոտալիտար հասարակությունում, որտեղ ժողովրդավարական ինստիտուտները դեռևս հասունացած չեն, ըստ էության (ոչ ֆորմալ իրավաբանորեն, այլ փաստացի), նախագահը ղեկավարում է գործադիր իշխանությունը: Սակայն ի լրումն դրան՝ ի տարբերություն նախագահական մոդելի, կիսանախագահական մոդելը այդ ինստիտուտին տալիս է նաև որոշ լրացուցիչ լիազորություններ (խորհրդարանի արձակում և այլն), որոնք տրամաբանորեն բխում էին նրա արբիտրի գործառույթից և որոշակի չափով այդ ինստիտուտը երեք իշխանություններից վեր էր:[15]

Հայաստանի Հանրապետության կիսանախագահական կառավարման մոդելի ուսումնասիրությունը չի համապատասխանի գիտական հետազոտման լրիվության պահանջներին, առանց Նախագահ-դատական իշխանություն հարաբերությունների իրավական կարգավորման առանձնահատկությունների բացահայտման:

Մինչև 1995 թ. Սահմանադրության ընդունումը դատական իշխանության կառուցվածքը, կազմավորման և գործառնության կարգերի էական փոփոխությունների չէին ենթարկվել: Հիմնականում պահպանվել էին այդ բնագավառի դեռևս խորհրդային ժամանակաշրջանի իրավակարգավորումները:

Ավելին, ԽՍՀՄ փլուզումից հետո վերացավ այդ համակարգի կարևոր օղակներից մեկը՝ ԽՍՀՄ Գերագույն դատարանը, որի արդյունքում Հանրապետությունում գործում էր երկօղակ դատական համակարգ՝ շրջանային (քաղաքային) ժողովրդական դատարաններ և ՀՀ Գերագույն դատարան, որին վերապահված էին մեկ դատական ատյանում միմյանց հետ անհամատեղելի դատական գործառույթներ: Գերագույն դատարանը գործեր էր քննում վերաքննության և վճռաբեկության կարգով, իսկ որոշ դեպքերում հանդես էր գալիս որպես առաջին ատյանի դատարան:

Սահմանադրության ընդունումից հետո Հանրապետությունում ստեղծվեց նոր՝ արդարադատության պահանջներին ավելի համապա-

---

15 Տե՛ս А. Арутюнян, նշված աշխ. էջ 105.

տասխանող դատական համակարգ՝ առաջին ատյանի դատարաններ, վերաքննիչ դատարաններ և ՀՀ վճռաբեկ դատարան: Դրանով իսկ դատական համակարգի կառուցվածքը համապատասխանեցվեց դատական գործառույթներին՝ քննություն առաջին ատյանով, վերաքննություն և գործերի վերանայում վճռաբեկության կարգով: Նախատեսվեց նաև հատուկ իրավասության դատարանների համակարգի ստեղծում՝ տնտեսական, զինվորական և այլ դատարաններ: Այդպիսով իրականացվեց դատական իշխանության մարմինների էական արդիականացում:

Սակայն այս բնագավառի կարևորագույն խնդիրը՝ դատական իշխանության անկախության ապահովվումը, որից և մեծ չափով կախված է կառավարման կոնկրետ մոդելի ընդհանուր գնահատականը, այդպես էլ չստացավ հետևողական լուծում:

Սահմանադրության 94-րդ հոդվածով դատական մարմինների անկախության երաշխավոր հռչակվեց Հանրապետության Նախագահը, որը գլխավորում էր արդարադատության խորհուրդը: Նույն հոդվածի համաձայն արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը խորհրդի փոխնախագահներն էին: Միայն սահմանադրական այս դրույթների ուժով դատական իշխանության անկախության ապահովումը դառնում էր խնդրահարույց:

Նախ ակնհայտ է, որ դատական իշխանության անկախությունը կարող է արդյունավետ երաշխավորվել ոչ թե պետական իշխանության համակարգի մեկ այլ ինստիտուտի կողմից, այլ Սահմանադրությամբ և օրենքներով: Սահմանադրության 94-րդ հոդվածի այսպիսի կարգավորումը շեշտակի ուժեղացնում էր սուբյեկտիվ գործոնի՝ Հանրապետության Նախագահի անհատական հատկանիշների դերը դատական իշխանության անկախության ապահովման բնագավառում:

Դատական իշխանության անկախության երաշխավորման համար Հանրապետության Նախագահը պետք է օժտված լիներ համապատասխան իրավական գործիքներով՝ ներառյալ հենց այդ իշխանության նկատմամբ կիրառվող գործիքների, իսկ այդ գործիքները տեսականորեն կարող էին օգտագործվել տրամաբանորեն հակադիր նպատակներով՝ ինչպես դատական իշխանության անկախության երաշխավորման, այնպես էլ այդ համակարգը նեղ եսասիրական շահերին

(անձնական, խմբակային և այլն) և սեփական ինքնակամության ենթարկելու նպատակներով:

Խնդրահարույց էր նաև տվյալ սահմանադրական հոդվածում զետեղված դրույթը, որի համաձայն արդարադատության խորհրդի փոխնախագահներն էին հանդիսանում գործադիր իշխանության երկու ներկայացուցիչներ՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը, ինչի արդյունքում արդարադատության խորհրդի ամբողջ «ղեկավար կազմը» բաղկացած էր դատական իշխանության համակարգից դուրս գտնվող պաշտոնյաներից: Այդպիսի վիճակը որոշ չափով մեղմացվում էր Սահմանադրության 95-րդ հոդվածի 7-րդ կետում ամրագրված դրույթով, որի համաձայն դատավորին պատասխանատվության ենթարկելու հարցերը քննելիս արդարադատության խորհրդի նիստերը վարում էր վճռաբեկ դատարանի նախագահը, իսկ Հանրապետության Նախագահը, արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը այդ նիստերին չէին մասնակցում: Սակայն սա ընդամենը կիսալուծում էր, քանի որ դատավորի լիազորությունները դադարեցնելու, դատավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցի քննարկման ժամանակ նիստը կարող էր վարել հենց այն սուբյեկտը, որին և ներկայացվում են համապատասխան առաջարկությունները՝ Հանրապետության Նախագահը, նիստին կարող էին մասնակցել (կամ, նույնիսկ, վարել) նաև գործադիր իշխանության նշված երկու պաշտոնյաները:

Այս հանգամանքը վկայում է, որ Սահմանադրությամբ ամրագրված էին դատական իշխանության ոլորտը կարգավորող հակասական և ոչ հետևողական մոտեցումներ, որոնք հիմնված չէին հստակ ձևակերպված և միասնական հայեցակարգի վրա:

Կիսանախագահական կառավարման Հայաստանի մոդելում ամբողջ դատական կորպուսը (բացառությամբ ասիմանադրական դատարանի ինը անդամներից հինգի) նշանակվում էր Հանրապետության Նախագահի կողմից: Նա նշանակում էր սահմանադրական դատարանի չորս անդամներ և նախագահ (կետ 10-րդ), Արդարադատության խորհրդի առաջարկով՝ այսինքն առանց խորհրդարանի մասնակցության, նշանակում էր վճռաբեկ դատարանի և նրա պալատնե-

րի, վերաքննիչ, առաջին ատյանի և այլ դատարանների նախագահներին և դատավորներին (կետ 11):

Հանրապետության Նախագահը ոչ միայն ձևավորում էր ողջ դատական կորպուսը, այլև կարող էր սահմանադրական դատարանի եզրակացության հիման վրա դադարեցնել սահմանադրական դատարանի՝ իր նշանակած անդամների լիազորությունները կամ համաձայնություն տալ կալանավորել, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկել նրան (կետ 11) և նույն գործողությունները կատարել մյուս բոլոր դատավորների կապակցությամբ՝ արդարադատության խորհրդի առաջարկությամբ (հոդվ. 55, կետ 11 և հոդվ. 95 կետ 6): Եթե սահմանադրական դատարանի անդամի դեպքում այդ դատարանի եզրակացության անհրաժեշտությունը կարելի է դիտարկել որպես սահմանադրական դատարանի անդամի՝ Հանրապետության Նախագահի կողմից հնարավոր կամայականությունից, պաշտպանելու բավականին արդյունավետ երաշխիք, ապա մյուս դատավորների դեպքում սահմանադրորեն սահմանված կարգը վերը նշված պատճառներով չէր կարող հանդիսանալ իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց:

Արդեն քննարկված հանգամանքներին ավելացնենք նաև այն, որ 95-րդ հոդվածի կարգավորումներով հենց Հանրապետության Նախագահը կամ նրան, ըստ էության ենթակա, գործադիր իշխանության ներկայացուցիչներից որևէ մեկը (արդարադատության նախարարը կամ գլխավոր դատախազը) պետք է վարեին արդարադատության խորհրդի այն նիստերը, որոնց ժամանակ որոշվում էր դատավորի նկատմամբ համապատասխան սանկցիա կիրառելու մասին Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնելու հարցը:

Ավելին՝ արդարադատության խորհրդի տասնչորս անդամ, որոնցից երկուսը՝ իրավաբան գիտնական, ինը՝ դատավոր, երեքը՝ դատախազ, նշանակվում էին Հանրապետության Նախագահի կողմից: Ճիշտ է, խորհրդի դատավոր անդամի թեկնածուները առաջադրվում էին դատավորների ընդհանուր ժողովի կողմից՝ գաղտնի քվեարկությամբ: Սակայն դատավորների ընդհանուր ժողովը յուրաքանչյուր տեղի համար առաջադրում էր երեք թեկնածու և Հանրապետության Նախագահը ցանկալի անձանց ընտրելու բավականին լայն հնարավորություններ ուներ: Ինչ վերաբերում է խորհրդի դատախազ անդամնե-

րին, ապա դրանց թեկնածությունները առաջադրում էր Նախագահի կողմից նշանակված գլխավոր դատախազը:Այդպիսով՝ արդարադատության խորհրդի կազմի մեջ մտնում էին Հանրապետության Նախագահը, նրա կողմից պաշտոնի նշանակված գործադիր իշխանության երկու ներկայացուցիչներ՝ արդարադատության նախարարը և գլխավոր դատախազը (ի պաշտոնե) և նրա կողմից նշանակված 14 այլ անդամներ:

Հատկապես հակասական էր արդարադատության խորհուրդում Հանրապետության Նախագահի կարգավիճակը: Ինչպես նշել էր հանրաճանաչ իրավաբան, պրոֆեսոր Վ.Նազարյանը, «Նախագահը՝ որպես արդարադատության խորհրդի նախագահ, մեկ ձեռքով ստորագրում է դատավորին նշանակելու առաջարկությունը, այնուհետև գնում է մեկ այլ սենյակ և մյուս ձեռքով, արդեն որպես Հանրապետության Նախագահ, ստորագրում է դատավորի նշանակման հրամանագիրը»[16]:

Վերը նշվածը, կարծում ենք, բավարար հիմքեր է տալիս արձանագրելու, որ դատական իշխանության թևի հետ հարաբերությունների ոլորտում նույնպես Հանրապետության Նախագահը օժտված էր լայն լիազորություններով, որոնք հակակշռված չէին այլ մարմիններին (նախ և առաջ՝ խորհրդարանին) վերապահված՝ զսպումների մեխանիզմներով: Այս ոլորտում նույնպես անհիմն մեծ տեղ էր զբաղեցնում սուբյեկտիվ գործոնը՝ Հանրապետության Նախագահի անձնական հատկանիշները:

Ընդհանրացնելով սույն հետազոտության մեջ շարադրված նյութը, իրավակարգավորումների և փաստացի իրավիճակների վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ (մինչև 2005 թվականին կատարված փոփոխությունները) և դրա դրույթների համապատասխան ձևավորված օրենսդրությամբ ամրագրված կիսանախագահական կառավարման մոդելում նախագահական իշխանությունը հանդիսանում էր իշխանության երեք թևերի համակարգից դուրս՝ հատուկ իշխանական ինստիտուտ, որը ծավալվում էր պետական իշխանության կազմակերպման և իրականաց-

---

16 Մեջբերումը Վ.Պողոսյան, Հ.Թովմասյան. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ. համառոտ պարզաբանումներ. Երևան, 2005, էջ 20:

ման բոլոր ուղղություններով՝ կառավարության կազմավորման և հրաժարականի, դրա կառուցվածքի և գործունեության կարգի սահմանման, գործադիր իշխանության իրականացման (այստեղ Նախագահին էին վերապահված գործադիր իշխանության կարևորագույն իրավազորությունների համալիր); նորմաստեղծ գործունեության և Ազգային ժողովի հետ հարաբերություններում, դատական համակարգի ձևավորման, պետական ապարատի կազմակերպման և գործունեության, և այլն[17]: Դրա հետ միասին Հանրապետության Նախագահի լիազորությունները՝ մյուս բոլոր իշխանությունների փոխհարաբերություններում հավասարակշռված չէին իշխանության մյուս թևերի կառույցներին վերապահված՝ Նախագահին «զսպող և հակակշռող» լիազորություններում:

Միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ նույնն էր իրավիճակը նաև բոլոր մյուս հետխորհրդային կիսանախագահական հանրապետություններում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում: Ինչպես արդարացիորեն նշում է պրոֆեսոր Ա.Հարությունյանը հետխորհրդային նախագահը՝ պետության գլուխը, գործնականում ունի անսահմանափակ իշխանություն[18]: Հետխորհրդային հասարակություններում ստեղծում են նախագահական կամ կիսանախագահական համակարգեր, սակայն փաստացի ստանում են սուպերնախագահական ռեժիմ; ստեղծում են խորհրդարանական համակարգ՝ ստանում խորհրդարանական մեծամասնության դիկտատուրա: Հետևաբար անհրաժեշտ է գտնել նոր մեխանիզմներ, որոնք թույլ չեն տա զսպումների և հակակշիռների մեխանիզմից գլորում դեպի գերակշռումների համակարգ:[19]Հատկանշական է, որ պրոֆեսոր Մ.Ա. Կրասնովը կոնկրետ փաստերի վերլուծության հիման վրա գալիս է այն եզրակացության, որ բոլոր այլ կիսանախագահական հանրապետություններից Բելառուսում և Ռուսաստանի Դաշնությունում կառավարության ձևավորման ընթացքում նախագահին տրված է առավել լայն քաղաքական հայեցողության հնարավորություն: Այդ երկրներում կա-

---

17 Տե՛ս Шмавонян Г.А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении//Государство и право, 2000, N1, с. 88.

18 Տե՛ս Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности. М., 2013, с.103.

19 Նույն տեղում, էջ 104:

ռավարությունը սոսկ նախագահական իշխանության գործիք է և լրիվ կախված է վերջինից, այլ ոչ թէ խորհրդարանում ուժերի հարաբերակցությունից[20]: Ուստի կարելի է պնդել, որ երիտասարդ ժողովրդավարության պետություններում կիսանախագահական կառավարման այդպիսի մոդելի ձևավորումը ավտորիտար քաղաքական ռեժիմից դեպի ժողովրդավարություն անցման պատմական գործընթացի անխուսափելի փուլ է, քանի դեռ չեն գտնվել Ա.Հարությունյանի կողմից նշված նոր մեխանիզմները:

Հատկանշական է, որ քննարկվող կառավարման հայաստանյան մոդելը որոշ հեղինակներ անվանում են գերնախագահական,[21] իսկ նույնանման ռուսաստանյան մոդելը գնահատվում է որպես «նախագահական գերիշխանություն»[22]:

Սակայն պետք է արձանագրել, որ քննարկվող հայաստանյան կառավարման մոդելը չի կարելի բնութագրել որպես սուպերնախագահական: Գրականության մեջ առանձնացվում են սուպերնախագահական կառավարման մոդելների հետևյալ հատկանիշները՝ դրանք սովորաբար հաստատվում են զինվորական հեղաշրջումների արդյունքում; նախագահը իր լիազորությունները ստանում է ոչ լեգիտիմ եղանակով (որպես հեղաշրջման առաջնորդ կամ խունտայի ղեկավար), նախագահը օժտվում է լայնածավալ լիազորություններով՝ օրենսդիր և դատական իշխանությունների կողմից չափազանց թույլ վերահսկողության պայմաններում, նախագահի լիազորությունները իրացվում են հարատև արտակարգ դրության պայմաններում, որի ժամանակ վերացվում կամ էականորեն սահմանափակվում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պահպանության սահմանադրական երաշխիքները և իրականացվում են ընդդիմության դեմ զանգվածային բռնություններ[23]:

ՀՀ կիսանախագահական կառավարման քննարկվող մոդելի համար յուրահատուկ էր միայն նշված հատկանիշներից մեկը՝ նախագահը օժտված էր լայնածավալ լիազորություններով՝ օրենսդիր և դատա-

---

[20] Տե՛ս Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, с. 17.

[21] Арутюнян А,. Институт Президента Респиблики Армения, էջ 109:

[22] Окуньков Л.А. Президент Российской Федерации. М., 1996, с. 2.

[23] Տե՛ս Конституционное право зарубежных стран. М.,2008, с. 149

կան իշխանությունների կողմից չափազանց թույլ վերահսկողության պայմաններում: Ուստի, կարծում ենք, որ այդ մոդելը առավել նույնական կարելի է բնորոշել ոչ թե «սուպերնախագահական», այլ «նախագահակենտրոն»:

*Հիմնաբառեր.* պետական կառավարման ձև, կիսանախագահական հանրապետություն, կիսանախագահական կառավարման մոդել, սուպերնախագահական, նախագահակենտրոն, սահմանադրական գործընթաց:

### Գրականություն


1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 1054.
2. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Երևան, 2012, էջ 736,
3. Վ.Ստեփանյան. Կառավարման խորհրդային ձևից՝ դեպի կիսանախագահական հանրապետություն. // Օրենք և իրականություն, 2003, N 19-20, էջ 1-2:
4. Վ.Պողոսյան, Հ.Թովմասյան. Հայաստանի Հանրապետության սահմանադրական փոփոխությունների նախագիծը. Համառոտ պարզաբանումներ. Երևան, 2005:
4. Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность., М., 1997, с. 156-157:
5. А. Арутюнян. Институт президента Республики Армения. Ереван, 1996, с. 103.
6. Арутюнян А. Конституционализм: проблемы постсоветской реальности.М., 2013, с.256.
7. Баглай М.В. Конституционное право РФ. М., 1997, с. 545.
8. Конституционноеправозарубежныхстран. М.,2008, с. 645,
9. Краснов М.А. Россия как полупрезидентская республика: проблема баланса полномочий // Государство и право, 2003, с. 345.
10. Ноздрачев А.Ф. Конституционные основы исполнительной власти в РФ // Исполнительная власть в РФ. М.,1996, с. 4-5;

11. Окуньков Л.А. Президент РФ. Конституция и политическая практика. М.,1996, с. 1-21;
12. Окуньков Л.А. Президент Российской Федерации. М., 1996, с. 2.
13. Шмавонян Г.А. Президентская власть и разделение властей в полупрезидентской республике: опыт Армении // Государство и право., 2000, N 1, с. 87-88.
14. Чиркин В.Е. Президентская власть // Государство и право, 1997, N 5,с.15

## THE PRESIDENT-CENTERED MODEL OF GOVERNMENT ACCORDING TO THE CONSTITUTION OF THE REPUBLIC OF ARMENIA: HISTORICO-LEGAL ANALYSIS IN THE CONTEXT OF CONSTITUTIONAL DEVELOPMENTS BETWEEN YEARS 1995 AND 2005

**Aleksandr Harutyunyan**
Applicant of the Public Administration Academy of the Republic of Armenia

### Summary

The article is devoted to one of the most important issues of constitutional law of the Republic of Armenia, which is the analysis of the problems of the semi-presidential system of government. Stressing out the importance of the modeling of the semi-presidential system of government, as well as identifying the characteristics and features of this model from the point of view of relationship between different government agencies and the mechanisms of checks and ballances betwenn them, the author concluded that during the first phase of constitutional developments in Armenia (1995-2005) the semipresidential government system can be described as ''president-centered''.

*Keywords:* State form of government, semi-presidential republic, semi-presidential form of government, superpresidential, president-centered, constitutional process.

# ПРЕЗИДЕНТОЦЕНТРИСТСКАЯ ФОРМА ПРАВЛЕНИЯ СОГЛАСНО КОНСТИТУЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ИСТОРИКО-ЮРИДИЧЕСКИЙ АНАЛИЗ В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РАЗВИТИЙ МЕЖДУ 1995-2005ГГ

**Александр Арменович Арутюнян**
Соискатель государственной академии управления РА

## Резюме

Статья посвящена одному из наиболее важных вопросов конституционного права Республики Армения: анализ проблем полу-президентской системы правления. Подчеркивая важность моделирования полу-президентской системы правления, а также определяя характеристики и особенности этой модели с точки зрения отношений между различными государственными органами и механизма сдержек и противовесов между ними, автор пришел к выводу, что в ходе первого этапа конституционного развития в Армении (1995-2005) полупрезидентскую систему правления можно охарактеризовать как "президентоцентристскую".

*Ключевые слова:* Форма правления, президентская республика, полупрезидентская республика, полупрезидентская форма правления, суперпрезидентский, президентоцентристский, конституционный процесс.

# ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

***Արփաշես Գագիկի Բեգլարյան***
*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ*

Հոդվածում անդրադարձ է կատարվել պետության տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն մեխանիզմներից մեկի՝ հարկային քաղաքականության հիմնախնդիրների վերլուծությանը:

Կարևորելով պետության հարկային քաղաքականության և հարկման ոլորտում պետության տնտեսական անվտանգության հարաբերակցության հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, ինչպես նաև բացահայտելով հարկային անվտանգության տարրերն ու գործառութային նշանակությունը՝ հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումները. որ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում հարկային քաղաքականությունը պետության տնտեսական անվտանգության կարևոր բաղադրիչներից մեկն է, որ հարկային անվտանգության սպառնալիքները բոլոր դեպքերում բացասաբար են անդրադառնում ոչ միայն տնտեսության վիճակի վրա, այլև կարող են ապակայունացնել տնտեսության ընդհանուր իրավիճակը, որ պետության տնտեսական անվտանգության կառուցվածքում բավականին պարզորոշ կերպով առանձնանում է հարկային ոլորտի հարաբերական ինքնուրույնությունը:

Պետության տնտեսական անվտանգության ապահովման համակարգում առանձնահատուկ տեղ ունեն հարկերը և հարկային քաղաքականությունը որպես շուկայական տնտեսության առանձնահատուկ ու հիմնարար բաղկացություն:

ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 11-րդ հոդվածով ամրագրված նորմի տրամաբանությունից հետևում է, որ սոցիալական շուկայական տնտեսությունը պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը: Թերևս, դա վերաբերում է նաև հարկային քաղաքականությանը, որը կարելի է բնութագրել որպես պետության տնտեսական միասնական տարածքում հարկման ընդհանուր գործընթացը կառավարող գործունեություն:

Անշուշտ, անհրաժեշտ է նկատել, որ պետության և հարկ վճարողի միջև հարկային հարաբերություններում հարկային քաղաքականության միջոցով բացահայտվում է ոչ միայն հարկման գործընթացի արդյունավետությունը, այլև՝ տնտեսական այն իրողությունները, որոնք ուրվագծում են պետության, հասարակության և անհատի իրավունքների ու շահերի պաշտպանվածության աստիճանը: Բնականաբար, խոսքը գնում է հարկման ոլորտում պետության տնտեսական անվտանգության մասին, որը պայմանականորեն անվանենք հարկային անվտանգություն[1]:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ սույն հետազոտության շրջանակում համակողմանի ու համալիր վերլուծության խնդիր չի առաջադրվել դիտարկել պետության տնտեսական անվտանգության ապահովման ընդհանուր մեխանիզմները, այլև հիմնական շեշտադրումը կատարվել է այդ մեխանիզմներից մեկի՝ հարկային քաղաքականության և հարկային անվտանգության փոխառնչությունների և հարաբերակցության սահմանների վրա:

Այս խնդրի լուծման մեջ հարկային քաղաքականության դերի լրիվ ու պարզորոշ պատկերացման համար կարևորվում է հարկման ոլորտում տնտեսական անվտանգության կամ հարկային անվտանգության վրա նախ և առաջ այդ քաղաքականության ազդեցության հիմնախնդիրների հետազոտությունը:

ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությամբ, որպես պետության, հասարակության, ընտանիքի և անհատի գոյության դեմ ուղղված ներքին սպառնալիք են դիտարկվել շուկայական տնտեսության կայացման և ֆինանսաբյուջետային կառավարման մարտահրավերները, այդ թվում՝ ստվերային տնտեսության և կանխիկ դրամաշրջանառության

---

[1] Հարկ է նշել, որ մասնագիտական գրականությունում քննարկվում է հարկային անվտանգությունը որպես ինքնուրույն գիտակարգ առանձնացնելու հարցը: Այսպես, պրոֆեսոր Ի.Ի. Կուչերովը «հարկային անվտանգություն» հասկացությունը դիտարկում է որպես հարկային համակարգի ու հարկային քաղաքականության վիճակ, երբ հարկերի գանձումների միջոցով ապահովված է պետության ու մունիցիպալ համայնքների անընդհատ և բավարար ֆինանսավորումը, նույնիսկ հարկային օրենսդրության խախտումների բացասական ներգործության և առկա սպառնալիքների պարագայում. Տես Кучеров И.И. Налоговые преступления М.: 2004. С. 63.

մեծ ծավալները, որոնք անմիջականորեն առնչվում են հարկային համակարգի ու քաղաքականության անարդյունավետության հետ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ հարկային քաղաքականության հետ հարաբերակցության առումով հարկային անվտանգության ապահովման որևէ խնդրի ամբողջական ու էական վերլուծությունը ենթադրում է վերջինիս բաղադրիչ տարրերի տարանջատում: Որպես այդպիսիք այստեղ խոսք կարող է գնալ անվտանգության օբյեկտների, անվտանգության սպառնալիքների, ինչպես նաև անվտանգության ապահովման սուբյեկտների մասին:

Մասնագիտական գրականության մեջ հարկային անվտանգության հիմնախնդիրներին են անդրադարձել առանձին հեղինակներ: Մասնավորապես, պրոֆեսոր Վ.Ի. Վոլխովսկին միանգամայն իրավացիորեն նշում է, որ «հարկային անվտանգության ապահովման խնդիրը նախ և առաջ պետության սոցիալ-տնտեսական օպտիմալացման հետ կապված խնդիրն է»[2]: Այսինքն՝ պետության տնտեսական ու ֆինանսական քաղաքականության հետ հարկային անվտանգության փոխկապվածության վերաբերյալ անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ հենց հարկային քաղաքականությունը և դրա արտահայտման ձևերն են որոշում տնտեսության զարգացման և ամբողջովին երկրի տնտեսավարման մեխանիզմների գերակայությունները: Դրանցում առկա որևէ թերի կամ ոչ ճիշտ հաշվարկները կամ վրիպումները բերում են ոչ միայն երկրի տնտեսական զարգացման տեմպերի անկմանը, այլև զգալի սոցիալական ծախսերի ավելացմանը:

Իրականում այս սպառնալիքներն ամենապարզորոշ ձևով են արտահայտվում գրեթե բոլոր զարգացող տնտեսություն ունեցող երկրներում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում: Դրա հետ մեկտեղ, նման մոտեցումը լավ է արտացոլում տնտեսության վիճակի երկրորդային գործոնները և կապված չէ հարկային անվտանգության օբյեկտների հետ՝ որպես տվյալ ոլորտում սպառնալիքի առաջացման հիմքերի հետ: Արդյունքում առանձին հեղինակների հետազոտություններում հիմնական շեշտը դրվում է պետության տնտեսության քրեականացման հիմնախնդրի և դրա նվազեցմանն ուղղված միջոցառում-

2 Волховский В. И. Налоговые органы и экономическая безопасность России: -М., 2000. С. 233.

ների վրա՝ հաշվի չառնելով, որ դա անարդյունավետ հարկային քաղաքականության արդյունք է[3]:

Նման մոտեցումը միանգամայն արդարացված է, քանի որ հարկային հանցագործությունները բացասաբար են ազդում պետության տնտեսական անվտանգության պաշտպանվածության վրա: Սակայն տնտեսական անվտանգության սպառնալիքների նման նեղ ընկալումը դժվարացնում է տնտեսության քրեականացման խորքային պատճառների բացահայտման ու դրանց կանխարգելման միջոցառումների իրականացումը:

Տնտեսության քրեականացման մասով հարկային անվտանգության խնդրի հետազոտման առկա մոտեցումներն, ըստ երևույթին, հետևանք են այն հետզոտությունների, որտեղ հեղինակները պատշաճ ուշադրություն չեն դարձնում հարկային անվտանգության բաղադրիչ տարրերի վրա, դրանք են՝ անվտանգության ապահովման օբյեկտները, շահերը, սպառնալիքները, համակարգը (մեխանիզմները):

Տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի խնդիրների վերլուծության ժամանակ պրոֆեսոր Դ.Պ. Օլեյնիկովը, որպես հարկային անվտանգության բաղադրիչ տարրեր, առանձնացրել է՝ տնտեսության ոլորտում պետական շահերը, պետական անվտանգության սպառնալիքները, ինչպես նաև հենց անվտանգության ապահովման համակարգը: Սակայն այստեղ անհրաժեշտ է նկատել, որ հեղինակը հիմնական շեշտադրումը դրել է տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի մասնագիտացված ծառայության գործունեության կատարելագործման վրա՝ ներառելով այդ ծառայության կազմակերպչական կառուցվածքի և իրավական կարգավորման վերաբերյալ առաջարկությունները[4]:

---

3 Խաչատրյան Ա. Հարկային իրավունք, Եր., 2003, Հարությունյան Վ. Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003, *Гизяц А. В.* Борьба с преступностью в системе обеспечения внутренней безопасности. М., 2011; *Крылов А.А.* Социально-экономические основы деятельности милиции в обществе рыночного типа: Автореф. дисс. докт. экон.наук.-М, 2008; *Никитин А. М.* Криминологические проблемы развития отнишений собственности при переходе к рынку: Автореф. дисс. канд. юрид.наук.-М, 2007;, *Чучаев А.* Преступность как угроза национальной безопасности.-Ульяновск, 2000 и др.

4 Олейников Д.П. Организационно-правовые основы деятельности правоохранительных органов по защите экономической безопасности государства. Автореферат дисс. на соиск. уч. степ. к.ю.н.-М., 2002.

Անկասկած, հարկային անվտանգության ապահովման խնդրի հետազոտման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետության հարկային համակարգը և հարկային քաղաքականությունը, որպես կանոն, խորքային ներգործություն են ունենում տնտեսական գրեթե բոլոր ոլորտների հարաբերությունների վրա, միաժամանակ, կարևորելով հարկային անվտանգության ապահովման անհրաժեշտությունը և դրա տարրերի՝ անվտանգության օբյեկտների, պետության, հասարակության ու անհատի շահերի, ինչպես նաև անվտանգության սպառնալիքների համակողմանի վերլուծությունը:

Նախ նկատենք, որ որպես հարկային անվտանգության օբյեկտ հանդես են գալիս հարկային հարաբերությունները, որոնք ծագում են պետության ու հարկ վճարողի միջև: Բնականաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ այդ հարաբերություններն ընդհանուր տեսքով առնչվում են ոչ միայն պետության, այլև՝ հարկ վճարողի տնտեսական շահերի հետ: Արդյունքում չի կարելի չհամաձայնվել այն պնդման հետ, որ շուկայական տնտեսության պայմաններում ձևավորված հասարակական հարաբերությունների զարգացումն ավելի ու ավելի արդիական է դարձնում մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանության ապահովման հարցը[5]:

Հարկային անվտանգության հաջորդ տարրը տնտեսական շահն է: Ընդհանուր առմամբ այդ եզրույթն անհրաժեշտ է ընկալել որպես պետության և հարկ վճարողի տնտեսական բարգավաճմանը նպաստող պայմանների ու պաշտպանության ապահովում, կենսագործունեության այնպիսի նյութական, հոգևոր և բարոյական հիմքերի բարելավում և պահպանում, որոնք համապատասխանում են մարդկանց սոցիալական ընդհանրացմանը[6]:

Սույն հետազոտության շրջանակում կարևոր է հարկային ոլորտի շահերի առանձնացումը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ հենց հարկային հարաբերությունների հիմնական սուբյեկտների շահերի հաշվառման պարագայում հնարավոր կլինի որոշել հարկային քաղաքականության իրականացման գերակա ուղղությունները:

---

5 Глебовсий В. И. Правое регулирование участия граждан в защите права частной собственности в Российской Федерации: Автореф. дисс. канд. юрид. наук. -М, 2001.

6 Абалкин Л.И. О национально-государственных интересах России // Вопросы экономики. 1996. № 2. С. 7.

Թերևս, այս խնդիրը նաև գործնական նշանակություն ունի այն առումով, որ այդ շահերի բնույթից կախված, պետք է որոշվի դրանց պաշտպանությանն առնչվող կոնկրետ միջոցառումների համալիրը:

Հարկային անվտանգության էության վերլուծությունը ենթադրում է դրա հաջորդ բաղադրիչ տարրի՝ տնտեսական անվտանգության սպառնալիքների դիտարկումը: Դրանք այն պայմանների ու գործոնների մի համախումբն է, որոնք վտանգ են ներկայացնում պետության, հասարակության և անհատի կենսական կարևորություն ունեցող տնտեսական շահերի համար:

Իհարկե, այդ շեշտադրումը, որ սպառնալիքները կապված են կենսական կարևորության շահերի հետ, ոչ միայն տերմինաբանական, այլ նաև գործնական նշանակություն ունի, քանի որ այն թույլ է տալիս պարզորոշ սահմանել հարկային անվտանգության էությունը՝ սահմանազատելով տնտեսական անվտանգության այլ սպառնալիքներից:

Այսպես, որպես կանոն, հարկային անվտանգության սպառնալիքների բնութագրերը կրում են ընդհանուր բնույթ: Սակայն, կարծում ենք, որ գիտական և գործնական կարևոր նշանակություն է ստանում այդ սպառնալիքների համակարգումը: Այդ իմաստով, հաշվի առնելով պետության, հասարակության և անհատի կենսական շահերի համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև հարկային քաղաքականության արդյունավետության վիճակի գնահատմանը, կարելի է առաջարկել հարկային սպառնալիքների հետևյալ թվարկումը. ա) հարկային հանցագործությունների, վարչական և հարկային իրավախախտումների զանգվածայնությունը, բ) հարկերի գանձման ցածր մակարդակը, գ) հարկային ծանրության բարձր մակարդակը, դ) հարկային մշակույթի ցածր մակարդակը, ե) հարկման սոցիալական անարդարությունը, զ) պետության ու վարչատարածքային միավորների անհամաչափ հարկավճարունակությունը և այլն:

Վերը թվարկած հարկային անվտանգության սպառնալիքները չեն կարող սպառիչ դիտվել, սակայն դրանք այն հիմնականներն են, որոնք հաստատում են հարկային անվտանգության ապահովման խնդրի լուծմանը համակողմանի մոտեցում ցուցաբերելու և արդյունավետ հարկային քաղաքականություն մշակելու ու իրականացնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ հարկային անվտանգության հիմնական տարրերի (օբյեկտների, շահերի, սպառնալիքների՝ դրանցում հարկային քաղաքականության տեղի ու դերի հաշվառմամբ) վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք ընդհանրացված եզրահանգումներ:

Առաջին՝ հարկային քաղաքականությունը պետության տնտեսական անվտանգության կարևոր բաղադրիչներից մեկն է:

Երկրորդ՝ հարկային անվտանգության սպառնալիքները բոլոր դեպքերում բացասաբար են անդրադառնում ոչ միայն տնտեսության վիճակի վրա, այլև կարող են ապակայունացնել տնտեսության ընդհանուր իրավիճակը:

Երրորդ՝ պետության տնտեսական անվտանգության կառուցվածքում բավականին պարզորոշ կերպով առանձնանում է հարկային ոլորտի հարաբերական ինքնուրույնությունը, ինչը թույլ է տալիս հարկային անվտանգությանն առնչվող հետազոտությունների ինքնուրույն իրականացման հնարավորություն:

Միաժամանակ, հարկային անվտանգության առանձնացումը, որպես ազգային անվտանգության ինքնուրույն տեսակ կարևոր գործնական նշանակություն ունի, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ հարկային քաղաքականությունն իրականացվում է ոչ թե ինքն իրեն՝ հենց այնպես, այլ որոշակի գործառույթների իրականացման համար (բյուջեի ձևավորում, տնտեսության կարգավորում, հարկային իրավախախտումների դեմ պայքար), որոնք որոշիչ նշանակություն ունեն հասարակության կայուն զարգացման համար:

*Հիմնաբառեր.* պետության հարկային քաղաքականություն, տնտեսական անվտանգություն, հարկային անվտանգություն, հարկային անվտանգության տարրեր՝ օբյեկտ, շահ, սպառնալիք:

**Գրականություն**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն 2015 թվականի փոփոխություններով, Եր., 2015, 94 էջ,
2. Խաչատրյան Ա. Հարկային իրավունք, Եր., 2003, 653 էջ,
3. Հարությունյան Վ. Հարկային քաղաքականությունը և նրա կատարելագործման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2003, 600 էջ,

4. Абалкин Л.И. О национально-государственных интересах России//Вопросы экономики. 1996. № 2. 434 էջ.
5. Волховский В. И. Налоговые органы и экономическая безопасность России: -М., 2000. 233 էջ,
6. Гизяц А. В. Борьба с преступностью в системе обеспечения внутренней безопасности. М., 2011, 443 էջ,
7. Глебовсий В. И. Правое регулирование участия граждан в защите права ча-стной собственности в Российской Федерации: Автореф. дисс. канд. юрид. наук. -М, 2001. 25 էջ,
8. Крылов А.А. Социально-экономические основы деятельности милиции в обществе рыночного типа: Автореф. дисс. докт. экон.наук.-М, 2008, 54 էջ,
9. Кучеров И.И. Налоговые преступления М.: 2004. 534 էջ,
10. Никитин А. М. Криминологические проблемы развития отнишений собственности при переходе к рынку: Автореф. дисс. канд. юрид.наук.-М, 2007, 23 էջ,
11. Олейников Д.П. Организационно-правовые основы деятельности правоохранительных органов по защите экономической безопасности государства. Автореферат дисс. на соиск. уч. степ. к.ю.н.-М., 2002. 23 էջ,
12. Чучаев А. Преступность как угроза национальной безопасности.-Ульяновск, 2000, 421 էջ:

## НАЛОГОВАЯ ПОЛИТИКА, КАК МЕХАНИЗМ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

**Арташес Гагикович Бегларян**
Соискатель Академии Государственного Управления РА

### Резюме

В статье описан один из важнейших механизмов обеспечения экономической безопасности государства – анализ основных задач налоговой политики.

Придавая важность основным задачам соотношения экономической безопасности государства в сферах налоговой политики государства и налогообложения, а также путям их решения, равно как выявляя элементы налоговой безопасности и функциональное значение, автор пришел к заключению, что в странах с рыночной экономикой налоговая политика является одним из важнейших компонентов экономической безопасности государства, а угрозы налоговой безопасности в любом случае отрицательно влияют не только на экономическое состояние, но и могут дестабилизировать общее состояние экономики, что в структуре экономической безопасности государства довольно определенным образом выделяет соотносительную самостоятельность налоговой сферы.

*Ключевые слова:* налоговая политика государства, экономическая безопасность, налоговая безопасность, элементы налоговой безопасности: объект, интерес, угроза.

## TAX POLICY AS A MECHANISM OF THE STATE ECONOMIC SECURITY PROVISION

**Artashes Gagik Beglaryan**
Fellow applicant of Academy of State Administration of RA

### Summary

One of the most important mechanisms of the state economic security provision is described in the article – analysis of the main tasks of tax policy.

Making a point of the main tasks of correlation of the state economic security in the fields of tax policy of the state and taxation, and also the ways of solution, as well as revealing the elements and functional meaning of tax security, the author came to conclusion that in the countries with market economy tax policy is one of the most important components of the state economic security, and the threats of tax security any way have a negative effect not only on economic state, but also may destabilize

general state of economy that definitely accentuates independence of the tax field in the structure of the state economic security.

*Keywords:* tax policy of the state, economic security, tax security, elements of tax security: object, interest, threat.

# ՀԱՅ-ԱՐԱԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ԱՐԵՎ» ՕՐԱԹԵՐԹԻ ԱՐԱԲԵՐԵՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ԷՋԵՐՈՒՄ

***Մյասնիկ Արամայիսի Եսոյան***
*պ.գ.թ., ԵԿՏԱ Միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ*

Հայերը մեծ դեր են ունեցել արաբական՝ այդ թվում նաև եգիպտական մամուլի զարգացման գործում՝ հրատարակելով բազմաթիվ թերթեր: Եգիպտական մամուլի շարքում կարևոր տեղ է զբաղեցնում հայկական արաբալեզու «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածը, որը լույս է տեսել 1997 թ. մինչև 2009 թ. կեսերը: Ամսագիրն ակնառու ճանաչողական բնույթ ունի Եգիպտոսի պատմության մեջ երկրի պետական կառավարման տարբեր ոլորտներում կարևոր դերակատարում ունեցած հայ գործիչների դերը արժևորելու տեսանկյունից, ինչպես նաև՝ արաբ հասարակության կողմից հայերին ճանաչելու նպատակ է հետապնդում: Ամսագրի էջերում մեծ տեղ են գրավում հայ գրականության, մշակույթի, թատրոնի, կինոյի, արվեստի, Հայաստանի պատմության մասին հրապարակումները:

«Արև»-ի արաբերեն հավելվածը մեծ տեղ է հատկացրել նաև հայ-արաբական հարաբերությունների լուսաբանմանը հին ժամանակներից մինչև 21-րդ դար ընկած ժամանակահատվածում[1]: Հայ-արաբական հարաբերությունները լուսաբանելիս ամսագիրը, հղում անելով հայ և օտար ակնառու ուսումնասիրողների գիտական աշխատություններին, անդրադառնում է հայ–արաբական պատմական առնչություններին[2]:

«Արև»-ի արաբերեն հավելվածը պարբերաբար անդրադառնում է հայ–արաբական մշակութային հարաբերությունների լուսաբանմանը՝ ընդգծելով, որ հայոց գրերի ստեղծումից հետո Հայաստանում սկսվում է թարգմանչական գործը, և տարբեր լեզուներից հայերեն են թարգմանվում բազմաթիվ գրքեր ու աշխատություններ: Արաբական նվաճումներից հետո հայերը սկսում են հայերեն թարգմանել նաև արաբ հեղինակների գործերը, ինչպես նաև արաբերեն են թարգմանվում հայերեն աշխատություններ: Հայ-արաբական թարգմանչական գործը

---

[1] «Արև», Կահիրե, 2000, № 30, էջ 6-11:
[2] Նույն տեղում, 2002, № 51, էջ 1-4:

ծաղկում է Կիլիկիայի հայկական թագավորության շրջանում, սակայն օսմանյան նվաճումներից հետո այն հետընթաց է ապրում: Օսմանյան շրջանում հայերեն աշխատությունների ու երկերի արաբերեն թարգմանության գործում կարևոր դեր է ստանձնում Հալեպ քաղաքը, ուր կար հայ բնակչություն: 17-19-րդ դարերում Հալեպում երևան եկան հայ գրողներ, որոնք արաբերենով գրեցին աշխատություններ: Բացի այդ՝ այս շրջանում արաբերեն թարգմանվեցին բազմաթիվ հայ եկեղեցական երգեր: Հայոց ցեղասպանությունից հետո հայերի թիվը զգալիորեն ստվարացավ, որը պատճառ դարձավ 20-րդ դարի երկրորդ կեսին հայերենից արաբերեն թարգմանչական գործի խթանմանը: Սույն հոդվածի վերջում ամսագիրը ներկայացնում է 20-րդ դարի ընթացքում Հալեպում արաբերեն թարգմանված հայերեն գրքերի ու բանաստեղծությունների ցանկը[3]: Մեկ այլ համարում ամսագիրը ընթերցողին տեղեկություն է հաղորդում «Հայկական բանաստեղծությունների ընտրյալները» արաբալեզու գրքի մասին, որտեղ ներկայացված են տարբեր ժամանակաշրջանների 24 հայ բանաստեղծների (Դ. Վարուժան, Մ. Մեծարենց, Պ. Սևակ և այլք) 100-ից ավելի բանաստեղծությունների արաբերեն թարգմանությունը[4]: Պետք է նշել, որ սա առաջին փորձն էր հայկական բանաստեղծությունները ներկայացնել արաբ ընթերցողին, և որը բավականին հաջող ստացվեց:

Հայ-արաբական մշակութային հարաբերությունները լուսաբանելիս «Արև»-ի արաբերեն հավելվածը տեղեկություններ է հաղորդում նաև հայերենի՝ արաբերենից փոխառնված բառերի մասին: Հոդվածագիր սիրիահայ հետազոտող Ալեքսանդր Քեշիշյանը, խոսելով հայ-արաբական մշակութային հարաբերությունների զարգացման պատմության մասին, այն 2 մեծ շրջանի է բաժանում: Առաջին շրջանը ընդգրկում է 7-րդ դարի կեսերից մինչև 9-րդ դարի վերջը ընկած ժամանակահատվածը: Պետք է նշել, որ այս շրջանում արաբերենի ազդեցությունը հայերենի վրա շատ թույլ է եղել, ուստի այս շրջանում արաբերենից փոխառնված բառերի քանակը շատ քիչ է եղել: Երկրորդ շրջանը ընդգրկում է 12-րդ դարից մինչև 17-րդ դարի վերջը ընկած ժամանակահատվածը: Ըստ հեղինակի՝ հենց այս շրջանում է ավելանում արաբերենից փոխառնված բառերի քանակը: Ըստ լեզվաբան

[3] «Արև», 2000, № 36, էջ 18-28:

[4] Նույն տեղում, 1998, № 2, էջ 14-16:

Հրաչյա Աճառյանի՝ միջնադարում արաբերենից փոխառնված բառերի քանակը 802 է, որից ժամանակակից հայերենում օգտագործվում է 543-ը, իսկ արաբերենից փոխառնված ընդհանուր բառերի քանակը ըստ Աճառյանի 1436 է, իսկ ըստ գերմանացի հայագետ Ջոժեֆ Կարցի՝ 1100 է[5]:

Արաբերենից փոխառնված բառերի մեծամասնությունն օգտագործվում է հայերենի խոսակցական լեզվում, որից որոշ բառեր ներթափանցել են նաև գրական հայերենի բառաֆոնդ: 60-րդ համարում հոդվածագիր, ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը ներկայացնում է հայ իրականության մեջ տարածում գտած արաբերեն բառերը[6]:

Հայ-արաբական հարաբերությունները լուսաբանելիս «Արև»-ի արաբերեն հավելվածը մեծ տեղ է հատկացնում Սիրիայի՝ մասնավորապես Հալեպի հայ համայնքի պատմության լուսաբանմանը՝ սկսած ձևավորման շրջանից: Հալեպի հայ համայնքի ձևավորումը սկսվել է դեռևս ք.ա. 1-ին դարից, սակայն հայերի թիվը զգալիորեն աճում է Բագրատունիների հայկական թագավորության անկումից (1045 թ.), ապա Կիլիկիայի հայկական թագավորության կործանումից (1375 թ.) հետո: Հալեպի հայ համայնքի մեծամասնությունը միջնադարում հիմնականում առևտրականներ ու արհեստավորներ են եղել: 15-րդ դարում Հալեպում կառուցվում են հայկական եկեղեցիներ, որոնցից նշանավոր էր «Սրբոց Քառասնից Մանկանց» եկեղեցին: 16-րդ դարի վերջին «Սրբոց Քառասնից Մանկանց» եկեղեցու շրջակայքում կառուցվում է գրադարան, որտեղ պահվում են հնագույն ձեռագրեր: Բացի այդ՝ նշված եկեղեցու հովանու ներքո 17-րդ դարում կառուցվում է հայկական դպրոց: 17-19-րդ դարերում Հալեպում մեծ հռչակ էին վայելում հայազգի արվեստագետների՝ նկարիչների, քանդակագործների, ճարտարապետների և այլոց աշխատանքները[7]:

1846-1915 թթ. Հալեպ գաղթեցին մեծ թվով հայեր՝ նպաստելով տեղի հայ համայնքի հասարակական ու մշակութային կյանքի բարելավմանը: Բացի այդ՝ 1846-1915 թթ. Հալեպի հայ համայնքը ակտիվ մասնակցություն ունեցավ արաբական մշակութային զարթոնքի գոր-

5 Նույն տեղում, 2006, № 98, էջ 12-14:
6 «Արև», 2002, № 60, էջ 1-3:
7 Նույն տեղում, 2002, № 58, էջ 11-13:

ծում՝ հիմնելով մամուլի տարբեր օրգաններ, ակտիվորեն ներգրավվելով Սիրիայի հասարակական կյանքում[8]:

«Հայերն ու Ալեքսանդրետի շրջանը» հոդվածում հեղինակը նշում է, որ 1920-1939 թթ. Սիրիայի Ալեքսանդրետի շրջանի արաբներն ու հայերը և՛ քաղաքական և՛ զինված պայքարում համատեղ գործում էին ընդդեմ թուրքերի: 1937 թ. դրությամբ Ալեքսանդրետի սանջակի, որը գտնվում է Սիրիայի հյուսիս արևմուտքում, բնակչության 50%-ը արաբներ էին, 23%-ը՝ թուրքեր, 18%-ը՝ հայեր, 8%-ը՝ քրդեր ու թուրքմեններ: 1936 թ. Թուրքիան միջազգային հարթակներում սկսեց առաջ քաշել Ալեքսանդրետի սանջակի խնդիրը և այն քաղաքական սակարկման առարկա դարձնել: 1938 թ. Ֆրանսիայի թույլտվությամբ թուրքական զինված ուժերը ներխուժեցին Ալեքսանդրետի սանջակ ու իշխանությունը վերցրեցին իրենց ձեռքը՝ ստեղծելով «Հաթայ պետությունը»[9]: Դրանից հետո ինչպես Ալեքսանդրետի, այնպես էլ Սիրիայի մյուս շրջաններում տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր, որոնց ընթացքում ցուցարարները պահանջում էին ֆրանսիական մանդատային իշխանություններից Ալեքսանդրետի սանջակը թողնել Սիրիայի կազմում: Այս բողոքի ցույցերի, ինչպես նաև զինված բախումներում թուրքերի դեմ արաբների կողքին մարտնչում էին նաև տեղացի հայերը: Երկրորդ համաշխարհային պատերազմում Թուրքիային իր կողմը գրավելու դիմաց Ֆրանսիան 1939 թ. Ալեքսանդրետի սանջակը հանձնեց Թուրքիային:

«Արև»-ի արաբերեն հավելվածը մեծապես արժևորում ու տեղեկություններ է հաղորդում սիրիահայ նշանավոր գործիչների գործունեության վերաբերյալ: Մասնավորապես, 41-րդ համարում ամսագիրը ներկայացնում է սիրիահայ զինվորական Արամ Կարամանուկյանի գործունեությունը, ում ընտանիքը 1921 թ. Այնթափից գաղթել է Հալեպ: Սիրիայում, ապա Ֆրանսիայում ռազմական արվեստը ուսանելուց հետո Ա. Կարամանուկյանը 1946 թ. ակտիվորեն ներգրավվել է սիրիական ազգային բանակի ստեղծման գործին: 1948-1949 թթ. արաբաիսրայելական պատերազմի ժամանակ եղել է սիրիական բանակի հրետանային ուժերի ղեկավարներից, իսկ 1956-1959 թթ. նշանակվել է ԱՄՆ-ում Սիրիայի դեսպանատան ռազմական կցորդ[10]:

---

[8] Նույն տեղում, 2003, № 71, էջ 14:

[9] «Արև», 2002, № 50, էջ 14-15:

[10] Նույն տեղում, 2001, № 41, էջ 10-12:

«Անհատականություններ, ովքեր չեն մոռացվում» հոդվածում ամսագիրը ներկայացնում է սիրիահայ նշանավոր բժիշկ, ակնաբույժ Ռոբերտ Գարիբջյանի կյանքն ու ծավալած գործունեությունը Սիրիայում: Ռոբերտ Գարիբջյանը բժշկական բազմաթիվ գյուտերի հեղինակ է՝ մասնավորապես, 1934 թ. ստեղծել է առաջին էլեկտրական սարքը, որի օգնությամբ կարելի է զննել մարդու աչքը: Անդրադառնալով հայազգի ակնաբույժի գործունեությանը՝ «Արև»-ի արաբերեն հավելվածը մեծապես արժևորում է Ռ. Գարիբջյանի վիթխարի ներդրումը Սիրիայում ակնաբուժության զարգացման գործում ու նրան դասում է Մերձավոր Արևելքի լավագույն բժիշկների շարքում[11]:

«Արև»-ի արաբերեն հավելվածը արաբախոս ընթերցողին պարբերաբար տեղեկություններ է հաղորդում մերձավորարևելյան հայ համայնքների պատմության, մշակութային կյանքի մասին: Մասնավորապես, 38-րդ համարում ամսագիրը ներկայացնում է Պաղեստինի հայ համայնքի պատմությունը: Հայերը Պաղեստինում հաստատվել են ք.ա. I դարում՝ Տիգրան Մեծի օրոք, իսկ Պաղեստինի բուն հայկական համայնքը ձևավորվել է IV դարի վերջին ու V դարի սկզբին: Քրիստոնեության ընդունումից հետո հայերը հաճախակի սկսեցին ուխտագնացության այցելել Երուսաղեմի սուրբ վայրերը: V դարի վերջին և VII դարի ընթացքում Պաղեստինում կառուցվեցին մի քանի եկեղեցիներ: 451 թ. հայ միաբանները Երուսաղեմում հիմնեցին միաբանություն, որի կենտրոնը դարձավ Սուրբ Հակոբ եկեղեցին: Այն արաբական խալիֆայության ժամանակաշրջանում 637 թ. վերածվեց Երուսաեղմի հայ պատրիարքարանի, որը շարունակում է գործել առայսօր: Մուհամմադ Ալիի կառավարման շրջանում Երուսաղեմում հայերի թիվը մոտ 100000 էր, սակայն բրիտանական մանդատային կառավարման շրջանում մեծ թվով հայեր լքում են Երուսաղեմը, և արդեն 1976 թ. այստեղ հաշվվում էր մոտ 2000 հայ, որոնց մեծ մասը հոգևորականներ, արհեստավորներ ու առևտրականներ էին[12]:

Ամսագիրն ընթերցողին տեղեկություններ է հաղորդում նաև Երուսաղեմի հայ համայնքի նյութական ունեցվածքի՝ եկեղեցիների, հասարակական շինությունների, դպրոցների, տպարանների, գրադա-

[11] Նույն տեղում, 2002, № 50, էջ 6-11:

[12] «Արև», 2002, № 53, էջ 10-12:

րանների և այլնի մասին[13]: «Տեղեկություններ Երուսաղեմի հայերի մասին» հոդվածում հոդվածագիրը նշում է, որ հայերը եզակի ազգերից են, որոնք Երուսաղեմում հաստատվել են դեռևս 4-րդ դարում, ու առայսօր շարունակում են ապրել ու գործունեություն ծավալել քաղաքում՝ ժամանակի ընթացքում մեծացնելով հայկական թաղամասը[14]: Բացի այդ՝ «Արև»-ի արաբերեն հավելվածը ներկայացնում է քրիստոնեական տարբեր եկեղեցիների միջև պայքարը քաղաքի սուրբ վայրերին տիրանալու ու առանձնաշնորհումներ ստանալու համար՝ շարադրանքն սկսելով 451 թ. քաղկեդոնական ժողովի որոշումներով[15]:

«Արև»-ի արաբերեն հավելվածը մեծապես արժևորում ու տեղեկություններ է հաղորդում Լիբանանի հայ համայնքի պատմության ու մշակութային կյանքի մասին: «Հայերը լիբանանում» հոդվածում ամսագիրը արաբախոս ընթերցողին հայտնում է հայերի՝ Լիբանանում հաստատվելու պատմությունը, հայերի դերը Լիբանանի հասարակական քաղաքական կյանքում: Հոդվածագիրը նշում է, որ հայերը Լիբանանում հանդես են եկել դեռևս ք.ա. 6-րդ դարում: Հայերի թիվը Լիբանանում աճեց, երբ այն (Փյունիկիան) մտավ Տիգրան Մեծի տերության մեջ: Հետագա դարերի ընթացքում հայերը փոքր խմբերով աստիճանաբար գաղթում են դեպի Լիբանան, Պաղեստին, Սիրիա: Արշակ Ալպօյաճյանը նշում է, որ 1232 թ. Տրիպոլիի նավահանգստում մետաքսի առևտուրը մեծ վերելք ապրեց, որտեղ մեծ դեր ունեին հայ վաճառականները[16]:

Որոշ թվով հայերը գաղթեցին Լիբանան 1375 թ. Կիլիկիայում հայկական թագավորության կործանումից հետո[17]: 1895 թ. Լիբանանում հայերի թիվը մոտ 600 էր[18]: 1861 թ. ստեղծվեց Լեռնալիբանանի մութասարիֆությունը, որի առաջին ու վերջին մութասարիֆները հայեր էին: 1895-1896 թթ., 1909 թ հայկական կոտորածներից հետո Լիբանանում հայերի թիվը աճեց՝ հասնելով մոտ 1000-ի[19]:

1915 թ. Հայոց ցեղասպանության, 1922 թ. Կիլիկիայի հայկական կոտորածների հետևանքով հազարավոր հայեր գաղթեցին դեպի Սի-

---

13 Նույն տեղում, 2002, № 53, էջ 11-12:

14 Նույն տեղում, 2007, № 117, էջ 8-10:

15 Նույն տեղում, 2001, № 43, էջ 2-5:

16 Ալպօյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականության,Գահիրե, 1941, էջ 453:

17 Վարժապետյան Ս. Հ., Հայերը Լիբանանում, հ. 1, Բեյրութ, 1951, էջ 8-9:

18 Վարժապետյան Ս. Հ., նշվ. աշխ., հ. 2, Բեյրութ, 1981, էջ 19:

19 Վարժապետյան Ս. Հ., նշվ. աշխ., հ. 1, էջ 432:

րիա ու Լիբանան: Լիբանանում հայերը բնակություն են հաստատում Բեյրութում՝ հիմնելով Նոր Մարաշ, Հայաշեն ու այլ թաղամասեր Անթիլիասում, Լիբանանի հարավային շրջաններում: 1900-1920 թթ. Լիբանանի հայ համայնքի համար վերելքի շրջան էր, որի ընթացքում երևան եկան բազմաթիվ նշանավոր հայ մտավորականներ, ճարտարապետներ, նկարիչներ, հասարակական քաղաքական գործիչներ, ովքեր մեծ դեր խաղացին Լիբանանի հասարակական քաղաքական կյանքում: Հոդվածագիրը հավաստում է, որ Լիբանանի հայ համայնքը մեծապես նպաստեց երկրի տնտեսության զարգացմանը, հասարակական կյանքի բարելավմանը[20]: 1939 թ. Ալեքսանդրետի սանջակը Թուրքիային անցնելուց հետո Սուեդիայի շրջանի մոտ 15.000 հայ գաղթում է Լիբանանի Անջար բնակավայր[21]: 1964 թ. Լիբանանում հայերի թիվը հասնում է 110000-ի[22]:

Նույն համարի մեկ այլ հոդվածում «Արև»-ի արաբերեն հավելվածը որոշ տեղեկություններ է հաղորդում հետպատերազմյան շրջանում Լիբանանի տնտեսության վերականգնման համար միջազգային հասարակության, արաբական երկրների ցուցաբերած օգնության մասին: Արաբական երկրների շարքում ամսագիրը կարևորում է Սաուդյան Արաբիայի ու Եգիպտոսի դերը Լիբանանի տնտեսության վերականգնման ու գաղթականներին օգնություն տրամադրելու գործում: Բացի այդ՝ հոդվածագիրը կարևորում է Լիբանանում գործող հայ հասարակական տարբեր կազմակերպությունների ցուցաբերած օգնությունը: Մասնավորապես ընդգծում է, որ ՀԲԸՄ Բեյրութի մասնաճյուղն իր դռները բացեց Լիբանանի գաղթականների համար՝ տրամադրելով վերջիններիս ֆինանսական օժանդակություն: Հոդվածի վերջում հեղինակն արժևորում ու գնահատում է նաև Հայաստանի Հանրապետության ցուցաբերած օգնությունը (մոտ 10 տոննա դեղորայք, հագուստի պարագաներ և այլն)[23]:

1991 թ. հետո հայ-լիբանանյան հարաբերությունները տարեցտարի զարգանում են, ինչին մեծապես նպաստեց ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի՝ 2000 թ. փետրվարի 15-17 Լիբանան կատարած պաշտո-

[20] «Արև», 2006, № 105, էջ 4-9:
[21] Վարժապետյան Ս. Հ., նշվ. աշխ., h. 2, 1981, էջ 227-230:
[22] Նույն տեղում:
[23] «Արև», 2006, № 105, էջ 8-9:

նական այցը, որի շրջանակներում երկու երկրների միջև ստորագրվեց տասնյակից ավելի համաձայնագրեր, ինչը լայնորեն լուսաբանվեց «Արև»-ի արաբերեն հավելվածի էջերում[24]:

Հայ-արաբական հարաբերությունների զարգացման գործում իր ուրույն տեղն ունի իրաքահայ համայնքը, որի մասին սիրիահայ հետազոտող Հուրի Ազիզյանը ընթերցողին որոշ տեղեկություններ է հաղորդում: Իրաքի հայ համայնքի ձևավորման պատմությունը սկսվել է Տիգրան Մեծի կառավարման տարիներից, չնայած, ըստ հույն պատմիչ Հերոդոտոսի՝ մ.թ.ա. 4-րդ դարում Միջագետքում եղել են հայեր, և Հայաստանի ու Միջագետքի միջև Եփրատ գետի միջոցով իրականացվել է առևտուր: Միջագետքում հայերի թիվը աճում է 4-րդ դարում Շապուհ II-ի արշավանքներից, ինչպես 6-7-րդ դարերում պարսկա-բյուզանդական պատերազմների արդյունքում: Արաբական, սելջուկ-թուրքերի նվաճումներից հետո մեծ թվով հայեր գաղթեցին Միջագետք՝ հաստատվելով հիմնականում Բաղդադում ու Բասրայում: Մասնավորապես, հոդվածագիրը հաղորդում է, որ 1222 թ. Բասրայում գոյություն ուներ մեծ հայկական համայնք[25]: Սակայն մոնղոլների, թյուրքական ցեղերի արշավանքներից հետո Միջագետքից գաղթեցին մեծ թվով հայեր: 16-17-րդ դարերում Իրաք այցելած ճանապարհորդները հիշատակում են փոքրաթիվ հայ համայնքի մասին: 17-րդ դարի վերջերին ու 18-րդ դարի սկզբներին Իրանի մի շարք շրջաններից Իրաք են գաղթում բազմաթիվ հայեր, որոնք զգալիորեն նպաստում են Իրաքում առևտրի զարգացմանը: Սակայն օսմանյան հալածանքներից խուսափելով՝ 19-րդ դարի վերջերին հայերի մեծ մասը հեռանում է Իրաքից, և համաձայն հոդվածագրի՝ մինչև 1915 թ. Իրաքում ապրում էր մոտ 1000 հայ: Հայոց ցեղասպանությունից հետո հազարավոր հայեր գաղթեցին Իրաք: 20-րդ դարի կեսերին Իրաքի հայ համայնքի մեծ մասը առևտրականներ, արհեստավորներ, բժիշկներ, ինժեներներ էին[26]:

Մերձավորարևելյան տարածաշրջանում մեծ թվով հայեր կան նաև Հորդանանում, որի վերաբերյալ «Արև»-ի արաբերեն հավելվածը նույնպես տեղեկություններ է հաղորդում արաբախոս ընթերցողին: «Հորդանանի հայերը» հոդվածում հեղինակը՝ հորդանանահայ հետա-

---

24 Նույն տեղում, 1999, № 20, էջ 5-6:

25 Նույն տեղում, 2003, № 65, էջ 4-7:

26 Նույն տեղում, էջ 6-7:

զոտող Վարդան Ֆարիջ Կարապետյանը, ներկայացնում է Հորդանանի հայ համայնքի պատմությունը: Հոդվածագիրը, ով վիթխարի դաշտային աշխատանք է կատարել նշված թեմայի ուսումնասիրության համար, հիմնվելով տեղացիների՝ արաբների ու հայերի բանավոր պատմությունների վրա, ենթադրում է, որ հայերը Հորդանանում հաստատվել են 1915-1918 թթ., քանի որ պաշտոնական արժանահավատ աղբյուրներ չկան: Ըստ տեղացիներից մեկի՝ Աբդալլահ Բաշայի պատմության՝ 30 հոգանոց սովալլուկ հայեր 1917 թ. ժամանել են Հորդանանի Դել Աբի Սայիդ գյուղ, որտեղ տեղացիները ապաստան են տվել նրանց: Բացի այդ՝ հոդվածագիրը նշում է, որ բացի վերոնշյալ գյուղից հայերը սկզբնական շրջանում հաստատվել են նաև Բանի Աբիդ, Իրբիդ, Քիրք գյուղերում, որտեղից տարիներ անց տեղափոխվել են մայրաքաղաք Աման[27]:

1940-1950 ականներին Հորդանանում հայերի թիվը մոտ 10000 էր, սակայն 1948 թ., 1967 թթ. արաբ-իսրայելական պատերազմներից հետո նրանց մեծ մասը տեղափոխվեց Միացյալ Նահանգներ, Ավստրալիա, Կանադա, Սիրիա ու արաբական այլ երկրներ[28]:

Հորդանանի հայերի վերաբերյալ մեկ այլ հոդվածում «Արև»-ի արաբերեն հավելվածը մանրամասն ներկայացնում է հայերի կրթվածության ու զբաղվածության աստիճանը, հասարակական ներգրավվածությունը, ամուսնությունների վիճակագրությունը և այլն[29]:

«Արև»-ի արաբերեն հավելվածը ներկայացնում է հորդանանյան բանակի ղեկավարներից Աբդալլահ ալ Թիլի հուշերից մի հատված, որտեղ ասվում է, որ երբ Հորդանանի բանակը 1948 թ. մայիսին արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում մտավ Երուսաղեմ, իր զորքերի կենտրոնատեղի դարձրեց հայկական ու հրեական թաղամասերի բաժանարար գիծը՝ դրանով իսկ փրկելով Երուսաղեմի հայերին ու հայկական թաղամասը ավերածություններից, քանի որ հրեաները, հայերին համարելով արաբների համակիր, տարբեր տեսակի զենքերից ռմբակոծում էին հայկական թաղամասը՝ նյութական մեծ վնաս հասցնելով հայերին[30]:

---

27 «Արև», 2007, № 114, էջ 9-13:
28 Նույն տեղում, 2007, № 114, էջ 9-13:
29 Նույն տեղում, 2007, № 115, էջ 10-14:
30 Նույն տեղում, 2001, № 42, էջ 6-7:

«Արև»-ի արաբերեն հավելվածը համառոտ տեղեկություններ է հաղորդում նաև Պարսից ծոցի արաբական միապետությունների հայ համայնքների մասին: Մասնավորապես, եգիպտահայ հասարակական, քաղաքական գործիչ Պերճ Թերզյանը անդրադառնում է Հայաստան-ԱՄԷ հարաբերություններին՝ սկսած 1998 թ., երբ երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ[31]:

«Արև»-ի արաբերեն հավելվածն իր էջերում ներկայացնում է 1950-1990 թթ. Խորհրդային Հայաստանում ու մերձավորարևելյան հայկական համայնքներում արաբական Արևելքի վերաբերյալ գրված լավագույն աշխատությունների ցանկը: Հոդվածագիրը առանձնացնում է նշանավոր գիտնականներ Նիկոլայ Հովհաննիսյանի, Արամ Տեր-Ղևոնդյանի, Եղիա Նաջարյանի, Հովհաննես Թոփուզյանի և այլոց՝ արաբական երկրների պատմությանը նվիրված աշխատությունները[32]: «Հայաստանն արաբական ուսումնասիրությունների կենտրոն» հոդվածում հեղինակը՝ արևելագետ Նիկոլայ Հովհաննիսյանը, արաբախոս ընթերցողին է ներկայացնում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի կատարած արժեքավոր ուսումնասիրությունները արաբական երկրների պատմության, մշակույթի ու գրականության վերաբերյալ[33]: Նշենք, որ արաբների վերաբերյալ ուսումնասիրությունները Հայաստանում սկսվել են դեռևս 7-րդ դարից, երբ հայ պատմիչներն իրենց աշխատություններում արժեքավոր տեղեկություններ են հաղորդում նաև արաբների մասին (Սեբեոս, Ղևոնդ, Թովմա Արծրունի և այլն): Ներկայումս էլ Հայաստանում իրականացվում են արաբական երկրների պատմության, մշակույթի, իսլամի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրություններ, ինչը պայմանավորված է մի քանի գործոնով: Նախ արաբական մի շարք երկրներում կան հայ համայնքներ, այնուհետև մենք՝ հայերս ու արաբները, գտնվում ենք նույն տարածաշրջանում: Բացի այդ՝ ՀՀ ու արաբական երկրների շահերը բազմաթիվ հարցերում համընկնում են:

Նորագույն շրջանում հայ-արաբական հարաբերությունների զարգացման դինամիկան լուսաբանելիս ամսագիրն անդրադառնում է նշված ժամանակահատվածում հայ-սիրիական ու հայ-եգիպտական

---

[31] «Արև», 2002, № 54, էջ 1-4:

[32] Նույն տեղում, 2002, № 60, էջ 10-15:

[33] Նույն տեղում, 2008, № 126, էջ 1-6:

մշակութային, կրթական հարաբերությունների արդի դրության, համատեղ գիտական կոֆերանսների լուսաբանմանը: Նշենք, որ 1991 թ. հետո հայ-արաբական հարաբերությունները տարեցտարի զարգանում են, քանի որ հայերի ու արաբների միջև պատմականորեն ձևավորվել են գիտական հարաբերություններ, ինչպես նաև երկու ազգերն էլ պատկանում են միևնույն աշխարհագրական տարածաշրջանին ու տարածաշրջանային կամ սահմանային խնդիր գոյություն չունի Հայաստանի ու արաբական երկրների միջև: Բացի այդ՝ հայ-արաբական հարաբերությունների զարգացմանը զգալիորեն նպաստում է արաբական երկրներում հայկական համայնքների գործունեությունը[34]:

Այսպիսով՝ «Արև»-ի արաբերեն հավելվածն իր էջերում լուսաբանում է հայ-արաբական հարաբերությունների զարգացման պատմությունը, ինչպես նաև արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում մերձավորարևելյան հայ համայնքների պատմության, մշակութային կյանքի մասին: «Արև»-ի արաբերեն հավելվածն իր նշանակալից ավանդն ունեցավ հայ-արաբական հարաբերությունների զարգացման գործում՝ նպաստելով երկու երկրների քաղաքական, մշակութային շփումներին և իր լուսաբանումներով տալով հայ և եգիպտական ժողովուրդների հոգևոր ու քաղաքական մերձեցումների առարկայական օրինակները:

*Բանալի բառեր և արփահայփություններ.* «Արև»-ի արաբերեն հավելված, ամսագիր, հայ համայնք, մշակութային կապեր, հայ-արաբական առնչություններ, Մերձավոր Արևելք:

## ОСВЕЩЕНИЕ АРМЯНО-АРАБСКИХ ВЗАИМООТНОШЕНИЙ В АРАБСКОМ ЕЖЕМЕСЯЧНИКЕ “АРЕВ”

**Есоян Мясник Арамаисович**
к.и.н., Заведующий кафедрой международных отношений ЕРОА

### Резюме

Арабоязычная версия журнала “АРЕВ” на своих страницах освещает историю развития армяно-арабских взаимоотношений, играет

[34] «Արև», 2002, № 57, էջ 4-6:

важную роль в деле иллюстрации информационных событий на Ближнем Востоке, жизни и истории армянской диаспоры и её культурных событий и доносит их до арабоязычного читателя популярного журнала.

Арабоязычная версия журнала “АРЕВ” имела большое и значимое влияние на процесс развития армяно-египетских взаимоотношений, и стала своего рода пусковым механизмом в деле развития политических, культурных и экономических контактов между двумя государствами.

*Ключевые слова и выражения:* арабский ежемесячник “АРЕВ”, ежемесячник, армянская диаспора, культурные связи, армяно-арабские взаимоотношения, Ближний Восток.

## THE ILLUSTRATION OFARMENIAN-ARABIAN RELATIONS IN THE PAGES OFARABIC SUPPLEMENT “AREV”(1991-2009)

**Myasnik Yesoyan Aramayis**
P.H.D., EREA Head of the Chair of International Relations

### Summary

Armenian-Arabian relations were developing year by year from 1991 to 2009 as a result of the historically developed friendly relations between Armenians and Arabs as well as due to their location in the same geographical region. Arabic supplement of “Arev” had its considerable contribution into the development of Armenian-Egyptian relations by promoting political and cultural communication of both countries and by giving vivid examples of spiritual and political rapprochement between Armenians and Egyptians.

*Keywords and phrases:* Arabic Supplement “Arev”, supplement, Armenian community, cultural relations, Armenian-Arabian relations, Middle East.

# ՍՓՅՈՒՌՔԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

***Լիլիթ Ասքանազի Մակարյան***
*պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*
*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի*
*միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս*

Սփյուռքը՝ որպես երևույթ, ի հայտ է եկել հնագույն ժամանակներից, սակայն որպես գիտական տերմին՝ այն օգտագործվում է վերջին ժամանակներում: Ինչ վերաբերում է հունական ծագմամբ «diaspora» տերմինին, ապա այն առաջացել է «diaspeirein» բայից, որը նշանակում է ցրվել, սփռվել՝ կազմված dia նախածանցից և speirein (ցանել, շաղ տալ, սփռել) բայից: «Diaspeiro» բառը հանդիպվում է Հերոդոտի, Սոֆոկլեսի աշխատություններում՝ ցրել, պառակտել (զորքը), վատնել, շռայլել (փող) իմաստով: Իսկ «diaspora» ձևով առաջին անգամ հիշատակվում է հրեական Աստվածաշնչի հունական թարգմանությունում՝ հրեաների՝ ցրվելու, սփռվելու նշանակությամբ: Պաղեստինից հրեաների վտարման հետ կապված՝ այդ տերմինը երկար ժամանակ մտազուգորդվում էր հենց բռնագաղթի նշանակությամբ, իսկ լքած հայրենիքի մասին կոլեկտիվ հիշողությունը փոխանցվում էր սերնդեսերունդ[1]:

Սփյուռքի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները արտասահմանում կատարվել են XX դ. 70-80-ական թվականներին[2]: Ինչպես նշում է նշանավոր հետազոտող Տ. Կոնդրատևան. «Սփյուռքյան թեմաների նկատմամբ գիտնականների հետաքրքրական ալիքը պայմանավորված էր միգրացիոն գործընթացների հետ, որոնք 1970-80-ական թթ. գլոբալ բնույթ էին կրում: Նա դա համարում է լայնամասշտաբ միգրացիայի հետևանք, որի արդյունքում մարդկանց իսկայական զանգվածներ հայտնվեցին այլ երկրներում, այլ մայրցամաքներում, որոնք նոր, անծանոթ միջավայրում ձգտում էին միանալ արդեն

[1] Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии. – Ер.: Институт Кавказа, 2009, сс. 8, 18.

[2] Адвашкин А.А., Феномен диаспоры: методологические основы научного исследования, Вестник Челябинского государственного университета. 2015. № 2 (357)., с. 131.

գոյություն ունեցող ներգաղթյալների համայնքներին կամ ստեղծել նոր»[3]: Նրա կարծիքով՝ «Ներգաղթյալ համայնքների արագ աճը և նրանց ինստիտուցիոնալությունը ստիպեցին խոսել «աշխարհի սփյուռքացման» մասին, ինչպես մարդկության զարգացման սցենարներից մեկը: Այդ գործընթացը գնալով խորանում է՝ ընդունելով նորանոր ձևեր, իսկ սփյուռքի դերը և ազդեցությունը ուժեղանում են»[4]:

Մարդիկ իրենց հայրենիքը լքում են պատերազմների, սոցիալ-տնտեսական ծանր պայմանների, աղետների, քաղաքական բռնաճնշումների, կրոնական հալածանքների հետևանքով: Ներկայումս, սիրիական և ուկրաինական ճգնաժամերի հետ կապված, փախստականների հոսքը Եվրոպա և հարևան երկրներ աննախադեպ չափերի է հասել: Բացի այդ՝ արագորեն աճում է աշխատավոր միգրանտների թվաքանակը: Մասնավորապես ՄԱԿ-ի տվյալներով՝ վերջին 15 տարում միգրանտների թիվն աճել է 41% -ով և 2015 թ. հասել մինչև 244 մլն.[5], այն դեպքում, երբ 1960 թ. ամբողջ աշխարհում հաշվվում էր 75,5 մլն. միգրանտ: ՄԱԿ-ի փորձագետների գնահատականներով ներկայումս երկրագնդի յուրաքանչյուր երեսունհինգերորդ բնակիչը հանդիսանում է միջազգային միգրանտ[6]: Արտագաղթի նման տեմպերի շարունակությունը հանգրվանած երկրներում կբերի որակական նոր փոփոխություններ: Մասնավորապես Եվրոպայում գնալով ակնհայտ է դառնում դեմոգրաֆիական, լեզվական, կրոնական կազմի փոփոխությունների սպառնալիքը: Սփյուռքի ազդեցությունը մեծանում է ընդունող երկրների ոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականության վրա: Նրանք ոչ միայն «պարտադրում» են իրենց ազգային, մշակութային, կրոնական արժեքները, այլև ակտիվ քարոզչություն են անում այն երկրների շահերի համար, որտեղից արտագաղթել են:

---

[3] Кондратьева Т.С,. К вопросу о понятии “диаспора”: Дискуссия в научном сообществе // «Диаспоры в Европе. Сборник научных трудов». М., 2009, № 4, с. 18.

[4] Кондратьева Т. С, Диаспоры в современном мире: эволюция явления и понятие. (Опубликовано на портале 27/02/10), (дата обращения 05/03/16). http://www.perspektivy.info/book/diaspory_v_sovremennom_mire_evolucija_javlenija_i_ponatija_2010-02-27.htm

[5] ТАСС, международное огенство России. http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/2580836 (дата обращения 07/04/16 ).

[6] Кондратьева Т. С, Диаспоры в современном мире: эволюция явления и понятие.

Վերջին ժամանակներում սփյուռքի ուսումնասիրության բնագավառում մեծածավալ աշխատանքներ է կատարում ռուս նշանավոր հետազոտող Վ. Տիշկովը, որը «սփյուռք» և «հայրենիք» հասկացությունները բնութագրելիս նշում է. «Սփյուռքը նրանք են, ովքեր կամ իրենց նախնիները սփռվել են հատուկ «նախնական» կենտրոնից այլ կամ ծայրամասային, արտերկրյա շրջաններ»: Ըստ նրա՝ «հայրենիք» հասկացության տակ պետք է հասկանալ այն շրջանը կամ երկիրը, որտեղ ձևավորվել է սփռված խմբի պատմամշակութային դիմագիծը, և որտեղ շարունակում է ապրել նրա հետ համանման հիմնական մշակութային զանգվածը[7]:

Նշանավոր ազգագրագետ Յու. Սեմյոնովը նշում է, որ «հայրենիք» հասկացության տակ կարելի է հասկանալ գյուղի մի անկյուն, որտեղ մարդը ծնվել և անցկացրել է վաղ մանկությունը, կամ գյուղն ամբողջությամբ, ողջ գեոսոցիալական օրգանիզմի տարածքը[8]:

Սփյուռքի հետազոտող Ս. Ջանգոզյանը գտնում է, որ սփյուռքը սոցիալական օրգանիզմ է, որին պատկանելությունը որոշվում է մի կողմից էթնիկական ծագմամբ և ծնելիության հատկանիշներով, մյուս կողմից՝ առանձին անհատների կամավոր ընտրությամբ: Ըստ նրա՝ «Սփյուռքի ներկայացուցիչների էթնիկական ինքնությունը կախված է բնակության միջավայրից և ժամանակի ընթացքում կրում է փոփոխություններ: Այն ուղղորդվում և ղեկավարվում է սփյուռքի կառույցների կողմից, որոնք առաջացել են ինստիտուցիոնալացման հետևանքով՝ իր ժողովրդի գլոբալ և անհատական շահերը պաշտպանելու նպատակով»[9]:

Սփյուռք ունեցող բոլոր ժողովուրդների համար կարևոր է հայրենիքի գոյության գաղափարը: Նրանք երևակայական կամ իրական հայրենիքի շուրջ են փոխկապակցում իրենց գործողությունները: Մասնավորապես հայ ժողովրդի համար կարևոր է համարվում բազմաբնույթ փոխհարաբերությունները հենց իրական հայրենիքի հետ: Հայ-

---

[7] Тищков В.А, Исторический феномен диаспоры, Этнографическое обозрение, Москва 2000, № 2, с. 48.

[8] Семенов Ю. И., Этнос, нация, диаспора, Этнографическое обозрение, Москва 2000, № 2, с. 66.

[9] Джангозян С., Некоторые аспекты проявления этнической идентичности в диаспоре, Вестник Ереванского университета. Международные отношения, Политология, Ереван 2014, с. 72.

կական սփյուռքը հայրենիքի հետ է կապում նաև իր հույսերն ու ապագայի հանդեպ պատկերացումները:

Սփյուռքի էության ու տեսակների մասին բազմաթիվ հետազոտողներ ունեն տարբեր մոտեցումներ: Որոշ հեղինակներ, մասնավորապես Ջ. Արմստրոնգը, առանձնացնում են «մոբիլիզացված» սփյուռք (նկատի ունեն դասական սփյուռքը) և «պրոլետարական»՝ «հին» և «նոր» սփյուռք, որոնք ունեն որակական այլ հատկանիշներ և միգրացիայի հետևանք են: Մ. Բրունոն առանձնացնում է սփյուռքի հիմնական տեսակների հիմնարար չափանիշները՝ առևտուր, կրոն, քաղաքականություն, մշակույթ և ռասսայական տեսակ[10]:

Հրեա նշանավոր հետազոտող Գ. Շեֆֆերը սփյուռքը դասակարգել է հետևյալ տեսակների.

- «անտուն», իրենց պետությունը չունեցող-(քրդեր, պաղեստինցիներ, գնչուներ)
- «էթնոազգային» սփյուռք, որն ամենատարածվածն է, որոնք իրենց թիկունքում զգում են իրենց պետության անտեսանելի ներկայությունը
- խոր պատմական արմատներով (հրեաներ, հայեր, չինացիներ)
- «երիտասարդ» սփյուռք (հույներ, լեհեր, թուրքեր)
- «նոր ծնվող»-այսինքն՝ կազմավորման սկզբնական փուլում գտնվող (կորեացիներ, ֆիլիպպինցիներ, նախկին խորհրդային հանրապետություններից ռուսներ)
- «նիրհող» (ամերիկացիները՝ Եվրոպայում և Ասիայում, սկանդինավյանը՝ ԱՄՆ-ում)
- ցրված կամ կոմպակտ բնակվող[11]:

Բրիտանացի սոցիոլոգ, պրոֆեսոր Ռ. Քոենն առաջարկում է սփյուռքի իր տարբերակումները, ըստ որի՝ 1) Զոհ սփյուռք (հրեական, հայկական, աֆրիկյան, իռլանդական, պաղեստինյան), 2) Աշխատավոր (հնդկական, չինական, ճապոնական, թուրքական, իտալական, հյուսիսաֆրիկյան), 3) Կայսերական կամ գաղութային (բրիտանական, ռուսական), 4) Առևտրական (լիբանանյան, չինական, ինչպես նաև վե-

---

[10] Адвашкин А. А., указ. раб., с. 132.

[11] Шеффер Г. Диаспоры в мировой политике // Диаспоры. – М., 2003, №1, с. 165. http://world.lib.ru/k/kim_german_nikolaewich/3019-3.shtml

նետիկյան, հնդկական, ճապոնական), 5) Ապատարածքայնացված (-Կարիբյան ավազանի ժողովուրդներ, սինդխեր, պարսիկներ, ինչպես նաև գնչուներ, մահմեդականներ և այլ կրոններին պատկանող սփյուռք)՝ իրենց «հիբրիդային», մշակութային և հետգաղութային արտահայտություններով[12]:

Համաձայնելով նշանավոր հետազոտողների սփյուռքի տարբերակման մոտեցումներին՝ սփյուռքի էության ու հատկանիշների ուսումնասիրության արդյունքում՝ ձևավորել ենք սփյուռքի տեսակների վերաբերյալ մեր համալիր պատկերացումները, ըստ որի առանձնացնում ենք՝ 1) պատմական արմատներով սփյուռք, 2) աշխատավոր սփյուռք, 3) նորաստեղծ սփյուռք, 4) կրոնական սփյուռք:

ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզման հետևանքով առաջացած քաոսային իրավիճակը ծնեց սփյուռքյան նոր երևույթներ, որի ուսումնասիրությամբ զբաղվող ամերիկացի հետազոտող Ռ. Բրուբեյքերը առաջ է քաշել այսպես կոչված «կատակլիզմ սփյուռք» հայեցակարգը, ըստ որի՝ վերջինի յուրահատկությունը կայանում է նրանում, որ սփյուռքի նման տեսակը կազմավորվել է ոչ թե սահմաններից դուրս մարդկանց շարժի արդյունքում, այլ հենց սահմանների շարժի հետևանքով, և որ «կատակլիզմ սփյուռքի» տեսակները ծնվում են ակնթարթորեն՝ քաղաքական կառույցի կտրուկ ցնցման շնորհիվ[13]:

Սփյուռք ունեցող ժողովուրդների շարքում են նաև հայերը: «Diaspora» հասկացության հայկական թարգմանությունը հանդիսանում է «սփյուռք» տերմինը: Այն մեծ դեր է խաղում Հայաստանի և հայ ժողովրդի համար շնորհիվ պատմական պատճառների: Հայկական սփյուռքը ձևավորվեց 1915 թ. Հայոց ցեղասպանության հետևանքով, չնայած որ նախկինում հայկական հնագույն գաղթավայրեր գոյություն ունեին: Հայկական սփյուռքը համարվում է դասական սփյուռք, առանձնանում է իր կազմակերպվածությամբ, կառույցներով, անհատական ու գլոբալ մտածողությամբ, գաղափարներով ու հետապնդած շահերով: Հայկական սփյուռքը, ի տարբերություն շատերի, պահպանում է իրական կորուսյալ հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի հիշողու-

[12] Cohen R., Global diasporas: An introduction // Global diasporas /Ed. by R. Cohen.- Second edition. - N. Y., 2008, p. 18.

[13] Космарская Н., Дети империи» в постсоветской Центральной Азии: адаптивные практики и ментальные сдвиги (русские в Киргизии, 1992-2002), Москва 2006, с. 489.

թյունները: Ցեղասպանության հետևանքով հայրենիքը կորցրած, արտասահմանում հայտնված արևմտահայությունը՝ Խորհրդային Հայաստանը երկար տարիներ հայրենիք չէր դիտում: Այն ուներ իր և՛ պատմական, և՛ քաղաքական պատճառները: Մասնավորապես վերջինը պայմանավորված էր ՀՀԴ-ի և բոլշևիկների միջև առկա տարաձայնություններով: Ժամանակի ընթացքում այդ անջրպետը վերացավ, իսկ ԽՍՀՄ-ի անկման մայրամուտին Հայրենիք-սփյուռք հարաբերություններն ավելի շոշափելի դարձան: Անկախ Հայաստանի ստեղծումից հետո Հայրենիք-սփյուռք հարաբերությունները դրվեցին որակական նոր մակարդակի վրա: Ինչպես Հայոց պետականության գոյությունը մեծ նշանակություն ունի հայկական սփյուռքի համար, այնպես էլ վերջինը՝ ՀՀ-ի համար: Նրանք երկուստեք իրենց թիկունքում զգում են կարևոր հենարան: Սփյուռքի հետազոտող Ա. Եղիազարյանն իրավացիորեն նշում է. «Սփյուռքի ամբողջ պատմությունը, ի տարբերություն հայ գաղթաշխարհի պատմության, մշտապես ուղեկցվել է հայրենի պետության առկայությամբ, չնայած Հայոց պետականությունը տարբեր կերպափոխումներ է ունեցել»[14]:

Ֆրանսիացի սոցիոլոգ Լորանս Ռիտտերը, անդրադառնալով Հայաստան-սփյուռք երկխոսությանը, նշում է, որ էլեկտրոնային մամուլի, սոցիալական ցանցերի առկայության շնորհիվ էապես փոխվել է Սփյուռք-Հայաստան կապի որակը և Հայաստանը սփյուռքին հասանելի է դարձել: Հետազոտողը գտնում է, որ «դասական» սփյուռքը, ի տարբերություն Հայաստանից արտագաղթացների, քիչ է խառնվում հայաստանյան քաղաքական կյանքին՝ նախընտրելով շարունակել կենտրոնանալ բարեսիրական աջակցության վրա[15]:

ԽՍՀՄ փլուզումից հետո 1991թ. Հայաստանի Երրորդ հանրապետության կազմավորումը հենց սկզբից ուղեկցվեց բնակչության արտագաղթով: Տնտեսական դժվարությունների հետ կապված՝ մոտավոր հաշվարկներով Հայաստանը լքել է 1 մլն-ից ավել մարդ: Հայաստանից և Ադրբեջանից (վերջինից ջարդերի հետևանքով բռնի տեղահանված-Լ.Մ) արտագաղթածները համալրեցին ԱՄՆ-ի, Եվրոպայի,

---

[14] Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, Հայագիտության հարցեր, Երևան 2014, էջ 46-57:

[15] Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ, գիտ. խմբագիր՝ Գ. Հարությունյան, Երևան 2014, էջ 19-20:

Բալկանյան երկրների հայկական համայնքները: Ձևավորվեցին նոր համայնքներ հայկական սփյուռքի համար ոչ ավանդական այնպիսի երկրներում, ինչպիսին են Չեխիան, Սլովակիան, Գերմանիան, Իսպանիան Ավստրիան: Մեծ թվով հայեր հաստատվեցին հետխորհրդային տարածքում՝ ՌԴ-ում, Ուկրաինայում, Բելոռուսում: Նման պարագայում ավելացավ և հայկական սփյուռքի թվաքանակը և աշխարհագրական ցրվածությունը: Ի տարբերություն 1915թ. ցեղասպանության արդյունքում հայրենիքից բռնագաղթվածների՝ հայության արտագաղթի վերջին ալիքի մոտ բացակայում է հայրենիքի կորստյան զգացումը, ուր նրանք երբեք չեն կարողանա վերադառնալ, նրանք իրենց հետ չեն տարել ցեղասպանության ու բռնագաղթի սարսափները (բացառությամբ՝ Ադրբեջանի Սումգաիթ, Բաքու և մյուս քաղաքներում կազմակերպված ջարդերի հետևանքով տեղահանված հայերի-Լ.Մ)[16]:

Երկրի համար դժվար պահերին սփյուռքն ու հայրենիքը դառնում են մեկ միասնություն, մեկ ամբողջական օրգանիզմ: Դա հատկապես պայմանավորված է պատմական պատճառներով: Արցախյան քառօրյա պատերազմի ընթացքում աշխարհի տարբեր ծայրերից հայերը շտապում էին օգնության: Ինչպես իրավացիորեն Վ. Տիշկովն է նշել. «Սփյուռքը վիճակագրություն չէ, առավել ևս նույն հնչողությամբ ազգանուններ ունեցող անձանց ամբողջություն»[17]: Միևնույն ժամանակ սփյուռքահայությունը հայրենիքում կամ սփյուռքում կատարվող իրադարձություններին զգուշությամբ է արձագանքում, որը պայմանավորված է հանգրվանած երկրի հետապնդած քաղաքական և տնտեսական շահերով և ՀՀ-ի հետ ունեցած հարաբերություններով:

Հայկական սփյուռքի կյանքում մեծ ազդեցություն ունի Հայ առաքելական եկեղեցին: Հայկական սփյուռքի առանձնահատկություններից մեկն էլ այն է, պայմանավորված պատմական, ողբերգական իրադարձություններով, որ սփյուռքն ունի կաթողիկոսություն՝ հանձին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի: Բացի եկեղեցուց, սփյուռքում մեծ աշխատանք են կատարում նաև ավանդական կուսակցությունները, հայրենակցական միությունները, զանազան այլ կազմակերպությունները: Նրանց բոլորի հիմնական նպատակը ազգային ինքնության պահպանումն է: Չնայած որ կրոնը հանդիսանում է էթնոպաշտ-

[16] Дятлов В., Мелконян Э., указ, раб., с.с 103-104.

[17] Тищков В. А, указ. раб., с. 51.

պանական մեխանիզմի կարևոր տարր, որոշ դեպքերում այդ կարևոր գործառույթն իրենց վրա են վերցնում սփյուռքյան հասարակական-քաղաքական կազմակերպությունները: Մասնավորապես ժամանակակից Իրանում, որտեղ հայերը ճանաչված են կրոնական, այլ ոչ թե էթնիկական փոքրամասնություն, ամենօրյա կյանքում ազգային կողմնորոշման կազմակերպման պատասխանատվությունն իր վրա է վերցրել Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը[18]:

Սփյուռքի հայությունը մեծ պատասխանատվություն է զգում հայրենիքի հանդեպ:

Եթե մինչ ցեղասպանության հարյուրամյակը սփյուռքահայությունը համախմբված էր Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, ապա այժմ՝ պահանջատիրության և հայրենիքի անվտանգություն գաղափարի շուրջ: Սփյուռքի ներկա սերնդի մոտ կարծես ավելի վառ է արտահայտված կորուսյալ հայրենիքի նկատմամբ գենետիկ հիշողությունը: Եվ ինչպես աշխարհահռչակ հայ, հայկական սփյուռքի կարկառուն դեմք Շառլ Ազնավուրն է նշում. «Հիշողությունը չես ջնջի»:

*Բանալի բառեր.* Diaspora, սփյուռք, միգրացիա, հայրենիք, գեոսոցիալական օրգանիզմ, բռնագաղթ, ցեղասպանություն:

### Գրականություն


1. Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, Հայագիտության հարցեր, Երևան 2014:
2. Սփյուռքի դիրքորոշումները ՀՀ աշխարհաքաղաքական կողմնորոշումների շուրջ, գիտ. խմբագիր՝ Գ. Հարությունյան, Երևան 2014:
3. Абрамян Л., Армения и армянская диаспора: расхождение и встреча, 21-й ВЕК, № 2, 2005г.
4. Адвашкин А. А., Феномен диаспоры: методологические основы научного исследования, Вестник Челябинского государственного университета. 2015. № 2 (357).


[18] Абрамян Л., Армения и армянская диаспора: расхождение и встреча, 21-й ВЕК, № 2, 2005г., с. 140.

5. Джангозян С., Некоторые аспекты проявления этнической идентичности в диаспоре, Вестник Ереванского университета. Международные отношения, Политология, Ереван 2014.
6. Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии. – Ер.: Институт Кавказа, 2009.
7. Кондратьева Т. С,. К вопросу о понятии “диаспора”: Дискуссия в научном сообществе // “Диаспоры в Европе. Сборник научных трудов”. М., 2009, № 4.
8. Кондратьева Т. С, Диаспоры в современном мире: эволюция явления и понятие.(Опубликовано на портале 27/02/10). http://www.perspektivy.info/book/diaspory_v_sovremennom_mire_evolucija_javlenija_i_ponatija_2010-02-27.htm
9. Космарская Н., Дети империи» в постсоветской Центральной Азии: адаптивные практики и ментальные сдвиги (русские в Киргизии, 1992-2002), Москва 2006.
10. ТАСС, международное огенство России. http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/2580836.
11. Тищков В. А, Исторический феномен диаспоры, Этнографическое обозрение, Москва 2000, № 2.
12. Семенов Ю. И., Этнос, нация, диаспора, Этнографическое обозрение, Москва 2000, № 2.
13. Шеффер, Г. Диаспоры в мировой политике // Диаспоры. М., 2003. № 1. http://world.lib.ru/k/kim_german_nikolaewich/3019-3.shtml
14. Cohen R., Global diasporas: An introduction // Global diasporas /Ed. by R. Cohen.-Second edition. - N. Y., 2008.

# СУЩНОСТЬ ДИАСПОРЫ В СОВРЕМЕННЫХ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЯХ

**Макарян Лилит Асканазовна**
Кандидат исторических наук, доцент

**Резюме**

Термин «Diaspora» имеет греческое присхождение, впервые в своем подлинном значеним был исползован в связи с изгнанием евреев.

Первые исследования, касающиеся диаспоры, были проведены в 70-80 годах XX века. Ряд исследователей отличаются своими разными подходами к вопросу диаспоры, которые позволяют понят ее сущность.

Члены общин диаспоры поддерживают эмоциональные, культурные, экономические связи со своей родиной. Армянская диаспора считается классической диаспорой, отличается своей организованностью, структурами, частным и глобальным мишлением, идеями и преследуемыми целями. Диаспора играет важную роль жизни Армении и армяанского народа. В роковые моменты армянская диаспора и родина становятся единым целым, одним целостным организмом. В дни горячиь событий четирехдневной Арцахской войны помощ родине приходила с разных концов мира.

*Ключевые слова:* Диаспора, миграция, родина, геосоциальный организм, депортация, геноцид.

# THE ESSENCE OF DIASPORA IN CONTEMPORARY SCIENTIFIC INVESTIGATIONS

**Makaryan Lilit Askanaz**
Candidate of Historycal Sciances, docent

**Summary**

«Diaspora» term has Greek origin, which was first used for its intended purpose in connection with the expulsion of the Jews. The first studies on the Diaspora were made in the 20th century- 70-80-'s. A number of researchers from their approaches to the Diaspora, which allow you to understand the essence of the Diaspora. Diaspora community members retain their homeland with the emotional, cultural and economic ties. The Armenian Diaspora is in classical diaspora, notable for its organization, structures, personal and global thinking, ideas and goals. The Diaspora plays a major role for Armenia and the Armenian people. Diaspora and homeland in perilous times, become a unity, a single organism. During the four-day intense of Artsakh war many of them from around the world rushed to help their homeland.

*Keywords:* Diaspora, migration, fatherland, geosocial organism, deportation, genocide.

## ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

# ԲԻՆԱՐԱՅԻՆ ԱՐԽԵՏԻՊԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Երանուհի Կարապետի Մանուկյան***
*Փ.Գ.Թ., ԵԿՏԱ, միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

Յուրաքանչյուր մարդ իր կյանքի ընթացքում առնչվել է այնպիսի իրավիճակի հետ, երբ առաջարկվող երկու հնարավորություններից պետք է ընտրել մեկը: Ինչո՞վ է պայմանավորված տվյալ հիմնախնդրի յուրահատկությունը: Առաջին հայացքից թվում է, թե այս հարցին պատասխանելը բավականին հեշտ է: Քանի որ մարդու ուղեղը իրենից ներկայացնում է իբրև համընդհանուր երկակի մեխանիզմ, ուստի կիսագնդերից յուրաքանչյուրը պատասխանատուն է ֆիզիոլոգիական որոշակի գործունեության համար: Անհատի ստեղծագործական, ինտուիտիվ ունակությունները հստակեցվում են ուղեղի ձախ կիսագնդի միջոցով, իսկ ռացիոնալ-տրամաբանականը՝ աջ: Ինչը կոչվում է գլխուղեղի գործառնական համաչափություն: Թվում է՝ խնդիրն անհետանում է, երբ անդրադառնում ենք մարդու բնույթին: Բայց, առաջին հերթին, հազիվ թե հնարավոր լինի դուրս բերել եզակի անհատական, նույնիսկ համընդհանուր որակները՝ ապավինելով մարդու կենսափորձին: Բազմաբնույթ սոցիալական իրականությունը հազիվ թե հնարավոր լինի նկարագրել երկակի տրամաբանական մեխանիզմով: Տվյալ հետազոտության ելակետը քաղաքակրթության հոգևոր փորձի այնպիսի տարրերն են, որոնք կոչվում են մտածողության և սոցիալական իրականության բինար կառուցվածքներ:

Ավելին, դեռևս Հին Հունաստանում և Եգիպտոսում փիլիսոփայական, կրոնական դպրոցներում ուսումնասիրության էին ենթարկվում թվային խորհրդանիշները /սիմվոլները/, ընդ որում երկակի հարաբերությունը երբեք չի դիտարկվում միակ հնարավորության միջոցով: Օրինակ՝ քրիստոնեական մշակույթը հատուկ նշանակություն է տալիս սուրբ երրորդությանը[1]: Սակայն, ի տարբերություն ասիական հակասական անտինոմիական կառուցվածքի, արևմտյան-եվրոպական քաղաքակրթությունը բնութագրվում է եռակի արխետիպի միջոցով, որը

[1] Տե՛ս, Уваров М.С. Бинарный архетип. Владивосток: Изд-во Дальневост. ун-та, 2000, էջ 17:

հանդիսանում է նրա սինթետիկ, համընդհանուր անհակասական էության նկարագրությունը: Այս տեսանկյունից ռուսական ինքնագիտակցության բնույթը որոշակիանում է իբրև սկզբունքային դուալիստական՝ առնչություն չունենալով եռակի մոնիստական ներդաշնակ համադրության հետ: Ինչու՞ բինար, երկակի, պարադոքսային հարաբերությունները բերում են այդքան անհամաձայնություններ, տարակարծություններ: Կարելի է արդյո՞ք ասել, որ քաղաքակրթության զարգացման ներկա ընթացքը գտնվում է երկակիության ազդեցության տակ: Ելնելով տարաբնույթ փիլիսոփայական հարացույցներից՝ հետարդիականության ներկա զարգացումները ենթադրում են արմատական տեղաշարժ հոգևոր իշխանության մեջ: Ընդհանրական գծերով նմանատիպ նորույթները կարելի է անվանել «հետ- լուսանցքայնություն», որտեղ «հետ» եզրույթի տակ հասկացվում է փիլիսոփայական դիսկուրսի որոշակի նմուշ, իսկ լուսանցքայնություն ասելով ենթադրվում է ակնհայտ անկարգություն, որը իր հավակնություններով դուրս է գալիս դասական փիլիսոփայական ավանդույթների դաշտից: Ուստի պատահական չէ, որ հիմնական գիտական և փիլիսոփայական կառույցները սկսում են խաղալ բուֆերային գոտու դեր: Այս համատեքստում բինարային արխետիպի (նախաձև) բովանդակության վերլուծությունը հիմնավորվում է նրանով, որ եվրոպական մարդու ինքնագիտակցությունը հակում ունի համընդհանուր արժեքների նկատմամբ, որին ձգտումը հաճախ ուղեկցվում է հակասականությամբ[2]: Սակայն այս իրավիճակը չի կարելի գնահատել միայն բացասական իմաստով, քանի որ մտածողության հակասականությունը, պարադոքսալությունը, անտինոմիականությունը ոչ այնքան բացասական հակվածություն է, որքան ժամանակակից իրողությունների տրամաբանության բացահայտման այլընտրանքներից մեկը: Բինար արխետիպի (նախաձև) համընդհանրության գաղափարը ինքն իր մեջ պարունակում է կոնկրետ մեթոդաբանական իմաստ: Բացի դրանից՝ այն եվրոպական մշակույթի տրամաբանական ենթատեքստն է, այսինքն՝ արդի անտինոմիկ իրավիճակի գաղափարը, ունակ է հռետորական-անպատասխան մտածողության այլընտրանքային ձևեր ձեռք բերել՝ հաշվի չնստելով համադրության ոչ մի տարբերակի հետ: Այն միևնույն ժամանակ եվրոպական

---

2 Տե՛ս, Уваров М.С., Белоусов В.А. Антиномичность как атрибут научного мышления. – Владивосток: Изд-во Дальневост. ун-та, 1993, էջ 208:

մշակույթի էական հատկանիշներից է, որի համար բնութագրական է արխաիկ-դիցաբանական մտածողությունը: Արխետիպերը (նախաձև) համընդհանրական խորհրդանիշներն են, որոնք նմանություններ ունեն պլատոնական էյդոսների հետ: Այս հասկացությունը բովանդակային ծանրաբեռնվածության է ենթակվել Կ. Յունգի կողմից, սակայն Արխետիպ (նախաձև) եզրույթը նա վերցրել է Օգոստինոս Երանելուց: Նախաձևը բնութագրվում է որպես դրոշմ իր ձևով և բովանդակությամբ առասպելական մոտիվներ ընդգրկող արխաիկ մտածողության համախմբություն[3]: Արխետիպերը (նախաձև) ունակ են թափանցելու գիտակցության մեջ և գիտակցվելու որպես խմբային պատկերներ և խորհրդանիշներ: Ուստի տվյալ մեկնության նպատակն է հետազոտել արդիականության այնպիսի սոցիալ- փիլիսոփայական հիմնահարցեր, ինչպիսիք են՝ ժամանակակից քաղաքական գիտակցության երկընտրանքները, իշխանությունների տարանջատման սկզբունքի պարադոքսները, տոտալիտար քաղաքական կառույցի «մուլպտիկացիայի» պարադոքսը և այլն:

Տվյալ խորհրդածությունների առանցքը հանդիսանում է արդի սոցիալական գիտությունների մեջ այդքան տարածված անտինոմիաների ձևակերպումը: Արդի քաղաքակրթական փոխակերպումները արտացոլում են քաղաքական գիտակցության վերափոխումների հետևյալ յուրահատկությունները:

Առաջին՝ քաղաքական գիտակցությունը համեմատաբար ազատագրվել է նախկին կապանքներից: Քաղաքական գործունեության, կուսակցությունների և շարժումների մասին դատողությունները ոչնչով սահմանափակված չեն, մինչդեռ բազմաբևեռ քաղաքական և հասարակական կառույցները և միավորումները չեն հստակեցրել իրենց դիրքորոշումները:

Երկրորդ՝ քաղաքական գիտակցությունը այլընտրանքային է, որը արտացոլում է դիրքորոշումների հարստությունը՝ սկսած ազատականից մինչև սոցիալիստական, կրոնականից՝ միապետական, ազգայինից մինչև անդրազգային կամ աշխարհաքաղաքական:

Երրորդ՝ քաղաքական գիտակցությունը դարձել է խիստ քննադատական, ինչն առավել ակնհայտ է պետական, պաշտոնական կա-

---

3 Տե՛ս, Юнг К. Г. Архетип и символ. М., 1991, էջ 14:

ռույցների գործունեության գնահատականի մեջ: Եթե սկզբնական շրջանում կատարվածի վերաբերյալ քննադատությունը մեղմ էր, ապա այժմ այն դուրս է գալիս հանդուրժողականության սահմաններից:

Չորրորդ՝ քաղաքական գիտակցության մեջ արդեն արձանագրվում են երկակի ստանդարտների դրսևորման արգելքները: Հնարավորությունների և հավակնությունների, սոցիալական նպատակների և արդյունքների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությունը ձևավորեց ոչ նույնական վերաբերմունք, ինչն էլ իր հերթին նպաստեց հակասության սրմանը և անորոշության խորացմանը:

Հինգերորդ՝ բավականին դժվար է ազատական-ժողովրդավարական հարաբերությունների կողմնակիցների և հակառակորդների սահմանազատումը:

Ի վերջո, այժմ քաղաքական գիտակցությունը բնութագրվում է անկայունության, անվստահության, անորոշության, այլընտրանքայնության առումներով: Այս իրավիճակում սոցիալական նույնականություն փնտրելը բավականին դժվար է, քանի որ դեռևս հստակեցված չեն ապագայի սցենարների իրագործման ուղիները:

Իրավիճակի պարադոքսալությունը պայմանավորված է նրանով, որ ինչքան հաճախադեպ են փոփոխությունները, այնքան ավելի սուր է դառնում քննադատությունը[4]:

Հաջորդ հարցը, որ անհրաժեշտ է քննության ենթարկել, այսպես կոչված, իշխանությունների տարանջատման հետ առնչվող հարըմբռնումներն են: Հասարակական վերափոխումները իրենցից ներկայացնում են միաժամանակ և՛ քաղաքական, տնտեսական ու հոգևոր իշխանությունների սաստկացած անհամաձայնեցվածության, և՛ դրանց չափազանց ուժեղացման արդյունքը: Ուստի պարադոքսը, ըստ երևույթին, պայմանավորված է նրանով, որ երբ իշխանության նշված տիպերը համաձայնեցված են գործում, իսկական ստեղծագործությունը բացառվում է. իսկ երբ՝ անհամաձայնեցված, նկատվում է ստեղծագործական վերելք, բայց, այդուհանդերձ, նրա արդյունքները սկզբունքորեն չեն համընկնում սպասվող ակնկալիքների հետ: Բանն այն է, որ իշխանության երեք տիպերի գործողությունների անհամաձայնեցվածությունն առաջ է բերում անորոշության անհանգեցնելի էֆեկտ՝ երկճ-

---

4 Տե՛ս, Тощенко Ж. Т. Парадоксальный человек, М., Гарадарки, 2001, էջ 160-162:

յուղավոր մրրիկներ[5]: Ցանկացած անցումային դարաշրջանի սցենարները կարելի է պատկերացնել հետևյալ կերպ: Հասնելով չափազանց ինքնավարության աստիճանի՝ հոգևոր իշխանությունն ընդդիմանում է մյուս երկուսին: Այդպիսի ընդդիմացումը պայմանավորված է ոչ միայն կոնկրետ սոցիալական պատճառներով, այլ նաև իշխանության տվյալ տիպի ներունակ նախադրյալներով: Հոգևոր իշխանության այն ներկայացուցիչները, ովքեր անվերապահորեն պաշտպանում են սոցիալական ստատուս-քվոն, կարող են օգտվել մեծ նյութական արտոնություններից և իշխանություն ունեցողների հովանավորչությունից, բայց նրանց հոգևոր հեղինակությունն անխուսափելիորեն ընկնում է. նրանց չեն լսում, նրանք չեն ոգեշնչում, այլ ձանձրույթ և դժգոհություն են առաջացնում: Դրա համար անհրաժեշտ է հստակեցնել, թե ովքեր են հոգևոր իշխանության կրողները, քանի որ երբ նրանց նախագծերը չեն խախտում «բանականը և թույլատրելին», պատմության մեջ հոգևոր չափման յուրահատկությունն ընդհանրապես կորչում է: Խոշոր պատմական շարժերի հոգևոր մեխանիզմի հիմքում ընկած է նախկին կարգի բարոյական վարկաբեկումը: Հենց որ հոգևոր իշխանությունը հեռացնում է վարչակարգին, այն կորցնում է իր անաչառ հետևորդներին, իսկ իրավիճակային պրագմատիկների աջակցությունն ունի իր հասկանալի սահմանները: Հոգևոր իշխանությունը պատմաբանական հոգեվերլուծության մեջ իրականացնում է «գեր-Ես»-ի գործառույթները, տնտեսականը՝ ճնշված և արտամղված «Այն»-ի գործառույթները: Համապատասխան բնազդներով ալեկոծված խմբերը հանդես են գալիս մե՛կ որպես արտադրության հրամանատարներ, մե՛կ որպես հասարակական կուտակման գործընթացն արդիականացնողներ և կազմակերպողներ: Հասարակական էվոլյուցիայի երկու վեկտորների փոխադարձ կիրառումը (որը կապված է գաղափարախոսությունների բարձր հայտերի հետ և արտահայտում է առօրեական, բայց ոչ պակաս շահադիտական կրքեր) ծնում են հասարակական էվոլյուցիայի այնքան հրաշալի տրամաբանություն, որ «հետևողական» դետերմինիստները և պարզ սխեմաների սիրահարները մշտապես խայտառակված են դուրս գալիս[6]: Բայց ևս մեկ վերկ-

[5] Տե՛ս, Философия истории, под. ред. А. С. Панарина. М : Гардарки, 1999, էջ 72:

[6] Տե՛ս, Назаретян А.П. Архетип восставшего покойника как фактор социальной самоорганизации. // Вопросы философии, 2002, №11, էջ 47:

տոր կա, որը կապված է քաղաքական իշխանության ինքնահաստատման տրամաբանության հետ: Քաղաքական իշխանությունը հավասարակշռություն է հաստատում այս երկու վեկտորների միջև: Քաղաքականությունը զրկվում է ոգեշնչող գաղափարներից և վառ կերպարներից, եթե չի սնվում բարձր հոգևոր աղբյուրներից: Ուժեղ քաղաքականությունն այն է, որը ոգեշնչվում է թույլերի պաշտպանությամբ: Բայց թույլերի պաշտպանությունը թելադրվում է նաև քաղաքական իշխանության պրագմատիստական պատկերացումներով: Տնտեսապես ուժեղները հաճախ ծանրաբեռնվում են նրա խնամակալությամբ և ձգտում են այն իջեցնել մինչև սեփական բաժանմունքի դերի: Ուստի քաղաքականությունն իր գլխապտույտ բարձունքներին հասնում է այն ժամանակ, երբ չեզոքացնում է ուժեղներին՝ շահագործելով թույլերի զգացմունքներն ու սպասելիքները: Միևնույն ժամանակ իշխանության իրական ինֆրակառույցը և ռեսուրսները ձևավորվում են «ուժեղների» համամասնակցության դեպքում, որոնք ներկայացնում են նրա գործառնական, այլ ոչ թե գաղափարական կողմը: Պետք է նշել, որ իրար վրա դրված ինքնավար տրցակների հետդասական պատկերն արտացոլում է պատմության ինչ-որ «նորմ»: Իշխանության ճյուղերից յուրաքանչյուրը՝ հոգևորը, քաղաքականը և տնտեսականը, իր գործում պետք է լինի ինքնավար: Այսպես, քաղաքական իշխանությունը չի կարող ուղղակի իրագործել հոգևոր իշխանության պատմական ծրագրերը:

Անհրաժեշտ է կենտրոնանալ քաղաքական իշխանության վրա, քանի որ նախորդ հասարակարգի փլուզումից հետո վերլուծաբաններին ժառանգություն հասավ տեսական և գործնական նշանակություն ունեցող փաստեր մեծ կույտ: Ընդհանրական ձևով այն կարելի է ձևակերպել իբրև ամբողջատիրական քաղաքական կառույցի «մուլյտիկացիայի» պարադոքս: Հոգևոր իշխանությունն օրինականացնում է փոփոխությունները՝ նախկին կարգը խորտակողին ապահովելով մեծ բարոյական ալիբիով: Բայց իսկական համախմբող արդյունքի կհասնի այն ժամանակ, երբ նրա մեծ բարոյական զայրույթին կհամապատասխանի նաև պատմական ուխտի մասշտաբը. մարդիկ սովորաբար փոքր ձեռքբերումների համար չեն ներքաշվում Մեծ պատմության արկածների մեջ: Կարելի է որքան հարկն է պսակազերծել ուտոպիզմը, բայց կարևոր է հասկանալ, որ պատմական հեղաշրջումներն

ուտոպիաներ են պահանջում և առանց դրանց, դժվար թե ընդհանրապես տեղի ունենան: Պատմական ուտոպիայի ցանկացած քննադատություն, որը տեղի է ունենում այն պահին, երբ այն սրբագործում է նոր պատմական նախաձեռնություն, հասարակության կողմից չի կարող ընկալվել այլ կերպ, քան հնացած կարգի ջատագովություն կամ դասալքություն: Քանզի համապատասխան «ուսմունքների» վավերականությունը չափվում է ոչ թե նրանց գիտականորեն ճշմարիտ լինելու աստիճանով, այլ մեծ համախմբող գործառույթ ծնելու ունակությամբ: Բայց իրական պատմական գործընթացին միանում են երկու այլ ուժեր, որոնք նախաձեռնում են համապատասխանաբար նոր սեփականատերերի և իշխանավորների կազմավորումը: Նրանց տրամաբանությունը և շահերը բավականանին հազվադեպ (այն էլ ժամանակավորապես) են համընկնում ոգեշնչող նպատակների հետ: Պատմության դրաման ծավալվում է որպես բարձր (հոգևոր իշխանության կողմից արթնացված) և ցածր (յուրացման բնազդների հետ կապված) կրքերի բախում[7]: Վերջիններս միայն հազվադեպ դեպքերում են բացահայտվում իրական տեսքով: Ամենից հաճախ դրանք ձեռք են բերում կերպարանափոխված ձևեր: Եթե քաղաքականությունը ձգտում է հասնել դարաշրջանի այս կամ այն ոգեշնչող միֆի՝ ամպերից այն կողմ գտնվող հեռուները և ենթարկված է համապատասխան մաքսիմալիզմի, ապա այն կորցնում է իր իրատեսական բնույթը և կարող է իսկապես վտանգավոր դառնալ: Ըստ էության՝ 20-րդ դարի ամբողջատիրական շարժումները հիմնված էին հենց քաղաքականությունն ամբողջությամբ մեծ միֆին ենթարկելու վրա. նրանց, ովքեր հավակնում են երկրի վրա դրախտ ստեղծել, անմիջապես քարշ կտան դժոխք: Քաղաքականությունը, այսպիսով, պետք է կառուցվի առողջ օգտապաշտության և գործնականության վրա: Այն մի կողմից տեսադաշտից չպետք է կորցնի խոշոր նպատակները, որոնք առաջադրվել են դարի հոգևոր իշխանության կողմից («խոշոր ուսմունքների», գաղափարախոսությունների կողմից, սոցիալական արդարության սկզբունքներով), մյուս կողմից չպետք է կորցնի ամուր հողը և լինի հնարավորի արվեստ: Քաղաքականության կողմից իր ինքնավար տրամաբանության կորուստը և իր ամբողջական ենթրակումը հոգևոր իշխանությա-

---

7 Տե՛ս, Алаев Л.Б. Всемирная история: первобытный период. Лекция. М.: МГИМО, 1999, էջ 78:

նը հղի է նրանով, որ կընկնի աստվածապետությունների ֆունդամենտալիստական հնամենիության մեջ: Այլ ծայրահեղություն է ներկայացնում հոգևոր իշխանության վերածումը մյուս երկու իշխանությունների՝ հատկապես տնտեսական իշխանության ծառայի: Պատմության մեջ այս միտումը հաճախ է ի հայտ գալիս՝ ի պատասխան նախորդ ֆունդամենտալիստական փուլի ծայրահեղության[8]: Այսպես, Հայաստանում այսօր հոգևոր իշխանությունը, որն իր վրայից գցել է ամբողջատիրական վարչակարգի կողմից վարկաբեկված վեհ նպատակներին և սկզբունքերին ծառայելու առաքելությունը, չի ամաչում ողջ աշխարհի ուժեղների առջև ինքնաոչնչանալուց և հակված է օրինականացնել նրանց բարոյական-կասկածելի պրակտիկան: Բայց դրանով իսկ այն կորցնում է իրական հոգևոր իշխանության, այսինքն՝ ուղեղների տիրուհու բնույթը: Ընտրանին, որը չի ամաչում «նվաստացման խաղից», որը տապալում է ոչ թե այս կամ այն կուռքերն ու իդեալները, այլ իդեալներին ծառայելու սկզբունքը, կորցնում է իր իրավազոր, իշխանական գործոնի նշանակությունը: Աշխարհից վերանում է նրան այդքան անհրաժեշտ հոգևոր չափումը, ինչը բերում է կյանքի հրեշավոր հոգևոր-բարոյական անկման: Արատն այլևս չի քողարկվում, այլ բարձրաձայն հայտարարում է իր իրավունքների մասին: Պարզ է, որ սա սպառնում է քաղաքակիրթ գոյության ինքնին հիմքերի պայթեցմամբ, սոցիալ-դարվինիզմի մեջ ընկնելու վտանգով: Դրա համար հասարակությունը պետք է վերականգնի հոգևոր իշխանության կարգավիճակը որպես համախմբող և նորմաստեղծ ուժ, որն ուղղորդում է այլ սոցիալական ուժերի գործողությունները: Պետք է ասել, որ հոգևոր իշխանությունը դարձել է արդի ազատական քննադատության թիրախը ոչ միայն իր ամբողջատիրական-ֆունդամենտալիստական մեղքերի համար: Այն հարուցում է նաև ռացիոնալ պատմության կողմնակիցների մեթոդաբանական զայրույթը: Բանն այն է, որ հենց նա է առաջին հերթին բարդացնում պատմական գործընթացը՝ բեկելով նրա տրամաբանությունը, որը կապված է թույլերի նկատմամբ տնտեսապես և քաղաքականապես ուժեղների, հետամնացների նկատմամբ առաջավորների, զարգացողների նկատմամբ զարգացածների գերազանցության հետ: Հոգևոր իշխանությունը համաշխարհային պատմության

8 Տե՛ս, Ясперс К. Смысл и назначение истории. – М.: Политиздат, 1991, էջ 529:

պարադոքսների աղբյուրն է, երբ հենց «հեզաբարոններն» են ժառանգում հողը, երբ մեծ ֆորմացիոն նախաձեռնությունները և նորարարությունները դուրս են գալիս ոչ թե կենտրոններից, այլ աշխարհի ծայրից, իսկ հետամնացներն ու պարտվածները գերազանցում են առաջադիմած հաղթողներին: Արդի ազատականության դրաման պայմանավորված է նրանով, որ այն արտահայտում է հաղթողների դիրքորոշումը, իսկ ոգու ոլորտում այն կասկածելի առավելություն է: Ազատականությանը դավաճանեց բոլոր խոշոր գաղափարախոսությունների մեծ ինտուիցիան, որը կապված է «հոգով աղքատների» քրիստոնեական ուխտի պարադոքսների հետ: Այն սկսեց բացահայտորեն ծառայել ուժեղներին և առաջադիմածներին ու դրանով իրեն հեռացրեց մեծ հոգևոր-կրոնական ոգեշնչման աղբյուրներից: Ազատականությունն անհատապաշտությանը միշտ հավատարմության երդում է տալիս: Բայց բավական է լուրջ մտածել, և կպարզվի, որ անհատի, որպես «աշխարհը պահողի» (սոցիալական զարգացման սկզբնաղբյուրի) կարգավիճակը կանխորոշված է հոգևոր ոլորտի պարադոքսներով: Հոգևոր չափումից դուրս անհատը միշտ թույլի, սոցիալական «մեգամեքենաներին» ենթակա օղակի տեսք կունենա: Իրականում միայն հոգևոր էներգիաներն են նրա կողմը, այն ժամանակ, երբ շրջակա աշխարհի կողմն են բոլոր առարկայական առավելությունները: Եվ քանի դեռ մենք հավատում ենք, որ հոգևոր կողմն ավելի կարևոր է, մեր ապավինումները մարդկային անհատականությանն ունեն բավարար հիմքեր: Որքան հոգևոր չափումը փոքրանում է, արդյունաբերական և սոցիալական հետմարդկային աշխարհը մարդկության նկատմամբ հաղթանակ է տանում: Դրա համար պետք է ինքնակործան համարել հոգու, հավատի և ոգեշնչման այն քննադատությունը, որը ձեռնարկել է արդի ազատականությունը՝ ամբողջատիրական գայթակղությունների հետ պայքարելու պատրվակով: Մինչդեռ պետք չէ մտածել, որ պատմության ողբերգություններն ու անարդարությունները կապված են միայն հոգևոր իշխանության թուլացման միտումների հետ՝ hoգուտ մյուս երկուսի: Հոգևոր իշխանությունն ունակ է գործել իր անարդարությունները և լինել բավականին դրամատիկ բախումների պատճառ: Չմոռանանք, որ հոգևոր իշխանությունն իր բարձրագույն արտահայտությունը ստացել է 19-20-րդ դդ. խոշոր գաղափարախոսությունների տեսքով: Այդ գաղափարախոսություններն արդի հասարակությանը

պառակտել են «աղաղակող փոքրամասնության» և «լռակյաց մեծամասնության»[9]: Որպես նրանց մշտական թիրախ էին հանդես գալիս ոչ միայն ռեակցիայի քաղաքականապես անվարծահատույց ուժերը, այլ նաև տեղաբնիկները, որոնց գիտակցությունը մնում էր մինչտեխնոլոգիական: Ժամանակակից հասարակական գիտակցության մեջ կա երեք շերտ. *ավանդական*, որը կապված է մշակութային հիշողության հետ (գիտակցություն, ժառանգություն); *էմպիրիկ*, որը ձևավորվել է մարդկանց սեփական փորձի ազդեցությամբ (գիտակցություն-արտացոլում); և *տեխնոլոգիական*, որը ձևավորվել է «կարծիքի ֆաբրիկաների» ազդեցությամբ (գիտակցություն-արտադրանք)[10]: Գաղափարախոսները մարդկանց բաժանում են ըստ իրենց գիտակցության տիպի. մի կողմում հանդես են գալիս նրանք, ում մոտ գերակշռում է գիտակցություն-արտադրանքը, մյուս կողմում նրանք, ում մոտ գերակշռում է գիտակցություն-հիշողության և գիտակցություն-փորձի զուգակցումը: 20-րդ դարի խոշոր ուսմունքերը, կոմունիզմից մինչև ազատականություն, բխում են դաժան երկճյուղավորումից. ավանդակա՞ն գիտակցություն, թե՞ ժամանակակից: Ընդ որում, չգիտես ինչու, ավանդականի խմբին են դասում և՛ մշակույթ-հիշողությունը, և՛ մշակույթ-փորձը: Խոշոր ուսմունքների կուրադավան հետևորդներն անհանդուրժողական են ոչ միայն ավանդույթի, այլ նաև ժողովրդական ողջախոհության նկատմամբ, որը կապված է առօրյա սովորական փորձի հետ: Օրինակ՝ 20-ական թվականների գյուղացիները համընդհանուր կոլեկտիվացման պրոպագանդիստներին նախազգուշացնում էին, որ նրանց երազանքը ի կատար չի ածվի, մինչդեռ խոշոր գաղափարախոսությունը զայրանում էր «մանրբուրժուական առօրյա գիտակցության» այս նախապաշարումներից՝ պնդելով, որ նոր մարդը հասարակական բարիքների համար ավելի լավ հոգ կտանի, քան սեփականի մասին: Եվ ի՞նչ: Յոթանասուն տարի ամբողջատիրական քաղաքական կառույցի «մուլյտիկացայի» պարադոքսը ի ցույց դրվեց[11]: Այսօր սոցիալական կյանքում ոչ պակաս ամայացում է ծնում «մոնետարիստների» կուրադավանությունը: Նրանք հետևողականորեն կործանում են քաղաքակիրթ ինֆրակառույցը, որը մարմնավոր-

[9] Տե՛ս, Философия истории, под. ред. А. С. Панарина. М : Гардарки, 1999, էջ 74:

[10] Տե՛ս, նույն տեղում, էջ 75:

[11] Տե՛ս, Уваров М. С. Бинарный архетип, էջ 15:

վում է նրանում, որ չի տալիս անմիջապես շուկայական արգասիք, այլ իրականում ստեղծում է երկարաժամկետ պլանի ներդրումային նեռում՝ գիտություն, մշակույթ, կրթություն, հաղորդակցության միջոցներ: Մի խոսքով՝ նրանք ոչնչացնում են այն ամենը, ինչն անհատին դարձնում է իսկապես սոցիալական՝ փոխարինելով նրան «զուտ շուկայական» անհատապաշտության ռոբինզոնադով, որը չի տեսնում հասարակական հարստության սոցիալական գործոնները: Արդյունքում Հայաստանը ընկղմվում է մինչքաղաքակրթական գոյության խավարի մեջ, իսկ ազատական-մոնետարիստները կոչ են անում դրանում տեսնել ոչ թե աղետ, այլ հաջողություն: Նոր կուրադավանության թիրախ է դառնում ոչ թե անցած-գնացած գյուղացիական մեծամասնության «մանրբուրժուական» գիտակցությունը, այլ նորի կոլեկտիվիստական գիտակցությունը, որը որոշ ազատականներ անվանում են «կարմիր-դարչնագույն»: Ինչպես հայտնի է, դասական ազատականության մեթոդաբանական հիմքը էմպիրիզմն էր. հին ազատականները չէին վստահում մտահայեցողական սխեմաներին՝ փառաբանելով պրակտիկ փորձը: Բայց այսօր մեր ազատականները խույս են տալիս փորձի տվյալներից: Նրանք վերականգնել են «երկու ճշմարտությունների» կոմունիստական հայեցակարգը. մոնետարիզմի քաղաքականության և անվանակարգային-հանցավոր մասնավորեցման աղետաբեր հետևանքների մասին աներկբայորեն վկայող փաստի ստոր ճշմարտությանը հակադրվում է անտեսանելի, բայց կուրադավանորեն վավերացված «կյանքի ճշմարտությունը», որը ռեալ իրականությունը դուրս է բերում փակագծերից ինչ-որ անհայտ տեղ: Այնուամենայնիվ, նոր արքունական ուսմունքի այս ամբոխավարությունը չէ, որ ներկայացնում է սոցիալ-փիլիսոփայական վերլուծության առեղծվածը: Պարադոքսը նրանում է, որ մոլի ազատականներ են հադես գալիս ոչ այնքան կյանքի նոր տերերը, որոնց համար ազատականությունն իրենց կասկածելի սոցիալական պրակտիկաները գաղափարախոսական օրինականացման ենթարկելու միջոց է, որքան մտավորականության բազմաթիվ շերտերը, որոնք խիստ տուժել են տասնամյակներ շարունակ ստեղծվող տեղեկատվա-կրթական ինֆրակառույցի կործանումից[12]: Ուղղակի կաշառման կամ ահաբեկման դեպքը հաշիվ չէ, քանզի

[12] Տե՛ս, Манеев А. К. Философский анализ антиномий науки. – Минск: Наука и техника, 1974, էջ 221:

դա չէ առիթ ստեղծում ռեֆլեքսիայի համար: Ինչու՞ է հասարակությունը ծածկվել նոր ազատական ալիքով, որի տակ խառանվել են և՛ գիտակցություն-հիշողությունը, և՛ գիտակցություն-փորձը, որոնք փոխարինվել են չկշռադատված գաղափարախոսական հավատի նոր պարտավորություններով: Ինչու՞ կրկին այդպիսի ճնշման ենթարկվեցին փորձը և առողջ միտքը՝ մնալով «մարգինալների և չհարմարվածների» բախտաբաժինը:

Հոգևոր իշխանությունը գործառնում է միայն այն ժամանակ, եթե համոզմունքի պրակտիկան ճնշում է հարկադրման պրակտիկային: Հավանական է, որ անցումն անպաճույճ ժողովրդական մշակույթից քաղաքակրթության սոցիալական կառուցակցմանը իրագործվում է ոչ առանց ժողովրդի օգնության: Ժողովուրդը գնում է հովիվների հետևից, եթե նրանցում զգում է իսկական, չոճավորված հավատի մոլեռանդություն: Հակառակ սովորական կարծրատիպի՝ մոլեռանդությունը մտավորականների զավակն է, այլ ոչ թե «գորշ զանգվածների» ժառանգությունը: Իսկ ինչպիսի՞ն են այդ մոլեռանդության աղբյուրները: Պատմության փիլիսոփայական տեսությունը պետք է առանձնացնի այդ պատճառները, քանի որ դրանք սնուցում են պատմության ամենածանր անարդարություններից մեկը՝ էթնոցիդը (սրա տակ հասկացվում է ոչ այնքան մարդկանց, որքան ազգային մշակույթների և կացութաձևերի վերացում): Հոգևոր ավանդույթները ոչ այնքան լուսավորչական ջանքերի արդյունք են, որքան կոլեկտիվ հավատի նոր տիպերի արդյունք: Ոչ թե լուսավորչական մաքսիմները, այլ հավատի մաքսիմներն են դրոշմվում հսկա գրավոր ավանդույթների տեքստերում: Այդ տեքստերը էթնոսներին զետեղում են նոր միասնական հոգևոր տարածության մեջ, որտեղ փոքր էթնիկական ավանդույթների բազմությունը վերածուլվում է: Ժողովուրդներն ինչու՞արդյունավետ դիմադրություն ցույց չեն տալիս այդ վերածուլմանը: Ինչու՞ նրանք իրենց ավանդույթը պատշաճ համառությամբ չեն պնդում: Ի՞նչ աղբյուրներից են նրանք վերցնում նոր գրավոր տեքստերը կրողների՝ իրենց արտասովոր էներգիան: Որտեղի՞ց է բխում էթնիկական բռնություն կիրառելու այդ իրավունքը, որի գիտակցմամբ, անշուշտ, լեցուն են տեքստի մոլեռանդ պրոպագանդիստները: Այստեղ մենք իրականում հանդիպում ենք լիովին անսպասելի պարադոքսի. մտավորականները՝ նոր տեքստի նախանձախնդիրները, հանդես են գալիս որպես մո-

լեռանդներ, այն դեպքում, երբ ժողովուրդը հանդես է գալիս ավելի շուտ սկեպտիկի դերում՝ ինչպես հարկն է չցուցաբերելով ո՛չ համառ նվիրվածություն էթնիկական հնությանը, ո՛չ էլ կրոնափոխական խանդավառություն նոր ուսմունքի առաջ[13]: Ի՞նչն է մեծամասնության սկեպտիկական վիատության պատճառը: Ինչու՞ են ներկայիս ամուր դիրքորոշման հենակ դառնում ոչ թե ավանդույթը, ոչ թե առողջ միտքն ու փորձը, այլ ոչ մեկի կողմից չստուգված նորաձև ուսմունքները: Պատմափիլիսոփայական տեսակետից այս հարցերը չափազանց կարևոր են, քանզի պատմությունը կերտում են ոչ թե զգույշ էմպիրիկներն ու սկեպտիկները, այլ մոլեռանդները, ովքեր զինված են ապրիորի «անսխալ» տեսությամբ: Եվ երբ արդյունքում պարզվում է, որ անսխալ տեսությունը բերել է փակուղու, ռևանշ են վերցնում, այնուամենայնիվ, ոչ թե նախկին սկեպտիկները, այլ նոր մոլեռանդները (այդ թվում և նրանք, ովքեր դեռ երեկ հանդես էին գալիս որպես նախկին «հավատի» ուղեկից): Ինչու՞ է, իսկապես, փորձն այդքան քիչ գնահատվում և այդքան քիչ ազդում պատմական գործընթացի վրա՝ համեմատած այս կամ այն ուսմունքների երբեմն վայրագ տարօրինակությունների հետ: Նոր ուսմունքների կուրադավան հետևորդները շարունակ գանգատվում են ժողովրդական հոգեմտակերտվածքից՝ որպես իրենց աշխարհացունց ձեռնարկումների խոչընդոտ: Իրականում ժողովրդական սուբստանցիան ծառայում է ավելի շուտ որպես իրական փորձի, քան ինչ-որ մտային կառույցների պահապան: Հնարավոր է, որ հավատի վիճակը մարդու համար ունի ինքնարժեք նշանակություն: Բայց որպեսզի չկանգնենք ապրիորիզմի սայթաքուն ճանապարհին, մենք պետք է պարզենք այն դրականը, որը ժողովուրդներին կարող են տալ խոշոր ուսմունքները, որոնց հետևելով նրանք հաճախ վարձահատույց են լինում և՛ սոցիալական կայունությամբ, և՛ դարավոր ձեռքբերումներով, և՛ նույնիսկ սեփական նույնականությամբ: Իսկ հետո մենք կփորձենք պատասխանել հետևյալ հարցին. ի՞նչ միջոցներով կարելի է բարելավել կորուստների և ձեռքբերումների հավասարակշռվածությունը և ընդհանրապես վիճարկել պատմական գործընթացի օտարված բնույթը, որը կապված է «հարկադրված պատմության» էֆեկտների հետ՝ սոցիալ-պատմական զարգացման մեջ ավանգարդի և զանգվա-

[13] Տե՛ս, Панарин А.С. Глобальное политическое прогнозирование. М.: Алгоритм, 2000, էջ 74:

ծի, կենտրոնի և ծայրամասի անիրավահավասար դիրքով: Եթե օգտվենք էմպիրիկ չափանիշներից, որոնք վերաբերում են մարդկանց առօրյային, և ոչ թե առաջադիմական տեսությունների վերացարկումներին, ապա առաջընթացի վատնողական բնույթը զարհուրելի ակնհայտ տեսք կընդունի: Իսկ եթե հաշվի առնենք կյանքի որակի որոշ չափանիշներ, որոնք վերաբերում են մասնավորապես գոյության էկոլոգիական, քաղաքական և բարոյահոգեբանական երաշխիքներին, ապա 20-րդ դարի պատմական հաշվեկշիռը մեզ համար, անկասկած, կլինի բացասական: Առավել հուսալի հանրագումարային է ժողովրդագրական ցուցանիշը. այն վկայում է տվյալ պատմական տարածության մեջ մարդու՝ որպես տեսակի հնարավորությունների մասին: Օբյեկտիվ ժողովրդագրական վիճակագրությունն անողոքաբար վկայում է բնակչության նվազեցման մասին. կոշտ սոցիալ-քաղաքական և արդյունաբերական տեխնոլոգիաները, որոնցով զինվել էին սկզբից ծայրահեղ ձախակողմյան, իսկ այնուհետև ծայրահեղ աջակողմյան բարենորոգիչները, ի հայտ բերեցին մարդկային պոպուլյացիայի նորացում: Մարդկությանը, որպես տեսակի, սկզբնապես հատկացվել է իսկայական մոլորակային ժամկետ. Երկրի ռեսուրսների ավանդական օգտագործման դեպքում դրանք կբավարարեին հարյուր միլիարդավոր տարիներ: Բայց այդպիսի գոյության սկզբունքը պետք է լինի ճգնակյացությունը՝ մարդու ենթարկումը տեսակի շահերին, կարճաժամկետ նպատակների ենթարկումը՝ երկարաժամկետներին[14]: Մոտավորապես 500 տարի առաջ Եվրոպայում սկսված աշխարհիկացման գործընթացը նշանակում էր այս ընդունակության հետևողական թուլացում: Ամբողջովին աշխարհիկացված մարդը մի էակ է, ով զոհաբերում է տոհմայինը հանուն անհատականի, երկարաժամկետ շահը՝ հանուն այսրոպեական հաջողության: Հենց որ մարդը հետ է սովորում երկարաժամկետ տոհմային նպատակներով ապրելուց, ծնվում է եվրոպական տեխնոլոգիական միֆը: Տեխնիկայի մեջ տեսնում են կարճաժամկետ հաջողության ռազմավարության իրականացման միջոցը տվյալ սերնդի կյանքի օրոք: Որքան ավելի թույլ են ճգնելու և զոհաբերելու ընդունակությունները, այդքան ավելի մեծ հույս է դրվում տեխնիկայի վրա: Տեխնիկական գործընթացը սպառողական-հեդոնիստա-

[14] Տե՛ս, Михеева И. Н. Амбивалентность личности: Морально-психологический аспект. – М.: Наука, 1991, էջ 127:

կան հասարակության սոցիալական պատվերի իրագործումն է: Որպես տուժող, որի վրա դրվում է այդ արագ հաջողության ռազմավարության համար տրվող փոխհատուցումը, հանդես է գալիս բնությունը. տեխնիկան գոհացնում է մարդու քմահաճույքները՝ ոչնչացնելով բնությունը: Էկոլոգիական հանցագործությունները պատահական շեղումներ չեն, դրանք ներդրված են սպառող անհատի ինքնին մոտիվացիոն կառուցվածքում:

*Բանալի բառեր.* բինարային արխետիպ, անտինոմիկ իրավիճակ, քաղաքական գիտակցություն, բինարային կառուցվածք, հոգևոր իշխանություն, տեղեկատվական ինֆրակառույց:

## Գրականություն


1. Уваров М. С. Бинарный архетип. Владивосток: Изд-во Дальневост. ун-та, 2000,
2. Уваров М. С., Белоусов В. А. Антиномичность как атрибут научного мышления. – Владивосток: Изд-во Дальневост. ун-та, 1993,
3. Юнг К. Г. Архетип и символ. М., 1991,
4. Тощенко Ж. Т. Парадоксальный человек, М., гарадарки, 2001,
5. Философия истории, под. ред. А. С. Панарина. М: Гардарки, 1999
6. Назаретян А.П. Архетип восставшего покойника как фактор социальной само-организации. // Вопросы философии, 2002, №11
7. Алаев Л.Б. Всемирная история: первобытный период. Лекция. М.: МГИМО, 1999,
8. Ясперс К. Смысл и назначение истории. – М.: Политиздат, 1991,
9. Манеев А. К. Философский анализ антиномий науки. – Минск: Наука и техника, 1974,
10. Панарин А.С. Глобальное политическое прогнозирование. М.: Алгоритм, 2000,
11. Михеева И. Н. Амбивалентность личности: Морально-психологический аспект. – М.: Наука, 1991,

## ОБЩАЯ ХАРАКТЕРИТСИКА БИНАРНОГО АРХЕТИПА

**Манукян Ерануи Карапетовна**
к.ф.н, ЕРОА, амбион междунеродиых отношений, преподавателъ

### Резюме

Исходным пунктом данного исследования являются такие элементы духовного опыта цивилизации, которые называются бинарными структурами мышления и социальной реальности.

Каждый человек в течение своей жизни сталкивается с такими ситуациями, когда он должен выбрать одни из предложенных двух вариантов. Однако, непозволительно данную ситуацию оценивать только с отрицательной стороны, так как противоречивость, парадоксальность, антиномичность мышления является не настолько отрицательной склонностью, а одной из альтернатив логического выявления современных реалий. Идея универсальности бинарного архетипа (прототипа) содержит в себе конкретный методический смысл. Кроме того, он является логическим подтекстом современности, то есть идея современиой антиномичной ситуации способна приобрести алтернативные формы риторически-безответного мышления, не считаясь с каким либо вариантом сочитания. Одновремениo, он является одним из сущепвениых особенностей европейской культуры, для которой характерно архаично-мифологическое мышление. Архетипы (прототипы) являются универсальнымн символами, котрые имеют сходства с платоновскими эйдосами. Прототип своей формой и содержанием характеризуется как печать, совокуниость архаического мышления, содержащего мифологические мотивы. Архетипи (прототипы) способны проникать в сознание и восприниматься как груповые изображения и символы. Поэтому, целью данного толкования является исследование таких социальнофилософских проблем современности, как дилемы современиого политического сознания, парадоксы принципа разделения властей, парадокс мутьтипликации» тоталитарной политической структтуры.

*Ключевые слова:* бинрный архетип, бинарная структура, антиномичная ситуация, политическое сознание, духовная власть, информационная инфраструктура.

## GENERAL CHARACTERISTICS OF BINARY ARCHETYPE

**Manukyan Karapet Yeranuhi**
PhD, EREA, Department of International Relations, Lecturer

**Summary**

The starting points of this research are the elements of spiritual practices of civilization that are called binary structures of thought and social reality. Each human being has met a situation where he/she have to choose between two opportunities. But this situation we shouldn't evaluate only by its negative sense as the controversy, paradox and antinomian of thinking isn't negative inclination so as to expose one of the alternatives to the logic of contemporary realities. The idea of universality of binary archetype itself contains a specific reference point. Besides it is the logical context of modernity, e.g. the idea of the current antinomic situation, is able to respond to alternative ways of rhetorical thinking without accepting any combination version. It is also an essential feature of European culture, that has characteristic of archaic-mythological thinking. Archetypes are universal symbols, that has similarities with platonic Eydos: Initial is characterized as a stamp by its form and it contents mythological aspects that involves the conglomerate archaic thinking. Archetypes are able to penetrate into the consciousness and realized as a group of images and symbols. So the purpose of this commentary is to explore contemporary social and philosophical issues such as the political consciousness of modern dilemmas, paradoxes of the principle of separation of powers, totalitarian political structure and "multiplication" paradox etc..

*Keywords:* binary archetype, binary structure, antinomian situation, political situation, political consciousness, spiritual power, information infrastructure.

# ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՎ ԱՊԱԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

***Երանուհի Կարապետի Մանուկյան***
*Փ.Գ.Թ., ԵԿՏԱ, միջազգային հարաբերությունների ամբիոն, դասախոս*

Սոցիոմշակութային պարադոքսների կառուցողական և ապակառուցողական հետևանքների վերլուծությունը արդիական է, քանի որ դրանց պատճառով մարդկանց կյանքի սոցիալական գործունեության համատեքստը կորցնում է երբեմնի կայունությունն ու որոշակիությունը, և գործընթացները դառնում են տարերային ու անկանխատեսելի: Առավել ևս, որ սոցիալական պարադոքսներն ու տարըմբռնումները, թեև մարդկային գործունեության օրինաչափ հետևանքներ են, բայց դրանք, որպես կանոն, զանգվածային բնույթ են ստանում հատկապես համակարգային փոխակերպումների փուլերում:

Մեթոդաբանական իմաստով սկզբունքային նշանակություն ունեցող այս կանխավարկածի համատեքստում գիտական ու գործնական նոր հնչեղություն են ստանում սոցիոմշակութային պարադոքսների ու տարըմբռնումների առաջացման ու դրսևորման սոցիալական, տնտեսական ու քաղաքական ոլորտների տարածա-ժամանակային հատկությունների, դրանցում գործառնող պարադոքսալ և իրարամերժ սկզբունքների, (սոցիալական նպատակների և դրանց արդյունքների անհամապատասխանություն, ռացիոնալ գործունեության իռացիոնալ հետևանքներ, ազատություն և անազատություն, կարգավորվածություն և քաոսի համաշխարհայնացում և ազգային ինքնիշխանության միտումներ և այլն) հիմնախնդիրների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունները: Հարցադրումների այս շարքն իսկ վկայում է, որ հիմնահարցը արդիական է, քիչ հետազոտված և այդ իմաստով՝ նորարարական: Առավել ևս, որ քաղաքակրթության զարգացման պարադոքսալ դրսևորումների պատճառներն ու հետևանքները քննարկվում են աշխարհի դասական պատկերը բնութագրող հարացույցների՝ պատմական ռացիոնալության կանխադրույթների ճգնաժամի ու փոխակերպումների համատեքստում:

Արդի քաղաքակրթության համակարգային փոխակերպումները, որոնք ընթանում են ոչ միայն հասարակական համակարգերի հիմնական ոլորտներում ու կառույցներում, այլև սոցիալական սուբյեկտներին բնորոշ մի շարք սոցիալ-հոգեբանական և մշակութային կազմավորումներում, առանցքային նշանակություն ունեն սոցիումի հետագա զարգացման համար: Այդ փոխակերպումների հետևանքով գնալով մեծանում է անորոշության և տագնապի զգացողությունը, քանի որ օրավուր բացահայտվում են սոցիոմշակութային վերափոխումների ստվերային կողմերն ու հնարավոր սոցիալական վթարներն ու դրանց հետևանքները: Ուստի այս համատեքստում կարևորագույն խնդրակարգերից է դառնում սոցիոմշակութային պարադոքսների իմաստավորումը: Հիմնախնդիրները կարելի է ձևակերպել հետևյալ հարցադրումների տեսքով.

1) սոցիոմշակութային պարադոքսները նոր երևույթներ են, թե հատուկ են մարդկության պատմությանը և ընդամենը նորովի են դրսևորվում.

2) ինչպիսի՞ բնույթ կամ սրվածություն են ձեռք բերում սոցիոմշակութային պարադոքսները համակարգային փոխակերպումների փուլերում:

Ժամանակակից հասարակությունները կանգնած են երկու հիմնախնդրի առջև. մի կողմից՝ ձերբազատվել նախկին համակարգային բնութագրերից և նրանց բնորոշ սոցիոմշակութային հիմունքներից, մյուս կողմից՝ ներառվել արդի համաշխարհային գործընթացների մեջ: Մարդկանց մեծ մասին, հուզում է այն հարցը, թե ի՞նչ է իրենից ներկայացնում արդի սոցիալական միջավայրը, որտեղ տեղի են ունենում անհատականացման և տիպականացման անընդհատ գործընթացներ, առավել ևս, ինչպիսին է մարդու սոցիալական հեռանկարը համակարգային փոխակերպումների փուլում, և դեպի ու՞ր է գնում մարդկությունը: Այս հարցադրումները մեկ անգամ ևս փաստում են, որ սոցիոմշակութային համակարգերին բնորոշ ներքին փոխակերպումներն ու տարըմբռնումները, արտաքին ազդակների նկատմամբ ընկալունակությունը, զարգացման այլընտրանքային հնարավորությունների առկայությունը և նմանատիպ այլ գործոններ հրատապ ու արդիական են դարձնում սոցիոմշակութային պարադոքսների հետազոտման հեռանկարը: Ժամանակակից արևմտյան քաղաքակրթությանը բնորոշ հա-

ռացույցներն իրենց արմատական բնույթով խարխլել են սոցիալական կարգը պահպանող որոշ հաստատությունների հիմքերը, և այդ հանգամանքը պահանջում է նորովի մեկնաբանել ու վերաիմաստավորել, քաղաքակրթական զարգացումների պարադոքսալ հետևանքներն ու տարըմբռնումները:

Համակարգային փոխակերպումների արդի փուլը ձևավորվեց լուսավորականության այն գաղափարների շղարշի ներքո, որոնք կարևորում էին սոցիալական կյանքի ապասրբազանեցման և ապակրոնականացման գործոնը: Այս ամենի նպատակը հասարակության մեջ բանականության, գիտության և այլնի օգնությամբ սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում ռացիոնալ գործողությունների նկատմամբ վստահություն սերմանելն էր: Բայց սոցիալական աշխարհի բանականացումն ու ռացիոնալացումը ոչ թե համընդհանուր գիտելիքի աճ էր ենթադրում, այլ ընդամենը փաստում էր, որ բացարձակապես չկան մարդու կյանքի մեջ ներխուժող գաղտնի, անկանխատեսելի գաղափարներ, և որ մարդը սկզբունքորեն կարող է ռացիոնալ հաշվարկի միջոցով տիրապետել իրերի աշխարհը: Իրատեսական աշխարհայացք դավանող նոր ժամանակի մտածողները պնդում էին, որ ապագային տիրելու համար հարկավոր է ձերբազատվել անցյալի սովորույթներից ու նախապաշարումներից և, օգտվելով գիտության ու տեխնոլոգիայի ընձեռած հնարավորություններից, աշխարհը դարձնել առավել կանխատեսելի ու կարգավորված: Պետք է նկատել, սակայն, որ ժամանակակից աշխարհը չի համապատասխանում այդ կանխատեսումներին, նպատակներին և իդեալներին: Ավելին, ժամանակակից քաղաքակրթությունը նկատելիորեն շեղվել է նախանշված ուղուց և քաղաքակրթության զարգացման ներկա միտումները ոչ միայն կանխատեսելի ու կառավարելի չեն, այլև դուրս են եկել ընդհանուր վերահսկողության ու զարգացման հունից և հարուցել ինքնակործանման լուրջ վտանգներ:

Սոցիալական համակարգերի ծրագրավորումը և վերակառուցման հաշվարկը չափազանց դժվար խնդիր է, քանի որ, ի տարբերություն բնական համակարգերի, վերջիններս ավելի ակտիվ են արձագանքում իրականացվող փոփոխություններին, ինչն իր հերթին առաջ է բերում նախանշված նպատակից շեղում, պատասխան չծրագրավորված փոփոխություններ հենց նույն համակարգում: Տվյալ նախագ-

ծի նպատակը արմատական և համակարգային փոխակերպումների փուլում սոցիոմշակութային պարադոքսների և տարըմբռնումների սոցիալ-փիլիսոփայական վերլուծությունն է, ինչը պահանջում է վեր հանել և վերլուծել սոցիոմշակութային շարժառիթների դերը պարադոքսների ձևավորման և լինելիության գործընթացներում, երբ հասարակական համակարգը, ձգտելով անցում կատարել մի որակական որոշակիությունից դեպի մյուսը, հրաժարվում է նախորդ սոցիոմշակութային հիմունքներից և ձևավորում նորը:

Սոցիալական իրականության գոյությունը կապված է ինչպես ամբողջարկող, կենտրոնաձիգ՝ այնպես էլ ապաամբողջարկող, կենտրոնախույս գործընթացների հետ: Այդ գործընթացների պատճառներ են հանդիսանում մասի և ամբողջի հակասությունները, տարբեր տեսակի սուբյեկտիվության փոխգործակցությունն իր ամբողջության հետ: Այս կամ այն սոցիումի ամբողջարկումը կամ ապաամբողջարկումը, ըստ էության, ունի համամարդկային բնույթ, վերջիններս հասարակության արտադրության և վերարտադրության մեջ սահմանում են համաշխարհային պատմության զարգացման և իրականության փոխակերպումների ընթացքն ու ուղղությունը: Այդ տեսակետից արդի քաղաքակրթության սոցիալական իրականությունը կարելի է բնութագրել որպես իրարամերժ գործընթացների ամբողջական համակարգ, որտեղ

ա. սոցիալական կապերի տնտեսական, քաղաքական, մշակութային ոլորտների զարգացման, գործունեության և հաղորդակցման նոր տեսակների առաջացման և արդիականացման շնորհիվ մարդկային աշխարհը մի կողմից դառնում է բազմազան, միասեռ ու միասնական, մյուս կողմից՝ ինչի հետևանքով ժամանակակից մարտահրավերները դառնում են համամարդկային:

բ. ազգային և անհատական ինքնագիտակցության վերելքը և դրանց ապակենտրոնացման միտումները մի կողմից նպաստում են առանձին սոցիումների բաժանման, ինքնորոշման և անջատման գործընթացներին, մյուս կողմից, սակայն, ընթանում են մերձեցման և համաշխարհայնացման գործընթացներ: Այս իրարամերժ գործընթացների արդյունքում ժամանակակից քաղաքակրթությունը աչքի է ընկնում սոցիալական լարվածության, տարըմբռնման և կոնֆլիկտների տարբեր ձևերով: Արդի սոցիալական համակարգում օբյեկտիվ-պատմական

շարժման առնչությամբ ապաամբողջարկող գործընթացների ուժերը սպառնում են վերածվել գլոբալ աղետների՝ շրջանցելով ցանկացած բանական նորմ ու սահման: Այս գործընթացների իրական հակամարտության և կոնկրետ արտահայտման պարզ ըմբռնումը հասարակական կյանքի մասնակիցներին հարկադրում է միավորել իրենց ջանքերը հետևանքների կանխարգելման գործում: Այն դրսևորվում է բնության և իր նմանների վրա մարդկանց ազդեցության տարբեր ձևերում և միջոցներում: Հայտնի է, որ գործողության արդյունքը և դրա նախնական նշանակությունը կարող են և չհամընկնել: Այն գործողությունները, որոնց արդյունքում ձեռք են բերվում դրական նվաճումներ, մարդկանց պատկերացումներում ամրագրվում են որպես արժեք, ձեռքբերում և նմուշ: Մարդկային վարքի մակարդակում այդ նմուշը կարող է վերարտադրվել որպես միջանձնային և սոցիալական հարաբերությունների կարգավորիչ, հասարակական մշակույթում՝ ընկալվել և պահպանվել որպես բարոյական դրույթ, բարոյական չափանիշ կամ արժեք: Մինչդեռ ամեն մտադրության, կամ գործողության արդյունք չէ, որ համընկնում է բարոյական դրույթի, չափանիշի, արժեքի կամ էլ նպատակների հետ[1]:

Այսպիսով՝ սոցիալական իրականության մեջ դրվեց կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ քաղաքականության մեջ, անհատական վարքի իդեալների՝ ներքին և ոչ մի արտաքին նորմերով չկաշկանդված մշտական ընտրության խնդիրը: Մինչդեռ այդպիսի ընտրության հիմնավորումը եղել և մնում է վիճահարույց, ինչպես առօրյա կյանքի, այնպես էլ տրամաբանության տեսանկյունից, քանզի այդ գործընթացը հնարավոր է միայն այն ժամանակ, երբ տրամաբանական հետևության կանոնները և անհակասականության սկզբունքը ընդունվում են որպես համապարտադիր բան[2]: Ուստի սոցիալական փիլիսոփայության համատեքստում անհրաժեշտ է առանձնացնել սոցիալական այն նպատակները, որոնք պատմական քառուղիներում մարդը դրել է իր

---

1 Տե՛ս, Макаренко В.П. Методологические проблемы исследования идеала общественного устройства.// Идеал общественного устройства в истории отечественной мысли. Ростов-на-Дону, 1994, էջ 57:

2 Տե՛ս, Макаренко В.П. Методологические проблемы исследования идеала общественного устройства.// Идеал общественного устройства в истории отечественной мысли. Ростов-на-Дону, 1994, էջ 24:

առջև և փորձում է ամեն գնով հասնել դրանց: Բացի ակնհայտ սոցիալական մեծ նշանակությաուն ունեցող նպատակներից՝ կարող են գոյություն ունենալ նաև լատենտ, ենթատեքստային նպատակներ, որոնց անհամապատասխանության վերլուծությունը միայն ճանաչողական նշանակություն չունի, այլ հարուցում է սոցիոմշակութային տարըմբռնումներ, որոնք ինչպես ձևախեղում և կազմալուծում են սոցիալական միջավայրը, այնպես էլ նոր սոցիալական կապերի ձևավորման համար դառնում են նախադրյալներ: Այս առնչությամբ մասնագիտական գրականության մեջ մատնանշվում են մի շարք սոցիոմշակութային արժեքներ, որոնք ունեն պարադոքսալ դրսևորումներ: Առաջին՝ ազատությունը բերում է անազատություն: Մարդկությունը մշտապես իր առջև խնդիր է դրել պայքարելու այնպիսի հիմնարար արժեքի համար, ինչպիսին ազատությունն է: Մինչդեռ ստանալուց հետո չգիտի՝ ինչպես այն օգտագործի, ուստի փախուստ է տալիս ազատությունից[3]: Այսինքն՝ մարդը չի կարող ապրել առանց ազատ ինքնաիրացման, բայց չի ուզում ապրել ազատության հոգսի տակ: Սա հատկապես դրսևորվեց սպառողական հասարակությունում. Ընդհանրացնելով այդ փոփոխությունների արդյունքները՝ Օրտեգա-ի-Գասսետն առանձնացնում է նոր ժամանակների մարդու հոգեբանությանը բնորոշ երկու հիմնական գծեր, ա) կենսական ցանկությունների անսանձելի աճ, բ) անշնորհակալ վերաբերմունք այն ամենի նկատմամբ, ինչի շնորհիվ նրանք սկսեցին ավելի լավ ապրել: Այս յուրատեսակ պարադոքսի պատճառն այն է, որ նոր պայմաններում մարդիկ, մի կողմից ձեռք են բերում բարեկեցիկ կյանքի ռեալ հնարավորություններ, մյուս կողմից՝ արագ փոփոխվող այդ իրականությունն այլևս չի տեղավորվում նախկին արժեքների, ավանդույթների ու բարոյական նորմերի շրջանակներում: Ղեկավարվելով անձնական բարեկեցության պահանջմունքների թելադրանքով՝ զանգվածները, միաժամանակ կորցնում են բարեկեցության ակունքների նկատմամբ երախտագիտության զգացմունքը[4]:

Հասարակական հարաբերությունների արդիականացման նախաշեմին, երբ մարդը չէր վատնել իր ուժերն ու մեծ ինքնավստահությունը, ունակ էր ներքաշվել արկածների մեջ, որոնք դուրս են գալիս

---

3 Фром

4 Տես՝ Ортега-и-Гассет Х., Дегуманизация искусства. М., Радуга, 1991, էջ 59:

ցանկացած բանական նորմերի և սկզբունքների շրջանակներից: Բայց մարդը կարող է, և այդ մասին վկայում է սպառողական հասարակության կենսաձևը, օգտագործել ստացված ազատությունն այն բանի համար, որպեսզի լվանա ձեռքերը, հրաժարվի ցանկացած սոցիալական աշխատանքին մասնակցելուց, որը փոքր-ինչ զգալի ջանքեր է պահանջում: Սպառողական-զանգվածային հասարակության մթնոլորտն այնպիսին է, ասես մարդը հոգնել է ստեղծագործական աշխատանքից և այժմ աննպատակ ոճավորման խաղերը նախընտրում է անվարձահատույց աշխատանքի ցանկացած տեսակից: Սա մի կենսակերպ է, ինչի արդյունքում պատմական երջանկության տեղը գրավում է անհատական հաճույքը, իսկ անձը դառնում է ընդամենը անհատականություն: Փաստորեն այլ նպատակ հետապնդող նոր ժամանակի մարդը զարգացման արդյունքում անձնական իմաստով լեցուն պատմական ստեղծարարից վերափոխվեց պատմականությունից զրկված զանգվածի, կենսաբանական անհատների ամբողջության: Պարադոքսը նրանում է, որ պատմական ընթացքը վերադառնում է մի վիճակի, որը նման է բնականին[5]:

Այդ իմաստով, օրինակ, ժամանակակից հասարակության մեջ զանգվածները ապաանձնավորված անհատների մի ամբողջություն են, որոնք միավորված են ոչ թե այս կամ այն գործունեությանը մասնակցելու նպատակով, այլ այս կամ այն պահանջմունքի առարկան (հաճույք, խաղեր, մոդա, իմիջ և այլն) սպառելու համար: Այս իմաստով ժամանակակից զանգվածը ոչ թե «կառավարվող» զանգված է, այլ «ուղղորդվող»: Զանգված են դառնում հասարակության այն անդամները, ովքեր ձերբազատվում են խորհրդանիշների սահմանված պարտականություններից և չեն ամբողջարկվում տվյալ սոցիալական համակարգի գործառնության մեջ: Կարելի է ասել, որ զանգվածի բնութագրական առանձնահատկություններից հիմնականն այն է, որ այն չունի որոշակիություն:

Զանգվածը, որպես կանոն, ամորֆ է և ընկալում է այն ամենը, ինչ թատերայնացված է և ունի խրախճանքի տարրեր: Պատահական չէ, որ նրանք խուսափում են այն ամենից, ինչ ենթադրում է կազմա-

---

5 Տե՛ս, Мюллер М. Смысловые толкования истории // Философия истории. Антология. М., 1994, էջ 280:

կերպվածություն, ծրագիր ու նաև բարոյական պատասխանատվություն[6]:

Այս գործընթացների վրա խթանիչ ազդեցություն ունեցան զանգվածային մշակույթի նոր ձևերի առաջացումը, հոգևոր կյանքի ոլորտում զանգվածային տեղեկատվության նոր չափորոշիչների ձևավորման, ինչպես նաև՝ սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի ազատականացման միտումները[7]:

Այսպիսով, եթե մոդեռնի դարաշրջանի ապակրոնականացած և աստիճանաբար ազատականության ընձեռած հնարավորություններից օգտվող մարդն ազատություն է պահանջում հանուն ստեղծագործության, արդյունաբերական քաղաքակրթության ավելի ուշ շրջանում նա հասու է լինում ավելի պարզ ճշմարտության՝ ազատությունը կարելի է օգտագործել նաև հանուն պարապության կամ զվարճանքի: Այս ճշմարտությանը հասու են ոչ միայն հետարդիականության սոցիալական սուբյեկտները, այլև այն դառնում է այսպես կոչված «պարապության քաղաքակրթության» զանգվածային պրակտիկա:

Ժամանակակից homo ludens-ը պարապության սոցիալական նշանակության մասին ցանկացած պատկերացում կտրականապես կմերժի՝ այն դիտելով որպես ճնշող ավանդապաշտության մնացորդ, որպես աշխատանքի ունակության վերականգնման միջոց կամ որպես ժամանակ, որը նախատեսված է լայն քաղաքացիական ակտիվության համար, որը դուրս է մասնագիտական շրջանակներից, կամ, վերջապես, որպես համակողմանիորեն զարգացած անձնավորության ձևավորման միջոց: Նա դրանում կտեսնի անօրինական ոտնձգություններ մարդկային անօտարելի իրավունքների նկատմամբ: Բայց անձնական իրավունքների այսպիսի ծայրահեղ լայն մեկնաբանությունը պարադոքսալ կերպով համընկնում է դրանց ծայրահեղ նեղ մեկնաբանության հետ՝ որպես աննպատակ կենդանական գոյություն վարելու իրավունք:

Ժամանակակից մարդը, որին ինչպես նշեցինք կարելի է անվանել «խաղացող մարդ», ազատությունը մեկնաբանում է որպես առանց

[6] Տես՝ Бодрийар Ж., В тени молчаливого большинства. Изд-тво Уральского университета. 2000, էջ 14-15:

[7] Տես՝ Самохвалова В. И., Массовый человек как герой и потребитель масскульта.- В кн.: Массовая культура и массовое исскуство. "За" и "против". М., 2003, էջ 104:

որևէ լարվածության ապրելու իրավունք[8]: Հանգամանք, որը կարող է դառնալ սոցիալական էնթրոպիայի պատճառ: Դասական ազատականությունը ժամանակին պահանջում էր ազատություն հանուն ստեղծագործության: Բայց պարզվեց, որ ամենևին էլ պարտադիր չէ, որ ստեղծագործությունը լինի ազատագրված անձնավորության ընտրությունը: Հավանական է նաև, որ ստեղծագործության ծանրությունների փոխարեն լիովին չվարձատրված անհատը նախընտրի «ալարկոտությունն» ու «անջատված վիճակը»:

Այժմ, երբ սպառողական քաղաքկրթության ծնունդ համարվող զանգվածի մարդը գրեթե հասել է այդ «առավել հավանական վիճակին», դժվար է հուսալ, որ նա կգիտակցի իր սխալը և նորից կնախընտրի ստեղծագործական ճգնավորության դժվարին ուղին: Բավականին հավանական է, որ վերադարձը նոր սոցիալական անվարձահատույց աշխատանքին և նոր մեծ իմաստներին կիրագործվի մարդկության պատմական զարգացման մոտալուտ, արևմտական փուլում: Այդպես եղել է ուշ անտիկ ժամանակներում. շատ հավանական է, որ այդպես կլինի նաև այժմ՝ եվրոպական և համաշխարհային պատմության ուշ ժամին:

Սոցիոմշակութային հարըմբռնումները, ըստ դրսևորման մակարդակի և աստիճանի, տարաբնույթ ամբողջարկող և ապաամբողջարկող գործընթացների հետևանքներ են: Սոցիալական տեսություններում նրանք նպաստել են հասարակական կյանքի առանձնացմանը, քաղաքակրթությունների և պետությունների կազմավորմանը, ազգերի և նրանց ճյուղավորումների ձևավորմանը: Ինքնին այս գործընթացները զուգորդվում են մարդկային շփումների և սոցիալականացման միջոցների լարվածությամբ և հակասություններով՝ ստիպելով մարդկանց կարգավորել այդ գործընթացները: Այդ միջոցների մի մասը ձեռք են բերում հարաբերականորեն ինքնուրույն և կայուն բնույթ այն բանի շնորհիվ, որ նրանք հատուկ օգտագործվում են հասարակական գիտակցության զարգացման համար՝ ընդ որում ստանալով մշակութային նորմերի և արժեքների կարգավիճակ: Բայց կոնկրետ հանգամանքներով կյանքի կոչված այս կայուն նորմերն ու արժեքները լրացվում են նոր հատկանիշներով և նշանակություններով:

8 Տե՛ս, Хейзинга Й. Homo Ludens; Статьи по истории культуры. М.: Прогресс - Традиция, 1997, էջ 147:

*Բանալի բառեր.* սոցիոմշակութային պարադոքսներ, փոխակերպվող հասարակություն, սոցիալական նպատակներ և արդյունքներ, սոցիալական համակարգի ծրագրավորում, ժամանակակից հասարակություն, ապաօրբքազանեցում և ապակրոնականացում, սոցիալական միջավայր:

### Գրականություն


1. Макаренко В.П. Методологические проблемы исследования идеала общественного устройства.// Идеал общественного устройства в истории отечественной мысли. Ростов-на-Дону, 1994
2. Фромм Э. Бегство от свободы. Минск, 1998
3. Ортега-и-Гассет Х., Дегуманизация искусства. М., Радуга, 1991
4. Мюллер М. Смысловые толкования истории // Философия истории. Антология. М., 1994,
5. Бодрийар Ж., В тени молчаливого большинства. Изд-тво Уральского университета. 2000,
6. Самохвалова В. И., Массовый человек как герой и потребитель масскульта.- В кн.: Массовая культура и массовое исскуство. "За" и "против". М., 2003,
7. Хейзинга Й. Homo Ludens; Статьи по истории культуры. М.: Прогресс - Традиция, 1997


## СОЦИОКУЛЬТУРНЫЕ ПАРАДОКСЫ, КАК КОНСТРУКТИВНЫЕ И ДЕСТРУКТИВНЫЕ ПОСЛЕДСТВИЯ ПРЕОБРАЗОВАНИЙ

**Манукян Ерануи Карапетовна**
к.ф.н ЕРОА, амбион международных отношений, преподаватель

### Резюме

Анализ конструктивных и деструктивных последствий социокультурных парадоксов является актиальной задачей, так как из-за них контекст социальной деятельности человека теряет былую стабильность и определенность, и процессы становятся стихийными и не-

предсказуемыми. Тем более, что хотя социальные парадоксы и различия в восприятии являются естественными последствиями человеческой деятельности, они, как правило, получают широкую распространенность особенно во время сиситемных преобразований.

Современные общества стоят перед двумя проблемами: с одной стороны освобождение от прежних сиситемных характеристик и присущих им социокультурных оснований, с другой стороны внедрение в современный глобальный процесс. Большиство людей волнует вопрос, что из себя предсталвет современная социальная среда, где происходят постоянные процессы идентификации и типирования, и тем более, какова социальная перспектива человека в процессе сиситемных преобразований и в каком направлении движется человечество.

Более того, современная цивилизация заметно отклонилась от намеченного маршрута и современные тенденции в развитии цивилизации не только непредсказуемы и неуправляемы, но и вышли за рамки обшего контроля и развития, тем самым поставив цивилизацию перед угрозой самоуничтожения.

*Ключевые слова:* социокультурные парадоксы, преобразование общества, социальные цели и результаты, програмирование социальной системы, современное общество, дерелигизация, социальная среда.

## SOCIO-CULTURAL PARADOXES AS CONSTRUCTIVE AND DECONSTRUCTIVE CONSEQUENCES OF TRANSFORMATIONS

**Manukyan Karapet Yeranuhi**
PhD, EREA, Department of International Relations, Lecturer

### Summary

The analysis of the structural and de structural results of the sociocultural paradoxes is contemporary, as the context of their social activity loses its certainty and stability and the processes become spontaneous and unpredictable. Moreover, the social paradoxes and

misconceptions, although are the normal consequence of human activity, but they, as a rule, become massive espacially in the stages of structural transformations. Modern societies are facing two problems: on one hand, the to get rid of previous characteristics of the system, on the other hand, to be included in the processes of the modern world. Most of the people are interested in what is modern social environment, where the continuous processes of identification and standardization are taking place, especially how is the social prospect of human being in the stage of social transformation, and where the mankind is going. Moreover, Modern civilization has significantly deviated from the planned route and the current trends in the development of civilization are not only unpredictable and manageable, but also got out of common control and development path develop and closed serious risks of self-destruction.

*Keywords:* sociocultural paradoxes, transforming society, social aims and results, programming of social system, modern society, social environment.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**H.A. Marzpanyan, H.M. Khaligh**
The possibility of introducing an universal currency in the globalizing world economy ........................................................................ 3
**А.В. Карян**
Сокращение внешнего долга РА на основе экологизации налоговой системы........................................................................18
**Ջ.Ա. Թադևոսյան, Հ.Ռ. Երիցյան**
ՀՀ ներդրումային դաշտը վերազգային կորպորոցիաների գործունեության համատեքստում .................................................. 35
**J.A. Tadevosyan, N.N. Khachatryan**
Constitutional economics and corruption........................................... 46
**Ի.Ղ. Վանյան**
Քաղաքային տնտեսությունների զարգացման հեռանկարները «խելացի քաղաք» հայեցակարգի տեսանկյունից..............................52
**Ն.Լ. Կիրակոսյան**
Մոտիվացիոն գործընթացի կառավարումը .................................... 58
**Ա.Ջ. Ոսկանյան**
Ինովացիոն գործունեության հիմնական գործառույթի կառավարման սուբյեկտները ........................................................67
**A.S. Mardoyan**
The role of innovations and evolving it infrastructure in the increasing national competitiveness of Armenia ..................................................74
**Մ.Ա. Պետրոսյան**
Զբաղվածության և գործազրկության հիմնախնդիրները ՀՀ-ում ...... 86
**Ծ.Ջ. Կարապետյան**
ՀՀ ինովացիոն քաղաքականությունը. տարբերակներ և հեռանկարներ ........................................................................... 96
**Ա.Հ. Մուրադյան**
Սոցիալական պատկերը և աղքատությունը Հայաստանում ...........104

**Ա.Վ. Մարդոյան**
Հանքարդյունաբերության օրենսդրական դաշտը Հայաստանի Հանրապետությունում ....................................................113
Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման հեռանկարները ...................................................................... 123
**Ռ.Խ. Խաչատրյան**
Գործունեության արդյունավետության ցուցանիշների դերը ՀՀ բուհերի ռազմավարական կառավարման բարելավման համատեքստում ....................................................................... 133
**Լ.Ռ. Խաչատրյան**
Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները և տնտեսության զարգացման հնարավորությունները....................................................................151
**Ա.Ս. Մկրտչյան**
ՀՀ նախընտրական արշավներում քաղաքական սուբյեկտների կողմից մարքեթինգային տեխնոլոգիաների արդյունավետ կիրառման ձևերը .......................................................................163
ՀՀ ընտրական գործընթացներում փոխհարաբերությունների մարքեթինգի կիրառումը որպես «արդյունավետ կառավարման» բաղադրիչ .......................................................................................183
**A.L. Pokrikyan**
Measuring financial literacy: theory and international practice ............197
**Վ.Ա. Երանոսյան**
ՀՀ-ում բնակչության ավանդների ներգրավման բանկային քաղաքականության որոշ առանձնահատկություններ.................... 209
**Լ.Հ. Մկրտչյան**
Սոցիալական պաշտպանության համակարգի կառավարման առանձնահատկությունները զարգացած երկրներում և ՀՀ-ում .......220
**Հ.Ա. Դավթյան**
Տվյալների վերլուծության կիրառությունը ֆինանսական շուկաներում ...................................................................................... 231
**Լ.Դ. Գևորգյան**
Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը արդի կազմակերպություններում .............................................................237

**Լ.Հ. Օսիպյան**
ՀՀ բուհերը ըստ Հայաստանի Հանրապետության և համաշխարհային վարկանիշավորման ........................................245
**Ն.Ժ. Մկրտչյան**
ԵԱՏՄ գնումների համակարգը և ԱՀԿ-ՀՀ համագործակցությունը .253
**Ս.Վ. Մարտոյան**
Դեղորայքի մարկետինգի կարգավորման հիմնախնդիրները. կոռուպցիան և առողջապահությունը ........................................ 260
Առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացման ուղիները. այլընտրանքային ֆինանսավորում ..........269

## ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ

**Հ.Զ. Գևորգյան, Մ.Զ. Պողոսյան**
Շաբլոնիզացված ծրագրային ապահովման մշակում ուսումնական փաստաթղթերի ձևավորման համար............................................278
**К.А. Хачатрян**
Облачная реализация IT-инфраструктур организаций .....................284

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

**A.O. Yesayan, H.Z. Gevorgyan**
On two-stage testing of multiple hypotheses testing conserning continous random variable...........................................................294

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

**Մ.Հ. Մուրադյան**
Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հասցեատերերը և դրանց համակարգը ........... 300
**Լ.Դ. Ջիրոյան**
Բնապահպանական անվտանգության իրավական բովանդակությունն ու նշանակությունը ........................................318
Բնապահպանական իրավունքները մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում .........................331

**Ա.Ա. Թադևոսյան**
Քրեական վարույթին մասնակցությունը բացառող
հանգամանքների հասկացությունը և նշանակությունը ...................346
**Ա.Ժ. Այվազյան**
Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության
արդյունավետության բարձրացման որոշ հարցեր ......................... 360
Նորմատիվ իրավական ակտերի և դրանց նախագծերի
հակակոռուպցիոն փորձաքննությունների իրավական և
կազմակերպչական հիմքերի հարցի շուրջ.................................... 369
**Ա.Ա. Հարությունյան**
Նախագահակենտրոն կառավարման մոդելը ըստ Հայաստանի
Հանրապետության սահմանադրության. պատմաիրավական
վերլուծություն սահմանադրական 1995-2005 թվականների
զարգացումների համատեքստում .................................................378
**Ա.Գ. Բեգլարյան**
Հարկային քաղաքականությունը որպես պետության տնտեսական
անվտանգության ապահովման մեխանիզմ .................................. 406

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

**Մ.Ա. Եսոյան**
Հայ-արաբական հարաբերությունների լուսաբանումը «Արև»
օրաթերթի արաբերեն հավելվածի էջերում .................................... 416
**Լ.Ա. Մակարյան**
Սփյուռքի էությունը արդի գիտական ուսումնասիրություններում.....428

**ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ**

**Ե.Կ. Մանուկյան**
Բինարային արխետիպի ընդհանուր բնութագիրը ..........................439
Սոցիոմշակութային պարադոքսները որպես փոխակերպումների
կառուցողական և ապակառուցողական հետևանքներ ...................456

**Խմբագրության հասցեն. Հայաստանի Հանրապետություն,**
**Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10**

Հեռ. (374 10) 24 00 38
Ֆաքս (374 10) 24 00 38
Վեբ կայք http://www.era.am
Էլ. փոստ. segart25@yahoo.com
d.hovhannisyan@eriicta.am

Համակարգչային ձևավորումը՝ Մ. Գևորգյանի
Սրբագրությունը՝ Լ. Արզումանյանի

Ստորագրված է տպագրության 15.09.2016թ.

Ֆորմատ՝ 60x84/16 Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 29,5 մամուլ: Տպաքանակ՝ 100:

© ԵԱ գիտական հոդվածների ժողովածու, 2016

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
հրատարակչություն,
Երևան 0037, Դավիթ Անհաղթի 10

Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21:
Հեռ.՝ (+374 10) 52-88-00:
E-mail: info@astghik.am, www.astghik.am